4-րդ հրատարակություն

ՆԵՐԱՌՄԱՆ ԻՆԴԵՔՍ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թոնի Բուզան և Մել Այնսքոու

Թոնի Բութ, Մել Ինսքոու

ՆԵՐԱՌՄԱՆ ԻՆԴԵՔՍ
Ներառական արժեքների հիման վրա դպրոցի զարգացման ուղեցույց



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

WITH FUNDING FROM
AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

Caritas Austria

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Այս ուղեցույցը տպագրվել է Եվրոպական միության, Ավստրիական զարգացման համագործակցության և Կարիտաս Ավստրիայի աջակցությամբ: Ուղեցույցի բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության, Ավստրիական զարգացման համագործակցության և Կարիտաս Ավստրիայի տեսակետները:

Գյումրի
«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
2019

ՀՏԴ 376
ԳՄԴ 74.3
Բ 947

Բուբ Թոնի, Ամինսքոու Մել
Բ 947 Ներառման ինդեքս: Ներառական արժեքների հիման վրա դպրոցի զարգացման ուղեցույց/ Թ. Բուբ, Մ. Ամինսքոու.- 4-րդ հրատարակություն.- Գյումրի: «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, 2019.- 296 էջ:

ՀՏԴ 376
ԳՄԴ 74.3

Ձեռնարկի հեղինակային իրավունքը պատկանում է «Ներառման ինդեքսի ցանց»-ին:

Հասցե՝ Նորուիչ փող., թիվ 3, Քեմբրիջ, CB2 1ND. էլ. փոստ՝ info@indexforinclusion.org

Սույն ձեռնարկի առանձին հատվածների պատճենները թույլատրվում է օգտագործել կրթական նպատակներով՝ ներառական կրթության զարգացումը խթանելու համար:

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Տեքստի հեղինակային իրավունքը պատկանում է Թոնի Բուբին, 2016թ.:

Չորրորդ հրատարակության ձևավորման հեղինակն է Ջեննի Բրայթմանը:

Չորրորդ հրատարակությունը լույս է տեսել 2016 թ.-ի հունվարին:

index for inclusion network

www.indexforinclusion.org

«Ներառման ինդեքսի ցանց»-ը ստեղծվել է 2012 թ.-ին՝ «Ներառման ինդեքս»-ով աշխատելու միջազգային փորձն ու ներառական արժեքների գործարկմանն ուղղված այլ միջոցառումներ խթանելու:

Ձեռնարկի սույն հայերեն տարբերակը գրանցված է Հայաստանի ազգային գրադարանի գրացուցակում:

ISBN 978-9939-1-0891-9

© «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, 2019

«Ներառման ինդեքս» ուղեցույցի թարգմանությունը, տեղայնացումը և հրատարակությունն իրականացվել է «Հայկական Կարիտաս» բարեսիրական և «Դպրոցական ծնողխորհուրդների անդամների ազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպությունների կողմից 2017-2019թթ.-ին իրականացվող «Համայնքային գործընթաց՝ կրթության մեջ համընդհանուր ներառմանն ընդառաջ» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Եվրոպական միության, Ավստրիական զարգացման համագործակցության և Կարիտաս Ավստրիայի կողմից:

Ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի թվով 12 դպրոցներում ներդրվել և տեղայնացվել է «Ներառման ինդեքս» ներառական արժեքների հիման վրա դպրոցների զարգացման ուղեցույցը:

Աշխարհի մի շարք լեզուներով թարգմանված և տարբեր երկրներում կիրառվող այս ուղեցույցը նպաստում է դպրոցի համակողմանի զարգացմանը, բոլորի մասնակցության ապահովմանը՝ հիմնվելով ներառական արժեքների ու գաղափարների վրա: ՀՀ-ում սկիզբ առած համընդհանուր ներառման գործընթացում ուղեցույցը կարող է լինել օժանդակ ձեռնարկ դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների համար: «Ներառման ինդեքս» ուղեցույցի տեղայնացման գործընթացում սերտ համագործակցության համար շնորհակալություն ենք հայտնում ծրագրում ընդգրկված դպրոցներին՝

Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց

Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց

Գյումրու թիվ 15 հիմնական դպրոց

Գյումրու թիվ 23 հիմնական դպրոց

Գյումրու թիվ 31 հիմնական դպրոց

Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց

Արթիկի թիվ 1 հիմնական դպրոց

Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց

Ազատանի միջնակարգ դպրոց

Գետքի միջնակարգ դպրոց

Ախուրիկի միջնակարգ դպրոց

Աշոցքի միջնակարգ դպրոց

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում դպրոցներին նաև թեմատիկ լուսանկարներ տրամադրելու համար:

Բովանդակություն

Մեկնարկ 8

1. Ինդեքսի համառոտ նկարագրությունը 9

2. Մեկ միասնական մոտեցում Ձեր դպրոցի զարգացման համար 21

Ներառական արժեքների հիման վրա դպրոցների զարգացման ուղեցույց 23

Ներառման հասկացության հստակեցում 25

Արժեհամակարգի ձևավորում 27

Մանկավարժական սկզբունքների լրացում 40

Հրամայականների դիտարկում 41

Կրթակարգի քննարկում 42

Դաշինքների/միությունների ձևավորում 49

Խոչընդոտներ, ռեսուրսներ և աջակցություն 53

Վերանայման գործընթացի համար նախատեսված նյութեր 60

3. Ինդեքսը՝ որպես գործողության մղող գործիք 65

Ներառական արժեքների վրա հիմնված զարգացման ճանապարհները 67

Փուլ 1. Մեկնարկ 69

Փուլ 2. Խոչընդոտների հաղթահարման համատեղ աշխատանք 85

Փուլ 3. Զարգացման ծրագրի մշակում 93

Փուլ 4. Գործողությունների ձեռնարկում 93

Փուլ 5. Զարգացման արդյունքների վերանայում 96

4. Ցուցիչներ և համապատասխան հարցեր 97

Հարթություն «Ա». Ներառական մշակույթների ձևավորում 99

Ա1. Հասարակության/համայնքի կառուցում 100

Ա2. Ներառական արժեքների սահմանում 121

Հարթություն «Բ». Ներառական քաղաքականության ձևավորում 140

Բ1. Դպրոցի զարգացում բոլորի համար 141

Բ2. Բազմազանության ընդունման ապահովում 166

Հարթություն «Գ». Ներառական գործելակերպի զարգացում 183

Գ1. Կրթակարգ բոլորի համար 184

Գ2. Ուսուցման գործընթացի կազմակերպում 245

5. Պլանավորման սխեմա և հարցաթերթիկներ 271

Պլանավորման սխեմա 273

Հարցաթերթիկ 1: Ցուցիչներ 274

Հարցաթերթիկ 2: Իմ երեխայի դպրոցը 277

Հարցաթերթիկ 3: Իմ դպրոցը 280

Հարցաթերթիկ 4. Իմ դպրոցը 283

6. Օգտագործված գրականության ցանկ 285

Հեղինակի շնորհակալական խոսքը գրքի բնօրինակի (4-րդ հրատարակություն) վերաբերյալ

Սույն ձեռնարկի գաղափարները մշակվել են վերջին տասնամյակի ընթացքում՝ բազմաթիվ մարդկանց հետ երկխոսությունների շնորհիվ: Այս առումով, որոշ մարդիկ արժանի են հատուկ հիշատակման: Հատկանշական են Ջուդիթ Քարթերի շարունակական աջակցությունը և մեկնաբանությունները, որոնք արտացոլվել են ոչ միայն Նորֆոլքի վարչական շրջանի խորհրդի հետ աշխատանքները նրբանկատ համակարգելու, այլ նաև *Ինդեքսի* և դպրոցների գործող տեսչական շրջանակի հետ համատեղելիության ապահովման հանձնառության գործում: Սյու Բուքինգհեմն ինձ ներկայացրել է Երկիր մոլորակի իրավունքները, որոնց ես նախ՝ ընդդիմացա, այնուհետև ընդունեցի: «Թրանզիշնս Քեմբրիջ» կազմակերպության մի խումբ մասնագետներ, այդ թվում՝ Աննա Մակլվորը, Մարկ Սքիփերը, Միրիամ Թոմաչոթը և Մարգարեթ Փարքերը տրամադրել են իրենց ժամանակը և հաղորդակցվել իրենց փորձառությամբ: Քենթրբերիի Քրիստոս Եկեղեցու համալսարանի մասնագետներ Ստեֆեն Սքոֆամի, Գիլ Հոուփի, Ջիլ Մեթյուզի և Ջոնաթան Բարնսի փորձը և մեկնաբանություններն ինձ վստահեցրել են, որ ուսումնական ծրագրում կատարված աշխատանքն ունի տեսական և գործնական կիրառություն: Անդրեաս Հինզը և Բարբարա Բրոքամպը միմյանց են փոխանցել Գերմանիայում երկար ժամանակ *Ինդեքսով* աշխատելու իրենց փորձը, իսկ Քարի Նեսը՝ Նորվեգիայում ձեռք բերած իր փորձը: Կարի Նեսը հատուկ ներդրում է ունեցել եվրոպական ավանդույթներից դուրս դիդակտիկայի զարգացման գործում՝ ուսումնական ծրագրերի բովանդակության վերաբերյալ հարցադրումներով, իսկ Բարբարան հանդես է եկել *Ինդեքսով* նախատեսված գործընթացի մասին խորաթափանց գաղափարներով և «գործընթացային ուղեկիցների» շնորհիվ տվյալ գործընթացներն ապահովելու եղանակներով: Կարևոր էին նաև Սյուզան Հարթի առաջարկությունները, մասնավորապես՝ նրա հավանությունն իմ նախաձեռնությանը: Օգտակար էր էմ Ուիլյամսի՝ երկգենդերային դասակարգումը վերանայելու պնդումը: Էական էին Արտեմի Սաքելլարիադիսի մեկնաբանությունները ձեռնարկի շարադրման գործընթացում: Ջենի Բրայթմանը, Մերի Յանգը, Ջեյն Քարփենթերը, Էլիսոն Փիքոքը, Փիթեր Փոուփը, Հաննան Բուքը, Քեթի Բուքը, Բեն Գրեյգը, Աստրիդ Գրեվենը, Մարկ Անտոպոլսկին, Նայջել Փիկֆորտը, Փեթ Յարքերը ևս ներկայացրել են շատ օգտակար մեկնաբանություններ:

1-ին գլխում պատկերված գեղեցիկ ձարխոտի և ծաղիկների համար շնորհակալ եմ Ջիլ Էնտլանդին: Շնորհակալ եմ նաև Դենիզ Նոուելդոնին՝ ձեռնարկը ժամանակին խմբագրելու և տպագրելու համար, ինչպես նաև Ջենի Բրիթմանին՝ ձեռնարկի սույն հրատարակության քաջահմուտ ձևավորումն ապահովելու համար: Շնորհակալ եմ մեր իսպանացի գործընկերներին, մասնավորապես՝ Ժերարդո Էչեիտային, Սեսիլիա Սիմոնին, Մարթա Սանդովալին և Յոլանդա Մունոզին. նրանք թույլ տվեցին ընդօրինակել *Ինդեքսի*՝ իրենց թարգմանած տարբերակի շապիկը:

Նորֆոլք վարչական շրջանի՝ *Ինդեքսի* պիլոտային ծրագրում ընդգրկված դպրոցներն են՝

Մանկապարտեզ և նախակրթարան՝ Քլովեր Հիլլ:

Նախակրթարաններ՝ Քոլման, Քոսթեսսի, Լոդջ Լեյն, Ռեքրիեյշընն Ռոուդ:

Կրտսեր դպրոցներ՝ Կայզեր, Էդվարդ Ուորլեդջ, Լինգվուդ, Սբ Միքայել, Ուրոուբոն:

Տարրական դպրոցներ՝ Բինյոլդ, Բիշոփս, Բլուբել, Քոսթն, Քոլբի Դիթչինհամ Ֆեյըսթիդ, Հափթոն, Հարթսիզ, Ռոյդոն, Սփորըլ, Թաքոլնեսթոն, Թերինգթոն Սբ Ջոն, Թիլնեյ Սբ Լոուրենս, Ուալփոուլ խճուղի, Ուայթփրիարս, Ուիքլուդ:

Միջնակարգ դպրոցներ՝ Բորուդլենդի ավագ դպրոց, Դաունհամ Մարքեթի ավագ դպրոց, Հյուվեթի ակադեմիա, Հոբարթի ավագ դպրոց, Էդվարդ VII արքայի անվան ավագ դպրոց, Սփրինգուդի ավագ դպրոց:

Հատուկ դպրոցներ՝ Չըրչիլ Փարք, Սայդսթրանդ:

Ինդեքսի չորրորդ հրատարակության նախապատմությունը

Ինդեքսի առաջին հրատարակությունը լույս է տեսել 2000 թվականին հետևյալ ենթավերնագրով՝ «Ուսուցման և մասնակցության զարգացումը դպրոցներում»: *Ինդեքսի* առաջին աշխատանքային խումբն ստեղծվել է Մել էյնսքոուի և Մարկ Վաուգհանի կողմից: Առաջին հրատարակության բովանդակության վերջնական տարբերակը ձևավորվել է հատկապես Թոնի Բութի և նրա գործընկերների՝ Պատրիցիա Փոքսի և Ուիլլ Սվանի աշխատանքի շնորհիվ (նրանք Բաց համալսարանում փորձել են ներառական կրթության գաղափարն ինտեգրել համայնքային մակարդակում նախակրթական, հիմնական և միջնակարգ կրթական համակարգի ստեղծման գործընթաց), ինչպես նաև Մել էյնսքոուի կողմից դպրոցների բարելավմանն ուղղված աշխատանքների հիման վրա:

Կառավարությունը *Ինդեքսի* առաջին հրատարակության պատճենը տրամադրել է Անգլիայի բոլոր հիմնական, միջնակարգ և հատուկ դպրոցներին, նաև Անգլիայի կրթության ոլորտի տեղական իրավասու մարմիններին: *Ինդեքսի* երկրորդ հրատարակությունը, որը մեծապես կրկնում է առաջինի բովանդակությունը, լույս է տեսել 2002 թ.-ին և Ուելսի խորհրդարանի կողմից տրամադրվել է Ուելսի տարածաշրջանի բոլոր դպրոցներին՝ վալլերեն կամ անգլերեն լեզուներով:

Ինդեքսի՝ վաղ մանկական տարիքի երեխաների խնամքին նվիրված տարբերակները մշակվել են 2004 և 2006 թթ.-ին:[1] Այդ հրատարակություններում *Ինդեքսը* անդրադարձավ ոչ միայն վաղ մանկական տարիքի և նորածին երեխաների խնդիրներին, այլ նաև ընդլայնեց ընդհանուր նախագիծը՝ շեշտադրելով երեխաների և մեծահասակների բարեկեցության կարևորությունն ու խաղի նշանակությունը:

Թեև *Ինդեքսը* մշակվել է անգլիական դպրոցների համար, սակայն այն սոսկ անգլերեն փաստաթուղթ չէ, այլ արտացոլում է աշխարհի տարբեր անկյուններում գործունեություն ծավալող մեր գործընկերների հետ բազմաթիվ երկխոսությունները: *Ինդեքսի* համաձայն՝ կրթական ոլորտի բարելավումների նպատակով, միայն առաջադրանքների արդյունքների վրա կենտրոնանալու փոխարեն, ավելի նպատակահարմար է ուշադրություն դարձնել դասավանդմանը, ուսումնառությանն ու փոխհարաբերություններին: *Ինդեքսում* առաջարկվող կրթական համակարգի զարգացման մոտեցումը համապատասխան է մեծ թվով երկրներում առկա իրավիճակին, և այն թարգմանվել ու հարմարեցվել է շուրջ հիսուն երկրներում օգտագործելու համար: ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությամբ գործող միջազգային թիմը դիտարկել է, թե ինչպես կարելի է վերանայել *Ինդեքսը*՝ Հարավային կիսագնդի աղքատ տնտեսություն ունեցող երկրներում կիրառելու համար:[2]

2011 թ.-ին լույս տեսած երրորդ հրատարակությունն արմատական փոփոխություններ է կրել՝ անդրադառնալով 2011-2020թթ. կենսաբազմազանության տասնամյակին: Այն արտացոլում էր Անգլիայի[3] և այլ երկրների 10 տարվա փորձը և ներկայացնում էր ներառական արժեքների շրջանակը՝ ի պատասխան այն հարցին, թե «ինչպես ապրել կողք կողքի»: Երրորդ հրատարակության մեջ առաջարկվում էին միասնական սկզբունքային միջամտություններ՝ շրջակա միջավայրի կայունության ապահովման, ազգային և գլոբալ քաղաքացիության, բռնության կանխարգելման, ժողովրդավարական կրթության ու առողջության խթանման ոլորտներում: *Ինդեքսի* երրորդ հրատարակության մեջ շրջակա միջավայրը դիտարկվում էր որպես համընդհանուր մտահոգության

---

1 Booth, T., Ainscow, M. and Kingston, D. (2004, 2006) Index for inclusion: developing play, learning and participation in early years and childcare, Bristol, CSIE.

2 Booth, T. and Black-Hawkins, K., (2001, 2005). Developing learning and participation in countries of the South; the role of an Index for inclusion, Paris, Unesco.

3 Rustemier, S. and Booth, T., (2005). Learning about the Index in use: A study of the use of the Index for inclusion in schools and LEAs in England, Bristol, CSIE.

առարկա, որն անհրաժեշտ է ներառել կրթական ծրագրերում տեղական և միջազգային հարաբերություններում բռնության կանխարգելման հրամայականի հետ: *Ինդեքսի* երրորդ հրատարակությունն առաջարկում էր քննարկել ուսումնական ծրագրերի բովանդակությունը՝ ընդգծելով 21-րդ դարին համահունչ պատասխան այն հարցին, թե «ինչ գիտելիք է անհրաժեշտ կողք կողքի լավ ապրելու համար»: Ի տարբերություն նախորդ հրատարակությունների՝ դա թույլ էր տալիս ավելի հստակորեն հիմնավորել այն պնդումը, որ *Ինդեքսն* անդրադառնում է դպրոցների բոլոր ասպեկտներում ներառական արժեքների կիրառման արդյունքներին:

Սույն՝ չորրորդ հրատարակությունը համեմատաբար չնչին փոփոխություններ է կրել: Այն ներկայացվում է նոր ենթավերնագրով, այն է՝ «Ներառական արժեքների հիման վրա դպրոցի զարգացման ուղեցույց»: Այս կերպ ավելի ակնհայտ է դառնում, որ *Ինդեքսը* դիտարկում է դպրոցների զարգացման ու բարելավման գործընթացը մեծահասակների ու երեխաների մասնակցությամբ և կրթական հաստատությունների բոլոր ասպեկտների ընդգրկմամբ: Դա թույլ կտա հետագայում հաղթահարել այն տարածված տեսակետը, որ ներառումը վերաբերում է որպես «հատուկ կրթական կարիք ունեցող երեխաներ» բնութագրվող որոշակի խմբին: Սույն հրատարակության մեջ հակադրվում է «արժեքների» և «արդյունքների» վրա հիմնված զարգացումը՝ մի մոտեցում, որ տարիներ շարունակ գերիշխել է Անգլիայում և այլ երկրներում «դպրոցների բարելավման» գործընթացի վերաբերյալ մտածելակերպում:

Այսպիսով՝ կարելի է նպաստել ավելի ընդլայնված արդյունքների կայունության ապահովմանը:

Սույն հրատարակության մեջ արժեքները ներկայացված են երեք հարթությամբ՝ առանց աստիճանակարգի (հիերարխիա): Այստեղ ներկայացվում է «արժեքների գրագիտության» գաղափարը՝ որպես արժեքների և գործողությունների փոխկապակցվածության հետազոտման գործընթաց: Այս հրատարակության մեջ հակադրվում են ներառական և բացառման արժեքները: Ոլորտի բազմաթիվ մասնագետներ պնդում են, որ բացառման արժեքներն արտացոլվում են իրենց դպրոցների տարբեր ասպեկտներում: Դպրոցների զարգացումը պահանջում է ներառական արժեքները փոխկապակցել գործողություններին, իսկ բացառման արժեքները անջատել գործողություններից: *Ինդեքսի* սույն հրատարակության մեջ ներկայացվում են ցուցումներ, թե ինչպես արժեքների վրա հիմնված մոտեցումը կարող է օգնել նախապատրաստվելու և արձագանքելու տեսչական ստուգումներին: *Ինդեքսին* կից լրացուցիչ տեղեկության և նյութերի համար գործում է indexforinclusion.org կայքը, որտեղ ներկայացված է *Ինդեքսի* օգտագործման փորձը Անգլիայում և այլ երկրներում: Կայքը տրամադրում է նաև տեղեկություն լրացուցիչ աղբյուրների մասին և ապահովում հետադարձ կապի հնարավորություն:

Մեկնարկ

Սույն ձեռնարկը դպրոցի զարգացման համար նախատեսված համակողմանի ուղեցույց է:

Գերմանիայի մեր գործընկերներին հնարամտության շնորհիվ հաջողվել է առավելագույնս խթանել *Ինդեքսի* նյութերով աշխատելու փորձը: Թեև որոշ դպրոցներում *Ինդեքսն* ի սկզբանե օգտագործվում է դպրոցի համակողմանի զարգացման նպատակով, սակայն դրաս կիրառումը շատ հաճախ կազմակերպվում է նաև այլ կերպ: Աննշան փոփոխությունները կարող են հանգեցնել դպրոցի ամբողջ աշխատակազմի կողմից պարտավորությունների ստանձնմանը, հատկապես, երբ տեսանելի են դառնում գործընկերների՝ *Ինդեքսով* աշխատելու շոշափելի դրական արդյունքները:

Ինդեքսի օգտագործման մեկնարկը խրախուսելու նպատակով ներկայացվում են հետևյալ խորհուրդները, որոնք առաջարկվել են Գերմանիայի մասնագետների կողմից իրենց փորձի հիման վրա:[4] 9-րդ կետը առաջարկվել է Ավստրալիայի գործընկերների կողմից, որոնք հավասարապես ճկուն մեթոդներով աշխատել են *Ինդեքսի* նյութերով Քվինսլենդում[5], և Նորֆոլքի դպրոցների փորձի հիման վրա, որոնք կիրառել են *Ինդեքսը* համեմատաբար խիստ պայմաններում: *Ինդեքսի* կիրառման մեկնարկի վերաբերյալ լրացուցիչ առաջարկներ են ներկայացված սույն ձեռնարկի 3-րդ գլխում:

1. Պարզապես սկսեք: Ցանկացած կետից սկսելը, նույնիսկ ընդամենը մեկ հետաքրքիր հարց ընտրելը և այն քննարկելը, շատ ավելի լավ է, քան ոչինչ չանելը:

2. Կատարեք հակիրճ գրառումներ Ձեր աշխատանքի վերաբերյալ՝ նոթատետրում նշումներ անելով և տեսախցիկի օգտագործմամբ:

3. Ներգրավեք միևնույն կերպ մտածող անձանց:

4. Եթե Դուք աշխատակազմի ղեկավար անդամ չեք, ապա փորձեք ներգրավել որևէ մեկին, ով զբաղեցնում է ղեկավար պաշտոն:

5. Փորձեք պարզել ուսումնական հաստատության զարգացման առաջնահերթությունների վերաբերյալ կարծիքը որևէ երիտասարդի կամ մեծահասակի, որի հետ սովորաբար չեք խորհրդակցում:

6. Սկսեք Ձեր իրավասության սահմաններում գտնվող փոքր փոփոխություններից:

7. Կազմեք դպրոցում առկա նախաձեռնությունների ցանկը: Դիտարկեք, թե ինչպես կարելի է *Ինդեքսը* փոխկապակցել վերջիններիս:

8. Ուսումնասիրեք *Ինդեքսի* 2-րդ գլխում ներկայացված արժեքների շրջանակը: Դիտարկեք, թե դպրոցի ո՛ր գործունեության փոփոխության արդյունքում գործողությունները կարող են ավելի սերտորեն արտացոլել Ձեր նախընտրած արժեքները:

9. Դիտարկեք այնպիսի փոփոխություն, որը Դուք (կամ այլ անձինք) հույս ունեք կամ փորձում եք իրականացնել: Միգուցե այն արդեն ներառված է Ձեր դպրոցի զարգացման ծրագրում: Փորձեք գտնել առավել համապատասխան ցուցիչը և օգտագործեք այն՝ Ձեր պլանավորածը հստակեցնելու համար:

10. Եթե Դուք աշխատում եք միայն Ձեր ուժերով, ապա փորձեք գտնել որևէ մեկին, ով *Ինդեքսով* աշխատելու փորձ ունի և կարող է աջակցել Ձեզ:

[4] Barbara Brokamp, Montag Stiftung Jugend und Gesellschaft, Practical Hints.

[5] Սյուզան Քարինգթոն և Ռոբին Ռոբինսոն, անձնական զրույց:

1.
Ինդեքսի համառոտ նկարագրությունը

Ինդեքսի կիրառման շնորհիվ մեր դպրոցի բարելավման պլանավորման գործողությունները դարձել են առավել ակտիվ: Այժմ մենք դիտարկում ենք առկա խնդիրներն ու մտահոգություններն այլ տեսանկյունից: Մինչ օրս մեր աշխատակազմն այն օգտագործում է հաճույքով և միևնույն ոգով կշարունակի աշխատել Ինդեքսով:

Ջուն Սյուել, Ջորջ Վայթի անվան կրտսեր դպրոց

Ինդեքսը նման է քննադատ ընկերոջ, որը հարցերի միջոցով օգնում է խնդրին նայելու տարբեր տեսանկյուններից, այնուհետև բարելավելու առաջընթացը:

Էլլի Ռոբերթս,
«Հայգեյթ»
նախակրթարան

Ինդեքսը տրամադրում է մի շրջանակ, որով հնարավոր է տեսնել, թե ինչպես է խթանվում դպրոցական համայնքի անդամների ներգրավվածությունը: Ինդեքսը առաջադրում է մեթոդներ և հուշում է, թե ինչպես պարզել մեր դպրոցի բարելավման պահանջների վերաբերյալ կարծիքներն ու տեսակետները: Կենտրոնանալով Ինդեքսի առաջադրած «մասնակցության» և «հասարակության/համայնքի» արժեքներին՝ մեզ հաջողվեց համատեղ աշխատանքի միջոցով ապահովել լավագույն արդյունքներ բոլորի համար:

Նիք Սաուրգեթ, Քոլմանի անվան նախակրթարան

Ինդեքսի շնորհիվ համագործակցային աշխատանքային հարաբերություններ են հաստատվել երկու այլ դպրոցների հետ՝ երեխաների համար նախատեսված արդյունքները բարելավելու նպատակով: Մենք օգտագործել ենք Ինդեքսը որպես գործիք՝ համապատասխան նախագծերում աշակերտների ձայնը լսելի դարձնելու և համայնքի մասնակցությունը խթանելու համար: Անհրաժեշտ է տեսնել, թե ինչպիսի ոգևորությամբ են աշակերտները դիտարկում և քննարկում համատեղ աշխատանքի ուղիները: Ես համոզված եմ, որ նման համագործակցային աշխատանքը կշարունակի իր հետագա զարգացումը:

Կորալ Բրինքլոու, «Քեյսեր»
կրտսեր դպրոց

Ես օգտագործել եմ Ինդեքսը՝ որպես դպրոցի արժեքները վերանայելու գործիք: Այն ցատկահարթակ է դպրոցի բարելավման աշխատանքներին շահագրգիռ կողմերի մասնակցությունը խթանելու համար: Ես խորհուրդ կտայի այն բոլոր դպրոցներին, որոնք կանգնած են բարելավման ճանապարհին, օգտագործել Ինդեքսը: Այն իսկապես օգնել է ինձ:

Ջեյն Ջյուսոն, էդվարդ VII-րդ արքայի անվան
ավագ դպրոց

Ինդեքսի շնորհիվ համագործակցություն է հաստատվել մեր հիմնական դպրոցի, «Քեյսեր» կրտսեր և «Քեյսեր» ավագ դպրոցների միջև: Աշակերտների համար հատկապես հաճելի է աշխատել իրենցից տարիքով ավելի բարձր դպրոցականների հետ: Նրանք հպարտ են ներկայացնել մեր դպրոցը, նաև այն նոր «միջդպրոցական խորհուրդները», որոնց այժմ անդամակցում են:

Սա փայլուն փորձ է ինչպես աշակերտների, այնպես էլ դպրոցի աշխատակազմի համար:

Էդվարդ Սավիջ, Հեմսբիի հիմնական դպրոց

Ինդեքսի համառոտ նկարագրությունը

Ինչպե՞ս կարող է *Ինդեքսն* օգնել ձեզ զարգացնելու ձեր դպրոցը:

«Ներառման ինդեքսը» ներառական արժեքների հիման վրա դպրոցների զարգացման ուղեցույց է: Այն մի շարք նյութերի ժողովածու է, որը նպաստում է հաստատության բոլոր ասպեկտների վերանայմանը և զարգացմանը, որի սկզբունքները կարող են կիրառվել խաղահրապարակներում, աշխատասենյակներում և դասասենյակներում, հարակից համայնքներում և շրջակա միջավայրում: Այն խրախուսում է ակտիվ մասնակցությունը՝ զարգացման բարելավմանն ուղղված ներառական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:



Ներառումը նախևառաջ ներառական արժեքների կենսագործումն է: Ներառական արժեքների վրա հիմնված զարգացումը ենթադրում է արժեքների համընդհանուր շրջանակի փոխկապակցում հաստատության ներսում և շրջապատում տեղի ունեցող երևույթների հետ:

Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում դպրոցներում

Դպրոցները մշտապես փոփոխվում են տարբեր ուղղություններով և տարբեր պատճառներով: Այդ փոփոխությունների միայն մի մասն է տեղի ունենում համաձայնեցված ծրագրի արդյունքում բոլորի մասնակցությամբ:

Երբեմն փոփոխությունները կարող են հակասել միմյանց կամ ներառական արժեքների զարգացման սկզբունքներին:

Արդյոք Ձեր դպրոցում տեղի ունեցող բոլոր փոփոխություններն ունե՞ն միեւնույն ուղղվածությունը:

Ի՞նչ է ներառական զարգացումը

Մենք դիտարկում ենք փոփոխությունը՝ որպես զարգացում կամ բարելավում, որն արտացոլում է արժեքները: Այն դառնում է ներառական զարգացում, երբ ուղղորդվում է մեր ներառական արժեքներով:

Պատշաճ գործունեությունը ենթադրում է գործողությունների ու արժեքների փոխկապակցվածություն: Գործողությունների ու արժեքների միջև փոխկապակցվածության ապահովումը կարող է լինել Ձեր դպրոցի զարգացման առավել գործնական քայլը: Արժեքներն այն խորքային համոզմունքներն են, որոնք մեզ մղում են գործողության: Մենք արժեքներն ընկալում ենք գործողություններով, այլ ոչ թե խոսքերով: Գեղեցիկ խոսքերը դառնում են արժեհամակարգի բնութագրիչներ, երբ դրանք կապակցում ենք մեր խորը համոզմունքներին և նրանց հանգամանալից իմաստ հաղորդելով՝ գործում ենք՝ ելնելով դրանցից:



Արժեհամակարգը կամ արժեքների ամբողջությունը պատասխանում է այն հարցին, թե **«Ինչպե՞ս ապրել կողք կողքի»:** Կրթության ոլորտում այս հարցի պատասխանը կարելի է գտնել *Ինդեքսի* ցուցիչներով և հարցերով:

Գծապատկեր 1 **Ներառական արժեքների շրջանակ**

Ինդեքսի հարթությունները, բաժիններն ու ցուցիչները

Հարթություն «Ա». Ներառական մշակույթների ձեւավորում

Ա1. Հասարակության/համայնքի կառուցում

1. Յուրաքանչյուրի ներկայությունը/մասնակցությունը ողջունելի է:
2. Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:
3. Երեխաներն օգնում են միմյանց:
4. Աշխատակազմն ու երեխաները հարգում են միմյանց:
5. Աշխատակազմն ու ծնողները/խնամատարները համագործակցում են միմյանց հետ:
6. Աշխատակազմը և ղեկավարներն ապահովում են արդյունավետ համատեղ աշխատանք:
7. Դպրոցը ժողովրդավարական քաղաքացիության մոդել է:
8. Դպրոցը արժևորում է համայն մարդկության միջև փոխհարաբերությունների ըմբռնումը:
9. Չափահասները և երեխաները պատշաճորեն են արձագանքում մարդկանց սեռային պատկանելությանը և սեռերի հավասարությանը:
10. Դպրոցը և տեղական համայնքները նպաստում են փոխադարձ զարգացմանը:
11. Աշխատակազմը կապեր է ստեղծում դպրոցում տեղի ունեցած իրադարձությունների և երեխաների ընտանեկան կյանքի միջև:

Ա2. Ներառական արժեքների սահմանում

1. Դպրոցը ձևավորում և զարգացնում է համընդհանուր ներառական արժեքներ:
2. Դպրոցը խթանում է հարգանքը մարդու բոլոր իրավունքների նկատմամբ:
3. Դպրոցը խրախուսում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը:
4. Ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցության մակարդակի աճ:
5. Բոլոր երեխաներն ունեն մեծ ակնկալիքներ:
6. Բոլոր երեխաներն արժևորվում են հավասարաչափ:
7. Դպրոցը պայքարում է խտրականության բոլոր ձևերի դեմ:
8. Դպրոցը խրախուսում է հարաբերությունների պարզաբանման և վեճերի լուծման ոչ բռնի ձևերը:
9. Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը:
10. Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների առողջության պահպանմանը:

Հարթություն «Բ». Ներառական քաղաքականության ձեւավորում

Բ1. Դպրոցի զարգացում բոլորի համար

1. Դպրոցը վարում է մասնակցային զարգացման գործընթաց:
2. Դպրոցն առաջնորդվում է ղեկավարման ներառական մոտեցմամբ:
3. Նշանակումներն ու պաշտոնի առաջխաղացումներն արդար են:
4. Աշխատակազմը փորձառու է և օգտագործում է իր գիտելիքները:
5. Բոլոր նոր մասնագետներին ցուցաբերվում է աջակցություն ադապտացման շրջանում:
6. Դպրոցը փորձում է ապահովել իր տարածքի բոլոր երեխաների ընդունելությունը:
7. Բոլոր նոր ընդունված երեխաները ստանում են աջակցություն ադապտացման շրջանում:
8. Ուսուցման և ուսումնառության խմբերը կազմվում են բոլոր երեխաների ուսումնառության կարողություններին համապատասխան:
9. Երեխաները լավ պատրաստված են այլ հաստատություն տեղափոխվելու համար:
10. Դպրոցը ֆիզիկապես մատչելի է բոլորի համար:
11. Շենքերն ու խաղահրապարակները ֆիզիկապես մատչելի են բոլորի համար:
12. Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը:
13. Դպրոցը նպաստում է թափոնների ծավալների կրճատմանը:

Բ2. Բազմազանության ընդունման ապահովում

1. Աջակցության բոլոր ձևերը համակարգվում են:
2. Մասնագիտական զարգացման միջոցառումներն օգնում են աշխատակազմին պատշաճ արձագանքելու բազմազանությանը:
3. Օտար լեզուների ուսուցումը որպես ներառման խթան ամբողջ դպրոցի համար:
4. Դպրոցն աջակցում է հանրային այլ հաստատություններում երեխաների կրթության շարունակականությանը:
5. Դպրոցն ապահովում է, որ «հատուկ կրթական կարիքներ»-ին առնչվող քաղաքականություններն աջակցեն ներառմանը:
6. Վարքագծային քաղաքականությունը կապված է ուսումնառության և կրթակարգի զարգացման հետ:
7. Կարգապահական նկատառումներով, դպրոցից հեռացումը՝ որպես պատիժ, հազվադեպ է կիրառվում:
8. Հաճախելիության խոչընդոտները հասցված են նվազագույնի:
9. Վախերը, ահաբեկումը հասցված են նվազագույնի:

Հարթություն «Գ». Ներառական գործելակերպի զարգացում

Գ1. Կրթակարգ բոլորի համար

1. Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության ու սպառման շրջափուլերը:
2. Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը:
3. Երեխաներն ուսումնասիրում են հագուստը և զարդարանքը:
4. Երեխաները բացահայտում են կացարանային և շենքային միջավայրը:
5. Երեխաները քննարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում և աշխարհի շուրջը:
6. Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության և փոխհարաբերությունների մասին:
7. Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը:
8. Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:
9. Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:
10. Երեխաները սովորում են կապի և հաղորդակցման տեխնոլոգիաների մասին:
11. Երեխաներն զբաղվում են գրականությամբ, արվեստով ու երաժշտությամբ և ստեղծագործում են:
12. Երեխաները սովորում են տարբեր աշխատանքներ և այն կապակցում են իրենց հետաքրքրությունների զարգացման հետ:
13. Երեխաները սովորում են էթիկայի կանոնների, իշխանության և կառավարման մարմինների մասին:

Գ2. Ուսուցման գործընթացի կազմակերպում

1. Ուսուցման գործընթացը պլանավորվում է՝ հաշվի առնելով բոլոր երեխաների ունակությունները:
2. Ուսուցման գործընթացն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը:
3. Երեխաները խրախուսվում են իրենց քննադատական մտածողության համար:
4. Երեխաներն ակտիվորեն մասնակցում են իրենց ուսուցման գործընթացին:
5. Երեխաները սովորում են միմյանցից:
6. Դասերը զարգացնում են մարդկանց նմանությունների ու տարբերությունների ըմբռնումը:
7. Գնահատականները խրախուսում են երեխաների ձեռքբերումները:
8. Կարգապահությունը հիմնված է փոխադարձ հարգանքի վրա:
9. Աշխատակազմն իրականացնում է պլանավորման, ուսուցման ու վերանայման համատեղ աշխատանքներ:
10. Աշխատակազմը մշակում է ուսուցման գործընթացի օժանդակ համընդհանուր ռեսուրսներ:
11. Ուսուցման գործընթացի օգնականները աջակցում են բոլոր երեխաների ուսումնառությանը և մասնակցության ապահովմանը:
12. Տնային աշխատանքների կառուցվածքը նպաստում է յուրաքանչյուր երեխայի ուսումնառության գործընթացին:
13. Արտադասարանային պարապմունքները հասանելի են բոլոր երեխաների համար:
14. Դպրոցը տեղյակ է իր շրջակայքի ռեսուրսներին և օգտվում է դրանցից:

Յուրաքանչյուր ցուցիչ կամ զարգացման ակնկալիք իմաստալից է դառնում փոխկապակցված հարցերի շնորհիվ, որոնք առաջադրում են զարգացման նոր գաղափարներ:

Գ2.3 Երեխաները խրախուսվում են իրենց քննադատական մտածողության համար:

Գ2.4 Երեխաներն ակտիվորեն մասնակցում են իրենց ուսուցման գործընթացին:

ա) Արդյոք դպրոցի աշխատակազմը աջակցո՞ւմ է միմյանց լինել ինքնավստահ և զարգացնել քննադատական մտածողությունը:
բ) Արդյոք բոլորը գիտակցո՞ւմ են, որ երկխոսության արդյունավետության համար անհրաժեշտ է մի կողմ դնել իշխանություն ունեցողի և չունեցողի կարգավիճակների տարբերությունները:
գ) Արդյոք դպրոցի աշխատակազմը ցո՞ւյց է տալիս, որ հարգում և արժևորում է այլընտրանքային տեսակետները:
դ) Արդյոք երեխաներին և չափահասներին խրախուսո՞ւմ են արտահայտել իրենց տեսակետը՝ ինքնավստահ և առանց ագրեսիայի:
ե) Արդյոք բանավեճերի խրախուսումը նպատակ ունի սովորեցնելու մարդկանց լսել միմյանց և հաշվի առնել ինչպես սեփական, այնպես էլ այլ անձանց կարծիքը:
զ) Արդյոք երեխաներին խրախուսո՞ւմ են ձևավորել և արտահայտել իրենց տեսակետն ու զգացմունքները տեղական, ազգային և միջազգային կարևոր միջոցառումների վերաբերյալ, ինչպես, օրինակ, այն ժամանակ, երբ իրենց երկիրը գտնվում է պատերազմի մեջ, կամ իրենց կամ այլ երկրում աղետ է տեղի ունեցել:
է) Արդյոք երեխաներին խրախուսո՞ւմ են մարտահրավեր նետող հարցադրումներ անել:
ը) Արդյոք փաստարկների տարբեր կողմերում գտնվող անձինք գիտակցո՞ւմ են, թե որքան կարևոր է հարցն այլ տեսանկյունից դիտարկելը՝ կարծիքները հստակեցնելու և խնդրի համատեղ լուծում գտնելու համար:
թ) Արդյոք երեխաները սովորո՞ւմ են հայտնաբերել իրենց կարծիքի և ուրիշների փաստարկների հակասությունները:
ժ) Արդյոք երեխաները և դեռահասները սովորո՞ւմ են կշռադատել այլ անձանց, ինչպես նաև իրենց փաստարկների հիմնավորումները:
ժա) Արդյոք երեխաները սովորո՞ւմ են՝ երբ է պնդման կամ փաստարկի ճշմարտությունը պահանջում ապացույցներ:
ժբ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է զգուշորեն ընտրված օրինակներով ցույց տալ ընդհանրացումների սահմանները:
ժգ) Արդյոք երեխաները սովորո՞ւմ են ինչպես օգտվել օրինակներից՝ իրենց փաստարկները հիմնավորելու նպատակով:
ժդ) Արդյոք երեխաները սովորո՞ւմ են հարցնել, թե «որքանո՞վ...» և «ի՞նչ հանգամանքներում...» է որևէ պնդում ճշմարիտ (օրինակ, սեռերի միջև տարբերությունների վերաբերյալ մոտեցումներում):
ժե) Արդյոք երեխաները սովորո՞ւմ են, թե ինչպես գնահատել թիրախային լսարանին:
ժզ) Արդյոք երեխաները սովորո՞ւմ են, թե ինչպես են մարդիկ օգտվում այն հանգամանքից, որ որոշ փաստարկներ ճիշտ են նույնիսկ այն ժամանակ, երբ դա այդպես չէ, միայն այն պատճառով, որ իրենց ներկայացնում են հեղինակության կարծիքը:
ժէ) Արդյոք երեխաներն ու մեծահասակները բացահայտո՞ւմ են այն համոզմունքներն ու արժեքները, որոնք տարբեր տեսակետների հիմքում են:
ժը) Արդյոք երեխաներին ու դեռահասներին օգնո՞ւմ են բարելավելու փաստարկների արտահայտման իրենց հմտությունները:
ժթ) Արդյոք երեխաները զգո՞ւմ են այն ճնշումները, որոնք ստիպում են իրենց մտածել և գործել որոշակիորեն:
ի) Արդյոք երեխաներն ուսումնասիրո՞ւմ են իրենց արտահայտած կարծիքների պատճառները կամ հիմքերը:
իա) Արդյոք երկխոսության մասնակից բոլոր կողմերը հնարավորություն ունե՞ն պահպանելու իրենց ինքնագնահատականը:
իբ) Արդյոք մարդիկ խուսափո՞ւմ են հաղթական դիրք գրավելուց, երբ զգում են, որ հաղթել են որևէ բանավեճում:
իգ) Արդյոք երեխաներն ու մեծահասակները օգնո՞ւմ են այլ անձանց՝ արտահայտելու իրենց կարծիքները:
իդ) Արդյոք առանձնահատուկ ուշադրություն դարձվո՞ւմ է այն երեխաներին, որոնք ամաչում են իրենց կարծիքն արտահայտելուց կամ քննարկումներին մասնակցելուց:

իե) _____

իզ) _____

իէ) _____

Կրթակարգի մշակման աջակցություն

Ինդեքսի Գ1 բաժնում ներկայացվում է դասավանդման և ուսումնառության միջոցառումների բաժանման նոր մեթոդ՝ ըստ 13 առարկայական ուղղությունների: Այն առաջարկում է ավանդական առարկաների լրացումներ և նոր համադրություններ՝ որպես 21-րդ դարին համահունչ կրթակարգ:

Ըստ էության, օգնում է դպրոցներին ընդլայնելու իրենց ուսումնական ծրագրերը, որպեսզի դրանք առավել համապատասխան լինեն երեխաների, երիտասարդների և նրանց ընտանիքների փորձին: Այն հիմնված է *Ինդեքսում* առաջադրված արժեքների, սկզբունքների և հրամայականների վրա և նախատեսված է որպես միջազգային և փոխկապակցող ուսումնական ծրագիր, որը կիրառելի է աշխարհի ցանկացած մասում: Բոլորի համար գիտելիքի յուրացման միջոց է դպրոցների ներսում և դրանցից դուրս, ամբողջ կյանքի ընթացքում:

Պատասխանում է հետևյալ հարցին. **«Ի՞նչ գիտելիք է անհրաժեշտ կողք կողքի լավ ապրելու համար»:**

Գծապատկեր 2 **Առարկաներ՝ 21-րդ դարին համահունչ կրթակարգի համար**



Ներառական արժեքների վրա հիմնված զարգացումը համակցում է դպրոցների զարգացման բոլոր սկզբունքային մոտեցումները:

Դպրոցները ներգրավված են մի շարք գործողություններում, որոնք նպաստում են նրանց զարգացմանը *Ինդեքսում* սահմանված արժեքների հիման վրա: *Ինդեքսի* միջոցով այդ գործողությունները համակցվում են մեկ ընդհանուր միավորման մեջ: Դա նման է ծառի, որն ամրանում է հողի մեջ իր բազմաթիվ արմատների զարգացմամբ:

Նման կապերի հաստատումը թույլ է տալիս կրճատել քաղաքականության մասնատումը և նախաձեռնությունների ծանրաբեռնումը: Դրանց շնորհիվ ստեղծվում են ներառական արժեքների հիման վրա զարգացմանն ուղղված համատեղ աշխատանքի միավորումներ: Եվ կարևոր չէ, թե ինչ բառ կամ բառակապակցություն է օգտագործվում այս համընդհանուր նպատակն արտահայտելու համար՝ «Ներառում», «Ներառական արժեքների կենսագործում», «Ժողովրդավարական կրթություն»: Բառերի կամ արտահայտությունների ընտրությունն այնքան կարևոր չէ, որքան համընդհանուր արժեքներից բխող գործողությունների միջև կապերի բացահայտ ներկայացումը, այնպես որ դրանք ամրապնդվեն միմյանցով: Եվ շատ ավելի կարևոր է, որ «Ներառման ինդեքսը» ինքնանպատակ օգտագործելու փոխարեն ուղղորդեք դպրոցի զարգացմանը՝ ներառական արժեքների շրջանակներում:

Ինչպե՞ս կիրառել *Ինդեքսը*

***Ինդեքսի* կիրառումը կարելի է սկսել ցանկացած կետից, այդ թվում՝ գործնականում կատարվող փոփոխություններով, որոնց անհրաժեշտությունը ծագում է համապատասխան արժեքները ներդնելիս կամ ուսումնասիրելով այն ցուցիչի եւ համապատասխան հարցերի մշակման հետեւանքները, որոնք արդեն իսկ առանձնահատուկ մտահոգություն են Ձեզ համար կամ դարձել են այդպիսին տեսչական ստուգումներից հետո՝ ընդգծելով երկխոսության հանգեցնող որեւէ հարց կա՛մ կրթակարգի ասպեկտների վերանայման նպատակով, կա՛մ որպես դպրոցում տեղի ունեցող մի շարք առանձին միջամտություններ հասկանալու միջոց:**

Ինդեքսը խրախուսում է դպրոցի աշխատակազմի, երեխաների, ընտանիքների և ղեկավար մարմինների ակտիվ մասնակցությունը առկա իրավիճակի վերանայման և բարելավման աշխատանքներին: Մասնակցության ծավալների ընդլայնումն ինքնին ներառական զարգացման մի մասն է կազմում: Դա թույլ է տալիս տարածել գիտելիքների և էներգիայի մեծ զանգվածը հաստատության համայնքներին համապատասխան գործողությունների դրդելու նպատակով:

Անկախ այն հանգամանքից, որ *Ինդեքս*ի կիրառումը կարելի է սկսել ցանկացած կետից, այն առավել արդյունավետ է, երբ օգտագործվում է նախ՝ որպես առօրյա պլանավորման և զարգացման գործընթացների մշակման գործիք, ապա՝ ամբողջությամբ ինտեգրվում տվյալ գործընթացներում:

Ինդեքսը բաղկացած է երեք հարթություններից, որոնք հաստատության զարգացման հիմքն են:

Մշակույթները արտացոլում են հարաբերություններ և խորը արժեքներ ու համոզմունքներ: Մշակույթների փոխակերպումը շատ կարևոր է կայուն զարգացման համար:

Քաղաքականությունը մեխանիզմների այն ամբողջությունն է, որով իրականացվում են դպրոցի ղեկավարման աշխատանքները, մշակվում այն փոփոխությունների ենթարկելու ծրագրերը:

Գործելակերպը վերաբերում է ուսուցանվող նյութի բովանդակությանը և դասավանդման ու ուսումնառության մեթոդներին:

Յուրաքանչյուր հարթություն բաղկացած է երկու բաժնից: Հարթությունները և դրանց բաժինները կարող են ձևավորել պլանավորման շրջանակ՝ ուշադրություն դարձնելով այն բոլոր ոլորտներին, որոնք ենթակա են զարգացման՝ փոփոխությունների կայունությունն ապահովելու նպատակով:

Գծապատկեր 3 **Ինդեքսի զարգացման հարթությունները**

Գծապատկեր 4 **Պլանավորման շրջանակ**

Հարթություն «Ա»
Ներառական մշակույթների ձեւավորում
Ա1. Հասարակության/համայնքի կառուցում
Ա2. Ներառական արժեքների սահմանում

Հարթություն «Բ»
Ներառական քաղաքականության ձեւավորում
Բ1. Դպրոցի զարգացում բոլորի համար
Բ2. Բազմազանության ընկալման ապահովում

Հարթություն «Գ»
Ներառական գործելակերպի զարգացում
Գ1. Կրթակարգի մշակում բոլորի համար
Գ2. Ուսուցման գործընթացի կազմակերպում

Ինչպե՞ս է *Ինդեքսն* օգնում արձագանքելու արտաքին ազդեցություններին

Բոլոր դպրոցները ենթարկվում են արտաքին ազդեցությունների (այդ թվում՝ տեսչական ստուգումներ, պետական քննություններ, կառավարության քաղաքականություն եւ ուղեցույցներ): *Ինդեքսը* թույլ է տալիս դպրոցներին արձագանքել նման պահանջներին՝ իրենց արժեքներին համապատասխան եղանակներով:

Ինչպե՞ս արձագանքել տեսչական ստուգումներին

Մենք *Ինդեքսի* ցուցիչները քարտեզագրել ենք Միացյալ Թագավորության կրթության, մանկական ծառայությունների ու հմտությունների ստանդարտների գրասենյակի (այսուհետև՝ Գրասենյակ) տեսչական շրջանակի վրա՝ ցույց տալով, թե ինչպես են դրանք հասցեագրում Գրասենյակի բոլոր մտահոգությունները՝ որպես զարգացմանը համահունչ մոտեցում: Այդ փաստաթղթի վերջին տարբերակը կարող եք գտնել մեր կայքում՝ indexforinclusion.org: *Ինդեքսի* կողմից առաջարկվող մասնակցային ինքնագնահատումը կարելի է կիրառել որպես տեսչական ստուգման շրջանակով պահանջվող ինքնուրույն վերլուծության աշխատանքների համոզիչ ապացույց: Տեսչական ստուգումներից հետո *Ինդեքսը* կարող է առաջարկել անհապաղ գործողությունների գաղափարներ՝ ի պատասխան Գրասենյակի կողմից ներկայացված զեկույցների առաջարկների: Դա հատկապես արժեքավոր է, երբ անբարենպաստ հաշվետվությունից հետո տրամադրվածությունը բացասական է: Ինչպես մի դպրոցի ուսմասվար նշել է՝ «*Ինդեքսը* նպաստում է Գրասենյակի համար ուշադրության արժանի հարցերի հստակությանը»:

Երբ խոսում են թվերը

Ստուգարքների ու քննությունների արդյունքների համեմատությունը տարբեր դպրոցների միջև և միևնույն դպրոցի շրջանակներում՝ տարբեր տարիների կտրվածքով, ամենակարևոր ցուցանիշն է տեսչական ստուգումներից հետո դպրոցների վարկանիշը որոշելու հարցում: Դա տեղի է ունենում նույնիսկ այն դեպքերում, երբ արդյունքները վիճակագրական տեսանկյունից կասկածելի են, քանի որ համեմատության համար հիմք ծառայող թվերը փոքր են, կամ չափման համախումբը փոխվել է՝ դպրոց ընդունվողների կամ դպրոցից հեռացողների թվաքանակային փոփոխությունների հետևանքով:

Գնահատման վերանայում

Համագործակցային հարաբերությունների առկայության դեպքում գնահատումը՝ դպրոցի աշխատակազմի աշխատանքի և ստացած աջակցության կանոնավոր վերանայումը, հիմնվում է միմյանց աշխատանքի վերաբերյալ արդեն առկա ամենօրյա գիտելիքի վրա, և հազվադեպ է պահանջվում նոր տեղեկատվության հավաքագրում կամ առաջադրանքների գնահատում: Այնուամենայնիվ, այլ հաստատություններում աշխատակազմի առջև կարող են դրվել այնպիսի թիրախներ, որոնք չեն կարող արտացոլել երեխաների բարօրության ու առաջընթացի վերաբերյալ իրենց խորը պատկերացումները: Թիրախների նվաճման հիման վրա վճարման մեխանիզմը նույնպես կարող է վնասել աշխատակազմի փոխհարաբերություններին՝ հատկապես որոշումներում կողմնապահություն ցուցաբերելու դեպքում: *Ինդեքսի* կիրառման մոտեցման հիման վրա կարելի է ապահովել գնահատման քաղաքականության համապատասխանությունը դպրոցների արժեքներին:

Զարգացման ծրագրերի մշակում

Զարգացման ծրագրերը պետք է մշակվեն այնպես, որ աշխատակազմի, երեխաների և նրանց ընտանիքների համար ծառայեն որպես հասանելի ու իրական աշխատանքային փաստաթղթեր և ոգևորեն բոլորին: Պարտադիր չէ, որ դրանք մշակված լինեն պետական համապատասխան գործակալության կայքում տեղադրված ձևանմուշի կամ տեղական ղեկավար մարմնի կողմից ներկայացված բանաձևի համաձայն: Դպրոցների զարգացման գերակայությունների ձևավորման գործում երեխաների ու երիտասարդների ներգրավվածությունը կարող է նպաստել ուսուցման և ուսումնառության կարևոր միջոցառումների կազմակերպմանը:

2.
Մեկ միասնական մոտեցում Ձեր դպրոցի զարգացման համար

Մեկ միասնական մոտեցում Ձեր դպրոցի զարգացման համար

Սույն ձեռնարկի 2-րդ մասում ներկայացնում ենք դպրոցի ներառական զարգացման առանձնահատուկ մոտեցում: Մենք «ներառումը» սահմանում ենք որպես **ներառական արժեքների կենսագործում**: Մենք արժեքների շրջանակը ներկայացնում ենք որպես կրթության սկզբունքային, գործնական միջամտության հիմք կամ պատասխան՝ «Ինչպե՞ս ապրել կողք կողքի» հարցին: Մենք առաջարկում ենք մի շարք ներառական մանկավարժական սկզբունքներ: Մենք առաջարկում ենք մի նոր կրթակարգ կամ գիտելիքների փոխանցման 21-րդ դարին համահունչ մեթոդ, որը փոխկապված է *Ինդեքսի* արժեքների, սկզբունքների և հրամայականների հետ: Այս կերպ մենք պատասխանում ենք այն հարցին, թե «ի՞նչ գիտելիք է անհրաժեշտ՝ կողք կողքի լավ ապրելու համար»: Դա լրացնում է արժեքների վրա հիմնված զարգացման և ներառական ուսուցման, ուսումնառության քննարկումներում առկա երկարամյա բացը:

Մենք ցույց ենք տալիս, թե ինչպես է *Ինդեքսում* ներկայացված մոտեցումը զուգակցվում կրթության զարգացման սկզբունքային տեսակետներին, որոնք վերաբերում են իրավունքներին, ժողովրդավարական մասնակցությանը, բնապահպանական կայունությանը, քաղաքացիությանը, առողջության խթանմանը, բռնության և խտրականության բացառմանը: Մենք պնդում ենք, որ այս համընդհանուր ղ մտահոգությունները լավագույնս լուծելի են համակարգված և միասնական մոտեցման դեպքում:

«Ուսուցման և մասնակցության խոչընդոտներ», «ուսուցման և մասնակցության ապահովման ռեսուրսներ» և «բազմազանության աջակցություն» հասկացությունների միջոցով կարելի է իրականացնել դպրոցում արդեն առկա գիտելիքների ընդհանուր բացահայտ ուսումնասիրություն և առաջարկել գաղափարներ հետագա հետազոտությունների համար: Մենք *Ինդեքսի* վերանայման նյութը ներկայացնում ենք որպես երեք հարթություններ, որոնք առնչվում են մշակույթների, քաղաքականությունների և գործելակերպերի զարգացմանը: Ցուցիչների և հարցերի օգնությամբ կարելի է խորհել, թե ինչ գործողություններ են ենթադրում ներառական արժեքները դպրոցի, նրա շրջակա միջավայրի և համայնքների բոլոր ասպեկտների համար: Դրանք նաև օգնում են բացահայտելու արգելքներն ու ռեսուրսները: Հարցաթերթիկների հետ այդ նյութերը ծառայում են որպես լրացուցիչ գործիքներ՝ ներառական զարգացման պլան մշակելու և իրականացնելու նպատակով արդեն առկա գիտելիքի հիման վրա ընթացիկ իրավիճակի մանրազնին վերանայման համար: Այդպիսով, *Ինդեքսը* ապահովում է զարգացման պլանի ավելի միասնական և համակարգված մշակում՝ ընդգրկելով այն փոփոխությունները, որոնք ժամանակ առ ժամանակ ձևակերպվում են համագործակցային համայնքներում՝ չափահասների և երեխաների կողմից իրենց ընդհանուր արժեքներով ապրելու ընթացքում:

Ներառական արժեքների հիման վրա դպրոցների զարգացման ուղեցույց	23
«Ներառում» հասկացության հստակեցում	25
Արժեհամակարգի ձևավորում	27
Մանկավարժական սկզբունքների լրացում	40
Հրամայականների դիտարկում	41
Կրթակարգի քննարկում	42
Դաշինքների/միությունների ձևավորում	49
Խոչընդոտներ, ռեսուրսներ և աջակցություն	53
Վերանայման նպատակով օգտագործվող նյութեր	60

Ներառական արժեքների հիման վրա դպրոցների զարգացման ուղեցույց

«Ներառման ինդեքս. Ներառական արժեքների հիման վրա դպրոցների զարգացման ուղեցույց» ձեռնարկն առաջարկում է ինքնագնահատմանը և զարգացմանը աջակցող գործընթաց՝ որպես տեսչական ստուգման, մրցակցության և ձախողման վախի վրա հիմնված գործընթացի այլընտրանք: *Ինդեքսը* թույլ է տալիս իրականացնել Ձեր դպրոցի զարգացումն այլ անձանց հետ համագործակցությամբ՝ Ձեր սկզբունքների համաձայն: Այն կարելի է օգտագործել տարբեր եղանակներով: Կարող է օգնել հստակեցնելու մտածելակերպը և մղելու անհատական ու կոլեկտիվ գործողությունների, ինչպես նաև նախանշելու դպրոցի ու նրա համայնքների կրթական զարգացումը: Կարող է օգտագործվել ուսուցիչների, վարչական աշխատակազմի, ղեկավար մարմինների, ծնողների/խնամատարների և երիտասարդների կողմից որպես իրենց դպրոցների հետազոտման ու բարելավման միջոց: Կարող է ձևավորել նոր երկխոսություններ այն մասին, թե երեխաները ի՛նչ են սովորում դպրոցի ներսում և դրանից դուրս:

Նյութերը նախատեսված են այնպես, որ թույլ տան օգտվել հաստատության բնույթի և նրա բարելավման ուղիների վերաբերյալ դպրոցի աշխատակազմի, երեխաների, երիտասարդների և նրանց ընտանիքների հարուստ գիտելիքներից ու փորձից: *Ինդեքսով* աշխատելու գործընթացը թույլ է տալիս փոխանցել այդ հարուստ ռեսուրսները և դառնալ փոփոխության կրող: Այն համապարփակ փաստաթուղթ է, որ կարող է օգնել բոլորին սահմանելու հաստատության զարգացման հետագա քայլերը: Որքան էլ հաջողված և ներառական համարվի դպրոցը տվյալ պահին, միևնույնն է, *Ինդեքսը* կարող է նպաստել բոլորի ուսուցման ու մասնակցության խթանմանը և ներգրավվածության բացառման ճնշումների կրճատման գործընթացների իրականացմանը:

Առաջին անգամ ծանոթանալիս այնտեղ ներկայացված գաղափարների քանակը կարող է ճնշող թվալ: Սակայն, երբ *Ինդեքսից* օգտվողները սովորում են միաժամանակ կենտրոնանալ մեկ կամ մի քանի հարցերի, գիտակցում են նման համապարփակ փաստաթուղթ ունենալու կարևորությունը: Որևէ քաղաքի կամ երկրի ուղեցույցի նման *Ինդեքսը* թույլ է տալիս ընտրել այն վայրերը, ուր ցանկանում ես այցելել՝ միևնույն ժամանակ չկորցնելով այլ վայրեր այցելելու հնարավորությունը, երբ նախորդներն արդեն ուսումնասիրել ես: Այնուհետև *Ինդեքսը* թույլ է տալիս համատեղ ուժերով որոշել զարգացման հետագա առաջնահերթությունները, կազմել պլան և իրականացնել: Այնուամենայնիվ, ճիշտ այնպես, ինչպես որոշ մարդիկ ամենայն մանրամասնությամբ նախօրոք չեն պլանավորում օտար երկիր իրենց այցելությունը, այլ պարզապես սկսում են ուսումնասիրել նոր տեղանքը վայրէջքից անմիջապես հետո, այդպես էլ *Ինդեքսից* օգտվողները կարող են ընտրել իրենց հետաքրքրող հատվածը կամ գուցե նույնիսկ ընդամենը մեկ հարց և սկսել իրենց հարցադրումներն ու գործողությունները:

***Ինդեքսը* լրացուցիչ նախաձեռնություն չէ, այլ ներառական արժեքների հիման վրա դպրոցների բարելավման գործիք է**: Այն նվաճումների խթանման այլընտրանք չէ, այլ առնչվում է երեխաների, երիտասարդների ու մեծահասակների բոլոր ձեռքբերումներին: Խրախուսում է ակտիվ ուսումնառությունը, երբ երեխաներն ինտեգրում են ձեռք բերված գիտելիքներն իրենց իսկ փորձի և տարբեր աշխարհների իրողությունների հետ: Այն գործնական փաստաթուղթ է, որը կոչ է անում խորհելու, թե ինչ նշանակություն կարող է ունենալ ներառական արժեքների կենսագործումը դպրոցների տարբեր ասպեկտների համար, այդ թվում՝ աշխատասենյակներում, դասասենյակներում, խաղահրապարակներում, դպրոցի ներսում, ընտանիքների և համայնքների հետ ծավալվող հարաբերություններում: Այն ընդգծում է մշակույթներում դրական փոփոխությունների անհրաժեշտությունը՝ որպես զարգացման կայունության նախապայման:

Շատ դպրոցների մուտքի մոտ ներկայացված են դպրոցի արժեքները՝ փաստաթղթեր, ցուցատախտակներ ու պաստառներ, որոնք վկայում են, որ դպրոցը հասել է բարձր մակարդակի այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բնապահպանական կայունության ապահովումը, իրավունքների պաշտպանությունը, առողջության խթանումը, աշխատանքների արդյունա-

վետ կազմակերպումը: Հետաքրքիր է՝ արդյոք հակասական չէ՞ ներառման համար մրցանակ շնորհելը, քանի որ ներառական արժեքների կենսագործումն ինքնին պարգև է: Մենք չէինք ցանկանա դպրոցներին հանձնել վկայական առ այն, որ նրանք հասել են զարգացման վերջնական նպատակակետին: Դպրոցները մշտապես փոփոխվում են. երեխաներն ու աշխատակիցները գալիս ու գնում են, ձևավորվում են բացառման նոր ձևեր, հավաքագրվում են նոր ռեսուրսներ: Ներառական զարգացումն անընդմեջ գործընթաց է: Դպրոցը համարվում է «ներառական» միայն այն դեպքում, երբ որդեգրում է ներառական արժեքներով առաջնորդվող զարգացման ուղի: Այնուամենայնիվ, մենք կողմ ենք, որ դպրոցները տոնեն *Ինդեքսով* աշխատանքի որոշակի ժամանակահատվածի կամ փուլի ավարտը՝ իրենց աշխատակիցների, ծնողների և երեխաների մասնակցությամբ նվաճումների ցանկ կազմելով:

Ինդեքսը՝ որպես երկխոսության հրավեր

Ինդեքսը կազմված է հարյուրավոր հարցերից, որոնցից յուրաքանչյուրը կարող է դառնալ երկարատև խորհրդածության սկիզբ, առաջ քաշել հետագա հարցեր և պահանջել լրացուցիչ պատասխաններ: Ինդեքսի նյութերը, հետևաբար, չեն նախասահմանում, թե ինչ է պահանջվում մտածել կամ անել, այլ հորդորում են երկխոսություն ծավալել: Երբ երկու կամ ավելի մարդիկ մտնում են երկխոսության մեջ, նրանք սկսում են փոխադարձաբար քննարկել և ուսումնասիրել միմյանց կարծիքներն ու ենթադրությունները հավասարության, ազնվության ու վստահության հիման վրա: Այս դեպքում լսելը դառնում է ավելի կարևոր, քան խոսելը: Նախկին դիրքորոշման հանդեպ կառչածությունը գոնե ժամանակավորապես թուլանում է, և համընդհանուր քննարկումը դառնում է իրատեսական: Երկխոսության ընթացքում շարժում ենթադրող յուրաքանչյուր առաջարկ դառնում է համատեղ քննարկման և ընդհանուր պատասխանատվության առարկա: Երկխոսությունը՝ որպես երևույթ, հակադրվում է քննարկմանը. երկուսն էլ սերում են նույն արմատից, ինչպես «հարված» (percussion) և «ցնցում» (concussion) բառերը[6]: Ի դեպ, «քննարկում»-ը կարող է ունենալ նաև ավելի նուրբ իմաստ, և այս հակադրությունը կարող է ուսուցողական լինել:

Գծապատկեր 5	Ներառականությունը կրթության մեջ նշանակում է՝

- կենսագործել ներառական արժեքները,
- յուրաքանչյուր կյանք և մահ դիտարկել հավասարարժեք,
- աջակցել բոլորին՝ զգալ իրենց պատկանելությունը որևէ խմբի,
- խթանել տեղական դպրոցների մասնակցությունը ուսուցման ու դասավանդման միջոցառումներին, հարաբերությունների հաստատմանը և համայնքների գործունեությանը,
- բարելավել դպրոցների որակը ինչպես նրա աշխատակազմի ու ծնողների/խնամատարների, այնպես էլ երեխաների համար,
- նվազեցնել բացառումը, խտրականությունը, ուսման և մասնակցության խոչընդոտները,
- որոշ երեխաների համար խոչընդոտների կրճատման փորձը կիրառել երեխաների ավելի լայն շրջանում,
- վերաձևակերպել մշակույթները, քաղաքականությունը և գործելակերպերը տարբերություններին արձագանքելիս՝ բոլորին հավասարապես գնահատելու նպատակով,
- կրթությունը փոխկապակցել տեղական և համամոլորակային իրողություններին,
- երեխաների ու մեծահասակների միջև տարբերությունները դիտարկել որպես կրթական ռեսուրսներ,
- ճանաչել իրենց բնակության տարածքում երեխաների՝ բարձր որակի կրթություն ստանալու իրավունքը,
- ընդգծել դպրոցի համայնքների և արժեքների զարգացումը, ինչպես նաև ձեռքբերումները,
- խթանել դպրոցների և շրջակա համայնքների միջև փոխադարձ կապերի հաստատումը,
- գիտակցել, որ կրթության ոլորտում «ներառումը» հասարակությանն ինտեգրվելու բաղադրիչներից մեկն է:

6 Boem, D., (1996) On Dialogue, London, Routledge.

«Ներառում» հասկացության հստակեցում

Ինդեքսում նկարագրված «ներառումը», այսպիսով, կրթության և հասարակության զարգացման սկզբունքային մոտեցում է: Այն առնչվում է ժողովրդավարական մասնակցությանը կրթության ոլորտում և դրանից դուրս: Այն չի վերաբերում մի որոշակի խումբ երեխաների կրթության առանձին կողմին, այլ ապահովում է մի շարք ոլորտներում տեղի ունեցող զարգացման գործողությունների կապակցվածությունը՝ բոլորի, այդ թվում՝ երեխաների և նրանց ընտանիքների, դպրոցների ու համապատասխան կառույցների աշխատակիցների, ղեկավար մարմինների ու համայնքի այլ անդամների ուսումնասիրությունը և մասնակցությունը խրախուսելու նպատակով:

Յուրաքանչյուր ոք յուրովի է պատկերացնում «ներառման» իմաստը: «Ներառման» նման համալիր հասկացությունները դժվար է մեկնաբանել մեկ նախադասությամբ: Ըստ էության, շատերի համար «ներառման» հասկացությունը դառնում է ավելի հստակ, երբ նրանք սկսում են ուսումնասիրել *Ինդեքսի* ցուցիչներն ու հարցերը: Ներառման գործնական կիրառման այս օրինակներն ուսումնասիրելը կարող է հանգեցնել ավելի մեծ փոխզիջման, քան գործողություններից զուրկ տեսական ծավալուն քննարկումները:

Ներառման մեր մոտեցման որոշ առանձնահատկություններն ամփոփված են Գծապատկեր 5-ում: Մեզ համար ներառումն անվերջ գործընթաց է՝ անհատների ներգրավվածությամբ, մասնակցային համակարգերի և ինստիտուտների ստեղծմամբ և ներառական արժեքների խթանմամբ: Յուրաքանչյուր դեպքում այն բոլորի ներառումն է տեղական ուսումնական հաստատությունների մշակույթներում, համայնքներում և կրթակարգերում՝ բացառման ու խտրականության բոլոր ձևերի կրճատումով: Միտված է լսելու երեխաների ձայնը և գործելու դրան համապատասխան: Միաժամանակ հաշվի է առնում երեխաների ընտանիքների ու դպրոցների աշխատակիցների կարծիքներն այնպես, ինչպես երեխաներինը: Հնարավոր չէ հասկանալ, թե ինչպես կարելի է խթանել երեխաների լայնածավալ մասնակցությունը, եթե նրանց հետ աշխատող մեծահասակները որևէ կարծիք չեն հայտնում իրենց աշխատանքային գործունեության մանրամասների վերաբերյալ որոշումների առնչությամբ: Մինչդեռ շատերը, «ներառում» ասելով, սովորաբար մտածում են հաշմանդամություն կամ «հատուկ կրթական կարիք ունեցող» երեխաների ներառման կամ մասնակցության մասին: Այս տեսակետը համարում ենք ոչ պակաս խնդրահարույց, քանի որ նեղ իմաստով ներառումը կարելի է դիտարկել շահերի պաշտպանության խնդիրների, տարիքային և սեռային տարբերության, էթնիկ կամ ազգային պատկանելության, սոցիալական դրության, ինչպես նաև հաշմանդամության տեսանկյունից: Այս հարցին ավելի մանրամասն անդրադառնում ենք 53-55 էջերում՝ «հատուկ կրթական կարիքներ» հասկացությունը «ուսուցման և մասնակցության խոչընդոտներ» հասկացությամբ փոխարինելու հարցը քննարկելիս:

Ներառման վերաբերյալ գաղափարը շփոթվում է «սոցիալական ներառման» եզրույթի տարբեր կիրառությունների հետ: Վերջինս երբեմն նշանակում է «հաղթահարել աղքատության և անբավարար բնակարանային պայմաններով պայմանավորված զրկանքները», իսկ այլ դեպքերում՝ հաղթահարել անբավարար պայմաններով թելադրված խարանը: «Սոցիալական ներառում կամ ինտեգրում» հասկացությունը նաև օգտագործվում է պաշտոնական փաստաթղթերում և մանկավարժների կողմից՝ «վարքագծային խնդիրների» հաղթահարման իմաստով: Գիտահետազոտական աշխատանքներին[7] մասնակցած մի ուսուցիչ ինքն իրեն և գործընկերոջը ներկայացրել է հետևյալ խոսքերով. «Ես նպաստում եմ հատուկ կարիքներ ունեցող անձանց ներառմանը, իսկ նա՝ չարաճճի տղաների սոցիալական ներառմանը»: Սակայն այն գաղափարը, որ «ներառումը» վերաբերում է մի խմբի, իսկ «սոցիալական ներառումը կամ ինտեգրումը»՝ մեկ այլ խմբի, անօգուտ է: Քանի որ ներառումը հաճախ դիտարկվում է հաշմանդամություն ունեցող անձանց առնչությամբ, նման մոտեցումը կարող է ձևավորել համոզմունք, որ նրանք ենթարկվում են մի շարք ոչ-սոցիալա-

[7] Ainscow, M., Booth, T. and Dyson, A. (2006) Improving schools, developing inclusion. London, Routledge.

կան բացառումների՝ որպես իրենց հաշմանդամության անմիջական հետևանք: Ներառման ու բացառման բոլոր ձևերը սոցիալական բնույթ ունեն, որոնք առաջանում են մարդկանց ու միջավայրի փոխազդեցության ընթացքում:

Ներառման ընդլայնումը ենթադրում է բացառման կրճատում: Ներառման հասնելու համար անհրաժեշտ է պայքարել մասնակցությանը խոչընդոտող բացառման ճնշումների դեմ: Քանի որ մենք փորձում ենք խթանել դպրոցների զարգացման տեսակետ, ապա նախընտրում ենք յուրովի սահմանել համապատասխան հասկացությունները: Մինչդեռ «բացառումը» հաճախ կիրառվում է որոշակի իմաստով. 1986թ. Կրթության մասին օրենքի համաձայն՝ դա վերաբերում է «կարգապահական պահանջին»՝ դպրոցից երեխայի ժամանակավոր կամ մշտական հեռացում՝ դպրոցի կանոնները խախտելու պատճառով: Այնուամենայնիվ, կարգապահական նկատառումներով երեխաներին դպրոցից հեռացնելը սովորաբար որոշակի փուլ է, որը դուրս է մնում բացառման գործընթացներից:

Բոլորի մասնակցության ապահովումը չի կարող իրականացվել միայն ֆիզիկական անձանց ուշադրությունը կենտրոնացնելով: Բացառման ճնշումների ենթարկված անձանց մասնակցության սահմանափակումը կարելի է հաղթահարել միայն այն դեպքում, երբ դպրոցն ընդունում և հարգում է տարբերությունները՝ բոլորին հավասարապես արժևորելով: Բավարար չէ պահանջել, որ մեր կրթական համակարգերն ու հաստատությունները պարզապես արձագանքեն երեխաների առանձնահատկություններին, քանի որ դա կարող է ապահովվել դպրոցների ներսում և դպրոցների միջև աստիճանակարգի (հիերարխիա) ստեղծմամբ: Դպրոցները կարող են արձագանքել տարբերություններին, օրինակ, երեխաներին դասակարգելով ըստ իրենց առաջադիմության, հաշմանդամության, կրոնական պատկանելության, սոցիալական, ընտանեկան վիճակի և այլն: Դպրոցների ներսում և դպրոցների միջև դասակարգումը երեխաների առաջադիմության հիման վրա, ընդհանուր առմամբ, ամրապնդվում է՝ շատ վաղ տարիքում երեխաներին իրենց ունակությունների համաձայն պիտակավորելով: Դա սահմանափակում է ապագա ձեռքբերումների մասին ակնկալիքները և բացասաբար է ազդում երեխաների ինքնավստահության վրա:[8] Բոլորին հավասարապես գնահատել նշանակում է, որ դպրոցների դռները բաց են շրջակա համայնքների բոլոր երեխաների առաջ: Հետևաբար, ներառումը ենթադրում է բոլորի համար ընդհանուր դպրոցի զարգացում, ինչպես նաև՝ հանրակրթություն համայնքի նախակրթարաններում, տարրական ու միջնակարգ դպրոցներում:

Այնուամենայնիվ, ի լրումն անհատների բարօրության և կրթական հաստատությունների պատրաստակամության, ներառումը նախևառաջ ներառական արժեքներն են գործողության մեջ: Դպրոցների բարելավման գործընթացի և արժեքների շրջանակի փոխկապվածությամբ կարելի է բարեփոխել ուսումնական հաստատությունները: Որոշակի արժեքներին հավատարիմ մնալու շնորհիվ է, որ հնարավոր է դառնում հաղթահարել բացառումը և խթանել մասնակցությունը: Եթե ներառման գործընթացը չի առնչվում խորը արժեքներին, ապա կարող է համարվել պարզապես «նորաձևություն» կամ ղեկավար մարմինների հրահանգների կատարում:

[8] Hart, S., Dixon, A., Drummond, M.J. and McIntyre, D. (2006) Learning without limits, Buckingham, Open University Press. http://learningwithoutlimits.educ.cam.ac.uk

Արժեհամակարգի ձեւավորում

Հնարավոր չէ հասկանալ՝ արդյոք ճիշտ ենք վարվում կամ վարվել, առանց մեր գործողությունների ու արժեքների միջև փոխկապակցվածությունը հասկանալու: Այլ անձանց վրա ազդեցություն ունեցող բոլոր գործողությունները հիմնված են տարբեր արժեքների վրա: Ամեն մի նման գործողություն դառնում է բարոյական փաստարկ, անկախ այն հանգամանքից՝ արդյոք մենք տեղյակ ենք դրա մասին, թե ոչ: Ընդունված է ասել՝ սա է ճիշտը: Արժեհամակարգեր ձևավորելիս մենք փաստում ենք, թե ինչպես ենք ցանկանում ապրել միմյանց կողքին և կրթել-լուսավորել մեկս մյուսիս տվյալ պահին և ապագայում: Արժեքները մշակույթների մի մասն են: Քանի որ մարդիկ դպրոցներում ձևավորում են արժեքների համընդհանուր կառուցվածքը, նրանք ըմբռնում են իրենց կապը գործողությունների մանրամասների հետ, ինչը օգնում է պահպանելու այն փոփոխությունները, որոնք ձեռք են բերվում քաղաքականության մեջ կամ պրակտիկայում՝ դասարանային աշխատանքներում:

Դպրոցներից շատերն արդեն ունեն ձևավորված արժեհամակարգեր: *Ինդեքսում* արժեքների տարբերակող առանձնահատկությունն այն է, որ նրանք կոչված են ազդելու գործունեության մանրամասների վրա և դառնալու դպրոցի զարգացումն առաջ մղող ուժ: Արժեքների ու գործողությունների միջև փոխկապակցվածության հստակությունը այն առավել գործնական քայլն է, որ կարելի է կիրառել կրթության ոլորտում: Սույն ուղեցույցը առաջարկում է քայլեր հետագա գործողությունների համար և թե ինչպես հասկանալ այլ անձանց գործողությունները: *Ինդեքսն* առաջարկում է ձեր դպրոցների կրթական զարգացման հիմքում նախատեսել գործողություններ, որոնք բխում են ձեր իսկ խորը արժեքներից, այլ ոչ թե որևէ երրորդ անձի՝ արժեքների հիման վրա մշակած մի շարք ծրագրերից կամ նախաձեռնություններից, որոնք կարող են մերժվել ձեր կողմից ակնհայտ դառնալուն պես:

Ներառական կրթության զարգացմանը նպաստող արժեքները մեկ ամբողջական համակարգում մանրակրկիտ համախմբելով՝ ստեղծվել է հասկացությունների մի ցանկ, որն անդրադառնում է *հավասարությանը, իրավունքներին, մասնակցությանը, հասարակությանը, համայնքին, բազմազանությանը, կայունությանը, բռնության բացառմանը, վստահությանը, կարեկցանքին, ազնվությանը, խիզախությանը, ուրախությանը, սիրուն, հույսին, լավատեսությանը, գեղեցկությանն ու իմաստությանը:* Այս հասկացություններից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես արժեք, որը կարելի է ընկալել դրանց նշանակության՝ ստորև ներկայացված ավելի մանրամասն բացատրությամբ: Յուրաքանչյուր արժեք ամփոփում է գործողությունների ոլորտ և կրթության ու հասարակության զարգացման ակնկալիքները՝ ավելի լայն մասշտաբով: Այս ցանկը Մեծ Բրիտանիայում և աշխարհի տարբեր երկրներում ուսուցիչների ու աշակերտների հետ կազմակերպված բազմաթիվ քննարկումների արդյունք է: Օրինակ՝ այնպիսի փոխկապակցված արժեքների ներառումը ցանկում, ինչպիսիք են ազնվությունը, վստահությունը և խիզախությունը, վերջնականապես որոշվել է մի շարք սեմինարների ընթացքում տեղի ունեցած քննարկումների արդյունքում՝ *Ինդեքսի* նախորդ հրատարակության օգտագործման ժամանակ, երբ քննարկման մասնակից դպրոցների ղեկավարները խրախուսում են իրենց դպրոցների թե՛ թույլ, թե՛ ուժեղ կողմերի անկեղծ խոստովանությունը, և թե ինչպե՛ս է նման մոտեցումն ապահովվում սեմինարների ընթացքում համընդհանուր խնդրի շուրջ այնպիսի անձանց հետ համագործակցելու շնորհիվ, որոնք վստահորեն աջակցում են և զերծ են մնում քննադատություններից ու մեղադրանքներից:

Գծապատկեր 6 **Ներառական արժեքների շրջանակ**



Թեև շատերն են խոստովանել, թե որքան շատ են հավանել 13-րդ էջում արժեքները ներկայացնող ծաղկի պատկերը, այդուհանդերձ, ցանկանում ենք ներկայացնել ներառական արժեքների շրջանակը (արժեհամակարգը) երեք հարթություններում՝ Գծապատկեր 6-ի օրինակով: Այն թույլ է տալիս ստեղծել փոխադարձաբար աջակցող և փոխազդող իմաստների մեկ ամբողջական պատկեր:

Ինդեքսի վերջին հրատարակության մեջ արտահայտել ենք այն կարծիքը, որ որոշ արժեքներ ավելի մեծ ներդրում ունեն ներառական զարգացման ոլորտում, քան մյուսները: Այժմ տեսնում ենք, որ դա այնքան էլ այդպես չէ: Վերջին տարիներին տարբեր դպրոցներում ունեցած բազմաթիվ քննարկումներում բախվել ենք այն իրողությանը, որ տարբեր մարդիկ ընտրում են մեկնարկային տարբեր արժեքներ՝ վերջիններս գործողության մեջ դնելու իրենց հետազոտությունների համար: Սովորաբար, ի վերջո, նրանք մատնանշում են արժեհամակարգի բոլոր արժեքների միջև առկա փոխադարձ կապերը: Որոշակի արժեքի օգտակարության վերաբերյալ կասկածանքի դեպքում փորձեք այն հանել կրթության ոլորտից: Ինչպիսի՞ն կլիներ կրթությունն առանց վստահության, ազնվության, խիզախության, կարեկցանքի, ուրախության, սիրո, հույսի կամ գեղեցկության: Մենք ցանկանում ենք հավատալ, որ դպրոցները կարող են լինել այն վայրը, որտեղ սնուցվում է մարդկային ոգին: Սակայն տարօրինակ կլինի մտահոգություն արտահայտել դպրոցներում բոլորի ներառման խնդրի շուրջ, արժեհամակարգից դուրս թողնել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են հավասարությունը, իրավունքները, մասնակցությունը և հասարակությունը/ համայնքը: Իրավունքները ծագում են՝ արժևորելով հավասարությունը, սակայն այս երկու հասկացությունները քննվում են առանձին-առանձին՝ ելնելով մարդկանց հավասարության արժեքի ճանաչման ու խտրականության դեմ պայքարի ռազմավարական կարևորությունից:

Սույն աշխատության մշակման ընթացքում ոմանք վիճարկում էին այն հարցը, որ բնապահպանական կայունության ապահովման և շրջակա միջավայրի աստիճանական վատթարացման ծավալների նվազեցման խնդիրները, որոնք պայմանավորված են, օրինակ, գլոբալ տաքացմամբ, չեն առնչվում ներառման գաղափարին: Դա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ մենք հակված ենք մտածելու խնդիրների մասին առանձին՝ իրենց սահմաններում, ինչն ինքնին բացառման միտում է: Սակայն, այն պահից սկսած, երբ մարդիկ ընդունում են ներկա ու ապագա սերունդների համար կենսունակ միջավայրում ապրելու հիմնարար նշանակությունը, այդ կապը պարզ է դառնում: Ջերմաստիճանի գլոբալ բարձրացման ծավալների կրճատման ուղղությամբ միջոցառումներ չկիրառելու դեպքում ջրհեղեղները համաշխարհային մակարդակով կարող են մեծապես ազդել ընդարձակ հողատարածքների վրա՝ ավերելով համայնքներ, տներ, դպրոցներ և կտրուկ փոխելով տվյալ համայնքների կենսակերպը: Այնպիսի արժեքներ, ինչպես, օրինակ, կայունությունը, կրում է հրամայական կարգավիճակ կրթական զարգացման համար:

Հավասարություն

Հավասարությունը և անաչառության հարակից հասկացությունները՝ արդարությունը և արդարադատությունը, առանցքային դեր ունեն ներառական արժեքների համակարգում: Անհավասարությունը, անարդարությունը և անաչառության ու արդարադատության բացակայությունը բացառման ձևեր են: «Հավասարություն» չի նշանակում, որ բոլորը նույնն են, կամ բոլորի նկատմամբ ցուցաբերվում է միևնույն վերաբերմունքը, այլ բոլորը հավասարապես արժևորված են: Դա ազդում է մեծահասակների ու երեխաների՝ դպրոցներում միմյանց նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի վրա, իր ազդեցությունն ունի նաև դպրոցներում ու դասարաններում և դրանց միջև երեխաների խմբավորումների վրա, երբ անհրաժեշտ է խուսափել արժեքների աստիճանակարգեր /հիերարխիաներ/ սահմանելուց: Դա վերաբերում է նաև դպրոցների կառավարման ոճին: Հավասարության ներառական կողմը չի վերաբերում կարգավիճակի, հարստության ու կենսապայմանների անհավասարության դեմ «հնարավորությունների հավասարության» ապահովմանը, այլ նման անհավասարությունների կրճատմանը:

Տեղական և գլոբալ մակարդակներում մարդկանց կողմից հարստության կամ կենսապայմանների անհավասարությունների ընդունման արտացոլումը ներառման շուրջ խորը տարաձայնությունների առիթ է: Մարդիկ հաճախ չեն մտածում կամ չեն վարվում այնպես, որ «ամեն կյանք ու ամեն մահ հավասար ար-

ժեք ունի», ոչ միայն այն պատճառով, որ նրանք, բնականաբար, ավելի շատ մտահոգվում են իրենց մտերիմների մասին, այլ, քանի որ նրանք չեն կարծում, թե իրենց սեփական ընտանիքներից, համայնքներից կամ երկրից դուրս ուրիշ մարդկանց տառապանքը պետք է դրդի այն նվազեցնելու գործողության:

Իրավունքներ

Իրավունքների խնդրի շուրջ ուշադրության կենտրոնացումն առնչվում է հավասարության ապահովման խնդրին: Դա մարդկանց հավասար արժեքի արտահայտման եղանակ է այն առումով, որ նրանք ունեն հավասար իրավունքներ: Վկայակոչել իրավունքները նշանակում է պնդել, որ յուրաքանչյուր ոք ունի կարիքից զերծ լինելու և ազատ գործելու հավասար իրավունքներ: Հետևաբար, յուրաքանչյուր ոք ունի սննդի, կացարանի, խնամքի, պաշտպանության և, որպես քաղաքացի, մասնակցության հավասար իրավունք: Այն դեպքերում, երբ գործողությունները հանգեցնում են անհավասարության, իրավունքները համարվում են ոտնահարված: Ընտրության կամ սեփականության իրավունքի յուրաքանչյուր գաղափար սահմանափակվում է, երբ սրվում է այլ անձանց կողմից իրենց իրավունքներից օգտվելու սոցիալական անհավասարությունը: Երեխաներն ու երիտասարդ անձինք իրավունք ունեն իրենց բնակավայրում ստանալու անվճար, հանրային (այսինքն՝ պետության կողմից տրամադրվող) բարձրորակ հանրակրթություն: Կրթության ոլորտում մարդու իրավունքների ապահովումը նպաստում է փոխադարձաբար հոգատար հարաբերությունների խթանմանը:

Երբեմն փորձ է արվում անհարկի ընդգծել իրավունքների ու պարտականությունների միջև կապը, սակայն դա սխալ մոտեցում է այն դեպքում, երբ որոշակի իրավունք շնորհելը պայմանավորված է գործողության որոշակի եղանակով: Իրավունքներն անվերապահ են և տնօրինվում են յուրաքանչյուրի կողմից: Այնուամենայնիվ, իրավունքները կարող են հակասության մեջ լինել, երբ, օրինակ, որևէ մեկի անվտանգության իրավունքը խոչընդոտում է մեկ այլ մարդու ազատությունը: Ակնհայտ է, որ գործնականում ինչպես հավասարության հայեցակարգը, այնպես էլ իրավունքները վիճարկվում են, անկախ Միացյալ ազգերի կազմակերպության փաստաթղթերում արտահայտված ակնհայտ պարտավորությունից: Դա ակնհայտ է՝ ամբողջ աշխարհում իրավունքների համատարած ոտնահարման դեպքերին ու խախտումներին անդրադառնալու փորձերի բացակայության պարագայում: Մարդու իրավունքների նկատառումները կարող են նաև հարցեր առաջացնել շնչավոր այլ էակների նկատմամբ վերաբերմունքի շուրջ և հանգեցնել կյանքի բոլոր ձևերի, նույնիսկ մոլորակի ամբողջականության նկատմամբ իրավունքների ընդլայնման գաղափարին (տե՛ս էջ 290): Իրավունքները ՄԱԿ-ի «Դպրոցների իրավունքների հարգման» մրցանակի շրջանակներում դպրոցների բարելավման ելակետ են:[9]

Մասնակցություն

Կրթական հաստատություններում աշխատակազմի, երիտասարդների և նրանց ընտանիքների մասնակցության մակարդակը նույնպես ցածր է: Մասնակցությունը ավելին է, քան պարզապես ներկայություն ապահովելը, սակայն ամեն ինչ սկսվում է այդտեղից: Մասնակցությունը ներառում է երկու տարրեր՝ մասնակցային գործողությունը կամ գործունեությունը և անձամբ մասնակցին: Անձը համարվում է մասնակից ոչ միայն այն ժամանակ, երբ ներգրավված է որևէ ընդհանուր գործունեության մեջ, այլ նաև այն դեպքերում, երբ նա զգում է իր ներգրավվածությունն ու ընդունված լինելը: Մասնակցություն նշանակում է լինել միասին և համագործակցել այլ անձանց հետ: Այն ակտիվ ներգրավվածություն է ուսուցման գործընթացին, ներգրավվածություն իր իսկ կյանքի, այդ թվում՝ կրթության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին և փոխկապակցված է ժողովրդավարության ու ազատության գաղափարներին: Այն նաև մեկ այլ կարևոր իրավունք է, սեփական մասնակցությունից հրաժարվելու իրավունք՝ խմբի դեմ ինքնավարության արտահայտմամբ և «ոչ» ասելով: Դա կարող է ներառել խիզախության դրսևորում: Սեփական գործողությունների, մտադրությունների, զգացմունքների աղբյուրի ու էության գիտակցումը թույլ է տալիս ապահովել ակտիվ մասնակցություն: Մասնակցությունը հավասարության սկզբունքով երկխոսություն է այլ անձանց հետ՝ այդպիսով, պահանջելով կանխամտածված մի կողմ դնել կարգավիճակի և իշխանության տարբերությունները: Մասնակցությունն աճում է, երբ այլ

[9] http://www.unicef.org.uk/rights-respecting-schools/

անձանց հետ շփումն ամրապնդում է ինքնության զգացումը, ուրիշների կողմից ընդունված ու գնահատված լինելու հանգամանքը:

Բազմազանություն

Ներառական արժեքների նկատմամբ հարգանքն այլ անձանց գնահատումն է և լավ վերաբերմունքի դրսևորումը՝ ընդունելով այն ներդրումները, որ նրանք ունեն հասարակության կյանքում՝ իրենց անհատականությամբ և դրական գործողություններով պայմանավորված: Այն չի ենթադրում մարդկանց գնահատում՝ ըստ իրենց կարգավիճակի կամ իշխանության:

Այնուամենայնիվ, բազմազանությունը կամ տարբեր լինելը երբեմն օգտագործվում է աղավաղված իմաստով և ասոցացվում է «այլ լինելուն», մեզ նման չլինելուն: Նկատի ունենանք, որ համայնքները դիտվում են որպես միատարր ամբողջություն, երբ դրանց ներքին բազմազանությունն անտեսանելի է:

Միաժամանակ, մարդկանց բազմազանության ընդունումն ունի սահմաններ: Բացառվում են այլ անձանց կամ շրջակա միջավայրի նկատմամբ նկրտումները կամ դրանց արժևորումը, իրավունքների խախտումը, նույնիսկ եթե դրանք ամուր ինտեգրված են անձի ինքնությանը:

Բազմազանության մերժումը սովորաբար մեր ներքին այլության ժխտումն է: Այսպիսով, երբ մարդիկ չեն ցանկանում ընդունել հաշմանդամություն ունենալու ու ծեր լինելու իրենց կարգավիճակը, դա հանգեցնում է անձի տարանջատման և ծեր կամ հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ խտրականության ամրապնդման: Ներառական մոտեցումը ենթադրում է բազմազանության ընմբռնում և հակադրվում է բազմազանությունը կամ տարօրինակությունը որպես թերարժեքություն ընկալելու խորապես վտանգավոր մտայնությանը: Երբ նման մոտեցումը խոր արմատներ է ձգում մշակույթում, կարող է հանգեցնել ծայրահեղ խտրականության, նույնիսկ ցեղասպանության:[10]

Հասարակություն/համայնք

Հասարակության /համայնքի կառուցման խնդիրն է ընդունել այն հանգամանքը, որ մենք ապրում ենք այլ անձանց հետ հարաբերվելով, և որ բարեկամությունը մեր բարեկեցության հիմնարար նախապայմաններից է: Հասարակությունը/համայնքը կառուցվում է մշակույթների միջոցով, որոնք խրախուսում են համագործակցությունը: Հասարակության ներառական մոտեցման հիմքում ընտանիքի և ընկերական շրջապատի սահմաններից դուրս մտերմական կապվածության ու պարտականության առավել ընդգրկուն զգացումն է: Այն առնչվում է այլ անձանց նկատմամբ պատասխանատվության զգացման և հանրային ծառայության, քաղաքացիության և համաշխարհային փոխկախվածության ճանաչման գաղափարներին: Ներառական դպրոցի գաղափարի շուրջ զարգացող համայնքը խթանում է այն մոդելը, որ պահանջում է լինել պատասխանատու և ակտիվ քաղաքացի, որի իրավունքները հարգվում են նաև դպրոցի սահմաններից դուրս: Ներառական համայնքները միշտ բաց են և ընդլայնվում են նոր անդամներով, որոնք նպաստում են դրանց վերափոխմանը: Կրթության ոլորտում ներառումը փոխադարձաբար ներգործող հարաբերությունների զարգացումն է դպրոցների ներքին սահմաններում և դպրոցների ու նրանց հարակից համայնքների միջև: Համայնքի խնդիրը համատեղ աշխատանքի մեջ է, որը պահանջում է կոլեգիալ ու համերաշխ մոտեցում, այն թույլ է տալիս ըմբռնել, թե ինչպես կարելի է հաստատություններում տեղի ունեցող փոփոխությունների առաջընթացը լավագույնս ապահովել մարդկանց միասնական գործողություններով:

Կայունություն

Կրթության առավել հիմնարար նպատակն է երեխաներին ու երիտասարդներին նախապատրաստել տեղական համայնքներում, շրջակա միջավայրերում և աշխարհում կայուն կենսակերպի համար: Ներառական արժեքներին նվիրվածությունը պահանջում է նվիրվածություն ապագա սերունդների բարեկեցու-

[10] Այս վերջին նախադասությունը պահանջում է հղում Պրիմո Լևիի 1996թ. աշխատությանը՝ *«Գոյատևում Օսվենցիմում»* (Survival in Auschwitz), Նյու Յորք, «Կոլլիեր Բուքս» հրատարակչություն, էջ 9: «Շատ մարդիկ, շատ ազգեր կարող են քիչ թե շատ գիտակցաբար համարել, որ յուրաքանչյուր օտար թշնամի է: Այդ համոզմունքն ունի խորը արմատներ, ինչպես մի թաքնված վարակ. այն դրսևորվում է միայն պատահական, չկապակցված գործողություններում և որևէ պատճառային համակարգի հիմք չի կարող լինել: Սակայն, երբ դա իսկապես բացահայտվում է, երբ չբարձրաձայնված անառարկելի ճշմարտությունը (դոգման) դառնում է հավաքաբանության (սիլլոգիզմի) կարևոր բաղադրիչ, ապա շղթայի վերջում գտնվում է [համակենտրոնացման ճամբարը]»:

թյանը: Ներառման շուրջ քննարկումները մշտապես պահանջում են պատասխանել հետևյալ հարցին՝ «Ներառում որտե՞ղ»: Ներառական ճանապարհով զարգացող դպրոցն այն միջավայրն է, որը խրախուսում է բոլորի ուսումնառության ու մասնակցության կայուն զարգացումը և բացառման ու խտրականության ծավալների երկարամյա կրճատումը: Նման դպրոցները խուսափում են կարճաժամկետ չհամակարգված փոփոխություններից՝ միանալով այնպիսի ծրագրերի ու նախաձեռնությունների, որոնք սերտորեն կապված են իրենց երկարաժամկետ հանձնառություններին: Շրջակա միջավայրի կայունությունը ներառական մոտեցման կենտրոնական տարրերից է մի ժամանակահատվածում, երբ շրջակա միջավայրի աստիճանական վատթարացումը, անտառահատումները և մոլորակի տաքացումը սպառնում են բոլորիս կյանքի որակին և արդեն իսկ սպառնում են միլիոնավոր մարդկանց կյանքին՝ ամբողջ աշխարհում: Ներառական մոտեցմամբ զարգացող դպրոցները պետք է մտահոգված լինեն իրենց սահմաններում և դրանցից դուրս ֆիզիկական ու բնական միջավայրի պահպանման խնդրով: Սակայն «էկոլոգիական գրագիտությունը» պետք է ձևավորվի ու զարգանա որպես ընբռնում և հարգանք բնության նկատմամբ, այլ ոչ թե պարզապես աղետի վախ: Այն պետք է ներշնչի հույս ու լավատեսություն, ըստ որի՝ վտանգները կարելի է հաղթահարել: Կայունություն ապահովելու համար անհրաժեշտ է, որ բոլոր փոփոխություններն ինտեգրվեն մշակույթներում և դրանց միջոցով կապակցվեն ինքնությունների զարգացմանը:

Բռնության բացառում

Բռնության բացառումը պահանջում է լսել ու հասկանալ այլ անձանց տեսակետը և գնահատել նրանց փաստարկների արժեքը: Այն պահանջում է երեխաների ու մեծահասակների բանակցային, միջնորդության և հակամարտությունների կարգավորման հմտությունների զարգացում: Պահանջում է, որ մեծահասակները իրենց վարքով զարգացնեն բռնության բացառման մոդելը: Հավասարների հասարակության սահմաններում վեճերը լուծվում են երկխոսության, այլ ոչ թե կարգավիճակի ու ֆիզիկական ուժի միջև տարբերությամբ ստեղծված պարտադրանքով: Դա չի նշանակում, որ մարդիկ խուսափում են մարտահրավերներ նետելուց կամ ընդունելուց և ժխտում են անհամաձայնությունը, նրանք օգտագործում են մարտահրավերները՝ անդրադարձ կատարելու և բացահայտումներ անելու համար:[11] Այլ անձանց ահաբեկելը սեփական իշխանության չարաշահման հետևանք է, որի նպատակն է ստիպել դիմացինին խոցելի զգալ ֆիզիկապես կամ հոգեպես: Ազգային պատկանելության, սեռի, հաշմանդամության, տարիքի, համոզմունքների, կրոնի և այլ պատճառով մարդկանց նկատմամբ ոտնձգություններն ու նրանց ահաբեկելը բռնության ձևեր են: Բռնության բացառման հանձնառությունը կարող է ներառել հակամարտությունների կարգավորման դժվարին ճանապարհներ: Դա հանգեցնում է «դեմքը», «հարգանքը կորցնելու» և դրանից բխող «վրեժխնդրության» շուրջ պատկերացումների փոփոխմանը: Անհրաժեշտ է հավասարակշռություն պահպանել հաստատակամության և ագրեսիայի միջև: Զայրույթը դիտվում է որպես որևէ անձի կամ իրադարձության նկատմամբ զգացմունքների ուժգնության կարևոր նշան, սակայն այն պետք է ուղղվի արդյունավետ գործողության՝ հնարավորինս խուսափելով ագրեսիվ արձագանքից: Ինստիտուցիոնալ բռնություն կամ ինստիտուցիոնալ ծաղրանք է դրսևորվում, երբ տվյալ հաստատությունների շրջանակներում ոտնահարվում է նրա անդամների մարդկային արժանապատվությունը, երբ մարդիկ դիտվում են որպես վերջնական արդյունք ապահովելու գործիք: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ դպրոցները կամ ուսումնական այլ հաստատություններ դիտվում են որպես բիզնես, կամ այնքան են մտահոգված վերջնական արդյունքով, որ ուսանողների ու աշխատակազմի բարեկեցությունն անտեսվում է: Բռնությունը բացառող հաստատությունները զարգանում են այնտեղ ներգրավված անձանց, շրջակա միջավայրի և շրջակա համայնքների կարիքներին համահունչ:

Վստահություն

Վստահությունն ապահովում է մասնակցություն, հարաբերությունների զարգացում և ինքնության պահպանում: Անհրաժեշտ է խրա-

[11] John Dewey, in Boydston, J. (ed) (1988) John Dewey, Human Nature and Conduct 1922, Morals are human, Middle Works 1899-1924, Vol.14, p. 207. Տե՛ս նաև DEWEY-L-ում Ռիչարդ Հեյքի արխիվային հրապարակումը (2005 թ.), «Հակամարտությունը նույնն է մտքի համար, ինչ բոռը՝ անասունի հոտի: Այն մղում է մեզ դիտարկումների ու հիշողության լարման, դրդում է գյուտերի, արթնացնում մեզ գլխիկոր պասիվությունից և ստիպում նկատել ու հնարել:

խուսել ուսումնառության՝ անկախ և անհարկի միջամտություններից զերծ մոտեցումները և երկխոսության հաստատումը: Կրթությունը կարող է օգնել երեխաներին և երիտասարդներին դրսևորելու վստահություն իրենց ընտանիքներից դուրս այլ անձանց նկատմամբ, և կարող է նրանց ներգրավել այլ անձանց հետ հանդիպումների անվտանգ և վտանգավոր կողմերի քննարկումներում: Սա հատկապես կարևոր է նրանց համար, ովքեր իրենց խոցելի են զգում սեփական տանը կամ նախկինում իրենց նկատմամբ զգացել են անվստահություն խտրականության պատճառով: Վստահությունը սերտորեն առնչվում է պատասխանատվության ու արժանահավատության գաղափարներին: Մասնագիտական պրակտիկայում վստահությունն անհրաժեշտ է սեփական անձի նկատմամբ և փոխադարձ հարգանքի ձևավորման և զարգացման համար: Որքան քիչ են մարդկանց վստահում, այնքան ավելի քիչ վստահություն են նրանք ցուցաբերում այլ անձանց նկատմամբ:[12] Վստահությունը, որ մարդիկ կլսեն Ձեզ և կտան անաչառ պատասխան, պարտադիր է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է բացահայտել ու լուծել կրթական զարգացումը խոչընդոտող բարդ խնդիրներ, քանի որ մարդիկ ազատ են իրենց միտքն արտահայտելիս, երբ վստահ են, որ դիմացինը պատրաստ է վարելու հարգալից երկխոսություն՝ առանց առավելություն փնտրելու:

Ազնվություն

Ազնվությունը միայն ճշմարտության ազատ արտահայտումը չէ: Անազնվությունը կարելի է ավելի շատ դիտարկել որպես տեղեկատվության միտումնավոր քողարկում, քան ուղղակի սուտ: Տեղեկության միտումնավոր թաքցնելը կամ այլ անձանց ապակողմնորոշելը խոչընդոտում է վերջիններիս մասնակցությունը: Դա իշխանություն ունեցողների համար կարող է լինել որպես միջոց՝ ավելի քիչ իշխանություն ունեցողներին վերահսկելու համար: Ազնվությունը ենթադրում է կեղծավորության բացակայություն՝ մի բան ասելու և այլ բան անելու առումով: Այն պահանջում է խոստումների կատարում: Բացի այն, որ ազնվությունը պատկերի ամբողջականության պահպանումն է և անկեղծություն, նաև վերաբերում է քաջության ու վստահության արժեքներին: Դժվար է լինել ազնիվ, երբ դրա համար պահանջվում է քաջություն: Շատ ավելի հեշտ է, երբ կարելի է վստահել այլ անձանց, որոնք աջակցություն են ցուցաբերում: Կրթության ոլորտում ազնվությունը ըստ էության երիտասարդներին տեղական և համամոլորակային իրադարձությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցումն է՝ խրախուսելով նրանց միջավայրում տեղի ունեցող իրողությունների մասին տեղեկացվածությունը՝ ներկայում ու ապագայում հիմնավորված որոշումներ կատարելու համար: Այս մոտեցումը խրախուսում է բարդ հարցերի արծարծումը և սխալներն ընդունելու, գիտելիքների իմացության սահմաններն ընդարձակելու պատրաստակամությունը:

Խիզախություն

Հաճախ խիզախություն է պահանջվում սովորույթի, ուժի և իշխանության կամ սեփական խմբի հայացքների ու մշակույթի դեմ դուրս գալու, ինքնուրույն մտքեր ունենալու և դրանք արտահայտելու համար: Ավելի մեծ անձնական խիզախություն կարող է պահանջվել իր իսկ անձը կամ այլ անձանց պաշտպանելու համար փոխադարձ աջակցության մշակույթի բացակայության կամ դրա աղճատման պայմաններում: Սակայն կարծիք առաջարկելու խիզախության չափը կախված է տվյալ անձնավորության անհատականությունից և հանրության առջև խոսելու վախի չափից: Մասնագիտական առաջընթացի հնարավորությունը, աշխատանքը կամ ընկերական հարաբերությունները վտանգելով սեփական կազմակերպության թերությունների և ոչ պրոֆեսիոնալ գործողությունների մասին բարձրաձայնելու համար, ընդհանուր առմամբ, խիզախություն է պահանջվում: Կազմակերպության թերությունները մատնանշելը կարող է իշխանություն ունեցողների կողմից դիտվել որպես անհավատարմություն, թեև ներառական իմաստով հավատարմությունը դրսևորվում է հանրության ավելի լայն շրջանակների և դրա առավել խոցելի խմբերի նկատմամբ: Խիզախություն կարող է պահանջվել նաև խտրականության դեմ պայքարելու, նախ դրա առկայությունն ընդունելու, ապա և այդ մասին բարձրաձայնելու, դրա դեմ գործողություններ ձեռնարկելու համար:

12 O'Neill, O. (2002) A question of trust, Reith Lectures

Ուրախություն

Ներառական արժեքներն առնչվում են մարդկանց լիարժեք զարգացմանը, այդ թվում՝ հաշվի առնելով նրանց զգացմունքներն ու հույզերը՝ խթանելով մարդկային ոգին, ապահովելով, որ ուսումնառության և դասավանդման գործընթացը լինի ուրախ, իսկ ձևավորվող հարաբերությունները՝ հաճելի: Ներառական արժեքները նախատեսում են, որ դպրոցներն ապահովեն հաճելի միջավայր, որտեղ կարելի է անցկացնել ներկա ժամանակը, ինչպես նաև նախապատրաստվել ավելի լավ ապագայի համար: Ուսուցման գործընթացը պետք է կազմակերպված լինի զվարճալի խաղերով, ապահովի կայտառություն և բոլորի կողմից ընդունելի հումոր: Ուրախ միջավայրը նպաստում է նոր հետաքրքրություններ, գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու գործընթացին՝ այն դարձնելով ավելի հաճելի, միաժամանակ դրանք ամրապնդելու լավագույն հնարավորություն է տալիս:

Այն կրթական հաստատությունները, որոնք կենտրոնանում են միայն հիմնական նպատակների նեղ շրջանակին կամ կրթության՝ որպես անձնական կարգավիճակ և տնտեսական օգուտ ապահովող դերին, կարող են դառնալ ուրախությունից ու հրճվանքից զուրկ վայրեր: Որպես հետևանք՝ մեծահասակները և երեխաները կարող են ընկճվել, սահմանափակվում են նրանց ինքնադրսևորման հնարավորությունները, ինչը կհանգեցնի դժգոհության դրսևորման ու մասնակցության բացառման:

Կարեկցանք

Կարեկցանքն այլ անձանց ցավը հասկանալն է և որոշ չափով այն թեթևացնել ցանկանալը: Այն պահանջում է նպատակաուղղված պարզել խտրականության ու տառապանքի ծավալները, հանդես բերել այլ անձանց հետ համագործակցելու, նրանց հայացքներն ու զգացմունքներն ընկալելու պատրաստակամություն: Կարեկցել նշանակում է մտահոգվել բոլորի բարեկեցության համար՝ հարկ եղած դեպքում սահմանափակելով անձնական բարեկեցությունդ: Ընդգրկուն կարեկցանքը, կանոնների խախտումների դեմ պատժիչ մոտեցումների փոխարեն, հոգածության ու հնարամտության դրսևորումն է: Այն մեծահասակներից պահանջում է որոշակի պատասխանատվության ստանձնում երեխաների ու երիտասարդների հետ հարաբերությունների վատթարացման դեպքում: Որքան էլ սովորողի ու կրթական հաստատության միջև հարաբերություններում առկա ճեղքվածքը մեծ թվա, մասնագետները պարտավոր են հետաքրքրվել, թե ինչպես կարող են սովորողին օգնել կարգավորելու հարաբերությունները և ներգրավվելու ուսուցման գործընթացում: Կարեկցանքի հիման վրա իրականացվող ուսուցման գործընթացն ընդունում է սխալները՝ անկախ ներգրավված անձի կարգավիճակից, ապահովում վերականգնման ու ներման հնարավորություն:

Սեր

Կարեկցանքը սերտորեն առնչվում է սիրո կամ հոգատարության արժեքին: Սերը՝ որպես «այլ անձանց նկատմամբ խորը հոգատարության դրսևորում, առանց որևէ փոխհատուցման ակնկալիքի», շատ մանկավարժների համար առանցքային շարժառիթ է և այդ կոչման նշանակության հիմք:[13] Այն հոգատարության դրսևորում է այլ անձանց նկատմամբ՝ նպաստելով նրանց ինքնաճանաչմանը և զարգացմանը գնահատված լինելու պայմաններում: Դա նպաստում է ինքնության ու պատկանելության ձևավորմանը և խթանում է մասնակցությունը: Այլոց նկատմամբ հոգածության պատրաստակամությունը և երեխաների փոխադարձ հոգատարության զգացողությունն ընկած են համակրանքի, ինչպես նաև ընդհանուր գործունեության հիմքում: Սակայն, «սերը» կամ «հոգատարությունը»՝ որպես արժեք, մանկավարժների համար անհամաչափ հարաբերությունների առանձնահատկություն է: Կրթական հաստատության շրջանակներում բոլոր երեխաների և երիտասարդների նկատմամբ հավասարաչափ հոգատարություն դրսևորելը մանկավարժների մասնագիտական պարտքն է՝ առանց փոխադարձ ջերմության, երախտագիտության կամ առաջխաղացման ակնկալիքի:

Հույս/լավատեսություն

Հույսի ու լավատեսության արժեքները նույնպես դիտարկվում են որպես մանկավարժների մասնագիտական և ծնողների/խնամակալների/ անձնական պարտականություն: Մենք պարտավոր են երեխաներին փոխանցել այն

[13] Noddings, N (2005) The challenge to care in schools; an alternative approach to education, New York, Cambridge University Press.

զգացումը, որ անձնային, տեղական, ազգային և համամոլորակային դժվարությունները հաղթահարելի են, կամ հնարավոր է մեղմել դրանց հետևանքները: Անհրաժեշտ է ցույց տալ, թե մարդիկ ինչպես կարող են փոխել թե՛ իրենց, թե՛ ուրիշների կյանքը: Սա չի նշանակում, որ մենք չենք կարողանում համակերպվել աշխարհի իրողություններին և տեսնել «կյանքի վառ կողմերը»: Հույսը և լավատեսությունը պահանջում են ակտիվ ներգրավվածություն իրականության ոլորտ՝ որպես սկզբունքային գործողության հիմք: Ներառական արժեքների շուրջ հստակությունը թույլ է տալիս ապահովել գործողությունների մի շրջանակ, որ համախմբում է նմանատիպ արժեքների կրող, սակայն գործունեության իրականացման համար տարբեր գործառույթ ունեցող մարդկանց: Սա կարող է ընդլայնել բոլոր մակարդակներում արմատացած, բացառող, ճնշումներին հակազդող հավաքական ուժը՝ մարդկության ու մոլորակի շահերից բխող փոփոխությունը դարձնելով ավելի հավանական: Այսպիսով, հույսը թույլ է տալիս հավատալ այնպիսի ապագայի հնարավորությանը, որտեղ մարդիկ կարող են բարգավաճել:

Գեղեցկություն

Գեղեցիկն ստեղծելու խնդիրը կարող է վիճելի թվալ, քանի որ ակնհայտ է, որ գեղեցկությունն այն տեսնողի կամ ընկալողի աչքերում և մտքում է: Ակնհայտ է նաև, թե որքան ճնշող է և բացառող շատերի համար գեղեցկության որոշակի հասկացությունների շուկայավարումը: Պարզ է, որ մեր դպրոցական միջավայր գեղեցկության ներդրման ցանկացած ջանք կարևոր է բոլորիս բարեկեցության համար: Գեղեցկությունը՝ որպես արժեք, նույնպես ընդգրկվել է արժեքների հասկացությունների ցանկում, քանի որ մարդիկ կրթության ոլորտում ունեցած իրենց լավագույն ձեռքբերումները, ուսումնական գործունեության որոշակի հաջորդականությունը երբեմն նույնականացում են, օրինակ, որևէ գեղեցիկ բան ստեղծելուն, իսկ առօրյայում իրենց առավել շահադրդող իրադարձությունները կամ դիտարկումները համարելով որպես գեղեցկություն պարունակող պահեր: Ցանկում այս արժեքի ընդգրկումը նաև թույլ է տալիս մարդկանց կապակցել արժեքները հոգևոր բավարարվածության իրենց մեկնաբանության հետ: Գեղեցկությունը կարող է դիտարկվել որպես անհատույց բարություն, որպես թանկագին առիթ, երբ հաղորդակցումը վերաճել է հետաքրքրության, որպես սեփական իրավունքների պահանջատիրությունը բարձրաձայնող հավաքական գործողություն, երբ մարդիկ սկսում են օգտվել իրենց ձայնի իրավունքից: Գեղեցկությունն արտահայտվում է այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը սիրում է իր կամ մեկ ուրիշի ստեղծագործությունը՝ որպես արվեստի և երաժշտության գնահատանք: Ներառական գեղեցկությունը զերծ է կարծրատիպերից և ընդունում է ինչպես մարդկանց, այնպես էլ բնության բազմազանությունը:

Իմաստություն

Իմաստությունը ենթադրում է ընտրություն գործողության ընթացքների միջև՝ հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրի հիմնավորումն ու հետևանքները: Մեզ բոլորիս անհրաժեշտ է ժամանակ մտորումների ու այլընտրանքային հեռանկարների դիտարկման համար, նախքան որևէ անձի կամ իրավիճակի մասին կարծիք կազմելը: Մենք խորհում ենք մեր և այլ անձանց փորձի շուրջ՝ նախկին սխալները չկրկնելու համար: Մենք կարգավորում ենք վեճերը միջնորդության, երկխոսության և փոխհատուցման միջոցով՝ պատժի, ագրեսիայի կամ իշխանության գործադրման փոխարեն: Իմաստնություն ձեռք բերելիս մենք փորձում ենք կապակցել արժեքները գործողություններին և գործել ըստ մեզ համար ընդունելի արժեքների: Մեր փաստարկները և որոշումները հիմնված են արժեքների, տրամաբանության ու ապացույցների վրա: Մենք ազնիվ ենք մեր գիտելիքների սահմանների առումով և գնահատում ենք այլ անձանց՝ ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների գիտելիքները: Մենք հարց ենք բարձրացնում ու լսում դրանց պատասխանները, հասկանում ենք, որ ունենք ոչ միայն մարմին, այլև միտք և բնական աշխարհի մի մասնիկն ենք: Փորձում ենք ոչ թե ժխտել մեր և աշխարհի բարդ իրողությունները, այլ դիմակայել՝ բարելավման աղբյուրներ գտնելու նպատակով: Մենք չենք ընդունում մտածողության միայն ընդունված ձևերը՝ որպես բացարձակ ճշմարտություն, փորձում են կապեր ստեղծել մտքի այն հարթությունների միջև, որոնք սովորաբար առանձնացված են: Ուսումնասիրում ենք այն, ինչը կարևոր է մեր կյանքում և այլ անձանց համար՝ իրենց կյանքում: Մենք փորձում են ստանալ այնպիսի գիտելիքներ, որոնք կօգնեն մեզ ապրելու միասին կամ կողք կողքի մեր տներում, համայնքներում, դպրոցներում, հասարակության մեջ և մեր մոլորակում:

Ինչպե՞ս արձագանքել *Ինդեքսի* արժեհամակարգին

Սույն *Ինդեքսով* սահմանված արժեհամակարգը նախատեսված չէ որպես պարտադիր հրահանգ: Այն երկխոսության հրավեր է: Բոլորը չէ, որ կհամաձայնեն տվյալ արժեհամակարգին, սակայն, երբեմն կարող են համաձայնել արժեքների նկարագրությանը՝ միասին վերցրած, իրենց ընդհանուր իմաստներով, նախընտրելով օգտագործել այլ հասկացություններ, որոնք ավելի շատ են համապատասխանում իրենց սեփական մտքին, շարժառիթներին և կյանքի փորձին: Հաշվի առնելով, որ արժեքները ենթադրում են գործողություններ, դրանք ամփոփելու համար օգտագործվող խոսքերը/մտքերը կարող են տարբերվել՝ ըստ տարբեր մարդկանց փորձի: Ցանկին առաջին անգամ ծանոթանալիս որոշ մարդիկ կարող են պնդել, որ իրենց հիմնական արժեքներից մեկը կամ մյուսը, ինչպես, օրինակ, «պատասխանատվությունը», «ազատությունն» ու «համագործակցությունը» ներառված չեն ցանկում: Նրանք կարող են պահանջել ցանկի որոշակի փոփոխություններ, թեև դրա ավելի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց մտահոգությունները փարատվում են արժեքների իմաստներով: Օրինակ՝ «ազատությունը» կապված է «իրավունքների» ու «մասնակցության» արժեքների, իսկ «պատասխանատվությունը» և «համագործակցությունը»՝ «համայնքի» հետ: Նրանք կարող են նաև բացահայտել, որ իրենք այլ արժեքների կրողներ են: Դա կարող է մանրամասնությունների հարց լինել: Մարդիկ տարբեր կերպ են պատկերացնում, թե որքանով է անհրաժեշտ կրճատել միմյանց միջև անհավասարությունը կամ որքանով խթանել դպրոցներում ու հասարակության մեջ մարդկանց մասնակցությունը: Ներառական արժեքների իմաստների սահմանումը նպատակ ունի բացահայտելու նման տարբերությունները: Որքան ավելի շատ ենք անդրադառնում մեր արժեքների մանրամասներին, այնքան ավելի հավանական է մեր դիրքորոշման տարբերությունների բացահայտումը:

Կրթական հաստատությունների աշխատակիցների, երեխաների, ընտանիքների, ՏԻՄ կառավարիչների և մարզային իշխանությունների միջև երկխոսությամբ և բանակցությամբ կարելի է սահմանել համընդհանուր արժեքների համակարգ: Դա կարող է արտահայտվել պարզ ներկայացմամբ, ինչպես պատկերված է Գծապատկեր 6-ում, որոնք ավելի մատչելի են, քան մեր սահմանած արժեհամակարգը: Դրանք կարող են գրառվել տարրական որևէ դպրոցի խորագրերի տակ[14], ինչպես ներկայացված է Գծապատկեր 7-ում: *Ինդեքսով* աշխատող դպրոցներից մեկը օգտագործել է արժեհամակարգի «Հարգանք» խորագիրը դպրոցի վարվելաձևի նորմերը մշակելիս. հարգանք սեփական անձի, այլ անձանց, շրջակա միջավայրի և իրերի նկատմամբ»:[15]

Անհրաժեշտ է տրամադրել արժեքների իմաստների ավելի մանրամասն նկարագրություն, եթե դրանք նախատեսված են երեխաների ու մեծահասակների գործողությունների այնպիսի շրջանակ ապահովելու համար, որ կարող է բավարարել դպրոցների բարդ իրադրությունների պայմաններում:

Սակայն ակնհայտ է, որ որոշ մարդիկ գործում են այստեղ նկարագրված ներառական արժեքների համակարգից արմատապես տարբերվող արժեքների հիման վրա: Կան բազմաթիվ վկայություններ, որ ոչ բոլոր մարդիկ են մտածում, որ յուրաքանչյուր կյանք ու յուրաքանչյուր մահ հավասար արժեք ունի իրենց համայնքում ու երկրում կամ այլ երկրներում: Քիչ մարդիկ են ավելի սուր ընկալում վատ արարքները և փորձում են հասնել հատուցման, ոմանք էլ գործում են գումար կամ ունեցվածք ձեռք բերելու կարճաժամկետ շահագրգռվածությունից դրդված:

[14] Հարբինգեր դպրոցի արժեքները, Թաուեր Համլեթս թաղամաս, Լոնդոն:
[15] Behaviour policy, Dereham St. Nicholas Junior School, Norfolk.

Գծապատկեր 7	Արժեքները մեր դպրոցում

- Մենք ցանկանում ենք, որ բոլորը արդարացի վերաբերմունքի արժանանան և իրենց զգան որպես համայնքի մի մասնիկ:
- Մենք հոգ ենք տանում մեր դպրոցի երեխաների ու մեծահասակների համար:
- Մենք հաճույքով բացահայտում են միմյանց՝ դիտարկելով ինչպես մեր ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները:
- Մեր գործողությունները պայմանավորված են այն գիտակցությամբ, որ մենք ապրում ենք մոլորակում մյուս կենդանի էակների հետ:
- Մենք մտահոգված ենք այն մարդկանցով, որոնք ապրում են սովի, հիվանդությունների ու աղքատության պայմաններում:
- Մենք սովորում ենք միմյանցից և միմյանց ենք փոխանցում մեր գիտելիքները:
- Մենք փորձում են կապեր ստեղծել այն ամենի միջև, ինչ սովորում ենք տանը և դպրոցում:
- Մենք կարգավորում ենք խնդիրները՝ միմյանց լսելով և համատեղ ջանքերով լուծումներ գտնելով:
- Մենք բարձրաձայնում ենք սխալներ նկատելիս:
- Մենք կարևորում ենք աշխարհի բոլոր բույսերն ու կենդանիները:
- Մենք փորձում ենք խնայել էներգիան և խուսափել թափոններից:
- Մենք օգնում ենք բարելավելու մեր դպրոցներն ու աշխարհը՝ որպես կենսական միջավայր:

Գծապատկեր 8	Արժեքները Հարբինգեր դպրոցում	
Միասնականություն	**Բարորություն**	**Ուսում**
Տեսնել համայնքի անդամների արդյունավետ համատեղ աշխատանք բազմազանության մթնոլորտում	Տեսնել կարեկցանքով լի գործողություններ	Տեսնել ուսման մեջ ներգրավված լինելու անհամբեր ձգտում բոլորի կողմից
Լսել մարդկանց ջանքեր գործադրելու պատրաստակամության մասին	Լսել վստահ և համարձակ ձայներ	Լսել ինչպես հանգիստ ժամանակաշրջանների, այնպես էլ իրարանցումների մասին
Նկատել մասնակցության բարձր մակարդակ	Նկատել, որ բոլորի ձայնը լսելի է	Նկատել փորձելու վստահություն և պատրաստակամություն
Ունենալ գնահատված և ընդունված լինելու զգացում	Ունենալ անվտանգության ու ապահովության զգացում	Հպարտանալ ինչպես անհատական, այնպես էլ դպրոցի հաջողություններով

Կարևոր է որպես արժեքներ դիտարկել նաև գործողության դրդող այն գործոնները, որոնց բացասաբար ենք վերաբերվում, քանի որ գոյություն ունեն տարբեր արժեքային համակարգեր, որոնք կարող են հավասարապես պատասխանել այն հարցին, թե **«Ինչպե՞ս ապրել կողք կողքի»**: Համընդհանուր արժեքների համակարգ, որպես այդպիսին, գոյություն չունի: Ներառական արժեքները կարող են հակադրվել բացառող արժեքներին: Բացառող արժեքների համակարգի օրինակ է պատկերված Գծապատկեր 9-ում, թեև ներկայացված խորագրերը ներառական արժեքներին հակառակ արժեքներ չեն: Դրանք գործում են Միացյալ Թագավորության բազմաթիվ դպրոցներում և այլուր: Արժեքների այս համակարգում «հավասարությունը» փոխարինվում է «հիերարխիայով», գործնական «իրավունքները»՝ տեսական «հնարավորությամբ», «մասնակցությունը»՝ ապրանքների «սպառմամբ» ու «գիտելիքներով», ընդլայնված «համայնքի» առջև ստանձնած պարտավորությունները՝ «խմբային» նվիրվածությամբ, «բազմազանությամբ»՝ «միատարր մշակույթի» պահպանման ցանկությամբ, շրջակա միջավայրի «կայունությունը»՝ շարունակական շահագործմամբ, «բռնության բացառումը»՝ «խտրականությամբ», «վստահությունը»՝ շարունակական դիտարկմամբ, գնահատմամբ և ստուգմամբ իրականացվող «հսկողությամբ», «ազնվությունը»՝ կերպարի մասին «մտահոգությամբ», «քաջությունը»՝ մեծամասնության կամ պաշտոնական կարծիքին «համապատասխանության», ուսումնառության ու դասավանդման «ուրախությունը»՝ «պարգևատրման» ակնկալիքների և «պատիժ» կիրառելու կամ դրանից խուսափելու, «կարեկցանքը»՝ «շահադիտական» մղումների, «սերը»՝ «իշխանության», «հույսը/լավատեսությունը»՝ «ճակատագրապաշտության/ֆատալիզմի», «գեղեցկությունը»՝ «արդյունավետության» և «իմաստությունը»՝ «իշխանություն իրականացնելու» հետ:

Գծապատկեր 9 **Բացառող արժեքների համակարգ**



Արժեքային գրագիտության ձեւավորում ու զարգացում

Ներառական արժեքները գործածության մեջ դնելու գործընթացը ենթադրում է փոխկապակցել մեր գործողությունները ներառական արժեքներին և խզել առաջինների կապը բացառող արժեքների հետ: Մենք այս գործընթացն անվանում ենք «արժեքային գրագիտության» ձեռքբերում՝ նկարագրելով մարդկանց գործողությունները արժեքի խորը ըմբռնման և կիրառության արդյունքում իրենց դպրոցներում տեղի ունեցող փոփոխությունները բացահայտելիս: Ղեկավարների, ուսուցիչների, ծնողների և երեխաների բազմաթիվ խմբերի համատեղ աշխատանքի շնորհիվ ստեղծվել են այնպիսի կապեր, որոնք, բացահայտելով շահի արժեքը, դիտարկում են դրա իմաստը, հորդորում մտածել, թե ինչպես կարելի է փոփոխել դպրոցների գործողությունները նման արժեքն իսկապես գործողության մեջ դնելիս (տե՛ս Բաժին 3, Գործողություն թիվ 6, էջ 76): «Ուսուցողական զբոսանքները»[16] կարող են օգտագործվել դպրոցներում՝ որպես ուսուցմանը և ուսումնառությանն աջակցող համատեղ ռազմավարություն: Դպրոցներից մեկը, որի հետ մենք աշխատել ենք, հանդես է եկել «արժեքների զբոսանքի» զուգահեռ գաղափարով, որտեղ մեծահասակներն ու երեխաները դիտարկում են դպրոցի գործունեությունը, շենքերն ու շինությունները, ցուցատախտակները, նշում այն արժեքները, որոնք մարմնավորում են, ապա փորձում դրանց շուրջ կազմակերպել երկխոսություններ: Այլ դպրոցներ երեխաներին ու երիտասարդներին ներգրավել են արժեքների շուրջ մեկօրյա գործողություններում. նրանք զարմացած էին այն իմաստասիրությամբ, որ ցուցաբերել են երիտասարդները արժեքների քննարկումների ընթացքում:

Գյումրու թիվ 11 դպրոցում Ինդեքսի թիմի անդամը ծառի ճյուղերին պատկերել է Ինդեքսում սահմանված ներառական արժեքները. ծառը խորհրդանշում է դպրոցը՝ որպես ապաստան, ծածկ և հանդիպման վայր:

[16] https://www.teachingchannel.org/videos/the-learning-walk; https://creativeteachersupport.wordpress.com/2012/11/18/lets-go-for-a-learning-walk/

Այլ համակարգերի հիման վրա ձեւավորված արժեքների սխեմաների կապը

Աշխարհիկ ներառական արժեքներով կրթական ոլորտի զարգացումը շատ ընդհանրություններ ունի արժեքահեն կրթության այլ մոտեցումների հետ, ներառյալ «Կյանքի արժեքները»[17], որոնք մշակվել են Բրահման Կումարիս և Իմաջինորի կրոնական/հոգևոր խմբի գաղափարների հիման վրա: Վերջինս քրիստոնյա կազմակերպություն է, որը նույնպես ընդունում է «Կյանքի արժեքների» վերաբերյալ աշխատությունների դերը:[18] Գծանկար 10-ը համեմատում է *Ինդեքսի* և նշված երկու սխեմաների արժեքների խորագրերը: Այստեղ յուրաքանչյուր խորագրի ավելի խորը իմաստի համեմատություն ներկայացված չէ: Սակայն նույնիսկ որոշակի համընկնումների դեպքում մասնակցության ու կայունության գաղափարները մյուս ցանկերում ներառված չեն: Միայն համայնքի, հարգանքի ու ազնվության խորագրերն են, որ առկա են բոլոր երեք սխեմաներում: Ըստ էության, բռնության բացառման արժեքն առաջին անգամ ներկայացվել է մեր սխեմայում «Կյանքի արժեքներին» ծանոթանալուց հետո, ապա զարգացվել որպես հրամայական կրթության համար: «Կյանքի արժեքներում» արժեքները դիտվում են որպես համընդհանուր, մինչդեռ մենք կարծում ենք, թե այդ արժեքները կարող են հակադրվել տարբեր արժեհամակարգերի՝ ներգործելով տարբեր խմբերի մարդկանց գործողությունների վրա: Բացի այս, *Ինդեքսը* եզակի է իր յոթանասուն ցուցիչներով և թվով 2000 հարցերով, որոնք ներկայացնում են իր սահմանած արժեհամակարգի նշանակությունը գործնական մանրամասների համար: Մյուս երկու սխեմաներում մեծահասակներին ու երեխաներին նույնպես առաջարկվում է կատարել արժեքային գրագիտության վարժություններ՝ յուրաքանչյուր ամիս անդրադառնալով արժեքներից որևէ մեկին՝ որպես պաշտոնական ու պակաս պաշտոնական գործողության մշտական կողմնորոշչի: Գործնականում այս մոտեցումը որդեգրող որոշ դպրոցներ քննարկում են արժեքների սեփական համակարգը՝ իրենց աշխատակիցների և /կամ երեխաների հետ: Ոմանք այդպիսի բանակցությունների կամ քննարկումների արդյունքները համարում են միայն երեխաների համար կիրառելի արժեքների ամբողջություն, որի նպատակն է բարելավել վերջիններիս վարքը: Մեր կողմից սահմանված արժեքների համակարգը, ինչպես նաև նշված մյուս սխեմաները, նախատեսված են բոլորի համար:

Գծապատկեր 10	Արժեքների համեմատություն	
«Ներառման ինդեքս»	**«Իմաջինոր» կազմակերպություն**	**«Կյանքի արժեքներ»**
Հավասարություն	Արդարադատություն	Պատասխանատվություն
Իրավունքներ	Բարեկամություն	Ազատություն
Հասարակություն/Համայնք	Հարգանք	Համագործակցություն
Բազմազանության ընդունում	Հաստատակամություն	Հանդուրժողականություն
Կայունություն	Վստահություն	Հարգանք
Մասնակցություն	Կարեկցանք	Համեստություն
Վստահություն	Ներում	Խաղաղություն
Կարեկցանք	Երախտագիտություն	Ազնվություն
Բռնության բացառում	Ճշմարտապահություն	Սեր
Ազնվություն	Խիզախություն	Երջանկություն
Խիզախություն	Մեծահոգություն	Պարզություն
Գեղեցկություն	Ծառայելու պատրաստակամություն	Միասնություն
Սեր		
Ուրախություն		
Հույս		
Իմաստություն		

17 Hawkes, N. (2003) How to inspire and develop positive values in your classroom, Cambridge, LDA. Frances Farrer (2000): A quiet revolution, The story of the development of values education at West Kidlington Primary School in Oxfordshire, Oxford, Rider.

18 http://www.imaginor.co.uk/values/ Vickery, S, Ed. (2011) Living values, a practical guide to rooting your school in Christian values.

Մանկավարժական սկզբունքների լրացում

Ներառական արժեքներից բխող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու բովանդակությունն ունեն բազմաթիվ հետևանքներ: Ներառական արժեքները կարող են օգտագործվել ներառական մանկավարժական սկզբունքներ, այլ կերպ ասած՝ բազմազանության հաշվառմամբ դասավանդման և ուսումնառության կանոններ մշակելու համար: Որոշ դեպքերում դա համեմատաբար պարզ է. ուրախության, հոգատարության և մասնակցության գաղափարները, օրինակ, հստակ ազդեցություն ունեն դասավանդման և ուսումնառության փոխազդեցությունների վրա, որոնք արտացոլված են *Ինդեքսի* ցուցիչներում ու հարցերում: Սակայն ինչպես մենք, այնպես էլ մի շարք մասնագետներ օգտակար են համարում դասավանդման և ուսումնառության որոշակի լրացուցիչ ներառական սկզբունքների սահմանումը: Սկզբունքներ, որոնք ուղղակիորեն չեն բխում *Ինդեքսի* արժեքների շրջանակից, սակայն կարևոր է դրանք հաշվի առնել դպրոցների զարգացման ընթացքում: Ինչպես արժեքների շրջանակը, այնպես էլ նման սկզբունքները տարիներով ընթերցման ու մտորումների արգասիք են, որ կարող են նպաստել ներառական ճանապարհով դպրոցների զարգացմանը:

Այն դեպքում, երբ արժեքներն առաջարկում են ընդգրկուն պատասխան այն հարցին, թե «Ինչպե՞ս ապրել կողք կողքի», սկզբունքներն ունեն ավելի նեղ կենտրոնացում և պատասխանում են այն հարցին, թե «Ինչպե՞ս դասավանդել և սովորել միասին»: Գծապատկեր 11-ը մշակվել է սկզբունքների երկար ցանկի հիման վրա, որի կրճատումով ստեղծվել է գործողությունների ուղեցույց՝ որպես արժեքների շրջանակի լրացում:

Ինչպես արժեքներից յուրաքանչյուրը, տվյալ սկզբունքները ևս կարող են հիմք ծառայել կրթության զարգացման մասին խորհելու: Օրինակ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներն ու հետաքրքրությունները խթանող դպրոցների գաղափարը (14-րդ կետ) մի թեմա է, որը շարունակաբար արծարծվում է *Ինդեքսի* շրջանակներում: Ըստ այդ գաղափարի՝ դպրոցների նպատակն է զարգացնել երեխաների ու երիտասարդների այն հետաքրքրությունները, որոնք կարող են նպաստել նրանց գործունեության շարունակականությանը: Շատերի համար այլ հետաքրքրությունների և գործունեության տեսակների հետ վճարովի աշխատանքը նշանակալի դեր ունի:

Գծապատկեր 11	Մանկավարժական ներառական սկզբունքներ. դասավանդում եւ ուսումնառություն

Կրթությունը պետք է իրագործի հետևյալը՝

1. Չսահմանափակել երեխաների ու մեծահասակների ձեռքբերումների հնարավորությունները:
2. Ուսուցմանը գործընթացը կառուցել անձնական և ընդհանուր փորձի հիման վրա:
3. Կազմակերպել ուսումնական արտադասարանային միջոցառումներ:
4. Բազմազանությունը դիտարկել որպես ուսումնառության ռեսուրս:
5. Զարգացնել երկխոսության կարողությունները:
6. Մշակել տեսական գիտելիքներ գործնական հմտությունների զարգացման հիման վրա:
7. Գործնական հմտությունները համարել նույնքան արժեքավոր, որքան գիտական գիտելիքները:
8. Ապահովել տարբեր առարկաների և համատեքստերի ընկալումների փոխկապվածությունը:
9. Կարևորել լավ փոխհարաբերությունները ինչպես առանձին վերցրած, այնպես էլ որպես ուսումնառության արդյունավետության գործոն:
10. Ընդունել ուսուցման և բարեկեցության կարևորությունը՝ որպես ինքնության անվտանգության գործոն:
11. Ապահովել ուսումնառության և հույզերի փոխկապվածությունը:
12. Ապահովել դպրոցի գործունեության և սոցիալական, մշակութային, քաղաքական ու տնտեսական արտաքին կյանքի փոխկապվածությունը:
13. Ապահովել տեղական և գլոբալ մակարդակում առկա իրադրությունների փոխկապվածությունը:
14. Զարգացնել անմիջական և ցկյանս գործունեություն ու հետաքրքրություններ:
15. Կարևորել ինչպես ներկայի բարեկեցությունը, այնպես էլ պարարտ հող նախապատրաստել ապագայի համար:
16. Գիտակցել, որ վաղ տարիքի կրթությունը ձևավորում է հետագա կյանքում մեր ով լինելը և մեր գործունեության տեսակը:
17. Հիմնական ուշադրությունը դարձնել խաղալու, սովորելու և ուսումնառության հնարավորություններ ընձեռելուն, քան ձեռքբերումների արդյունքներին:
18. Ընկալել դպրոցը որպես համայնքի բոլոր անդամներին օժանդակող հաստատություն:
19. Նպաստել ակտիվ, ժողովրդավարական քաղաքացիության խթանմանը:
20. Ընդգծել մարդկանց, կենդանիների, բույսերի և շրջակա միջավայրի փոխկապակցվածության կարևորությունը:

Հրամայականների դիտարկում

Արժեքների շրջանակը կամ մանկավարժական սկզբունքների շարքը թույլ են տալիս նրբանկատորեն արտացոլել պարտավորությունները և որոշել, թե ինչպես և ինչ սովորեցնել ու սովորել: Սակայն երբեմն անհրաժեշտ է լինում լրացուցիչ շունչ հաղորդել դրանց: Կյանքի վերջում սոցիալական տեսաբան Թոդոր Ադորնոն իր ճառերից մեկում մտահոգություն է հայտնում առ այն, թե ինչպես է կրթական համակարգն արձագանքում Հոլոքոստից քաղած դասերին.

> *«Կրթական համակարգերի առաջնային պարտավորությունն այն է, որ Աուշվիցն այլևս երբեք չկրկնվի: Նման գերակայությունը որևէ պահանջի նկատմամբ, համոզված եմ, հիմնավորման կարիք չունի: Անհասկանալի է, թե ինչու է մինչ օրս այդքան քիչ ուշադրության արժանացել այս հարցը»:*[19]

Թ. Ադորնոն Հոլոքոսքն օգտագործում է որպես մետաֆոր (փոխաբերություն)՝ աշխարհում տեղի ունեցող ապակառուցողական, հոգեկան խանգարումների հանգեցնող հակամարտությունների իմաստով, որոնցից խուսափելու համար կրթական համակարգն ուրույն դեր կարող է խաղալ: Նա խնդրում է մեզ ընդունել, որ հասարակությունները կարող են իջնել բարբարոսության աստիճանի՝ փոխելով մեր երեխաներին կրթելու միջոցները: *Ինդեքսը* ներկայացնում է ցուցիչներ, որոնք անմիջականորեն առնչվում են բռնության բացառման և տարբերությունների նկատմամբ հարգանքի արժեքներին և կարող են առավել սերտորեն կապված լինել Ադորնոյի արտահայտած մտահոգությանը: Փաստարկներն առ այն, որ մարդիկ պետք է նոր փոխհարաբերությունների մեջ մտնեն իրենց շրջապատի հետ՝ միևնույն ժամանակ պահպանելով իրենց կենսապահովման աղբյուրները, նույնքան ազդեցիկ են, որքան ռասայականությունից ու այլ հակամարտություններից խուսափելու պահանջը: Սա ներառում է գիտելիքների ձեռքբերում այն մասին, թե ինչ ազդեցություն ունեն մեր սպառման սովորությունները, և թե ինչպես կարելի է դրանք փոխել: Նախկին կառավարություններից մեկը իր փաստաթղթերում խրախուսում էր կայուն, էկոլոգիապես մաքուր ու ակտիվ դպրոցների զարգացումը և, ինչպես մենք, առաջարկում էր կայունությունը դարձնել առաջնորդող սկզբունք բոլոր ուսումնական ծրագրերի վերանայման համար:

> *«Կայուն զարգացումն ազգային կրթակարգի խաչաձև չափորոշիչն է, այն կրթակարգի, որ նախատեսված է հասցնել այնպիսի ապագայի, որտեղ ոչինչ չի կարող ընդունվել հենց այնպես.... և տարբերվում է բազմաթիվ դպրոցներում դասավանդվող բովանդակությունից»:* [20]

Մենք կիրառում ենք ներառական արժեքները, սկզբունքներն ու հրամայականները 21-րդ դարի Կրթակարգ մշակելու համար:

[19] Adorno, T. (1966) First presented as a radio lecture on 18 April 1966, under the title 'Padagogik nack Auschwitz'. English translation 'Education after Auschwitz' in Adorno, T. (2005) Critical Models: Interventions and Catchwords, New York, Columbia University Press. Available online at
http://ada.evergreen.edu/~arunc/texts/frankfurt/auschwitz/AdornoEducation.pdf

[20] Department for Children, Schools and Families (2009): S3: Sustainable school self-evaluation, London, DCSF.

Կրթակարգի քննարկում

Ի՞նչ ազդեցություն ունեն ներառական արժեքները, սկզբունքներն ու հրամայականները դասավանդման և ուսումնառության մեր մեթոդների ու բովանդակության վրա: Եթե արժեքները սահմանում են, թե ինչպես ապրել կողք կողքի, ապա կրթակարգերը սահմանում են, թե ի՛նչ է անհրաժեշտ սովորել կողք կողքի լավ ապրելու համար: *Ինդեքսի* ավելի վաղ հրատարակություններում երբեմն պնդում ենք, որ *Ինդեքսը* սահմանում է ներառական արժեքների ազդեցությունը դպրոցի բոլոր կողմերի համար: Սակայն այդ հրատարակությունները մի մեծ բաց ունեն. դրանք չեն սահմանում, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ արժեքների շրջանակը դասավանդման և ուսումնառության գործունեության բովանդակության վրա: 1980-ական թվականների վերջում՝ Անգլիայում ազգային կրթակարգի ներդրումից և երկար ժամանակ դպրոցների կրթակարգերի մշակման նկատմամբ կիրառվող խիստ մոտեցումներից հետո, կարծես անհնար է պատկերացնել, թե ինչպիսի այլընտրանքներ կարելի է առաջարկել, որոնք հակադրվում են դասավանդման բովանդակության վերաբերյալ կառավարության որոշմանը:

Ինդեքսի սույն հրատարակության մեջ փորձել ենք լրացնել առկա կրթակարգի բացը, չնայած կրթակարգում նորամուծություններ առաջարկելու սահմանափմանը, մասնավորապես միջնակարգ դպրոցներում: Կրթակարգի վերաբերյալ առաջարկները ներկայացված են *Ինդեքսի* վերանայված հրատարակության նոր բաժնում՝ Հարթություն «Գ»-ում (տե՛ս183-270): Հուսով ենք՝ դա կնպաստի Մեծ Բրիտանիայում և այլ վայրերում երկխոսությունների խթանմանը ներառական կրթակարգի բնույթի վերաբերյալ. ի՛նչն են դասավանդում դպրոցներում և ինչո՛ւ, և թե ինչպիսի՛ն պետք է լինի 21-րդ դարին համապատասխան կրթակարգը: Մեր կարծիքով, դպրոցներում անհրաժեշտ է փոխել գիտելիքի ու հմտությունների կառուցվածքային եղանակները: Սա հրատապ հարց է այն պարագայում, եթե կրթությունը դիտարկենք որպես ազգային և համամոլորակային մակարդակներում բնապահպանական ու սոցիալական խնդիրների լուծման մի մաս: Այսպիսով, հուսով ենք, որ Կրթակարգի վերաբերյալ մեր գաղափարները կլինեն ծովի այն փոքր ալիքները, որոնք ուժ կհավաքեն՝ միանալով այլ անձանց ստեղծած ալիքներին:

«Դպրոցի ուսումնական պլան» (դպրոցի կրթակարգ) հասկացությունն ունի 2 իմաստ: Այն կարող է վերաբերել ուսուցման նպատակներին, պլանավորված ուսումնական աշխատանքներին, և թե ինչպես են դրանք կառուցված՝ ըստ առարկաների: Այն կարող է նաև վերաբերել այն ամենին, ինչ սովորում են երեխաներն ու մեծահասակները դպրոցում ունեցած իրենց փորձով: Դասավանդման և ուսումնառության մեր մեթոդները կարող են լինել այս պակաս ֆորմալ կրթակարգի մի մասը: Այն հնարավորություն է տալիս մեծահասակներին և երեխաներին որոշակիորեն վերահսկելու դասընթացի պակաս ֆորմալ և երբեմն ամենաազդեցիկ կողմերը: Օրինակ՝ վիճարկելով հիերարխիաների ստեղծումը, որոնց միջոցով երեխաները և մեծահասակները սովորում են իրենց տեղը հասարակության մեջ, *Ինդեքսը* խթանում է երկխոսությունն այն մասին, թե ինչպես կարող է փոխակերպվել կրթությունը՝ սոցիալական հարաբերությունների առկա նմուշները պարզապես վերարտադրելու փոխարեն:

Մենք նաև մանրամասն դիտարկել ենք մեր առաջարկած ներառական արժեքների, սկզբունքների և հրամայականների ազդեցությունը, մեր փորձը և ընթերցած գրականությունը, կրթակարգի, դասավանդման ու կրթական գործընթացի կառուցվածքի ու բովանդակության ավելի պաշտոնական կողմերը քննելու նպատակով: Մեր առաջարկած արժեքների շրջանակը ստիպում է խորհել կրթակարգի բնույթի մասին, որպեսզի այն կապակցի երեխաների և նրանց ընտանիքների փորձը, որը շատ կարևոր քայլ է դպրոցներում ուսուցման և մասնակցության խոչընդոտները հաղթահարելու համար: Մեր նպատակն էր դպրոցներում ստեղծել մեծահասակների և երեխաների համար նախատեսված մի ռեսուրս, որը թույլ կտար երեխաներին որոշակիորեն վերահսկել իրենց կյանքը՝ պատրաստելով ակտիվ քաղաքացիներ, մի ռեսուրս, որն արտացոլում է մարդու իրավունքները, խրախուսում կայուն զարգացման միջոցառումները, նպաստում է տարբեր մարդկանց միջև համաշխարհային մակարդակով կապերի ստեղծմանը, կոտրում է ակադեմիական, գործնական և միջին մասնագիտական կրթության տարբերությունների վերաբերյալ նախապաշարմունքները՝ կրթության տարբեր մակարդակները կապելով

աշխարհի իրականությանը, այդ թվում՝ փող աշխատելու միջոցներին:

Մեզ վրա մեծ ազդեցություն են թողել ուսուցիչների և այլ գործընկերների հետ բազմաթիվ զրույցները: Օրինակ՝ Հոնկոնգի մեր գործընկերներից մեկը կրթակարգի նախնական տարբերակում անդրադառնում է մարդու այնպիսի կարիքներին, ինչպիսիք են սնունդը, ջուրը, հագուստը, ապաստանը և առողջությունն ու խնամքը, քանի որ ըստ Սուն Յացենի՝[21] մարդու հիմնական կարիքները միշտ եղել են սնունդը, ջուրը, հագուստը, ապաստանը և տրանսպորտը:[22] Այս զրույցից հետո տրանսպորտը դիտարկվել է որպես կրթակարգի կարևոր առարկա, պատասխանվել է այն հարցերին, թե «Երբ, ինչու և ինչպես են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում և աշխարհով մեկ»: Նաև անդրադառնում է տրանսպորտի տեսակներին, երկրների ներսում և նրանց միջև առևտրային գործունեությանը և միգրացիայի ռեժիմներին: Դա թույլ է տալիս կրթակարգի շրջանակներում մշակել բոլոր երկրների համար ներառման ոլորտի ամենակարևոր հարցերից մեկը՝ «Ի՞նչ է ներգաղթի բարոյական քաղաքականությունը»: Նման հարց ուսումնասիրելիս երեխաները կարող են խորհել այն անվստահության մասին, որ հաճախ ցուցաբերվում է հակամարտության տարածքներից կամ աղքատ տարածաշրջաններից ապաստան կամ աշխատանք գտնելու նպատակով նոր ներգաղթած մարդկանց:

Մեզ համար կրթակարգի ստեղծումը կամ մշակումը արտացոլում է այն եղանակը, որով մենք՝ մեծահասակներս ու երեխաները, կառուցում ենք մեր գիտելիքներն ու փորձը աշխարհի մասին: Այսպիսով, կրթակարգը պարզապես ֆորմալ կրթության առանձնահատկություն չէ, այլ վերաբերում է բոլորի համար նախատեսված գիտելիքին: Կրթակարգերն արտացոլում են այն ռեսուրսը, որ ուսուցիչ-քաղաքացիները ներդնում են երեխաների կրթության մեջ:

Գծապատկեր 12 — Կրթակարգերի համեմատություն

Միջազգային իրավունքի վրա հիմնված կրթակարգ	Ավանդական կրթակարգ
Սնունդ	Մաթեմատիկա
Ջուր	Լեզու և գրականություն
Հագուստի և մարմնի ձևավորում	Ժամանակակից օտար լեզուներ
Բնակարանային պայմաններ/շենքեր/շինություններ	Ֆիզիկա
Շարժունակություն և տրանսպորտ	Քիմիա
Առողջություն և հարաբերություններ	Կենսաբանություն
Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը	Աշխարհագրություն
Էներգիայի աղբյուրներ	Պատմություն
Կյանքը երկրի վրա	Ձևավորում և տեխնոլոգիա
Հաղորդակցություն և այլն	Արվեստ
Հաղորդակցություն և կապի տեխնոլոգիա	Երաժշտություն
Գրականություն, արվեստ և երաժշտություն	Կրոն
Աշխատանք և գործունեություն	Ֆիզիկական կրթություն
Էթիկա, իշխանություն և կառավարություն	Անձնական, առողջապահական և սոցիալական կրթություն

21 Չինացի քաղաքական առաջնորդ, 20-րդ դարի 2-րդ կես:
22 Հեունգ Վ., (2000թ.) անձնական զրույց:

Կրթակարգի ուսումնական բնագավառները եւ ընդհանուր նկարագիրը

Գծապատկեր 12-ում ներկայացված են ուսումնական բնագավառներ երկու տեսակի կրթակարգերի համար: Աջ կողմում ավանդական առարկաների շարքն է: Հարյուր տարուց ավել է, ինչ այդ առարկաները հայտնի են բազմաթիվ երկրների տարբեր դպրոցներին: Դրանց ծագման մասին խորհելիս կարելի է եզրակացնել, որ դրանց մշակման ընթացքում հաշվի չեն առնվել բոլոր երեխաների շահերը, այլ նախատեսված են նախորդ դարի էլիտար խմբերին պատկանող երեխաների ավանդական համալսարանական կրթության համար: Ձախ կողմում ներկայացված են ոլորտներ, որոնք նախատեսված են իրավահեն, համընդհանուր և կայուն զարգացում ապահովող կրթակարգերի համար: Ձախ կողմում նշվածները առարկաներ չեն, սակայն պետք է ունենան ավանդական առարկաների կարգավիճակ:

Գծապատկեր 12-ի ձախ կողմում ներկայացված ոլորտները վերաբերում են աշխարհի տարբեր երկրներում բնակվող բոլոր մարդկանց ընդհանուր խնդիրներին: Դրանք կարող են օգտագործվել Չինաստանի, Բիրմայի կամ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության, ինչպես նաև Անգլիայի ու Գերմանիայի քաղաքներում ու գյուղերում կրթակարգեր մշակելիս և, այդպիսով, կապ հաստատել այդ երկրների ու այնտեղ տիրող իրողությունների միջև: Դրանք կարող են որպես հիմք հանդիսանալ երեքից մինչև հարյուր երեք մարդկանց, ինչպես նաև նախադպրոցական, տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության համար նախատեսված կրթակարգերի համար: Դրանք ոլորտներ են, որոնք կարող են առնչվել բոլոր երեխաների ընդհանուր փորձին՝ անկախ նրանց առաջադիմությունից: Դրանք առնչվում են դպրոցների շրջակա համայնքների բնակիչների գործունեությանը՝ այդպիսով, ամրապնդելով երեխաների՝ ընտանիքների կողմից կրթակարգի մշակման գործում ցուցաբերված ներդրումը: Գործունեությունն ու աշխատանքը, ինչպես արդեն նշվել է, դիտարկվում են միասին, այնպես որ դպրոցները նախապատրաստում են երեխաներին իրենց աշխատանքը դիտարկել որպես վճարովի գործունեություն իրենց առօրյա այլ գործողությունների կողքին: Աշխատանքի տեսակները դասակարգելիս, որոնցով սովորաբար մարդիկ զբաղվում են, կրթակարգում կարելի է տարանջատել նախամասնագիտական (արհեստագործական) և ակադեմիական կրթության միջև տարբերությունները: Գծապատկեր 9-ում ներկայացված կրթակարգը, որը հիմնված է մարդու իրավունքների վրա, մշակվել է ըստ «Գ» հարթության 1-ին բաժնի՝ «Կրթակարգ բոլորի համար» (տե՛ս Գծապատկեր 10):

Հավանաբար, արդեն ցանկանում եք արագ ուսումնասիրել կրթակարգին նվիրված բաժինը: Մենք այդ բաժնի էջերին առանձնահատուկ երանգ ենք հաղորդել՝ հաշվի առնելով այն հատուկ կարգավիճակը, որ կարող է ունենալ *Ինդեքսի* տվյալ հատվածը դպրոցների համար: Տվյալ բաժինը նախևառաջ, մի քանի էջի շրջանակներում, ներկայացնում է սկզբունքային ուղեցույցներ յուրաքանչյուր ցուցիչի վերաբերյալ, որոնք կարող են ընդլայնվել և հարմարեցվել՝ ըստ յուրաքանչյուր դպրոցի իրավիճակի: Բաժնի յուրաքանչյուր հատված կամ ոլորտ բաժանված է մի շարք խորագրերի, ինչը նույնպես տվյալ բաժնի առանձնահատկություններից մեկն է: Արդյունքում ստանում ենք բավականաչափ մանրամասն ներկայացված կրթակարգի մի նմուշ, որը կարող է օգտագործվել յուրաքանչյուր դպրոցի կողմից՝ իր կրթակարգը մշակելու համար: Այդպիսով, դպրոցները կարող են ուրվագծել իրենց աշխատանքը նախքան պետական կրթակարգի ուսումնական ծրագրի կենտրոնական ուղղությանը ենթարկվելը: Յուրաքանչյուր ոլորտ հնարավորինս ստուգվել է փորձագետների կողմից և հիմնված է ծավալուն մասնագիտական գրականության վրա:

Այնուամենայնիվ, կարելի է գտնել որոշ բացթողումներ ու հարցեր, որոնք կարող են, ըստ Ձեզ, ոչ ճիշտ արտահայտված լինել: Հետևաբար, Ձեր ներգրավվածությունը մեծապես ողջունելի է: Դիտողությունների ու առաջարկների համար կարող եք գրել մեզ էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեով՝ info@indexforinclusion.org

«Գ» հարթության տվյալ բաժնի յուրաքանչյուր ոլորտ դիտարկվում է ինչպես տեղական, այնպես էլ գլոբալ խնդիրների տեսանկյունից՝ հաշվի առնելով էթիկան ու քաղաքական կողմերը, նաև անդրադառնալով անցյալին, ներ-

Գծապատկեր 13	Ցուցիչներ, Հարթություն «Գ», Բաժին 1. Կրթակարգեր բոլորի համար

1. Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության և սպառման շրջափուլերը:
2. Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը:
3. Երեխաներն ուսումնասիրում են հագուստը և մարմնի ձևավորումը:
4. Երեխաները բացահայտում են կացարանային և շենքային միջավայրը:
5. Երեխաները քննարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում և աշխարհի շուրջ:
6. Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության և փոխհարաբերությունների մասին:
7. Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը:
8. Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:
9. Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:
10. Երեխաները սովորում են կապի և հաղորդակցման տեխնոլոգիաների մասին:
11. Երեխաները զբաղվում են գրականությամբ, արվեստով ու երաժշտությամբ և ստեղծագործում են:
12. Երեխաները սովորում են աշխատանքի մասին և սովորածը համադրում իրենց հետաքրքրությունների զարգացմանը:
13. Երեխաները սովորում են էթիկայի կանոնների, իշխանության և կառավարման մասին:

կային ու ապագային:[23] Շատ առարկաների դեպքում հարցերը վերաբերում են բիզնեսին ու տնտեսությանը: Թեև ղեկավար մարմինները կարծում են, թե խթանում են տնտեսական ակտիվությունը՝ սովորողների գնահատման միջազգային ծրագրում (PISA) մաթեմատիկայի, բնագիտական առարկաների և գրագիտության գնահատականների բարձրացմանը ուշադրություն դարձնելով, դա կարելի է վիճարկել՝ հաշվի առնելով դպրոցներում դասավանդվող առարկաների բովանդակության և մեր հասարակությունում իրապես տեղի ունեցող տնտեսական գործունեության միջև առկա թույլ կապը: Մենք հորդորում ենք, որ մարդիկ նաև հաշվի առնեն այն հավասարակշռությունը, որ անհրաժեշտ է պահպանել տնտեսական գործունեության ոլորտում մարդկանց բարեկեցության և մեր մոլորակի առողջության համար կատարվող ներդրումներում:

Կրթակարգի նմուշը արտացոլում է երեխաների ընդհանուր փորձի հիման վրա ուսուցման գործընթացը կազմակերպելու երկարատև ավանդույթը: Մեծ տեղ է հատկացվում բնապահպանական խնդիրներին: Հորդորվում է, որ յուրաքանչյուր դպրոց մանրամասն անդրադառնա ջրային պաշարներին, օրինակ, իրենց հարակից տարածքի որևէ վտակի կամ գետի, ինչպես նաև աշխարհի մեկ այլ հատվածի որևէ գետի:[24] Այլ երկրների ջրային հոսքերի և պաշարների մասին գիտելիքը թույլ է տալիս ավելի լավ պատկերացում կազմել տվյալ տարածքի բնակչության կյանքի, կլիմայի, ինչպես նաև տվյալ տարածաշրջանում առկա հակամարտությունների ծագման աղբյուրների մասին:

23 Կարի Նեսը նկարագրում է Նորվեգիայում մշակված նմանատիպ սկզբունքային կրթակարգի մի նմուշ իր «Ինչո՞ւ պետք է բոլորի համար նախատեսված կրթությունը լինի ներառական» (“Why does education for all have to be inclusive education?”) աշխատության մեջ (2003թ.), որը տեղ է գտել Ջ. Ալլանի՝ «Ներառում, մասնակցություն և ժողովրդավարություն. ո՞րն է նպատակը» (“Inclusion, Participation and Democracy: What is the purpose?») հրատարակության մեջ (London, Kluwer Academic Publishers)

24 Տեղական ջրային պաշարներին անդրադառնալու գաղափարը գալիս է Մ. Սթոունի և Զ. Բարլոուի «Էկոլոգիական գրագիտություն. մեր երեխաների կրթությունը հանուն մոլորակի կայուն զարգացման» աշխատությունից (2005թ.) (Stone M. and Barlow, Z. (2005) Ecological Literacy: Educating our children for a sustainable world. San Francisco, Sierra Club Books.): Այն նաև պատշաճորեն անդրադառնում է Մաորի հասարակության փորձին՝ դիտարկելով գետի՝ որպես կենսատու աղբյուրի հայտնաբերումը, որն օգտագործվում է որպես ֆորմալ ներածության առաջին քայլ:

Ավանդական կրթակարգի ադապտացում

Անգլիայի տարրական և միջնակարգ դպրոցներն ընդլայնում են իրենց կրթակարգերը՝ հաշվի առնելով մեր առաջարկած «միջառարկայական» կրթակարգով նախատեսված գործողությունները և կրթակարգի վերոհիշյալ նմուշի ձախ կողմում ներկայացված թեմատիկան: Շատ դպրոցներ արդեն իսկ ներդրել են քաղաքացիության, կայունության, առողջության խթանման վերաբերյալ առաջարկությունների որոշ կողմեր դասավանդման գործընթացում, ինչպես նաև անդրադառնում են միջառարկայական թեմաների, ծրագրերի և խնդիրների լուծման վերաբերյալ միջազգային փորձին: Դպրոցները հայտարարում են բնապահպանական օրեր և կայուն զարգացման շաբաթներ, հետևում են կայուն զարգացման տասնամյակին նվիրված միջոցառումներին, Օլիմպիական խաղերի կամ դրամատիկական որևէ պատահարի միջոցով ուսումնասիրում են համաշխարհային փոխկապակցվածությունը, ֆինանսները, սննդի ոլորտը, քաղաքական էթիկան, իշխանության և կառավարման ձևերը: Այդ դպրոցներն իրականացնում են տեխնոլոգիական նախագծեր՝ տեղեկատվության փոխանցումը, էներգիայի վերականգնումն ու էներգախնայողությունն ուսումնասիրելու համար: Նրանք կարող են օգտագործել տվյալ նյութը՝ ավանդական կրթակարգերը երեխաների կյանքն ու փորձն ավելի սերտորեն փոխկապակցելու, ինչպես նաև ավելի քիչ ուշադրության արժանացած ոլորտների, օրինակ, հագուստի ձևավորման և տրանսպորտի վերաբերյալ գաղափարներից օգտվելու նպատակով:

Ճամփորդություն ժամանակի միջով՝ 21-րդ դարին բնորոշ կրթակարգ ստեղծելու նպատակով

Այնուամենայնիվ, Գծապատկեր 13-ում կա երկու սլաք: Այլընտրանքային կրթակարգ մշակելիս մենք փորձել ենք ապահովել ավանդական կրթակարգերի հետ կապված գիտելիքների ներառումը նոր սխեմաներում: Ֆիզիկայի և քիմիայի գիտելիքները կարող են ներկայացվել երկրագնդի, Արեգակնային համակարգի և տիեզերքի մասին քննարկումներում, սակայն, այդ գիտելիքներն անհրաժեշտ է ներկայացնել նաև մի շարք այլ բնագավառներում, մասնավորապես, ֆիզիկայի գիտելիքները՝ էներգիայի ոլորտին նվիրված քննարկումներում: Կենսաբանությունը փոխկապակցված է սննդային ցիկլերի և առողջության ընկալման հետ, սակայն, ավելի համահունչ է երկրի վրա կյանքի իմացության համատեքստում: Իհարկե, յուրաքանչյուր դպրոց կցանկանար, որ երեխաները լինեն գրագետ և ճշգրիտ գիտություններին տիրապետող: Առաջարկված սխեմայում գրագիտությունը փոխկապակցվում է հաղորդակցմանն ու կրթակարգի մյուս բոլոր ոլորտներին:

Պատմությունը հանդես է գալիս յուրաքանչյուր ոլորտում որպես անցյալը, ներկան և ապագան կապակցելու պահանջ. այն կարծես համահունչ է Պատմության ասոցիացիայի դիրքորոշմանը, որ ներկայացվել է կառավարության 2009թ.-ի՝ տարրական դպրոցների կրթակարգերի վերանայմանը նվիրված հաշվետվության մեջ.

> *«Մենք լիովին կողմ ենք... պակաս կարգադրողական և ավելի ճկուն Ազգային կրթակարգին, որը պատմության նման առարկաները համարում է ուսուցման գործիքներ»:*

Մաթեմատիկան նույնպես դառնում է միջառարկայական թեմա: Որոշ մասնագետներ մտահոգություն են հայտնել, որ մաթեմատիկական գիտելիքների հիերարխիկ բնույթը պահանջում է այն դասավանդել որպես առանձին առարկա, և այն՝ որպես տարբեր առարկաների կամ թեմաների տեղեկատվական գործիք դիտարկելը կարող է խոչընդոտել առարկայի ընկալումը: Միևնույն ժամանակ խանդավառություն է նկատվում, որ նման մոտեցումը կարող է խթանել երեխաների՝ մաթեմատիկական գիտելիքներ ձեռք բերելուն, մինչդեռ հակառակ դեպքում մաթեմատիկան՝ որպես իրական աշխարհից առանձնացված առարկա դասավանդելը կարող է ազդեցություն ունենալ երեխաների առաջադիմության վրա: Մաթեմատիկան՝ որպես միջառարկայական թեմա ուսումնասիրելը չի խանգարում, որ երեխաներն այն ուսումնասիրեն որպես մտքի բարդ համակարգ ավելի բարձր դասարաններում:

Մեր գործողություններում այլընտրանքային ճանապարհի ընտրելիս նոր խնդիրներն անխուսափելի են:

Համեմատություններ

21-րդ դարի առաջին տասնամյակում իրականացվել է կրթակարգերի վերանայման երեք հիմնական նախագիծ, այդ թվում՝ «Ռոուզի վերանայումը» (Rose Review): Նախագծերի շրջանակներում մշակված առաջարկները ներկայացված են Գծապատկեր 14-ում: Այս բոլոր նախագծերը հիմնված են այն սկզբունքների վրա, որոնք համընկնում են *Ինդեքսի* արժեքների շրջանակին: Այնուամենայնիվ, դրանք կառուցված են կրթակարգի ավելի ծանոթ ուսումնական բնագավառների շուրջ: Չնայած այն հանգամանքին, որ այդ սխեմաներն ընդգծում են միջառարկայական թեմաները, ներկայացված ոլորտները կրում են ավանդական պատկերացումների ծանրությունը: Սխեմաներից յուրաքանչյուրը շահագրգռված է առարկաների հիման վրա «հարմարեցված» կրթակարգի գոյությամբ, և դա սահմանափակում է նրանց ցանկությունները:

Ի՞նչ արդյունքներ կարելի է ստանալ կրթակարգում առաջարկվող փոփոխություններով

Ո՛չ «Ռոուզի վերանայման», ո՛չ էլ «Ալեքսանդրի» ավելի լայնածավալ վերանայման առաջարկները չեն իրականացվել կառավարության կողմից, հետևաբար չենք ակնկալում, որ մեր առաջարկները կարող են անմիջապես կիրառվել ազգային կամ պետական մակարդակում: Մեր միակ լծակը շահագրգիռ կողմերին երկխոսության ոլորտ ներգրավելու համար անհրաժեշտ գաղափարների ուժեղ կողմն է: Մեզ խրախուսում է այն, որ մեր առաջարկած կրթակարգը, ի տարբերություն ավանդական կրթակարգի, ավելի սերտորեն է կապված այն իրականությանը, որին մարդիկ սովորաբար առնչվում են դպրոցից ու կրթական այլ հաստատություններից դուրս: Նման կրթակարգն ավելի ընդգրկուն է արտացոլում երեխաների իրական կյանքը, փորձն ու ապագան: Մենք միանգամայն համոզված ենք, որ դպրոցական ծրագիրը պետք է փոխվի, մարդիկ պետք է խուսափեն նավթային կախվածությունից և այն համոզմունքներից, որ իրենք կարող են շարունակ ավելացնել մոլորակի չվերականգնվող ռեսուրսների սպառումը, և որ մեր մոլորակը, առանց էական վնասներ կրելու, կարող է կլանել աճող քանակությամբ կենսատրոհման չենթարկվող թափոններ: Մենք համոզված ենք, որ այդ խնդիրները փոխկապակցված են, և ամեն դեպքում պահպանում ենք մեր լավատեսությունը:

Գծապատկեր 14	Արդյոք անհրաժե՞շտ է փոխարինել հին կրթակարգը նորով	
Նախնական կրթակարգի՝ Կառավարության նախաձեռնած անկախ վերանայում («Ռոուզի վերանայում»)	**Քեմբրիջի համալսարանի նախնական վերանայում («Ալեքսանդրի վերանայում»)**	**Միջազգային բակալավրիատի առաջին ուսումնական տարիների ծրագիր[25]**
Անգլերենի, հաղորդակցման և լեզվական նախնական գիտելիքներ	Լեզու, բանավոր խոսք և գրագիտություն	Լեզու
Մաթեմատիկայի նախնական գիտելիքներ	Մաթեմատիկա	Մաթեմատիկա
Գիտության և տեխնոլոգիայի նախնական գիտելիքներ	Գիտություն և տեխնոլոգիաներ	Գիտություն
Պատմության, աշխարհագրության և սոցիալական գիտությունների նախնական գիտելիքներ	Տարածության և ժամանակի ըմբռնում	Սոցիալական գիտություններ
Ֆիզիկական զարգացման, առողջապահության և բարեկեցության պահպանման նախնական գիտելիքներ	Ֆիզիկական և էմոցիոնալ առողջություն	Անձնական, սոցիալական և ֆիզիկական կրթություն
Արվեստի նախնական գիտելիքներ	Արվեստ և ստեղծագործականություն	Արվեստ
Կրոնական կրթություն	Կրոն և հավատք	
Քաղաքացիական գիտակցություն	Քաղաքացիական գիտակցություն և էթիկա	

ՀՀ մեզ մոտ զուգակցված են 3 սյունակների նպատակը:

25 www.ibo.org/pyp/curriculum/Index.cfm

Դաշինքների/միությունների ձեւավորում

Ինդեքսն օգնում է համախմբելու այն բոլոր գործողությունները, որոնք նպաստում են ներառական արժեքների խթանմանը՝ այդպիսով՝ նվազեցնելով քաղաքականության մասնատման հավանականությունն ու նախաձեռնությունների ծանրաբեռնվածությունը: Գծապատկեր 15-ը պարունակում է գործունեության տեսակներ՝ ցանկ, որոնք կարող են միասին ներառվել ներառական զարգացման գործընթացում:

Այսպիսով, դպրոցն ակտիվորեն խթանում է ժողովրդավարական և քաղաքացիության կրթությունը մարդու իրավունքների ճանաչման հիման վրա:

Դպրոցները կապ են հաստատում իրենց համայնքների բոլոր անդամների հետ՝ համայնքների ու դպրոցների միջև փոխշահավետ հարաբերություններ ձևավորելու նպատակով: Սա լավագույն նպաստն է, որ նրանք կարող են ապահովել համայնքի համախմբման գործում: Իրենց համայնքներում բնակվող տարբեր խմբերի միջև անջրպետը հաղթահարելով՝ նրանք դառնում են առողջության խթանման, մեծահասակների ու երեխաների բարօրության և իրենց հաստատության կայուն զարգացման դերակատարներ: Նրանք դառնում են այնպիսի դպրոցների զարգացման միջազգային շարժումների անդամներ, ինչպիսիք են ՅՈՒՆԻՍԵՖ-ի «երեխայանպաստ դպրոցի» նախագիծը կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից իրակա-

Գծապատկեր 15	**Արդյոք անհրաժե՞շտ է ձեւավորել դաշինքներ/միություններ ներառական կրթության զարգացման համար**

- Արժեքահեն կրթություն
- Դպրոցի բարելավում/դպրոցի զարգացում
- Ժողովրդավարական կրթություն
- Քաղաքացիական գիտակցություն/ քաղաքացիության կրթություն
- Իրավահեն կրթություն[26]
- Համայնքային հանրակրթություն
- Համայնքային համախմբում[27]
- Խաղաղության պահպանման/բռնության կանխման մեխանիզմների կրթություն
- Առողջության պահպանմանը նպաստող կրթություն[28]
- Երեխայանպաստ դպրոցներ
- Կրթություն բոլորի համար[29]
- Հոգևոր, բարոյական, սոցիալական և մշակութային կրթություն[30]
- Սոցիալական պատասխանատվություն և էմոցիոնալ գրագիտություն[31]
- Խտրականությունը/կողմնապահությունը բացառող կրթություն[32]
- Իրավահավասարության ուսուցում
- Բնապահպանական կրթություն, բնապահպանական կայունության կրթություն
- Արտադասարանային կրթական միջոցառումներ[33]
- Բնության գրկում կազմակերպվող կրթություն[34]
- Համագործակցային ուսուցում
- Փորձի վրա հիմնված ուսուցում
- Փիլիսոփայություն երեխաների համար[35]
- Երկխոսության վրա հիմնված կրթություն
- Նորարարական մտածողություն[36]
- Ուսուցում՝ առանց ունակությունների պիտակավորման[37]

26 www.unicef.org.uk/rrsa
27 2006թ. «Կրթության և տեսչության մասին» ակտի հիման վրա, 2002թ. «Կրթության մասին» ակտում ավելացվեց նոր բաժին՝ 21(5), որի համաձայն՝ պետական դպրոցների ղեկավար մարմինները պարտավոր են նպաստել համայնքային համախմբմանը:
28 http://www.who.int/school_youth_health/gshi/hps/en/
29 http://www.unesco.org/new/en/education/themes/leading-theinternational-agenda/education-for-all/
30 http://www.doingsmsc.org.uk
31 http//:www.sealcommunity.org
32 Derman-Sparks, L. and Olsen Edwards, J. (2010) Anti-Bias education for young children and ourselves, Washington, National Association for the Education of Young Children.
33 http//:www.lotc.org.uk
34 www.forestschoolassociation.org/what-is-forest-school/
35 http://www.philosophy4children.co.uk, http://p4c.com/
36 Hart, S. (1996) Beyond special needs: enhancing children's learning through innovative thinking, London, Paul Chapman Publishing. Hart, S. (2000) Thinking through teaching: a framework for enhancing participation and learning, London, David Fulton.
37 Hart, S., Dixon, A., Drummond, M.J. and McIntyre, D. (2006) Learning without limits, Buckingham, Open University Press., Swann, M., Peacock, A., Hart, S and Drummond, M. Buckingham, Open University Press.

նացվող «Կրթություն բոլորի համար» շարժումը, որի նպատակն է ապահովել որակյալ կրթություն յուրաքանչյուր անձի համար:

Նրանք ինտեգրում են «հոգևոր, բարոյական, սոցիալական և մշակութային կրթությունը», ինչպես նաև «սոցիալական և էմոցիոնալ ուսուցումը» հարաբերությունների ձևավորման, ինչպես նաև դասավանդման և ուսումնասիրության գործընթացի կազմակերպման ու իրականացման մեթոդներում: Այս մոդելը շոշափում է նաև խտրականության բոլոր ձևերի կրճատման հարցը՝ «հավասարության» ապահովման օրենսդրության պահանջների կիրարկման նպատակով: Դասավանդման և ուսումնառության միջոցառումներն անդրադառնում են շրջակա միջավայրի խնդիրներին՝ երեխաներին ծանոթացնելով տեղական և աշխարհի մակարդակում առկա համապատասխան խնդիրներին, միևնույն ժամանակ ցույց տալով դպրոցների կողմից տարածքների օգտագործման, էներգիայի ու սննդի սպառման, աղբի կուտակման նկատմամբ մոտեցման փոխկապակցվածությունն այդ խնդիրներին: Այս ամենը փոխկապակցված ներկայացվում է դպրոցի կրթակարգում: Բնության գրկում կազմակերպվող դասերը՝ որպես այլընտրանքային տարբերակ, շրջակա միջավայրի զգայունությունն ուսումնասիրելու, համագործակցային ուսումնառությունը խթանելու, հոգևոր ներգրավվածությունն ապահովելու և ռիսկերը վերագնահատելու համար են: Արտադասարանային պարապմունքների կարևորությունը հատկապես այն է, որ գիտելիքի ձեռքբերումն ամրապնդվում է գործնական փորձով, որն ընդլայնվում է երեխաների ու երիտասարդների կողմից մտածելու, խոսելու, գրելու ժամանակ և գեղարվեստական դրսևորումներում: Ինչպես երեխաները, այնպես էլ մեծահասակները զարգացնում են իրենց քննադատական մտածողությունը, որը կարելի է ամրապնդել «Փիլիսոփայություն երեխաների համար» աշխատության մեջ առաջարկվող հարցերի վրա հիմնված, ուսումնառության շրջանակներում խրախուսվող երկխոսություններով: Երբ երեխաների դժվարություններն այլևս չեն դիտարկվում որպես նրանց «հատուկ կրթական կարիքներից» բխող խնդիրներ, այլ համարվում են դպրոցի մշակույթով, քաղաքականությամբ և գործելակերպով պայմանավորված խոչընդոտներ, արդյունքում ձևավորվում են երեխաների առաջընթացը խոչընդոտող խնդիրների ստեղծագործական լուծումների նոր ռեսուրսներ, ինչպես ենթադրվում է «նորարարական մտածողության» շրջանակներում: Մոդելը թույլ է տալիս կանխել երեխաների այնպիսի պիտակավորումը, որ կարող է հանգեցնել նրանց մեջ արժեքի հիերարխիայի ձևավորմանը, խրախուսել անհարգալից վերաբերմունքը, սահմանափակել այլոց ակնկալիքները և բացասաբար ազդել երեխաների ինքնության վրա:

Գծապատկեր 14-ի վերնագիրը «Ներառական կրթական զարգացում» արտահայտությունն է, քանի որ «ներառական» բառը կարող է օգտագործվել որպես գերիշխող հայեցակարգ: Վերջինս ներկայացնում է այն արժեհամակարգը, որ նպաստում է սովորաբար այլ պիտակներով նշված կրթական միջոցառումների լայն շրջանակի զարգացմանը: Նույն նպատակի համար կարող են օգտագործվել նաև այլ բառեր, ինչպես, օրինակ, «ժողովրդավարական», «արժեքահեն», «կայուն», «ոչ-կողմնակալ», որոնք ներկայացնում են ընդհանուր մոտեցումը: Մեզ համար էական չէ, թե որ բառով կներկայացվի այս ինտեգրացիոն գործառույթը՝ այն պայմանով, որ ընդգծվի այդ գործողությունները համատեղելու անհրաժեշտությունը:

Բազմաթիվ կազմակերպություններ դպրոցների զարգացմանը նպաստելու նպատակով առաջարկում են «ծրագրեր» կամ նախաձեռնություններ, որոնք առնչվում են 14-րդ գծապատկերում նկարագրված մեկ կամ մի քանի ոլորտների: Նախատեսվում է, որ ուսուցիչները պետք է ինտեգրեն բարձրաձայնված խնդիրներն ու քաղված դասերը դասավանդման և ուսումնառության իրենց հետագա ծրագրերում: Նման ծրագրերից շատերը լավ մտածված են ու ոգեշնչող: Սակայն դրանց կայունությունը կարող է վիճարկվել, եթե չկան դրանք դպրոցի ուսումնական գործունեության ոլորտում ներգրավելու համար անհրաժեշտ տարածք և սահմանված պարտավորություն: Նման ներգրավվածության ժամկետը շատ կարևոր է, քանի որ անհրաժեշտ է, որ նման ծրագրերը սկսեն գործել դպրոցում այն պահին, երբ հնարավոր է առաջ մղել արդեն սկիզբ առած նախաձեռնությունները: Հնարավոր է, որ այս ոլորտում համապատասխան աշխատակազմի կողմից ուսումնասիրված և կրթակարգում ու ժամանակացույցում հստակորեն հաստատված նույնիսկ փոքր մասշտաբի նորարարությունն ավելի երկարատև ազդեցություն ունենա: *Ինդեքսը* ցույց է տալիս, թե ինչպես կարելի է փոխկապակցել այդպիսի գործողությունները ստորև ներկայացվող օրինակների հիման վրա:

Իրավունքների մասին գիտելիքի ձեռքբերում

Ինդեքսը խրախուսում է այնպիսի միջոցառումները, ինչպիսիք են ՅՈՒՆԻՍԵՖ-ի Միացյալ Թագավորության գրասենյակի նախաձեռնած «Մարդու իրավունքների իրականացմանը նպաստող դպրոցներ» մրցանակը, սակայն, ըստ *Ինդեքսի*, նման միջոցառումները պետք է ընդգրկված լինեն դպրոցի մշակույթում, քաղաքականության և գործելակերպի ավելի լայն փոփոխություններում, որոնք կարող են ապահովել ավելի երկարատև արդյունքներ: *Ինդեքսի* համաձայն՝ «իրավունքը» ներկայացվում է արժեհամակարգի տասնհինգ այլ արժեքների կողքին և դրանց հետ փոխկապվածության մեջ: Որոշ դպրոցներում իրավունքի մասին գիտելիքների փոխանցումը կարող է նորույթ լինել, հետևաբար դա ներկայացվում է *Ինդեքսի* Ա2.2 ցուցիչում՝ «Դպրոցը խթանում է հարգանքը մարդու բոլոր իրավունքների նկատմամբ»: Բացի այդ, *Ինդեքսի* 290-293-րդ էջերում ներկայացված է մարդու իրավունքներին առնչվող փաստաթղթերի ամփոփ նկարագիր, իսկ 293-րդ էջում՝ Երկիր մոլորակի իրավունքները, որոնց անդրադառնում է Ա2.3 ցուցիչը՝ «Դպրոցը խրախուսում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը»:

Կայունության, գլոբալ իրազեկության եւ արժեքների վրա հիմնված զարգացումների խթանում

Գծապատկեր 16-ը ցույց է տալիս, թե ինչպես են պետական փաստաթղթերում արտացոլվում «Կայուն զարգացող դպրոցների ազգային շրջանակ»-ում և «Դպրոցների համար սահմանված գլոբալ չափորոշիչներ»-ում ընդգծված խնդիրները: Ստորև բերված 17-րդ և 18-րդ գծապատկերներում թվարկվում են *Ինդեքսի* այն ցուցիչները, որոնք առնչվում են այդ ծրագրերից յուրաքանչյուրին՝ ցուցադրելով դրանց ներկայացման համապարփակությունը: Գծապատկեր 15-ում թվարկված մյուս միջամտությունները կարող են նույն կերպ արտացոլվել առանձին ցուցիչներում:

Գծապատկեր 16 — Համընկնող նախաձեռնություններ

8 ճանապարհ դեպի կայուն զարգացող դպրոցներ	8 առանցքային հայեցակարգ գլոբալ հարթության համար
ԳԼՈԲԱԼ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ	ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐԱՌՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ԲԱՁՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՌՈՒՄ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ	ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ԷՆԵՐԳԻԱ ԵՎ ՋՈՒՐ	ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ԶԳԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ
ՍՆՈՒՆԴ ԵՎ ԸՄՊԵԼԻՔ	ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ	ՓՈԽԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ
ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ	ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Գծապատկեր 17	Ցուցիչներ դեպի կայուն զարգացող դպրոցներ տանող 8 ճանապարհների համար[38]

Գլոբալ հարթություն

Ա1.8 Դպրոցը արժևորում է համայն մարդկության միջև փոխհարաբերությունների ընմբռնումը:

Գ2.6 Դասերը զարգացնում են մարդկանց նմանությունների ու տարբերությունների ընմբռնումը:

Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը:

Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:

Ներառում եւ մասնակցություն

Ա2.4 Ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցության մակարդակի աճ:

Մյուս բոլոր ցուցիչները

Սպառում եւ թափոններ

Բ1.13 Դպրոցը նպաստում է թափոնների ծավալների կրճատմանը:

Էներգիա եւ ջուր

Բ1.12 Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը:

Գ1.2 Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը:

Գ1.9 Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:

Սնունդ եւ ըմպելիք

Գ1.1 Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության ու սպառման շրջափուլերը:

Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:

Ճանապարհորդություն եւ երթեւեկություն

Գ1.5 Երեխաները քննարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում և աշխարհի շուրջը:

Շենքեր/շինություններ եւ խաղահրապարակներ

Բ1.11 Շենքերն ու խաղահրապարակները ֆիզիկապես մատչելի են բոլորի համար:

Գ1.4 Երեխաները բացահայտում են կացարանային և շենքային միջավայրը:

Տեղական բնակչության բարեկեցություն

Ա1.10 Դպրոցը և տեղական համայնքները նպաստում են փոխադարձ զարգացմանը:

Ա2.9 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը:

Ա2.10 Դպրոցը նպաստում է երեխաների ու մեծահասակների առողջության պահպանմանը:

Գ1.6 Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության ու փոխհարաբերությունների մասին:

Գծապատկեր 18	Ցուցիչներ գլոբալ հարթության 8 առանցքային հայեցակարգերի համար

Քաղաքացիություն

Ա1.7 Դպրոցը ժողովրդավարական քաղաքացիության մոդել է:

Ա1.8 Դպրոցը արժևորում է համայն մարդկության միջև փոխհարաբերությունների ընմբռնումը:

Հարթություն «Գ», որի բոլոր ցուցիչները փոխկապակցված են տեղական և աշխարհի մակարդակներում:

Բազմազանություն

Ա1.9 Չափահասները և երեխաները պատշաճորեն են արձագանքում մարդկանց սեռային պատկանելությանը և սեռերի հավասարությանը:

Գ2.6 Դասերը զարգացնում են մարդկանց նմանությունների ու տարբերությունների ընմբռնումը:

Կայուն զարգացում

Ա2.3 Դպրոցը խրախուսում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը:

Բ1.12 Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը:

Բ1.13 Դպրոցը նպաստում է թափոնների ծավալների կրճատմանը:

Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը:

Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:

Գ1.9 Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:

Արժեքներ եւ զգայական ընկալում

Ա2.1 Դպրոցը ձևավորում ու զարգացնում է համընդհանուր ներառական արժեքներ:

Մարդու իրավունքներ

Ա2.2 Դպրոցը խթանում է հարգանքը մարդու բոլոր իրավունքների նկատմամբ:

Սոցիալական արդարություն

Ա2.7 Դպրոցը պայքարում է խտրականության բոլոր ձևերի դեմ:

Փոխկախվածություն

Ա1.8 Դպրոցը արժևորում է համայն մարդկության միջև փոխհարաբերությունների ընմբռնումը:

Գ1.1 Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության և սպառման շրջափուլերը:

Գ1.2 Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը:

Գ1.3 Երեխաներն ուսումնասիրում են հագուստը և զարդարանքը:

Գ1.5 Երեխաները քննարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում ու աշխարհի շուրջը:

Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգն ու տիեզերքը:

Հակամարտության կարգավորում

Ա2.8 Դպրոցը խրախուսում է հարաբերությունների պարզաբանման և վեճերի լուծման ոչ բռնի ձևերը:

[38] http://esdgc.escalate.ac.uk/doorways

Խոչընդոտներ, ռեսուրսներ եւ աջակցություն

«Ուսուցման և մասնակցության խոչընդոտները», «ուսուցման և մասնակցության խթանման ռեսուրսները» և «բազմազանությունը» պատկանում են *Ինդեքսի* առանցքային հայեցակարգերի շարքին: Դրանք կարող են նպաստել մեծահասակների և երեխաների ընդհանուր գիտելիքների ուղղորդմանը: Գծապատկեր 19-ում ներկայացված հարցերը միավորում են այդ գիտելիքները: Մասնակցային գործընթացի միջոցով փոխանցելիս և ներառական արժեքների զարգացման հետ միավորելիս այս հայեցակարգերի հիման վրա կարող են ծագել վերանայման, պլանավորման և իրականացման նոր գաղափարներ, նույնիսկ առանց 4-րդ բաժնի ցուցիչների և հարցերի օգնության: Երբեմն գոյություն ունեն դպրոցի բարելավումը խոչընդոտող հսկայական խնդիրներ, որոնք հայտնի են գրեթե բոլորին, սակայն մնում են չբարձրաձայնված: Դրանք դառնում են այն ակնհայտ խնդիրները, որոնք ոչ ոք չի ցանկանում նկատել:

Ուսուցման եւ մասնակցության խոչընդոտները

Ուսուցման խոչընդոտները կարելի է հայտնաբերել դպրոցի ցանկացած ոլորտում՝ շենքերում և տարածքներում, կազմակերպական կառուցվածքում, երեխաների և մեծահասակների միջև հարաբերություններում, դասավանդման և ուսումնառության մոտեցումներում: Խոչընդոտներ կարելի է հայտնաբերել նաև դպրոցի սահմաններից դուրս՝ ընտանիքներում և համայնքներում, ինչպես նաև ազգային ու միջազգային իրադարձություններում ու քաղաքականության շրջանակներում: Սակայն, միգուցե անհրաժեշտ է դիմակայել այն գայթակղությանը, որ ուսուցման և մասնակցության խոչընդոտները «տեսանելի» են միայն այն վայրերում, որոնք դուրս են մեր պատասխանատվությունից և գործելու իրավասությունից: **Դպրոցում առկա խոչընդոտները վերացնելու մեր փորձերը պետք է կենտրոնանան այն խնդիրների վրա, որոնք կարելի է լուծել դպրոցի աշխատակիցների, երեխաների և նրանց ընտանիքների ջանքերով, հատկապես համատեղ աշխատանքով:**

Ուսուցման և մասնակցության խոչընդոտները բացահայտել չի նշանակում փնտրել դպրոցի թերությունները կամ սխալները: Ներառումն անընդմեջ գործընթաց է, որը ենթադրում է մասնակցության և ուսուցման խոչընդոտների ընթացիկ բացահայտում և վերացում համագործակցող համայնքների շրջանակներում: Խոչընդոտների բացահայտումը և դրանց կրճատման նպատակով ծրագրերի մշակումը միշտ դրական քայլեր են:

«Հատուկ կրթական կարիքներ» հասկացության փոխարինում

«Ուսուցման և մասնակցության խոչընդոտներ» հասկացությունը կրթական դժվարությունները հաղթահարելու նպատակով օգտագործելը թույլ կտա վերանայել «երեխաները՝ որպես հատուկ կրթական կարիքներ ունեցող անձինք» դասակարգումը: Այն գաղափարը, որ կրթական դժվարությունները կարելի է հաղթահարել երեխային՝ որպես «հատուկ կրթական կարիքներ ունեցող» անձի՝ պիտակավորելով, ապա անհատական միջամտություն ցուցաբերելով, ունի զգալի սահմանափակումներ: Երեխայի հաշմանդամությունը որպես կրթական դժվարությունների հիմնական պատճառ դիտարկելը շեղում է կրթական հաստատությունների մյուս կողմերի թերություններից, և արդյունքում, անտեսվում են հաշմանդամություն չունեցող երեխաների կրթական դժվարությունները: Նման մոտեցումը խրախուսում է երեխաներին «թերության» ոսպնյակի միջով տեսնելը, այլ ոչ թե դիտարկել որպես լիարժեք անհատ, որ ենթարկվում է բացառման մի շարք ճնշումների:

Երեխաներին՝ որպես «հատուկ կրթական կարիքներ» ունեցող անձանց, ըստ կատեգորիաների դասակարգելիս, չի բացառվում, որ մենք կարող ենք չափազանցել կամ անտեսել նրանց սեռային, դասային և էթնիկ պատկանելությունը: Օրինակ՝ Անգլիայում որպես «հատուկ կրթական կարիքներ ունեցող անձ» դասակարգված տղաների թիվը գրեթե երկու անգամ գերազանցում է աղջիկների թիվը:[39] Այս անհավասարակշռությունն արտահայտվում

[39] Office for standards in education, (2010) The special educational needs and disability review, London, Ofsted.

Գծապատկեր 19	Խոչընդոտներ, ռեսուրսներ եւ աջակցություն

- Ուսուցման և մասնակցության ինչպիսի՞ խոչընդոտներ են ի հայտ գալիս դպրոցում և համայնքում:
- Ովքե՞ր են հանդիպում ուսուցման և մասնակցության խոչընդոտների:
- Ինչպե՞ս կարող է նվազագույնի հասցնել ուսուցման և մասնակցության խոչընդոտները:
- Ուսուցման և մասնակցության խթանման ինչպիսի՞ ռեսուրսներ գոյություն ունեն:
- Ինչպե՞ս կարելի է համախմբել ուսուցման և մասնակցության խթանման լրացուցիչ ռեսուրսներ:
- Ինչպե՞ս կարելի է ապահովել ուսուցման և մասնակցության խթանումը:

է նաև այն երեխաների դեպքում, որոնք դասակարգված չեն որպես «հատուկ կրթական կարիքներ ունեցող անձինք», սակայն ցուցաբերում են համեմատաբար ցածր առաջադիմություն կամ դրսևորում են վարքագծային դժվարություններ: Այդ թվերը պահպանվել են տասնամյակներ շարունակ, սակայն համեմատաբար քիչ ուշադրության են արժանացել: Այդ տվյալների համաձայն՝ կրթական դժվարությունները և թե ինչպես են երեխաները սովորում դպրոցում կարող են որոշ չափով պայմանավորված լինել սեռերի փոխհարաբերություններով, հետևաբար, ուսուցման խոչընդոտները կարելի է հաղթահարել սեռային պատկանելության վերաբերյալ մտածելակերպի և համապատասխան գործողությունների փոփոխությամբ: *Ինդեքսը* հորդորում է դպրոցների աշխատակիցներին վերանայել «տղամարդկության» և «կանացիության» վերաբերյալ իրենց արձագանքն ու մոտեցումները:

Երեխաներին՝ որպես «հատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց» պիտակավորելը կարող է հանգեցնել ակնկալիքների նվազեցման: Միևնույն ժամանակ երեխաներին՝ որպես «շնորհալիների և տաղանդավորների» դասակարգելը կարող է հանգեցնել արժեքների հիերարխիայի ստեղծման, արդյունքում երեխաներին պիտակավորելով որպես «նորմայից դուրս», «նորմալ» և «գերազանց»: Դա կարող է տեղի ունենալ նաև այն դեպքերում, երբ գործնականում որոշ երեխաներ դասակարգվում են ինչպես «հատուկ կրթական կարիքներ ունեցող անձինք», այնպես էլ «շնորհալի ու տաղանդավոր»: Բազմաթիվ դպրոցներ մեծ ջանքեր են գործադրում բոլոր երեխաներին, անկախ պիտակներից, հավասարապես արժևորելու համար, և աշխատում են հաղթահարել այն ընկալումը, որ դասակարգումը նպաստում է արդյունքների խթանմանը:

Անհրաժեշտ է երկար մտածել նախքան որևէ մեկին «հատուկ կրթական կարիքներ ունեցող անձ» կոչելը կամ «նորմայից դուրս» երևույթը նկարագրող որևէ եզրույթով անվանելը, ինչպես, օրինակ, «վարքի և հուզականային ոլորտի խանգարումներ ունեցող անձ», որտեղ «հուզականային խանգարում» բառակապակցությունը երբեմն փոխարինվում է «հակասոցիալական անձնային խանգարում» բառակապակցությամբ, կամ «ուշադրության պակասի և հիպերակտիվության համախտանիշ ունեցող անձ», կամ «նորմային» չհամապատասխանող երեխաների համար վերջերս առաջարկված եզրույթներից մեկի՝ «չենթարկվող ըմբոստության խանգարում» արտահայտության օգտագործումը: Երեխային հատուկ եզրույթներով կամ հապավումներով կոչելը՝ որպես առօրյա գործելակերպ, պարունակում է առանձնահատուկ անհարգալից վերաբերմունքի տարրեր:

Կրթական դժվարությունների նկատմամբ ստերեոտիպային վերաբերմունքը ծագում է առանձին, «տարբերակված» և անհատական կրթակարգերից և այն հատուկ ուշադրությունից, որ ցուցաբերվում է ուսուցչի օգնականների կողմից: Դա կարող է վատթարացնել այլ երեխաների ու մեծահասակների հետ հարաբերությունները: Դասարանում հանձնարարված խմբային աշխատանքների դեպքում ուսուցչից ավելի ցածր որակավորում ունեցող օգնականին հաճախ կարելի է տեսնել այն խմբերի հետ աշխատելիս, որոնք համարվում են ավելի շատ կրթական դժվարություն-

ներ ունեցող երեխաներ: Կրթական դժվարություններ ունեցող երեխաների հետ զույգով աշխատելու մոդելը, անկախ այլ մոտեցումներ կիրառելու բազմաթիվ խորհուրդներից, շարունակում է կիրառվել՝ սահմանափակելով ստեղծագործական մտածողությունը՝ աջակցության տրամադրման գործում:

Տեղական որոշ ղեկավար մարմիններ և դպրոցներ փոխարինել են «հատուկ կրթական կարիքներ» հասկացությունը «անհատական կրթական կարիքներ» հայեցակարգով: Դա կարող է հիմք ծառայել բացառման ճնշումների ենթարկվող բոլոր երեխաների համար քաղաքականության և գործելակերպի միավորման: Այնուամենայնիվ, նման մոտեցումը շարունակում է կրել անհատականության տարրեր՝ կրթական հաստատության՝ որպես ամբողջության, իրական խոչընդոտների վերացման և նրա մշակույթում, քաղաքականության մեջ և գործելակերպում ռեսուրսների հավաքագրման փոխարեն:

Այն գաղափարը, որ կրթական դժվարություններն անհրաժեշտ է հաղթահարել «ուսուցման և մասնակցության խոչընդոտների» վերացմամբ, լայն կիրառություն է ձեռք բերել 2000թ.-ին՝ *Ինդեքսի* առաջին հրապարակմանը հաջորդող տասնամյակում՝ մասամբ նաև *Ինդեքսի* ազդեցությամբ: Այնուամենայնիվ, պաշտոնական փաստաթղթերում այդ գաղափարի օգտագործումը դեռևս չի ուղեկցվում նախկին մտածողության ձևերը վերացնելու համապատասխան մարտահրավերներով՝ այդպիսով, շարունակելով «հատուկ կրթական կարիքներ» եզրույթի գործածությունը: Եզրույթն օգտագործվում է «Կրթության, առողջության և խնամքի ծրագրեր» մշակելու ուղեցույցերում[40], «Հատուկ կրթական կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց կանոնակարգ»-ում՝ աշակերտների և ուսանողների դժվարությունները սահմանելիս[41], անհատական կրթական ծրագրերում և իրենց ծախսերի վերաբերյալ դպրոցների կողմից տրամադրվող տեղեկություններում: Թեև դպրոցներին եզրույթի կիրառումը պարտադրված չէ օրենքով, սակայն «Հատուկ կրթական կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց կանոնակարգը» հորդորում է մասնագետներից մեկին նշանակել «հատուկ կրթական կարիքների համակարգող» հապավումով՝ ՀԿԿՀ: Սակայն ավելի նախընտրելի է կիրառել այնպիսի այլընտրանքային եզրույթներ, ինչպես, օրինակ, «ուսուցման աջակցության համակարգող», «ուսուցման զարգացման համակարգող» կամ «ներառական կրթության համակարգող», քանի որ այս եզրույթները խրախուսում են ավելի համակողմանի և ճկուն վերաբերմունք ուսուցման և մասնակցության խոչընդոտների, դրանց կրճատման մեխանիզմների ու ռեսուրսների հավաքագրման նկատմամբ:

Եթե դպրոցի աշխատակազմը պարտավոր է վերահսկել կրթական դժվարությունների մասին մտածելակերպը, ապա նրանք կարող են օգտագործել «հատուկ կրթական կարիքներ» եզրույթը միայն պաշտոնական պահանջներ կատարելիս և թույլ տալ, որ ուսուցման և մասնակցության խոչընդոտների վրա հիմնված այլընտրանքային մտածելակերպը թափանցի իրենց դպրոցի մշակույթի, քաղաքականության ու գործելակերպի մեջ: Եզրույթների կիրառության դիտարկումները շատ կարևոր են, եթե ցանկանում ենք կանխել հին մտածելակերպի կարծրացումը: «Ուսուցման և մասնակցության խոչընդոտների հանդիպող երեխա» արտահայտությունը կարող է հեշտությամբ վերածվել «խոչընդոտներով երեխա» արտահայտության՝ որպես «հատուկ կրթական կարիք ունեցող երեխա»-յի մեղմասացություն (էվֆեմիզմ):

Հաշմանդամության սոցիալական եւ անհատական մոդելներ

Երեխաների դժվարությունները նկարագրելու նպատակով, «հատուկ կրթական կարիքներ» եզրույթի փոխարեն, «ուսուցման և մասնակցության խոչընդոտներ» հասկացության օգտագործումը հակադրություն է ստեղծում կրթական դժվարությունների սոցիալական և «բժշկական» կամ «անհատական դեֆիցիտի» տեսանկյունների միջև: Սա կարելի է դիտարկել հաշմանդամության սոցիալական և բժշկական մոդելների տեսանկյունից: Հաշմանդամությունը կարող է սահմանվել որպես երկարատև

40 Department for Education (2014) Children and families Act, London, HHSO.

41 Department for Education, Department of Health (2015) Special educational needs and disability code of practice: 0-25 years, London, HMSO.

«ֆիզիկական, ինտելեկտուալ կամ հուզական ֆունկցիայի սահմանափակում»[42], թեև «ինտելեկտուալ խանգարման» հասկացությունը խնդրահարույց է և կարող է ենթադրյալ ուսուցման դժվարությունների համար չհիմնավորված ֆիզիկական հիմք լինել: Հաշմանդամությունը կարող է դիտվել որպես մասնակցության խոչընդոտ՝ հաշմանդամության որևէ տեսակ, քրոնիկական ցավ կամ հիվանդություն ունեցող մարդկանց համար: Հաշմանդամության բժշկական կամ անհատական մոդելը հաշմանդամություն ունեցող անձանց խոչընդոտները համարում է տվյալ հաշմանդամության անմիջական հետևանք: Սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտում է որպես հաշմանդամություն ունեցող անձանց և սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հետ փոխհարաբերությունների փորձից բխող արդյունք: Հաճախ հաշմանդամությունն ամբողջությամբ առաջանում է շրջակա միջավայրում առկա խտրական վերաբերմունքի, գործելակերպի պատճառով և հասանելիության ու մասնակցության խոչընդոտների վերացման փորձերի բացակայության կամ դրանց ձախողման հետևանքով: Այլ դեպքերում դրանք առաջանում են շրջակա միջավայրի և հաշմանդամություն, ցավ կամ քրոնիկ հիվանդություն ունեցող անձի միջև փոխազդեցությունների հետևանքով:

Համեմատաբար քիչ են այն գործողությունները, որոնք կարող են ձեռնարկվել դպրոցների կողմից՝ երեխայի հաշմանդամությունը հաղթահարելու համար, թեև հիվանդության կանխարգելումը և անվտանգ միջավայրի ապահովումը կարող են կանխել որոշ երեխաների սպառնացող հաշմանդամության վտանգը: Այնուամենայնիվ դպրոցները կարող են զգալիորեն նվազեցնել խտրական վերաբերմունքի և գործողությունների հետևանքով առաջացած նաև ինստիտուցիոնալ խոչընդոտները, որոնք հայտնվում են երեխաների և մեծահասակների ճանապարհին: Օրենքը պահանջում է, դպրոցներն իրականացնեն «խելամիտ հարմարեցումներ»՝ հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցությունն ապահովելու համար:[43] Դպրոցի մշակույթը կարող է անչափ մեծ ազդեցություն ունենալ հաշմանդամություն ունեցող աշխատակիցների ներգրավմամբ:

Ինստիտուցիոնալ խտրականություն

Այն խոչընդոտները, որոնք բացասաբար են ազդում որոշակի խմբերի մասնակցության վրա և առաջանում են հաստատությունների կառուցվածքի կամ առաջնորդման ձևի հետևանքով, կոչվում են «ինստիտուցիոնալ խտրականություն»: Մաքֆերսոնի զեկույցը[44], որն ուսումնասիրում էր ոստիկանության կողմից սևամորթ դեռահաս Սթիվեն Լոուրենսի սպանության գործի քննությունը, անդրադառնում է ոստիկանական ուժերում և կրթական, առողջապահության և սոցիալական ծառայությունների ոլորտում դրսևորած «ինստիտուցիոնալ ռասայականությանը», թեև այդ խտրականությունը չէր սահմանափակվում պետական հատվածով: Ինստիտուցիոնալ ռասայականությունը սահմանվել է որպես խտրականության հիմքերի վրա տրամադրվող ծառայություն, որն արտահայտվում է «անհիմն նախապաշարմունքով, անտեղյակությամբ, անհեթեթությամբ և ռասիստական կարծրատիպերով, որոնցից հատկապես տուժում են էթնիկ փոքրամասնությունները»:[45] Այս ձևակերպումը հիմնված է քառասուն տարի առաջ ԱՄՆ-ում Սթոկելի Կարմայքլի կողմից առաջարկված սահմանման վրա: Սակայն ինստիտուցիոնալ խտրականությունն ունի ավելի լայն իմաստ, քան ռասայականությունը: Այն ներառում է տարբեր ինստիտուտների կամ հաստատությունների կողմից դրսևորվող խտրականություն՝ ըստ աղքատության մակարդակի, հաշմանդամության, սեռային, դասային ու էթնիկ պատկանելության, կրոնի, հավատքի ու տարիքի: Ինստիտուցիոնալ խտրականությունը խորապես ներթափանցում է հասարակության մշակույթի մեջ և հանգեցնում մարդկանց խտրական ընկալումների ու համապատասխան արձագանքների: Հաստատությունների բոլոր անդամները պատասխանատվություն են կրում ինստիտուցիոնալ խտրականության համար: Հետևաբար, եթե նույնիսկ խտրականու-

42 Adapted from Disabled People's International, (1982) Proceedings of The First World Congress, Singapore: Disabled People's International.
43 Department for Education and Skills (2006) Implementing the Disability Discrimination Act in schools and early years settings, London, DFES.
44 Macpherson, W. (1999) Stephen Lawrence inquiry (Macpherson report) Command Paper 4261, vol 1, London, Stationery Office.
45 Նույն տեղում՝ պարբ. 6.34:

թյան որևէ դեպք տեղի է ունեցել նախքան անձի՝ տվյալ հաստատության անդամ կամ աշխատակից դառնալը, և դա կարող է որոշակիորեն ճնշել նրա գործողությունները, ամեն դեպքում նա պատասխանատվություն է կրում խտրականության և խտրական վերաբերմունքի որևէ հետևանքի համար: Ինստիտուցիոնալ խտրականությունն ստեղծում է մասնակցության խոչընդոտներ և կրթության ոլորտում կարող է խանգարել ուսուցման գործընթացին: Շարունակական բնույթ կրող խտրականությունը կարող է բացասական ազդեցություն թողնել կրթական համակարգի պատմության վրա և նվազեցնել որակավորման մակարդակը՝ կրճատելով աշխատանք ձեռք բերելու հնարավորությունները: Որպես հետևանք՝ դպրոցները կարող են կորցնել իրենց համայնքների ներկայացուցչական դեմքը: Բացի այդ, ներառման գործընթացը կարող է ծանր լինել այն անձանց համար, որ ստիպված են հաղթահարել իրենց խտրական գործելակերպն ու վերաբերմունքը և պայքարել խտրական ինստիտուցիոնալ մշակույթի դեմ:

Ռասայական, սեռային, դասային պատկանելության, հաշմանդամության, տարիքի, կրոնական պատկանելության և հավատքի հիման վրա խտրականության դրսևորումները ունեն մեկ ընդհանուր արմատ, այն է՝ տարբերության նկատմամբ անհանդուրժողականությունը և անհավասարության ստեղծման նպատակով իշխանության օգտագործումը: Քանի որ մարդիկ ավելի հաճախ քննարկում են հաշմանդամության չառնչվող խնդիրները, ապա շատերը կարող են անտեղյակ լինել տարբեր հաստատություններում հաշմանդամության պատճառով մարդկանց բացառման դեպքերին: Հաշմանդամության կամ «կրթական հատուկ կարիքների» պատճառով երեխաներին դպրոց չընդունելու ընդհանուր մոտեցումը դասակարգվում է որպես ինստիտուցիոնալ խտրականություն:

21-րդ դարի առաջին տասնամյակում Եվրոպայի քաղաքական գործիչներից շատերը, ինչպես նաև անհավասարության դեմ պայքարող մարդկանց ու կազմակերպությունների մի շարք խմբեր բարձրաձայնեցին «բազմամշակութայնության» խնդիրները:[46] Նշվում էր, որ բազմամշակութայնությունը՝ որպես տարբեր ազգերի մարդկանց միավորելու մեխանիզմ, ձախողվել է: Սակայն բազմամշակութայնության որոշակի ձևի մերժմամբ նրանք մտածված կամ ինքնաբերաբար նպաստում էին միամշակութայնության և դրա հետևանքով ձևավորվող ինստիտուցիոնալ խտրականության շարունակական զարգացմանը:

Ինդեքսն օգնում է դպրոցներին ձևավորելու բարդ, սակայն բաց բազմամշակութային միջավայր խտրականության դեմ պայքարող քաղաքականության մշակման հիման վրա: Նման քաղաքականության բնույթը բխում է այնպիսի պաշտոնական փաստաթղթերից, ինչպիսիք են 2010թ.-ի «Հավասարության մասին օրենքը», սակայն կարող է նաև դուրս գալ նման փաստաթղթերի սահմաններից: Բոլոր նման պահանջները կարող են սահմանվել դպրոցի իրավիճակին համապատասխան, որը որոշակիորեն արձագանքում է իր բոլոր անդամների հավասարությանը՝ որպես արժեքավոր ռեսուրսի: Այնուհետև խտրականության դեմ պայքարի քաղաքականությունը կարող է ներդրվել դպրոցում, քանի որ այն նպաստում է դպրոցի համընդհանուր արժեքների խթանմանը, այլ ոչ թե օրենսդրությանը համապատասխանելուն:

[46] Alibhai-Brown, Y. (2000) After multi-culturalism, London, Foreign Policy Centre. Phillips. T (2004) Guardian, May 28th, 2004.

Ուսուցման ու մասնակցության գործընթացն ապահովող ռեսուրսներ

Ուսուցման ու մասնակցության խոչընդոտների կրճատումը պահանջում է ռեսուրսների հավաքագրում: Երբ արժեքները հստակ ձևակերպված և համընդհանուր են դպրոցի համար, դա մեծ ռեսուրս է: Այն ստեղծում է զարգացման ընդհանուր ուղղություն, օգնում է որոշումներ ընդունելու և լուծելու վիճելի հարցերը: Ներառական արժեքները դառնում են կրթական գործընթացի և հանրային կյանքի մասնակցության ընդլայնման մշտական խթան: Նմանապես, դպրոցում իրականացվող տարբեր ծրագրերի նկատմամբ միասնական վերաբերմունքը՝ դպրոցի զարգացմանն ուղղված մեկ մոտեցման շուրջ, դառնում է մեկ այլ ռեսուրս՝ հստակ և համաձայնեցված գործողություններով: Դրա շնորհիվ, ինչպես խոչընդոտների դեպքում, ռեսուրսներ կարելի է հայտնաբերել դպրոցի բոլոր ասպեկտներում՝ մշակույթում, քաղաքականության մեջ և գործելակերպում, շենքերում, դասասենյակի սարքավորումներում, գրքերում, համակարգիչներում, դասավանդող և վարչական աշխատակազմում, երեխաների ու երիտասարդների, ծնողների/խնամատարների, համայնքների և ղեկավար մարմինների շրջանում:

Ցանկացած հաստատությունում ուսուցման ու մասնակցության ռեսուրսները միշտ էլ ավելի շատ են, քան օգտագործվում են տվյալ պահին: Դպրոցը տեղյակ է, թե երեխաների ուսուցման և մասնակցության ինչ խոչընդոտներ կան իր տարածքում: *Ինդեքսի* հիմնական նպատակներից մեկն է օգնել դպրոցներին օգտագործելու այդ տեղեկությունը իրենց զարգացման համար: Այդ գաղափարն արտացոլված է երեխաների և մեծահասակների միջև համագործակցությանն առնչվող ցուցիչներում: Երեխաների ուսումնառության և խաղերի մեջ ներգրավված լինելու կարողությունները, խաղերի ընթացքում, ուսուցման և մասնակցության գործընթացում միմյանց աջակցելու, ինչպես նաև աշխատակիցների՝ միմյանց զարգացմանն աջակցելու ներուժը կարող են ամբողջությամբ չօգտագործվել:

Ներառական սկզբունքների հիման վրա կրթակարգի կառուցվածքի վերանայման առաջարկներում ներկայացվում են կրթակարգի յուրաքանչյուր ոլորտի միջև առկա կապերը՝ տեղական և գլոբալ մակարդակներում: Դա հան-

գեցնում է դպրոցների տեղական ռեսուրսների ներգրավմանը՝ կրթակարգի մշակմանն աջակցելու համար: Քանի որ նոր կրթակարգը սերտորեն առնչվում է երեխաների ու դպրոցի համայնքների անդամների կյանքին, պարզ է դառնում, թե ինչպես կարելի է տեղի մարդկային ռեսուրսները և ֆիզիկական միջավայրն օգտագործել ի շահ կրթակարգի: Դասարանային պարապմունքների սահմաններն ընդլայնվում են՝ ընդգրկելով ոչ միայն տեղական միջավայրը, այև նաև ամբողջ աշխարհը:

Աջակցության ցուցաբերում

Այն դեպքում, երբ երեխաների ու երիտասարդների «հատուկ կրթական կարիքները» դիտարկվում են որպես կրթական դժվարությունների ծագման աղբյուր, բնական է ենթադրել, որ «աջակցություն» նշանակում է լրացուցիչ մասնագետների տրամադրում՝ անհատ երեխաների հետ իրենց խնդիրները հաղթահարելու ուղղությամբ աշխատելու համար: Մենք դիտարկում ենք «աջակցություն» հասկացությունն ավելի լայն իմաստով, այն է՝ «բոլոր գործողությունները, որոնց նպատակն է ընդլայնել դպրոցի կարողությունները՝ երեխաներին և երիտասարդներին հավասարապես արժևորելու համար»: Այս առումով, ուսուցման ու մասնակցության խոչընդոտները բացահայտելու, նվազեցնելու ջանքերը և ռեսուրսների հավաքագրումը դիտվում են որպես աջակցություն:

Քանի որ, մեր սահմանման համաձայն, դասավանդման և ուսուցման ներառական զարգացումը աջակցման գործողություն է, աջակցության գործընթացը ներառում է բոլոր աշխատակիցներին, երեխաներին ու նրանց ընտանիքներին: Երբ ուսումնական գործունեությունը նախատեսում է նպաստել բոլոր երեխաների մասնակցությանը, անհատական աջակցության անհրաժեշտությունը նվազում է: Աջակցությունը, լայն իմաստով, դրսևորվում է այն ժամանակ, երբ ուսուցիչները դասերը պլանավորելիս հաշվի են առնում բոլոր երեխաների կարիքները՝ նրանց տարբեր՝ նախնական գիտելիքները, հետաքրքրությունները, փորձը և ուսման նկատմամբ մոտեցումը: Այն դրսևորվում է, երբ երեխաներն օգնում են միմյանց: Աջակցությունը գրեթե նույնն է, երբ մասնագետը անհատական մոտեցում է ցուցաբերում երեխային, որ փորձում է հասկանալ կենսաբազմազանության դասի տերմինաբանությունը, և երբ ուսուցիչը դասը կազմակերպում է այնպես, որ այն արտացոլի երեխաների համընդհանուր փորձը, նպաստի բոլորի ուսումնառությանը և դասավանդման լեզուն, ընդհանուր առմամբ, հասկանալի լինի բոլորին: Երեխաներին տրամադրվող անհատական աջակցությունը պետք է միշտ նպաստի անկախության խրախուսմանը՝ խթանելով երեխային ուսումնառության գործընթացում ներգրավելու՝ մեծահասակների կարողությունները:

Վերանայման գործընթացի համար նախատեսված նյութեր

Արժեքների շրջանակի հիման վրա կամ խոչընդոտների, ռեսուրսների ու հնարավորությունների բացահայտմամբ դպրոցի զարգացման գործընթացը կարելի է կազմակերպել քիչ թե շատ համակարգված: Գործընթացը կարող է ներգրավել անհատների, խմբերի կամ ամբողջ դպրոցների: *Ինդեքսի* հարթությունները, բաժինները, ցուցիչները, հարցերն ու հարցաթերթիկները կարող են նպաստել երկխոսությունների հետագա զարգացմանը, թե ինչպես են մեծահասակներն ու երեխաները պատկերացնում իրենց դպրոցի հետագա զարգացումը: Դրանք կարող են նաև պարբերաբար օգտագործվել կրթական հաստատությունները վերանայելու, ներառական զարգացման պլան մշակելու և այն իրականացնելու նպատակով: Եթե դեռ չեք հասցրել դա կատարել, ապա ծանոթանալով 12-14-րդ էջերում ներկայացված ցուցիչների ցանկին և 4-րդ բաժնի հարցերին ու ցուցիչներին՝ ուսումնասիրեք դրանց կառուցվածքը և դիտարկեք, թե ինչպես են դրանք ծառայում որպես խորագրեր իրենց իմաստ հաղորդող հարցերին:

Հարթությունները եւ բաժինները

Ինդեքսի օգտագործմամբ դպրոցների գործունեության վերանայումը թույլ է տալիս դիտարկել հաստատության զարգացման հնարավորությունները՝ երեք փոխկապակցված հարթություններում, այդ թվում՝ ներառական մշակույթների, ներառական քաղաքականության ձևավորման և ներառական գործելակերպի զարգացման հարթություններում: Գծապատկեր 20-ը ևս մեկ անգամ ներկայացնում է փոխկապակցված հարթությունների եռանկյունին, իսկ Գծապատկեր 21-ը՝ յուրաքանչյուր հարթության բովանդակության ամփոփագիրը:

Շատ երկրների բազմաթիվ դպրոցներում *Ինդեքսի* կիրառման փորձը հաստատում է, որ այս հարթությունները մեծապես նպաստում են դպրոցի զարգացման գործընթացը մշակելու գործին: Թեև հարթություններից յուրաքանչյուրը զարգացման կարևոր ուղղություն է, դրանք հաճախ համընկնում են: Միայն գործնականում ձեռք բերված ապացույցներն են, որ թույլ են տալիս բացահայտել մշակույթների ու քաղաքականության ազդեցությունը: Ինչպես արժեքներն են ընկալվում գործողությունների դիտարկմամբ, այնպես էլ քաղաքականության բնույթի ընկալումը կախված է գործելակերպի վրա ազդեցություն թողնելու փորձերից: Փաստաթղթի կազմին «քաղաքականություն» բառը նշելը այն չի դարձնում քաղաքականություն՝ որևէ էական իմաստով, եթե չի ներկայացնում գործելակերպի կարգավորման հստակ մտադրություն: Առանց իրականացման ռազմավարության, այսպես կոչված, քաղաքականության փաստաթուղթը դառնում է հռետորության օրինակ, որը թերևս կարելի է օգտագործել միայն տեսուչների ու այցելուների վրա տպավորություն գործելու համար:

Գծապատկեր 20 **Դպրոցի զարգացման համար նախատեսված Ինդեքսի հարթությունները**

Գծապատկեր 21 **Բացահայտենք *Ինդեքսի* հարթությունները**

Հարթություն Ա. Ներառական մշակույթների ձեւավորում

Սույն հարթության նպատակն է ստեղծել ապահով, ընդունելի, համագործակցող, խթանող, ջերմ ընդունելություն ցուցաբերող համայնքներ, որտեղ բոլորը գնահատված են: Ներառական համընդհանուր արժեքները ձևավորվում և փոխանցվում են ամբողջ ոլորտում ներգրավված բոլոր աշխատակիցներին, երեխաներին և նրանց ընտանիքներին, ղեկավար մարմիններին, շրջակա համայնքներին և բոլոր նրանց, ովքեր աշխատում են դպրոցում ու դպրոցի հետ: Ներառական մշակույթների արժեքներն ուղղորդում են քաղաքականությունների վերաբերյալ որոշումներ կայացնելիս, ինչպես նաև առաջարկում են իրավիճակային գործնական լուծումներ՝ ապահովելով հետևողական և շարունակական զարգացում: Դպրոցի մշակույթում տեղի ունեցող փոփոխությունն ինտեգրվում է մեծահասակների ու երեխաների ինքնությանը և փոխանցվում դպրոցի նոր սերունդներին:

Հարթություն Բ. Ներառական քաղաքականության ձեւավորում

Սույն հարթությունն ապահովում է, որ ներառման գաղափարը ներթափանցի դպրոցին առնչվող բոլոր ծրագրերում և ներգրավի բոլորին: Քաղաքականությունը խրախուսում է երեխաների և աշխատակիցների մասնակցությունը՝ դպրոց ոտք դնելու առաջին իսկ օրից: Ներառական քաղաքականությունը խրախուսում է դպրոցին՝ հասանելի լինել տարածքի բոլոր երեխաների համար և նվազագույնի հասցնել բացառման ճնշումները: Աջակցության քաղաքականությունը ներգրավում է այն բոլոր գործողությունները, որոնք նպաստում են տվյալ հաստատության կարողությունների զարգացմանը՝ ներգրավված բոլոր անձանց պատշաճ վերաբերմունք ցուցաբերելու և բոլորին հավասարապես արժևորելու տեսանկյունից: Աջակցության բոլոր ձևերը համակցված են մեկ շրջանակում, որի նպատակն է ապահովել բոլորի մասնակցությունը և դպրոցի զարգացումը՝ որպես մեկ ամբողջություն:

Հարթություն Գ. Ներառական գործելակերպերի զարգացում

Սույն հարթության նպատակն է զարգացնել ուսուցանվող նյութերը և դրանց դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ ապահովելով ներառական արժեքների ու քաղաքականության արտացոլումը: Ուսուցման գործողությունների բովանդակության ձևավորման տեսանկյունից ներառական արժեքների ազդեցությունը ներկայացված է սույն ձեռնարկի «Կրթակարգ բոլորի համար» բաժնում (էջ՝ 184): Այն կապակցում է ուսումնառության գործընթացը տեղական ու միջազգային փորձի, իրավունքների ու շրջակա միջավայրի կայունության հետ: Ուսուցման գործընթացն ապահովում է, որ դասավանդման և ուսումնառության գործընթացները համապատասխանեն դպրոց հաճախող բոլոր սովորողների զարգացմանը: Երեխաները խրախուսվում են իրենց ակտիվության, վերլուծական և քննադատական մտածելակերպի ցուցաբերման ու զարգացման համար, նրանք դիտարկվում են որպես միմյանց ուսուցման գործընթացը խթանելու օգտակար ռեսուրսներ: Մեծահասակներն աշխատում են միասին և պատասխանատվություն են ստանձնում բոլոր երեխաների ուսուցման համար:

Մշակույթների կարեւորությունը

Գծապատկեր 20-ում մշակույթները գտնվում են եռանկյան հիմքում՝ ընդգծելով նրանց նշանակությունը: Սա նշանակում է, որ քաղաքականությունն ու գործելակերպը խթանում են դպրոցի մշակույթը՝ նպաստելով վերջինիս կայունության ապահովմանը: Այնուամենայնիվ մշակույթների հարաբերական տևականությունը համայնքների, հաստատությունների և համակարգերի զարգացման գործընթացը դարձնում է հնարավոր, միևնույն ժամանակ՝ բարդ: Ըստ էության, մշակույթների միջոցով է ապահովվում փոփոխության ինչպես կայունությունը, այնպես էլ դիմակայությունը:

Մշակույթները համեմատաբար տևական կենսակերպեր են, որոնք ստեղծում են մարդկանց համայնքներ և կառուցվում վերջիններիս կողմից: Մշակույթներն ստեղծվում և արտահայտվում են լեզվի ու արժեքների, համատեղ պատմությունների և համընդհանուր պատմության, գիտելիքների, հմտությունների, համոզմունքների, տեքստերի, արվեստի, արտեֆակտերի, ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնների, ծեսերի, համակարգերի և ինստիտուտների միջոցով: Մշակույթները կարող են ներկայացնել, ամրապնդել կամ վիճարկել տարբերությունները: Նրանք ձևավորում են ի՛նչ անելու և ինչպե՛ս վարվելու հավաքական միտքը: Նրանք այնպես են նպաստում ինքնությունների ձևավորմանը, որ մարդիկ գտնում են իրենց դերը որոշակի խմբի գործունեության մեջ և հաստատվում դրանում: Խմբի գործունեությանը նույնականացումը ապահովում է համայնքի կողմից նորեկներին ուղղորդելու շահադրդումը: Թե՛ ինքնությունը, թե՛ մշակույթը ձևավորվում են բազմակի փոխազդեցությունների հիման վրա և բավականին բարդ գործընթաց են: Դրանք, որպես կանոն, արտացոլում են մարդկանց վրա ինչպես տարբեր, այնպես էլ նմանատիպ գործունեությունների ազդեցությունները՝ ներգրավելով մասամբ համընկնող ենթամշակույթների ցանցերը: Սույն ձեռնարկում «մշակույթ» բառն օգտագործվում է հոգնակի թվով՝ այդ բազմազանությունն արտացոլելու նպատակով: Մշակույթները ենթադրում են այցելուներին ու կողմնակի անձանց հայտնաբերելու և նրանց գոյությանն արձագանքելու բացահայտ ու թաքնված կանոններ: Ներառական մշակույթները խրախուսում են այն գաղափարը, որ մի շարք կենսակերպեր և ինքնության ձևեր կարող են գոյակցել, և որ նրանց փոխազդեցությունը հարստացնում և պահանջում է մի կողմ թողնել տարբերությունները: Այն բոլոր իրավիճակներում, երբ գործունեության ճկունությունն ու բազմատեսակությունը բացառվում են, ցանկացած փոփոխություն կարող է համայնքի անդամների կողմից դիտարկվել որպես ինքնության կորուստ և հանգեցնել դիմակայության: Համընդունելի արժեքների հիման վրա համակցված ներառական մշակույթները ողջունում են նոր անդամներին, հետևաբար մշտապես պատրաստակամ են փոփոխությունների նկատմամբ:

Ինդեքսի յուրաքանչյուր հարթություն բաժանվում է երկու հատվածի, ինչպես պատկերված է Գծապատկեր 22-ում ներկայացված «Պլանավորման շրջանակ»-ում և 273-րդ էջում: Պլանավորման շրջանակը կարող է խրախուսել, որ *Ինդեքսի* մեկ հարթության մեկ կողմը զարգացնելու նպատակ ունեցող դպրոցներն անդրադառնան նաև այլ հատվածներում պահանջվող փոփոխություններին, եթե այդ դպրոցներն ակնկալում են նման փոփոխության իրականացում ու պահպանում:

Ցուցիչներ եւ հարցեր

Ինդեքսի 4-րդ բաժնում ներկայացված ցուցիչներն ու հարցերը կազմում են տվյալ բաժնի հիմնական մասը և փորձում են պատասխանել հետևյալ հարցին՝ «Ի՞նչ են ենթադրում ներառական արժեքները դպրոցների գործունեության բոլոր կողմերի համար»: Ցուցիչները ներկայացնում են զարգացման ակնկալիքները: Յուրաքանչյուր բաժին պարունակում է թվով մինչև 14 ցուցիչ, որ կարելի է օգտագործել առկա իրավիճակը վերանայելու և զարգացման առաջնահերթությունները սահմանելու համար: Դրանք ուղղություններ են, որոնք նախատեսված են ներառական զարգացման ուղին բռնած դպրոցներին կարևոր նպատակներ ներկայացնելու համար: Որոշ դեպքերում որևէ հարցի կարևորությունը, ինչպիսիք են, օրինակ, ազգությունը կամ հաշմանդամությունը, կարող է արտացոլված լինել մի շարք ցուցիչներում որպես մեկ ամբողջություն՝ իր առանձին ցուցիչն ունենալու փոխարեն: Սեռի խնդիրները ներկայացված են ինչպես սեփական ցուցիչով, այնպես էլ բազմաթիվ այլ ցուցիչներով: Հարցերի միջոցով խնդիրների ներկայացումը սահմանափակում է ցուցիչների հիման վրա զարգացման առաջնահերթությունների սահմանման շրջանակը:

Հարցերը սահմանում են ցուցիչների իմաստը: Նրանք փոխում են որոշակի ցուցիչի վերաբերյալ պատկերացումները և դպրոցի մասին առկա գիտելիքները: Նրանք պահանջում են դպրոցի ընթացիկ իրավիճակի ավելի խորը ուսումնասիրություն, տրամադրում են զարգացմանն ուղղված աշխատանքների լրացուցիչ գաղափարներ և ծառայում են որպես առաջընթացի գնահատման չափանիշներ: *Ինդեքսի* գործնական նշանակությունը հաճախ ակնհայտ է դառնում միայն այն ժամանակ, երբ մարդիկ սկսում են հատուկ ուշադրություն դարձնել հարցերի տարբեր կողմերին: *Ինդեքսն* օգտագործող որոշ դպրոցներ սկսում են դրանց կիրառումը միասին աշխատող մի խումբ գործընկերների կողմից ընտրված մեկ կամ մի քանի հարցերի շուրջ ծավալվող երկխոսություններով: Ցուցիչները և հարցերը կարող են օգտագործվել արժեքների ու գործողությունների միջև կապերի վերաբերյալ երկխոսություններ նախաձեռնելու համար: Հարցերի յուրաքանչյուր խումբ քննարկելուց հետո առաջարկվում է ավելացնել լրացուցիչ հարցեր: Այս կերպ, յուրաքանչյուր դպրոցում մեծահասակները և երեխաները կարող են մշակել *Ինդեքսի* իրենց տարբերակը՝ առկա հարցերն իրենց իրավիճակներին հարմարեցնելով, ըստ այդմ փոփոխելով, ինչպես նաև սեփական հարցերն ավելացնելով:

Որոշ ցուցիչներ ու հարցեր վերաբերում են այնպիսի խնդիրների, որոնց համար դպրոցներից բացի, պատասխանատվություն են կրում նաև տեղական իշխանությունները: Այդպիսի խնդիրներից են, օրինակ, դպրոցների շենքերի ու շինությունների մուտքերի հասանելիությունը, կրթական, առողջապահական և խնամքի ծրագրերը և ընդունելության քաղաքականությունները: Հուսով ենք, որ դպրոցներն ու տեղական իշխանությունները կապահովեն կառուցողական համատեղ աշխատանք՝ շենքերի ու շինությունների նախագծերի, կրթական, առողջապահական ու խնամքի ծրագրերի և ընդունելության քաղաքականությունների մշակման ընթացակարգերի պատրաստման ուղղությամբ, որոնք կխրախուսեն դպրոցի տարածքի բոլոր աշակերտների մասնակցությունը համընդհանուր կրթական գործողություններին:

Որոշ դպրոցներում աշխատակազմն ու ղեկավար մարմինները տվյալ պահին որոշակի ցուցիչներ չկիրառելու որոշում կարող են կայացնել այն պատճառով, որ դրանք չեն համապատասխանում դպրոցի որդեգրած զարգացման ուղղությանը: Ակնկալվում է, որ դպրոցները ցուցաբերեն տարբեր արձագանքներ և տրամադրվող նյութերը հարմարեցնեն իրենց պահանջներին: Սակայն հարմարեցումները նպատակահարմար չեն, եթե դրանց նպատակը միայն ցուցիչների կամ հարցերի մարտահրավերների անհարմարությանն ընդդիմանալն է:

Այլ դպրոցներում ցուցիչների ու հարցերի կիրառության խոչընդոտ կարող է հանդիսանալ դպրոցի բնույթը: Միասեռ և կրոնական ուղղվածությամբ դպրոցները չեն նախատեսում տարածքի բոլոր աշակերտների ներառում: Այնուամենայնիվ նման դպրոցներում աշխատակազմը հաճախ ցանկանում է պլանավորել դպրոցի ներառական զարգացումը և կարող է նախատեսել այդ ցուցիչների ու հարցերի հարմարեցում՝ իր նպատակներին համարժեք: *Ինդեքսի* առաջին հրապարակումը չէր նախատեսում գործածություն հատուկ դպրոցների զարգացման համար: *Ինդեքսը* հստակ խրախուսում է դպրոցների կողմից իրենց տարածքների բոլոր երեխաների ներառումը: Սակայն, որոշ հատուկ դպրոցներ օգտագործել են այն՝ իրենց դպրոցներում երեխաների ու աշխատակազմի մասնակցության սահմանափակումները վերացնելու համար:

Գծապատկեր 22	Պլանավորման շրջանակ
Ներառական մշակույթների ձեւավորում	
Հասարակության/համայնքի կառուցում	Ներառական արժեքների սահմանում
Ներառական քաղաքականության ձեւավորում	
Դպրոցի զարգացում բոլորի համար	Աջակցության համակարգում
Ներառական գործելակերպի զարգացում	
Կրթակարգ բոլորի համար	Ուսուցման գործընթացի կազմակերպում

Հարցաթերթիկներ

Ինդեքսի 5-րդ բաժինը ներառում է չորս հարցաթերթիկներ, որոնք կարելի է օգտագործել զարգացման առաջնահերթությունների շուրջ երկխոսության ծավալման և դրանց վերաբերյալ երեխաների, նրանց ծնողների/խնամատարների, ղեկավար մարմինների ու աշխատակիցների նախնական կարծիքների արձանագրման նպատակով: Առաջին հարցաթերթիկը հիմնված է ցուցիչների վրա և նախատեսված է դպրոցում ներգրավված յուրաքանչյուր անձի համար: Այն անհրաժեշտ է օգտագործել հարցերի հետ՝ ցանկացած որոշակի ցուցիչի իմաստն ուսումնասիրելու համար: Մյուս երեք հարցաթերթիկները նախատեսված են ծնողների ու երեխաների համար: Այդ հարցաթերթիկները, ինչպես և ցուցիչներն ու հարցերը մշակվել են՝ հաշվի առնելով *Ինդեքսի* արժեքների շրջանակի հետևանքները՝ ըստ դպրոցների բնույթի: Այս նպատակով մշակված հարցաթերթիկը շատ ընդգրկուն էր և կարիք եղավ այն կրճատելու: Մեզ խրախուսում էր այն փաստը, թե ինչպես արժեքների շրջանակն արագորեն վերածեց նման գործնական ձևակերպումների: Դպրոցները նույնպես կարող են կրճատել դրանք կամ հարմարեցնել իրենց նպատակներին:

Նյութերի կիրառումը

Հարցաթերթիկների կիրառման հետագա մանրամասները քննարկվում են *Ինդեքսի* հաջորդ բաժնում, որտեղ նկարագրվում է, թե ինչպես կարելի է այն օգտագործել մասնակցային գործընթացներում: Մենք արդեն նշել ենք, որ *Ինդեքսի* նյութերի օգտագործման ճիշտ կամ սխալ ձև գոյություն չունի: Դպրոցների ներառական զարգացումը կարող է սկիզբ առնել հետևյալ գործողություններով՝ արժեքների կիրառում, համընկնող նախաձեռնությունների ինտեգրման կարևորության ընդունում, նախատեսվող և արդեն իսկ կիրառված կրթակարգերի բնույթի քննարկում, «ուսուցման և մասնակցության խոչընդոտներ», «ուսուցմանն ու մասնակցությանը նպաստող ռեսուրսներ» և «աջակցություն» հասկացությունների կիրառում՝ կրթական դժվարությունների դիտարկման տեսանկյունների վերանայման նպատակով, մշակույթի դերի ընդգծում՝ փոփոխության կայունության ապահովման և դրան դիմակայման գործում: Այս բոլոր գործողությունները կարելի է իրականացնել առանձին-առանձին: Սակայն դրանք այն հարցերն են, որոնք նպաստել են *Ինդեքսի* ցուցիչների ու հարցերի զարգացմանը: Հետևաբար, վերանայման նյութերի օգտագործման ընթացքում դրանք կիրառվում են միասին՝ նպաստելով դպրոցում տեղի ունեցող երևույթների մանրամասն ուսումնասիրությանը և առաջարկելով ներառական զարգացումը խթանող փոփոխություններ:

3.
Ինդեքսը՝ որպես գործողության մղող գործիք

Ինդեքսը՝ որպես գործողության մղող գործիք

Սույն ձեռնարկի 3-ում բաժնում առաջարկում ենք *Ինդեքսով* աշխատելու մեթոդներ: Հազարավոր մարդիկ օգտվել են *Ինդեքսից*, և մեզ ծանոթ են դրա կիրառման տարբեր եղանակները: Այն օգտագործվում է որպես գաղափարների աղբյուր բազմաթիվ համատեքստերում, ինչպես դպրոցների աշակերտների ու համալսարանների ուսանողների համար հանձնարարություններ պատրաստելիս, այնպես էլ համալսարանական դասընթացներ մշակելիս: Դպրոցում *Ինդեքսի* օգտագործումը սովորաբար սկսվում է ներառական արժեքների կենսագործման համընդհանուր հանձնառությունից, այնուհետև, դպրոցի համայնքների բոլոր անդամների համագործակցությամբ մշակվում և ներդրվում է դպրոցի ներառական զարգացման ծրագիրը: *Ինդեքսը* կարելի է նաև կիրառել դպրոցի միայն մեկ ոլորտում կամ նույնիսկ մեկ ուսուցչի աշխատանքի բարելավման նպատակով, քանի որ արդյունքում ձևավորվում են այնպիսի երկխոսություններ, որոնք, ի վերջո, նպաստում են ներառական արժեքների հետագա ընդլայնմանն ու տարածմանը: Այնուամենայնիվ, *Ինդեքսի* ցանկացած կիրառության թիրախային նպատակը պետք է լինի կայուն զարգացումը, այլ ոչ թե ներառման նախագծի իրականացումը:

Այս բաժնում ներկայացվում է նաև մի շարք մասնագետների՝ *Ինդեքսի* օգտագործման փորձը: Սույն ձեռնարկի յուրաքանչյուր բաժնում ներկայացված փորձի օրինակների նպատակն է ձևավորել նոր գաղափարներ, ոչ թե դրանք ներկայացնել որպես կատարյալ փորձի նմուշներ:

Ծանոթություն. Հայաստանի Հանրապետության դպրոցները Ինդեքսը կիրառելիս պետք է ղեկավարվեն այդ գործընթացը կանոնակարգելու նպատակով «Հայկական Կարիտաս» ԲՀԿ կողմից սույն ծրագրի շրջանակներում մշակված և սահմանված կարգով հաստատված համապատասխան մեթոդական երաշխավորություններով:

Ներառական արժեքների վրա հիմնված զարգացման ճանապարհները	67
Փուլ 1: Մեկնարկ	69
Փուլ 2: Խոչընդոտների հաղթահարման համատեղ աշխատանք	85
Փուլ 3: Զարգացման ծրագրի մշակում	93
Փուլ 4: Գործողությունների ձեռնարկում	93
Փուլ 5: Զարգացման արդյունքների վերանայում	96

Ներառական արժեքների վրա հիմնված զարգացման ճանապարհները

Ինդեքսի կիրառման առաջին իսկ պահից Դուք ներգրավվում եք արժեքների վրա հիմնված զարգացման գործընթացում, երբ սկսում եք մտածել, թե այն ինչպես կարող է նպաստել Ձեր ամենակարևոր հիմնախնդիրների լուծմանը, գործողությունների և ներառական արժեքների, մանկավարժական սկզբունքների ու հրամայականների փոխկապակցմանը, երբ մտածում եք, թե ինչպես հաղթահարել խոչընդոտները և հավաքագրել ռեսուրսները, ինտեգրել ծրագրերն ու նախաձեռնությունները: Խորհում եք նաև զարգացման ծրագրի մշակման ու իրականացման ոլորտում այլ անձանց կամ կազմակերպությունների հետ գործակցելու մասին:

Ինդեքսի ցուցիչները և հարցերը նպաստում են բոլոր գործողությունների իրականացմանը, ինչպես նկարագրված է Գծապատկեր 22-ում: Տվյալ գծապատկերի ներքևի հատվածում մասնավորապես ընդգծվում է, որ ցանկացած զարգացում մեծահասակների ու երեխաների ջանքերի արդյունք է և պատկանում է նրանց: Գծապատկերը ներկայացնում է այն համակարգային մոտեցումը, որով ձևավորվում է զարգացման գործընթացը, քանի որ ներառական արժեքները և *Ինդեքսի* հասկացությունները գործնականում յուրաքանչյուր պահի ազդում են զարգացման վրա:

Գծապատկեր 23 **Ներառական զարգացում՝ «Ներառման ինդեքս»-ի հիման վրա**



Դպրոցների արժեքահեն զարգացման գործընթացը կարելի է պատկերել Գծապատկեր 23-ում ներկայացված շրջափուլի տեսքով, թեև շարունակաբար զարգացող դպրոցներում, յուրաքանչյուր փուլում նախատեսված գործողությունները կարող են տեղի ունենալ միաժամանակ: 1-ին փուլում նախատեսվում է կազմել զարգացման գործընթացի մշակման համար պատասխանատու խումբ և նրանց ծանոթացնել *Ինդեքսի* աշխատանքի նրբություններին, այդ թվում՝ արժեքների շրջանակին: Յուրաքանչյուր փուլում առաջարկվում են մի շարք հանձնարարություններ, ինչպես նկարագրված է Գծապատկեր 24-ում, որոնցից յուրաքանչյուրին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ բաժիններում:

Գծապատկեր 24 **Զարգացման գործընթացի մշակման շրջափուլերը՝ ըստ *Ինդեքսի***



Փուլ 1: Մեկնարկ

Սկսեք, որտեղից եւ ինչպես կարող եք

Դպրոցին զարգացման մղող գործողությունները ձևավորվում են ոչ միայն ուսուցիչների, այլ նաև ծնողների/խնամատարների, ղեկավարների կամ աշակերտական խորհրդի կողմից: *Ինդեքսի* Կարծիք 2-ը ներկայացնում է մի զեկույց, որն անդրադառնում է դպրոցի կողմից *Ինդեքսի* նախագծի մշակման նպատակով մասնակիցների ներգրավման աշխատանքները համակարգող ուսուցչի առաջին աշխատանքային հանդիպմանը: Նախկինում մենք կարող էինք տեսնել, թե ինչպիսի պատեհապաշտական եղանակով է նա համախմբում *Ինդեքսի* շուրջ աշխատող իր խումբը՝ նախնական աշխատանքների խոչընդոտների և սահմանափակումների պայմաններում: Սակայն, որպես մեկնարկ, այն իդեալական էր: Ցանկացած հանդիպում, որի ընթացքում տեղի է ունենում առնվազն որոշ երկխոսություն, արդեն իսկ նվաճում է և կարող է գործել որոշակի տպավորություն:

Ձեւավորեք պլանավորման Ձեր խումբը

Ինչպես ցույց է տալիս ուսուցչի զեկույցը, *Ինդեքսի* շուրջ աշխատանքի նպատակն է դպրոցի զարգացման գործում ներդնել մեկ՝ ներառական մոտեցում: Դպրոցի աշխատանքում որևէ խմբի հավելումը, որը գործում է վերանայման ու զարգացման ամենօրյա գործունեությանը զուգահեռ, ավելացնում է աշխատակիցների ընդհանուր աշխատանքի ծավալը: Այն մտահոգություններ է ծնում դպրոցի ընթացիկ գործունեության և կատարվող որևէ փոփոխության կայունության միջև առնչության շուրջ:

Երբեմն *Ինդեքսի* շուրջ աշխատանքները դպրոցի զարգացման պլանավորման արդեն գործող թիմի անդամների նախաձեռնությունն են: Ցանկացած մեկնարկի դեպքում հետագայում անհրաժեշտ է ընդլայնել խմբի անդամների թիվը՝ ընդգրկելով ինչպես ուսումնամեթոդական, այնպես էլ վարչական աշխատակազմը, ծնողներին, երեխաներին, երիտասարդներին ու ղեկավարներին: Կարևոր է՝ այդ խմբի կազմում ընդգրկվեն և՛ կանայք, և՛ տղամարդիկ, ինչպես նաև՝ դպրոցում սովորող կամ աշխատող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Աշխատանքի ընթացքում թիմում կարող են ներգրավվել նոր մարդիկ: Մեծ միջնակարգ դպրոցներում յուրաքանչյուր բաժին կարող է ունենալ պլանավորման ենթախումբ՝ կենտրոնական խմբի ենթակայությամբ: *Ինդեքսի* նյութերը պետք է հասանելի լինեն դրա նախագծի շուրջ աշխատող բոլոր անձանց համար: Խորհուրդ է տրվում պատճենահանել օգտագործման ենթակա բոլոր նյութերը: Դրանք կարող են նաև շրջանառվել էլեկտրոնային տարբերակով, օրինակ, նախասրահում կամ ծնողների սենյակում տեղադրված համակարգչով:

Գծապատկեր 25 **Զարգացման փուլերը՝ ըստ *Ինդեքսի***

Փուլ 1. Մեկնարկ

- Սկսեք, որտեղից և ինչպես կարող եք:
- Ձևավորեք պլանավորման Ձեր խումբը:
- Գտեք օժանդակություն:
- Աշխատանքում առաջնորդվեք ներառական մոտեցումներով:
- Ձեզ դիտարկեք որպես ընդհանուր պատկերի մի մաս:
- Վարեք գրանցամատյան:
- Օգտվեք ցուցիչներից ու հարցերից:
- Մասնակցեք արժեքների մասին երկխոսություններին:
- Ընդունեք ընդհանուր եզրույթներ, բառապաշար:
- Վերանայեք դպրոցում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումը:
- Դիտարկեք միջամտությունների ինտեգրումը:
- Ուսումնասիրեք ծրագրի մշակման շրջանակը:
- Հաղթահարեք *Ինդեքսի* օգտագործման խոչընդոտները:

Փուլ 2: Խոչընդոտների հաղթահարման համատեղ աշխատանք

- Նպաստեք իրազեկման բարձրացմանը:
- Ապահովեք *Ինդեքսի* նյութերի հասանելիությունը:
- Ուսումնասիրեք աշխատակազմի ու ղեկավարների գաղափարները:
- Ուսումնասիրեք երեխաների գաղափարները:
- Ուսումնասիրեք ծնողների/խնամակալների ու տեղական համայնքների անդամների գաղափարները:
- Բանակցեք զարգացման առաջնահերթությունների շուրջ:
- Ներդրեք խորհրդակցություններն առօրյա կյանք:

Փուլ 3: Զարգացման ծրագրի մշակում

- Ներդրեք առաջնահերթությունները զարգացման ծրագրի մեջ:

Փուլ 4: Գործողությունների ձեռնարկում

- Առաջնահերթությունները գործողության մեջ դրեք:
- Պահպանեք զարգացման ընթացքը:

Փուլ 5: Զարգացման արդյունքների վերանայում

- Վերանայեք և տոնեք առաջընթացը:
- Անդրադարձեք *Ինդեքսի* շուրջ տարած աշխատանքին:
- Դիտարկեք հաջորդ քայլերը:

Գտե՛ք օժանդակություն

Հատկապես օգտակար է, երբ դպրոցներում *Ինդեքսի* օգտագործման կամ ներդրման փորձ ունեցող մասնագետները կարող են հաղորդակցվել Ձեզ հետ իրենց խորհրդով: Նման աջակիցը կարող է օգնել մշակելու գործերի ընթացքն առաջ տանելու և դպրոցի աշխատակազմին ու այլ անձանց գործընթացում ներգրավելու լավագույն միջոցը: Նման մասնագետը կարող է փոխանցել իր ձեռքի տակ ունեցած նյութերը և փարատել լրացուցիչ ծանրաբեռնվածության մասին Ձեր մտավախությունները: Դա թույլ կտա դպրոցում ապահովել արժեքահեն զարգացման գործընթացի համատեղ իրականացում:

Ոմանց համար նաև օգտակար փորձ է պլանավորման իրենց թիմում «քննադատ ընկերոջ» ներգրավումը: Դա նույնպես կարող է լինել դպրոցից դուրս որևէ մեկը, ով լավ է ճանաչում դպրոցը, կարող է օժանդակություն ցուցաբերել և շահադրդել բարդ առաջադրանքներով: «Քննադատ ընկերոջ» դերը կարող է կատարել մեկ այլ դպրոցի ուսուցիչ, կրթության ոլորտի խորհրդատուներ, ղեկավարներ, մանկավարժ-հոգեբաններ և գիտությամբ զբաղվող անձինք: Տարրական ու միջնակարգ դպրոցները, օգտագործելով *Ինդեքսի* ընձեռած հնարավորությունը, ավելի սերտ կապեր են հաստատել միմյանց միջև՝ մի դպրոցի կրթական զարգացման համակարգումը փոխադարձաբար վստահելով մյուս դպրոցին՝ որպես քննադատ ընկերոջ:

Սակայն դպրոցի շրջանակից դուրս գտնվող յուրաքանչյուր ոք պետք է հանձնառություն ստանձնի դիտարկելու զարգացման գործընթացը մի զգալի ժամանակահատվածում: Այս առումով ավելի նպատակահարմար կլինի, որ պլանավորման թիմի անդամները ստանձնեն «քննադատ ընկերոջ» դեր, այլ ոչ թե այդ դերը հանձնեն մեկին, ով չի կարող հետաքրքրված լինել երկարատև ժամանակահատվածում դպրոցում *Ինդեքսի* նախագծի մշակման կամ ներդրման աշխատանքներով: Թիմի բոլոր անդամները կարող են նրբանկատորեն հրահրել իրենց գործընկերներին՝ ներկայացնելու սեփական տեսակետները հիմնավորող ապացույցներ ու եզրակացություններ դպրոցի մասին:

Ինդեքս Զեկույց 1

Ունթերբուրնի ավագ դպրոցում Ինդեքսի շուրջ աշխատանքները մեկնարկելու հնարավորության օգտագործում

Իմ առաջին հանդիպումը բավականին հետաքրքրաշարժ էր: Ես պատեհապաշտական մոտեցում էի ցուցաբերել հրավիրվածներին ընտրելու հարցում: Ներկաների շարքում էր իմ անմիջական ղեկավարը, որը ներկայացնում էր բարձրաստիճան ղեկավարությանը: Հրավիրվածների շարքում ընդգրկված էր խնամքի կարիք ունեցող մի երեխա: «Շնորհալի ու տաղանդավոր» երեխաների ցուցակում ընդգրկված էր մի ասիացի աղջիկ և սպորտային հակումներով հանդուգն տղաների ծնող, աշխատանքի տեղավորման ծառայության ղեկավար և երեխաների պաշտպանության հարցերով ղեկավար, որը մեր դպրոցի վարչարարական աշխատակազմի անդամ էր: Ես հրավիրել էի այդ պահին ազատ ժամանակ ունեցող ուսուցիչների: Հանդիպման ոչ պաշտոնական կողմն ապահովելու համար ես նախատեսել էի հիմնական հյուրասիրություն. զարմանալի է, թե ինչ արդյունքների կարելի է հասնել մեկ փաթեթ օղակաձև թխվածքաբլիթների և մեկ տոպրակ խաղողի շնորհիվ: Պարզ ներածությունից հետո ես առաջարկեցի սառույցը կոտրող մի վարժություն, որն օգտագործվել է մեր տարածքում նախագծի մեկնարկի ժամանակ, և նպատակ ուներ բոլորին ներգրավելու զրույցի մեջ: Վարժությունը հետևյալն է՝ երեք հոգուց բաղկացած խմբերում մասնակիցները միմյանց պատմում են երկու ճիշտ և մեկ սուտ իրողություն իրենց մասին: Արդյունքում, մասնակիցները հաղորդակցվեցին ներառման շուրջ իրենց գաղափարներով և եկան այն համընդհանուր եզրակացության, որ «ներառել» նշանակում է «ներգրավել բոլորին»:

Խոչընդոտները քննարկելիս երեխաները նշեցին, որ արդարացի չէ, որ 6-րդ դասարանի աշակերտները կարող են խուսափել այնպիսի վարքի պատժից, որ անհանդուրժելի է դպրոցից դուրս, և ծնողներն ու ուսուցիչները համաձայնեցին: Հատկանշական է նաև այն, որ ուսուցիչները, ծնողները և աշակերտները՝ բոլորը, միևնույն մտահոգություններն ունեին հաղորդակցման խնդրի շուրջ: Երեխային դասարանից դուրս հանելու դեպքում ծնողներին այդ մասին տեղեկացնող նամակը տուն է հասնում մեկ շաբաթ անց: Դպրոցը հիմնականում անցում է կատարել թղթային հաղորդագրության համակարգից էլեկտրոնայինի, հետևաբար ծնողները պետք է ինտերնետ հասանելիություն ունենան, սակայն նրանցից շատերը նույնիսկ համակարգիչ չունեն տանը: Չնայած դպրոցում տեղադրված են համապատասխան էկրաններ, սակայն ծնողներից շատերը չունեն դրանցից օգտվելու հմտություններ: Նույնիսկ ծնողական ժողովի ժամանակ ծնողներն իրենց երեխաների առաջադիմության ու վարքի վերաբերյալ որևէ տեղեկություն չեն ստանում. նրանցից պահանջվում է տեղեկանալ տանը ինտերնետի միջոցով:

Ծխելու հարցը ևս քննարկվեց: Ճաշարանի աշխատակիցներից ոմանք դուրս են գալիս ծխելու նույն վայրում, որտեղ սովորաբար ծխում են 6-րդ դասարանցիները:

Բացասական երևույթներին զուգահեռ՝ քննարկվեցին նաև դրական որոշ կողմեր. հատուկ կրթական կարիքների առումով բոլորը համաձայնեցին, որ գործում է լավ հաղորդակցություն, և որ աշակերտական խորհուրդներն ու դպրոցի խորհուրդը առաջընթաց են գրանցել այդ ուղղությամբ:

Դպրոցն ունի բազմաթիվ լավ ռեսուրսներ, սակայն դրանցից օգտվելը դժվարացել է, քանի որ ծանրաբեռնված է մեծ ժողովրդականություն վայելելու պատճառով: Դպրոցն այժմ ընդլայնվում է:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց յուրաքանչյուր կիսամյակ ունենալ 2-ական հանդիպում՝ հետագա գործողությունների առաջընթացն ապահովելու նպատակով: Բոլորին պարզ էր, որ այդ հանդիպումն ընդամենը սկիզբն էր, և որ *Ինդեքսի* շուրջ աշխատանքը պետք է ներառեր ավելի խորքային փոփոխություններ՝ համապատասխան նյութերով առավել ակտիվ աշխատելու ընթացքում: *Ինդեքսը* դպրոցի ինքնագնահատման զեկույցների համար պատասխանատու մասնագետին ներկայացնելուց հետո վերջինս հայտնեց այն կարծիքը, թե դա իսկապես ինքնագնահատման լավ գործիք է: Այն մեզ հնարավորություն տվեց հրաժարվելու դպրոցի զարգացման ծրագրի մշակման՝ վերևից ներքև մոտեցումից: *Ինդեքսը* նախատեսում է հակառակ մոտեցում: Մենք դա չէինք նախատեսի առանց *Ինդեքսի* կիրառման: Կարող էինք դա անել, և դա պետք է արվեր, սակայն *Ինդեքսը* մեզ թույլ տվեց դա անել այլ եղանակով, և դա ինձ դուր է գալիս:

Ներառման աշխատանքների համակարգող, Ունթերբուրնի ավագ դպրոց

Աշխատանքում առաջնորդվե՛ք ներառական մոտեցումներով

Միմյանց համար քննադատ ընկերներ դառնալը, քննարկումը երկխոսության դաշտ տեղափոխելը ներառման գործընթաց են: Պլանավորման թիմը պետք է հանդիսանա դպրոցում ներառական գործողությունների մոդել՝ համատեղ աշխատանքով, նաև ապահովելով, որ բոլորի ձայնը լսելի լինի՝ անկախ սեռից, ծագումից կամ կարգավիճակից, բացառելով որևէ մեկի կողմից փոխգործակցության գերիշխանության դրսևորում: Թիմի անդամները պետք է զգան, որ կարող են վստահել միմյանց, և որ հնարավոր է արտահայտվել ազատ ու վստահ: Թիմի յուրաքանչյուր անդամ պետք է ներկայացնի իր կարծիքը՝ մյուսներին հրավիրելով երկխոսության: Կարծիքների միջև տարբերությունները պետք է ողջունելի լինեն՝ որպես թիմի մտածողության խթանման արդյունավետ ռեսուրս:

Վարե՛ք գրանցամատյան

Գրանցամատյանը անգնահատելի գործիք է, երբ անհրաժեշտ է անդրադառնալ նախորդ ժամանակահատվածներում գրանցված առաջընթացին՝ երեք ամսվա, վեց ամսվա կամ մեկ տարվա կտրվածքով: Աշխատանքի ընթացքում կարելի է փաստեր հավաքել՝ հետագայում մյուսներին, այդ թվում՝ տեսուչներին առաջընթացը ներկայացնելու համար: Այն կարող է պարունակել գրառումներ հանդիպումների, միջամտությունների, մտորումների, հարցերի վերաբերյալ, ինչպես նաև լուսանկարներ և կարճ տեսագրություններ: Աշխատանքի ընթացքում ընդհանուր գրանցամատյանը կարող են վարել մի քանի մասնագետ: Կարևոր է ներկայացնել որոշակի փաստեր՝ նշելով այն ցուցիչներն ու հարցերը, որոնք օգտագործվել են զարգացումը խթանելու նպատակով: Համապատասխան մասնագետները կարող են խթանել դպրոցում *Ինդեքսի* շուրջ աշխատանքը՝ որևէ կրթական աստիճան նախատեսող կամ այլ դասընթացների շրջանակներում թեզեր նախապատրաստելիս և իրենց գործընկերների հետ հանձնարարություններով կիսվելիս: Ցանկացած միջամտության վերաբերյալ գրանցամատյանը վարելիս օգտակար է անդրադառնալ հետևյալ հարցերին:

Գծապատկեր 26	Ի՞նչ փոփոխություններ են կատարվել դպրոցում *Ինդեքսի* կիրառման արդյունքում

- Ո՞րն է գործունեության կամ խնդրի ոլորտը:
- Ովքե՞ր են ներգրավված կողմերը:
- Ինչպիսի՞ն էր իրավիճակը նախքան *Ինդեքսի* կիրառումը:
- Ի՞նչ միջոցառումներ/գործողություններ են ձեռնարկվել:
- Ի՞նչ փոփոխություններ են գրանցվել *Ինդեքսի* կիրառման արդյունքում:
- Ի՞նչն է վկայում փոփոխության մասին:
- Ի՞նչ խոչընդոտներ են ծագել:
- Ինչպե՞ս են վերջիններս հաղթահարվել:

Օգտվե՛ք ցուցիչներից եւ հարցերից

Առաջին հանդիպման ժամանակ նպատակահարմար է ծանոթանալ *Ինդեքսի* հիմնական կողմերին՝ ներկայացնելով Գծապատկեր 26-ում ընդգրկված ցուցիչներն ու հարցերը: Այստեղ *Ինդեքսի* վերաբերյալ ներկայացված 3-րդ Ձեկույցը պատմում է՝ ինչպե՛ս է տնօրենի օգնականը ներկայացրել *Ինդեքսը* մի մեծ միջնակարգ դպրոցում թերահավատորեն տրամադրված ուսուցիչներին, իսկ *Ինդեքսի* վերաբերյալ 4-րդ Ձեկույցը պատմում է, թե ինչպես են ուսուցիչների՝ ներառման վերաբերյալ կարծիքներն արագորեն փոխվել ցուցիչների հետ աշխատանքի շրջանակներում *Ինդեքսի* ցուցիչների հարցաթերթիկի պատասխանները քննարկելիս:

Ինդեքս Զեկույց 2 **Բախում իրականության հետ**

Սբ Սիմոնի դպրոցում տնօրենի օգնականը աշխատակիցներին ներկայացրեց *Ինդեքսը*, որին հետևեց տեղական ղեկավարության վերապատրաստման դասընթացի նախնական փուլը: Ստեղծվեց համակարգող խումբ՝ ընդգրկելով տնօրենին, տնօրենի օգնականին, մեկ ուսուցչի, ֆիզիոթերապիայի մասնագետին և երեխաներին այլ աջակցություն ցուցաբերող մասնագետների, լսողության խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետին, ընդմիջման ընթացքում երեխաներին հետևող մասնագետին, որը նաև ծնող էր, և մի խնամակալի, որը նաև ղեկավար էր: Տեղական կրթական մարմնի ներկայացուցիչ գործընկերներից մեկը հանդես եկավ որպես առանցքային ընկեր: Ներկաները ծավալեցին մի կարճ, սակայն բացահայտ քննարկում ներառման գաղափարի շուրջ, որը նախկինում դիտարկվում էր որպես «հատուկ կրթական կարիքներով» դասակարգված երեխաների ներգրավում հիմնական դպրոցներ: Տնօրենի օգնականը *Ինդեքսի* ներածական հանդիպման վերաբերյալ ներկայացրել է հետևյալ զեկույցը.

«Առաջին հանդիպման ժամանակ ես բացատրեցի ողջ գործընթացը: Մենք կատարեցինք կարճ վարժություն [ցուցիչների վերաբերյալ]..., այնուհետև անդրադարձանք Ա1.1 ցուցիչին առնչվող հարցերին: Բոլորի մասնակցությունը ողջունելի էր, և ծավալվեց քննարկում: Քննարկման առաջին իսկ րոպեից բոլորը պնդում էին, որ, իրենք գործում են ներառական մոտեցումների հիման վրա և երբեք չեն հրաժարվի դրանցից: Մենք թվարկեցինք մի շարք գործողություններ: Սակայն, երբ սկսեցինք ուսումնասիրել *Ինդեքսի* հարցերը, նկատեցինք մի խումբ բացթողումներ...»:

Ինդեքս Զեկույց 3 **Ներառման վերաբերյալ կարծիքների փոխակերպում**

Գարսայդի հանրակրթական դպրոցի տնօրենի տեղակալը կազմակերպված հանդիպմանը ողջ աշխատակազմին հարցաթերթիկներ բաժանելուց հետո, դիմեց դպրոցի աշխատակազմին: Նա խոսեց այն մասին, որ իր կարծիքով, *Ինդեքսի* շուրջ աշխատանքը ձեռքբերումների ամրապնդման ու պահպանման միջոց է:

«Ես անմիջապես նշեցի, որ ներառումը չի ենթադրում, որ բոլորը պետք է միշտ երջանիկ լինեն և չպետք է կանոններին ենթարկվեն: Ես ներկայացրի *[Ինդեքսը]* որպես հնարավորություն, որը թույլ է տալիս դպրոցին քննադատական հայացքով դիտարկել, թե ինչ առաջընթաց ենք գրանցել որպես համայնք՝ ներառական մոտեցումները խթանելու ուղղությամբ... Շնորհանդեսից հետո դպրոցի տնօրենը որոշակի հավելումներ անելով հեռացավ, իսկ գործընթացը շարունակվեց իր հունով: Կարո՞ղ եք պատկերացնել այդ բոլոր 140 հոգուն դահլիճում իրենց պլանները քննարկելիս. մի իրավիճակ, երբ ներառումը չափազանց մարգինալացված գաղափարից վերածեց հիմնական մոտեցման: Որոշ մարդիկ, որ դեռ ժամը վեցից քառորդ պակաս էին սկսել բանավիճել, ավարտեցին միայն ժամը 15.30-ին, քանի որ գործընթացը մղում էր ինտելեկտուալ արձագանքի՝ բարձրաձայնելով. «Հե՜յ, սա, ըստ էության, մեր խնդիրն է, սա վերաբերում է ինձ, ինչպես նաև անկյունում նստած այն աղջկան [որը դասակարգված է որպես հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխա]: Սա, ըստ էության, վերաբերում է մեզ բոլորիս»:

Նորֆոլքում *Ինդեքսի* շուրջ աշխատանքի ընթացքում ավագ խորհրդատու Ջուդիթ Քարթերը մշակել է *Ինդեքսի* ներկայացման հինգրոպեանոց ներածություն: Այն թույլ է տալիս շրջանցել այն խնդիրը, որ, շատերի կարծիքով, *Ինդեքսը* չափից շատ հարցերի է անդրադառնում, և անմիջապես ներկայացնում է *Ինդեքսի* հիմնական նպատակը, այն է՝ օգնել ուսուցիչներին, ղեկավարներին, երեխաներին և նրանց ընտանիքներին գործողություններ ձեռնարկելու՝ իրենց վերաբերող ոլորտներում: Հասկանալով, որ այն կարող է օգնել անմիջականորեն անդրադառնալու իրենց մտահոգող հարցերին, մարդիկ ավելի մեծ ոգևորությամբ են ինտեգրվում երկարաժամկետ պլանավորման աշխատանքներում: *Ինդեքսի* շուրջ աշխատանքը համակարգող թիմի համար շատ կարևոր է այս առաջադրանքը վստահորեն կատարելը: Գծապատկեր 27-ը կարող է օգնել նման հակիրճ ամփոփում նախապատրաստելիս:

Գծապատկեր 27 ***Ինդեքսի* կառուցվածքը**



Արժեքների կենսագործում

Գործողություն թիվ 1. *Ինդեքսի* հինգրոպեանոց ներածություն:

Ուշադրությո՛ւն դարձրեք 13-րդ էջում ներկայացված Ինդեքսի արժեքների համակարգին՝ որպես Ինդեքսի հիմքի: Ինդեքսի շուրջ աշխատանքի խնդիրն է արժեքների նման համակարգը գործողության մեջ դնել: Անդրադարձեք նաև 14-15-րդ էջերում ներկայացված ցուցիչներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով, թե ինչպես են դրանք բաշխված ըստ հարթությունների ու բաժինների: Ընտրեք այդ ցուցիչներից մեկը, որն, ըստ Ձեզ, վերաբերում է որևէ սուր խնդրի կամ զարգացման որոշակի նպատակի, այնուհետ Ձեր հետազոտությունը խորացնելու համար անդրադարձեք դրանք ներկայացնող հարցերի էջ(եր)ին:

Գործողություն թիվ 2. Նախընտրելի հարցեր:

Խմբի անդամներին առաջարկվում է ուշադրություն դարձնել Ինդեքսի 4-րդ բաժնում ներկայացված ցուցիչներին ու հարցերին նախքան առաջին հանդիպումը և ընտրել մի հարց քննարկման համար, որը, ըստ իրենց, կարող է բարձրաձայնել դպրոցի համար կարևոր որևէ խնդիր: Յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացնել իր նախընտրած հարցը, որտեղ է այն առկա, և թե ինչու է այն կարևոր: Այլ կերպ, խմբի առաջնորդը կարող է ներկայանալ Ինդեքսի տարբեր բաժիններից ընտրված երեք կամ ավել նախընտրելի հարցերով, որոնց շուրջ, խմբի կարծիքով, կարող է քննարկում ծավալվել և թույլ տալ մասնակիցներին ավելի լավ ծանոթանալ նյութերին: Մասնակիցներից ոմանք կարծում են, թե ցանկացած հարցի ընտրության դեպքում դրանց քննարկումը, ընդհանուր առմամբ, հանգեցնում է դպրոցի առջև ծառացած հիմնական մարտահրավերների դիտարկմանը:

3-րդ գործողության շրջանակներում կարելի է քննարկել հարցաթերթիկների օգտագործման օգտակարությունը: Հարցաթերթիկների մանրակրկիտ վերլուծությունը, գրաֆիկներ, տրամագրեր (հիստոգրամ) և աղյուսակներ կազմելը կարող են ժամանակատար լինել և հետաձգել դպրոցի զարգացմանն ուղղված աշխատանքների մեկնարկը: Կարևոր է հիշել, որ դպրոցի աշխատակազմի, ծնողների կամ երեխաների հետ խորհրդակցությունների ժամանակ հարցաթերթիկներն օգտագործելիս առաջնահերթությունների շուրջ ամփոփվում են հարցման մասնակիցների ակնկալիքներն ու կարծիքները դպրոցի զարգացման կարիքների վերաբերյալ, և հենց այդ հարցերին է անհրաժեշտ ուշադրություն դարձնել՝ հարցաշարն ամբողջությամբ հաշվի առնելու փոխարեն: Բոլոր հարցերն այնպես են ձևակերպված, որ դպրոցի գործունեության համատեքստում դրանք դիտարկվում են որպես դրական պատասխան: Մարդիկ երբեմն ներկայացնում են իրենց դպրոցն ավելի ներառական, քան իրականում կա: Խմբի անդամների միջև վստահության զարգացման արդյունքում և միմյանց նկատմամբ ավելի ազնիվ վերաբերմունքի դեպքում դպրոցի ներառականության մակարդակի վերաբերյալ կարծիքները աստիճանաբար փոխվում են: Դա սահմանափակում է *Ինդեքսի* հարցաթերթիկների օգտագործման հնարավոր ծավալները՝ առանց ներառման մակարդակի զարգացման առաջընթացը գնահատելու հետագա հետազոտությունների:

Գործողություն թիվ 3. Ցուցիչների հարցաշարի օգտագործումը՝ փոփոխությունների առաջնահերթությունների սահմանման նպատակով:

Սույն գործողության նպատակն է ցուցիչների օգտագործմամբ բացահայտել այն խնդիրները, որոնք հետագա ուսումնասիրության կարիք ունեն: 14-15-րդ էջերում ներկայացված ցուցիչների ամբողջական ցանկը կարելի է գտնել նաև 274-276-րդ էջերում ներկայացված հարցաշարի ձևում: Գործողության մասնակիցները կարող են առանձին-առանձին պատասխանել հարցաթերթիկներին, ապա համեմատել իրենց պատասխանները խմբի այլ անդամների պատասխաններին և քննարկել տարբերությունները: Յուրաքանչյուր ցուցիչ առաջարկում է պատասխանի չորս տարբերակ՝ «միանշանակ այո», «և՛ այո, և՛ ոչ», «ոչ» և «անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություն»: Միևնույն ժամանակ, կարելի է ցուցիչները գրել քարտերի վրա և տեսակավորել ըստ նույն խորագրերի: «Անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություն» պատասխանը ենթադրում է, որ ցուցիչի իմաստը պարզ չէ, կամ առկա տեղեկությունը բավարար չէ որոշում կայացնելու համար: Հարցաթերթիկի վերջում կարելի է նշել երեք բան, որ մասնակիցներին դուր է գալիս, և դպրոցի զարգացման երեք առաջնահերթություն: Խումբը ներկայացնում է փոփոխության առաջնահերթությունների վերաբերյալ իր կարծիքները և սկսում դրանց քննարկումը:

Գործողություն թիվ 4. Պատասխանելով Գ1 բաժնի հարցերին՝ բոլորի համար նախատեսված ուսումնական ծրագրերի մշակում:

Խումբն անձամբ կարող է որոշել, թե ինչպես պատասխանել Գ1 բաժնի ցուցիչների հարցերին: Մոտեցումները կարող են տարբերվել ըստ տարրական և միջնակարգ դպրոցների, չնայած երկու դեպքում էլ աշխատանքները սահմանափակվում են ուսումնական ծրագրի շրջանակներով: Նրանք կարող են դիտարկել 2-րդ բաժնի համապատասխան էջերում զետեղված այլընտրանքային ուսումնական ծրագրի փաստարկները:

- *Որքանո՞վ են Գ1 բաժնում զետեղված ցուցիչներն ու հարցերն արդարացված՝ որպես ուսումնական ծրագրերի մշակման գործիք:*
- *Որքանո՞վ են Գ1 բաժնի ասպեկտներն արդյունավետ՝ ավանդական ուսումնական ծրագրերի բարելավման տեսանկյունից:*
- *Ինչպե՞ս կարող է խումբն օգտագործել Ինդեքսը՝ ուսումնական ծրագրերի բովանդակության շուրջ երկխոսությանն այլ անձանց ներգրավելու նպատակով:*

Գործողություն թիվ 5. Ապացույցների քննարկում:

Խումբը կարող է ընտրել մեկ ցուցիչ, որի համաձայն՝ դպրոցը դրական առաջընթաց է գրանցել, և մեկ այլ ցուցիչ, ըստ որի՝ դպրոցը զգալի զարգացման տեղ ունի: Յուրաքանչյուր դեպքում խումբը պետք է ներկայացնի իր տեսակետը հիմնավորող ապացույցներ: Նրանք կարող են օգտվել յուրաքանչյուր ցուցիչի տակ առաջարկվող հարցերից՝ ապացույցների համապատասխան ոլորտները գտնելու համար:

Գործողություն թիվ 6. Մնացած ցուցիչների եւ հարցերի դիտարկում:

Սույն գործունեությունը կարելի է իրականացնել հանդիպումների միջև ընկած ժամանակահատվածում: Համակարգող խմբի անդամները պետք է ծանոթանան Ինդեքսի ցուցիչներին և հարցերին, եթե դա չեն արել առաջին գործողության ընթացքում: Նրանք կտեսնեն, թե ինչպես են երբեմն որոշ հարցեր առաջ մղում դպրոցի՝ հեշտությամբ փոփոխվող կողմերը, մինչդեռ այլ հարցերի հիման վրա կարող են բացահայտվել խորքային և լայնածավալ փոփոխությունների կարիքներ: Նրանք կարող են կիսվել իրենց մտքերով հաջորդ հանդիպման ժամանակ:

Ինդեքս Չեկույց 4	**Հարցերից դեպի պատասխաններ. Գրեգորի Ուայթ կրտսեր դպրոցի փորձը**

Գրեգորի Ուայթ կրտսեր դպրոցում *Ինդեքսի* շուրջ աշխատանքը վարում են ավագ ուսուցիչներից մեկը և ուսուցչի օգնականը: Նրանք աշխատակազմի հետ աշխատանքը սկսում են՝ դիտարկելով Գ2.9 ցուցիչը՝ «Աշխատակազմն իրականացնում է պլանավորման, ուսուցման ու վերանայման համատեղ աշխատանքներ», և մասնավորապես տվյալ ցուցիչի երկու հարցերը՝ դ) «Արդյոք գործողությունները մշակելիս ուսուցիչները նախատեսո՞ւմ են միմյանց գիտելիքների ու հմտությունների օգտագործման հնարավորությունը», և ե) «Արդյոք ուսուցիչները կիրառո՞ւմ են համագործակցային դասավանդումը՝ որպես միմյանցից սովորելու հնարավորություն»: Այս հարցերը նպաստում են, որ ՏՀՏ ոլորտում առաջատար հմտություններ ունեցող ուսուցիչը իր գիտելիքները փոխանցի իր գործընկերոջը՝ ֆիզիկական կրթության մասնագետին՝ միմյանց դասերը վարելու միջոցով: Մյուս գործընկերները նույնպես շուտով սկսում են աշխատել նման կերպ՝ «միմյանց հետ կիսվելով իրենց ուժեղ կողմերով ու հմտություններով»:

Հատկապես գրավիչ էին *Ինդեքսի* հարցերը.

> «Ի տարբերություն նախկինում օգտագործած այլ գործիքների՝ այս ռեսուրսի առավել օգտակար կողմերից մեկը նրա հարցերն են: Այն փաստը, որ դրանք ձևակերպված են որպես հարցեր, ստիպում է պատշաճորեն դիտարկել դրանք ներկայացնող խնդիրները»:

Ինդեքսի հարցերը նաև օգնում են «ղեկավարների առանցքային խմբին՝ առավել վառ պատկերացում կազմելու դժվարությունների վերաբերյալ», ինչպես նաև՝ ուսուցիչներին՝ իրենց բարձրաձայնած խնդիրները հիմնավորելու փաստարկներով:

Նրանք սկսում են օգտագործել *Ինդեքսը*՝ դպրոցի շրջակա միջավայրի խնդրին անդրադառնալու որոշման հիմնավորմամբ: Դպրոցի աշխատակազմն արդեն մեծապես օգտագործել էր իր ընդարձակ տարածքը՝ խաղահրապարակը կահավորելով մարզասարքերով, կանաչապատ տարածքում ավելացնելով պտղատու այգի, վայրի բույսերով տարածք, ամառային խոհանոց, մեծ նստարան և բեմահարթակ: Ա1.7 ցուցիչը՝ «Դպրոցը ժողովրդավարական քաղաքացիության մոդել է», խթան է դպրոցի աշխատակազմի համար՝ շրջակա միջավայրին առնչվող գործողությունները փոխկապակցելու քաղաքացիության և ծնողների մասնակցության հետ: Աշխատակազմը քննարկում է հետևյալ հարցը՝ Թ) «Արդյոք երեխաներն զբաղվո՞ւմ են այնպիսի աշխատանքով, որ նպաստում է դպրոցի զարգացմանը»:

> «Նույնիսկ շրջակա միջավայրին առնչվող ակնհայտ կապերի բացակայության դեպքում, երբ բոլորը խնամում են քո միջավայրը, դա կապված է քաղաքացիության գաղափարի հետ: Այնուհետև ուսումնասիրեցինք աշխատանքների ցանկը և անմիջապես նկատեցինք պարարտացման աշխատանքներ, սննդի պատրաստում, ծառատունկ և բազմաթիվ այլ աշխատանքներ... Տվյալ ցուցիչի մեկ այլ հարցի առնչությամբ՝ Հարց բ) «Արդյոք դպրոցի աշխատակիցները, երեխաները և նրանց ընտանիքների անդամները նպատակաուղղված նպաստո՞ւմ են մասնակցության ու համագործակցության մշակույթի ձևավորմանը»: Կարծում եմ, թե մենք ավելի շատ առաջընթաց գրանցել ենք ծնողների, հատկապես մայրերի ներգրավման հարցում, հետևաբար միգուցե կարելի է փորձել հայրերին ներգրավել այգու աշխատանքներում, բացօթյա գործնական վարժություններում և այլն»:

Ինդեքսի ամենամեծ ներդրումը իրենց զարգացման նկատմամբ վերահսկողություն ստանձնելու հնարավորությունն էր:

> «Վերջին մի քանի տարիների ընթացքում մենք ստիպված ենք գիտակցված ընտրություն կատարել. չանել այն, ինչ մեզ ասում են. փոխարենը՝ մտածել, թե ի՛նչ է անհրաժեշտ մեր երեխաներին և ի՛նչ ձեռքբերումներ ենք ցանկանում ունենալ: Հետաքրքիրն այն է, որ երբ սկսեցինք զբաղվել ինքնազարգացմամբ, ծանոթացանք *Ինդեքսին* և դիտարկեցինք մեր դպրոցների խնդիրները, «բավարար» կարգավիճակը դադարեց մեզ գոհացնելուց, և մենք դարձանք «լավը»: Մենք արագ տեմպերով բացառիկ առաջընթաց ենք գրանցում: *Ինդեքսը*, իսկապես, օգնեց մեզ անելու դա՝ մտածելով ինքներս մեր մասին»:

Մասնակցե՛ք արժեքների մասին երկխոսություններին

Ցուցիչների ու հարցերի ուսումնասիրությունը կարող է հանգեցնել արժեքների շուրջ քննարկման, նույնիսկ եթե դա ի սկզբանե նախատեսված չէ խմբային քննարկումներում: Խումբը կարող է շարունակել այդ քննարկումը Ա2.1 ցուցիչի օգնությամբ՝ «Դպրոցը ձևավորում ու զարգացնում է համընդհանուր ներառական արժեքներ»: Քննարկման մասնակիցները կարող են ծանոթանալ 26-35-րդ էջերում ներկայացված արժեքների համակարգին, և թե ինչպես են վերջիններս ձևափոխվում դպրոցի համար նախատեսված հայտարարությունների՝ 36-րդ էջում ներկայացված Գծապատկեր 7-ում:

Գործողություն թիվ 7. Արժեքները եւ գործողությունները:

Խումբը կարող է բաժանվել ենթախմբերի, որոնցից յուրաքանչյուրը պետք է դիտարկի որոշակի արժեք: Նրանք գրում են արժեքի խորագիրը մի մեծ թղթի կենտրոնում, ուսումնասիրում դրա նշանակությունը և քննարկում, թե տվյալ արժեքը ի՞նչ գործողություններ է խրախուսում իրականացնել կամ օգնում բացառելու դպրոցում: Արժեքի հասկացության շուրջ գրում են այն փոփոխությունը, որ կարելի է ապահովել դասասենյակներում, ուսուցչանոցներում, դպրոցի շրջակայքում և հարաբերություններում տվյալ արժեքը դպրոցի մշակույթում խորապես ներդնելիս: Այդ քննարկումների արդյունքները կարելի է տարածել խմբի ներսում: Խմբի անդամները կարող են հաշվի առնել հետևյալ հարցերը.

- *Ի՞նչ փոփոխություններ կարող են տեղի ունենալ դպրոցի գործողություններում՝ ներառական արժեքների համակարգի շուրջ ընդհանուր համաձայնության դեպքում:*
- *Որքանո՞վ կարող է աշխատակիցների ու երեխաների միջև արժեքների շուրջ երկխոսությունը նպաստել դպրոցի գործողությունների փոփոխությունների խթանմանը:*

Գործողություն թիվ 8. Ի՞նչ է ներառումը:

Համակարգող խումբը կարող է ներառման և դպրոցի այլ հարցերի շուրջ իրենց տեսակետներն արտահայտել Ա.2.4 ցուցիչով՝ «Ներառումը դիտարկվում է որպես բոլորի մասնակցության խթանում»: Այնուհետև կարելի է ծանոթանալ էջ 19-ում ներկայացված Գծապատկեր 4-ին, որտեղ տեղ գտած գաղափարներն ամփոփում են Ինդեքսում սահմանված ներառման մոտեցման ասպեկտները. յուրաքանչյուր տարր կարող է քննարկվել հակիրճ, համապատասխան հերթականությամբ: Առաջինը վերաբերում է ներառման այն գաղափարին, որ արժեքները պետք է փոխակերպվեն գործողության, ինչպես քննարկվում է 26-35-րդ էջերում:

Ներառման վերաբերյալ քննարկումներում հաճախ բացահայտվում են խիստ տեսակետներ: Քիչ հավանական է, որ բոլորը համաձայնեն Ինդեքսում ներկայացված բոլոր ասպեկտներին: Սակայն մենք հուսով ենք, որ խելամիտ է Ինդեքսը դիտարկել որպես բոլոր երեխաների և մեծահասակների խնդիրներին անդրադարձող գործիք, որն առնչվում է հիմնարար արժեքներին և նախատեսում է փոփոխություններ՝ մշակույթներում, քաղաքականության մեջ և դպրոցի գործելակերպում: Նման ընդգրկուն համաձայնության դեպքում խորքային տարաձայնությունները կարելի է պարզապես ընդունել կամ լուծել ավելի երկար ժամանակահատվածում:

Մշակե՛ք ընդհանուր բառապաշար

Նպատակահարմար է, որ համակարգող խումբը ներկայացնի *Ինդեքսի* հասկացությունների շուրջ իր կարծիքը նախքան այլ անձանց ներկայացնելը: Թիվ 8, 9 և 10 գործողությունները կարող են լավագույնս արդյունավետ լինել այդ հասկացություններին առնչվող ցուցիչներին և հարցերին ծանոթանալուց հետո: *Ինդեքսից* օգտվող մասնագետներն աշխատանքի ընթացքում սովորաբար վերանայում և զարգացնում են իրենց մոտեցումը ներառման, խոչընդոտների, ռեսուրսների և բազմազանության ընկալման գաղափարների վերաբերյալ:

Վերանայե՛ք դպրոցում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումը

Ինդեքսը թույլ է տալիս վերանայել դպրոցի զարգացման պլանավորման մեթոդները: Դպրոցները տարբեր մոտեցումներ են կիրառում իրենց զարգացման ծրագրերը մշակելիս: Որոշ դեպքերում այդ գործընթացը ներառում է միասին համեմատաբար համակարգված աշխատող մասնագետների լայն շրջանակ: Այլ դպրոցներում գրավոր փաստաթուղթը կարող է պատրաստվել քիչ թվով մասնագետների կամ հիմնականում մեկ անձի կողմից: *Ինդեքսը* կարող է օգտակար լինել դպրոցի զարգացման ծրագրի մշակման գործընթացում ներգրավված բոլոր մասնագետների համար: Հուսով ենք, որ նման ներգրավվածությունը կհամոզի զարգացման ծրագրի մշակման պատասխանատու թիմին նկատել այն օգուտը, որ կարող է ապահովել տվյալ գործընթացում դպրոցի աշխատակազմի, երեխաների ու երիտասարդների և նրանց ընտանիքների ավելի լայն ընդգրկվածությունը՝ հաշվի առնելով, որ նրանց գիտելիքներն ու գաղափարները կարող են որոշակի փոփոխություն ապահովել: Բազմաթիվ դպրոցներ ներգրավված են զարգացման մի շարք գործողություններում կամ ծրագրերում, որոնք, սակայն, ներառված չեն դպրոցի զարգացման ծրագրում: Դրանք կարող են լինել դպրոցի ներքին, տեղական, ազգային նախաձեռնությունների կամ ստուգայցերի պատասխան գործողություններ: *Ինդեքսի* շուրջ աշխատող խումբը կարող է թվարկել այդ գործողությունները և դիտարկել, թե ինչպես կարելի է դրանք ներառել զարգացման պաշտոնական ծրագրում և գնահատել, թե որքանով են դրանք առնչվում ներառական արժեքներին:

Գործողություն թիվ 9. Խոչընդոտներ եւ ռեսուրսներ:

Համակարգող խումբը կարող է դիտարկել ուսուցման և մասնակցության խոչընդոտները և ուսուցմանն ու մասնակցությանը նպաստող ռեսուրսները, Ինդեքսի 2-րդ բաժնի 53-56-րդ էջերին ծանոթանալուց հետո: Խմբի անդամները կարող են անդրադառնալ հետևյալ հարցերին.

- *Ուսուցման և մասնակցության ի՞նչ խոչընդոտներ են ծագում դպրոցում:*
- *Ովքե՞ր են բախվում ուսուցման և մասնակցության խոչընդոտներին:*
- *Ուսուցմանը և մասնակցությանը նպաստող ի՞նչ ռեսուրսներ գոյություն ունեն մեծահասակների ու երեխաների շրջանում և դպրոցի ներքին ու արտաքին միջավայրում:*
- *Ինչպե՞ս կարելի է հավաքագրել ուսուցմանը և մասնակցությանը նպաստող լրացուցիչ ռեսուրսներ դպրոցի ներսում:*

Մեծահասակների ու երեխաների միջավայրերում ռեսուրսների հավաքագրման գաղափարը շեշտվում է Ինդեքսի մի շարք բաժիններում: Նպատակահարմար է, որ խմբի անդամները դիտարկեն, թե ինչպես է այդ գաղափարն առնչվում ցուցիչներին ու հարցերին: Օրինակ, հիշյալ գաղափարը կրթակարգի առնչությամբ ընդգծում է, որ Գ1 բաժնում նշված բոլոր ոլորտները պետք է փոխկապակցված լինեն տեղական ու գլոբալ մակարդակներում, իսկ այն գաղափարը, որ բոլորը պետք է ներգրավված լինեն դպրոցին առնչվող աշխատանքներում, ամրագրված է Ա1.7 ցուցիչում՝ «Դպրոցը ժողովրդավարական քաղաքացիության մոդել է», և մի շարք այլ ցուցիչներում:

Գործողություն թիվ 10. Ի՞նչ է բազմազանության ընկալումը:

«Բազմազանության» լայն հասկացությունը ներկայացված է էջ 30-ում՝ որպես «այն բոլոր գործողությունները, որոնք խթանում են դպրոցի արծագանքելու այն կարողությունները, որոնք արժևորում են բոլորին հավասարապես»: Համակարգող խումբը կարող է քննարկել հետևյալ հարցերը.

- *Դպրոցի շրջանակներում իրականացվող ո՞ր գործողություններն են դիտարկվում այդ տեսանկյունից:*
- *Ինդեքսի սահմանումը ի՞նչ ազդեցություն է նախատեսում դպրոցի աշխատակազմի աշխատանքի առումով:*
- *Ինդեքսի այդ սահմանումը ի՞նչ ազդեցություն է նախատեսում այս ուղղությամբ տարվող աշխատանքի համակարգման առումով:*

Գործողություն թիվ 11. Դպրոցի զարգացման ծրագրի վերանայումը:

Համակարգող խմբի անդամները կարող են վերանայել դպրոցի զարգացման ընթացիկ ծրագիրը, քննարկել դպրոցի զարգացման ծրագրի մշակման գործընթացը՝ պատասխանելով Բ1.1 ցուցիչի հարցերին՝ «Դպրոցն ունի մասնակցային զարգացման գործընթաց»: Նրանք կարող են անդրադառնալ Գծապատկեր 28-ում ներկայացված ուղեցույցներին և վերանայել ծրագրի մշակման գործընթացը հետևյալ հարցերով.

- *Ի՞նչ փոփոխություններ է կրել դպրոցը վերջին մեկ տարվա ընթացքում և ինչու՞:*
- *Ո՞ր ծրագրի բովանդակությունը որքանո՞վ է արտացոլում արդեն իսկ գրանցված ընթացիկ փոփոխությունները:*
- *Զարգացման ի՞նչ աշխատանքներ են տեղի ունենում, որոնք ներառված չեն ծրագրում:*
- *Որքանո՞վ են ծրագրում սահմանված առաջնահերթությունները նպաստում ներառական արժեքների իրականացմանը:*
- *Ինչպե՞ս է ծրագիրը իրականացվում:*
- *Ինչպե՞ս կարելի է բարելավել ծրագրի մշակման գործընթացը, բովանդակությունը և դրա իրականացման գործընթացը:*
- *Ինչպե՞ս կարող է Ինդեքսը նպաստել ծրագրի բարելավմանը:*
- *Ինչպե՞ս կարելի է ապահովել, որ ծրագրի մշակման գործընթացը ներգրավի դպրոցին առնչվող բոլոր մեծահասակներին ու երեխաներին և ոգևորություն առաջացնի նրանց մեջ:*

Ինդեքս Զեկույց 5 | ***Ինդեքսի*** **ներառումը դպրոցի բարելավման ծրագրում**

Թըրների ավագ մանկապարտեզը դպրոցի բարելավման մոտեցումը կառուցում է *Ինդեքսի* շուրջ: Նրանք ստեղծում են նոր թիմ՝ ղեկավարների, ծնողների ու երեխաների հետ խորհրդակցությունն ընդլայնելու նպատակով, սակայն երբ երեխաներից մեկը հարցնում է, թե իրենք ինչ են անելու, երբ մեծահասակները խոսում են, նրանք վերանայում են իրենց մոտեցումը՝ հաշվի առելով նաև ներգրավված երեխաների կարծիքները: Ծնողները լրացնում են հարցաթերթիկները և միանում ֆոկուս խմբերին: Ծնողների և երեխաների կարծիքը ընդհանուր վարքագծի, ծաղրանքի և խաղահրապարակների օգտագործման վերաբերյալ հանգեցնում է էական փոփոխության: Որպես նախնական լուծում՝ խաղահրապարակը բաժանվում է տարբեր գոտիների՝ ըստ զբաղմունքի տեսակի, ուժեղացվում է մեծահասակների վերահսկողությունը: Այդ խորհրդակցությունները դառնում են տարեկան մշտական միջոցառում, որ նախատեսում է ծնողների ֆոկուս խմբեր, որոնք վարում են այլ ծնողներ: Այս մոտեցումը էականորեն նպաստում է դպրոցի ուսուցիչների ու ծնողների միջև վստահության խթանմանը:

Դպրոցն ընդգրկում է *Ինդեքսն* այն գործողությունների շարքում, որոնք պահանջվում է ապահովել՝ «Իրավունքները պաշտպանող դպրոցներ» մրցանակին արժանանալու համար: Ծնողներն ու ղեկավարները դպրոցից հեռանում են՝ վերջինիս բարելավման ուղղությամբ ակնկալվող նոր գաղափարներ փոխանցելով և հետագա փոփոխությունների մասին մտորելով: Եթե դպրոցի տնօրենն աշխատակիցներին ասում է, որ նրանցից յուրաքանչյուրը բավականաչափ ջանք չի գործադրում, ապա աշխատակազմը փորձում է ավելի արդյունավետ օգտագործել իր փորձն ու ռեսուրսները: Արդյունքում, դպրոցի աշխատակազմը հրավիրում է այլ անձանց, որ գան ու տեսնեն ուսուցման առավել հաջողված գործողությունները: Աշխատակազմի անդամներից մեկը անդրադառնում է շրջակա միջավայրի խնդիրներին՝ համայնքային այգու բարելավում, դասարաններում ու ճաշարաններում կուտակվող սննդի թափոնների վերամշակում. այս գաղափարը հիմնված էր թափոններին առնչվող ցուցիչի վրա (Բ1.13): Արդյունքում, քննարկվում է նաև ընդմիջման համար սննդի փաթեթներից ազատվելու հարցը, և բազմաթիվ երեխաներ համաձայնում են: Մի շարք գործողություններից հետո *Ինդեքսը* կազմում է դպրոցի բարելավման ծրագրի մի մասը: Ծրագրում առանձնացվել է մի սյունակ, որը ներկայացնում է, թե *Ինդեքսը* ինչպես կարող է նպաստել որոշակի առաջնահերթության արդյունավետությանը, ուստի «դա ստիպում է ծրագրի տվյալ ոլորտի համար պատասխանատու մասնագետներին իսկապես անդրադառնալ *Ինդեքսին* և օգտագործել այն»: *Ինդեքսը* թույլ է տալիս մեկտեղել դպրոցի բարելավման գործողությունները: Դպրոցի տնօրենի խոսքերով՝ «Այն պետք է աշխատի, քանի որ տարածում է մեր արժեքները»:

Գծապատկեր 28 **Արժեքահեն զարգացման ծրագրի ուղեցույցներ**

Զարգացման ծրագիրը կարող է պարունակել հետեւյալը.

- հաստատության զարգացումն ուղղորդող արժեքների հղումներ,
- կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գերակայությունների սահմանում հետևյալ հարցերը քննարկելուց հետո,
  - դպրոցի աշխատակիցների, ծնողների, երեխաների և համապատասխան այլ շահառուների հետ ընդլայնված խորհրդակցություն,
  - դպրոցների ղեկավարների առկա գիտելիքները, փորձը և մտազննման արդյունքները,
  - արտաքին պահանջներ,
  - գնահատման ու զարգացման ծրագրի միջև փոխկապակցվածության արտացոլում,
  - բացահայտված հնարավորություններ,
  - մշակույթների, քաղաքականության և գործելակերպերի փոխկապակցվածության անհրաժեշտություն,
- իրականացմանը նպաստող ցուցիչների/հարցերի հղումներ:
- Գործողությունների նկարագրություն, այդ թվում, ըստ համապատասխանության, հետևյալը.
  - Ի՞նչ գործողություններ են պահանջվում:
  - Ո՞վ է պատասխանատու պահանջվող տարբեր առաջադրանքների համար:
  - Ի՞նչ ռեսուրսներ կարելի է հավաքագրել աջակցության համար:
  - Ժամկետներ:

Զարգացման ծրագրի դիտարկումը եւ վերանայումը պետք է՝

- տեղի ունենա երեք ամիսը մեկ անգամ,
- հաշվի առնի առաջացած նոր առաջնահերթությունները,
- ստուգի զարգացման ապացույցները:

Դիտարկե՛ք ծրագրերի եւ նախաձեռնությունների ինտեգրումը

Դպրոցները կարող են ներգրավված լինել տարբեր առիթներով նախաձեռնված մի շարք գործունեություններում, այդ թվում, աշխատակազմի և ծնողների ոգևորությամբ, ֆինանսավորման հնարավորությունների առաջացմամբ կամ կառավարության պահանջով պայմանավորված: Երբեմն նախաձեռնությունները կարող են չհամապատասխանել որոշակի խնդրի շուրջ աշխատակիցների կողմից արդեն իսկ իրականացվող աշխատանքին:

Օրինակ՝ արտադասարանային պարապմունքների խթանումը[47] հնարավոր չէ ինտեգրել այն մեթոդներին, որոնք դպրոցի աշխատակազմն արդեն օգտագործում է երեխաների համար տանը կազմակերպվող դասավանդման և ուսումնառության գործողությունների հետ. տե՛ս Գործողություն թիվ 12:

Ուսումնասիրե՛ք ծրագրի մշակման շրջանակը

Խմբի անդամները կարող են պատճենահանել և օգտագործել 93-րդ էջում ներկայացված ծրագրի մշակման շրջանակը՝ զարգացման իրենց գերակայություններն արձանագրելու համար: Նրանք կարող են դիտարկել *Ինդեքսի* յուրաքանչյուր հարթության և բաժնի շրջանակներում տեղի ունեցող զարգացման եղանակները՝ դրանք պահպանելու անհրաժեշտության դեպքում: Գերակայությունները կարելի է ձևակերպել մեկ ցուցիչի կամ մի խումբ ցուցիչների, մեկ հարցի կամ մի խումբ հարցերի հետ կապված խնդրի շուրջ:

Գործողություն թիվ 12. Աշխատանքի արդյունավետությունը:

Խումբը կարող է ուսումնասիրել դպրոցի զարգացման ծրագրում ինչպես ներառված, այնպես էլ չներառված նախաձեռնություններն ու ծրագրերը, որոնք իրականացվել են դպրոցում՝ նախորդ տարվա ընթացքում կամ նախատեսվում են ապագայի համար: Այնուհետև նրանք կարող անդրադառնալ 48-րդ էջում ներկայացված Գծապատկեր 14-ի Ներառական կրթության զարգացման խորագրի ներքո մեկտեղած գործողությունների ցանկերին: Նրանք կարող են դիտարկել 47-49-րդ էջում բերված այն օրինակը, թե ինչպես է կառավարությունը փորձում խթանել դպրոցների ներգրավվածությունը համամոլորակային խնդիրների և կայունության հարցերի շուրջ, որոնք համընկնում են միմյանց, և թե ինչպես կարելի է նպաստել այդ հարցերի խթանմանը՝ Ինդեքսի՝ զարգացման միասնական սկզբունքային մոտեցմամբ:

Քննարկումները կարելի է կազմակերպել հետևյալ հարցերի շուրջ.

- *Որքանո՞վ են դպրոցում իրականացվող միջամտությունները, նախաձեռնություններն ու ծրագրերը համընկնում:*
- *Ինչպե՞ս կարելի է ապահովել նախաձեռնությունների և ծրագրերի առավել արդյունավետ համակարգում:*
- *Ինչպե՞ս կարելի է ապահովել նախաձեռնությունների և ծրագրերի առավել արդյունավետ ինտեգրում՝ դպրոցի սովորական գործունեության շրջանակներում:*
- *Ինչպե՞ս կարող է արժեքների համակարգը նպաստել միջամտությունների միասնականությանը և դրանց իրականացման փոխադարձ օժանդակությանը:*

[47] Department for Education and Skills (2006). Learning outside the classroom. London, DfES.

Գործողություն թիվ 13. Գերակայությունների եւ ծրագրի մշակման միջամտությունների խթանում:

Մեկ հարթությունից գերակայության ընտրության դեպքում ակնհայտ է, որ վերջինիս օժանդակության համար անհրաժեշտ է նախատեսել զարգացումներ նաև այլ հարթություններում: Օրինակ, երբ ծաղրանքի դեմ պայքարի քաղաքականության մշակում դիտարկվում է «Բ» հարթության շրջանակներում զարգացման աշխատանքի գերակայություն, ապա այն պետք է փոխկապակցված լինի «Ա» հարթության շրջանակներում ներկայացվող հարաբերությունների ցուցիչներին: Խումբը կարող է ընտրել զարգացման համար առաջարկվող գերակայություն, որը կարող է ձևավորված լինել որպես Ցուցիչների հարցաշարի պատասխանների շուրջ նախկինում տեղի ունեցած քննարկման արդյունք: Այնուհետև ընտրված գերակայությունը կարելի է ընդգրկել ծրագրի մշակման շրջանակում և դիտարկել հետևյալը.

- *Ի՞նչ փոփոխություններ են պահանջվում այլ բաժիններում՝ զարգացումն ապահովելու համար:*
- *Ինչպե՞ս կարելի է իրականացնել զարգացման գերակայությունը:*

Գործողություն թիվ 14. Ինչպե՞ս կարող է *Ինդեքսը* նպաստել ծրագրում ընդգրկված ընթացիկ գործողությունների իրականացմանը:

Խմբի անդամները կարող են դիտարկել դպրոցի զարգացման ծրագրով նախատեսված գործողությունները և ուսումնասիրել, թե ինչպես կարող է Ինդեքսի կիրառումը նպաստել այդ գործողությունների իրականացման գործընթացի բարելավմանը:

Հաղթահարե՛ք *Ինդեքսի* օգտագործման խոչընդոտները

Տրամադրված նյութերն ուսումնասիրելուց հետո խումբը կարող է ցանկություն հայտնել դպրոցի մյուս աշխատակիցներին փոխանցելու իր գաղափարները *Ինդեքսը* ներկայացնելու լավագույն տարբերակների վերաբերյալ, ինչպես նաև խոսել հնարավոր խոչընդոտներից և դրանք հաղթահարելու ռազմավարություններից:

Փուլ 2: Խոչընդոտների հաղթահարման համատեղ աշխատանք

Իրազեկության բարձրացում

Նախքան պլանավորման վերաբերյալ որոշակի որոշումներ կայացնելը անհրաժեշտ է դպրոցների ավելի լայն համայնքներին տեղեկացնել *Ինդեքսի* մասին: Դա կարելի կազմակերպել աշխատակազմի զարգացման օրվա ընթացքում ինչպես առաջարկվում է ստորև: Իրազեկման բարձրացման միջոցառումը կարող են վարել *Ինդեքսի*՝ համագործակցության ձևավորման նյութերին ծանոթ պլանավորման թիմի մեկ կամ մի քանի անդամներ: Միջոցառմանը կարող է մասնակցել նաև որևէ երրորդ անձ, որին մասնակիցները վստահում են և կարող են ազատ արտահայտել տեսակետները: Երրորդ անձի դերում կարող է հանդես գալ տեղական իշխանության որևէ ներկայացուցիչ, որի ներկայությունը չի դիտարկվում որպես տեսչական գործառույթ, կամ այլ դպրոցի որևէ մասնագետ, որը *Ինդեքսի* նյութերով աշխատելու փորձ ունի: Անհրաժեշտ է դպրոցի աշխատակազմին հավաստիացնել, որ նրանցից չի պահանջվում անմիջապես բարեփոխել ամբողջ դպրոցը: *Ինդեքսն* օգնում է սահմանելու դպրոցի զարգացման պլանի առաջնահերթությունները, ապահովելու ներառական ու փոխկապակցված բարեփոխումներ: Միջոցառման արդյունքում կարելի է ավելացնել պլանավորման խմբի անդամների թիվը:

Ինդեքսի նյութերի հասանելիության ապահովում

Ինդեքսի վերաբերյալ քննարկումները լավագույնս կազմակերպվում են համապատասխան նյութեր ունենալու դեպքում: Շատ ավելի հեշտ է կազմակերպել քննարկումները ձեռնարկի առկայության դեպքում: Հարկ է նշել, որ գրքի պատճենը ձեռք բերելիս տրամադրվում է նաև վերջինիս էլեկտրոնային տարբերակը՝ «pdf» ձևաչափով, որը կարող է ապահովել ձեռնարկի հասանելիությունն ավելի մեծ խմբերի համար: Դա թույլ է տալիս մասնագետներին օգտվել *Ինդեքսի* նյութերից՝ իրենց համակարգիչների, նոթբուքերի և պլանշետների օգնությամբ, ինչպես նաև ապահովել համապատասխան նյութերի հասանելիությունն այն ծնողներին կամ դպրոցին առնչվող անձանց

համար, որոնք չունեն ձեռնարկի թղթային տարբերակը: Կարելի է նաև պատճենել հարցաթերթիկներն ու ձեռնարկի այլ էջեր՝ որոշակի թեմաների շուրջ քննարկումների նպատակով հանդիպումներ կազմակերպելիս:

Դպրոցի աշխատակազմի եւ ղեկավար մարմնի զարգացման օր

Դպրոցի աշխատակազմի զարգացմանը նվիրված միջոցառումը նպաստում է, որ դպրոցի աշխատակիցներն ու ղեկավար մարմինները աշխատեն միասին և ընդլայնեն խորհրդակցության թեմաները: Գծապատկեր 27-ում ներկայացված է նման միջոցառման օրինակ: Համագործակցությունը զարգացնելու նպատակով միջոցառմանը կարող են մասնակցել մի քանի դպրոցներ: Միջոցառման ավարտին կարելի է կարծիքներ փոխանակել դպրոցների զարգացման առաջնահերթությունների վերաբերյալ: Դրանք կհավաքագրվեն պլանավորման թիմի կողմից: Սակայն, միջոցառման արդյունքում ձևավորված խթանը զարգացումն անսպասելի ուղղություններով կարող է տանել:

Միջոցառմանը նախորդող օրերին անհրաժեշտ է կազմել ու հաստատել միջոցառման օրակարգը և նախատեսվող աշխատանքները: Անհրաժեշտ է նախապես որոշել արժեքների ու արժեքների շրջանակի ձևավորման վերաբերյալ երկխոսությունների նախաձեռնության անհրաժեշտությունը և մեխանիզմները, սահմանել ցուցիչների ուսումնասիրման մեթոդները, ցուցիչների վերաբերյալ հարցաթերթիկի, պլանավորման շրջանակի նմուշի և դպրոց-

ների զարգացման ծրագրերի պատճենների առկայության անհրաժեշտությունը: Մասնակիցներին կարելի է ներկայացնել հինգ րոպե տևողությամբ ներածություն, որից հետո առաջարկել ընտրել քննարկման որևէ հարց, ինչպես նկարագրված է Գործունեություն 2-ում, կամ էլ միջոցառման կազմակերպիչները կարող են ընտրել այն հարցերը, որոնք համարում են դպրոցի խնդիրներին առավել համապատասխան: Քննարկման ընթացքում անհրաժեշտ է գրի առնել տարբեր խմբերի կողմից արտահայտված տեսակետները:

Համակարգող խումբը, դատելով *Ինդեքսով* աշխատելու իր փորձից, կարող է հասկանալ, թե որքան ժամանակ կպահանջվի մասնակիցներից յուրաքանչյուրին՝ առաջադրանքները կատարելու համար: Անհրաժեշտ կլինի մարդկանց հանձնարարել այլ առաջադրանքներ, եթե բոլոր գործողությունները լիարժեք կատարվել են:

Ինդեքսի ներածությունը կարող է լինել համատեղ շնորհանդես (ներկայացում)՝ ըստ 11-րդ էջի ներկայացված նկարագրության, որտեղ ամփոփվում են մի քանի եղանակներ, թե ինչպես է *Ինդեքսը* նպաստում դպրոցների զարգացմանը: *Ինդեքսի* ներածական ներկայացման ժամանակ կարելի է քննարկել արժեքների շրջանակը, նախաձեռնությունների ինտեգրման եղանակները և «խոչընդոտ», «ռեսուրս» և «աջակցություն» հասկացությունների օգտագործումը:

Զարգացման եւ հետագա ուսումնասիրության պայմանական ոլորտներ

Ընդհանրապես, ցուցիչներին և հարցերին ծանոթանալուց հետո մասնագետները բացահայտում են բարելավման ենթակա որոշակի բնագավառներ, որոնք առնչվում են ինչպես դպրոցին՝ որպես ամբողջականության, այնպես էլ որոշ մասնավոր խնդիրների, որոնք հնարավոր է կարգավորել անմիջապես՝ կա՛մ սեփական ջանքերով, կա՛մ գործընկերների հետ: Բարելավման ենթակա որոշ ոլորտների վերաբերյալ որոշում կայացնելուց առաջ կարող է պահանջվել լրացուցիչ ուսումնասիրություն: Այնուամենայնիվ որոշ առաջնահերթություններ սովորաբար սահմանվում են միայն տարբեր խմբերի կողմից տրամադրված տեղեկատվության համախմբման և քննարկումների ընդլայնման արդյունքում:

Գծապատկեր 29	Դպրոցի աշխատակազմի եւ ղեկավար մարմինների զարգացման օր, ներառական արժեքների կենսագործում
9:00 – 9:30	*Ինդեքսի* ներածական ներկայացում (մասնակիցների լիակազմ ներկայությամբ/պլենար)
9:30 – 10:30	Նախընտրելի հարցերի ընտրություն (Գործողություն թիվ 2) Մտահոգությունների բացահայտում՝ ցուցիչների միջոցով (Գործողություն թիվ 3)
10:30 – 11:00	Թեյի/սուրճի ընդմիջում
11:00 – 11:30	Արժեքների կենսագործում (Գործողություն թիվ 7)
11:30 – 12:30	Ներառում, խոչընդոտներ, ռեսուրսներ և աջակցություն (Գործողություն թիվ 8, 9, 10)
12:30 – 13:30	Ճաշի ընդմիջում
13:30 – 14:30	Դպրոցի զարգացման ծրագրի վերանայում
14:30 – 15:30	Զարգացման առաջնահերթությունների և հետագա ուսումնասիրությունների վերաբերյալ կարծիքների փոխանակում (խմբային աշխատանք, այնուհետև լիակազմ քննարկում)
15:30 – 15:45	Գործընթացի հաջորդ քայլերը (ներկայացնում է համակարգող խումբը)
15:45	Թեյի ընդմիջում

Հետագա քայլերի պլանավորում

Զարգացման միջոցառման օրվա ավարտին պլանավորման խմբի ղեկավարը պետք է տեղեկացնի մասնակիցներին, թե ինչպես են օգտագործելու հավաքագրված տեղեկությունը և գրի առնված կարծիքները: Համակարգող խումբը պետք է ավարտի դպրոցի աշխատակազմից և ղեկավար մարմիններից տեղեկության հավաքագրումը և համախմբի այն: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է բացահայտել այն ոլորտները, որոնք պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություն՝ երեխաների, ծնողների/ խնամատարների ու համայնքի այլ անդամների կողմից տրամադրվող անհրաժեշտ տեղեկատվության հիման վրա: Համակարգող խումբը պետք է միջոցներ ձեռնարկի՝ միջոցառման բացակաների կարծիքները ևս հավաքագրելու համար:

Երեխաների գաղափարների ուսումնասիրություն

Ինդեքսից օգտվող դպրոցներն ընդգծում են, որ երեխաների ու երիտասարդների հետ քննարկումները թույլ են տալիս բացահայտել զարգացման կարիք ունեցող այնպիսի կարևոր ոլորտներ, այդ թվում՝ ուսուցման խոչընդոտները և դրանց հաղթահարման ռեսուրսները, որոնք նախկինում չեն քննարկվել: Երեխաներից դպրոցի մասին տեղեկություններ հավաքագրելու գործընթացը կարող է ինտեգրվել կրթակարգում, օրինակ՝ լեզուների ուսումնասիրման աշխատանքներում, բնական գիտություններ ուսումնասիրելիս կամ դպրոցը՝ որպես ժողովրդավարության մոդել ձևավորելու գործընթացում: Բոլոր երեխաները պետք է հնարավորություն ունենան ինչ-որ ձևով նպաստելու իրենց դպրոցի զարգացմանը, նույնիսկ եթե որոշ երեխաների դեպքում դա հնարավոր է միայն երկխոսության մանրամասների քննարկմամբ:

Հարցաթերթիկները օգտակար գործիք են երեխաներից տեղեկատվության հավաքագրման համար, սակայն կարող են ավելի արդյունավետ լինել՝ խմբային աշխատանքների ժամանակ երկխոսության ծավալմանը զուգընթաց: Ձեռնարկի 5-րդ բաժնում ներկայացված է երկու հարցաթերթիկ՝ «Իմ դպրոցը» վերնագրով: Դրանցից մեկը նախատեսված է տարրական ու միջնակարգ դպրոցների երեխաների, իսկ մյուսը՝ ավելի կրտսեր տարիքի երեխաների համար: Դպրոցները այդ հարցաթերթիկները կարող են հարմարեցնել իրենց պահանջներին: Հնարավոր է երեխաներն օգնության կարիք ունենան հարցերին պատասխանելիս: Փոքր տարիքի երեխաների դեպքում լավագույն մեթոդը կլինի կարդալ յուրաքանչյուր հարցը, ապա օգնել նրանց, ովքեր դժվարանում են լեզվի կամ հրահանգների ընկալման կամ հարցաթերթիկների վերջում իրենց առաջնահերթությունները գրավոր շարադրելու հարցում: Անհրաժեշտ է երեխաներին հորդորել, որ արտահայտեն իրենց անկեղծ կարծիքը՝ դպրոցի աշխատակիցներին կամ այլ երեխաների գոհացնելու փոխարեն: Հարցաթերթիկները կարելի է հարմարեցնել, օրինակ՝ ըստ որոշակի տարիքային խմբի պահանջների կամ որոշակի ոլորտի խնդիրների, ինչպես ստորև բերված 7-րդ կարծիքում:

Ինդեքս Զեկույց 6 | ***Ինդեքսի*** **ներառումը դպրոցի բարելավման ծրագրում**

Լեանդեր քաղաքի միջնակարգ դպրոցում սովորող գրեթե բոլոր երեխաներն ունեին բանգլադեշյան ծագում, սակայն դպրոցի աշակերտներից մի քանիսը սպիտակամորթ էին: Բացի այդ, դպրոցի տղա աշակերտների թիվն ավելի մեծ էր, քան աղջիկներինը, քանի որ տարածքի մահմեդական որոշ ընտանիքներ նախընտրում էին իրենց դուստրերին տանել աղջիկների դպրոց: Դպրոցի տղա աշակերտներից շատերը անդամակցում էին տեղական խմբավորումների. դա հանգեցնում էր դպրոցում մի շարք բախումների: Տեղական համայնքի անդամներն այս խնդիրները մասնակիորեն կապում էին երեխաների բնակարանների ու տների տարածքների փոքր լինելու և նորմալ կենցաղային պայմանների բացակայության հետ: Դպրոցում տարբեր կարծիքներ էին շրջանառվում այն մասին, թե ինչու են այդքան քիչ թվով երեխաներ ընտրել բենգալերենը՝ որպես միջնակարգ դպրոցի ավարտական ծրագրի առարկա: Ժամանակակից լեզուների ամբիոնի ղեկավարի կարծիքով, երեխաները հետաքրքրված չեն տվյալ լեզվի ուսումնասիրությամբ, մինչդեռ բանգլադեշյան ծագում ունեցող մասնագետների կարծիքով, պատճառն այն է, որ բավարար ուշադրություն չի հատկացվում նրանց մայրենի լեզվին՝ սիլհեթին, որը բենգալերենի բարբառներից է: Ծնողները դժգոհում էին նաև հանդերձարաններում երեխաների անհամեստության դրսևորումից:

Դպրոցների ընդհանուր հարցաթերթիկներին ավելացվել են հատուկ ձևակերպված հետևյալ հայտարարությունները՝

- Ցանկանում եմ, որ այս դպրոցում սովորեն հավասար թվով տղաներ ու աղջիկներ:
- Ցանկանում եմ, որ դպրոցում սովորեն տարբեր ծագում ունեցող ավելի մեծ թվով երեխաներ:
- Ես կցանկանայի ուսումնասիրել բենգալերեն միջնակարգ դպրոցի ավարտական ծրագրում:
- Իմ ընտանիքը լավ պատկերացում ունի դպրոցում տեղի ունեցող իրադարձությունների մասին:
- Ուսուցիչները լավ պատկերացում ունեն դպրոցի շրջակա համայնքների մասին:
- Երեխաներին դասերի ժամանակ պետք է թույլատրվի խոսել սիլհեթ բարբառով:
- Անգլերեն սովորող երեխաներն ստանում են անհրաժեշտ օգնություն:
- Ֆիզիկական կրթության համար նախատեսված հանդերձարանները պետք է հարմարավետ լինեն:
- Որոշ դասերի ժամանակ ինձ անհարմար եմ զգում՝ իմ կրոնական համոզմունքների պատճառով:
- Ինձ մտահոգում է որոշ խմբավորումների հետ խնդիրներ ունենալու հավանականությունը:
- Ես կարող եմ շփվել իմ դպրոցում սովորող երեխաների հետ, որոնք ապրում եմ իմ բնակավայրի տարածքից դուրս:
- Ես կարող եմ շփվել իմ դպրոցում չսովորող երեխաների հետ, որոնք ապրում եմ իմ բնակավայրի տարածքից դուրս:
- Ընտանիքիս կարող է դուր չգալ, թե ում հետ եմ ես շփվում:
- Հակառակ սեռի երեխաների հետ ավելի հեշտ է շփվել դպրոցում, քան դպրոցից դուրս:
- Տանը ինձ հատկացվում է տնային աշխատանքներս կատարելու համար անհրաժեշտ տարածություն:

Հարցաթերթիկներից բացի, գոյություն ունեն մի շարք այլ եղանակներ, որոնք ուսուցիչները կարող են կիրառել դպրոցի լավ ու վատ կողմերի, նաև ուսուցման խոչընդոտների ու ռեսուրսների վերաբերյալ երեխաների կարծիքը պարզելու համար: Երեխաների արտահայտած կարծիքներն ուշադիր լսելը, ինչպես նաև զգուշորեն քննելն այն ամենը, ինչի մասին նրանք լռում են, ամենահզոր ուղեցույցն են ոչ միայն երեխաներին, այլ նաև մեծահասակներին հուզող հարցերը բացահայտելու գործընթացում:

Գործողություն թիվ 15. Խոչընդոտների եւ ռեսուրսների լուսանկարում:

Թվային կամ այլ տեսախցիկների միջոցով երեխաները նկարում են այն, ինչն իրենց կարծիքով կարևոր է դպրոցում կամ խոչընդոտում է դպրոցի զարգացումը: Երեխաները կարող են լուսանկարել այն ամենը, ինչը պատասխանում է հետևյալ հարցերին՝

- *Ի՞նչն է օգնում Ձեզ սովորելու:*
- *Ի՞նչն է խանգարում Ձեզ սովորել:*
- *Ի՞նչն եք հավանում դպրոցում:*
- *Ի՞նչ կցանկանայիք փոխել:*

Դպրոցի ու նրա շրջակա տարածքի լուսանկարները նույնպես կարող են օգտագործվել որպես արդյունավետ միջոց՝ բարեփոխման ենթակա բացերի բացահայտման համար: Դպրոցի բարելավման գաղափարները կարելի է ներկայացնել քարտեզներով և գծագրերով, երեխաների կազմակերպած տիկնիկային կամ սեփական մասնակցությամբ ներկայացումների, ինչպես նաև տարբեր պատմությունների, ֆիլմերի ու դրամատիկ ներկայացումների արձագանքներով: Յուրաքանչյուր ոք կարող է ներգրավված լինել դպրոցի թերությունների գործնական դիտարկումներում, դրանց փաստաթղթավորման և հաշվետվությունների ներկայացման գործընթացում՝ համատեղ ջանքերով առկա իրավիճակը վերանայելու և բարեփոխումներ առաջարկելու նպատակով: Ինչպես տարրական, այնպես էլ միջնակարգ դպրոցներում, հատկապես վերջինիս դեպքում, կարելի է կազմակերպել որևէ խմբի մեկօրյա մանրամասն դիտարկում, որը թույլ կտա բացահայտել խմբի անդամների տարբեր փորձառությունները՝ ուսուցման և ուսումնառության միջոցառումներին, խաղահրապարակներին, ընկերությանը, ուսուցիչներին և նրանց օգնականներին առնչվող: Երեխաների փորձառության վերաբերյալ կարծիքները կարելի է համադրել և ներկայացնել խճանկարով:[48]

Ծնողների/խնամատարների եւ տեղական համայնքների անդամների գաղափարների ուսումնասիրություն

Երեխաների ծնողների/խնամատարների և համայնքի այլ անդամների հետ քննարկումները թույլ են տալիս բացահայտել դպրոցի զարգացման հետագա հեռանկարները նրանց տեսանկյունից, ովքեր խորապես մտահոգված են երեխաների կրթությամբ: Սույն ձեռնարկի 5-րդ բաժնում ներկայացված է հարցաթերթիկ նաև երեխաների ծնողների/խնամատարների համար՝ «Իմ երեխայի դպրոցը» վերնագրով: Ինչպես մյուս հարցաթերթիկները, այն նույնպես կարող է օգտագործվել դպրոցում առկա խոչընդոտների և ռեսուրսների շուրջ ծնողների հետ ավելի մանրամասն երկխոսություն ծավալելու նպատակով:

Դպրոցները փորձել են մի շարք միջոցներով հորդորել ծնողներին պատասխանել հարցաթերթիկների հարցերին: Դպրոցներից մեկում ծնողների կարծիքները հավաքագրվել են «Ամենամյա ամառային տոնավաճառ»-ի ընթացքում: Մեկ այլ դպրոցում հարցաթերթիկները բաժանվել են ծնողներին՝ դպրոցի խորհրդակցական երեկոյի ընթացքում, որը նրանք լրացրել են ուսուցիչների հետ հանդիպմանը սպասելու ժամանակ: Հաջորդ օրը բացակա ծնողներին հարցաթերթիկներն ուղարկվել են փոստային ծառայության միջոցով: Յուրաքանչյուր հարցաթերթիկ պարունակում էր խաղարկության մասնակցության տոմս:

Պլանավորման համար պատասխանատու խումբը կարող է կիրառել ծնողների ներգրավվածության խթանման իր միջոցները, մասնա-

48 Clark, A. and Moss, P. (2005) Spaces to Play, More listening to young children using the mosaic approach, London, National Children's Bureau.

վորապես, երբ դպրոցում կազմակերպված հանդիպումների հաճախելիության մակարդակը նախկինում էլ է ցածր եղել: Կարելի է ծնողների հետ հանդիպումները կազմակերպել նաև դպրոցից դուրս, եթե հնարավոր է ապահովել ավելի մեծ թվով ծնողների մասնակցությունն այլ վայրերում կազմակերպվող հանդիպումներին: Անհրաժեշտ է մտածել ծնողների մասնակցության խթանման տարբեր հնարավորությունների մասին: Դպրոցներից մեկում ծնողների հետ կապ պահպանող աշխատակիցը և պլանավորման համար պատասխանատու խմբի անդամներից մեկը կազմակերպել էին հարցերի թարգմանությունն այն ծնողների/ խնամատարների համար, որոնք վարժ չէին տիրապետում անգլերենին, և վերջիններիս համար հանդես էին գալիս որպես թարգմանիչներ քննարկումների ընթացքում: Այլ դպրոցներ կազմակերպում են հարցաթերթիկների թարգմանված տարբերակների փոխանակում: Հանդիպումների կազմակերպման նպատակն է լսել ծնողների /խնամատարների կարծիքները և ծառայեցնել դրանք որպես համագործակցության ապահովման գործիք դպրոցի աշխատակազմի և ծնողների/ խնամատարների միջև: Հանդիպման ընթացքում կարելի է քննարկել հետևյալ հարցերը՝

- Որո՞նք են դպրոցի ուժեղ կողմերը:
- Ի՞նչը կարող է նպաստել տվյալ դպրոցում Ձեր երեխայի/երեխաների ուսուցման գործընթացի բարելավմանը:
- Ի՞նչ կարելի է անել, որ Ձեր երեխա/երեխաներն իրենց ավելի երջանիկ զգա(ն) տվյալ դպրոցում:
- Հատկապես ի՞նչը կցանկանայիք փոխել տվյալ դպրոցում:

Ծնողները կարող են հանդիպմանը ներկայանալ արդեն իսկ լրացրած հարցաթերթիկներով, կամ դրանք կարելի է լրացնել հանդիպումից հետո՝ որպես գործընթացին հետևելու հետագա քայլ կամ բացակա ծնողներից տեղեկատվության հավաքագրման միջոց: Ծնողների/խնամատարների կարծիքներից բացի, օգտակար կլինի նաև պարզել դպրոցի շրջակա համայնքների անդամների կարծիքները: Երեխաները չեն կարող արտացոլել տարածքի բնակչության կազմը՝ հաշմանդամության, էթնիկ պատկանելության և սոցիալական դրության առումով: Համայնքների անդամների կարծիքների հավաքագրումը կնպաստի դպրոցն ավելի ներկայացուցչական դարձնելու ջանքերին:

Ինդեքս Ձեկույց 8 **Ռեդլանդսի ավագ դպրոցի զարգացման փորձը**

Ռեդլանդսի ավագ դպրոցի տնօրենի օգնականը, որ նաև աշխարհագրության դասատու էր, մտահոգված էր ծնողների ներգրավվածության ցածր մակարդակով: Նա մտածեց, որ ծնողներին կարող է հետաքրքրել մեկ օրով դպրոցի աշակերտ դառնալու գաղափարը և հրավիրեց ծնողներին մասնակցելու աշխարհագրության դասերից մեկին: Նա ստացավ հրավերի ուքսուն դրական պատասխան և կազմակերպեց երեք առանձին երեկոյան դասեր: Նա բավականին ինքնավստահ ուսուցչուհի էր, և նրա այդ գաղափարը կարող էր գրավել ոչ բոլոր ուսուցիչներին, թեև նրանք էլ կարող էին մշակել իրենց մեթոդները՝ ծնողների ներգրավվածության խթանման համար: Աշխարհագրության ուսուցչուհին իր նորարարության մասին նշեց դպրոցում *Ինդեքսի* օգտագործման ազդեցության քննարկման ժամանակ: Ի պատասխան այն դիտողության, որ թեև դպրոցների համար խրախուսական է սերտ փոխհարաբերություններ հաստատել երեխաների ընտանիքների հետ, սակայն իր կողմից կիրառված տվյալ լուծումը, որպես այդպիսին, նշված չէ *Ինդեքսում*, նա նշում է՝ «Այո՛, Դուք ճիշտ եք, սակայն *Ինդեքսը* օգնեց ինձ իրագործելու դա»:

Քննարկումներ զարգացման առաջնահերթությունների շուրջ

Զարգացման ծրագիր մշակելու համար համակարգող խումբը պետք է համախմբի և վերլուծի քննարկումներին մասնակցություն ցուցաբերած բոլոր անձանց կողմից նշված զարգացման առաջնահերթությունները: Դա կարելի է լավագույնս իրականացնել տեղեկատվությունը հավաքագրելուց անմիջապես հետո: Անհրաժեշտ է առանձնացնել երեխաների, նրանց ծնողների/խնամատարների, դպրոցի աշխատակիցների և ղեկավար մարմինների կողմից տրամադրված տեղեկությունը՝ հեռանկարների տարբերությունները բացահայտելու և ուսումնասիրելու նպատակով: Հնարավոր է անհրաժեշտություն առաջանա՝ ուսումնասիրելու աշխատակազմի ենթախմբերի, ինչպես, օրինակ, ուսուցչի օգնականների կամ տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների տեսակետներն առանձին-առանձին:

Այս գործընթացի արդյունավետության համար կարելի է նաև ներգրավել ծանոթ խորհրդատու: Սակայն անհրաժեշտ է հիշել, որ դպրոցի բոլոր աշխատակիցների, ծնողների/խնամատարների, երեխաների, ղեկավար մարմինների և տեղական համայնքի անդամների մասնակցությունը և զարգացման ծրագրի նկատմամբ նրանց սեփականատիրական զգացումը շատ կարևոր են: Սեփականատիրական զգացումը կարող է ոգևորել մարդկանց և նպաստել նոր գաղափարների ու առաջարկների ձևավորման:

Նախքան առաջնահերթությունների վերջնական սահմանումը կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն: Քննարկումների ընթացքում ձևավորված հարցերը կարելի է պարզաբանել լրացուցիչ տեղեկություններով: Օրինակ, միգուցե անհրաժեշտ լինի վերլուծել աշակերտների հաճախումների կամ ստուգողական աշխատանքների արդյունքները՝ ըստ սեռի և էթնիկ պատկանելության: Լրացուցիչ տեղեկության հավաքագրման անհրաժեշտություն կարող է ծագել քննարկումների ժամանակ, երբ, օրինակ, անհրաժեշտ է պարզել նոր աշխատակազմի հարմարման (ադապտացման) փուլի արդյունավետության մակարդակը: Լրացուցիչ տեղեկության հավաքագրումը կարող է կազմել զարգացման գործընթացի աշխատանքների մի մասը, օրինակ, երբ ուսուցիչներն ու նրանց օգնականներն օգնում են բարելավելու դասավանդման գործընթացը՝ գործնականում միմյանց աշխատանքը դիտարկելով, գրառելով և դրա շուրջ մտածելով:

Համակարգող խումբը պետք է ապահովի, որ մարգինալ խմբերի կարծիքները չանտեսվեն, և որ մասնավորապես, երեխաների ու նրանց ծնողների/խնամատարների տեսակետներն արտացոլվեն կրթակարգի վերջնական տարբերակում, որպեսզի նրանք համոզված լինեն, որ իրենց կարծիքն իսկապես կարևոր է: Առաջնահերթությունները կարող են մեծապես տարբերվել՝ ըստ իրականացման համար պահանջվող ժամկետների ու ռեսուրսների:

Գծապատկեր 30-ում ներկայացված են դպրոցների կողմից սահմանված առաջնահերթությունների որոշ օրինակներ: *Ինդեքսի* վերաբերյալ ներկայացված 6-րդ Զեկույցը պատմում է դպրոցներից մեկում կազմակերպված քննարկումների արդյունքներից:

Քննարկումների ինտեգրումն առօրյա կյանք

Պլանավորման գործընթացում ներգրավվածության խթանումը ներառական համայնքի զարգացման կողմերից մեկն է, և անհրաժեշտ է դա պահպանել քննարկման նախնական իրարանցումն ավարտելուց հետո: Հետևաբար, նույնքան կարևոր է ընդլայնել տվյալ խմբերի կողմից իրենց գաղափարների արտահայտման ամենօրյա հնարավորությունները, որքան մեկ լայնածավալ քննարկման կազմակերպումը: Այս նպատակով անհրաժեշտ է, որ համակարգող խումբը վերանայի դպրոցի բոլոր աշխատակիցների, աշակերտների, նրանց ծնողների/խնամատարների և ղեկավար մարմինների կարծիքները լսելու համար նախատեսված մեխանիզմները և դիտարկի առկա մեխանիզմների ընդլայնման վերաբերյալ տվյալ խմբերի գաղափարները: Նրանք կարող են իրենց գաղափարները ներկայացնել նաև այլ դպրոցների կամ տեղական իշխանություններին: Աշակերտները կարող են ուսումնասիրել, թե ինչպես խթանել մասնակցությունը՝ որպես լեզվի ուսումնասիրությանը կամ քաղաքացիության ուսուցմանը նվիրված նախագծի մի մաս: Կարելի է ծնողների համար նախատեսել առանձին դասասենյակ, կամ ամիսը մեկ անգամ դպրոցի դահլիճը վերածել ժողովրդավարական ֆորումի: Մասնակցությունը *Ինդեքսի* հիմքում ընկած արժեքներից մեկն է, և *Ինդեքսի* ցուցիչներն ու հարցերը պարունակում են բազմաթիվ ակնարկներ առ այն, թե ինչպես նպաստել դպրոցներում մեծահասակների ու երեխաների ազատ արտահայտմանը:

Գծապատկեր 30	Դպրոցի առաջնահերթությունների օրինակներ

- Մշակել և ներդնել նոր աշակերտներին ու աշխատակիցներին դիմավորելու և ճանապարհելու միջոցառումների կարգ:
- Իրականացնել աշխատակազմի զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ դասերն ավելի ընկալելի դարձնելու և դասավանդման գործընթացի բազմազանությունը ապահովելու համար:
- Մշակել և ներդնել կարիերայի կամ մասնագիտական աճի մեխանիզմներ ուսուցիչների օգնականների համար:
- Միավորել դպրոցի տարածքներում բանջարեղենի աճեցման, հողի պարարտացման, դպրոցի խոհանոցում սնունդի պատրաստման, տեղական տնտեսություններում սննդի արտադրության աշխատանքները:
- Բարելավել հաշմանդամ աշակերտների ու մեծահասակների մուտքը դեպի դպրոց:
- Ինտեգրել դպրոցում տրամադրվող աջակցության բոլոր ձևերը:
- Իրականացնել արժեքների գրագիտության, այդ թվում՝ «Ամսվա արժեքները» խորագրով միջոցառումներ աշակերտների ու մեծահասակների համար:
- Կազմակերպել համատեղ դասընթացներ ուսուցիչների ու նրանց օգնականների համար:
- Մշակել համագործակցային ուսուցման մեթոդներ երեխաների համար:
- Ուսումնասիրել սովորողներին վախեցնելու դեպքերը և վերանայել ահաբեկման դեմ պայքարի քաղաքականությունը:
- Խթանել երեխաների մասնակցությունը դպրոցի քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում:
- Ապահովել դասերի բազմազանությունը՝ դասավանդման նոր միջոցների ու նյութերի օգտագործմամբ:
- Բարելավել հաղորդակցությունը դպրոցի աշխատակազմի ու աշակերտների ծնողների/խնամատարների միջև:

Փուլ 3: Զարգացման ծրագրի մշակում

Առաջնահերթությունների ներառումը զարգացման պլանում

Դպրոցի կողմից իրականացվող բարեփոխումների կայունությունն ապահովելու նպատակով պլանավորման համար պատասխանատու խումբը կարող է վերանայել և առաջարկություններ ներկայացնել՝ դպրոցի առկա զարգացման պլանը բարելավելու: Դա իրականացնելու համար անհրաժեշտ է դպրոցի տնօրենության աջակցությունը, որը կարող է հանդես գալ որպես փոխզիջում դպրոցի և երրորդ կողմերի տարբեր շահերի ճանաչման համար: Ներառական արժեքների և դպրոցի առաջնահերթությունների միջև փոխկապվածության ապահովման շուրջ քննարկումները պլանավորման համար պատասխանատու խմբի կարևորագույն խնդիրներից են:

Յուրաքանչյուր նոր առաջնահերթություն պլանավորելիս պատասխանատու խումբը պետք է հաշվի առնի դրանց իրականացման ժամկետները, պահանջվող ռեսուրսները, պարտականությունների բաշխումը և մասնագիտական զարգացման անհրաժեշտությունը: Կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակները կարող են նպաստել ամենահավակնոտ առաջնահերթությունների իրականացմանը: Յուրաքանչյուր առաջնահերթության առաջընթացին հետևելու պարտականությունը կարող է ստանձնել պլանավորման խմբի որևէ անդամ, սակայն ամբողջական ծրագրի իրականացման առաջընթացին հետևելը բոլորի պարտականությունն է:

Բացի այդ, անհրաժեշտ է նաև մշակել ծրագրի իրականացման գնահատման չափանիշներ: *Ինդեքսի* հարցերը կարող են հիմք ծառայել այն չափանիշների սահմանման համար, երբ առաջնահերթությունները ձևավորվում են որոշակի ցուցիչներից ելնելով: Կարելի է դիտարկել ցուցիչների միջև գոյություն ունեցող փոխկապվածությունը՝ այդպիսի հարցերը մի շարք ցուցիչների հիման վրա կազմելու նպատակով:

Փուլ 4: Գործողությունների ձեռնարկում

Առաջնահերթությունների իրականացում

Կարիք չկա սպասելու դպրոցի զարգացման ծրագրի ձևավորմանը՝ համընդհանուր արժեքների համաձայն գործելու, օրինակ՝ մարդկային ռեսուրսների օգտագործման կամ դասավանդման գործընթացը տեղական և գլոբալ միջավայրի ու իրադարձությունների հետ սերտորեն փոխկապակցելու համար: *Ինդեքսի* կիրառման արդյունքների վերաբերյալ գրառումները կարող են արտացոլել այդպիսի ազդեցությունները: *Ինդեքսով* աշխատանքի վերաբերյալ որոշ զեկույցներ զետեղված են սույն բաժնում, որոնք հասանելի են նաև տպագիր տարբերակով[49], և indexforinclusion.org կայքում:

Զարգացման շարունակականության ապահովում

Առաջնահերթությունների իրականացումը պահանջում է հանձնառության ապահովում: Մշակույթների ներառական բնույթն ավելի ընդգրկուն դարձնելու համար անհրաժեշտ է ապահովել դպրոցի աշխատակիցների, ղեկավար մարմինների, աշակերտների և նրանց ծնողների/խնամատարների մշտական ակտիվ ներգրավվածությունը: Երբ առաջնահերթությունների իրականացումը պահանջում է խորը համոզմունքների վերափոխում, ապա զգալի ջանքեր կպահանջվեն դիմակայության հաղթահարման համար: Պլանավորման համար պատասխանատու խումբը կարող է նպաստել տարբերությունների շուրջ երկխոսության ձևավորմանը և հետևել, որ հետագա զարգացումները լայնորեն նպաստեն դրանց շարունակականության խթանմանը: *Ինդեքսի* կիրառման վերաբերյալ 9-րդ կարծիքը ներկայացնում է մի օրինակ, երբ *Ինդեքսի* օգտագործումը օգնել է մեծահասակներին և աշակերտներին դպրոցում իրականացնելու լայնածավալ փոփոխություններ նույնիսկ դժվարին մեկնարկից հետո:

[49] Rustemier, S. and Booth, T. (2005) Learning about the Index in use, a study of the use of the Index in schools and LEAs in England, Bristol, CSIE.

Ինդեքս Զեկույց 9

Ղեկավարման նոր մոտեցում

Նախքան *Ինդեքսն* օգտագործելը Հինդի տարրական դպրոցը գտնվում էր «հատուկ միջոցառումների» ցանկում՝ աշխատակազմի և կարգապահության խնդիրների պատճառով: Աշխատակազմի, ղեկավար մարմինների և աշակերտների ծնողների միջև հարաբերություններն անբարենպաստ էին: Դպրոցի ուսմասվարն ընդունում էր, որ աշխատակազմը «ենթադրում է, թե իրենք քաջատեղյակ են ծնողների ցանկություններին»: Աշխատակազմին «խնդրեցին անել այն, ինչին նրանք չէին հավատում»: Ուսուցիչները դժգոհում էին աշակերտների կատարած աշխատանքից, սակայն միևնույն ժամանակ անտեսում էին վերջիններիս դրական ձեռքբերումները: *Ինդեքսի* աշխատանքները համակարգող խումբը բաղկացած էր դպրոցի տնօրենության անդամներից, աշակերտների ծնողներից և դպրոցի աշխատակիցներից: Խումբը ղեկավարում էր «քննադատ ընկերը», որ հարգանք էր վայելում ինչպես դպրոցում, այնպես էլ տեղական համայնքում: Խմբում տեղի ունեցող քննարկումները բավականին ընդգրկուն էին, իսկ արդյունքները՝ «մարտահրավերներ նետող»: Օրինակ, ծնողները/խնամատարները կարծիք էին հայտնել ուսուցիչների կողմից իրենց երեխաներին ցուցաբերվող վերաբերմունքի մասին. «Ուսուցիչները չեն հետաքրքրվում մեր երեխաներով», «ուսուցիչներն ունեն առավել սիրելի աշակերտներ»:

Դպրոցի տնօրենի առաջին մտահոգությունը ծնողների հետ հաղորդակցումն էր, որը հատուկ ուշադրություն էր պահանջում: Նա սկսեց իրավիճակը շտկել ծնողների/խնամատարների և տնօրենության անդամների տեղեկացվածության մակարդակի բարձրացմամբ: Դպրոցի տեղեկատվական գրքույկը վերաձևակերպվեց պարզ անգլերենով, նշանակվեցին հանդիպումներ՝ կրթակարգը և տնային հանձնարարությունների բովանդակությունը քննարկելու, ինչպես նաև իրենց երեխաների հետ որոշ դասերի ծնողների մասնակցության հնարավորությունները քննարկելու համար: Մինչ այդ, դպրոցի տնօրենը ենթադրում էր, որ աշխատակազմը մասնակցություն է ցուցաբերում այն ամենին, ինչ տեղի է ունենում դպրոցում, սակայն որոշեց կազմակերպել կանոնավոր հանդիպումներ աշխատակազմի հետ, քանի որ վերջինիս անդամները գանգատվում էին, որ տեղյակ չեն լինում տնօրենի ծրագրերին:

Դպրոց ընդունվելու և դպրոցից հեռանալու դեպքերն սկսեցին դիտարկվել որպես նշանակալի իրադարձություններ: Նոր աշակերտների առաջին հաճախումն այժմ հիշարժան օր է, որն ուղեկցվում է ծնողների, ուսուցիչների, դպրոցի տնօրենության, ծնողների և ուսուցիչների ասոցիացիայի անդամների մասնակցությամբ: Առավոտն սկսվում է համընդհանուր հանդիպմամբ և ավարտվում ընդհանուր ճաշով: Այնուհետև ծնողներին հրավիրում են մասնակցելու հաջորդ հանդիպմանը, որտեղ աշակերտներին ներկայացվում է դպրոցի տարբերանշանը կրող ընթերցանության թղթապանակը: Տարվա վերջում դպրոցի շրջանավարտների համար կազմակերպվում է խորովածով և կենդանի երաժշտությամբ երեկո, որին հրավիրվում են աշակերտների ծնողները և դպրոցի տնօրենությունը:

Աշխատակազմի իրականացրած հետագա փոփոխություններն են՝ բոլոր աշխատակիցների նկարները ներկայացված են դպրոցի մուտքի մոտ, տեղադրվել են անվտանգության տեսախցիկներ և ներքին հաղորդակցման համակարգ՝ ծնողների/խնամատարների՝ երեխաների անվտանգությանն առնչվող մտահոգությունները փարատելու նպատակով, երեխաները հավաքում են դպրոցում կատարած իրենց լավագույն աշխատանքների թղթապանակ, 6-րդ դասարանցիներից կազմված տեղեկատվական տեխնոլոգիաների ակումբն զբաղվում է դպրոցական շաբաթաթերթի թողարկմամբ, դպրոցի տնօրենն ավելի հասանելի է օրվա սկզբում և վերջում: Կողմնորոշման հանդիպումների ընթացքում նշվում են աշակերտների դրական պահվածքը և լավ վարքը, տանը տնային հանձնարարություններին առնչվող խնդիրներ ունեցող աշակերտների համար ապահովվում է երկու ուսուցչի օգնականների հասանելիություն:

Ըստ դպրոցի աշխատակազմի՝ *Ինդեքսն* օգնում է աշխատակիցներին՝ ապահովելու աշակերտակենտրոն ուսուցում:

«Բոլորը՝ ճաշասենյակի վերահսկիչները, դասավանդող աշխատակազմը, ուսուցիչների օգնականները, խոհանոցի աշխատակազմը, խնամակալները, հավաքարարները, շրջան են կազմում աշակերտի շուրջը, և նրանք բոլորն էլ ասելիք ունեն: Դա վերաբերում է աշակերտի ուսումնառությանը և մեծ ակնկալիքներին, ինչպես նաև՝ նրա ձայնին, քանի որ բացի իր հանդեպ իրականացվող գործողություններից, աշակերտը նույնպես ցանկանում է հանդես գալ որպես գործող անձ»:

Ի լրումն վերոհիշյալ բարեփոխումների, կազմակերպվեց դպրոցական խորհուրդ, և աշակերտների մի խումբ մասնակցեց հավասարակշռության պահպանման ու հակամարտությունների կառավարման դասընթացների, որպեսզի նրանք հետագայում կարողանան աջակցություն ցուցաբերել մեկուսացած կամ ճնշումների ենթարկվող աշակերտներին: Դպրոցի տնօրենն այն կարծիքին է, որ *Ինդեքսի* օգտագործումը բոլորին տանում է մեկ ընդհանուր ճանապարհով:

«Բոլոր դպրոցների քաղաքը օգուտները տեսնելով՝ սկսում եմ մտածել այն դպրոցների մասին, որոնք անցել են ցնցումների ու անկումների միջով, ինչպես այս մեկը, սակայն *Ինդեքսի* օգնությամբ հաջողվել է հարթել զարգացման բարենպաստ ուղի»:

Փուլ 5. Զարգացման արդյունքների վերանայում

Վերանայեք եւ տոնեք առաջընթացը

Զարգացման ծրագրում առաջնահերթություններն իրագործելու համար պատասխանատու անձը պետք է ուղղորդի առաջընթացի ստուգման և գրանցման աշխատանքները և առաջարկի պլանի բարելավման փոփոխություններ անհրաժեշտության դեպքում: Առաջընթացի վերաբերյալ կիսամյակային արձանագրությունները կարելի է տարածել տեղեկագրերի միջոցով, աշխատակազմի հավաքների ու հանդիպումների, աշխատակազմի զարգացմանն ուղղված օրերի, գրանցման/դասընթացների, խմբային հանդիպումների ժամանակ, աշակերտական խորհրդի հանդիպումներում, ծանուցման ցուցատախտակների ու կայքերի միջոցով և համայնքային կազմակերպություններում: Դպրոցների մշակույթներում ներառական փոփոխությունները կարող են դուրս գալ կոնկրետ պլանավորված առաջնահերթությունների ցանկից և բացահայտվել ներառական արժեքների կենսագործման առաջընթացի վերանայման արդյունքում ձևավորված դիտողություններով ու պատմություններով:

Դպրոցի աշխատակազմը կարող է հրավիրել *Ինդեքսից* օգտվող այլ դպրոցների՝ միանալու նախորդ տարվա ձեռքբերումներին նվիրված տոնակատարությանը: Տոնակատարության մասնակից աշխատակազմը, աշակերտների ծնողները/խնամատարները, երեխաները, ղեկավար մարմինները և համայնքի անդամները կարող են ներկայացնել իրենց փորձը՝ բանավոր կամ տարբեր պատկերավոր միջոցներով: Տոնակատարության ցուցատախտակների լուսանկարները կարելի է ներկայացնել դպրոցի մուտքի մոտ՝ որպես ներառման գործընթացի տվյալ տարվա ձեռքբերումների վկայություն:

Վերանայեք *Ինդեքսի* կիրառման աշխատանքները

Պլանավորման համար պատասխանատու թիմը կարող է վերանայել կատարած աշխատանքը և որոշել, թե ինչպես կարելի է լավագույնս կիրառել *Ինդեքսի* նյութերը՝ ի նպաստ դպրոցի հետագա զարգացման՝ ըստ Գծապատկեր 31-ի հարցերի:

Հաջորդ քայլերը

Գործընթացի վերջնական փուլը կարող է համընկնել *Ինդեքսի* կիրառման մեկամյա փուլի ավարտին: Որոշ դպրոցներում աշխատակազմի մեծ մասն այս փուլում արդեն ծանոթ կլինի *Ինդեքսին*, սակայն անհրաժեշտ է գործընթացը ներկայացնել նոր աշխատակիցներին որպես դպրոցի մշակույթների, քաղաքականության և գործելակերպի մի մաս: Ցուցիչների ու հարցերի քննարկումը կարող է հանգեցնել զարգացման նոր առաջնահերթությունների, որոնք հարկ է ներառել զարգացման պլանում որպես ներառական արժեքների կենսագործման շարունակական շրջափուլի բաղադրիչ:

Գծապատկեր 31 — *Ինդեքսի* կիրառման աշխատանքների վերանայում

- Որքա՞ն արդյունավետ է եղել պլանավորման համար պատասխանատու թիմը իր կազմը ձևավորելու, մասնակցության հավասարություն ապահովելու, հանձնարարությունները բաշխելու, այլ անձանց հետ խորհրդատվություն իրականացնելու և ներառական զարգացմանը նպաստող աշխատանքները կազմակերպելու գործընթացներում:
- Ինչպե՞ս և որքանո՞վ է *Ինդեքսն* ազդել դպրոցում տեղի ունեցած փոփոխությունների վրա:
- Ինչպե՞ս և որքանո՞վ է դպրոցը իր աշխատանքներում ներդրել ներառական զարգացմանն ուղղված մոտեցումներ:
- Ինչպե՞ս և որքանո՞վ է *Ինդեքսն* ազդել արժեքների վերաբերյալ երկխոսությունների վրա:
- Ինչպե՞ս և որքանո՞վ է *Ինդեքսը* նպաստել միջամտությունների, նախաձեռնությունների ու ծրագրերի միավորմանը:
- Ինչպե՞ս և որքանո՞վ է *Ինդեքսն* ուշադրություն հրավիրել դպրոցի մշակույթների վրա:
- Ինչպե՞ս և որքանո՞վ են *Ինդեքսի* հասկացությունները (ներառում, խոչընդոտներ, բազմազանության ընդունման ռեսուրսներ և աջակցություն) ազդել դպրոցի քաղաքականության և գործելակերպի վերաբերյալ դիտարկումներին:
- Ինչպե՞ս և որքանո՞վ է ներառական եղել զարգացման գործընթացը, ո՞վ կարող է հետագայում ևս նպաստել այդ զարգացմանը:
- Ինչպե՞ս և որքա՞ն են ցուցիչներն ու հարցերը օգնել բացահայտելու նախկինում անտեսված առաջնահերթությունները:
- Ինչպե՞ս և որքա՞ն են *Ինդեքսի* հարթություններն ու բաժինները նպաստել դպրոցների զարգացման ծրագրերի կառուցվածքների մշակմանը:
- Ինչպե՞ս և որքա՞ն է ապահովվել զարգացումների կայուն ընթացքը, և ինչպե՞ս կարելի է բարելավել այդ գործընթացը:

4.
Ցուցիչներ եւ համապատասխան հարցեր

Ցուցիչներ եւ համապատասխան հարցեր

4-րդ բաժինը ներառում է ցուցիչներ ու դրանց նշանակությունը սահմանող հարցեր և ներկայացնում է դպրոցի մանրամասն դիտարկման հնարավորություն: Ցուցիչների ամբողջական ցանկը *Ինդեքսի* 1-ին բաժնում է՝ 14-15-րդ էջերում: Այս բաժնում՝ գրեթե բոլոր ցուցիչների անմիջապես ներքևում, անդրադարձել ենք նաև այլ ցուցիչների՝ այլ հարթությունների ներքին ու խաչաձև փոխադարձ կապերն ընդգծելու համար: Նշված կապերը իմաստային են. դուք ինքներդ կարող եք սահմանել ձեր դպրոցի զարգացման ծրագրի մշակման տեսանկյունից նախընտրելի կապերը: Յուրաքանչյուր հարթություն տարանջատված է *Ինդեքսի* էջի եզրերի իր գույնով, և գույնի փոփոխությունը նշանակում է բաժնի փոփոխություն: «Ա» և «Բ» հարթությունների և «Գ» հարթության 2-րդ բաժնի բոլոր ցուցիչների համար հարցերի շարքն ավարտվում է այնտեղ, որտեղ էջը ավարտվում է: Բացի այդ, փորձել ենք համարակալումը շատ չընդլայնել՝ փոխարենը համակցելով որոշ հարցեր: Ձեր դպրոցի մշակույթների, քաղաքականության ու գործելակերպի ուսումնասիրության ընթացքում կարևոր այլ հարցեր ծագելիս դրանք կարող եք գրառել յուրաքանչյուր ցուցիչի էջի վերջում:

«Գ» հարթության 1-ին բաժինը բացառություն է: Այն ներկայացնում է ուսումնական ծրագրի մոդել, որտեղ ցուցիչների հարցերը համարակալած չեն և ծառայում են որպես ուսումնական ծրագրի կառուցվածք, խմբավորված են մի շարք ենթախորագրերի տակ, սակայն միշտ սկսվում են «Փոխադարձ կապերը տեղական և գլոբալ մակարդակներում» և ավարտվում «Ներկայի, անցյալի և ապագայի փոխադարձ կապերը» պարբերություններով: Հղումների տեսանկյունից հարմարավետության համար ենթախորագրերը նշված են տառերով: Յուրաքանչյուր բաժնի համար նախատեսված է առնվազն երկու էջ:

Հարթություն «Ա». Ներառական մշակույթների ձևավորում **99**

Ա1. Հասարակության/համայնքի կառուցում 100

Ա2. Ներառական արժեքների սահմանում 121

Հարթություն «Բ». Ներառական քաղաքականության ձևավորում **140**

Բ1. Դպրոցի զարգացում բոլորի համար 141

Բ2. Բազմազանության ընդունման ապահովում 166

Հարթություն «Գ». Ներառական գործելակերպի զարգացում **183**

Գ1. Կրթակարգ բոլորի համար 184

Գ2. Ուսուցման գործընթացի կազմակերպում 245

Հարթություն «Ա». Ներառական մշակույթների ձեւավորում

Ա1. Հասարակության/համայնքի կառուցում

1. Յուրաքանչյուրի ներկայությունը/մասնակցությունը ողջունելի է:
2. Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:
3. Երեխաներն օգնում են միմյանց:
4. Աշխատակազմն ու երեխաները հարգում են միմյանց:
5. Աշխատակազմն ու ծնողները/խնամատարները համագործակցում են միմյանց հետ:
6. Աշխատակազմը և ղեկավարներն ապահովում են արդյունավետ համատեղ աշխատանք:
7. Դպրոցը ժողովրդավարական քաղաքացիության մոդել է:
8. Դպրոցը արժևորում է համայն մարդկության միջև փոխհարաբերությունների ըմբռնումը:
9. Մեծահասակներն ու երեխաները պատշաճորեն են արձագանքում սեռերի հավասարության ապահովմանը:
10. Դպրոցը և տեղական համայնքները նպաստում են փոխադարձ զարգացմանը:
11. Աշխատակազմը կապեր է ստեղծում դպրոցում տեղի ունեցած իրադարձությունների և երեխաների ընտանեկան կյանքի միջև:

Ա2. Ներառական արժեքների սահմանում

1. Դպրոցը ձևավորում և զարգացնում է համընդհանուր ներառական արժեքներ:
2. Դպրոցը խթանում է հարգանքը մարդու բոլոր իրավունքների նկատմամբ:
3. Դպրոցը խրախուսում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը:
4. Ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցության մակարդակի աճ:
5. Բոլոր երեխաներն ունեն մեծ ակնկալիքներ:
6. Բոլոր երեխաներն արժևորվում են հավասարաչափ:
7. Դպրոցը պայքարում է խտրականության բոլոր ձևերի դեմ:
8. Դպրոցը խրախուսում է հարաբերությունների պարզաբանման և վեճերի լուծման ոչ բռնի ձևերը:
9. Դպրոցը նպաստում է երեխաների ու մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը:
10. Դպրոցը նպաստում է երեխաների ու մեծահասակների առողջության պահպանմանը:

Ա1. Հասարակության/համայնքի կառուցում

Ա1.1 Յուրաքանչյուրի ներկայությունը/մասնակցությունը ողջունելի է:

Ա2.9 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը:

Բ1.6 Դպրոցը փորձում է ապահովել իր տարածքի բոլոր երեխաների ընդունելությունը:

ա) Արդյո՞ք դպրոցի հետ առաջին շփումն ապահովում է ջերմ ընդունելություն:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը, երեխաները և նրանց ընտանիքները ստեղծում են համախմբված համայնքի մոդել դպրոցում:

գ) Արդյո՞ք դպրոցը ջերմ ընդունելություն է ցուցաբերում բոլոր ծնողներին/խնամատարներին և տեղական համայնքի այլ անդամների:

դ) Արդյո՞ք դպրոցը ջերմ ընդունելություն է ցուցաբերում վերջին շրջանում երկրի այլ տարածքներից կամ այլ երկրներից ժամանած երեխաներին և նրանց ընտանիքներին:

ե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը, երեխաները և նրանց ծնողները/խնամատարները միմյանց ողջունում են քաղաքավարի և բարեկամակաբար:

զ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը, երեխաները, ծնողները և ղեկավարները փորձում են մտապահել միմյանց անունները:

է) Արդյո՞ք դպրոց հաճախելիս մարդիկ ոգևորություն զգում են:

ը) Արդյո՞ք հարաբերությունների որակն ավելի կարևոր է, քան շենքերինն ու սարքավորումներինը՝ մարդկանց ջերմ ընդունելություն ցուցաբերելու համար:

թ) Արդյո՞ք դպրոցը ջերմ ընդունելություն է ցուցաբերում տեղական համայնքի բոլոր երեխաների նկատմամբ՝ անկախ նրանց ֆինանսական վիճակից, ընտանեկան դրությունից, ժառանգականությունից և ձեռքբերումներից:

ժ) Արդյո՞ք դպրոցը մտահոգված է այն անձանց մասին, որոնք բախվել են բացառման ու խտրականության հետ, ինչպես, օրինակ, զբոսաշրջիկները, ճանապարհորդները, փախստականները, ապաստան հայցողները և կրթության հատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաները:

ժա) Արդյո՞ք դպրոցի փաստաթղթերը, ծանուցումները և ցուցատախտակներն ընդգծում են, որ դպրոցը չի մերժում այդ պահին դպրոցում չներառված, այլ ծագում և ինքնություն ունեցող անձանց:

ժբ) Արդյո՞ք ծնողներին/խնամատարներին և աշխատանք փնտրողներին տրամադրված տեղեկատվությունը հստակեցնում է, որ տարբեր ծագում և շահեր ունեցող երեխաները և աշխատակիցները կարևոր են դպրոցի համար:

ժգ) Արդյո՞ք դպրոցի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է բոլորին, օրինակ, թարգմանության, բրայլյան այբուբենով ներկայացնելու, ձայնագրությունների կամ անհրաժեշտության դեպքում խոշոր տառատեսակներով տպագրության միջոցով:

ժդ) Արդյո՞ք դպրոցը անհրաժեշտության դեպքում տրամադրում է ժեստերի լեզվով հաղորդակցվող մասնագետներ և այլ լեզուների թարգմանիչներ:

ժե) Արդյո՞ք դպրոցի նախասրահում առկա են ցուցատախտակների ու սիմվոլների միջոցով ներկայացված նյութեր դպրոցի համակազմի ու համայնքի մասին:

ժզ) Արդյո՞ք ցուցատախտակները ներկայացնում են դպրոցի և երկրի ու աշխարհի այլ հատվածների կապը:

ժէ) Արդյո՞ք դպրոցի մուտքի ձևավորումը նախատեսված է դպրոցին առնչվող մեծահասակներին և երեխաներին հաճույք պատճառելու համար՝ տեսուչների վրա տպավորություն գործելու փոխարեն:

ժը) Արդյո՞ք սիմվոլները և ցուցատախտակները բացառում են ժարգոնային բառապաշարն ու կլիշեները:

ժթ) Արդյո՞ք նախատեսվում են նոր սովորողներին ու աշխատակիցներին ողջունելու և դպրոցից հեռացողներին հրաժեշտ տալու դրական ծիսակատարություններ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է դա տեղի ունենում և ում է վերաբերում:

իա) Արդյո՞ք երեխաները պատասխանատու են զգում իրենց դասասենյակների կամ ուսուցչների սենյակի համար:

իբ) Արդյո՞ք երեխաները, ծնողները/խնամատարները, դպրոցի աշխատակազմը, ղեկավարները և համայնքի անդամները պատասխանատվություն զգում են իրենց դպրոցի նկատմամբ:

իգ) _____

իդ) _____

իե) _____

Պետք է նկատի ունենալ, որ վերը բերված և հետագա շարադրանքում առկա ցուցիչները և հատկապես դրանց նշանակությունը սահմանող ոչ բոլոր հարցերն են բնութագրական, ուստի, ի լրումն դրանց, կարող եք ավելացնել ձեր դպրոցի կանոնադրությունից, ներքին և արտաքին գնահատման համակարգից բխող, ինչպես նաև զարգացման ծրագրի մշակման համար այլ անհրաժեշտ տեղեկատվություն ապահովող հարցեր:

Ա1.2 Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:

Գ2.9 Դպրոցի աշխատակազմի անդամները պլանավորում, դասավանդում և վերանայում են իրենց աշխատանքը համատեղ ուժերով:

Գ2.10 Դպրոցի աշխատակազմը զարգացնում է ուսումնառությանը նպաստող համընդհանուր ռեսուրսները:

ա) Արդյո՞ք աշխատակիցները դպրոցում ստեղծում են համագործակցության մշակույթ բոլորի համար:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը բացահայտում է համագործակցության ընդլայնման խոչընդոտները և փորձում լուծել դրանք:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի համատեղ աշխատանքը ծառայում է որպես համագործակցության մոդել երեխաների համար:

դ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի բոլոր անդամները լավ ունկնդիր են:

ե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները լավ հարաբերությունների մեջ են միմյանց հետ:

զ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները հետաքրքրվում են միմյանց կյանքով և աշխատանքով:

է) Արդյո՞ք ամբողջ ուսումնամեթոդական և վարչական աշխատակազմը հաճույքով է միասին աշխատում:

ը) Արդյո՞ք աշխատակազմի անդամները միմյանց հարգանքով վերաբերվում՝ անկախ իրենց պաշտոններից ու կարգավիճակից:

թ) Արդյո՞ք աշխատակազմի անդամները հարգում են միմյանց՝ անկախ սեռից, էթնիկական պատկանելությունից կամ հաշմանդամություն ունենալուց:

ժ) Արդյո՞ք աշխատակազմի բոլորը անդամներն իրենց զգում են գնահատված և ստանում են անհրաժեշտ օժանդակություն:

ժա) Արդյո՞ք աշխատակազմի անդամները վարում են կառուցողական երկխոսություն՝ մրցակցային քննարկման փոխարեն:

ժբ) Արդյո՞ք կա այն ընկալումը, որ դպրոցի աշխատակազմը որոշակի ներդրում ունի համայնքային և դպրոցական մշակույթի զարգացման գործում:

ժգ) Արդյո՞ք դպրոցի շրջանում բնակվող աշխատակիցների գիտելիքները տեղական իրավիճակի վերաբերյալ արժևորվում են:

ժդ) Արդյո՞ք բոլոր աշխատակիցների ներկայությունը հավասարապես ողջունելի է դպրոցի ողջ համակազմով կազմակերպվող սոցիալական միջոցառումներին:

ժե) Արդյո՞ք բոլոր աշխատակիցները պարբերաբար հաղորդակցվում են դասարանային և արտադասարանային աշխատանքների շուրջ իրենց գաղափարներով ու փորձով:

ժզ) Արդյո՞ք բոլոր աշխատակիցների կյանքի նշանակալի իրադարձությունները, ինչպես օրինակ, երեխայի ծնունդը, ծննդյան տարեդարձը, հարսանիքներն ու ամուսնությունները կամ հարազատների մահը արժանանում են միևնույն ուշադրության՝ անկախ աշխատակիցների պաշտոններից և կարգավիճակից:

ժէ) Արդյո՞ք բոլոր աշխատակիցները հրավիրվում են աշխատանքային հանդիպումների, մասնակցում դրանց և ներդրում ցուցաբերում:

ժը) Արդյո՞ք աշխատակիցները կարողանում են ազատ բարձրաձայնել հանդիպումների ժամանակ ծագած իրենց անհամաձայնությունը:

ժթ) Արդյո՞ք մասնագետները ազատ խորհուրդ են հարցնում միմյանցից դասավանդման և ուսուցման վերաբերյալ:

ի) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները միմյանց հետ անկաշկանդ քննարկում են աշակերտների հետ հարաբերություններում ծագած դժվարությունները:

իա) Արդյո՞ք աշխատակազմի անդամները նկատում են իրենց գործընկերների ընկճված լինելը կամ այլ խնդիրներ ունենալը, և առաջարկու՞մ են իրենց աջակցությունը:

իբ) Արդյո՞ք աշխատակազմի անդամների համագործակցության դժվարությունները քննարկվում և կառուցողական լուծում են ստանում:

իգ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը դիտարկում է համագործակցության խոչընդոտների հաղթահարման տարբերակները, որոնք ծագում են մեծ թվով նոր աշխատակիցներ ընդունելու և նախկին աշխատակիցների հեռանալու հետևանքով:

իդ) Արդյո՞ք աշխատակազմի անդամներն աջակցում են միմյանց այլ աշխատակիցների կողմից ծաղրանքի և հետապնդումների ենթարկվելիս:

իե) Արդյո՞ք խրախուսվում է դպրոցի սպասարկման մշտական աշխատակազմի և ժամանակավոր աշխատակիցների ակտիվ մասնակցությունը դպրոցի կյանքին:

իզ) Արդյո՞ք խրախուսվում է արհմիությունների մասնակցությունը դպրոցի կյանքին:

իէ) _____

իը) _____

իթ) _____

Ա1.3 Երեխաներն օգնում են միմյանց:

Բ1.7 Բոլոր նոր ընդունված երեխաները ստանում են աջակցություն ադապտացման շրջանում:
Գ2.5 Երեխաները սովորում են միմյանցից:

ա) Արդյո՞ք երեխաները հետաքրքրվում են միմյանց կյանքով և ստացած գիտելիքներով:

բ) Արդյո՞ք երեխաները և մեծահասակները բացահայտում են երեխաների համագործակցության ընդլայնման խոչընդոտները:

գ) Արդյո՞ք երեխաները հասկանում են, որ ուրիշներին ընդունելը և գնահատելը օգնում են իրենց ավելի լավ կարծիք կազմելու սեփական անձի վերաբերյալ:

դ) Արդյո՞ք ընկերական հարաբերությունները ակտիվորեն խթանվում են:

ե) Արդյո՞ք երեխաները սովորում են կիսվել, այլ ոչ թե մրցակցել ընկերների հետ:

զ) Արդյո՞ք երեխաները հրավիրում են մյուսներին իրենց հետ խաղալու, երբ նկատում են, որ վերջիններս չեն շփվում, կամ ցանկանում են խաղալ որևէ մեկի հետ դասամիջոցներին, ճաշի ընդմիջման ժամերին:

է) Արդյո՞ք բոլոր աշխատակիցները խրախուսում են, որ երեխաներն ընկերական հարաբերություններ ձևավորեն դասամիջոցներին, դասերից առաջ և հետո:

ը) Արդյո՞ք երեխաները հասկանում են, թե ինչպես կարելի է երևույթները դիտարկել նաև այլ անձանց տեսանկյունից:

թ) Արդյո՞ք երեխաները շարունակում են դպրոցում միասին սկսած աշխատանքները նաև դպրոցից դուրս:

ժ) Արդյո՞ք երեխաները միմյանցից օգնություն խնդրում են:

ժա) Արդյո՞ք երեխաները տեղյակ են, թե ինչ կարող են անել ուրիշներին օգնելու համար, և թե ինչպես կարող են ուրիշներն օգնել իրենց:

ժբ) Արդյո՞ք երեխաները պատրաստակամորեն են փոխանցում իրենց գիտելիքներն ու հմտությունները:

ժգ) Արդյո՞ք երեխաներն առաջարկում են օգնել միմյանց անհրաժեշտության դեպքում, առանց փոխադարձ վերաբերմունք ակնկալելու:

ժդ) Արդյո՞ք երեխաները քաղաքավարի վարք են ցուցաբերում առաջարկված օգնությունը մերժելու դեպքում, երբ դրա կարիքը չեն զգում:[50]

ժե) Արդյո՞ք երեխաներն ուրախանում են միմյանց հաջողություններով:

ժզ) Արդյո՞ք երեխաների համատեղ աշխատանքը, ինչպես նաև առանձին ձեռքբերումները նշվում են դպրոցի ցուցատախտակներում:

ժէ) Արդյո՞ք երեխաները գնահատում են այլ երեխաների ջանքերը՝ անկախ նրանց նվաճումների մակարդակից:

ժը) Արդյո՞ք սովորողները գիտակցում են, որ տարբեր երեխաներից կարող է ակնկալվել դպրոցի կանոններին ենթարկվելու տարբեր մակարդակներ:

[50] Այս հարցը վերցված է հետևյալ աշխատությունից՝ Sapon-Shevin, M. (1999) Because we can change the world: a practical guide to building co-operative, inclusive classroom communities, Boston, Allyn and Bacon.

ժթ) Արդյո՞ք երեխաները դիմում են դպրոցի աշխատակազմի անդամներին, երբ իրենք (կամ մեկ այլ երեխա) օգնության կարիք ունենան:

ի) Արդյո՞ք երեխաներն զգում են, որ իրենց միջև վեճերն արդարացիորեն են կարգավորվում:

իա) Արդյո՞ք երեխաներին բացատրվում է, թե ինչպես պետք է կարգավորել միմյանց միջև ծագած վեճերը:

իբ) Արդյո՞ք երեխաները սովորում են պաշտպանել նրանց, ում հանդեպ անարդար են վարվել այլ երեխաներ կամ մեծահասակներ:

իգ) _____

իդ) _____

իե) _____

Ա1.4 Աշխատակազմն ու երեխաները հարգում են միմյանց:

Ա2.9 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը:

Գ2.8 Կարգապահությունը հիմնված է փոխադարձ հարգանքի վրա:

ա) Արդյո՞ք բոլորին դիմում են հարգանքով՝ այն անունով, որ իրենք են նախընտրել:

բ) Արդյո՞ք բոլորին դիմելիս անունները ճիշտ են արտասանում:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները երեխաներին դիտում են որպես իրենց հավասար մարդկային էակներ, այլ ոչ թե որպես իրենցից ցածր արարածներ:

դ) Արդյո՞ք երեխաները դիտում են դպրոցի աշխատակիցներին որպես իրենց հավասար էակներ, այլ ոչ թե՝ թշնամիներ կամ հակառակորդներ:

ե) Արդյո՞ք երեխաներն ու մեծահասակները հարգում են միմյանց անձնական կյանքի գաղտնիության անհրաժեշտությունը:

զ) Արդյո՞ք երեխաներն ու մեծահասակները հարգանքով են վերաբերվում միմյանց ունեցվածքին կամ իրերին:

է) Արդյո՞ք որոշ աշխատկիցներ ճանաչում են յուրաքանչյուր սովորողի:

ը) Արդյո՞ք երեխաները զգում են, որ ուսուցիչներն ու աշխատակիցները սիրում են իրենց:

թ) Արդյո՞ք երեխաները հարգանքով են վերաբերվում բոլոր աշխատակիցներին՝ անկախ դպրոցում զբաղեցրած նրանց պաշտոններից:

ժ) Արդյո՞ք երեխաներն օգնում են դպրոցի աշխատակազմին, երբ իրենց խնդրում են:

ժա) Արդյո՞ք երեխաներն առաջարկում են իրենց օգնությունը, երբ զգում են դրա անհրաժեշտությունը:

ժբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները հոգ են տանում դպրոցի ֆիզիկական միջավայրի մասին:

ժգ) Արդյո՞ք երեխաների ու մեծահասակների համար անհրաժեշտ հիմնական հարմարությունները, ինչպես, օրինակ, սանհանգույցներն ու կողպվող պահարանները լավ վիճակում են գտնվում:

ժդ) Արդյո՞ք երեխաները գիտեն, թե ում դիմել խնդրի առկայության դեպքում:

ժե) Արդյո՞ք երեխաները վստահ են, որ իրենց խնդրի բարձրաձայնման դեպքում դրան լուրջ մոտեցում կցուցաբերվի:

ժզ) Արդյո՞ք երեխաները վստահ են, որ իրենց կօգնեն դժվարություններ ունենալու դեպքում:

ժէ) Արդյո՞ք դպրոցում բոլորն են համարվում սովորող կամ ուսուցիչ:

ժը) Արդյո՞ք հավուր պատշաճի արձագանքում են նշանակալի իրադարձություններին և դեպքերին, ինչպիսիք են, օրինակ, ծնունդները, ամուսնությունները, մահերը և հիվանդությունները, ամուսնալուծությունները և այլն

ժթ) Արդյո՞ք ընդունված է այն գաղափարը, որ բոլորը՝ անխտիր, և ոչ միայն «էթնիկ փոքրամասնությունները» ունեն մշակույթ կամ մշակույթներ:

ի) Արդյո՞ք ընդունված է այն գաղափարը, որ բոլոր մշակույթներն ու կրոնները ներառում են տեսակետների ու ավանդույթների պահպանման լայն շրջանակ:

իա) Արդյո՞ք երեխաներն ու մեծահասակները որևէ օր իրենց վիրավորանքի, ճնշվածության կամ զայրույթի մասին արտահայտվելիս կարող են աջակցություն ակնկալել:

իբ) Արդյո՞ք զայրույթի կամ հիասթափության դեպքում դպրոցի աշխատակիցները շարունակում են հարգանքով խոսել երեխաների հետ:

իգ) Արդյո՞ք ընդունված է այլ անձանց նկատմամբ անձնական բացասական զգացումներն արտահայտել առանձին՝ որպես դրանց հաղթահարման միջոց:

իդ) Արդյո՞ք աշխատակազմն ու երեխաները հարգում են մասնավոր զրույցների գաղտնիությունը, եթե դրանք չեն վնասում այլ անձանց:

իե) _____

իզ) _____

իէ) _____

Ա1.5 Աշխատակազմը եւ ծնողները/խնամատարները համագործակցում են միմյանց հետ:

Բ1.1 Դպրոցը վարում է մասնակցային զարգացման գործընթաց:
Բաժին Գ1 (Փոխադարձ կապերը՝ տեղական և գլոբալ մակարդակներում):

ա) Արդյո՞ք ծնողները/խնամատարները և դպրոցի աշխատակազմի անդամները հարգում են միմյանց՝ անկախ դասային պատկանելությունից կամ կարգավիճակից:

բ) Արդյո՞ք բոլոր ծնողները/խնամատարներն զգում են, որ իրենց երեխաները գնահատվում են դպրոցի կողմից:

գ) Արդյո՞ք աշխատակիցներն զգում են, որ ծնողները/խնամատարները գնահատում են իրենց աշխատանքը:

դ) Արդյո՞ք ծնողները/խնամատարները լավ են տեղեկացված դպրոցի անցուդարձի մասին:

ե) Արդյո՞ք ծնողները դպրոցում խիստ մտահոգող խնդրի ծագման դեպքում անհապաղ և հստակ տեղեկություն ստանում են:

զ) Արդյո՞ք ծնողներին/խնամատարներին տրամադրվում է դպրոցում ներգրավվելու հնարավորությունների լայն շրջանակ:

է) Արդյո՞ք դպրոցի համար ծնողների/խնամատարների կողմից արված տարբեր ներդրումները հավասարապես բարձր են գնահատվում:

ը) Արդյո՞ք աշխատակիցները օգտագործում են ծնող լինելու իրենց փորձը՝ դպրոցի երեխաների ծնողների/խնամատարների հետ իրենց հարաբերությունները բարելավելու նպատակով:

թ) Արդյո՞ք աշխատակիցները փորձում են երեխաների խնդիրները չկապել «միածնող ընտանիքի» կամ «տանիքի կորստի» ապրումների հետ:

ժ) Արդյո՞ք աշխատակիցները գնահատում են այն աջակցությունը, որ երեխաներն ստանում են իրենց ծնողներից/խնամատարներից՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք մշտապես ապրում են երկու ծնողների հետ իրենց տանը, թե ոչ:

ժա) Արդյո՞ք աշխատակիցները տեղեկացված են բազմազավակ ընտանիքների մասին:

ժբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և ծնողները/խնամատարները խոսում են այն մասին, թե ինչպես են նախընտրում, որ իրենց դիմեն:

ժգ) Արդյո՞ք աշխատակիցները խուսափում են երեխաների ծնողներին անդրադառնալուց կամ նրանց ընտանիքների մասին խոսելուց:

ժդ) Արդյո՞ք ծնողները/խնամատարները հստակեցնում են, թե ում հետ կարելի է քննարկել երեխային առնչվող մտահոգությունները:

ժե) Արդյո՞ք ծնողները/խնամատարներն զգում են, որ իրենց մտահոգություններին լուրջ մոտեցում է ցուցաբերվում:

ժզ) Արդյո՞ք բոլոր ծնողներին/խնամատարներին հրավիրում են երեխաների կրթական հարցերի քննարկումներին:

ժէ) Արդյո՞ք ողջունելի է երեխայի ընտանիքի բոլոր անդամների մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին:

ժը) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները երեխայի բողոքների դեպքում խուսափում են կապ հաստատելուց նրա ծնողների/խնամատարներին հետ:

ժթ) Արդյո՞ք երեխաների ընտանիքների և դպրոցների միջև գոյություն ունի տեղեկատվության կանոնավոր փոխանակում:

ի) Արդյո՞ք գոյություն ունի որևէ վայր կամ անկյուն, որտեղ ծնողները/խնամատարները կարող են հանդիպել, պատրաստել մի գավաթ թեյ/սուրճ կամ սառը ըմպելիք և փոխանակել իրենց մտքերը:

իա) Արդյո՞ք ծնողները/խնամատարները խրախուսում են այլ ծնողների/խնամատարների մասնակցությունը դպրոցի գործունեությանը, որպեսզի նրանցից ոչ ոք իրեն լքված կամ մեկուսացած չզգա:

իբ) Արդյո՞ք ծնողները հանդիպումների ժամանակ կիսվում են երեխաների վերաբերյալ իրենց տեղեկությամբ, թե ծնողներին միայն աշխատակազմից են տեղեկություն փոխանցում:

իգ) Արդյո՞ք ծնողները/խնամատարները հստակորեն ներկայացնում են, թե ինչպես կարող են իրենք տանը աջակցել երեխաների ուսուցմանը:

իդ) Արդյո՞ք աշխատակիցները փորձում են խթանել ծնողների/խնամատարների ներգրավվածությունը՝ տարբեր ժամերի և տարբեր վայրերում նրանց հետ հանդիպումներ անցկացնելով:

իե) Արդյո՞ք աշխատակիցները մտավախություն ունեն, որ ծնողները/խնամատարները կարող են այցելել դպրոց և ուսուցիչներին:

իզ) Արդյո՞ք աշխատակիցները փորձում են հաղթահարել իրենցից բարձր կարգավիճակ ունեցող կամ ավելի բանիմաց ծնողների/խնամատարների նկատմամբ ընկճվածության զգացումը:

իէ) _____

իը) _____

իթ) _____

Ա1.6 Աշխատակազմը եւ ղեկավարներն ապահովում են արդյունավետ համատեղ աշխատանք:

Ա1.2 Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:

Ա1.5 Աշխատակազմը և ծնողները/խնամատարները համագործակցում են միմյանց հետ:

ա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը հանդիպում և ծանոթանում է վերադաս ղեկավարների հետ:

բ) Արդյո՞ք դպրոցի ցուցատախտակները ներկայացնում են վերադաս ղեկավարների պատկերները և նրանց աշխատանքային ծրագրերը:

գ) Արդյո՞ք վերադաս ղեկավարներն ստանում են անհրաժեշտ տեղեկատվություն՝ իրենց դերը հասկանալու և աշխատանքը կատարելու համար:

դ) Արդյո՞ք վերադաս ղեկավարները պատկերացում կազմում են դպրոցի կազմակերպչական կառուցվածքի վերաբերյալ:

ե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և վերադաս ղեկավարները տեղյակ են իրենց պարտականություններին և լիազորություններին և համաձա՞յն են հետևել դրանց:

զ) Արդյո՞ք նոր վերադաս ղեկավարները ծանոթանում են դպրոցին, ինչպե՞ս է նրա գործունեությունն ապահովվում երեխաների մասնակցությամբ ու ամբողջ աշխատակազմի կողմից:

է) Արդյո՞ք վերադաս ղեկավարներն արտացոլում են դպրոցի համայնքի կազմը:

ը) Արդյո՞ք վերադաս ղեկավարները փորձում են անտեսել իրենց ու աշխատակազմի միջև գոյություն ունեցող կարգավիճակի տարբերությունները:

թ) Արդյո՞ք բոլոր վերադաս ղեկավարների աշխատանքը գնահատվում է հավասարապես:

ժ) Արդյո՞ք ղեկավարների հանդիպումները լավ են կազմակերպված, տեղի ունենում են ըստ համաձայնեցված ժամանակացույցի՝ անդրադառնալով օրակարգում նշված բոլոր հարցերին ու լրացուցիչ այլ խնդիրների:

ժա) Արդյո՞ք ղեկավարների հանդիպումներն անցնում են հաճելի մթնոլորտում:

ժբ) Արդյո՞ք վերադաս ղեկավարները խոսում են իրենց աշխատանքային բավարարվածությունից՝ նպատակ ունենալով ավելացնել ղեկավար դառնալու ցանկություն ունեցող անձանց թիվը:

ժգ) Արդյո՞ք աշխատակազմի անդամները կարող են բարձրաձայնել իրենց հուզող խնդիրները բավարար ժամանակի դեպքում, նույնիսկ եթե դրանք ընդգրկված չեն օրակարգում:

ժդ) Արդյո՞ք վերադաս ղեկավարների հետ հանդիպումների ժամանակ մատուցվում են սնունդ ու զովացուցիչ ըմպելիք նրանց համար, ովքեր գալիս են հանդիպման քաղցած ու ծարավ:

ժե) Արդյո՞ք խրախուսվում է դպրոցի աշխատակազմի բոլոր անդամների մասնակցությունը վերադաս ղեկավարների հետ հանդիպումներին:

ժզ) Արդյո՞ք այն ղեկավարները, որոնք ներառված են նաև դպրոցի աշխատակազմում, օգտվում են իրենց անկախ ձայնն արտահայտելու իրավունքից:

ժէ) Արդյո՞ք որոշումները անհրաժեշտության դեպքում ընդունվում են գաղտնի քվեարկությամբ:

ժը) Արդյո՞ք վերադաս ղեկավարներն ունեն դպրոց այցելելու և դպրոցի կյանքին մասնակցելու հաստատված կարգ:

ժթ) Արդյո՞ք վերադաս ղեկավարները փորձում են ծանոթանալ դպրոցի երեխաների հետ:

ի) Արդյո՞ք վերադաս ղեկավարների հմտություններն ու գիտելիքները հայտնի են և գնահատվում են:

իա) Արդյո՞ք բոլոր վերադաս ղեկավարները ներգրավված են դպրոցի քաղաքականության մշակման և վերանայման աշխատանքներում:

իբ) Արդյո՞ք վերադաս ղեկավարներին առաջարկվում է դպրոցի աշխատակազմի հետ օգտվել մասնագիտական զարգացման հնարավորություններից:

իգ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և վերադասը կիսում են միևնույն մոտեցումն առ այն, թե ինչպես դպրոցը պետք է արձագանքի երեխաների խնդիրներին և տրամադրի աջակցություն:

իդ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և վերադաս ղեկավարները նպատակ ունեն նվազագույնի հասցնելու երեխաների դասակարգումը՝ որպես «հատուկ կրթական կարիքներ ունեցողի»:

իե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և ղեկավարները օգնում են միմյանց հաղթահարելու իրենցում նկատվող խտրական հայացքների ազդեցությունը:

իզ) _____

իէ) _____

իը) _____

Ա1.7 Դպրոցը ժողովրդավարական քաղաքացիության մոդել է:

Բ1.1 Դպրոցը վարում է մասնակցային զարգացման գործընթաց:

Գ1.13 Երեխաները սովորում են էթիկայի կանոնների, իշխանության և կառավարման մարմինների մասին:

ա) Արդյո՞ք բոլորը սովորում են լավ հարաբերություններ ձևավորել միմյանց հետ և լինել լավ քաղաքացիներ՝ դպրոցում լավ վարք դրսևորելով:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները, երեխաները և նրանց ընտանիքների անդամները գիտակցաբար են նպաստում մասնակցության և համագործակցության մշակույթի ձևավորմանը:

գ) Արդյո՞ք երեխաները միմյանցից, ինչպես նաև մեծահասակներից սովորում են լինել ակտիվ քաղաքացիներ:

դ) Արդյո՞ք բոլոր աշխատակիցները ողջունում են դպրոցում երեխաների ու մեծահասակների ակտիվ մասնակցությունը:

ե) Արդյո՞ք երեխաների ու մեծահասակների ակտիվ մասնակցությունն ակնհայտ է դասասենյակներում, ուսուցչանոցներում, դպրոցի խաղահրապարակում, դասերից առաջ և հետո, ներկայացված է ցուցատախտակների բովանդակության մեջ և դրսևորվում է դպրոցական միջոցառումներին:

զ) Արդյո՞ք երեխաներն ու մեծահասակները միանշանակ են ընկալում ժողովրդավարության գաղափարների իմաստը:

գ) Արդյո՞ք երեխաները և մեծահասակները դիտարկում են այն հարցը, թե որքանով է իրենց դպրոցը խրախուսում ժողովրդավարական մասնակցությունը:

ը) Արդյո՞ք դպրոցն ունի հանրային ֆորումներ, որտեղ մեծահասակներն ու երեխաները կարող են պարբերաբար հաղորդակցվել իրենց գաղափարներով:

թ) Արդյո՞ք դպրոցը տոնում է իրավունքների ու ժողովրդավարության ճանաչման առաջընթացը, այդ թվում՝ իր պատմության մեջ տեղի ունեցող հիմնական զարգացումները:

ժ) Արդյո՞ք կան սահմանված ժամեր, երբ տարբեր դասարաններ և ամբողջ դպրոցը պարբերաբար քվեարկություններ են կազմակերպում դպրոցի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի շուրջ:

ժա) Արդյո՞ք բոլոր երեխաները հնարավորություն ունեն անդամակցելու դպրոցի աշակերտական խորհրդին և Երեխաների խորհրդարանին:

ժբ) Արդյո՞ք բոլոր երեխաները մասնակցում են դպրոցի զարգացմանը նպաստող աշխատանքներին:

Աշխատանքները կարող են ներառել հետեւյալը.

Համայնքային այցելություններ

Հողի պարարտացում

Սննդի պատրաստում, մատուցում, մաքրում

Արվեստի գործերի ստեղծում

Դպրոցին պատկանող հավաքածուների ցուցահանդեսների կազմակերպում

Դպրոցի խաղահրապարակների ստեղծում և խնամում

Տարածքում հայտնվող կենդանիների և թռչունների արձանագրում

Դպրոցի պատմության փաստագրում

Կենսաբազմազանության աճի խթանում

Սպորտային մարզումների կազմակերպում

Աշխատանքի ընդունման հարցազրույցների կազմակերպում

Լեզվի դեսպաններ

Գրադարանի ընթացիկ պահպանման աշխատանքներ

Դպրոցի կենդանիների խնամք

Դպրոցի լճակի խնամք

Էներգիայի օգտագործման մշտադիտարկում

Ցանցային տեխնիկներ

Դպրոցի փոստաշրջանառության կազմակերպում

Ներկայացումների կազմակերպում

Արվեստի գործերի ստեղծում և դասավանդում

Դպրոցի թերթի խմբագրության կազմակերպում/հոդվածների պատրաստում

Համայնքի ժամանցի կազմակերպում

Բարձրաձայն ընթերցանություն այլ անձանց համար

Վերամշակման աշխատանքների կազմակերպում

Վեճերի կարգավորում

Կորցրած իրերը վերադարձնելու աշխատանքների կազմակերպում

Դպրոցի այգու խնամքի աշխատանքներ

Դպրոցի էքսկուրսավարներ

Բեմահարթակի կառավարում

Ներկայացումների բեմադրում

Շախմատի դասեր

Ճառատունկ

Թափոնների կրճատում, օրինակ, ընդմիջման ճաշի ժամերին

Նոր աշխատակիցների, այցելուների ընդունելության կազմակերպում

Պոեզիա, դպրոցի ժամանակագրության պատրաստում

և այլն, և այլն, և այլն

ժգ) _____

ժդ) _____

Ա1.8 Դպրոցը արժեւորում է համայն մարդկության միջեւ փոխհարաբերությունների ըմբռնումը:

Բաժին Գ1 (Փոխադարձ կապերը՝ տեղական և աշխարհի մակարդակներում):

Գ2.6 Դասերը զարգացնում են մարդկանց նմանությունների ու տարբերությունների ըմբռնումը:

ա) Արդյո՞ք մեծահասակների ու երեխաների միջև դպրոցում և այլ անձանց հետ ամբողջ աշխարհում ձևավորվող հարաբերությունները կարող են լինել որպես ելակետ՝ գլոբալ կապերի մասին պատկերացում կազմելու համար:

բ) Արդյո՞ք դպրոցի տեղակայության և իր տարածաշրջանի, երկրի ու աշխարհի այլ վայրերի հետ կապերը դիտարկվում են պատմական և աշխարհագրական տեսանկյուններից և ներկայացված են դպրոցի ցուցատախտակներում:

գ) Արդյո՞ք երեխաները գաղափար կազմում են այն մասին, թե ինչպես են ժամանակի ընթացքում աշխարհում փոփոխվում մարդկանց միջև փոխհարաբերությունները:

դ) Արդյո՞ք երեխաները տեղյակ են, թե ինչպես է աշխարհի մի ծայրում ապրող մարդկանց կյանքն ազդում աշխարհի մեկ այլ հատվածում ապրող մարդկանց վրա:

ե) Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են համաշխարհային այն ազդեցությունները, որոնք կրում են իրենց ստացած գիտելիքները, արտասանած բառերն ու խոսքերը, արվեստի տեսած գործերը, լսած երաժշտությունը, սպառած էներգիան, օգտագործած սնունդը, ընթերցած թերթերն ու գրքերը, դիտած սպորտային միջոցառումները, խաղացած խաղերը և այլն:

զ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները ցույց են տալիս, թե ինչպես է ժամանակակից աշխարհում քաղաքացի լինելը ներազդում իրենց առօրյայի վրա:

է) Արդյո՞ք երեխաները լավ հարևանություն անում են այն մարդկանց հետ, որոնք ժամանում են իրենց երկիր աշխարհի այլ հատվածից:

ը) Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են երկրների փոխհարաբերությունների կառուցողական ու ճնշող բնույթը:

թ) Արդյո՞ք երեխաներին օգնում են հասկանալու ռասայականության և այլատյացության իմաստը, և թե ինչպես է այն ազդում մարդկանց ու երկրների նկատմամբ վերաբերմունքի վրա:

ժ) Արդյո՞ք երեխաները տեղեկացված են երկրների առևտրային փոխհարաբերությունների մասին:

ժա) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները ուսումնասիրում են գնումներ կատարելու էթիկական սկզբունքները:

ժբ) Արդյո՞ք դպրոցն իր գնումների և բանկային գործունեության մեջ կիրառում է արդար առևտրի սկզբունքը:

ժգ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ են լինում տնտեսապես աղքատ երկրներին տրամադրվող վարկերն ու օգնությունները:

ժդ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքանով են երկրների փոխհարաբերությունները հիմնված հավասարության, մասնակցության և բռնության բացառման արժեքների պահպանման վրա:

ժե) Արդյո՞ք երեխաները սովորում են իրենց երկրում սպառազինության առևտրի նշանակության մասին:

ժզ) Արդյո՞ք երեխաները պատկերացում ունեն, թե ինչպիսի դրական և/կամ բացասական ազդեցություն են գործում կորպորացիաների և բանկերի գործունեությունն ու կառավարությունների գործողությունները մարդկանց կյանքի վրա ամբողջ աշխարհում:

ժէ) Արդյո՞ք դպրոցը համագործակցում է տնտեսապես աղքատ որևէ երկրի դպրոցներից մեկի հետ:

ժը) Արդյո՞ք դպրոցն ապահովում է, որ գործընկեր դպրոցի հետ մեծահասակների և երեխաների փոխհարաբերությունները հիմնված լինեն հավասարության, հարգանքի և երկխոսության զարգացման սկզբունքների, այլ ոչ թե բարեգործության վրա:

ժթ) Արդյո՞ք դպրոցը համագործակցում է իր երկրի մեկ այլ՝ քաղաքային կամ գյուղական բնակավայրի դպրոցի հետ:

ի) _____

իա) _____

իբ) _____

Ա1.9 Չափահասները եւ երեխաները պատշաճորեն են արձագանքում մարդկանց սեռային պատկանելությանը եւ սեռերի հավասարությանը:

Ա2.9 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը:

Գ1.6 Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության ու փոխհարաբերությունների մասին:

ա) Արդյո՞ք մեծահասակներն ու երեխաներն ընդունում են, որ ոչ բոլորն են իրենց անձն ընկալում որպես կին կամ տղամարդ:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները կարողանում են ապահովել երեխաների ազատությունը՝ իրենց գենդերային պատկանելությունը հնարավորինս անկաշկանդ զարգացնելու:

գ) Արդյո՞ք մեծահասակները քննարկում են, թե ինչ կարծրատիպեր ունեն գենդերային դերերի տեսանկյունից, և թե ինչպես է նման վերաբերմունքը սահմանափակում երեխաների՝ գենդերային պատկանելության արտահայտման միջոցները:

դ) Արդյո՞ք մեծահասակներն ու երեխաները խուսափում են մարդկանց ընդգծված դիմելաձևերից՝ ըստ սեռային պատկանելության, օրինակ, տղային անվանել «ղզիկ» և այլն:

ե) Արդյո՞ք մեծահասակներն ու երեխաները փորձում են ուղիներ գտնել՝ մեղմելու տղաների կողմից դրսևորվող հոռի վարքագիծը կամ վատ առաջադիմությունը՝ որպես բրուտալության արտահայտչամիջոց:

զ) Արդյո՞ք մեծահասակներն ու երեխաներն ունեն հատուկ բառապաշար սեռի, տղամարդկության և կանացիության մասին խոսելու համար:

է) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները գրանցամատյանները վարում են երեխաների անունների այբբենական ցուցակով՝ տղաների ու աղջիկների համար առանձին ցուցակներ ունենալու փոխարեն:

ը) Արդյո՞ք երեխաները՝ աղջիկներն ու տղաները, խառը խմբերով հնարավորություն ունեն մասնակցելու սպորտային միջոցառումներին և ֆիզիկական դաստիարակության դասերին:

թ) Արդյո՞ք մեծահասակներն ու երեխաները վիճարկում են այն գաղափարը, որ տղամարդիկ ու կանայք պետք է ունենան տարբեր դերեր դպրոցում, այլ աշխատանքներում, երեխաներին խնամելու հարցերում կամ կենցաղային գործերում:

ժ) Արդյո՞ք այն աշխատանքը, որ մեծահասակներն ու երեխաները կատարում են որպես խնամք, գնահատվում է հավասարապես՝ անկախ կատարողի սեռից:

ժա) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները փոխանցում են բոլոր երեխաներին (անկախ սեռից) այն գաղափարը, որ վաղ մանկական տարիքի երեխաների ծնող/խնամատար լինելը հաճախ մարդու կյանքում առավել կարևոր և հաճելի զբաղմունքներից մեկն է:

ժբ) Արդյո՞ք նախադպրոցական հաստատություններում, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում ակտիվորեն խրախուսվում է տղամարդկանց դերը մի շարք գործողություններում:

ժգ) Արդյո՞ք դպրոցը փորձում է դպրոցական համազգեստի պարագայում չթելադրել գենդերային կարծրատիպային ոճեր:

ժդ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ու երեխաները քննարկում են տղամարդկանց ու կանանց պատշաճ հագնվելու նորմերը:

ժե) Արդյո՞ք խրախուսվում է, որ երեխաները դպրոցում կրեն այնպիսի հագուստ ու կոշիկներ, որոնք չեն կաշկանդում նրանց շարժումները:

ժզ) Արդյո՞ք երեխաները սովորում են, որ մի սեռը մյուսից բարձր դասելը խրախուսելի չէ:

ժէ) _____

ժը) _____

ժթ) _____

Ա1.10 Դպրոցը եւ տեղական համայնքները նպաստում են փոխադարձ զարգացմանը:

Բաժին Գ1 (Փոխադարձ կապերը տեղական ու գլոբալ մակարդակներում):

Գ2.14Դպրոցը տեղյակ է իր շրջակայքի ռեսուրսների մասին և օգտվում է դրանցից:

ա) Արդյո՞ք դպրոցն զբաղվում է այնպիսի գործունեությամբ, որ ներգրավում է իր հարակից համայնքը, այդ թվում՝ տարեցներին, հաշմանդամներին, էթնիկ խմբերին և այլն:

բ) Արդյո՞ք դպրոցը հաշվի առնում է համայնքի բնակչության բազմազան փորձը՝ դպրոցի ուսումնական գործունեությունն ապահովելու համար:

գ) Արդյո՞ք դպրոցի թերթը լուսաբանում է համայնքի բնակչությանն առնչվող տեղեկությունները, տեղական միջոցառումներն ու բիզնես նորությունները:

դ) Արդյո՞ք դպրոցը վարում է տոնակատարությունների ու հատուկ օրերի կամ շաբաթվա օրացույց և կիսում է այն տեղական համայնքների հետ:

ե) Արդյո՞ք տեղական համայնքները հավասարապես մասնակցություն ունեն դպրոցի կյանքում՝ անկախ իրենց դասակարգից, կրոնից կամ էթնիկական պատկանելությունից:

զ) Արդյո՞ք տեղական համայնքների բնակիչներն զգում են, որ դպրոցը պատկանում է իրենց, նույնիսկ եթե իրենք չունեն դպրոցահասակ երեխաներ:

է) Արդյո՞ք դպրոցը կազմակերպում է երաժշտական, թատերական, պարային միջոցառումներ և ցուցահանդեսներ շրջակա համայնքների բնակիչների համար:

ը) Արդյո՞ք դպրոցը կազմակերպում է արվեստի, լեզվի, գրագիտության, բնագիտության և այլ դասընթացներ երեխաների ծնողների ու համայնքի բնակիչների համար:

թ) Արդյո՞ք դպրոցը մասնակցում է տեղական համայնքների կողմից կազմակերպված միջոցառումներին:

ժ) Արդյո՞ք դպրոցը տեղյակ է համայնքային զարգացման ընթացիկ ծրագրերին, որոնց կարող է նպաստել իր մասնակցությամբ:

ժա) Արդյո՞ք դպրոցը խորհրդակցում է տեղական համայնքների, այդ թվում՝ ավագանու, համայնքի և երիտասարդ աշխատողների, ոստիկանության և տեղական բարեգործական կազմակերպությունների հետ համայնքի զարգացման ծրագրերին իր մասնակցության շուրջ:

ժբ) Արդյո՞ք դպրոցը համագործակցում է տեղական համայնքների բնակիչներին առողջապահական և սոցիալական աշխատանքի ծառայությունների տրամադրման շրջանակներում:

ժգ) Արդյո՞ք տեղական համայնքների բնակիչները դպրոցի աշխատակազմի և երեխաների հետ օգտվում են դպրոցի այնպիսի հարմարություններից, ինչպիսիք են գրադարանը, դահլիճն ու սրճարանը:

ժդ) Արդյո՞ք դպրոցի ճաշարանը օգտվում է տեղական համայնքների գյուղատնտեսների և մրգեր ու բանջարեղեն մատակարարողների աշխատանքներից:

ժե) Արդյո՞ք տեղական համայնքների բոլոր բաղադրիչները դիտվում են որպես ռեսուրս դպրոցի համար:

ժզ) Արդյո՞ք տեղական համայնքը դրական կարծիք ունի դպրոցի մասին:

ժէ) Արդյո՞ք դպրոցը դրական կարծիք ունի տեղական համայնքի մասին:

ժը) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է աշխատանքի հայտերի ընդունումը տեղական համայնքների բնակիչներից:

ժթ) Արդյո՞ք դպրոցն աջակցում է շրջակա միջավայրի, օրինակ, առվակների, գետերի և ջրանցքների բարելավման ու պահպանման ծրագրերին:

ի) Արդյո՞ք դպրոցը մասնակցում է իր հարակից տարածքը աղբից ու թափոններից մաքրելու աշխատանքներին:

իա) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է ծառատունկը:

իբ) Արդյո՞ք դպրոցը մասնակցում է տեղական կանաչ տարածքների ընդլայնման աշխատանքներին՝ ծառեր տնկելով և սերմեր ցանելով:

իգ) _____

իդ) _____

իե) _____

Ա1.11 Աշխատակազմը կապեր է ստեղծում դպրոցում տեղի ունեցած իրադարձությունների եւ երեխաների ընտանեկան կյանքի միջեւ:

Ա1.5 Աշխատակազմը և ծնողները/խնամատարները համագործակցում են միմյանց հետ:

Բ1.7 Բոլոր նոր ընդունված երեխաներն ստանում են աջակցություն ադապտացման շրջանում: (Փոխադարձ կապերը՝ տեղական և գլոբալ մակարդակներում):

Գ2.4 Երեխաներն ակտիվորեն մասնակցում են իրենց ուսուցման գործընթացին:

ա) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները տեղյակ են երեխաների ընտանեկան մշակույթին և ընտանեկան հանգամանքներին:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները դիտարկում են այն հանգամանքը, որ որոշ երեխաներ կարող են իրենց ավելի անկաշկանդ զգալ դպրոցում, քան մյուսները:

գ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները գիտակցում են, որ մարդիկ կարող են շատ վատ զգալ, երբ իրենց մշակույթն ու ինքնությունը չեն հարգում:

դ) Արդյո՞ք մեծահասակներն ապահովում են, որ բոլոր երեխաները տեսնեն իրենց ծագման արտացոլումը դպրոցում, ուսումնական նյութերում և ցուցատախտակներում, ինչպես նաև ուսուցման գործընթացում՝ իրենց հայրենի երկրին առնչվող հղումներում:

ե) Արդյո՞ք դպրոցն ընդունում է, որ որոշ երեխաների համար կարող է ավելի ապահով ապաստարան թվալ, քան նրանց տունը:

զ) Արդյո՞ք մեծահասակներն ընդունում են, որ երեխաները կարող են դրսևորել այնպիսի հմտություններ ու հետաքրքրություններ տանը, որոնք ցույց չեն տալիս դպրոցում, ինչպես օրինակ, խոսել, կատակել, խնամել, կառավարել, սնունդ պատրաստել, կարդալ, հաշվել, ձևավորել, պատրաստել, հավաքել, բույսեր աճեցնել և այլն:

է) Արդյո՞ք մեծահասակները փորձում են երեխաների համար ստեղծել այնպիսի հնարավորություններ, որ վերջիններս ուսուցման գործընթացում և դպրոցում ձևավորվող հարաբերություններում ցույց տան այն բոլոր գիտելիքներն ու հմտությունները, որոնք ցուցաբերում են տանը:

ը) Արդյո՞ք մեծահասակները և երեխաներն ընդունում են, որ մեկ այլ անձի ճանաչելը պահանջում է երկխոսություն նրա հետ, ոչ թե մանրամասն նախնական գիտելիքներ վերջինիս մշակութային կամ ընտանեկան առանձնահատուկ իրավիճակի մասին:

ը) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը քննարկում է այն միտումը, որ ուսուցման գործընթացը սովորաբար հարմարեցվում է այն երեխաների կարիքներին, որոնք ունեն նույն ծագումը, ինչ իրենք:

ժ) Արդյո՞ք մեկ այլ համայնքի դպրոցի աշխատակազմը հասկանում է, որ իրենք կարող են դիտվել որպես համայնքի այցելուներ տեղական բնակչության մեծահասակների ու երեխաների կողմից:

ժա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է ենթադրություններ անելուց երեխայի գործողությունների ու համոզմունքների մասին՝ ելնելով նրա ժառանգականությունից:

ժբ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները գիտակցում են այն հնարավոր անհանգստությունն ու անհարմարությունները, որ կարող են ապրել իրենց ընտանիքից և/կամ ընկերներից հեռու գտնվող անձինք:

ժգ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները գիտակցում են, որ իրենց դպրոց տեղափոխված երեխաները, ինչպես, օրինակ, փախստականները և ապաստան հայցողները, կարող են մշակութային մեկուսացում զգալ:

ժդ) Արդյո՞ք դպրոցի մշակույթն ընդունում է երեխաների, նրանց ծնողների/խնամատարների և դպրոցի աշխատակազմի շրջանում առկա անհատական առանձնահատկությունները:

ժե) Արդյո՞ք երեխաների կյանքում տեղի ունեցող նշանակալի իրադարձությունները նշվում են իրենց մշակութային նորմերին համապատասխան:

ժզ) Արդյո՞ք դպրոցում հարգում են ցնցուղ ընդունելիս և լողալիս համեստ հագուստին առնչվող մշակութային նորմերն ու անձնական նախապատվությունները:

ժէ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խրախուսում է երեխաների մուտքը իրենց թաղամասային ակումբներ և մասնակցությունը տեղական միջոցառումներին, նույնիսկ եթե դպրոցը գտնվում է նրանց տան շրջակայքից դուրս:

ժը) _____

ժթ) _____

ի) _____

Ա2. Ներառական արժեքների սահմանում

Ա2.1 Դպրոցը ձեւավորում ու զարգացնում է համընդհանուր ներառական արժեքներ:

Կապված է մյուս բոլոր ցուցիչների հետ:

ա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը, ղեկավարները, ծնողները/խնամատարները և երեխաները ժամանակ հատկացնում են արժեքների, գործողությունների հետևանքների, իրենց իսկ և տարբեր մարդկանց արժեքների բնույթի ու տարբերությունների մասին զրուցելու համար:

բ) Արդյո՞ք արժեքներն ընկալվում են որպես գործողությունների, այլ ոչ թե խոսքերի դրսևորում:

գ) Արդյո՞ք դպրոցում բոլորն են ընդունում բոլոր մարդկանց որպես հավասար արժեքների և նպաստում են բոլորի մասնակցության ապահովմանը:

դ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները վերլուծում են դպրոցում կատարած իրենց աշխատանքի ու վարքագծի հիմքում ընկած արժեքները:

ե) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները խուսափում են ենթադրելուց, որ համայնքի բոլոր անդամները կիսում են նույն արժեքները:

զ) Արդյո՞ք բոլորը հասկանում են, որ իրենց գործողությունների հիմքում ընկած արժեքների մասին անկեղծորեն արտահայտվելու համար անհրաժեշտ է փորձ ու վստահություն:

է) Արդյո՞ք բոլորը հասկանում են, որ արժեքների շուրջ համաձայնությունը, որպես կանոն, մասնակի է, քանի որ տարբեր արժեքների, ինչպես, օրինակ, մասնակցության ու հավասարության վերաբերյալ կարծիքների տարբերությունները կարող են բացահայտվել քննարկումների ընթացքում:

ը) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը, երեխաները, ծնողները/խնամատարները և վերադաս ղեկավարները, ընդհանուր առմամբ, համաձայն են այն արժեհամակարգի շուրջ, որ կարող է դրվել դպրոցում իրականացվող գործողությունների հիմքում:

թ) Արդյո՞ք դպրոցը օգտագործում է արժեքների համաձայնեցված համակարգը՝ այլ արժեքների համաձայն գործելու արտաքին ճնշումներին դիմակայելու համար:

ժ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը վերանայում է իր փորձը՝ համաձայնեցված արժեքների լույսի ներքո, և գործելակերպում առաջարկում փոփոխություններ, որոնք չեն բխում այդ արժեքներից:

ժա) Արդյո՞ք բոլորը հասկանում են, որ համընդհանուր արժեքների կիրառումը կարող է հանգեցնել շահերի բախման, օրինակ, երբ մի երեխայի մասնակցությունը կարող է խանգարել մեկ այլ երեխայի:

ժբ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները ուշադրություն դարձնում են դպրոցի ներսում և դրա սահմաններից դուրս իրականացվող այն գործողություններին, որոնք անհամատեղելի են արժեքների համաձայնեցված համակարգին:

ժգ) Արդյո՞ք դպրոցում տեղի ունեցող փոփոխությունները համապատասխանում են արժեքների համաձայնեցված համակարգին:

ժդ) Արդյո՞ք արժեքների շուրջ քննարկումները դուրս են գալիս հասկացությունների սահմաններից և տարածվում դրանց բարդ իմաստների շուրջ:

ժե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները դպրոցի արժեքների վերաբերյալ ամփոփ նկարագրությունը կապում են ավելի մանրամասն հասկացությունների հետ:

ժզ) Արդյո՞ք ուսումնասիրվում են ազգային, համամարդկային կամ արևմտյան արժեքների գաղափարների սահմանափակումները:

ժէ) Արդյո՞ք դպրոցը հրապարակում է իր արժեքները և խրախուսում է մյուսներին դպրոցի աշխատակազմի և երեխաների հետ հարաբերությունները կառուցել արժեքների համաձայնեցված համակարգի հիման վրա:

ժը) Արդյո՞ք արժեքների համաձայնեցված համակարգը հավասարապես է կիրառվում մեծահասակների և երեխաների համար:

ժթ) Արդյո՞ք բոլորն ընդունում են, որ անհրաժեշտ է ջանք չխնայել՝ արժեքներին համապատասխան գործելու համար:

ի) Արդյո՞ք ենթադրվում է, որ արժեքների կայուն համակարգը բնորոշ է ինչպես կրոնապաշտ, այնպես էլ որևէ կրոնի չհարող ցանկացած համայնքի:

իա) Արդյո՞ք ենթադրում է, որ որոշակի կրոնի հետևորդ լինելը կամ քաղաքական դիրքորոշում ունենալը թույլ չի տալիս ապահովել ներառական արժեքներ:

իբ) Արդյո՞ք մարդիկ միևնույն կերպ են գործում և՛ դպրոցում, և՛ նրա սահմաններից դուրս:

իգ) Արդյո՞ք ենթադրվում է, որ որոշ արժեքների կիրառումը, ինչպիսիք են բոլորի համար հավասարապես հոգատար լինելը և ապագայի նկատմամբ հույս խրախուսելը, դպրոցի աշխատակազմի մասնագիտական պարտականությունն է:

իդ) _____

իե) _____

Ա2.2 Դպրոցը խթանում է հարգանքը մարդու բոլոր իրավունքների նկատմամբ:

Ա2.3 Դպրոցը խրախուսում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը:

ա) Արդյո՞ք դպրոցը ամրապնդում է այն համոզմունքը, որ յուրաքանչյուր ոք ունի իրավունքներ, և դրանք հավասար են բոլորի համար:

բ) Արդյո՞ք իրավունքների նկատմամբ հարգանքը խրախուսվում է այնպես, ինչպես մեծահասակների և երեխաների վերաբերմունքը միմյանց նկատմամբ:

գ) Արդյո՞ք բոլորը հասկանում են, որ իրավունքների հասկացությունը ենթադրում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հավասարությունը, կարեկցանքը և համամարդկային այլ արժեքներ:

դ) Արդյո՞ք բոլորն ընդունում են, որ մարդու իրավունքները կարող են սահմանափակվել միայն այն դեպքում, երբ դրանք ուղղակիորեն խախտում են մեկ այլ անձի իրավունքները:

ե) Արդյո՞ք ենթադրվում է, որ սահմանափակելով այն մարդու իրավունքները, որի գործողությունները չենք ընդունում (օրինակ՝ բանտարկյալի քվեարկության իրավունքը), նվազեցնում ենք հարգանքը բոլորի իրավունքների նկատմամբ:

զ) Արդյո՞ք երեխաներն ու մեծահասակներն ընդունում են, որ մարդու իրավունքները հարգել նշանակում է արժևորել բոլորին հավասարապես՝ անկախ նրանց ծագումից, տեսակետներից և ինքնությունից:

է) Արդյո՞ք հիմնական իրավունքներ ասելով՝ հասկանում ենք սնվելու, հագուստի, կացարանի, խնամքի, կրթության, անվտանգության, ազատ արտահայտվելու, վճարովի աշխատանք կատարելու, որոշումների ընդունմանը մասնակցության, անձի ինքնության ու արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունք:

ը) Արդյո՞ք երեխաները սովորում են ստրկության պատմության մասին, և թե որքանով այն ներկայում կա ու տարածված է աշխարհում:

թ) Արդյո՞ք երեխաները տեղյակ են մարդու իրավունքների հարգման նպատակով նախկինում կազմակերպված և աշխարհում ներկայումս իրականացվող քարոզարշավների մասին:

ժ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարող են նպաստել մարդու իրավունքների հարգման ու պահպանման նպատակով կազմակերպվող քարոզարշավներին:

ժա) Արդյո՞ք դպրոցն անդրադառնում է ազգային և գլոբալ արդարադատության իրավունքների գաղափարի փոխառնչությանը:

ժբ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե աշխարհն ինչպես կփոխվեր անարդարության մակարդակի կրճատման դեպքում:

ժգ) Արդյո՞ք իրավունքների հասկացությունն առնչվում է գլոբալ քաղաքացիության գաղափարին:

ժդ) Արդյո՞ք ենթադրվում է, որ հասարակության շրջանում գոյություն ունեցող անհավասարությունները զրկում են մարդկանց իրենց իրավունքներն իրականացնելու կարողությունից:

ժե) Արդյո՞ք ենթադրվում է, որ իրավունքները սովորաբար անտեսվում են:

ժզ) Արդյո՞ք դպրոցում ուսումնասիրում են, թե որքանով է հնարավոր կանխարգելել սովն ու հիվանդությունները:

ժէ) Արդյո՞ք երեխաները ծանոթանում են մարդու իրավունքների այնպիսի փաստաթղթերին, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (տե՛ս փաստաթղթերի ցանկը էջեր 290-291-ում):

ժը) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները քննարկում են, թե որքանով է հնարավոր բարելավել մարդու իրավունքների փաստաթղթերի բովանդակությունը:

ժթ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են, թե որքանով է ազգային օրենսդրությունը հիմնված մարդու իրավունքների վրա:

ի) Արդյո՞ք երեխաները տեղյակ են իրենց և այլ երկրներում մարդու իրավունքների խախտումների մասին, նույնիսկ եթե մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերը, ըստ էության, վավերացվել և հավանության են արժանացել այդ երկրների կառավարությունների կողմից:

իա) Արդյո՞ք ընդունում են, որ բոլոր երեխաներն իրավունք ունեն հաճախելու իրենց տեղական դպրոցը կամ դպրոցներից մեկը:

իբ) Արդյո՞ք երեխաներն ու մեծահասակները պաշտպանում են նրանց, ում հանդեպ անարդարացի են վարվում դպրոցի ներսում:

իգ) Արդյո՞ք երեխաներն ու մեծահասակները փնտրում են ուղիներ՝ ի պաշտպանություն այն մարդկանց իրավունքների, որոնց հանդեպ անարդարացի են վարվում ազգային ու միջազգային մակարդակով:

իդ) Արդյո՞ք իրավունքների կարևորությունն օգտագործվում է որպես անհավասարության ու նախապաշարումների դեմ պայքարի միջոց:

իե) Արդյո՞ք դպրոցի խորհուրդը նպաստում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կիրառմանը:

Ա2.3 Դպրոցը խրախուսում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը:

Ա2.2 Դպրոցը խթանում է հարգանքը մարդու բոլոր իրավունքների նկատմամբ:
Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը:
Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:

ա) Արդյո՞ք մեծահասակները և երեխաներն ընդունում են ոչ մարդկային՝ շնչավոր և անշունչ էակների իրավունքները:

բ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները ուսումնասիրում են բնապահպանական կայունության իմաստը՝ կենսաբանական տեսակների, էկոհամակարգերի և լանդշաֆտների շարունակականության և ամբողջականության պահպանման տեսանկյունից:

գ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները մտորում են Երկիր մոլորակի իրավունքների համընդհանուր հռչակագրի շուրջ (տե՛ս քաղվածքը էջեր 292-293-ում):

դ) Արդյո՞ք սովորողները մտածում են, թե որքանով է իրենց կյանքը պայմանավորված Երկիր մոլորակի բարօրությամբ:

ե) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները ստանձնում են պարտականություն հոգ տանելու մոլորակի ջրային տարածքների և ցամաքի մասին:

զ) Արդյո՞ք երեխաները մտորում են այն տեսակետի շուրջ, որ երկիրը պետք է ենթարկել սեփական շահերին, շահագործել և նվաճել:

է) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները մտորում են այն տեսակետի շուրջ, որ մարդիկ պետք է ապրեն երկրի վրա բնակվող այլ կենսաբանական տեսակներին ու մոլորակի բնական կազմավորումներին համահունչ կյանքով:

ը) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները ունեն իրենց տեսակետը մոլորակի հետ իրենց փոխհարաբերությունների վերաբերյալ:

թ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները քննարկում են այն տեսակետը, որ տնտեսական շահը կարելի է զարգացնել միայն այնքանով, որքանով այն չի խաթարի Երկիր մոլորակի առողջությունը:

ժ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են այն հանգամանքը, որ եթե բոլոր երկրների սպառողական զամբյուղը լիներ այնքան, որքան ամենահարուստ երկրներինն է, ապա մարդկանց գոյատևման համար անհրաժեշտ կլիներ մի քանի մոլորակ:

ժա) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են այն հանգամանքը, որ թեև մոլորակի որոշ ռեսուրսներ սպառվող են, սակայն կրթությունը, մշակույթը, երաժշտությունը, խաղերը, բարեկամությունն ու սերը չեն սպառվում:

ժբ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են այն տեսակետը, որ շրջակա միջավայրի աղտոտումը, կառուցապատման ընդլայնված ծավալները և բնությանը սպառնացող գործողությունները պետք է գնահատվեն որպես միջազգային հանցագործություն:

ժգ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները քննարկում են այն հարցը, որ ցամաքի ու ջրի աղտոտումը դիտվի որպես հանցագործություն՝ անկախ նրանից՝ հնարավոր է ապացուցել, որ այն վնասում է մարդկանց:

ժդ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները քննարկում են, թե ով կարող է տնօրինել Երկիր մոլորակի ցամաքը, ծովերը, գետերն ու լճերը:

ժե) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են սեփականության որևէ պաշտոնական պայմանագիր չունեցող բնիկ ցեղերի և ժողովուրդների՝ հողի օգտագործման պատմական իրավունքը:

ժզ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները քննարկում են բնակչությանը պատկանող ընդհանուր տարածքը քաղաքացիներին սեփականաշնորհելու դեպքում այնտեղ մուտք գործելու հնարավորությունից զրկվելու հետևանքները:

ժէ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները քննարկում են, թե ում է պատկանում և ով է պնդում, որ ինքն է տնօրինում օդն ու ջուրը:

ժը) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են, թե ինչպես կարելի է պայքարել շրջակա միջավայրի աղտոտման դեմ, և թե ի՛նչ է տեղի ունենում, երբ դա հաջողվում է:

ժթ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները հաշվի առնում են Երկիր մոլորակի նկատմամբ յուրաքանչյուր սերնդի պատասխանատվության հանձնառության ազդեցությունը մոլորակի ապագա ծաղկման համար:

ի) Արդյո՞ք այնպիսի գործողությունները, որոնք վտանգում են սերունդների առողջությունը, սպառնում նրանց գոյատևմանն ու անվտանգությանը, լրջորեն վնասում են շրջակա միջավայրը, սպառում ռեսուրսները, հատում են անտառները և սպառնում են այլ կենսաբանական տեսակների ու էկոհամակարգերի գոյատևմանը, համարվում են հանցագործություններ ապագա սերունդների դեմ:

իա) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները համարում են, որ մոլորակի և ապագա սերունդների առջև բնապահպանական պարտքը ներկա սերունդինն է, և այն պետք է վերադարձվի:

իբ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաներն ընդունում են, որ մոլորակի առջև ամենամեծ պարտքը նրանցն է, ովքեր առավել մեծ ծավալներով են սպառում:

իգ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են, թե ինչպես կարող է մի փոքր հողատարածքի, ջրային զանգվածի և օդի լրացուցիչ աղտոտումը անհամաչափ հետևանքներ ունենալ, ինչպես, օրինակ, փոքրիկ կրակը անտառում կամ որևէ նավթամուղից չնչին արտահոսքը:

Ա2.4 Ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցության մակարդակի աճ:

Ա2.1 Դպրոցը ձևավորվում և զարգացնում է համընդհանուր ներառական արժեքներ:

ա) Արդյո՞ք ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցությունը խրախուսող աճող գործընթաց:

բ) Արդյո՞ք մասնակցությունը ենթադրում է ավելին, քան համատեղ ապրելն ու սովորելը և միմյանց ինքնությունն արժևորելը:

գ) Արդյո՞ք ներառումն ընկալվում է որպես դպրոցի, ինչպես նաև ավելի լայն իմաստով, կրթության ու հասարակության զարգացման բոլոր ասպեկտների սկզբունքային մոտեցում:

դ) Արդյո՞ք ներառումն առնչվում է այն հարցերին, թե ինչպես են դպրոցները, ընտանիքները, շրջապատը և լայն հասարակությունն առաջընթաց ապահովում անհատների մասնակցությունը խրախուսելու, խթանելու և պահպանելու ուղղությամբ:

ե) Արդյո՞ք ներառումն առնչվում է ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների մասնակցությանը:

զ) Արդյո՞ք ներառումն առնչվում է բոլորին, ոչ թե միայն հաշմանդամություն կամ «հատուկ կրթական կարիքներ» ունեցող երեխաներին:

է) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է երեխաների հաշմանդամության ու խանգարումներին առնչվող ուսուցման և մասնակցության խոչընդոտները նկատելուց:

ը) Արդյո՞ք ենթադրվում է, որ բոլորն էլ կարող են որոշակի խոչընդոտների հանդիպել ուսուցման գործընթացում և մասնակցության առումով:

թ) Արդյո՞ք ենթադրվում է, որ ուսուցման և մասնակցության խոչընդոտների հանդիպող անձանց իրավիճակը կարող է տարբեր լինել:

ժ) Արդյո՞ք ուսուցման և մասնակցության խոչընդոտները սովորաբար դիտվում են որպես դպրոցի բոլոր ասպեկտների, այդ թվում՝ մշակույթի, քաղաքականության, շենքերի, ուսումնական ծրագրերի և դասավանդման ու ուսուցման մոտեցումների հետ փոխազդեցության հետևանք:

ժա) Արդյո՞ք ուսուցման և մասնակցության խոչընդոտները դիտվում են որպես պետական քաղաքականության, տեղական և ազգային մշակույթների, արժեքների ու դպրոցի նկատմամբ արտաքին ճնշումների հետևանք:

ժբ) Արդյո՞ք համայնքի անդամակցության հիմնական դրույթերի վերաբերյալ սահմանափակումները վիճարկվում են, օրինակ, այն առումով, որ լուրջ կամ բազմակի ֆիզիկական կամ մտավոր խանգարումներ կամ հաշմանդամություն ունեցող երեխաները չեն կարող համարվել տվյալ համայնքի լիիրավ անդամներ:

ժգ) Արդյո՞ք «ներառական դպրոցն» ընկալվում է որպես «ուղղություն՝ դեպի ներառում», այլ ոչ թե որպես վերջնակետ:

ժդ) Արդյո՞ք ներառումը դիտարկվում է որպես բացառման և խտրականության հակազդեցություն:

ժե) Արդյո՞ք բացառումն ընկալվում է որպես մի գործընթաց, որը կարող է սկիզբ առնել դասասենյակներում, խաղահրապարակներում և ուսուցչանոցներում, ապա ավարտվել նրանով, որ երեխաները կամ մեծահասակները լքեն դպրոցը:

ժզ) Արդյո՞ք բացառման ճնշումները մշտապես առկա են, և մշտապես պահանջվում է հակազդում:

ժէ) Արդյո՞ք տարբերությունն արժևորում է՝ ի հակադրություն «ընդունված նորմերին» համապատասխանելու մոտեցման:

ժը) Արդյո՞ք բազմազանությունը գնահատվում և դիտվում է որպես ուսումնառության ռեսուրս, այլ ոչ թե խնդիր:

ժթ) Արդյո՞ք նկատվում է համընդհանուր վճռականություն՝ նվազագույնի հասցնելու հնարավորությունների անհավասարությունը դպրոցում:

ի) _____

իա) _____

իբ) _____

Ա2.5 Բոլոր երեխաներն ունեն մեծ ակնկալիքներ:

Գ2.2 Ուսուցման գործընթացն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը:
Գ2.7 Գնահատականները խրախուսում են երեխաների ձեռքբերումները:
Գ2.12 Տնային աշխատանքների կառուցվածքը նպաստում է յուրաքանչյուր երեխայի ուսումնառության գործընթացին:

ա) Արդյո՞ք յուրաքանչյուր մեծահասակ և երեխա զգում է, որ իրենց դպրոցում հնարավոր է հասնել բարձր նվաճումների:

բ) Արդյո՞ք բոլոր երեխաներն ու մեծահասակները հասկանում են, որ իրենց ձեռքբերումների հնարավորություններն անսահմանափակ են:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ընդունում է, որ անհրաժեշտ է պայքարել երեխաների ցածր ակնկալիքների դեմ, հատկապես այն երեխաների դեպքում, ովքեր ապրում են աղքատության մեջ, հաճախում են խնամքի հաստատություններ, ժամանակավոր այցելուներ են, չեն սովորում մայրենի լեզվով, լավ չեն տիրապետում ուսուցման լեզվին, և ովքեր ունեն «հատուկ կրթական կարիքներ»:

դ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է ուսուցման և մասնակցության ավելի մեծ խոչընդոտներ ունեցող երեխաների դասավանդումը առավել անփորձ և ցածր որակավորում ունեցող մասնագետներին հանձնարարելուց:

ե) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները հասկանում են, թե որքան ավելի շատ ձեռքբերումների կարելի է հասնել, երբ գնահատում են անձի գործողություններն ու անհատականությունը:

զ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները հպարտանում են իրենց ձեռքբերումներով:

է) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է երեխաներին և նրանց ընտանիքներին ձախողման զգացում փոխանցելուց, երբ երեխաները շեղվում են «բնականոն զարգացման» ուղղությունից:

ը) Արդյո՞ք երեխաների ձեռքբերումները գնահատվում են անհատապես, ոչ թե այլ երեխաների հետ համեմատության մեջ:

թ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ընդունում է այն փաստը, որ երբ երեխաները «ձախողում» են ուսումնական ծրագրի որևէ բաղադրիչ, դա շատ դժվար է շտկել ամբողջ կյանքի ընթացքում:

ժ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է երեխայի և նրա եղբոր, քրոջ կամ հարևանի ձեռքբերումների միջև համեմատություններ անելուց:

ժա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները փորձում են հակազդել այն երեխաների հոռետեսական մոտեցումներին, որոնք դժվարությունների են հանդիպում ուսուցման գործընթացում:

ժբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է պիտակավորելուց երեխաներին՝ որպես առավել կամ պակաս ունակություններ ունեցող անձանց՝ ըստ նրանց ընթացիկ ձեռքբերումների:

ժգ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները խուսափում են նվաստացուցիչ պիտակավորումներ օգտագործելուց թույլ առաջադիմություն ունեցող երեխաների նկատմամբ:

ժդ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները պայքարում են բացասական տեսակետների և նվաստացուցիչ պիտակների օգտագործման դեմ այն երեխաների նկատմամբ, որոնք ունեն ձգտումներ, լավ առաջադիմություն և դպրոց են հաճախում ոգևորությամբ:

ժե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը փորձում է երեխաներին չդասակարգել որպես «հատուկ կրթական կարիքներ» և սահմանափակ «ներուժ» ունեցողների:

ժզ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը փորձում է երեխաներին չդասակարգել որպես «շնորհալի ու տաղանդավոր» կամ «մյուսների համեմատ ավելի շատ ներուժ ունեցող»:

ժէ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խրախուսում է այն տեսակետը, որ յուրաքանչյուր ոք շնորհալի է ու տաղանդավոր:

ժը) Արդյո՞ք երեխաները մասնակցում են պետական քննություններին, երբ պատրաստ են, այլ ոչ թե որոշակի սահմանված տարիքում:

ժթ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն անդրադառնում է երեխաների՝ ձախողման վախի զգացողության հաղթահարմանը:

ի) _____

իա) _____

իբ) _____

Ա2.6 Բոլոր երեխաներն արժեւորվում են հավասարաչափ:

Բ1.8 Ուսուցման և ուսումնառության խմբերը կազմվում են բոլոր երեխաների ուսումնառության կարողություններին համապատասխան:

ա) Արդյո՞ք մեծահասակների ու երեխաների ծագման բազմազանությունը դրական է նպաստում դպրոցի ու համայնքի զարգացմանը:

բ) Արդյո՞ք լեզվի արտասանության տարբեր շեշտադրումներն ու բարբառները դիտվում են որպես դպրոցը և հանրությունը հարստացնող երևույթ:

գ) Արդյո՞ք բոլոր երեխաների լեզվական տարբերությունները հավասարապես արժևորելու հանձնառությունն արտացոլված է ուսուցման գործընթացում, առաջարկվող ակումբներում և քննությունների ժամանակ:

դ) Արդյո՞ք դպրոցում խուսափում են «ընտրյալներ» ունենալուց և մի կողմ են դնում կոնկրետ երեխաների նկատմամբ բացասական վերաբերմունքը:

ե) Արդյո՞ք առանձնահատուկ ակտիվություն չդրսևորող երեխաների առաջադիմությունը խրախուսվում է այնքան, որքան առավել ակտիվ երեխաների ձեռքբերումները:

զ) Արդյո՞ք մեծահասակները խուսափում են տարբեր պատմություններում որոշակի երեխաների չափազանց բացասական տեսանկյունից ներկայացնելուց իրենց դրսևորած վարքագծի համար:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները նրբանկատորեն են մոտենում բոլոր երեխաների ընտանեկան իրավիճակներին՝ անդրադառնալով այնպիսի միջոցառումներին, ինչպիսիք են մայրերին կամ հայրերին նվիրված օրերը:

ը) Արդյո՞ք բոլոր երեխաները հնարավորություն ունեն մասնակցելու դպրոցական հավաքներին՝ երաժշտական, թատերական, պարային և մյուս միջոցառումներին:

թ) Արդյո՞ք ընտանիքների կազմի տարբերությունները հավասարապես ճանաչվում և արժևորվում են:

ժ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է միջին խավի երեխաներին ավելի բարձր գնահատելուց:

ժա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է երեխաների առաջադիմության մակարդակները կամ հանրային քննությունների ձեռքբերումներն օգտագործելուց՝ թույլ տալով որոշ երեխաների իրենց զգալ ավելի կարևոր, քան մյուսները:

ժբ) Արդյո՞ք ընտանեկան կյանքի առօրյայի մասին պատմություններ ներկայացված են ուսումնական ծրագրում:

ժգ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է որևէ կրոնի գերակայությունը մյուսների հանդեպ ներկայացնելուց:

ժդ) Արդյո՞ք հաշմանդամություն ունեցող երեխաները, դպրոցի աշխատակիցները և ծնողները/խնամատարները նույնպիսի ընդունելության են արժանանում դպրոցում, ինչպես հաշմանդամություն չունեցող անձինք:

ժե) Արդյո՞ք դպրոցում կազմակերպվում են միջոցառումներ ոչ միայն այն երեխաների համար, որոնք ցուցաբերում են բարձր առաջադիմություն ուսուցման գործընթացում և քննությունների ժամանակ, այլ նաև միջին մակարդակի ձեռքբերումներ ունեցող երեխաների համար:

ժզ) Արդյո՞ք դպրոցի շրջանակներում և նրա սահմաններից դուրս երեխաների ձեռքբերումների վերաբերյալ զեկուցումը ներառում է բոլոր երեխաներին:

ժէ) Արդյո՞ք բոլոր երեխաների աշխատանքն է ցուցադրվում ամբողջ դպրոցում և առանձին դասարաններում:

ժը) Արդյո՞ք բոլոր երեխաներն են ավարտում միջնակարգ դպրոցը պետական ատեստատով:

ժթ) Արդյո՞ք բոլոր երեխաների հաջողություններն են հավասարապես ընդունվում և կարևորվում՝ անկախ սեռից:

ի) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է այնպիսի դասակարգումից, որը տարանջատում է երեխաներին որպես «նորմալ զարգացող» և «հատուկ կարիքներով» կամ նույնիսկ «ներառված»:

ի) _____

իա) _____

իբ) _____

Ա2.7 Դպրոցը պայքարում է խտրականության բոլոր ձևերի դեմ:

Ա1.8 Դպրոցը արժևորում է համայն մարդկության միջև փոխհարաբերությունների ըմբռնումը: Ա1.9 Չափահասները և երեխաները պատշաճորեն են արձագանքում մարդկանց սեռային պատկանելությանը և սեռերի հավասարությանը: Ա2.4 Ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցության մակարդակի աճ: Ա2.2 Դպրոցը խթանում է հարգանքը մարդու բոլոր իրավունքների նկատմամբ: Բ2.9 Վախերը և ահաբեկումը հասցված են նվազագույնի: Գ2.6 Դասերի ընթացքում քննարկվում են մարդկանց միջև նմանություններն ու տարբերությունները:

ա) Արդյո՞ք ենթադրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի նախապաշարումներ այլ անձանց նկատմամբ, և ջանքեր են պահանջվում դրանք բացահայտելու և նվազեցնելու համար:

բ) Արդյո՞ք մեծահասակները դիտարկում են իրենց վերաբերմունքը տարբերությունների նկատմամբ և բացահայտում են իրենց նախապաշարմունքները, որպեսզի ավելի լավ օգնեն երեխաներին՝ բացահայտելու և նվազեցնելու իրենց նախապաշարումները:

գ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները բացահայտում են լուծում պահանջող խտրականության ոլորտները:

դ) Արդյո՞ք խտրականության բոլոր դրսևորումները դիտարկվում են որպես անհանդուրժողականություն տարբերության նկատմամբ և իշխանության չարաշահում:

ե) Արդյո՞ք ուշադրություն դարձվում է այն հանգամանքին, թե ինչպես է տարբերության նկատմամբ ընդհանուր անհանդուրժողականությունը վերածվում անձնական զգացողության և ձևավորում դրան համապատասխան վերաբերմունք:

զ) Արդյո՞ք ընդունվում է այն փաստը, որ ինստիտուցիոնալ խտրականությունը կարող է բխել այն մշակույթներից և քաղաքականություններից, որոնք արժեզրկում են որոշ մարդկանց խմբերի ինքնությունը կամ այլ կերպ խտրական վերաբերմունք են դրսևորում նրանց նկատմամբ:

է) Արդյո՞ք ընդունվում է այն փաստը, որ բազմազանության նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակույթը դառնում է լայնորեն ընդունելի արժեք, խտրականությունը կանխելու և նվազեցնելու լավագույն միջոց:

ը) Արդյո՞ք էթնիկ ծագման, հաշմանդամության, տարիքային և այլ «խտրականություններ» կրճատելու իրավաբանական պահանջները խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի համապարփակ ծրագրերի բաղադրիչ մաս են:

թ) Արդյո՞ք հասարակության շրջանում ունեցած իրենց կշռի հիման վրա մարդկանց արժեզրկումը դիտարկվում է որպես խտրականություն, և արդյո՞ք դրա դեմ պայքար է մղվում:

ժ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է այնպիսի կարծիքներից, որ դպրոցում կա մեկ ազգային ինքնություն:

ժա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է դպրոցում կազմակերպվող միջոցառումների ժամանակ երեխաների կարծրատիպային դերաբաժանումներից, օրինակ, ըստ մազերի, մաշկի գույնի կամ ըստ սեռի:

ժբ) Արդյո՞ք ենթադրվում է, որ երեխաների հաշմանդամության վերաբերյալ տեղեկությունն ընդամենը սահմանափակորեն է նպաստում նրանց կրթական գործընթացը պլանավորելու գործին:

ժգ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը պայքարում է հատուկ կարիքներ ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպային վերաբերմունքի դեմ, երբ նրանց նկարագրում են, օրինակ, որպես խղճահարության օբյեկտներ կամ դժբախտության դեմ հերոսաբար պայքարող անձինք:

ժդ) Արդյո՞ք ենթադրվում է, որ կարողությունների սահմանափակումը կարող է բխել հատուկ կարիքներ ունեցող մարդկանց և նրանց միջավայրի միջև փոխազդեցության արդյունքում, սակայն կարող է նաև լինել միանգամայն խտրական վերաբերմունքի և ինստիտուցիոնալ խոչընդոտների հետևանք:

ժե) Արդյո՞ք ֆիզիկական և մտավոր ծանր հաշմանդամություն ունեցող որևէ երեխայի բացառումը դպրոցից դիտարկվում է ավելի շատ որպես մշակույթի, վերաբերմունքի ու քաղաքականության սահմանափակում, քան գործնական դժվարություն:

ժզ) Արդյո՞ք երեխաները խուսափում են հաշմանդամ անձանց անվանարկումներից:

ժէ) _____

ժթ) _____

Ա2.8 Դպրոցը խրախուսում է հարաբերությունների պարզաբանման եւ վեճերի լուծման ոչ բռնի ձեւերը:

Ա1.9 Չափահասները և երեխաները պատշաճորեն են արձագանքում մարդկանց սեռային պատկանելությանը և սեռերի հավասարությանը:

Բ2.9 Վախերը և ահաբեկումը հասցված են նվազագույնի:

ա) Արդյո՞ք բռնության բացակայությունն ընկալվում է որպես ճնշումներից զերծ փոխգործակցություն, ինչպես նաև ֆիզիկական բախումների բացառում:

բ) Արդյո՞ք վեճերը դպրոցում լուծվում են երկխոսության, թե ենթադրյալ կարգավիճակից բխող ճնշումների կամ ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով:

գ) Արդյո՞ք մեծահասակները կարողանում են մոդելավորել ճնշումներից զերծ փոխգործակցության իրավիճակներ:

դ) Արդյո՞ք մարդիկ սովորում են արձագանքել իրենց գաղափարներին նետված մարտահրավերներին այնպես, որ դա լինի այլ կերպ մտածելու կամ գործելու խթան:

ե) Արդյո՞ք բոլորը սովորում են բանակցային, վեճերի կարգավորման և հաշտարարության միջնորդության հմտություններ:

զ) Արդյո՞ք չարաշահումը, խտրականությունը, ոտնձգությունը և ծաղրանքն ընկալվում են որպես բռնության ձևեր:

է) Արդյո՞ք բոլորը հասկանում են, որ ավելի դյուրին է ապահովել համագործակցություն, երբ մարդիկ զգում են, որ իրենց ինքնությունը չի ոտնահարվում:

ը) Արդյո՞ք քննարկումները վարելու եղանակները բացառում են որևէ անհատի, խմբի կամ սեռի գերիշխող դիրքի դրսևորում:

թ) Արդյո՞ք հաճախ զայրույթից բռնկվող անձանց օգնում են գտնելու ինքնարտահայտման այլ ուղիներ:

ժ) Արդյո՞ք երեխաներին առաջարկվում է հաճախել մարտարվեստի խմբակներ՝ որպես առանց ագրեսիայի ինքնավստահության և հաստատակամության ձևավորման հմտություններ զարգացնող միջոց:

ժա) Արդյո՞ք մարդիկ օգնում են միմյանց հարգանք ձևավորելու այլ անձանց կողմից կատարվող ներդրումների նկատմամբ:

ժբ) Արդյո՞ք մարդիկ մտորում են, թե ինչպես են այլ անձանց նկատմամբ իրենց զգացմունքներն ազդում վերջիններիս հետ իրենց հարաբերությունների վրա:

ժգ) Արդյո՞ք երեխաները փորձում են հասկանալ իրենց զգացմունքները՝ գրականության, երաժշտության, թատերական և տիկնիկային ներկայացումների միջոցով:

ժդ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ անձնական վեճերում և միջազգային հակամարտություններում վրեժխնդիր լինելու ձգտումները:

ժե) Արդյո՞ք երեխաներն ու մեծահասակները քննարկում են բռնության, այդ թվում՝ սեռերի միջև նվաստացնող հարաբերությունների պատկերման ընդունելի սահմանները ֆիլմերում և համակարգչային խաղերում:

ժզ) Արդյո՞ք դպրոցն ընդգծում է իր գերակայությունները մարդկային, այլ ոչ թե գործարար տեսանկյունից:

ժէ) Արդյո՞ք դպրոցը խուսափում է երեխաներին՝ որպես փորձադաշտի վերաբերվելուց:

ժը) Արդյո՞ք երեխաները սովորում են տարածքային հակամարտությունների, ինքնություններ-ի, ռեսուրսների և տարբերության նկատմամբ անհանդուրժողականության ու վեճերի ծագման մասին, և թե ինչպես կարելի է կրճատել դրանք խաղաղ ճանապարհով:

ժթ) Արդյո՞ք երեխաները վիճարկում են մի սեռի կողմից մյուսին իշխելու անհրաժեշտությունը:

ի) Արդյո՞ք երեխաները քննարկում են սեռերի միջև բռնությունը, և թե ինչպես կարելի է պայքարել նման բռնության դեմ:

իա) Արդյո՞ք քննարկվում է, թե ինչպես են որոշ տղամարդիկ խրախուսում տղամարդկանց և կանանց նկատմամբ բռնությունը:

իբ) Արդյո՞ք քննարկվում է, թե ինչպես են տղամարդիկ և կանայք նպաստում երեխաների շրջանում ագրեսիվ գործելակերպի ձևավորմանը:

իգ) Արդյո՞ք երեխաները դիտարկում են այն հարցը, թե ինչ կարող են ձեռք բերել և կորցնել վատ համբավ ունեցող խմբավորումների միանալով, և ինչպես կարելի է կանխել տարբեր խմբավորումների միջև բռնությունը դպրոցի ներսում և նրա սահմաններից դուրս:

իդ) Արդյո՞ք երեխաներին առաջարկվում է մասնակցել դպրոցից դուրս կազմակերպվող միջոցառումներին՝ նպատակ ունենալով նվազեցնել վատահամբավ խմբերում ներգրավվածության ծավալները:

իե) Արդյո՞ք երեխաներից պահանջում են խուսափել դանակներ կամ այլ զենք կրելուց:

իզ) Արդյո՞ք համարվում է, որ ներքին ագրեսիան կարող է դիտարկվել որպես ընկճախտի (դեպրեսիա) և ինքնավնասման հարուցիչ:

Ա2.9 Դպրոցը նպաստում է երեխաների եւ մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը:

Ա1.4 Աշխատակազմն ու երեխաները հարգում են միմյանց: Ա2.10 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների առողջության պահպանմանը: Բ2.9 Վախերը և ահաբեկումը հասցված են նվազագույնի: Գ1.6 Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության և փոխհարաբերությունների մասին:

ա) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է, որ մեծահասակներն ու երեխաները հաճույք ստանան ուսուցման գործընթացից և հարաբերություններից:

բ) Արդյո՞ք դպրոցն օգնում է երեխաներին և մեծահասակներին խուսափելու «ընդունված նորմալ գաղափարի» բռնակալությունից:

գ) Արդյո՞ք երեխաները սովորում են, որ լավ զգալը սովորական ու դրական երևույթ է:

դ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները խուսափում են նիհարությունը գերագնահատելուց:

ե) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները փորձում են հերքել գեղեցկության վերաբերյալ մամուլով քարոզվող և իրենց մշակույթներում առկա կարծրատիպերը:

զ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են դպրոցում առկա բազմազանությունը՝ որպես արժեք և աշխարհընկալման արժեքավոր ռեսուրս:

է) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դրական են վերաբերվում ինքնության և կարծիքների տարբերությունների արտահայտմանը:

ը) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է այն տեսակետը, որ անձնական բարեկեցությունը պայմանավորված է դպրոցի, համայնքների և համընդհանուր հասարակության բարեկեցությամբ:

թ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է այն տեսակետը, որ անձնական բարեկեցությունը պայմանավորված է շրջակա միջավայրի բարելավմամբ և մոլորակի ամբողջականության պահպանմամբ:

ժ) Արդյո՞ք դպրոցն ապահովում է անհրաժեշտ պայմաններ, որ յուրաքանչյուր ոք դպրոցում ընկերներ ձեռք բերի:

ժա) Արդյո՞ք դպրոցում մեծահասակների՝ միմյանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը լավ հարաբերությունների մոդել է երեխաների համար:

ժբ) Արդյո՞ք դպրոցը փորձում է բարձրացնել այն երեխաների ու մեծահասակների ինքնագնահատականը, որոնք խնդիրներ ունեն:

ժգ) Արդյո՞ք մեծահասակներն ու երեխաներն ընդունում են, որ ցածր ինքնագնահատականը կարող է բացասաբար ազդել երեխաների առաջադիմության վրա և խթանել վախերը:

ժդ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները գիտակցում են, որ մարդու արտաքինը կամ նրա հանդեպ վերաբերմունքը կարող է չարտացոլել նրա իրական էությունը:

ժե) Արդյո՞ք դպրոցը հոգ տանում է հաշմանդամություն ունեցող աշխատակիցների, այլ անձանց և սովորողների համար համապատասխան կոմունալ հարմարությունների, ինչպես, օրինակ, սանհանգույցների և հանդերձարանների կահավորման ու բարելավման մասին:

ժզ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները նրբանկատորեն են մոտենում սեռական հասունությանը վերաբերող հարցերին:

ժէ) Արդյո՞ք գոյություն ունեն ընդարձակ, մաքուր, ապահով անկյուններ, որտեղ մեծահասակները և երեխաները կարող են զբաղվել իրենց հիգիենայով դաշտանային ցիկլի ժամանակ:

ժը) Արդյո՞ք երեխաները և մեծահասակները նրբանկատորեն են վերաբերվում այն անձանց, որոնք գերզգայուն են դաշտանային ցիկլի ժամանակ:

ժթ) Արդյո՞ք ապահովվում են այնպիսի հնարավորություններ, որ հատուկ կարիքներ ունեցող երեխաները խուսափեն դպրոց տանող երկար ճանապարհներից՝ խրախուսելով այն տեսակետը, որ բոլոր երեխաներն ու երիտասարդները իրավունք ունեն հաճախելու տեղական դպրոց:

ի) Արդյո՞ք տրամադրվում է հատուկ խնամք դրա կարիքն ունեցող բոլոր սովորողներին:

իա) Արդյո՞ք դպրոցները կանխում են որոշակի աղջիկներին պիտակավորելու փորձերը:

իբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները քննարկում են մարդկային կորստի թեման, որպեսզի պատրաստ լինեն աջակցելու միմյանց որևէ երեխայի կամ մեծահասակի մահվան դեպքում:

իգ) Արդյո՞ք բոլորը գիտակցում են, որ ընկերոջ, ընտանիքի անդամի կամ այլ կարևոր անձի մահը կարող է երկար տարիներ ճնշվածության ազդեցություն թողնել որոշ անձանց վրա, հատկապես, որոշակի առիթներին, ինչպես, օրինակ, տարեդարձերի ժամանակ:

Ա2.10 Դպրոցը նպաստում է երեխաների եւ մեծահասակների առողջության պահպանմանը:

Ա2.9 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը: Գ1.1 Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության և սպառման շրջափուլերը: Գ1.6 Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության և փոխհարաբերությունների մասին:

ա) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները հաշվի առնում են իրենց առողջության վրա առողջ շրջակա միջավայրի, խաղերի, հաճելի գործողությունների, ընկերների, սթրեսի բացակայության, առողջ սննդակարգի և ֆիզիկական մարզվածության ազդեցությունը:

բ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները խուսափում են մարդկանց դիտարկելուց որպես անառողջ կամ առողջական խնդիրներ ունեցող, եթե նրանք տարբերվում են իրենց արտաքինով:

գ) Արդյո՞ք դպրոցում, նրա համայնքներում և շրջակա միջավայրում բացահայտվում են առողջությանը վնասող գործոնները:

դ) Արդյո՞ք կան հստակ ընթացակարգեր դեղորայքի օգտագործման մշտադիտարկման և տարածման համար:

ե) Արդյո՞ք մեծահասակները և երեխաներն ստանում են առաջին օգնության դասեր և սովորում են, թե ինչպես արձագանքել առողջական ճգնաժամերին, օրինակ, շաքարախտի կամ էպիլեպսիայի դեպքում:

զ) Արդյո՞ք նախատեսված են հանգստի առանձին սենյակներ, որտեղ երեխաները և մեծահասակները կարող են առանձնանալ խիստ ճնշվածության ժամանակ, կամ որևէ մեկի հետ առանձին խոսելու անհրաժեշտության դեպքում:

է) Արդյո՞ք որոշ երեխաների սթրեսային վիճակը և զայրույթը բխում են նրանց դժվարին կացությունից:

ը) Արդյո՞ք երեխաներն ունեն մտակենտրոնացմամբ/մեդիտացիայով զբաղվելու և համապատասխան հմտություններ ձեռք բերելու հնարավորություններ:

թ) Արդյո՞ք երկար ժամանակ ընկճվածություն ապրող և զայրույթի հաճախակի բռնկումներ ունեցող անձանց տրամադրվում է համապատասխան խորհրդատվություն:

ժ) Արդյո՞ք դպրոցում նախատեսված է սենյակ բժշկական զննման, օժանդակ խնամքի կամ կանոնավոր ֆիզիոթերապիայի համար:

ժա) Արդյո՞ք կա բավականաչափ քանակությամբ խմելու ջուր:

ժբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը, երեխաները և նրանց ընտանիքները հետևում են առողջ սննդակարգի կանոններին տանը և դպրոցում:

ժգ) Արդյո՞ք հնարավոր է բարձրաձայնել առողջապահական այնպիսի մտահոգություններ, ինչպես, օրինակ, սնվելու հարմարավետությունը:

ժդ) Արդյո՞ք երեխաները կարողանում են դիմակայել արտադրողների այն սպառողական գովազդային ճնշումներին, որոնք հանգեցնում են առողջության վատթարացման:

ժե) Արդյո՞ք ֆիզիկական ակտիվությունը քարոզվում է ոչ միայն որպես հաճելի զբաղմունք, այլ նաև որպես առողջության պահպանման գործոն:

ժզ) Արդյո՞ք երեխաները պարբերաբար մասնակցում են արտադասարանային պարապմունքներին, այդ թվում՝ բացօթյա դասերին:

ժէ) Արդյո՞ք խաղերը և ֆիզիկական դաստիարակության դասերը խրախուսում են բոլորի ներգրավվածությունը սպորտային և ֆիթնես միջոցառումներին և ներառում են տարբեր մարզաձևեր, պար, աերոբիկա, մարտարվեստ, և այլն:

ժը) Արդյո՞ք խրախուսվում են երեխաների ու մեծահասակների ամենօրյա ֆիզիկական ակտիվությունը և դեպի դպրոց ոտքով կամ հեծանվով գնալը:

ժթ) Արդյո՞ք երեխաներն իրենց ապահով են զգում դպրոցի բոլոր տարածքներում:

ի) Արդյո՞ք պահպանվում է հավասարակշռություն անվտանգության խնդիրների և երեխաների կողմից փորձի ձեռքբերման խրախուսման միջև:

իա) Արդյո՞ք դեպի դպրոց տանող ճանապարհի վտանգները գնահատվում և կանխարգելվում են:

իբ) Արդյո՞ք ծնողները բավականաչափ հեռավորության վրա են կայանում իրենց մեքենաները երեխաներին դպրոց ուղեկցելիս և դպրոցից տուն տանելիս:

իգ) Արդյո՞ք դպրոցի տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը պարբերաբար ստուգվում է:

իդ) Արդյո՞ք նախատեսված են հեծանվով անվտանգ երթևեկելու դասեր:

իե) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները կրում են սաղավարտ կամ պաշտպանիչ գլխարկ հեծանվով դպրոց հաճախելիս:

իզ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես խուսափել առցանց շփումների և այլ ինտերնետային կայքերի վտանգներից:

իէ) _____

իը) _____

Հարթություն «Բ». Ներառական քաղաքականության ձեւավորում

Բ1. Դպրոցի զարգացում բոլորի համար

1. Դպրոցը վարում է մասնակցային զարգացման գործընթաց:
2. Դպրոցն առաջնորդվում է ղեկավարման ներառական մոտեցմամբ:
3. Նշանակումներն ու պաշտոնի առաջխաղացումներն արդար են:
4. Աշխատակազմը փորձառու է և օգտագործում է իր գիտելիքները:
5. Բոլոր նոր մասնագետներին ցուցաբերվում է աջակցություն ադապտացման շրջանում:
6. Դպրոցը փորձում է ապահովել իր տարածքի բոլոր երեխաների ընդունելությունը:
7. Բոլոր նոր ընդունված երեխաներն ստանում են աջակցություն ադապտացման շրջանում:
8. Ուսուցման և ուսումնառության խմբերը կազմվում են բոլոր երեխաների ուսումնառության կարողություններին համապատասխան:
9. Երեխաները լավ պատրաստված են այլ հաստատություն տեղափոխվելու համար:
10. Դպրոցը ֆիզիկապես մատչելի է բոլորի համար:
11. Շենքերն ու խաղահրապարակները ֆիզիկապես մատչելի են բոլորի համար:
12. Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը:
13. Դպրոցը նպաստում է թափոնների ծավալների կրճատմանը:

Բ2. Բազմազանության ընդունման ապահովում

1. Աջակցության բոլոր ձևերը համակարգվում են:
2. Մասնագիտական զարգացման միջոցառումներն օգնում են աշխատակազմին պատշաճ արձագանքելու բազմազանությանը:
3. Օտար լեզուների ուսուցումը ներառման խթան է ամբողջ դպրոցի համար:
4. Դպրոցն աջակցում է հանրային այլ հաստատություններում երեխաների կրթության շարունակականությանը:
5. Դպրոցն ապահովում է, որ «հատուկ կրթական կարիքներ»-ին առնչվող քաղաքականություններն աջակցեն ներառմանը:
6. Վարքագծային քաղաքականությունը կապված է ուսումնառության և կրթակարգի զարգացման հետ:
7. Կարգապահական նկատառումներով, դպրոցից հեռացումը՝ որպես պատիժ, հազվադեպ է կիրառվում:
8. Հաճախելիության խոչընդոտները հասցված են նվազագույնի:
9. Վախերը և ճնշումները հասցված են նվազագույնի:

Բ1. Դպրոցի զարգացում բոլորի համար

Բ1.1 Դպրոցը վարում է մասնակցային զարգացման գործընթաց:

Ա1.4 Աշխատակազմն ու երեխաները հարգում են միմյանց: Ա1.5 Աշխատակազմը և ծնողները/խնամատարները համագործակցում են միմյանց հետ: Ա1.6 Աշխատակազմը և ղեկավարներն ապահովում են արդյունավետ համատեղ աշխատանք: Ա1.10 Դպրոցը և տեղական համայնքները նպաստում են փոխադարձ զարգացմանը: Ա2.4 Ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցության մակարդակի աճ: Բաժին Գ1 (Փոխադարձ կապերը՝ տեղական և գլոբալ մակարդակներում):

ա) Արդյո՞ք գոյություն ունի դպրոցի և նրա շրջակայքի զարգացման ծրագիր, որը լայնորեն հայտնի է դպրոցի աշխատակազմին, ղեկավարներին, ծնողներին ու երեխաներին և համաձայնեցված է նրանց բոլորի հետ:

բ) Արդյո՞ք դպրոցը հաշվի է առնում երեխաների, նրանց ծնողների/խնամատարների ու ղեկավարների կարծիքները ուսուցման և մասնակցության խոչընդոտների բնույթի և դպրոցի բարելավման մեխանիզմների վերաբերյալ:

գ) Արդյո՞ք դպրոցը հաշվի է առնում համայնքի անդամների կարծիքները՝ դպրոցի և նրա համայնքների փոխադարձ զարգացման մեխանիզմների վերաբերյալ:

դ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի, երեխաների, նրանց ծնողների, ղեկավարների ու համայնքների կարծիքները որևէ կերպ ազդում են դպրոցի զարգացման գործընթացի վրա:

ե) Արդյո՞ք երեխաները, նրանց ծնողները/խնամատարները և ղեկավարները զգում են, որ իրենց հետ խորհրդակցությունը կազմում է դպրոցի զարգացմանն իրենց մասնակցության բնականոն բաղադրիչ:

զ) Արդյո՞ք դպրոցի զարգացման ծրագիրն ակտիվորեն իրականացվում է և անհրաժեշտության դեպքում պարբերաբար վերանայվում:

է) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամներն անդրադառնում են ուստարվա ընթացքում տեղի ունեցած փոփոխություններին և դրանց պատճառներին:

ը) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը դիտարկում է, թե ո՛ր փոփոխություններն են տեղի ունեցել զարգացման ծրագրի շրջանակներում, և որոնք՝ այլ պատճառներով:

թ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը դիտարկում է այն փաստը, որ փոփոխությունը հանգեցնում է զարգացման, երբ այն ապահովում է ցանկալի արժեքները:

ժ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաներն ընդլայնում են իրենց ազդեցությունը դպրոցի զարգացման գործում՝ իրենց գործողությունների հիմքում ունենալով ներառական արժեքների ընդհանուր համակարգը:

ժա) Արդյո՞ք բոլորը գիտակցում են, որ դպրոցի մշակույթի, քաղաքականության և գործելակերպի հիման վրա իրականացվող գործողությունների և արժեքների փոխկապակցվածությունը կարող է նպաստել դպրոցի շարունակական ու կայուն զարգացմանը:

ժբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ընդունում է, որ երեխաների ուսուցման և մասնակցության խոչընդոտները կարելի է կրճատել՝ դասավանդման, ուսումնառության գործընթացի և դրանց մոտեցումների բարելավմամբ:

ժգ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամներն անդրադառնում են այն հարցին, թե ինչպես կարող է դպրոցի մշակույթը խոչընդոտել ներառական զարգացումը կամ նպաստել դրա խթանմանը:

ժդ) Արդյո՞ք դպրոցի քաղաքականությունը մշակվում է դպրոցի մշակույթն ու գործելակերպը բարելավելու, ոչ թե տեսուչների պահանջներին համապատասխանեցնելու համար:

ժե) Արդյո՞ք բոլոր քաղաքականություններն ունեն իրականացման հստակ ռազմավարություններ:

ժզ) Արդյո՞ք վերահսկվում է դպրոցի քաղաքականության ազդեցությունը դպրոցի մշակույթի և գործելակերպի վրա, և արդյո՞ք հնարավոր է քաղաքականության փոփոխություն անհրաժեշտության դեպքում:

ժէ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները հաղորդակցվում են իրենց գաղափարներով գործընկեր դպրոցների հետ և կազմակերպում են փորձի փոխանակման այցելություններ նաև այլ երկրների դպրոցների և նրանց միջավայրերի փոխադարձ զարգացման նպատակով:

ժը) _____

ժթ) _____

ի) _____

Բ1.2 Դպրոցն առաջնորդվում է ղեկավարման ներառական մոտեցմամբ:

Ա1.2 Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:

Բ1.4 Աշխատակազմը փորձառու է և օգտագործում է իր գիտելիքները:

Գ2.9 Աշխատակազմն իրականացնում է պլանավորման, ուսուցման ու վերանայման համատեղ աշխատանքներ:

ա) Արդյո՞ք բոլորը գիտակցում են, որ ուժեղ առաջնորդները կարող են համագործակցել՝ ավտորիտար գործելաոճ դրսևորելու փոխարեն:

բ) Արդյո՞ք դպրոցը խուսափում է հարաբերությունների և ուսուցման այնպիսի սահմանափակումներից, որ կարող են ծագել կառավարման բարձր և միջին մակարդակների, ենթակա աշխատակազմի և երեխաների միջև ձևավորված կարծր ու կոշտ հիերարխիայի հետևանքով:

գ) Արդյո՞ք աշխատակիցները գիտեն, որ բարձրաստիճան ղեկավարի բացակայության կամ դպրոցից նրա հեռանալու դեպքում ինչպես պետք է վարվել ոչ հավաստի տեղեկատվության տարածումը կանխելու համար:

դ) Արդյո՞ք դպրոցը ղեկավարության կամ վերադասի անհիմաստ պահանջներն անտեսելու համար խուսափում է կիրառվող ճնշումներից:

ե) Արդյո՞ք դպրոցի ուսմասվարը խուսափում է դպրոցին ներկայացվող արտաքին պահանջներն ապահովելուց՝ դրանք դիտարկելով որպես դպրոցի մշակույթին, քաղաքականությանը և գործելակերպին հակասող պահանջներ:

զ) Արդյո՞ք դպրոցի ղեկավարությունը օգնում է աշխատակազմին կրճատելու թղթաբանության վրա ծախսվող ժամանակը:

է) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը դիմակայում է իր արժեքներին հակասող գործողությունների ճնշումներին:

ը) Արդյո՞ք աշխատանքային առաջխաղացում ունեցող աշխատակիցները խուսափում են այնպիսի վարքագծից, ինչը թույլ կտա ենթադրել, որ կարգավիճակի փոփոխությունն ինքնին նշանակում է գիտելիքի մեծ պաշարների տիրապետում:

թ) Արդյո՞ք բարձրաստիճան ղեկավարությունը խուսափում է որոշ աշխատակիցների նկատմամբ հատուկ վերաբերմունք դրսևորելուց:

ժ) Արդյո՞ք աշխատանքային առաջխաղացում ունեցող աշխատակիցները շարունակում են պատրաստակամորեն ընդունել իրենց սխալները:

ժա) Արդյո՞ք որոշումները կայացվում են ներկայացված փաստարկների հիման վրա, թե՞ իշխանության կիրառմամբ:

ժբ) Արդյո՞ք որոշակի հարցերի շուրջ որոշումներ կայացնելիս հաշվի է առնվում աշխատակիցների ծավալուն աշխատանքը:

ժգ) Արդյո՞ք որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում աշխատակազմի համապատասխան գիտելիքները և հմտությունները:

ժդ) Արդյո՞ք աշխատակազմի տարբեր անդամներ վարում են հանդիպումներ, և յուրաքանչյուրի մասնակցությունն ապահովված է:

ժե) Արդյո՞ք փորձառու ուսուցիչներն աջակցություն և օժանդակություն են ցուցաբերում մյուսներին իրենց խորհուրդներով, թե՞ մանրամասնորեն ստուգում կամ վերահսկում են այլ աշխատակիցների աշխատանքը:

ժզ) Արդյո՞ք ակնկալվում է, որ բոլոր մեծահասակներն ու երեխաները կարող են ձեռք բերել ինքնակառավարման հմտություններ:

ժէ) Արդյո՞ք հեղինակությունը ձևավորվում է գիտելիքների, իմաստության և հմտությունների, այլ ոչ թե որոշակի պաշտոնի հիման վրա:

ժը) Արդյո՞ք ուսմասվարի և այլ ղեկավարի ընտրությունը կայացվում է նաև մասամբ այն պատճառով, որ նրանք կարող են օգնել այլ աշխատակիցների՝ խրախուսելու ուսուցումը բարդություն ներկայացնող խմբերում:

ժթ) Արդյո՞ք ուսմասվարը և դպրոցի բարձրաստիճան այլ աշխատակիցներ ունեն երկխոսություն խրախուսելու փորձ:

ի) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամներն ուշադիր լսում են միմյանց փաստարկներն ու պարզաբանումները նախքան անհամաձայնություն հայտնելը:

իա) Արդյո՞ք տարաձայնությունները լուծվում և կարգավորվում են ճնշումների բացառման մեխանիզմների կիրառմամբ:

իբ) Արդյո՞ք դպրոցի ռեսուրսների բաշխումը տեղի է ունենում բաց և անաչառ եղանակով:

իգ) _____

իդ) _____

իե) _____

Բ1.3 Նշանակումներն ու պաշտոնի առաջխաղացումներն արդար են:

Ա1.2 Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:

Բ1.2 Դպրոցն առաջնորդվում է ղեկավարման ներառական մոտեցմամբ:

ա) Արդյո՞ք աշխատանքի հնարավորությունները բաց են բոլոր համապատասխան մասնագետների համար ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հավաքագրման տեսանկյունից:

բ) Արդյո՞ք աշխատակիցները խուսափում են առավելություն ձեռք բերելուց՝ իրենց գիտելիքներն ու փորձը ավելորդ ինքնագովազդելով:

գ) Արդյո՞ք դպրոցը խուսափում է այն աշխատակիցներին խրախուսելուց, որոնք առաջխաղացման նպատակով հավելյալ ժամանակ են անցկացնում դպրոցում, երբ ընտանեկան տարբեր պարտավորություններ կամ առաջնահերթություններ ունեցող այլ աշխատակիցներ չեն կարող դա անել:

դ) Արդյո՞ք դպրոցը անկողմնակալ մոտեցում է դրսևորում աշխատանքային նշանակումներում և առաջխաղացումներում՝ ապահովելով անաչառ վերաբերմունք՝ սեռից, ազգությունից, հաշմանդամության առկայությունից, տարիքից կամ որևէ հանգամանքից անկախ:

ե) Արդյո՞ք դպրոցը խուսափում է նշանակումների ժամանակ տարիքային խտրականություն դրսևորելուց, օրինակ, որպեսզի ավագ տարիքի աշխատակիցները ստանան ավելի բարձր աշխատավարձ:

զ) Արդյո՞ք հաշվի է առնվում մասնագիտական և վարչական աշխատակազմի անդամների՝ տեղական կամ հարակից համայնքի բնակիչ լինելու հանգամանքը:

է) Արդյո՞ք աշխատակիցների առաջխաղացման ձգտումները խրախուսվում և ուղղորդվում են՝ անկախ սեռից, տարիքից կամ որևէ անհիմն հանգամանքից:

ը) Արդյո՞ք կրթական հաստատություններում, մասնավորապես տարրական դպրոցներում և նախակրթարաններում տղամարդկանց ընդգրկումը դիտվում է բնական երևույթ:

թ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է իր բոլոր աշխատակիցներին՝ դիմել ցանկացած պաշտոնի նշանակման համար, եթե վերջիններս ցանկանում են դա անել:

ժ) Արդյո՞ք դպրոցի ուսմասվարը և այլ աշխատակիցներ խուսափում են առանձնահատուկ խրախուսել առաջխաղացման ձգտող իրենց մտերիմ ընկերներին կամ համախոհներին:

ժա) Արդյո՞ք վերադաս ղեկավար մարմինը ստեղծագործական մոտեցում է ցուցաբերում ղեկավարելը որպես հաճելի և համապատասխան անհրաժեշտ աշխատանք ներկայացնելիս՝ խրախուսելով կրթական գործընթացի մասնակիցներին առաջադրվել ղեկավար պաշտոններում:

ժբ) Արդյո՞ք առաջադրված պաշտոններում ապահովվում է դպրոցի աշխատակազմի տարբեր օղակների ներկայացուցիչների ընդգրկման հավասարակշռությունը:

ժգ) Արդյո՞ք բարձր կարգավիճակի պաշտոններն արտացոլում են դպրոցի համայնքների բոլոր հատվածները:

ժդ) Արդյո՞ք նշանակումների առաջադրման և ընտրական հանձնաժողովներում ապահովվում է դպրոցի աշխատակազմի, ղեկավարների և երեխաների դպրոցական խորհրդի, այլ խորհրդակցական մարմինների ներկայացուցչությունը:

ժե) Արդյո՞ք այն դպրոցները, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ, աշխատանքի նշանակումների ժամանակ բացառում են խտրականությունը՝ հաստատության յուրահատուկ լինելու պատճառաբանությամբ:

ժզ) Արդյո՞ք նշանակումների առաջադրման հանձնաժողովի կազմն ընդգրկում է տարբեր սեռային պատկանելության և էթնիկ ծագման անհատների՝ արտացոլելով դպրոցի համայնքների կազմը:

ժէ) Արդյո՞ք արհմիություններն աջակցում են աշխատանքային նշանակումների և առաջխաղացումների վերաբերյալ ուղեցույցներ մշակելու հարցում:

ժը) Արդյո՞ք աշխատանքի դիմորդներին առաջարկվում է դպրոցի աշխատակիցներին, ղեկավարներին, ծնողներին/խնամատարներին և երեխաներին ներկայացնել իրենց պատկերացումները աշխատանքային պարտականությունների մասին:

ժթ) Արդյո՞ք գոյություն ունի հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելու խոչընդոտների դեմ պայքարելու ռազմավարություն:

ի) Արդյո՞ք մասնագետի կողմից տարբերությունների արժևորումը աշխատանքի ընդունելու կարևոր չափանիշ է:

իա) Արդյո՞ք միջոցներ նախատեսվում են դասղեկների և առարկայական ուսուցիչների, ինչպես նաև սպասարկող անձնակազմի բացակա անդամների ժամանակավոր փոխարինողների համար:

իբ) _____

իգ) _____

Բ1.4 Աշխատակազմը փորձառու է եւ օգտագործում է իր գիտելիքները:

Բ1.2 Դպրոցն առաջնորդվում է ղեկավարման ներառական մոտեցմամբ:

ա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն անկեղծորեն հետաքրքրված է միմյանց գիտելիքներով ու փորձով:

բ) Արդյո՞ք հայտնի են մանկավարժների ու դպրոցի մյուս աշխատակիցների բոլոր հմտությունները, գիտելիքները և հետաքրքրությունները ոչ միայն այն մասով, որ ենթադրում է իրենց աշխատանքի անվանումը կամ նշված է սահմանված կարգով հաստատված պաշտոնի նկարագրում:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը ստանում է խորհրդատվություն, թե ինչպես լավագույնս օգտագործել իր հմտություններն ու գիտելիքները՝ ի շահ դպրոցի և նրա համայնքների:

դ) Արդյո՞ք ուսուցիչները և նրանց օգնականները փորձում են կիրառել իրենց բոլոր հմտություններն ու գիտելիքները՝ երեխաների և երիտասարդների ուսուցմանն աջակցելու համար:

ե) Արդյո՞ք դպրոցը մշտապես խրախուսում է իր աշխատակիցների մասնագիտական զարգացումն ու կատարելագործումը:

զ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է իր աշխատակիցներին, որ հաղորդակցվեն իրենց նոր գիտելիքներով, հետաքրքրություններով ու փորձով:

է) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները պատրաստակամորեն առաջարկում են հաղորդակցվել իրենց գիտելիքներով ու հմտություններով:

ը) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը փորձում է չանտեսել իր գործընկերների գիտելիքներն ու հմտությունները, ինչպես, օրինակ, արվեստի և ֆիզկուլտուրայի ուսուցիչների գիտելիքները տարբեր խմբերի երեխաների հետ աշխատելիս:

թ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը քննարկում է, թե ինչ լրացուցիչ գիտելիքներ և փորձ է իրեն անհրաժեշտ զարգացնել դպրոցի սահմաններից դուրս:

ժ) Արդյո՞ք աշխատակազմի կողմից կիրառվող լեզուների բազմազանությունը նպաստում է դպրոցում լեզվի ուսուցման զարգացմանը:

ժա) Արդյո՞ք բոլորն ընդունում են, որ լավ է, երբ տարբեր մարդիկ ունեն անձնական և մասնագիտական տարբեր ուժեղ կողմեր:

ժբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը կազմակերպում է հանդիպումներ, որտեղ կարող է քննարկել իր գաղափարներն ու փորձը՝ միմյանց դասավանդման հմտությունները բարելավելու և դասավանդման դժվարությունները հաղթահարելու նպատակով:

ժգ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները լսում են միմյանց և առաջարկում այլընտրանքային տեսակետներ երեխաների խնդիրների վերաբերյալ, առանց բացասական քննադատության:

ժդ) Արդյո՞ք աշխատակազմի անդամների մշակույթի ու ծագման տարբերությունները հաշվի առնվում են կրթական ծրագրերի մշակման ու դասավանդման գործընթացը կազմակերպելիս:

ժե) Արդյո՞ք աշխատակազմի անդամները ծանոթանում են այլ դպրոցների ուսանելի գործելակերպին և փորձին:

ժզ) Արդյո՞ք հանրակրթական դպրոցը առաջարկում է տեղական հատուկ դպրոցի աշխատողներին, հոգեբան-մանկավարժներին իրենց փորձը հաղորդել դպրոցի աշխատակազմին:

ժէ) Արդյո՞ք դպրոցն առաջարկում է հեռացող աշխատակիցներին ներկայացնել դպրոցի մասին իրենց դիտարկումներն այլ տեսանկյունից:

ժը) Արդյո՞ք բոլորն ընդունում են, որ սկսնակ աշխատողները կարող են դպրոցի կյանքում ավագ աշխատակազմի գործունեությունից տարբերվող որոշակի ներդրում ունենալ:

ժթ) Արդյո՞ք բոլորն ընդունում են, որ այն, ինչ փորձառու մարդիկ առաջարկում են դպրոցին, կարող է ժամանակի ընթացքում իրականանալ, և որ դա կարող է օգտակար լինել իրենց գործընկերների համար:

ի) _____

իա) _____

իբ) _____

Բ1.5 Բոլոր նոր մասնագետներին ցուցաբերվում է աջակցություն ադապտացման շրջանում:

Ա1.2 Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:

Գ2.9 Դպրոցի աշխատակազմի անդամները պլանավորում, դասավանդում և վերանայում են իրենց աշխատանքը՝ համատեղ ուժերով:

ա) Արդյո՞ք դպրոցում գործում է համաձայնեցված քաղաքականություն՝ դպրոցի նոր աշխատակազմի, ղեկավարների և ծնողներին աջակցող աշխատակիցների ադապտացման շրջանի համար:

բ) Արդյո՞ք ադապտացման շրջանի համար նախատեսված քաղաքականությունը ոգևորում է նոր աշխատակազմին:

գ) Արդյո՞ք նոր աշխատակիցներին տրամադրվում է դպրոցի մասին անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ դպրոցի քաղաքականության ու շրջակա միջավայրի զարգացման ծրագրերի վերաբերյալ:

դ) Արդյո՞ք նոր աշխատակիցներին հարցնում են, թե ինչ լրացուցիչ տեղեկություն է նրանց անհրաժեշտ, և արդյո՞ք այն տրամադրվում է:

ե) Արդյո՞ք բոլոր նորանշանակ աշխատակիցներին առաջարկում են այցելել դպրոց նախքան աշխատանքի պաշտոնական մեկնարկի օրը:

զ) Արդյո՞ք նոր աշխատակիցների համար նախատեսվում է օգնական, որը կաջակցի նորանշանակ աշխատակցին ադապտացման շրջանում, ինչպես նաև կդիմավորի նրան առաջին աշխատանքային օրը և հետագայում՝ պարբերաբար:

է) Արդյո՞ք օգնականը մշտապես հասանելի է՝ անմիջականորեն անձամբ կամ հեռախոսով՝ առաջին շաբաթներին նոր աշխատակիցների հարցերին պատասխանելու համար:

ը) Արդյո՞ք ուսմասվարը նախքան առաջին աշխատանքային օրը հանդիպում է նոր աշխատակիցներին:

թ) Արդյո՞ք ղեկավարը և ծնողական խորհրդի ներկայացուցիչները պաշտոնապես ողջունում են բոլոր նոր աշխատակիցներին:

ժ) Արդյո՞ք երեխաների ներկայացուցիչները պաշտոնապես ողջունում են բոլոր նոր աշխատակիցներին:

ժա) Արդյո՞ք նոր աշխատակիցներին աջակցում են աշխատանքային հանդիպումներին մասնակցելիս:

ժբ) Արդյո՞ք դպրոցի գործող աշխատակազմն ընդունում է, թե ինչ դժվարությունների կարող են հանդիպել նոր աշխատակիցները ադապտացման շրջանում, մասնավորապես, նոր երկիր կամ բնակավայր տեղափոխվելիս:

ժգ) Արդյո՞ք երկար տարիներ տվյալ դպրոցում աշխատող աշխատակազմի անդամները հրավիրում են նոր աշխատակիցներին իրենց տուն կամ դպրոցից դուրս կազմակերպվող միջոցառումներին, հատկապես նրանց, ովքեր նոր են ծանոթանում տվյալ տարածքին կամ երկրին:

ժդ) Արդյո՞ք երկար տարիներ տվյալ դպրոցում աշխատող աշխատակազմի անդամները փորձում են նոր աշխատակիցներին չվերաբերվել այնպես, որ վերջիններս իրենց օտար զգան, օրինակ, խուսափելով օգտագործել «մենք» կամ «մեր» դերանունները՝ բացառելով նրանց:

ժե) Արդյո՞ք գործող աշխատակազմը անկեղծ հետաքրքրություն ցուցաբերում է նոր աշխատակիցների և նրանց հմտությունների նկատմամբ, և այն հարցով, թե ինչպես կարող են վերջիններս նպաստել դպրոցի զարգացմանը:

ժզ) Արդյո՞ք դպրոցը քաջալերում է նոր աշխատակիցներին՝ խոստովանելով, որ վերջիններիս ներկայությունը և ներդրումը կարող է դրական ազդեցություն ունենալ դպրոցի մշակույթի համար:

ժէ) Արդյո՞ք դպրոցն օգնում է սկսնակ ուսուցիչներին հնարավորինս արդյունավետ օգտագործելու իրենց լրացուցիչ մասնագիտական զարգացման ժամանակը:

ժը) Արդյո՞ք բոլոր նոր ուսուցիչները և օժանդակ աշխատակազմը ներգրավված են փոխադարձ աջակցության սահմանված կառույցներում, աշխատանքի դիտարկման գործընթացում և դասավանդման, ուսումնառության ու աջակցության գործողությունների զարգացման նոր հնարավորությունների շուրջ քննարկումներում:

ժթ) Արդյո՞ք հիմնական աշխատակազմը ժամանակավոր աշխատակազմին, ուսանող-ուսուցիչներին, պրակտիկանտներին և փոխարինող մասնագետներին վերաբերվում է որպես լիարժեք գործընկերների:

ի) Արդյո՞ք դպրոցը լսում և գնահատում է իր մասին նոր աշխատակազմի և մասնագիտական պրակտիկա անցնող ուսանողների դիտարկումները՝ որպես թարմ նկատառումներ և գործողության մղող հնարավորություններ:

իա) _____

իբ) _____

իգ) _____

Բ1.6 Դպրոցը փորձում է ապահովել իր տարածքի բոլոր երեխաների ընդունելությունը:

Ա2.6 Բոլոր երեխաներն արժևորվում են հավասարաչափ:

ա) Արդյո՞ք տարածքի բոլոր երեխաների համար ընդունելություն ապահովելու ցանկությունը հրապարակվում է որպես դպրոցի քաղաքականություն:

բ) Արդյո՞ք դպրոցի անվան մեջ արտացոլվում են նրա կարգավիճակն ու ենթակայությունը:

գ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է իր տարածքի բոլոր երեխաներին հաճախել դպրոց՝ անկախ գիտելիքների մակարդակից, հաշմանդամություն ունենալուց կամ էթնիկ պատկանելությունից:

դ) Արդյո՞ք դպրոցն ակտիվորեն խրախուսում է տարածքում ժամանակավոր բնակություն հաստատած ընտանիքների երեխաներին, որ հաճախեն դասերի:

ե) Արդյո՞ք դպրոցը ձգտում է հաղթահարել տարածքի տարբեր էթնիկ խմբերի մասնակցության խոչընդոտները:

զ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է ապաստան հայցող և փախստական երեխաներին դպրոց հաճախել:

է) Արդյո՞ք դպրոցը միջոցներ ձեռնարկում է տարածքում ժամանակավոր բնակություն հաստատած ընտանիքների երեխաներին դպրոց հաճախել:

ը) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է ներկայումս հատուկ դպրոցներում սովորող երեխաների ընտանիքներին՝ իրենց երեխաներին ուղարկել հանրակրթական դպրոց:

թ) Արդյո՞ք դպրոցը բարձրաձայնում է հատուկ կարիքներ ունեցող երեխաների՝ իրենց տեղական դպրոց հաճախելու իրավունքները:

ժ) Արդյո՞ք այլ դպրոցում դժվարություններ ունեցող երեխաներին իրենց դպրոց ընդունելիս աշխատակիցները փորձում են նրանց առաջարկել ոչ թե ժամանակավոր կամ պայմանական ընդունելություն, այլ մշտական:

ժա) Արդյո՞ք դպրոցն ապահովում է իրավական պարտավորություն՝ ընդունելության առաջնահերթությունը տալով երեխաների խնամքի և պաշտպանության հանրային հաստատությունների սովորողներին:

ժբ) Արդյո՞ք դպրոցը հայտարարում է խնամքի կարիք ունեցող երեխաներին ընդունելու իր պատրաստակամության մասին:

ժգ) Արդյո՞ք դպրոցը հետևում է օրենքի այն պահանջին, որ թույլ չի տալիս հարցաքննել առաջիկայում ընդունվող աշակերտի ծնողներին, եղբայրներին, քույրերին, կամ օգտագործել նրանց տրամադրած տեղեկությունները և ուշադրություն դարձնել աշակերտին ճանաչող անձանց մեկնաբանություններին:

ժդ) Արդյո՞ք դպրոցը խուսափում է նվիրաբերություն խնդրելուց ապագա աշակերտի ընտանիքից նախքան երեխային դպրոց ընդունելը:

ժե) Այն դեպքում, երբ որևէ պատճառանությամբ համայնքների ազգային փոքրամասնությունների երեխաները չեն ցանկանում հաճախել տվյալ դպրոց, արդյո՞ք վերջինս նպաստում է, որ նրանք ընդգրկվեն շրջակայքի մեկ այլ դպրոց:

ժէ) Արդյո՞ք դպրոցները փորձում են նվազագույնի հասցնել կրոնական նկատառումներով տարանջատումը, օրինակ, խուսափելով առավելություն տալ քրիստոնեության կամ իսլամի որոշակի առանձին ճյուղի:

ժթ) Արդյո՞ք նկատվում է դպրոցում՝ տարածքի բնակչության երեխաների ներգրավվածության աճ:

իա) _____

իբ) _____

իգ) _____

Բ1.7 Բոլոր նոր ընդունված երեխաներն ստանում են աջակցություն ադապտացման շրջանում:

Ա1.3 Երեխաները օգնում են միմյանց: Ա1.4 Աշխատակազմն ու երեխաները հարգում են միմյանց: Ա2.6 Բոլոր երեխաներն արժևորվում են հավասարաչափ: Գ2.5 Երեխաները սովորում են միմյանցից:

ա) Արդյո՞ք դպրոցը թույլ է տալիս ապագա աշակերտներին այցելել դպրոց նախքան ընդունվելը:

բ) Արդյո՞ք դպրոցում գործում է որևէ համաձայնեցված ծրագիր՝ երեխաներին ադապտացման շրջանում աջակցելու համար:

գ) Արդյո՞ք դպրոցի բոլոր աշխատակիցները ջերմ ընդունելություն են ցուցաբերում նորեկներին:

դ) Արդյո՞ք դպրոցն ունի մեկ ընդհանուր քաղաքականություն՝ նորեկներին ընդունելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե երբ են վերջիններս ընդունվում և որտեղից են գալիս:

ե) Արդյո՞ք ադապտացման ծրագիրը հավասարապես արդյունավետ է բոլոր երեխաների և նրանց ընտանիքների համար՝ անկախ այն հանգամանքից, թե երբ են նրանք ընդունվում դպրոց՝ ուսումնական տարվա մեկնարկի՞ն, թե՞ ավելի ուշ:

զ) Արդյո՞ք աշխատակազմը և երեխաները փորձում են անդրադառնալ դպրոցական համայնք ձևավորելու դժվարություններին, հատկապես, երբ ամեն տարի մեծ թվով երեխաներ են ընդունվում դպրոց կամ լքում են դպրոցը:

է) Արդյո՞ք նորեկներն ընկերանում են դպրոցին ավելի լավ ծանոթ երեխաների հետ առաջին անգամ դպրոց մուտք գործելիս:

ը) Արդյո՞ք դպրոցն ապահովում է, որ բոլոր երեխաներն իրենց զգան, ինչպես տանը:

թ) Արդյո՞ք բոլորը գիտակցում են, որ որոշ երեխաներ կարող են ավելի դժվար ադապտացվել նոր պայմաններին, քան մյուսները:

ժ) Արդյո՞ք դպրոցը երեխաներին փոխանցում է այն զգացողությունը, որ իրենք կարող են դրական ազդեցություն գործել՝ դպրոց ոտք դնելու առաջին իսկ պահից սկսած:

ժա) Արդյո՞ք դպրոցը ծնողներին/խնամատարներին տրամադրում է անհրաժեշտ տեղեկություն՝ ազգային ու տեղական դպրոցի, կրթական համակարգերի, ինչպես նաև իրենց դպրոցի վերաբերյալ:

ժբ) Արդյո՞ք ադապտացման շրջանի աջակցության ծրագիրը հաշվի առնում է նորեկների գիտելիքների մակարդակի և լեզվական տարբերությունները:

ժգ) Արդյո՞ք նոր ընդունված երեխաներին ծանոթ մեծահասակները և երեխաները մասնակցում են նրանց՝ առաջին անգամ դպրոցում դիմավորելու միջոցառմանը:

ժդ) Արդյո՞ք դպրոցը նախատեսում է մի քանի շաբաթ անց պարզել, թե ինչպես է անցնում նոր աշակերտների ադապտացման շրջանը:

ժե) Արդյո՞ք դպրոցն աջակցություն տրամադրում է այն երեխաներին, որոնք դժվարությամբ են կողմնորոշվում նոր շենքում, մասնավորապես դպրոց ընդունվելու սկզբնական շրջանում:

ժզ) Արդյո՞ք դպրոցում կան երեխաների համար նախատեսված տարհանման սխեմաներ, հատակագծեր, քարտեզներ:

ժէ) Արդյո՞ք նորեկ աշակերտները հստակ գիտեն, թե ում պետք է մոտենալ որևէ դժվարության դեպքում:

ժը) Արդյո՞ք դպրոցը նորեկներին փոխանցում է այն զգացողությունը, որ վերջիններիս ներդրումն ու կարծիքը կարևոր են՝ դպրոց ոտք դնելու առաջին իսկ պահից սկսած:

ժթ) Արդյո՞ք դպրոցը թույլ տալիս է երեխաներին մասնակցել ադապտացման քաղաքականության բարեփոխումների առաջարկներին:

ի) Արդյո՞ք մեծահասակները և մյուս երեխաները փորձում են ծանոթանալ նորեկների հետ և պարզել նրանց անունները:

իա) Արդյո՞ք նորեկ աշակերտներին ներկայացվում են դպրոցի արժեքները, և թե ինչպես են մարդիկ վերաբերվում միմյանց դպրոցում:

իբ) Արդյո՞ք նոր դպրոց տեղափոխված երեխաներին դասարանային պարապմունքներում ընդգրկվելու փորձը քննարկվում է:

իգ) _____

իդ) _____

իե) _____

Բ1.8 Ուսուցման եւ ուսումնառության խմբերը կազմվում են բոլոր երեխաների ուսումնառության կարողություններին համապատասխան:

Ա2.6 Բոլոր երեխաներն արժևորվում են հավասարաչափ:

ա) Արդյո՞ք աշակերտների բոլոր խմբերին ցուցաբերվում է անաչառ վերաբերմունք՝ դպրոցի հարմարություններից օգտվելու հնարավորությունների, դասասենյակների տեղակայության, դասավանդող կազմի ու քանակի տեսանկյունից:

բ) Արդյո՞ք դպրոցը հետևողականորեն խուսափում է ցածր որակի տարածքներ, օրինակ՝ վատ կահավորված դասարաններ, հատկացնել այն երեխաներին, որոնց դպրոցում ընկալում են որպես ցածր կարգավիճակ ունեցողների՝ իրենց տարիքի, ընդունակությունների կամ հաշմանդամություն ունենալու պատճառով:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը տեղյակ է, թե ինչպիսի ուղերձ են պարունակում դպրոցի հարմարություններից օգտվելու անհավասար հնարավորությունները ինքնության և ինքնագնահատականի տեսանկյունից:

դ) Արդյո՞ք դպրոցն ապահովում է հնարավորություններ, որպեսզի երեխաները կարողանան միմյանց փոխանցել իրենց գիտելիքները ներառման բազմազանություն ներկայացնող տարբեր խմբերում:

ե) Արդյո՞ք դասարանները կազմելիս դպրոցի աշխատակազմը հաշվի է առնում երեխաների ցանկությունները, ձևավորված ընկերական հարաբերությունները և նույն լեզվով հաղորդակցվող երեխաների ներկայությունը:

զ) Արդյո՞ք դասարանները կազմելիս դպրոցի աշխատակազմը փորձում է հնարավորինս անտեսել ընդունակությունների տարբերությունները կամ ֆիզիկական ու մտավոր խանգարումները:

է) Արդյո՞ք դպրոցը խուսափում է ոչ մասնագիտական աշխատակազմին ցածր առաջադիմություն կամ ուսուցման ու մասնակցության դժվարություններ ունեցող երեխաների առաջընթացի պատասխանատվությունը հանձնարարելուց:

ը) Արդյո՞ք դպրոցները խուսափում են ցածր առաջադիմություն ունեցող տղաներին անհամաչափ խմբերում ներառելուց կամ նրանց դասակարգելուց՝ որպես այլընտրանքային ուսումնական ծրագիր պահանջող խմբերի:

թ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է երեխաներին խմբավորելուց՝ ըստ նրանց վատ վարքագծի, ինչը սահմանափակում է երեխաների՝ միմյանց աջակցելու կարողությունները:

ժ) Արդյո՞ք խմբերը կազմելուց հետո դպրոցը նախատեսում է կանխել բացասական հետևանքները, ինչպես, օրինակ, ցածր առաջադիմություն ունեցող խմբում հայտնվելու դժգոհությունը:

ժա) Արդյո՞ք խմբերը կազմելուց հետո բոլոր երեխաները հնարավորություն ունեն տեղափոխվելու մեկ այլ խումբ:

ժբ) Արդյո՞ք դպրոցները խուսափում են ուսումնական ծրագիրը սահմանափակելուց (ինչպես, օրինակ, ծրագրից հանել օտար լեզուն) այն երեխաների համար, որոնք ստանում են գրագիտության լրացուցիչ դասընթացներ կամ գտնվում են օտար լեզվի ցածր մակարդակ ունեցող խմբում:

ժգ) Արդյո՞ք դասերի ժամանակ հնարավոր է փոխել երեխաների նստարանների դասավորությունն ըստ անհրաժեշտության՝ խմբերի միջև տարածայնությունները (օրինակ, սեռային կամ էթնիկ պատկանելությամբ պայմանավորված) կանխելու նպատակով:

ժդ) Արդյո՞ք դասերի ժամանակ հնարավոր է փոխել երեխաների նստարանների դասավորությունն ըստ անհրաժեշտության, որպեսզի երեխաները չխանգարեն միմյանց ուսուցման գործընթացին:

ժե) Արդյո՞ք դպրոցներն ընդունում են, որ պարտավոր են ապահովել ուսուցման դժվարություններ ունեցող և չունեցող երեխաների համատեղ ուսուցումը:

ժզ) Արդյո՞ք սեռային անհամաչափություն ունեցող դասարաններում երեխաները հասկանում են փոխադարձ հարգանքի և յուրաքանչյուրի ջանքերը խրախուսելու կարևորությունը:

ժէ) Արդյո՞ք ընտրության հնարավորության դեպքում բոլոր երեխաներին թույլատրվում է կատարել իրական ընտրություն:

ժը) _____

ժթ _____

ի) _____

իա) _____

Բ1.9 Երեխաները լավ պատրաստված են այլ հաստատություն տեղափոխվելու համար:

Գ1.12 Երեխաները սովորում են տարբեր աշխատանքներ և այն կապակցում են իրենց հետաքրքրությունների զարգացմանը:

ա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը հարգում է երեխայի ուսուցման մեջ նախորդ տարիների ընթացքում տվյալ կամ այլ դպրոցի ուսուցիչների ներդրած ջանքերը:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը համատեղ աշխատանք է տանում երեխայի տեղափոխման փաստաթղթերը պատրաստելիս, որոնք հետագայում փոխանցվելու են ընդունող ուսուցիչներին:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն օգտվում է երեխաների տեղափոխման գործընթացի մասնակցության հնարավորությունից՝ կրթությունն այլ տեսանկյունից դիտարկելու նպատակով:

դ) Արդյո՞ք աշխատակազմն ընդունում է, որ երեխաները կարող են օգնության կարիք զգալ ուսուցման գործընթացում կրկին հաճույքով ներգրավելու համար՝ տարրական կամ հիմնական դպրոցի քննություններից հետո:

ե) Արդյո՞ք կան դպրոցի մասին պարզ ու հասկանալի շարադրված բուկլետներ և էլեկտրոնային կայքեր, որոնց պատրաստմանը մասնակցում են նաև երեխաները:

զ) Արդյո՞ք երեխաներին ներկայացվում են նոր հաստատության առօրյան նախքան այնտեղ տեղափոխվելը:

է) Արդյո՞ք ծնողներին տրամադրվում է ճշգրիտ տեղեկատվություն դպրոցների կարգավիճակների վերաբերյալ:

ը) Արդյո՞ք ուսումնական ծրագիրն անդրադառնում է դպրոցից դպրոց երեխաների տեղափոխմանը, ինչպես, օրինակ, վիրտուալ շրջագայություն ու քարտեզներ ստեղծելիս, շաբաթական ծրագրեր մշակելիս և թատերական ներկայացումներում մի վայրից մեկ այլ վայր մարդկանց տեղաշարժին անդրադառնալով:

թ) Արդյո՞ք երեխայի նախկին ու նոր դպրոցի աշխատակիցների և երեխաների միջև կա երկխոսություն իրենց համընդհանուր արժեքների մասին:

ժ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը կազմակերպում է փորձի փոխանակման հանդիպումներ նախքան երեխայի տեղափոխությունը:

ժա) Արդյո՞ք կարող են նախկին դպրոցի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաները, ինչպես, օրինակ, ժամանակակից օտար լեզուների դասավանդումը, անհրաժեշտության դեպքում շարունակել նոր դպրոցում՝ լրացուցիչ դասընթացներով:

ժբ) Արդյո՞ք դպրոցները կազմակերպում են բաց դասեր նախքան երեխայի տեղափոխվելը, որպեսզի նա կարողանա նախապես հանդիպել նոր դպրոցի աշխատակազմին ու երեխաներին:

ժգ) Արդյո՞ք այլ հաստատություններից նոր դպրոց տեղափոխված երեխաներին իրենց խորհուրդներով օգնում են դպրոցի աշխատակիցները:

ժդ) Արդյո՞ք նոր դպրոցի աշխատակազմը և երեխաները փորձում են փարատել տեղափոխվող երեխայի՝ ընկերական հարաբերություններ ստեղծելու և ճնշումների ենթարկվելու մտահոգությունները:

ժե) Արդյո՞ք դպրոցները խրախուսում են տարբեր տարիքի երեխաների միջև ընկերական հարաբերությունները, որպեսզի նրանք իրենց չզգան խոցելի՝ փոքր տարիքի պատճառով:

ժզ) Արդյո՞ք դպրոցը աշխատանք տանում է տարրական դասարանների երեխաների տեղափոխությունները նվազեցնելու:

ժէ) Արդյո՞ք համակարգվում է երեխաներին տրամադրվող աջակցությունը այլ դպրոցներ տեղափոխության շրջանում:

ժը) Արդյո՞ք դպրոցները հոգ տանում են գաղտնի տեղեկատվության տեղափոխման մասին:

ժթ) Արդյո՞ք «հատուկ կրթական կարիքներ» ունեցող երեխաների ծնողներին տրամադրվում է աջակցություն՝ գտնելու այնպիսի հանրակրթական դպրոց, որը ջերմ ընդունելություն կցուցաբերի երեխային նախկին դպրոցից տեղափոխվելիս:

ի) Արդյո՞ք ենթադրվում է, որ երեխաները դժվարությամբ են տեղափոխվում նոր հաստատություններ:

իա) Արդյո՞ք երեխաները շարունակում են զբաղվել իրենց հետաքրքրություններով ու գործունեությամբ այլ դպրոց տեղափոխվելիս:

իբ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է բոլոր երեխաներին դիտարկել շարունակական կրթության ու զբաղվածության մի շարք տարբերակներ:

իգ) Արդյո՞ք երեխաներն ստանում են այնպիսի գիտելիքներ, որոնք կօգնեն նրանց անկախ լինելու դպրոցն ավարտելուց հետո, ինչպես, օրինակ, սեփական բյուջեի վարում, խոհարարություն, մաքրության և առողջության պահպանում, հարաբերությունների ձևավորում և պահպանում, հագուստի լվացում, ժամանցի ու աշխատանքի կազմակերպում:

իդ) _____

իե) _____

Բ1.10 Դպրոցը ֆիզիկապես մատչելի է բոլորի համար:

Ա1.1 Յուրաքանչյուրի ներկայությունը/մասնակցությունը ողջունելի է:

Բ1.6 Դպրոցը փորձում է ապահովել իր տարածքի բոլոր երեխաների ընդունելությունը:

Բ1.11 Շենքերն ու խաղահրապարակները ֆիզիկապես մատչելի են բոլորի համար:

ա) Արդյո՞ք գոյություն ունի դպրոցի մուտքերի հատակագիծ՝ դպրոցի ֆիզիկական մատչելիությունն ավելի դյուրին դարձնելու համար:

բ) Արդյո՞ք դպրոցը հետևում է օրենսդրության այն պահանջներին, որոնց համաձայն՝ դպրոցը պարտավոր է տարեցտարի բարելավել իր ֆիզիկական մատչելիությունը:

գ) Արդյո՞ք դեպի դպրոց հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ապահովելու խնդիրը ներառված է դպրոցի շենքի բարեկարգման ծրագրում, որն իր հերթին դպրոցի զարգացման ծրագրի բաղադրիչ մասն է:

դ) Արդյո՞ք դպրոցի ֆիզիկական մատչելիության ծրագիրը հաշմանդամություն ունեցող երեխաների և աշխատակիցների մուտքը դեպի դպրոց ապահովելու ընդհանուր ջանքերի մի մասն է:

ե) Արդյո՞ք դպրոցի ֆիզիկական մատչելիության ծրագիրը հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը դեպի դպրոց ապահովելու և դպրոցի տարածքից անկաշկանդ օգտվելու ընդհանուր ջանքերի մի մասն է:

զ) Արդյո՞ք դպրոցի ֆիզիկական մատչելիությունը նախագծելիս դիտարկվել են լսողության ու տեսողության լրիվ կամ մասնակի խանգարումներ ունեցող անձանց, փոքր երեխաներ ունեցող ծնողների, այդ թվում՝ երկտեղանոց մանկասայլակներով, ծերերի, նաև ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց կարիքները:

է) Արդյո՞ք դպրոցը խորհրդակցում է հաշմանդամություն ունեցող տարբեր տարիքի անձանց հետ, այդ թվում՝ երեխաների (ընտանիքներում և տեղական համայնքներում), դպրոցի ֆիզիկական մատչելիության շուրջ:

ը) Արդյո՞ք դպրոցն ընդունում է, որ նմանատիպ ֆիզիկական խնդիրներ/հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ դպրոցի աշխատակազմը և աշակերտները, կարող են միանգամայն տարբեր տեսակետներ ունենալ այն մասին, թե ինչպես կարելի է բարելավել դպրոցի մատչելիությունը:

թ) Արդյո՞ք դպրոցը ամեն տարի ստուգում է հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հարմարությունները՝ շենքի բարեկարգման ծրագրում համապատասխան բարելավումներ նախատեսելու նպատակով:

ժ) Արդյո՞ք դպրոցի սարքավորումները նախատեսում են այնպիսի կարգավորումներ, որոնք կարող են ապահովել դյուրին ու անվտանգ օգտագործում՝ տարբեր հասակի, այդ թվում՝ անվասայլակից օգտվող անձանց համար:

ժա) Արդյո՞ք դպրոցի բոլոր հատվածները, այդ թվում՝ մուտքերն ու ելքերը, դասարանները, միջանցքները, զուգարանները, այգիները, խաղահրապարակները, ճաշարանը ֆիզիկապես մատչելի են, նշաններն ու ցուցատախտակները տեսանելի՞ են:

ժբ) Արդյո՞ք դպրոցի շրջակայքի անցուղիները կահավորված են հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքներին համապատասխան, օրինակ՝ լուսավորության, գունավոր նշանների և անհրաժեշտ այլ միջոցներով:

ժգ) Արդյո՞ք դպրոցը հատուկ ուշադրություն է դարձնում երեխաների ու մեծահասակների արժանապատվության պահպանմանը՝ դպրոցի հարմարությունների մատչելիությունն ապահովելով:

ժդ) Արդյո՞ք դպրոցը հատուկ ուշադրություն է դարձնում ահազանգերի բնույթին, անվտանգության պահպանման ու տարհանման ընթացակարգերին:

ժե) Արդյո՞ք դպրոցը նախագծված է այնպես, որ նրա տարածքից ու հարմարություններից օգտվելը լինի նույնքան հարմար, ինչպես հաշմանդամություն ունեցող, այնպես էլ հատուկ կարիքներ չունեցող անձանց համար:

ժզ) Արդյո՞ք դպրոցի ֆիզիկական մատչելիության խնդիրը դիտարկվում է ոչ միայն հաշմանդամություն ունեցող աշխատակիցների, ղեկավարների, երեխաների, նրանց ծնողների/խնամատարների, այցելուների, այլ նաև համայնքի մյուս անդամների կողմից:

ժէ) Արդյո՞ք դպրոցի շենքերի, շինությունների և խաղահրապարակների մատչելիության բարելավման ծրագրերը ներառված են զարգացման ծրագրում:

ժը) _____

ժթ) _____

ի) _____

Բ1.11 Շենքերն ու խաղահրապարակները ֆիզիկապես մատչելի են բոլորի համար:

Ա2.10 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների առողջության պահպանմանը:

Ա2.4 Ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցության մակարդակի աճ:

Բ1.10 Դպրոցը ֆիզիկապես մատչելի է բոլորի համար:

ա) Արդյո՞ք դպրոցի շենքի կառուցապատման ծրագիրը նախատեսում է ապահովել մեծահասակների և երեխաների մասնակցության մակարդակի աճը՝ արտացոլելով դպրոցի աշխատակազմի, աշակերտների և նրանց ծնողների/խնամատարների ցանքերը:

բ) Արդյո՞ք նախատեսվում է դպրոցի բոլոր հատվածները դարձնել ավելի գրավիչ մեծահասակների և երեխաների համար, օրինակ, արվեստի համատեղ գործերի ստեղծմամբ, ծաղիկներ և թփեր տնկելով:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ու ղեկավարները ունեն երկարաժամկետ ծրագիր, որն անդրադառնում է բնապահպանական, ինչպես նաև ֆինանսական խնդիրներին:

դ) Արդյո՞ք դպրոցի տարբեր հատվածները և նրա շրջակայքը կառուցապատելիս դիտարկվում է երեխաների հետաքրքրությունների լայն շրջանակը՝ դրանց սահմանափակ կողմերը հաշվի առնելու փոխարեն:

ե) Արդյո՞ք երեխաները ստանձնում են պատասխանատվություն՝ խնամելու դպրոցում աճեցվող և նրա շրջակայքի բույսերը:

զ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է մեծահասակներին և երեխաներին կազմակերպել այցելություններ պարզելու համար, թե ինչպես կարելի է բարելավել ուսուցչանոցները, դասասենյակներն ու դպրոցի շրջակայքը:

է) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է մեծահասակներին և երեխաներին ներկայացնել առաջարկություններ, թե ինչպես կարելի է բարելավել դպրոցի շենքը, նրա հարմարություններն ու շրջակայքը:

ը) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է իր աշակերտների և աշխատակազմի, ինչպես նաև իր համայնքների, այդ թվում՝ այլ դպրոցների ու վարժարանների կողմից ցուցահանդեսների, ցուցադրությունների կազմակերպումը:

թ) Արդյո՞ք խաղահրապարակը կահավորված է այն կերպ, որ հնարավոր լինի կազմակերպել տարբեր մարզախաղեր, մրցումներ, ինչպես նաև այլ միջոցառումներ՝ համերգներ, երաժշտական և թատերական ներկայացումներ:

ժ) Արդյո՞ք ուսուցչանոցը հարմարավետ տարածք է ողջ աշխատակազմի համար:

ժա) Արդյո՞ք բոլոր աշխատակիցներին գոհացնում են աշխատանքային պայմանները:

ժբ) Արդյո՞ք դպրոցի տարածքում նախատեսված են տարածքներ՝ ծնողների/խնամատարների հանդիպումների համար:

ժգ) Արդյո՞ք դպրոցն ունի այգի, որտեղ աճեցվում են մի շարք բույսեր՝ ինչպես սննդի, այնպես էլ գրավչության համար:

ժդ) Արդյո՞ք դպրոցն ունի բույսեր ու բանջարեղեն աճեցնելու հողատարածք, թե՞ այն կիսում է այլ հաստատությունների հետ:

ժե) Արդյո՞ք դպրոցի շրջակայքում կա բավականաչափ տարածք՝ բույսերի, կենդանիների ու միջատների կենսաբազմազանության աճը խթանելու համար:

ժզ) Արդյո՞ք դպրոցի տարբեր հատվածներում ու դասարաններում ներկայացված են տարբեր ցուցատախտակներ, բույսեր ու առարկաներ, որոնք խթանում են երեխաների հետաքրքրասիրությունը, դառնում քննարկման թեմա և ուսումնասիրության առարկա:

ժէ) Արդյո՞ք մարդկանց հնարավորություն տրվում է բարձրաձայնելու տարածքի օգտագործման իրենց մտահոգությունները և ստանալու արդարացի լուծում:

ժը) Արդյո՞ք դպրոցի անվտանգության կազմակերպումը ապահովում է նաև դրա շրջակայքի գրավչությունը:

ժթ) Արդյո՞ք դպրոցի շենքերն ու շրջակայքը հասանելի են համայնքի օգտագործման համար:

ի) Արդյո՞ք կա որևէ ծրագիր՝ բարձրացնելու հաստատության անվտանգությունը համայնքի միջոցներով:

իա) _____

իբ) _____

իգ) _____

Բ1.12 Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները եւ սահմանափակում ջրի սպառումը:

Բ1.13 Դպրոցը նպաստում է թափոնների ծավալների կրճատմանը: Գ1.2 Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը: Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը: Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա: Գ1.9 Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:

ա) Արդյո՞ք դպրոցի՝ ածխածնի արտադրության ծավալն ընկալվում է որպես դպրոցի կողմից ջերմոցային գազերի արտանետումների տարեկան ծավալ:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները համարում են, որ շատ ավելի կարևոր է կրճատել այն գործողությունները, որոնք հանգեցնում են գազային արտանետումների:

գ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները մշակում են արդյունավետ ցուցիչներ՝ դպրոցում և դպրոցից դուրս ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու, ինչպես նաև համայնքի այլ անդամների վրա ազդեցություն գործելու համար:

դ) Արդյո՞ք դպրոցը համակարգում է ածխածնի արտադրության իր ծավալները մեծահասակների և երեխաների միջոցով:

ե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և երեխաները նախատեսում են կրճատել ածխածնի արտադրության ծավալները դպրոցում ու տանը՝ վերահսկելով վառելիքի ու չվերականգնվող էլեկտրաէներգիայի սպառումը շենքերում, էներգիայի խնայողությունը, աշակերտների ու աշխատակազմի տրանսպորտային ծախսը, թափոնների կառավարումը և ապրանքների ու ծառայությունների սպառումը:

զ) Արդյո՞ք դիտարկվում է, որ էներգիայի սպառման մակարդակը նվազեցնելու լավագույն միջոցը ապրանքների արտադրության և սպառման ծավալների կրճատումն է:

է) Արդյո՞ք դպրոցը համագործակցում է էներգաարդյունավետության ապահովման տեղական փորձագետների հետ:

ը) Արդյո՞ք դպրոցն արտադրում է էլեկտրաէներգիա և/կամ ապահովում ջեռուցման սեփական ծավալները քամու տուրբինների, արևային վահանակների կամ ջերմային պոմպերի միջոցով:

թ) Արդյո՞ք դպրոցն օգտվում է վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիա արտադրող ընկերություններից:

ժ) Արդյո՞ք վառելիքի սպառման ծավալները կրճատվում են ջեռուցման կաթսայի և այլ տեխնիկայի, ջերմամեկուսիչ խողովակների, ձեղնահարկի ու պատերի ջերմամեկուսացման, կրկնակի ապակեպատման և կանաչ տանիքի ընտրությամբ:

ժա) Արդյո՞ք բոլոր նոր շենքերը համապատասխանում են էներգախնայողության ամենաբարձր չափանիշներին:

ժբ) Արդյո՞ք ջեռուցման համակարգն արձագանքում է ջերմաստիճանի փոփոխություններին և կարգավորվում է այնպես ինքնաբերաբար, ինչպես մարդիկ սկսում են ազատվել լրացուցիչ հագուստից եղանակների տաքանալուն պես:

ժգ) Արդյո՞ք դպրոցն օգտվում է էներգախնայող լամպերից և տեղադրում է լույսի սենսորներ այն հատվածներում, որտեղ պահանջվում է պարբերաբար լուսավորություն:

ժդ) Արդյո՞ք դպրոցը դիմում է էլեկտրաէներգիա արտադրողներին՝ սահմանափակելու արտադրությունը:

ժե) Արդյո՞ք դպրոցը վերահսկում է տեղեկատվության ու համակարգչային տեխնոլոգիաների (ՏՀՏ) համար պահանջվող էներգառեսուրսները և փորձում է նվազագույնի հասցնել սպառման ծավալները՝ անջատելով այն սարքերը, որոնք տվյալ պահին պետք չէ օգտագործել:

ժզ) Արդյո՞ք փորձեր արվում են կրճատելու մեքենաների տրանսպորտային ծախսը՝ մի քանի հոգով մեկ մեքենայից, հասարակական տրանսպորտից, հեծանիվից օգտվելով և ոտքով ճանապարհն անցնելով:

ժէ) Արդյո՞ք դպրոցը հեծանվորդներին ցնցուղ ընդունելու հնարավորություն ապահովում է՝ հեծանիվների օգտագործումը խրախուսելու նպատակով:

ժը) Արդյո՞ք դպրոցը հետևում է գնումների այն չափանիշներին, որոնք պահանջում են գնել միայն տեղական արտադրության սեզոնային սնունդ՝ նվազեցնելով սննդի ու սպառողական ապրանքների արտադրանքի տեղափոխման ծախսերը:

ժթ) Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են օրգանական և ոչ օրգանական սննդամթերքի արտադրության փոխկապվածությունը հանածո վառելիքի հետ:

ի) Արդյո՞ք դպրոցը անդամ է որևէ տեղական էլեկտրացանցի՝ հիմնված գնողունակության համընդհանուր մոտեցման վրա:

իա) Արդյո՞ք դպրոցը վերահսկում է ջրի օգտագործման իր ծավալները և նախատեսում նվազեցնել մեկ անձի օգտագործման մասնաբաժինը:

իբ) Արդյո՞ք դպրոցը հավաքում է անձրևաջուրը հատուկ տակառներում՝ դպրոցի այգում օգտագործելու համար:

իգ) Արդյո՞ք դպրոցում առկա է օգտագործված ջրի կուտակման համակարգ՝ զուգարաններում ու դպրոցի այգում այն կրկին օգտագործելու համար:

իդ) Արդյո՞ք աշխատանք տարվում է ջրի արտահոսքը ժամանակին հայտնաբերելու, ինքնակառավարվող փականներ ու ծորակներ տեղադրելով ջրօգտագործման ծավալները կրճատելու ուղղությամբ:

Բ1.13 Դպրոցը նպաստում է թափոնների ծավալների կրճատմանը:

Բ1.12 Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը: Գ1.1 Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության ու սպառման շրջափուլերը: Գ1.2 Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը: Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը: Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:

ա) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է մեծահասակներին ու երեխաներին նվազեցնել թափոնները դպրոցի ներսում և նրա սահմաններից դուրս՝ վերանորոգման, կրկին օգտագործման, պարարտացման և վերամշակման միջոցով:

բ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է սպառման ծավալների կրճատումը՝ որպես թափոնների ծավալների կրճատման լավագույն միջոց:

գ) Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են, թե որոնք են բիոդեգրադացվող, վերականգնվող թափոնները:

դ) Արդյո՞ք թափոնների կրճատման քաղաքականությունն ընդգծում է աղբավայր տեղափոխվող թափոնների ծավալների կրճատման անհրաժեշտությունը:

ե) Արդյո՞ք մեծահասակների ու երեխաների շրջանում կան համակարգողներ, որոնք օգնում են ստուգելու թափոնների բաղադրությունը և հետևելու կուտակման, տեսակավորման, ծավալների կրճատման ու վերամշակման գործընթացին:

զ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ են դառնում թափոնները, երբ դրանք ենթարկվում կամ չեն ենթարկվում վերամշակման:

է) Արդյո՞ք դպրոցը դիտարկում է թափոնների ծավալների կրճատման միջոցառումներ կազմակերպող որևէ տեղական ակումբի՝ իր միանալու տարբերակը:

ը) Արդյո՞ք երեխաները տեղեկանում են թափոնների ծավալների կրճատման քարոզարշավների մասին:

թ) Արդյո՞ք երեխաները սովորում են թափոնների ծավալների կրճատման մասին՝ այլ դպրոցների հետ համագործակցության միջոցով:

ժ) Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե՛ որ թափոններն են վերամշակում աշխարհի տարբեր հատվածներում:

ժա) Արդյո՞ք դպրոցը գնում է վերադարձվող տարաներով ապրանքներ:

ժբ) Արդյո՞ք դպրոցը փորձում է առավելագույնս ձեռք բերել վերամշակված ռեսուրսներով պատրաստված իրեր, այդ թվում՝ վերանորոգված կահույք:

ժգ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է գնել և օգտագործել նվազագույն փաթեթավորում ունեցող սննդամթերք:

ժդ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է երեխաներին ու նրանց ընտանիքներին խուսափել լրացուցիչ թափոնների կուտակման հանգեցնող փաթեթավորված նախաճաշերից:

ժե) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է կրկին օգտագործվող սպասքի պարագաների օգտագործումը:

ժզ) Արդյո՞ք դպրոցը, սննդի մասնաբաժնի չափերը նվազեցնելով, սննդի թափոնները կրճատելու նպատակով փորձում է բանակցել երեխաների ու նրանց ընտանիքների հետ:

ժէ) Արդյո՞ք դպրոցի շրջակայքի համապատասխան վայրերում տեղադրված են սննդի և այլ թափոնների կուտակման կետեր:

ժը) Արդյո՞ք դպրոցը համագործակցում է թղթի, ստվարաթղթի, գրքերի, հագուստի, ապակու, պլաստիկի, էլեկտրոնային սարքավորումների, տպիչի քարթրիջների, էլեկտրական լամպերի, բջջային հեռախոսների, մարտկոցների և CD/DVD սկավառակների վերամշակման կետերին:

ժթ) Արդյո՞ք դպրոցն ունի փոխանակման իր սխեման և խրախուսում է այլ սխեմաներ, ինչպես, օրինակ, ոչ անհրաժեշտ իրերն անվճար փոխանակելու և բարեգործության նպատակով:

ի) Արդյո՞ք դպրոցը համագործակցում է ընտանիքների և համայնքային խմբերի ու ակումբների հետ՝ վերականգնման, վերանորոգման, կար ու ձևի և հագուստի ձևափոխման հմտություններ սովորեցնելու նպատակով:

իա) Արդյո՞ք թղթի օգտագործման ծավալը կրճատվում է՝ երկկողմանի տպագրությունը խթանելու և ծրարների ու թղթապանակների պիտակների օգտագործումը կանխելու միջոցով:

իբ) Արդյո՞ք դպրոցում կան էկրաններ, որոնցով կարելի է հեշտությամբ կարդալ էլեկտրոնային փաստաթղթերը, և անհրաժեշտության դեպքում ծնողներին ու երեխաներին տեղեկացնել դպրոցի անցուդարձի մասին:

իգ) Արդյո՞ք դպրոցը հնարավորության դեպքում խրախուսում է էլեկտրոնային փոստի օգտագործումը՝ որպես ծնողների/խնամատարների հետ հաղորդակցման միջոց:

իդ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է տպիչների, քարթրիջների կրկին օգտագործումը:

իե) Արդյո՞ք դպրոցում կան խմելու ջրի հեշտությամբ հասանելի ու մաքուր աղբյուրներ:

իզ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է շշալցված ջուր գնելու փոխարեն ծորակի ջրից օգտվելը:

Բ2. Բազմազանության ընդունման ապահովում

Բ2.1 Աջակցության բոլոր ձևերը համակարգվում են:

Գ2.5 Երեխաները սովորում են միմյանցից:

Գ2.9 Աշխատակազմն իրականացնում է պլանավորման, ուսուցման ու վերանայման համատեղ աշխատանքներ:

Գ2.10 Աշխատակազմը մշակում է ուսուցման գործընթացի օժանդակ համընդհանուր ռեսուրսներ:

ա) Արդյո՞ք աջակցությամբ իրականացնում են գործողություններ, ի նպաստ դպրոցի այնպիսի կարողությունների զարգացման, որոնք թույլ են տալիս պատշաճորեն արձագանքել երեխաների բազմազանությանը և բոլորին արժևորել հավասարապես:

բ) Արդյո՞ք դպրոցը արդյունավետ համակարգում և ադապտացնում է աջակցության բոլոր ձևերն այնպես, որ դրանք նպաստեն դպրոցի ներառական զարգացմանը:

գ) Արդյո՞ք աջակցությունը ենթադրում է դպրոցի ներքին և արտաքին ռեսուրսների համախմբում:

դ) Արդյո՞ք ուսուցման ներառական գործողությունների և դպրոցի ու դասարանի համագործակցային մշակույթի զարգացումը համարվում են աջակցության ձևեր:

ե) Արդյո՞ք հնարավոր է, որ համագործակցային մշակույթի զարգացումը և ուսուցման գործընթացի բազմազանությունը ընկալվեն որպես անհատական աջակցության բացակայություն:

զ) Արդյո՞ք հասակակիցների փոխադարձ աջակցությունը խարսխվում է դպրոցի համագործակցային մշակույթի հիման վրա:

է) Արդյո՞ք դպրոցը փորձում է նվազագույնի հասցնել ուսուցման գործընթացում, չափահասների կողմից երեխաներին տրամադրվող անհատական աջակցության անհրաժեշտությունը:

ը) Արդյո՞ք աջակցությունը ենթադրում է խաղերի, ուսուցման և մասնակցության խոչընդոտների վերացում:

թ) Արդյո՞ք աջակցությունը ենթադրում է ուսումնական ծրագրերի մշակման ընթացքում երեխաների շահերի և նրանց փորձի դիտարկում:

ժ) Արդյո՞ք երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվող աջակցությունը ներառում է կրթության, առողջապահության և սոցիալական ծառայություններ:

ժա) Արդյո՞ք աջակցության բոլոր գործողությունները համակարգվում են աջակցության միասնական քաղաքականությամբ:

ժբ) Արդյո՞ք աջակցության քաղաքականությունը քննարկվում և համաձայնեցվում է երեխաների ծնողների հետ:

ժգ) Արդյո՞ք աջակցության քաղաքականությունը պարզ է դպրոցի արտաքին գործընկերների համար, որոնք ցուցաբերում են դպրոցի շրջանակներում ուսուցմանն ու մասնակցությանն ուղղված օժանդակություն:

ժդ) Արդյո՞ք աջակցության գործողությունների համակարգման աշխատանքները ղեկավարվում են դպրոցի աշխատակազմի որևէ ավագ անդամի կողմից:

ժե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը տեղյակ է մեծահասակների և երեխաների այն բոլոր մարդկային ռեսուրսներն, որոնք հնարավոր է համախմբել՝ ուսուցման և մասնակցության զարգացմանը նպաստելու համար:

ժզ) Արդյո՞ք չափահաս մենթորները և կամավորները, այդ թվում՝ մայրենի լեզվի կրողները և հաշմանդամություն ունեցող մեծահասակները դիտվում են որպես ռեսուրսներ դպրոցի համար:

ժէ) Արդյո՞ք դպրոցը նվազեցնում է տարբեր ծագում ունեցող մասնագետների միջև հաղորդակցման արգելքները:

ժը) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը բարձրաձայնում է իր մտահոգությունների մասին, երբ նկատում է, որ որոշ անձինք իրենց գործողություններում առավելապես առաջնորդվում են մասնագիտական «տարածքի» պահպանմամբ, քան փորձում են գործել ի շահ երեխաների:

ժթ) Արդյո՞ք դպրոցը խնդրում է իրեն օժանդակություն առաջարկող արտաքին գործընկերոջը համակարգել իր աշխատանքները զուգահեռ իրականացվող այլ միջամտությունների հետ, նախքան դպրոցում դրանք իրականացնելը:

ի) _____

իա) _____

իբ) _____

Բ2.2 Մասնագիտական զարգացման միջոցառումներն օգնում են աշխատակազմին պատշաճ արձագանքելու բազմազանությանը:

Գ2.9 Դպրոցի աշխատակազմը պլանավորում, դասավանդում և վերանայում է իր աշխատանքը համատեղ ուժերով: Գ2.10 Աշխատակազմը մշակում է ուսուցման գործընթացի օժանդակ, համընդհանուր ռեսուրսներ:

ա) Արդյո՞ք մասնագիտական զարգացման աշխատանքներն օգնում են մասնագետներին աշխատելու տարբեր խմբերի հետ:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը զարգացնում է խտրականությունն ու ահաբեկումը բացահայտելու և դրանց դեմ պայքարելու իր հմտությունները, այդ թվում՝ դասակարգային, տարիքային, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ դրսևորվող, դավանանքի խտրականություն, ռասայականություն և այլն:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ուսումնասիրում է իր խտրական համոզմունքներն ու գործողությունները:

դ) Արդյո՞ք ուսումնական ծրագրերի մշակման աշխատանքները մշտապես անդրադառնում են տարբեր ծագում, փորձ, սեռ, ընդունակություններ ու հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցությանը և ուսումնառությանը:

ե) Արդյո՞ք դպրոցի աշխատակիցները և ղեկավարները մասնակցում են իրենց մասնագիտական զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներին:

զ) Արդյո՞ք ուսումնական ծրագրերի մշակման աշխատանքներն անդրադառնում են ուսուցման ու մասնակցության խոչընդոտների կրճատմանը:

է) Արդյո՞ք աշխատակիցները խթանում են դպրոցի արտաքին տարածքների օգտագործումը՝ ուսուցման գործընթացը երեխաների ընդհանուր փորձի հիման վրա կառուցելու համար:

ը) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը մշակում է եղանակներ՝ ուսուցման գործընթացը երեխաների համար կարևոր և հետաքրքրություն ներկայացնող առարկաների ու արտեֆակտերի շուրջ կառուցելու նպատակով:

թ) Արդյո՞ք մասնագիտական զարգացման աշխատանքները ենթադրում են արժեքների ու գործողությունների միջև փոխկապակցվածության ստեղծում՝ ուսուցումն ու մասնակցությունը խթանելու համար:

ժ) Արդյո՞ք մասնագիտական զարգացման աշխատանքներն ապահովում են արտադասարանային ուսուցման հնարավորությունների լիարժեք օգտագործումը:

ժա) Արդյո՞ք մասնագիտական զարգացումը օգնում է անդրադառնալու երեխաների ընդհանուր փորձից քաղած դասերին:

ժբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը զարգացնում է համագործակցային ուսուցման դասարաններ ստեղծելու իր փորձը, որտեղ գործողությունները ներառում են և՛ անհատական, և՛ խմբային աշխատանքներ:

ժգ) Արդյո՞ք ուսուցիչները և նրանց օգնականները փորձում են միասին զբաղվել ինքնակրթությամբ՝ խթանելով փոխադարձ համագործակցությունը:

ժդ) Արդյո՞ք ուսուցիչները և նրանց օգնականները քննարկում են երեխաների դժգոհությունները և ուշադրությունը շեղող գործոնների կրճատման հնարավորությունները:

ժե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ու երեխաները հնարավորություն ունեն տեղեկանալու իրականացվող կրկնուսուցման մասին:

ժզ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը դիտարկում է, թե ինչպես կարելի է համալրել խմբերի կազմը՝ ուսուցման և մասնակցության խոչընդոտներ ունեցող երեխաների թիվը մեկ խմբում սահմանափակելու համար:

ժէ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ու երեխաները հնարավորություն ունեն սովորելու հասակակիցների օժանդակությամբ իրականացվող հակամարտությունների և վեճերի կարգավորման միջնորդության մասին:

ժը) Արդյո՞ք դասավանդող և սպասարկող աշխատակազմը բազմազանություն ներկայացնող տարբեր խմբերի հետ աշխատելիս բարելավում է դասավանդման համար նախատեսված այնպիսի տեխնոլոգիայից օգտվելու իր գիտելիքները, ինչպես, օրինակ, էլեկտրոնային գրատախտակները, տեսախցիկները, հեռուստատեսությունը, DVD սկավառակները, պրոյեկտորները, ձայնագրիչները և համակարգիչները/համացանցը:

ժթ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը տեղյակ է, թե ինչպես կարող է օգնել երեխաներին՝ ձևավորելու սոցիալական ցանցեր, այդ թվում՝ ընկերական շրջանակներ, որոնք կարող են օգտակար լինել նրանց համար ինչպես դպրոցում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

ի) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը կազմակերպում է ընթերցանության խմբակներ և ոչ ֆորմալ սեմինարներ, որտեղ նրանք կարող են փոխանակել իրենց գիտելիքները և հաղորդակցվել փորձով:

Բ2.3 Օտար լեզուների ուսուցումը որպես ներառման խթան ամբողջ դպրոցի համար:

ա) Արդյո՞ք մեծահասակները ստանձնում են պատասխանատվություն՝ օգնելու երեխաներին սովորել օտար լեզու:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը ծանոթանում է այն համայնքների ուսուցման ռեսուրսներին, որոնց անդամները վերջերս են ժամանել իրենց երկիր:

գ) Արդյո՞ք դպրոցն առաջարկում է լեզվի ու գրագիտության դասընթացներ աշակերտների ծնողների/խնամատարների համար, կամ կապեր է հաստատում համապատասխան հաստատությունների հետ:

դ) Արդյո՞ք դպրոցն արժևորում է այն անձանց լեզվական հմտությունները, որոնք սովորում են լրացուցիչ որևէ օտար լեզու:

ե) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները հետաքրքրվում են օտար լեզուներով և փորձում են սովորել առնվազն որոշ բառեր ու արտահայտություններ այդ լեզուներով:

զ) Արդյո՞ք օտար լեզուներով դասարանային և տնային աշխատանքներ հանձնարարվում են:

է) Արդյո՞ք դպրոցներն ապահովում են, որ երեխաները հնարավորություն ունենան ներկայացնելու լեզվական հմտություններ հանրային քննությունների ժամանակ:

ը) Արդյո՞ք դպրոցը պատշաճ արժևորում է այնպիսի մշակութային արժեքները, ինչպես, օրինակ, սնունդը, երաժշտությունն ու երգերը, որոնք երեխաները և նրանց ընտանիքները բերում են իրենց հետ այլ երկրներից:

թ) Արդյո՞ք որևէ լրացուցիչ լեզու սովորողներին տրամադրվող աջակցությունը ուղղված է ուսուցման խոչընդոտների հաղթահարմանը՝ դասավանդման, ուսումնական ծրագրերի և դպրոցի գործունեության բոլոր տեսանկյուններից:

ժ) Արդյո՞ք դասարանային աշխատանքների լեզվի և կրթական գործունեության փոփոխությունները, որոնք նպաստում են լրացուցիչ օտար լեզու սովորող երեխաների մասնակցության խթանմանը, օգտագործվում են այլ երեխաների ուսուցման ու մասնակցության խոչընդոտները նվազեցնելու ուղղությամբ:

ժա) Արդյո՞ք տրամադրվող աջակցության շրջանակներում դպրոցը փորձում է հայտնաբերել և օգնել հաղթահարելու երեխաների ուսուցման և մասնակցության խոչընդոտները՝ նրանց՝ որպես «լրացուցիչ օտար լեզու սովորողների» և «սովորելու դժվարություններ» ունեցողների դասակարգելու փոխարեն:

ժբ) Արդյո՞ք դպրոցն ունի ժեստերի լեզվով և օտար լեզուներով թարգմանիչներ տրամադրելու հնարավորություն:

ժգ) Արդյո՞ք բնակության երկիր փոխելը և նոր մշակույթի առնչվելը դիտվում են որպես ուսուցման և մասնակցության հնարավոր խոչընդոտ:

ժդ) Արդյո՞ք ապաստան հայցող երիտասարդների հոգեբանական տրավման դիտվում է որպես ուսուցման ընթացքում դժվարություններ հարուցող գործոն:

ժե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը օգնում է երեխաներին հասկանալու, որ այլ անձանց հետ հաղորդակցվելու հետաքրքրությունը և նրանց լսելու փորձերը կարող են օգնել հաղթահարելու տարբեր լեզուներ և մշակույթներ կրող երեխաների հետ շփման խոչընդոտները:

ժը) Արդյո՞ք մասնագետները փորձում են ուսուցման գործընթացում և այլ դեպքերում աջակցություն ստանալու համար երեխաների հետ նաև ներգրավել համընդհանուր մշակութային պատկանելություն ունեցող անձանց:

ժթ) _____

ի) _____

իա) _____

Բ2.4 Դպրոցն աջակցում է հանրային այլ հաստատություններում երեխաների կրթության շարունակականությանը:

Ա2.1 Դպրոցը ձևավորում ու զարգացնում է համընդհանուր ներառական արժեքներ: Ա2.7 Դպրոցը պայքարում է խտրականության բոլոր ձևերի դեմ: Բ2.8 Հաճախելիության խոչընդոտները հասցված են նվազագույնի:

ա) Արդյո՞ք աշխատակազմը նրբանկատորեն է մոտենում խոցելի երեխաների կյանք ներթափանցելու հարցին, հատկապես երբ վերջիններս դա չեն պահանջում:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը տեղյակ է, որ հանրային խնամքի հաստատությունների կողմից տրամադրվող ցածրորակ ծառայությունները կարող են նպաստել հասարակության խնդրահարույց անդամների ձևավորմանը:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը փորձում է բացառել հանրային խնամքի հաստատություններից դպրոց հաճախող երեխաների և երիտասարդների՝ ուսուցման ու աշխատանքի վերաբերյալ ունեցած բացասական վերաբերմունքը:

դ) Արդյո՞ք դպրոցը խուսափում է հանրային խնամքի հաստատությունների երեխաներին որպես միատեսակ խնդրահարույց դասակարգելուց:

ե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը օգնում է անապահով/խոցելի երեխաներին՝ մասնակցելու իրենց կրթության և անձնական կյանքի վերաբերյալ ընդհանուր որոշումների կայացման գործընթացին:

զ) Արդյո՞ք դպրոցը փորձում է չմեղադրել խնամքի հաստատությունների երեխաներին և սոցիալապես անապահով այլ երեխաների՝ իրենց նկատմամբ դրսևորվող խտրական վարքագծի համար:

է) Արդյո՞ք դպրոցն ապահովում է հասանելիությունը այն առանցքային անձանց, որոնց միջոցով երեխաները կարող են շարունակական կապ պահպանել դպրոցի հետ ինչպես ուսումնառության շրջանում, այնպես էլ դպրոցն ավարտելուց հետո:

ը) Արդյո՞ք խնամքի հաստատությունների փորձառու աշխատողները օգնում են դպրոցի աշխատակիցներին հաղթահարելու երեխաների հետ հարաբերությունների ձևավորման բոլոր խոչընդոտները:

թ) Արդյո՞ք խնամքի հաստատություններում երեխաների հետ աշխատող բոլոր մասնագետները պատկերացնում են, թե ինչպիսի առավելություններ են տալիս երեխաներին իրենց կրթական ձեռքբերումները:

ժ) Արդյո՞ք բոլոր աշխատակիցները փորձում են օգնել խոցելի երեխաներին իրենց լավ զգալ:

ժա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը դիտարկում է, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ խոցելի երեխաներին, այդ թվում՝ հանրային խնամքի հաստատությունների երեխաներին մերժելը կամ նրանց նկատմամբ կարգապահական պատիժ կիրառելը:

ժբ) Արդյո՞ք հատուկ աշխատանք տարվում է լրացուցիչ ուսումնական գործունեության մասնակցության խոչընդոտները հաղթահարելու:

ժգ) Արդյո՞ք նպատակային աշխատանքներ տարվում են՝ ծնողների/խնամատարների հետ ամուր կապեր հաստատելու:

ժդ) Արդյո՞ք հանրային խնամքի հաստատություններում երեխաներին տրամադրվող աջակցությունը խրախուսում է ուսուցման շարունակականությունը և դպրոցը փոխելու հաճախականությունը նվազագույնի հասցնելու ջանքերը:

ժե) Արդյո՞ք դպրոցն աջակցում է որոշ ժամանակ ուսուցման գործընթացին չմասնակցած երեխաներին լրացնելու բացթողումները, առանց բարեկամական հարաբերությունների ձևավորմանը վնասելու:

ժզ) Արդյո՞ք դպրոցը տրամադրում է տարածություն, որտեղ երեխաները կարող են կատարել իրենց տնային աշխատանքները դասերն ավարտելուց հետո:

ժէ) Արդյո՞ք դպրոցում առկա է համապատասխան վայր, որտեղ երեխաներն անհրաժեշտության դեպքում կարող են հանգստանալ ընդմիջման ժամերին, դասերից առաջ և հետո:

ժը) Արդյո՞ք միջնակարգ դպրոցները և քոլեջները հաշվի առնում են այն սահմանափակ աջակցությունը, որ հանրային խնամքի հաստատությունների երիտասարդները կարող են ստանալ չափահասության տարիք (18) մուտք գործելուց հետո, եթե նրանք չապահովեն իրենց աջակցության շարունակականությունը:

ժթ) _____

ի) _____

իա) _____

Բ2.5 Դպրոցն ապահովում է, որ «հատուկ կրթական կարիքներ»-ին առնչվող քաղաքականություններն աջակցեն ներառմանը:

Ա2.4 Ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցության մակարդակի աճ:

ա) Արդյո՞ք հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների մասին խոսելիս դպրոցի աշխատակազմն ի նկատի ունի կրթության պայմանները և շրջակա միջավայրի անհամապատասխանությունը, այլ ոչ թե երեխայի խնդիրները:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն անդրադառնում է սովորեցնելու իր փորձին՝ հասկանալու համար, թե երբ և ինչու են երեխաները սովորելը համարում դժվար զբաղմունք:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է որոշ երեխաների «նորմալ սովորողներ» անվանելուց՝ նկատի ունենալով, որ «հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաները» չեն համապատասխանում «նորմալ»-ի մասին պատկերացումներին:

դ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը դիտարկում է «հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխա» հասկացությունը «ուսուցման և մասնակցության խոչընդոտներ ունեցող երեխա» հասկացությամբ փոխարինելու տարբերակը:

ե) Արդյո՞ք ենթադրվում է, որ հաշմանդամության տարբեր տեսակները բնութագրող եզրույթների օգտագործումը, ինչպես, օրինակ, «ֆիզիկական հաշմանդամություն», «կույր», «խուլ» արտահայտությունները, նշանակում է խուսափել «հատուկ կրթական կարիքներ» ավելի ընդգրկուն եզրույթից:

զ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը պայքարում է երեխաներին որպես «աուտիկ», «Ասպերգերի համախտանիշով (սինդրոմով)», «Հիպերկինետիկ խանգարում և ուշադրության դեֆիցիտ (ՀԽՈՒԴ) ունեցող» և նմանատիպ այլ եզրույթներով պիտակավորելու աճող միտման դեմ:

է) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը քննարկում է երեխաների վարքագիծը վերահսկելու նպատակով օգտագործվող դեղորայքի չափաբաժինը:

ը) Արդյո՞ք ուսուցման և մասնակցության խոչընդոտները դիտվում են որպես հարաբերությունների, դասավանդման մոտեցումների ու ուսուցման գործողությունների, ինչպես նաև սոցիալական և նյութական հանգամանքների հետևանքներ:

թ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է «խոչընդոտներ» եզրույթը օգտագործելուց, որը ենթադրում է երեխաների մեջ առկա խանգարումներ, ինչպես, օրինակ, «խոչընդոտներ/խանգարումներ ունեցող երեխա» արտահայտության մեջ:

ժ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը հետևում է հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներին բացահայտելու պահանջներին՝ խուսափելով օգտագործել տվյալ եզրույթը այլ երեխաների հետ և միմյանց միջև առանձին երկխոսությունների ժամանակ:

ժա) Արդյո՞ք հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների աջակցության համար նախատեսված ռեսուրսներն օգտագործվում են դպրոցի՝ բազմազանությանն արձագանքելու կարողությունները բարելավելու համար:

ժբ) Արդյո՞ք հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներին տրամադրվող աջակցության աշխատանքները համակարգող անձը կոչվում է «ուսուցման գործընթացին օժանդակող», «ուսուցման զարգացման» կամ «ներառման համակարգող»՝ «հատուկ կրթական կարիքները համակարգող» եզրույթի փոխարեն:

ժգ) Արդյո՞ք աջակցության աշխատանքները համակարգող մասնագետը փորձում է բարելավել դպրոցի՝ բազմազանությանն արձագանքելու կարողությունները՝ ապահովելով երեխաներին հավասարապես արժևորելու մոտեցումը:

ժդ) Արդյո՞ք ուսուցման և մասնակցության խոչընդոտներ ունեցող երեխաները դիտվում են որպես անհատներ, որոնք ունեն այլ հետաքրքրություններ, գիտելիքներ ու հմտություններ, այլ ոչ թե որպես միատարր խմբի անդամ:

ժե) Արդյո՞ք առանձին երեխաների ուսուցման և մասնակցության խոչընդոտները վերացնելու փորձերը օգտագործվում են որպես մոտեցումներ՝ բոլոր երեխաների ուսուցման և մասնակցության գործընթացը բարելավելու համար:

ժզ) Արդյո՞ք մեծահասակների կողմից տրամադրվող լրացուցիչ աջակցության կարիքը դիտվում է որպես երեխայի իրավունք՝ դասակարգման կամ պաշտոնական գնահատականի փոխարեն:

ժէ) Արդյո՞ք աջակցություն ստանալու բոլոր իրավունքների մասին մանրամասն տեղեկատվություն տրամադրվում է երեխաներին ու նրանց ծնողներին/խնամատարներին:

ժը) Արդյո՞ք հատուկ աջակցության կարիք ունեցող երեխաների հեռացումը հանրակրթական դպրոցներից հասցված է նվազագույնի:

ժթ) Արդյո՞ք այն գաղափարը, որ նույն դասարանում սովորող երեխաները կարող են տարբեր վայրերում տարբեր կերպ իրենց դրսևորել, դիտվում է որպես յուրաքանչյուր երեխայի սովորական վարքագծի բաղադրիչ:

ի) Արդյո՞ք անհատական ուսումնական ծրագրերը վերաբերում են այլ անձանց հետ սովորելու գործընթացին:

իա) Արդյո՞ք որոշ երեխաների համար մշակվող անհատական ուսումնական ծրագրերը կարող են ծառայել որպես լավ հնարավորություն՝ բոլոր երեխաների դասավանդման և ուսուցման գործընթացը բարելավելու համար:

իբ) Արդյո՞ք «հատուկ կրթական կարիքներին» առնչվող հայտարարություններում քննարկվում է, թե ինչպես կարելի է հաղթահարել ուսուցման և մասնակցության խոչընդոտները՝ դասավանդման և ուսուցման գործընթացում աջակցություն ցուցաբերելով:

Բ2.6 Վարքագծային քաղաքականությունը կապված է ուսումնառության եւ կրթակարգի զարգացման հետ:

Ա1.4 Աշխատակազմն ու երեխաները հարգում են միմյանց: Ա1.5 Աշխատակազմը և ծնողները/խնամատարները համագործակցում են միմյանց հետ: Ա1.9 Չափահասները և երեխաները պատշաճորեն են արձագանքում մարդկանց սեռային պատկանելությանը և սեռերի հավասարությանը: Բ2.7 Կարգապահական նկատառումներով, դպրոցից հեռացումը՝ որպես պատիժ, հազվադեպ է կիրառվում: Բ2.9 Վախերը և ահաբեկումը հասցված են նվազագույնի:

ա) Արդյո՞ք վարքագծային քաղաքականությունը շարադրված է հստակորեն և մշակվել է երեխաների, նրանց ծնողների ու դպրոցի աշխատակազմի, արհմիությունների հետ երկար խորհրդակցությունների և փոխադարձ համաձայնության հիման վրա:

բ) Արդյո՞ք վարքագծային քաղաքականությունը վերաբերում է ինչպես մեծահասակներին, այնպես էլ երեխաներին:

գ) Արդյո՞ք վարքագծային քաղաքականությունն առնչվում է դպրոցում համագործակցային համայնքների ձևավորմանը և համընդհանուր արժեքների կիրառմանը:

դ) Արդյո՞ք վարքագծին առնչվող միջամտությունների նպատակը ուսուցման ներգրավվածության և հարաբերությունների բարելավման ապահովումն է:

ե) Արդյո՞ք դպրոցը ձգտում է խթանել ուսուցման մասնակցությունը՝ ուսուցման գործընթացի բարելավմամբ:

զ) Արդյո՞ք որոշ երեխաների ուսուցման ներգրավվածության խթանման շուրջ մտահոգությունները ենթադրում են բոլոր երեխաների դասավանդման և ուսուցման եղանակների բարելավում:

է) Արդյո՞ք վարքագծային քաղաքականության նպատակն է կանխել ներգրավված անձանց դժգոհություններն ու վարքագծային խնդիրները:

ը) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները բացահայտում են վարքագծային խնդիրների առաջացման հանգամանքները՝ համապատասխան քաղաքականությամբ դրանք լուծելու նպատակով:

թ) Արդյո՞ք վարքագծային խնդիրները կրճատելու քաղաքականությունն առնչվում է դասերից առաջ և հետո, ինչպես նաև խաղահրապարակներում երեխաների վարքը բարելավելու ուղղությամբ կիրառվող ռազմավարություններին:

ժ) Արդյո՞ք վարքագծային քաղաքականությունն ուղղված է միայն ուսուցման և մասնակցության խոչընդոտների հաղթահարմանը:

ժա) Արդյո՞ք դպրոցում առկա փոխհարաբերությունների բարելավումը համարվում է բոլոր երեխաների և մեծահասակների պատասխանատվությունը:

ժբ) Արդյո՞ք վարքագծային քաղաքականությունը խրախուսում է մեծահասակներին աջակցել միմյանց՝ չափահասների ու երեխաների և սովորողների միջև վեճերը կանխելու ռազմավարությունների մշակման նպատակով:

ժգ) Արդյո՞ք վարքագծային քաղաքականությունը թույլ տալիս է բացահայտել այն երեխաների խնդիրները, որոնք սովորաբար լռում են դրանց մասին:

ժդ) Արդյո՞ք դպրոցը փորձում է բարձրացնել երեխաների ցածր ինքնագնահատականը:

ժե) Արդյո՞ք խնդիրներ ունեցող երեխաները տեղյակ են, որ կարող են աջակցություն և ուշադրություն ստանալ նախքան դժգոհություն արտահայտելը:

ժզ) Արդյո՞ք դպրոցը դիմում է սոցիալական աշխատողների և երիտասարդական կազմակերպությունների աջակցությանը՝ դպրոցից դուրս վեճեր ունեցող երեխաների խմբերի միջև հակասությունները լուծելու նպատակով:

ժէ) Արդյո՞ք դպրոցը կիրառում է ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման փոփոխմանն ուղղված այնպիսի եղանակներ, որոնք թույլ են տալիս նվազագույնի հասցնել վարքագծային խնդիրները, օրինակ, պարբերաբար ներառել միևնույն մարդկանց և նրանց մշտապես աջակցություն ցուցաբերել՝ մշակելով մշտապես աջակցություն ցուցաբերելու մեխանիզմներ:

ժը) Արդյո՞ք դպրոցն ուսումնասիրում է տղաների կողմից դպրոցում և նրա սահմաններից դուրս ցուցաբերվող «տղայավարության» վարքագծի դրսևորումների պատճառներն ու հետևանքները:

ի) _____

իա) _____

Բ2.7 Կարգապահական նկատառումներով, դպրոցից հեռացումը՝ որպես պատիժ, հազվադեպ է կիրառվում:

Ա1.2 Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ: Ա1.4 Աշխատակազմն ու երեխաները հարգում են միմյանց: Ա1.7 Դպրոցը ժողովրդավարական քաղաքացիության մոդել է: Բ2.6 Վարքագծային քաղաքականությունը կապված է ուսումնառության և կրթակարգի զարգացման հետ: Գ2.8 Կարգապահությունը հիմնված է փոխադարձ հարգանքի վրա:

ա) Արդյո՞ք որպես կարգապահական պատիժ դասերից հեռացնելը դիտվում է որպես մի գործընթաց, որը ներառում է հարաբերությունների աստիճանական խզում, ինչպես նաև դասարանից կամ դպրոցից մեկուսացում:

բ) Արդյո՞ք վարքագծային քաղաքականությունը նախատեսում է նվազագույնի հասցնել որպես կարգապահական պատիժ դասերից հեռացնելու բոլոր ձևերը՝ ժամանակավոր և մշտական, ֆորմալ և ոչ ֆորմալ:

գ) Արդյո՞ք կարգապահական պատիժը կարող է ընդհատվել դասավանդման և ուսուցման գործողությունների շրջանակներում, հարաբերությունների հիման վրա տրամադրվող աջակցությամբ ու միջամտությամբ:

դ) Արդյո՞ք դպրոցի քաղաքականությունները թույլ են տալիս նվազագույնի հասցնել որպես կարգապահական պատիժ՝ աշակերտներին դասերից հեռացնելու դեպքերը:

ե) Արդյո՞ք երեխաների և ծնողների/խնամատարների գիտելիքներն ու փորձը թույլ են տալիս նվազեցնել դժգոհությունները և հարաբերությունների խզումը:

զ) Արդյո՞ք կազմակերպվում են հանդիպումներ դպրոցի աշխատակազմի, երեխաների, նրանց ծնողների/խնամատարների և այլ անձանց մասնակցությամբ նախքան խնդրի սրվելը՝ այն ավելի ճկուն լուծելու նպատակով:

է) Արդյո՞ք դպրոցը դիտարկում է երեխաների թերագնահատման ու դժգոհությունների, հարաբերությունների խզման և կարգապահական նպատակով դասերից հեռացման միջև կապը:

ը) Արդյո՞ք դպրոցը խուսափում է թերագնահատված խմբերում դժգոհության կուտակումներից:

թ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը փորձում է անդրադառնալ երեխաների՝ թերագնահատման հետևանքով առաջացած զգացումներին:

ժ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը փորձում է նվազեցնել էթնիկ խմբերի կամ սոցիալական դասերի միջև հակամարտությունը:

ժա) Արդյո՞ք երեխաների վարքագծային մտահոգությունների արձագանքները մշտապես առնչվում են կրթությանը և վերականգնմանը, այլ ոչ թե հատուցմանը:

ժբ) Արդյո՞ք դպրոցի համայնքից վիրավորված երեխաներին կամ այլ անձանց ցուցաբերվում է ներողամիտ վերաբերմունք:

ժգ) Արդյո՞ք բոլորի համար լիարժեք ընկալելի է, որ դպրոցի մշակույթում ընդունված են մարդկանց ներողություն խնդրելը և փոխհատուցելը՝ առանց «դեմքը կորցնելու»:

ժդ) Արդյո՞ք երեխայի հերթական բարկության պոռթկումը դիտվում է որպես պատճառ՝ օգնություն տրամադրելու, այլ ոչ թե պատժելու:

ժե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը հետևում է իր պարտականությանը՝ հավասարապես հոգ տանել բոլոր երեխաների նկատմամբ, նույնիսկ վարքագծային խնդիրներին անդրադառնալիս:

ժզ) Արդյո՞ք դպրոցում գործում են հստակ, դրական ծրագրեր՝ կարգապահական նպատակով դպրոցից երկար ժամանակ բացակայող երեխաներին կրկին ընդունելու համար:

ժէ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը պատասխանատվություն կրում է այն ամենի համար, ինչ տեղի է ունենում երեխաների հետ՝ նույնիսկ կարգապահական նպատակով դասերից հեռացված լինելու ժամանակ:

ժը) Արդյո՞ք դպրոցը նախատեսում է վերահսկել և նվազեցնել երեխաների ու երիտասարդների կախվածությունը նիկոտինից և/կամ այլ թմրանյութերից:

ժթ) Արդյո՞ք դպրոցը աշխատակազմին, ծնողներին, ղեկավարներին ներկայացնում է պարբերական զեկույցներ կարգապահական նպատակներով երեխաներին դասերից հեռացնելու վերաբերյալ:

ի) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը մշտադիտարկում է կարգապահական նպատակներով դասերից ժամանակավոր, մշտական, ֆորմալ և ոչ ֆորմալ հեռացումների թվի կրճատումը:

իա) _____

իբ) _____

Բ2.8 Հաճախելիության խոչընդոտները հասցված են նվազագույնի:

Ա2.9 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը: Բ2.9 Վախերը և ահաբեկումը հասցված են նվազագույնի:

ա) Արդյո՞ք հաճախումների բոլոր խոչընդոտները ուսումնասիրվում են դպրոցի մշակույթի, քաղաքականության և գործելակերպի շրջանակներում, ինչպես նաև երեխաների և երիտասարդների վերաբերմունքի, ընտանեկան իրավիճակի տեսանկյունից:

բ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը փորձում է բացահայտել, թե ինչու են երեխաները պարբերաբար ուշանում, և արդյո՞ք առաջարկում է համապատասխան աջակցություն:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը տեղյակ է, թե թվով քանի երեխայի համար է դպրոցը դրական և քանիսի համար՝ ոչ այնքան դրական միջավայր:

դ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է երեխաներին հանգամանալից պատմել, թե ինչպես կարելի է բարելավել դպրոցում ունեցած իրենց դրական փորձը:

ե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը փորձում է երեխաների ծնողների/խնամատարների հետ արդյունավետ քննարկումներ կազմակերպել երեխաների անթույլատրելի բացակայությունների շուրջ:

զ) Արդյո՞ք դպրոցը խուսափում է անհարգելի բացակայությունը՝ որպես կարգապահական պատժի պատճառ դիտելուց:

է) Արդյո՞ք դպրոցը խուսափում է բացակայությունը՝ որպես բացառման ոչ պաշտոնական ձև խրախուսելուց:

ը) Արդյո՞ք երկար ժամանակ բացակայող երեխաներին ցուցաբերվում է իրապես ջերմ ընդունելություն դպրոց վերադառնալիս:

թ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը երեխաների անհարգելի բացակայությանը վերաբերվում է անաչառ՝ անկախ սեռից կամ էթնիկ պատկանելությունից:

ժ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը ուսումնասիրում է բացակայության և խոցելիության միջև կապը, որը կարող է բխել, օրինակ, աջակից ընկերների բացակայությունից, անապահովության զգացումից և այլ հանգամանքներից:

ժա) Արդյո՞ք ահաբեկումը, ճնշումները դիտարկվում են դպրոցից բացակայության պատճառների շարքում:

ժբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի կողմից երեխաների հիվանդացության վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան արձագանք ստանում է:

ժգ) Արդյո՞ք դպրոցն ակտիվորեն աջակցում է այն երեխաների վերադարձին դպրոց, որոնք երկար ժամանակ բացակայել են ծանր կորստի, քրոնիկական հիվանդության կամ այլ պատճառներով:

ժդ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է իր աշխատակիցներին կրթական գործունեություն ինտեգրել այն անձանց փորձը, որոնք բացակայել են երկար ժամանակով:

ժե) Արդյո՞ք դպրոցի և համապատասխան գերատեսչությունների միջև գործում է համակարգված ռազմավարություն և միասնական մոտեցում երեխաների բացակայության հարցերի շուրջ:

ժզ) Արդյո՞ք գործում է բացակայությունների զեկուցման ու արձանագրման, դրանց պատճառները բացահայտելու և հասկանալու արդյունավետ համակարգ:

ժէ) Արդյո՞ք գրանցվում են բացակայությունները՝ դասերից առանձին:

ժը) Արդյո՞ք դասերից բացակայությունը կարող է դիտվել որպես ծխախոտ և/կամ այլ դեղամիջոցներ օգտագործելու հակումներ ունենալու փաստ, և արդյո՞ք բացակայությունները նվազեցնելու նպատակով ծխելու և թմրամիջոցների օգտագործման դեմ պայքար տարվում է:

ժթ) Արդյո՞ք կոնկրետ դասերից հաճախակի բացակայությունները կարող են դիտվել որպես ուսուցիչների հետ վատ հարաբերությունների հետևանք:

ի) Արդյո՞ք հաճախակի բացակայությունների պատճառ կարող է դիտվել նաև սովորողների՝ դասերին անպատրաստ ներկայանալու և անբավարար գնահատական ստանալու մտավախությունը:

իա) Արդյո՞ք համապատասխան աշխատանքից հետո նվազում է անհարգելի բացակայությունների թիվը:

իբ) _____

իգ) _____

Բ2.9 Վախերը եւ ահաբեկումը հասցված են նվազագույնի:

Ա2.8 Դպրոցը խրախուսում է հարաբերությունների պարզաբանման և վեճերի լուծման ոչ բռնի ձևերը:

Գ2.6 Դասերը զարգացնում են մարդկանց նմանությունների ու տարբերությունների ըմբռնումը:

ա) Արդյո՞ք մեծահասակները և երեխաներն ունեն ընդհանուր տեսակետ, թե ինչ է ահաբեկումը:

բ) Արդյո՞ք կա ահաբեկման վերաբերյալ հրապարակված որևէ հայտարարություն, որը հասկանալի է բոլորի համար և սահմանում է, թե որ վարքագիծն է ընդունելի, և որը՝ անընդունելի, այդ թվում՝ կիբեր-ահաբեկումները:

գ) Արդյո՞ք ահաբեկելը դիտվում է որպես բոլոր ուժային հարաբերությունների հնարավոր բաղադրիչ և իշխանության չարաշահում:

դ) Արդյո՞ք ահաբեկելը դիտվում է որպես մեծահասակների ու երեխաների դեմ կատարվող հետապնդումների և նրանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի բաղկացուցիչ մաս:

ե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը զգոնություն ցուցաբերում է երեխաների կողմից միմյանց նկատմամբ ֆիզիկական ներգործությունների (ինչպես ոտքով հարվածելը) չարաշահումը կանխելու համար:

զ) Արդյո՞ք ահաբեկելն առնչվում է խոսքային և հուզական առումով ցավ պատճառելուն, ինչպես նաև ֆիզիկական հարձակմանը:

է) Արդյո՞ք ընկերական հարաբերությունները խզելու սպառնալիքը դիտվում է որպես ահաբեկման աղբյուր:

ը) Արդյո՞ք որևէ մեկին ծաղրելով ցավ պատճառելը դիտվում է որպես ահաբեկում:

թ) Արդյո՞ք ռասիստական, սեռային, դասակարգային խտրականություն պարունակող, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ դրսևորվող խտրական դիտողություններն ու վարքագիծը դիտվում են որպես ահաբեկման ասպեկտներ:

ժ) Արդյո՞ք անձնական հատկանիշների հիման վրա, ինչպես օրինակ, մազերի գույնը կամ քաշը, ակնոց դնելը, արված բացասական մեկնաբանություններն ընկալվում են որպես ահաբեկում:

ժա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է ահաբեկման պատճառների մասին այնպիսի ենթադրություններից, ինչպես, օրինակ, այն, որ հաշմանդամություն ունեցող երեխան ենթարկվում է ահաբեկման՝ խտրական վերաբերմունքի հետևանքով:

ժբ) Արդյո՞ք դպրոցը խորհրդակցում է մի շարք կազմակերպությունների հետ ահաբեկման դեմ պայքարի ուղեցույցներ կազմելիս:

ժգ) Արդյո՞ք դպրոցը տարբերակում է կառավարման աջակցող և ագրեսիվ ոճերը:

ժդ) Արդյո՞ք ահաբեկելը դիտվում է որպես նշան այն մասին, որ ահաբեկողն անձամբ խոցելի է և ունի աջակցության կարիք:

ժե) Արդյո՞ք դպրոցի ղեկավարությունը փորձում է թաքցնել կամ խուսափում է բացահայտել ահաբեկման ծավալները՝ դպրոցի դրական վարկանիշը պահպանելու նպատակով:

ժզ) Արդյո՞ք ահաբեկման ենթարկված երեխաները կարող են ընտրել իրենց աջակցություն ցուցաբերող մասնագետին:

ժէ) Արդյո՞ք կան կազմակերպություններ, որոնց դպրոցի աշխատակազմը կարող է դիմել ահաբեկման ենթարկվելու դեպքում:

ժը) Արդյո՞ք դպրոցը վերապատրաստում է երեխաներին՝ որպես միջնորդների, ծաղր պարունակող միջադեպերում իրենց ներգրավվածությամբ ահաբեկումը կանխելու և նվազագույնի հասցնելու նպատակով:

ժթ) Արդյո՞ք դպրոցը վարում է հստակ գրառումներ ծաղր պարունակող միջադեպերի վերաբերյալ:

իա) _____

Հարթություն «Գ». Ներառական գործելակերպի զարգացում

Գ1. Կրթակարգ բոլորի համար

1. Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության և սպառման շրջափուլերը:
2. Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը:
3. Երեխաներն ուսումնասիրում են հագուստը և զարդարանքը:
4. Երեխաները բացահայտում են կացարանային և շենքային միջավայրը:
5. Երեխաները քննարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում և աշխարհի շուրջը:
6. Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության և փոխհարաբերությունների մասին:
7. Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգն ու տիեզերքը:
8. Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:
9. Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:
10. Երեխաները սովորում են կապի և հաղորդակցման տեխնոլոգիաների մասին:
11. Երեխաներն զբաղվում են գրականությամբ, արվեստով ու երաժշտությամբ և ստեղծագործում են:
12. Երեխաները սովորում են տարբեր աշխատանքներ և այն կապակցում են իրենց հետաքրքրությունների զարգացմանը:
13. Երեխաները սովորում են էթիկայի կանոնների, իշխանության և կառավարման մարմինների մասին:

Գ2. Ուսուցման գործընթացի կազմակերպում

1. Ուսուցման գործընթացը պլանավորվում է՝ հաշվի առնելով բոլոր երեխաների ունակությունները:
2. Ուսուցման գործընթացն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը:
3. Երեխաները խրախուսվում են իրենց քննադատական մտածողության համար:
4. Երեխաներն ակտիվորեն մասնակցում են իրենց ուսուցման գործընթացին:
5. Երեխաները սովորում են միմյանցից:
6. Դասերը զարգացնում են մարդկանց նմանությունների և տարբերությունների ըմբռնումը:
7. Գնահատականները խրախուսում են երեխաների ձեռքբերումները:
8. Կարգապահությունը հիմնված է փոխադարձ հարգանքի վրա:
9. Աշխատակազմն իրականացնում է պլանավորման, ուսուցման ու վերանայման համատեղ աշխատանքներ:
10. Աշխատակազմը մշակում է ուսուցման գործընթացի օժանդակ համընդհանուր ռեսուրսներ:
11. Ուսուցման գործընթացի օգնականներն աջակցում են բոլոր երեխաների ուսումնառությանը և մասնակցության ապահովմանը:
12. Տնային աշխատանքների կառուցվածքը նպաստում է յուրաքանչյուր երեխայի ուսումնառության գործընթացին:
13. Արտադասարանային պարապմունքները հասանելի են բոլոր երեխաների համար:
14. Դպրոցը տեղյակ է իր շրջակայքի ռեսուրսներին և օգտվում է դրանցից:

Գ1. Կրթակարգ բոլորի համար

Կրթակարգ բոլորի համար բաժինը (Բաժին Գ1) առաջարկում է ուսումնական ծրագրերի մշակման մի մոտեցում, որը նախատեսում է լուրջ վերաբերմունք ներառական արժեքներին: Այն նպաստում է ակտիվ, քննադատական և ռեֆլեկտիվ ուսուցման խթանմանը, առաջարկում ուսուցման գործընթացը դիտարկել այնպիսի փորձի տեսանկյունից, որի հիման վրա ձևավորվում է պատկերացում շրջակա միջավայրի և ամբողջ աշխարհի մարդկանց փոխկապակցվածության մասին: Ինչպես մյուս բաժինները, սույն բաժինը նույնպես կառուցված է հարցերի շուրջ: Մենք ցանկանում ենք, որ դրանք օգտագործվեն դասարաններում և դրանցից դուրս զանգվածային հետազոտություններ նախաձեռնելիս, ինչը թույլ կտա երեխաներին ու մեծահասակներին ավելի խորը դիտարկել առարկայական ոլորտների ցուցիչները: Յուրաքանչյուր հարցի դեպքում «սովորել», «ուսումնասիրել», «քննել», «հետազոտել» կամ «հաշվի առնել» բառերի կիրառումը ենթադրում է ուսուցման ակտիվ բնույթ:

Գիտելիքի ձեռքբերման մոտեցումների մշակումը հսկայական աշխատանք է: Ներկայացված նյութի բնույթից ելնելով՝ այս բաժնում, *Ինդեքսի* մյուս բաժինների համեմատ, յուրաքանչյուր ցուցիչի վերաբերյալ առաջարկվում են ավելի շատ հարցեր, որոնք բաժանված են ըստ վերնագրերի և ենթավերնագրերի: Հուսով ենք, որ առաջարկվող հարցերը կօգնեն զարգացնելու երեխաների ու մեծահասակների հետաքրքրասիրությունը և առաջարկելու լրացուցիչ հարցեր: Սույն բաժնում առաջարկվող հարցերից շատերը ներկայացնում են ենթադրելի պատասխանների օրինակներ: Մենք երկար ենք մտածել պատասխաններ առաջարկելու հարցի շուրջ, քանի որ կարծում ենք՝ ուսուցման գործընթացը պետք է լինի շատ ավելի բաց: Այնուամենայնիվ, այստեղ ներկայացված բովանդակությունը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է այդ ցուցիչների հիման վրա մշակել կրթակարգը, որն ունենա և՛ խորություն, և՛ լայնություն, նախատեսված լինի բոլոր տարիքի սովորողների համար՝ այսպիսով, ապահովելով ավանդական կրթակարգի կենսունակ այլընտրանք:

Սույն բաժնի ներկայացումն ընթացքի մեջ է, ուստի կրթակարգի մշակման բոլոր առաջարկությունները կարելի է դիտարկել այդ տեսանկյունից: Այն պետք է դիտարկվի որպես առաջարկ մեծահասակներին ու երեխաներին, առաջարկ, որին նրանք կարող են անդրադառնալ իրենց ծրագրերի մշակման համատեղ աշխատանքների ժամանակ՝ որոշակի առանձնահատուկ հանգամանքներից ելնելով: Ներկայացված որոշ առաջարկություններ մշակվել են ավելի մանրամասնորեն, քան մյուսները: Մենք կցանկանայինք ընդլայնել սույն աշխատանքը Անգլիայի, Միացյալ Թագավորության այլ երկրների, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրների համապատասխան մասնագետների հետ համագործակցությամբ: Ինչպես առաջարկվում է 2-րդ բաժնում, հուսով ենք, որ մասնագետները կներկայացնեն կրթակարգի մշակման սույն մոդելը բարելավելու և զարգացնելու իրենց առաջարկությունները՝ դրանք ուղարկելով էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեով՝ info@indexforinclusion.org, որոնք կներկայացվեն մեր կայքում՝ indexforinclusion.org.

Գ1.1 Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության եւ սպառման շրջափուլերը:

Ա2.9 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը: Գ1.6 Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության և փոխհարաբերությունների մասին: Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը: Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:

Փոխադարձ կապերը տեղական ու գլոբալ մակարդակներում

- Արդյո՞ք դպրոցն ունի պարտեզ կամ մերձակա այգի, որտեղ երեխաները կարող են բույսեր աճեցնել սննդի համար:
- Արդյո՞ք դպրոցը համագործակցում է տեղական ֆերմաների հետ:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե որտեղից են մատակարարվում իրենց նախընտրած սնունդն ու ըմպելիքը:
- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են իրենց և այլ երկրներում ընդունված սննդի նախասիրությունները և սննդակարգերը:
- Արդյո՞ք ընտանիքները և համայնքները խրախուսում են երեխաներին սովորել մթերք աճեցնել:
- Արդյո՞ք երեխաները սովորում են սննդի մասին՝ դպրոցում տրամադրվող սննդի և ճաշարանից օգտվելու միջոցով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են կենդանիների բարեկեցության մասին դպրոցի՝ կաթնամթերք, հավկիթ և միս գնելու քաղաքականությունից:
- Արդյո՞ք դպրոցը սննդամթերք գնում է տեղական ֆերմերներից և ֆերմերային շուկաներից:
- Արդյո՞ք ֆերմաներում, տներում և ռեստորաններում սննդամթերք գնող, աճեցնող և պատրաստող անձինք որևէ կերպ նպաստում են դասերի կազմակերպման գործընթացին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են գլոբալ ազդեցությունները իրենց ընդունած սննդամթերքի, դրա ծագման և պատրաստման եղանակների վրա:
- Արդյո՞ք երեխաները կազմում են այն վայրերի ցանկը, որտեղից մատակարարվում է իրենց տեղական խանութներում և հանրախանութներում վաճառվող սննդամթերքը, և գնահատո՞ւմ են, թե քանի՛ մղոն և ի՛նչ ճանապարհներով է անցնում տվյալ սննդամթերքն այդտեղ հասնելու համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են սննդի ընդունման նախապատվությունների տեղական, ազգային և միջազգային տարբերությունները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է պատրաստվում փողոցում վաճառվող սնունդը տեղական և միջազգային մակարդակներում:

Սննդի արտադրման եւ սպառման շրջափուլերը

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է սննդի արտադրման և սպառման շրջափուլը ներառում հետևյալ փուլերը՝ հողի նախապատրաստում, տնկում, աճեցում, հավաքում, պահեստավորում/պահածոյացում, մշակում, բաշխում/փոխադրում, շուկայավորում, գնում, պահեստավորում, եփում, սննդի ընդունում, թափոնների հեռացում և պարարտացում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են սննդի արտադրման և սպառման շրջափուլերը կապված ազոտի, ածխածնի ու ջրի արտադրման և օգտագործման շրջափուլերի հետ:

Սննդային ցանցեր (տե՛ս Կենսաապահովման համակարգերը, էջ 220)

Արդյո՞ք երեխաները պատկերում են սննդային ցանցեր՝ ներառելով արևը, բուսամթերքների արտադրությամբ զբաղվող անձանց և կազմակերպություններին, կենդանական ծագման սննդի սպառողներին, աղբահան/սանիտար կենդանիներին և սնկային ու բակտերիալ կազմալուծիչներին:

Բուսամթերքների աճեցում եւ հողօգտագործում

- Արդյո՞ք երեխաներն ստանում են գիտելիքներ հողի մասին, և թե ինչպես է հողի կազմն ու կառուցվածքն ազդում իր մեջ աճող բուսամթերքի վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հողի բերրիության բարելավման գործում բակտերիաների դերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հողի էրոզիայի պատճառների և հետևանքների մասին:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են միատեսակ և բազմամյա բույսերի աճեցման նպատակով հողի օգտագործման հետևանքները:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են, թե ինչու է հողն օգտագործվում ալկոհոլային խմիչքների, ծխախոտի և ապօրինի թմրանյութերի, այլ ոչ թե միայն սննդի արտադրության նպատակով:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ում է պատկանում այն հողատարածքը, որտեղ աճեցվում է իրենց օգտագործած սննդամթերքը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են այն մասին, թե ինչպես են անտառները փոխակերպվում գյուղատնտեսական հողերի, և թե ինչպես է դա ազդում ջերմոցային գազերի ծավալների աճի վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքանով է տարբեր երկրներում գյուղատնտեսությունը մեքենայացված:

Բույսերի սեզոնային փուլերը եւ եղանակը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են բուսամթերքի աճեցման և սեզոնների միջև կապը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են բուսամթերքի աճեցման վրա կլիմայի ազդեցության մասին:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են, թե ինչպես են գլոբալ տաքացումը և ավելի ծայրահեղ եղանակային պայմաններն ազդում սննդի արտադրության վրա:

Վնասատուներ եւ մոլախոտեր

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է վերահսկել վնասատուների աճը՝ և՛ բնական, և՛ արհեստական ճանապարհով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է վերահսկել մոլախոտերի աճը՝ և՛ բնական, և՛ արհեստական ճանապարհով:

Կենդանական ծագման սննդամթերք

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են բուծվում գյուղատնտեսական կենդանիները՝ սննդի մեջ օգտագործման նպատակով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ծովերի, գետերի և ձկնաբուծական տնտեսությունների ձկներին՝ սննդի մեջ օգտագործելու տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ձկան պաշարների սպառումը, ձկնորսական քվոտաների հետևանքները և պաշարների վերականգնման հնարավորությունները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են սննդի նպատակով կենդանիների բուծման արդյունաբերական մեթոդների մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են կովերից, ոչխարներից և այլ կենդանիներից ստացվող կաթի արտադրությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հավկիթի արտադրությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են մեղրի արտադրությունը և մեղվաբուծությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են կենդանիների հիվանդությունների մասին (ինչպես, օրինակ, ոտքերի ու բերանի խոռոչի հիվանդությունները, խոշոր եղջերավոր կենդանիների սպունգանման էնցեֆալոպաթիան) և այդ հիվանդությունների տարածման հետևանքներն իրենց և այլ երկրներում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են թունաքիմիկատների և հակաբիոտիկների կիրառումը՝ կենդանիների հիվանդությունները վերահսկելու նպատակով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հորմոնների օգտագործումը՝ կենդանիների աճը խթանելու նպատակով:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են, թե որքան հողատարածք է անհրաժեշտ՝ նույն սննդային արժեքով բանջարեղեն աճեցնելու և սննդի նպատակով կենդանիներ բուծելու համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են անասուններն արտադրում մեծ քանակությամբ ջերմոցային գազեր (մեթան):

Տրանսպորտային տեղափոխում

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է սնունդը տեղափոխվում միջազգային և ազգային ճանապարհներով՝ արտադրողներից սպառողներին հասնելու համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են գյուղատնտեսական կենդանիները տեղափոխվում միջազգային և ազգային ճանապարհներով՝ մսի արտադրության ու մթերման համար:

Սննդի պատրաստում եւ ընդունում

- Արդյո՞ք երեխաները դպրոցում սովորում են ուտելիք պատրաստել և եփել:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են ոչ միայն սնունդ ընդունելու, այլև պատրաստելու հաճույքները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ով է սնունդ պատրաստում և եփում, և թե ինչու որոշ մարդիկ դա չեն անում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե մարդիկ որքան են կարդում խոհարարական գրքեր, հեռուստացույցով դիտում խոհարարական ծրագրեր և անձամբ զբաղվում խոհարարությամբ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են այն տարբեր ժամերը, երբ մարդիկ սնունդ են պատրաստում:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են այն հարցը, թե մարդիկ որքան են օգտագործում կիսաֆաբրիկատներ՝ ժամանակի սղության պատճառով:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են, թե միասին ճաշելը ինչպես է ամրապնդում մարդկանց միջև հարաբերությունները:

Համեմունքներ

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են համեմաբույսերի և համեմունքների օգտագործման ժամանակակից միտումները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում աղի օգտագործման խնդիրը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ աղը և համեմունքները դառնում են առևտրի տեսանկյունից արժեքավոր ապրանքներ:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են սննդի հավելումների առավելություններն ու թերությունները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են տարբեր մշակույթներում և սննդի ավանդույթներում համեմունքների օգտագործումը:

Պահեստավորում/պահածոյացում

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են սննդի պահեստավորումը սառնարաններում, պահածոյացման տարաներում, շշերում, ծխեցրած և աղ դրած վիճակում:

Թափոնների հեռացում, կոմպոստի՝ զանազան օրգանական նյութերի քայքայումից ստացվող պարարտանյութի պատրաստում եւ պարարտացում

- Արդյո՞ք երեխաները սովորում են կոյուղու/ջրահեռացման համակարգերի և թափոնների հեռացման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հողի որակի բարելավման նպատակով գոմաղբի օգտագործման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են պարարտացման մոտեցումների մասին, որոնք ենթադրում են պարարտանյութերի և որդերի համար նախատեսված տարաների օգտագործում:

Սնուցում, առողջություն եւ հիվանդություն

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ովքեր են ստանում բավարար և անբավարար սննդարար արժեք ունեցող ուտելիք:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են բազմաթիվ մարդկանց համար զանգվածային սպառման սննդամթերքի կարևորությունն ամբողջ աշխարհում:
- Արդյո՞ք երեխաները համեմատում են առողջարար սնունդը մարդկանց կողմից օգտագործվող սննդի հետ:
- Արդյո՞ք երեխաները տարբերակում են առողջարար և անառողջ՝ արագ սնունդը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են աղտոտված սնունդը և ջուրը դառնում հիվանդության աղբյուր:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է կանխել սննդին առնչվող մի շարք հիվանդություններ՝ սննդամթերքի ճիշտ պահեստավորման, թարմության ու մաքրության ապահովման և պատրաստման ճիշտ եղանակների միջոցով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ալկոհոլային խմիչքների սպառումը, և թե ինչ ազդեցություն են դրանք գործում առողջության պահպանման և առողջության վատթարացման տեսանկյունից:

Պարենային ապրանքների գները

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են սննդամթերքի գները, և թե ինչպես են դրանք անդրադառնում տարբեր տնային տնտեսությունների եկամուտների վրա:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են սննդամթերքի գներն ազդում սննդի ընտրության վրա:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են էժան սննդի պահանջարկի հետևանքների շղթան հետևյալ տեսանկյուններից՝ կենդանիների բուծում, արտադրողների եկամուտներ և պայմաններ, հողի որակի աստիճանական վատթարացում, պարարտանյութերի, հերբիցիտների և թունաքիմիկատների օգտագործում, անտառների կորուստ, կենսաբազմազանության և հողերի բերրիության մակարդակի անկում, տեղական սննդի համար նախատեսված հողատարածքների կրճատում, պահեստավորման նպատակով էներգիայի օգտագործում, օդային և ճանապարհային տրանսպորտ, քաղաքից դուրս տեղակայված հանրախանութների պահանջարկի հետևանքով տեղական փոքր բիզնեսների կորուստ:

Սննդի առեւտուր եւ բիզնես

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մարդիկ ապրուստ ապահովում սննդի արտադրության, շուկայավարման, վերամշակման, առաքման, պատրաստման և վաճառքի միջոցով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է սննդամթերքի արտադրության շահույթն ավելանում սննդի մշակմամբ, փաթեթավորման/տարայավորման կամ պատրաստման և սառեցման միջոցով, և թե ովքեր են շահում այդ գործընթացներից:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչ ծավալների է հասնում խոշոր ու մանր արտադրողների և խոշոր ու փոքր մեծածախ, մանրածախ բիզնեսի կողմից իրականացվող սննդամթերքի բիզնեսը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպիսի դժվարություններ կարող են առաջացնել

առևտրային համաձայնագրերը և առևտրային արգելքները տնտեսապես աղքատ երկրների գյուղատնտեսությամբ զբաղվող արտադրողների վրա՝ հարուստ երկրների էժան ներմուծողների հետ մրցակցության և դեպի այդ երկրներ արտահանման տեսանկյունից:

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են սննդամթերքի գների աճն ու անկումը, և թե ինչպես է դա տարբեր կերպ ազդում իրենց և այլ երկրների բնակչության վրա:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են սննդամթերքի գները տատանվում՝ նավթի արժեքով և կենսազանգվածի վառելիքի արտադրության նպատակով հողերի օգտագործմամբ պայմանավորված:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է ֆերմերների եկամուտը նվազում՝ ի հակադրություն պարենային ապրանքների գների աճի:

Պարենային էթիկա եւ քաղաքականություն

- Արդյո՞ք երեխաները և մեծահասակները քննարկում են, թե ինչ պայմաններում է արտադրվում իրենց ընդունած սնունդը, կամ իրենք պարտավո՞ր են իմանալ այն արտադրող մարդկանց բարեկեցության մասին, և պե՞տք է գործել, երբ պարզվի, որ այդ պայմանները հակասում են իրենց արժեքներին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչով է պայմանավորված քաղցը տնտեսապես աղքատ երկրներում՝ ի հակադրություն հարուստ երկրներում սննդամթերքի առատության:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են տնտեսապես հարուստ երկրների կառավարությունների մտահոգությունը՝ գիրության մակարդակով պայմանավորված, և ինչ քայլեր են տվյալ երկրները ձեռնարկում դրանք նվազեցնելու համար:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են այն հարցը, որ հեռուստատեսությամբ գովազդվող սննդի և ըմպելիքի մեծ մասը, մեծ քանակությամբ օգտագործելու դեպքում, հանգեցնում է առողջության վատթարացման:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են կորպորացիաների ազդեցությունը սննդի գնի ու որակի, արտադրության ու բաշխման վրա, ինչպես նաև, թե ինչ հետազոտություններ են կատարում նոր աղբյուրների զարգացման և գյուղատնտեսական մեթոդների մշակման ուղղությամբ:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են սննդամթերքի նկատմամբ ինքնիշխանության սկզբունքները, ինչպես նաև որ՝ սնվելը իրավունք է. անհրաժեշտ է հարգել արտադրողներին, արտադրությունը պետք է լինի տեղական, տեղացիները պետք է վերահսկեն իրենց արտադրական ռեսուրսները, անհրաժեշտ է զարգացնել տեղական հնարավորությունները, որ սննդի արտադրությունը պետք է հետևի բնության պահպանման կանոններին:[51]
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպիսի ազդեցություն են գործում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա միս, ձուկ, կաթնամթերք ուտելը, ինչպես նաև բուսակերությունն ու բուսական սննդակարգը:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են արդար առևտրի սկզբունքները և դրանք ընդլայնելու կողմ ու դեմ փաստարկները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են օրգանական սննդամթերքի, ինչպես նաև թունաքիմիկատների և հերբիցիդների օգտագործմամբ աճեցրած բուսամթերքի առավելություններն ու թերությունները:

[51] The pillars of food sovereignty, in Millstone, E. and Lang, T. (2008) The Atlas of Food, who eats what, where and why, Brighton, Earthscan p.101

- Արդյո՞ք երեխաները քննարկում այն հարցը, թե ինչպես են տնտեսապես հարուստ երկրներում վաղուց արգելված թունաքիմիկատները, օրինակ, ԴԴՏ-ն, թույլատրվում օգտագործել տնտեսապես աղքատ երկրներում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչու են թունաքիմիկատները դառնում մեծ թվով մարդկանց մահվան պատճառ աշխարհի տնտեսապես աղքատ բնակավայրերում, և թե ինչու են շատերն ինքնասպանություն գործում՝ միտումնավոր ընդունելով թունաքիմիկատներ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են թունաքիմիկատների և հերբիցիդների օգտագործման վտանգները բուսամթերք արտադրողների և սպառողների համար, ինչպես օրինակ, ԴԴՏ-ն, որը կուտակվում է կրծքի կաթում:
- Արդյո՞ք երեխաները տեղյակ են, թե կորպորացիաները ինչպես են խրախուսում մաքուր ջուր հայթայթելու խնդիր ունեցող մայրերին՝ կրծքի՝ բնական ճանապարհով մանրէազերծած կաթի փոխարեն օգտագործել կաթի փոշի:

Գենետիկորեն ձեւափոխված մշակաբույսեր

- Արդյո՞ք դպրոցը խրախուսում է քննարկումները բնական և արհեստական ճանապարհով գենետիկ ձևափոխության առավելությունների ու խնդիրների շուրջ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես կարելի է սերմերը ենթարկել գենետիկ ձևափոխումների՝ երաշտի, վնասատուների, թունաքիմիկատների և հերբիցիդների դեմ մշակաբույսերի դիմադրությունը խթանելու և դրանք անպտուղ դարձնելու նպատակով:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, որ մշակաբույսերի գենետիկ ձևափոխումների առավելություններն ու թերությունները, ըստ ձևափոխման բնույթի ու նպատակների, մարդկանց, այլ բույսերի և կենդանիների վրա ունեցած ազդեցության, կարող են տարբեր լինել:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերի առավելություններն ու թերությունները սերմերի մատակարարների, ֆերմերների և սպառողների համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի հետևանքները շրջակա բույսերի համար:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե սննդամթերքի արտադրությունը և սպառումը իրենց բնակավայրում, երկրում և ամբողջ աշխարհում ժամանակի ընթացքում ինչպես են փոխվել:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են այն հարցը, թե սննդի ընտրության փոփոխություններն ինչ ազդեցություն կարող են ունենալ առողջության և շրջակա միջավայրի վրա:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են, թե ապագայում իրենց երկրում և ամբողջ աշխարհում ինչ սնունդ պետք է արտադրվի և սպառվի:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց քաղաքային տնտեսությունը:

Գ1.2 Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարեւորությունը:

Բ1.12 Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը:

Գ1.5 Երեխաները քննարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում և աշխարհի շուրջը:

Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:

Փոխադարձ կապերը տեղական եւ գլոբալ մակարդակներում

- Արդյո՞ք դպրոցն ընտրում է տեղի որևէ գետ կամ գետակ, որը կարելի է հետազոտել և պահպանել, և որի միջոցով երեխաները կարող են ուսումնասիրել էկոհամակարգերն ու ջրային շրջափուլերը:
- Արդյո՞ք դպրոցն ընտրում է որևէ գետ աշխարհի մեկ այլ հատվածում և քննարկում է դրա կարևորությունը այնտեղ բնակվող մարդկանց կյանքի համար:
- Արդյո՞ք ջրի վաճառքով զբաղվող անձինք ապահովու՞մ են տնային տնտեսությունների, գործարանների և ֆերմերային տնտեսությունների ջրամատակարարումը, հետևու՞մ են ջրի տեղական պաշարների պահպանմանը, իրենց մասնակցությունն ունե՞ն ուսումնական ծրագրի մշակման գործընթացին:
- Արդյո՞ք դպրոցը ներգրավված է տեղական գետերի և ջրային պաշարների պահպանման գործում:

Սպառվող ռեսուրսների օգտագործում

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքան կարևոր է ջուրը բույսերի, կենդանիների և մարդկանց կյանքի համար:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են գետերի, լճերի ու ջրամբարների նշանակությունը կյանքի համար:
- Արդյո՞ք երեխաները տեղյակ են, որ քաղցրահամ ջուրը կազմում է Երկիր մոլորակի ջրային պաշարների միայն մի փոքր մասը (2,5%), և որ դրա միայն մեկ երրորդն է հասանելի կենդանի էակների օգտագործման համար:
- Արդյո՞ք երեխաները տեղյակ են, որ ծովերի սառույցների հոսքերը հիմնականում բաղկացած են քաղցրահամ ջրերից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մարդիկ օգտագործում ջուրը խմելու, սանիտարական, անձնական հիգիենայի, սննդի լվացման, սպասքի և հագուստի լվացման նպատակներով, այգեգործության, գյուղատնտեսության և կենդանաբուծության, այդ թվում՝ ձկնաբուծության մեջ, ինչպես նաև արդյունաբերական արտադրության և էներգիայի արտադրության ոլորտներում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի դերը հանգստի ժամանակ:

Սպառման ճնշման տակ գտնվող ռեսուրս

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի պահանջարկի աճը՝ պայմանավորված բնակչության թվաքանակի աճման, սննդի և այլ արտադրության ավելացման, հարուստ ապրելակերպի և սպառման ծավալների աճի միտումներով:

- Արդյո՞ք երեխաները քննարկում են այն հարցը, թե որքանով է «արդյունաբերական ապրելակերպը հիմնված ջրի պաշարների վրա, ինչպես նավթի»:[52]
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են ազդում ջրի պաշարների վրա ուրբանիզացիայի աճող միտումները, ամբարտակներից գետերի հոսքերի փոփոխությունները և կլիմայի փոփոխությունը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է աղտոտվում ջուրը մարդու և կենդանիների թափոններով և արդյունաբերական գործընթացների հետևանքով:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են երաշտի հետևանքները իրենց և այլ երկրների համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի պաշարների սղության ազդեցությունը կենդանիների և մարդկանց տեղաշարժման վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ջրի պահանջարկի և ջրի սպառման ծավալների փոխհարաբերության մասին:

Ջուրը՝ որպես կենսական միջավայր

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են կյանքի առաջին ձևերը ձևավորվել ու զարգացել ջրում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են այն էակների և բույսերի մասին, որոնք բնակվում են աղի ու քաղցրահամ ջրերում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ջրային կենդանիների ու բույսերի վրա տարբեր բնակլիմայական և արհեստածին ազդեցությունների մասին:

Ամբարում եւ մատակարարում

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է ջուրը մատակարարվում դեպի շենքեր, այդ թվում՝ իրենց սեփական տներ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքանով են գյուղատնտեսական տնտեսությունները կախված ամբարված ջրից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է ջուրն ամբարվում բնական ճանապարհով և մարդու կողմից կառուցված ավազաններում ու ջրամբարներում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ջրատար շերտի և հորերի օգտագործման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ոռոգման համակարգերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են դիտարկել քաղցրահամ ջուր ստանալու նպատակով բույսերի աղազերծման առավելություններն ու թերությունները:

Ջրի հատկությունները

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի շարժումը գետերում և մակընթացության ժամանակ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ստորջրյա կյանքի պահպանման և ջրի պաշարների ավելացման կարևորության մասին, երբ այն վերածվում է սառույցի:

[52] Black, M. and King, J. (2009) The Atlas of Water, Brighton, Earthscan and this page is informed by a reading of that book.

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է ջուրը վերափոխվում պինդ, հեղուկ և գազային վիճակների:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի մակերեսի լարվածության հատկության նշանակությունը՝ անձրևի կաթիլներ և ալիքներ ձևավորելու, բջիջների գործունեության, ծառերում և այլ բույսերում ջրի վեր շարժման և կենդանիների արյան շրջանառության ապահովման համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, ի տարբերություն ցամաքի, ջրի ջերմաստիճանի դանդաղ փոփոխության ազդեցությունը կլիմայի կայունացման վրա:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի՝ որպես լուծչի օգտագործումը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի՝ որպես վառելիքի օգտագործումը ջրածնի արտադրության մեջ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի՝ որպես հովացուցիչ նյութի օգտագործումը շարժիչներում և էլեկտրակայաններում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի կերպափոխումը գոլորշու և գոլորշու օգտագործումը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հոսող ջրի ուժի մասին, և ինչպես կարելի է այն վերահսկել՝ գետի ու ծովի ջրերից էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են սառցադաշտերի, ձնակույտերի, ջրհեղեղների և ցունամիների ջրերի անվերահսկելի շարժման հետևանքների մասին:

Ջուր եւ կլիմա

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ջրի շրջափուլերը, այդ թվում՝ գոլորշիացումը, խտացումը, տեղումները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ամպերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է անձրևը հոսում լեռներում և հովիտներում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են անձրևի ու ձյան տեղումների, երաշտների ու ջրհեղեղների տատանումները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են սողանքների և ձնակույտերի մասին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են մառախուղի, մշուշի ու ցողի ձևավորումը և ցրտահարությունների առաջացումը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ձյան տեղումների ձևերը իրենց և այլ երկրներում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են համամոլորակային տաքացման արդյունքում ծովի մակարդակի բարձրացման հետևանքները:

Ջուր եւ առողջություն

- Արդյո՞ք երեխաները սովորում են ջրի կարևորության մասին հիգիենայի տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ջրցող զուգարանների, դրանց առավելությունների և թերությունների մասին, և թե որքանով է տարածված դրանց օգտագործումն ամբողջ աշխարհում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ջրի աղտոտման ծավալների մասին, և թե ինչպես է դա ազդում կենդանի էակների վրա:

- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է ապահովվում ջրի մաքրությունը խմելու համար:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ջրի միջոցով հիվանդությունների տարածման մասին իրենց և այլ երկրներում:

Էթիկա, սեփականություն եւ հակամարտություն

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե որքանով է խմելու մաքուր ջուրը հասանելի մարդկանց:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ջրի հանրային կամ մասնավոր սեփականության առավելությունների ու թերությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է քաղցրահամ ջրի պակասը և ջրի պաշարների վերահսկողությունը հանգեցնում հակամարտությունների ամբողջ աշխարհում:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են անձրևի տեղումների ձևերի փոփոխությունը ժամանակի ընթացքում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ծովի մակարդակի փոփոխությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են քաղցրահամ ջրի պահանջարկի փոփոխությունը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես կարելի է կանխել ջրի պաշարների պակասը ապագայում:

Գ1.3 Երեխաներն ուսումնասիրում են հագուստը եւ զարդարանքը:

Փոխադարձ կապերը տեղական եւ աշխարհի մակարդակներում

- Արդյո՞ք դպրոցը հրավիրում է տեղական խանութների, լվացքատների աշխատողներին, դիզայներներին, հագուստ արտադրողներին և վերանորոգողներին, ոսկերիչներին, վարսահարդարներին և այլ մասնագետների ներկայացնելու իրենց աշխատանքը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են մեկ երկրից մյուսը հագուստի ոճերի տարածման մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հագնվելու սովորույթների համաշխարհային բազմազանությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հագուստի, իրենց և այլ երկրների ջերմաստիճանի, տարվա չորս եղանակների և եղանակային պայմանների միջև կապի մասին:
- Արդյո՞ք դպրոցները ցուրտ եղանակին հագուստի ընտրությունը կապում են տներում և այլ շինություններում ջեռուցման անհրաժեշտության հետ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հագուստի «արևմտյան» որոշակի ոճերի տարածումը, ինչպես օրինակ, գործնական կոստյումները, փողկապները և ջինսերը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են տարբեր մասնագիտություն և նախասիրություն ունեցող մարդիկ պահպանում հագուստի ավանդական ոճերը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է հագուստի ոճերի բազմազանությունը նվազում ամբողջ աշխարհում:
- Արդյո՞ք երեխաները արժևորում են ազգային տարազը:

Հագուստի արտադրման եւ սպառման շրջափուլերը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հագուստի արտադրման և սպառման շրջափուլերը՝ սկսած հումքի արտադրությունից մինչև շուկայավարում և նորաձևություն, արտադրություն, ձեռքբերում, օգտագործում, վերանորոգում, փոխանակում, վերամշակում և դեն նետում:

Արտադրություն

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են կոշիկն ու հագուստը պատրաստվում բույսերից, կենդանիների բրդից/մորթուց և կաշվից, մետաքսից և նավթահումքից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տարբեր վայրերում արտադրված կոշիկի ու հագուստի չափաքանակների մասին:
- Արդյո՞ք երեխաները պատկերացում կազմում են հագուստի ու կոշիկի արտադրության տարբեր եղանակների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են զարդերի արտադրության նպատակով թանկարժեք մետաղների և քարերի արդյունահանման մասին:

Նորաձեւություն եւ շուկայավարում

- Արդյո՞ք երեխաները սովորում են գլխարկների, հագուստի, կոշիկի ու զարդերի ձևավորման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հագուստի ու զարդերի շուկայավարման և վաճառքի մասին:

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է ապրանքանիշը ազդում հագուստի, կոշիկների, պայուսակների պահանջարկի, արժեքի ու գնի վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է նորաձևության և ոճի գովազդը ազդում հագուստի և կոշիկի սպառման ծավալների վրա:

Հագուստի ընտրությունը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են այն ազդեցությունները, որոնք պայմանավորում են հագուստի և կոշիկների՝ իրենց ընտրությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես պետք է կատարել հագուստի ու զարդերի ակտիվ ընտրություն:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչու են մարդիկ հանրային և մասնավոր վայրերում կրում համապատասխան հագուստ:
- Արդյո՞ք դպրոցն ուսումնասիրում է, թե տարբեր մշակույթներ ինչու և ինչպես են խրախուսում ու պահանջում, որ տղամարդիկ ու կանայք ծածկեն կամ ցուցադրեն իրենց դեմքն ու մարմինը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես և ինչու են առաջանում որոշակի հագուստ կրելու սովորույթները մարդկանց և խմբերի մեջ, ինչպես օրինակ, դպրոցում, աշխատանքի վայրում և երեկոյան միջոցառումներին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչու է հագուստի ընտրությունն ըստ սեռի տարբերվում իրենց և այլ երկրներում:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է հագուստն ընդգծում մարդկանց՝ որևէ մշակութային խմբի կամ ենթախմբի պատկանելությունը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ փոխում հագուստի իրենց ոճերը՝ ըստ տարիքի:

Զարդեր եւ մարմնի խնամք

Արդյո՞ք երեխաները սովորում են զարդերի արտադրության նպատակով օգտակար հանածոների արդյունահանման մասին:

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են զարդերի արտադրությունն ու օգտագործումը:
- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են մարմնի վրա նկարչությունը, դաջվածքները, դակումը և այլն:
- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են մազերի նորաձև ոճերը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են այն պատճառները, թե ինչու են մարդիկ ներկում, աճեցնում կամ կարճացնում իրենց մազերը:

Հագուստի պահպանումը

- Արդյո՞ք երեխաները սովորում են հագուստի լվացման և չորացման տարբեր եղանակների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հագուստի վերանորոգման տեխնիկաներ:

Հագուստի վերամշակում եւ նետում

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ է լինում անցանկալի ու մաշված հագուստը:

Հագուստի եւ մարմնի խնամքի էթիկա

- Արդյո՞ք երեխաները տեղյակ են հագուստի էժանության ապահովմանը հանգեցնող ծախսերի, այդ թվում՝ ցածր վարձատրության, մանկական աշխատանքի և աշխատանքային վատ պայմանների մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են բամբակի աճեցման նպատակով թունաքիմիկատների օգտագործման հետևանքների, օրինակ, հողի աղտոտման ծավալների մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են հումքի արտադրության, հագուստի և այլ նյութերի պատրաստման և արտադրության, հագուստի, կոշիկի ու զարդերի առաքման, մանրածախ վաճառքի համար վճարված գնի և արտադրողների շահույթի մասին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչու և ինչպես է թանկարժեք քարերի ու մետաղների հանքարդյունաբերությունը վերահսկելու ցանկությունը հանգեցրել պատերազմների:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հագուստի ոլորտի արդար առևտրի մասին:
- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են հագուստ կրելու էթիկայի գաղափարը, և թե ինչպես է դա ազդում դպրոցի կողմից առաջարկվող հագուստի ընտրության վրա:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է հագուստի նորաձևությունը փոփոխվում՝ ըստ պատմական ժամանակաշրջանների:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե որքանով են քարոզարշավները նպաստել մորթյա իրերի արտադրության ծավալների կրճատմանը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ժամանակի ընթացքում ինչպես են մարմնի զարդարման միտումները փոփոխվում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են ապագայում հագուստի արտադրության համար անհրաժեշտ նյութերի հասանելիությունը:
- Արդյո՞ք երեխաները մտածում են ապագայում հագուստի գնման ծախսերի մասին:

Գ1.4 Երեխաները բացահայտում են կացարանային եւ շենքային միջավայրը:

Բ1.12 Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը:

Փոխադարձ կապերը տեղական եւ երկրի մակարդակներում

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց բնակավայրի շենքերի տարբերությունները:
- Արդյո՞ք երեխաներն արտահայտվում են, թե իրենց բնակավայրի ո՛ր շենքերն են հավանում և ինչո՛ւ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչ շենքեր կարելի է կառուցել իրենց տարածքում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքանով է իրենց քաղաքում կամ հարևանությամբ իրականացվող կառուցապատումը պլանավորված:
- Արդյո՞ք քաղաքը կառուցապատողները, ճարտարապետները, շինարար վարպետները որևէ մասնակցություն ունեն դպրոցի զարգացման ծրագրի և կրթակարգի մշակման գործընթացում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են շինարարական նյութերի բազմազանության և հատկությունների մասին, ինչպիսիք են աղյուսը, շաղախը, մետաղը, փայտը, պլաստիկը, ծղոտե հակերը, թաղիքը, կտավը, որոնք օգտագործվում են իրենց և այլ երկրներում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տարբեր տեսակի օթևանների մասին, ինչպես օրինակ, նավակները, վրանները, աղյուսե և քարե շենքերը, այլ նյութերից և գերանների վրա կառուցված տները:

Գյուղական եւ քաղաքային շենքեր ու տներ

- Արդյո՞ք երեխաները սովորում են քաղաքների ծագման մասին, և թե ինչպես են դրանք փոփոխվում ժամանակի ընթացքում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են քաղաքներում և գյուղական վայրերում մարդկանց բաշխվածության ու կառուցապատված միջավայրի տեսանկյունից նրանց փորձի տարբերությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են շենքերի օգտագործման տարբեր նպատակների մասին, ինչպիսիք են՝ գործարանները, գրասենյակները, բանտերը, քաղաքացիական շենքերը, եկեղեցիները, ամբարները, տները, ռեստորաններն ու սրճարանները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում գյուղական բնակավայրերի շենքերում, օրինակ, գյուղական բնակչության թվակազմի և գյուղատնտեսական աշխատանքի մեթոդների փոփոխությունների արդյունքում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց տների գտնվելու վայրի ընտրության պատճառները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է ապահովվում իրենց տների ջրի, էլեկտրաէներգիայի և գազի մատակարարումը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են թափոնները հեռացվում իրենց տներից և այլ շինություններից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես և ինչու են շենքերը ապամոնտաժվում կամ քանդվում:

Շինարարական աշխատանքների ձեւերը եւ շինանյութի տեսակները

- Արդյո՞ք երեխաները սովորում են բազմապիսի և բազմահարկ տների կառուցման մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են տների տեսակները՝ ըստ այնտեղ բնակվող անձանց ընտանեկան կարգավիճակի, այդ թվում՝ միայնակ անձինք, մեծահասակներ՝ երեխաներով և առանց երեխաների, և ընդլայնված ընտանիքներ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են պատրաստվում շենքերի հիմքերը, ինչպես է դրանց ամրությունը պայմանավորված գրունտի վիճակով և որքանով է կախված փոթորիկների ու երկրաշարժերի հաճախականությունից և ուժգնությունից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են անջրանցիկ շենքերի կառուցման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է ապակին մշակվել պատուհանների օգտագործման համար:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե շինարարության ընթացքում որքանով և ինչպես են օգտագործվում տեղական շինանյութերն ու ռեսուրսները:

Շենքի նախագծումը եւ պլանավորումը

- Արդյո՞ք երեխաները սովորում են տների և այլ շինությունների նախագծման մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են շենքերի նախագծման հնարավորությունները էներգաարդյունավետության տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են տների ձևավորման եղանակները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպիսի տներ են կառուցվում հեղեղման վտանգի տակ գտնվող տարածքներում:

Տուն զբաղեցնելու մոտեցումները

- Արդյո՞ք երեխաները սովորում են տների սեփականատիրության, գրավադրմամբ ձեռքբերման, վարձակալության և ուրիշի հողի վրա բնակություն հաստատելու ձևերի մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են տուն կառուցելու, գնելու և վարձակալելու արժեքները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են մարդկանց տների սեփականության հարցը, և ինչպես ու ինչու են դրանք տարբերվում:

Շինարարական մեքենաներ

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են շենքերի կառուցման, հողը փորելու, տեխնիկայի տեղափոխություններ կատարելու, ամբարձիչ և հորատման աշխատանքների, ցեմենտ և բետոն խառնելու համար օգտագործվող խոշոր մեքենաները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են շինարարության մեջ փոքր մեքենաների, ուժային և ձեռքի գործիքների օգտագործման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են փայտամածման նախկին ու ներկա մոտեցումների մասին:

Տան անվտանգությունը

- Արդյո՞ք երեխաները սովորում են տան անվտանգության ապահովման մասին փոթորիկների, հրդեհների, ջրհեղեղների և երկրաշարժեր ժամանակ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես ապահով օգտվել տան էլեկտրական սարքերից, վարդակներից և էլեկտրական լարերից:

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչու են էլեկտրական լարերը և տեխնիկան ջրից հեռու պահվում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կանխել էլեկտրատեխնիկայից և գազասարքավորումներից առաջացող հրդեհման վտանգները և օգտվել ազդանշանային համակարգից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են բնակարանային ապահովագրության և ծախսերի ռիսկի ծածկման մասին:

Ջեռուցում եւ հովացում

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են շենքերը ջեռուցվում և հովացվում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է ապահովել շենքերի էներգաարդյունավետությունը, օրինակ, համապատասխան շինանյութերի ընտրության, մեկուսացման և միջանցիկ քամու նվազեցման միջոցով:

Շինարարական գործունեություն

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մարդիկ ընտրում շինարարական գործունեությունը՝ որպես աշխատանքային զբաղմունք, ինչպես օրինակ, շինարարության, ճարտարապետության և նախագծման ոլորտներում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչ է նշանակում լինել ինքնազբաղված կամ աշխատել փոքր կամ մեծ շինարարական կազմակերպությունների հետ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքանով են շինարարները մասնագիտանում կամ ձեռք բերում մի շարք հմտություններ:

Շենքերի եւ շինությունների կառուցման Էթիկան եւ քաղաքականությունը

- Արդյո՞ք երեխաները սովորում են անօթևանության պատճառները, և թե ում է դա սպառնում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչով է պայմանավորված բնակության թաղամասի լավ կամ վատ լինելը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են մարդկանց բնակության վայրի ընտրության տնտեսական հանգամանքները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչու որոշ մարդիկ ունեն բնակության ավելի մեծ տարածք, քան մյուսները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ ազդեցություն են կրում մարդկանց տները պատերազմների և դրանց հետևանքների պատճառով:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ փոփոխություններ են կրել շենքերը ժամանակի ընթացքում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես և ինչու են քաղաքներն ընդլայնվել:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են գյուղական բնակավայրերի բնակչության թվաքանակի փոփոխությունները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես են կրճատվել գյուղական հողերը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են շենքերի ու շինությունների կառուցման ապագա մոտեցումները:

Գ1.5 Երեխաները քննարկում են, թե ինչպես եւ ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում եւ աշխարհի շուրջը:

Գ1.13 Երեխաները սովորում են էթիկայի կանոնների, իշխանության և կառավարման մարմինների մասին:

Փոխադարձ կապերը տեղական եւ աշխարհի մակարդակներում

- Արդյո՞ք երեխաները մտածում են մեկ շաբաթվա կամ մեկ ամսվա ընթացքում գրանցել այն տեղափոխությունները, որոնք նրանք կատարում են տնից այլ վայրեր տեղափոխվելիս՝ իրենց բնակության տարածքում կամ դրանցից դուրս:
- Արդյո՞ք տեղական զբոսաշրջային ծառայությունները, տաքսի ծառայությունները, ավտոբուսներ, գնացքներ վարող անձինք, ավտոսպասարկման կետերում աշխատող մասնագետները, ավտոմեքենաների և հեծանիվների վաճառքով ու սպասարկմամբ զբաղվող մարդիկ, ինչպես նաև տեղական տրանսպորտի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ներգրավված անձինք որևէ կերպ մասնակցում են կրթակարգի մշակման գործընթացին:
- Արդյո՞ք տվյալ տարածքում երկար ժամանակ բնակություն հաստատած ընտանիքները որևէ կերպ մասնակցում են կրթակարգի մշակման գործընթացին:
- Արդյո՞ք այլ երկրներից ժամանած անձինք, կամ այն անձինք, որոնց ծնողները/տատիկն ու պապիկը կամ ավելի հեռավոր նախնիները ժամանել են այլ երկրներից, որևէ կերպ մասնակցում են կրթակարգի մշակման գործընթացին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են աշխարհի տարբեր հատվածներում օգտագործվող տրանսպորտի տարբեր տեսակները:

Բնակավայրի հետ կապվածությունը

- Արդյո՞ք երեխաները հասկանում են, թե շատերի համար որքան կարևոր է կապվածությունը իրենց երկրին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչով է պայմանավորված բնակության վայրի լավ կամ վատ լինելը:

Ինչու՞ են մարդիկ փոխում իրենց բնակության վայրը

- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են, թե ինչպես են մարդիկ մի վայրից մյուսը տեղափոխվում իրենց սննդի, ջրի, սնունդ պատրաստելու համար անհրաժեշտ վառելիքի, ջեռուցման և տրանսպորտի, կացարանի, անվտանգության, կրթության ու աշխատանքի հիմնական կարիքները հոգալու նպատակով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են մարդիկ որոշում մի վայրից մյուսը տեղափոխվել զբոսաշրջության, հետազոտական աշխատանքի, սպորտային միջոցառումների կազմակերպման և փոխհարաբերությունների ձևավորման ու պահպանման նպատակով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է զբոսաշրջային ոլորտը խթանում ճամփորդությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են իրենց և այլ երկրներում տարածված ճանապարհորդական ապրելակերպի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե մարդիկ ինչպես են տեղահանվում իրենց բնակության վայրի հողօգտագործման ձևի փոփոխության հետևանքով, ինչպես օրինակ, հիդրոէներգիայի արտադրության կամ ճանապարհաշինության նախագծերի շրջանակներում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հակամարտությունների հետևանքով մարդկանց տեղահանումների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են շրջակա միջավայրի աստիճանական վատթարացման հետևանքով մարդկանց տեղահանումների մասին:

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչու են մարդիկ դառնում փախստականներ և ապաստան հայցողներ:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են տիեզերքի հետազոտման պատճառները:

Առեւտուր

- Արդյո՞ք երեխաները սովորում են ճանապարհային փոխադրումների խթանման հարցում տեղական և միջազգային առևտրի դերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են առևտրի ոլորտում փոխանակման դերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մարդիկ մի վայրից մյուսը տեղափոխվում հումք ձեռք բերելու համար:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է ապահովվում առևտրի ոլորտի շահույթը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տնտեսապես հարուստ և աղքատ երկրներում սահմանափակ ու անսահմանափակ առևտրի առավելությունների ու թերությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են առևտուրը կարգավորող միջազգային կազմակերպությունների դերի և նրանց կողմից ստորագրված պայմանագրերի մասին:

Հակամարտություններ, ներխուժում եւ զավթում

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են պատերազմի մեջ մտնելու պատճառները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մի շարք երկրներ ներխուժում այլ երկրների տարածքներ՝ նրանց ռեսուրսները տնօրինելու նպատակով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչով է պայմանավորված աշխարհի որոշ հատվածների ռազմավարական նշանակությունը:

Տրանսպորտի տեսակները եւ տեղաշարժման միջոցները

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են մարդկանց տեղաշարժը՝ ոտքով, վազելով, լողալով, հեծանվով, անվասայլակով, կենդանիներ թամբելով, բեռնատար մեքենաներով, ավտոմեքենաներով, տրամվայներով, գնացքներով, նավակներով, ծովագնացության նավերով, գոլորշային և դիզելային շարժիչներով աշխատող նավերով, տաք օդով և հելիումով թռչող օդապարիկներով, ուղղաթիռներով, օդային բարձի վրա տեղափոխող փոխադրամիջոցներով, ինքնաթիռներով և հրթիռներով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ճանապարհային և երկաթուղային ցանցերի ստեղծման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են անիվների ու շարժիչների, ռեակտիվ ու հրթիռային շարժիչների ստեղծման և զարգացման մասին:

Տրանսպորտ եւ շրջակա միջավայր

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե որքանով է տեղափոխությունը կախված հանածո և ուրիշ՝ սպառվող վառելիքաէներգետիկ միջոցների առկայությունից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տրանսպորտային տարբեր միջոցներով որոշակի հեռավորության վայրեր ապրանքներ տեղափոխելիս՝ շրջակա միջավայրի վրա դրա ազդեցության մասին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես կարող է խթանվել բնապահպանական տեսանկյունից բարենպաստ տեղաշարժը, ինչպես օրինակ, քայլելը և հեծանիվի օգտագործումը:
- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են, թե քայլելը և հեծանիվի օգտագործումը ինչպես է խթանվում գովազդների, հեռուստատեսային ծրագրերի և սպորտի միջոցով:

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է ավտոմեքենայի և օդային տրանսպորտի ընտրությունը դառնում մարդկանց ինքնության բաղկացուցիչ մաս:

Նավարկություն եւ քարտեզներ

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են քարտեզների ստեղծման և զարգացման պատմությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են աստղերի, ժամացույցների, քարտեզների և խոշորամասշտաբ տեղորոշման համակարգերի օգտագործմամբ ծովային նավարկությունների պատմության և զարգացման մասին:

Մի վայրից մյուսը տեղափոխության վերահսկումը

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ում է անհրաժեշտ անձնագիր:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես են տրամադրվում և մերժվում մուտքի արտոնագրերը (վիզաները):
- Արդյո՞ք երեխաները սովորում են հողի սեփականությամբ, բնական խոչընդոտներով և ազգային սահմաններով պայմանավորված տեղաշարժման սահմանափակումների մասին:

Մի վայրից մյուսը տեղափոխության էթիկան

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են մեքենայով և օդային ճանապարհով տեղափոխության բնապահպանական վնասների թաքնված ծախսերը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մարդկանց վերաբերվում օտար երկրում ապաստան հայցելիս:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են աղքատ երկրների բարձր որակավորում ունեցող մասնագետներին տնտեսապես հարուստ երկրների տնտեսություններում և ծառայություններում ներգրավելու հետևանքները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են մարդկանց այն կարծիքները, որ բոլորը պետք է ազատ տեղաշարժման հնարավորություն ունենան ինչպես դեպի իրենց երկիր, այնպես էլ իրենց երկրից դուրս:
- Արդյո՞ք երեխաները սովորում են Միացյալ Թագավորության հետ պատերազմող երկրներից տեղահանված անձանց և խոցելի խմբերի նկատմամբ որոշակի պատասխանատվության մասին:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են ներգաղթի քաղաքականության էթիկական բնույթը:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչ փոփոխություններ են կրել տրանսպորտի տեսակները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե որքանով են աճել մասնավոր մեքենաների օգտագործման ծավալները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ փոփոխություններ են կրել միգրացիայի ձևերը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է կայսրությունների վերելքն ու անկումը ազդում մարդկանց տեղաշարժման ու միգրացիայի վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես և ինչու կարող է փոփոխվել տրանսպորտային ոլորտը ապագայում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են ապագայում մարդկանց հնարավոր տեղաշարժերը և դրանց վերահսկման ձևերը ամբողջ աշխարհում:

Գ1.6 Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության եւ փոխհարաբերությունների մասին:

Ա2.9 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը:

Ա2.10 Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների առողջության պահպանմանը:

Գ1.1 Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության և սպառման շրջափուլերը:

Գ1.2 Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը:

Փոխադարձ կապերը տեղական եւ աշխարհի մակարդակներում

- Արդյո՞ք երեխաները սովորում են իրենց և ուրիշների առողջության պահպանման կամ խաթարման փորձից:
- Արդյո՞ք տեղի բնակիչները, որոնք ֆիզիկական, հոգեկան և բնապահպանական առողջության ջատագովներ և/կամ առողջության խաթարման օրինակներ են, որևէ կերպ մասնակցում են կրթակարգի մշակման գործընթացին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տարբեր երկրներում տարածված հիվանդությունների տեսակների և տարբերությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են աղքատության, հիվանդությունների, սննդի ու ջրի սղության և որակի փոխկապվածությունը:

«Առողջություն» հասկացության իմաստները

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ է նշանակում լինել առողջ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են տարբեր մարդիկ հասկանում «լինել առողջ» արտահայտության նշանակությունը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե առողջն այն կյանքն է, որ տևում է հնարավորինս երկար:

Առողջապահություն եւ մարմնի անատոմիա

- Արդյո՞ք երեխաները սովորում են մարդու մարմնի անատոմիայի և ֆիզիոլոգիայի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են մարմնի զարգացման գործընթացում գեների և ԴՆԹ-ի դերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են զարգացման և շրջակա միջավայրի բնույթի փոխկապվածության մասին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ փոփոխությունների է ենթարկվում մարդու մարմինը տարիքի հետ:

Առողջապահություն եւ հիվանդություն

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե որքանով կարելի է կրճատել և կանխել առողջության վատթարացումը շրջակա միջավայրի և սննդի փոփոխության, ֆիզիկական վարժությունների ավելացման, սթրեսի, բժշկական ու բուժական միջամտությունների նվազեցման միջոցով:

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են առողջության խաթարումների բուժման միտումների զարգացումները և նորարարությունները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են հիվանդությունները տարածվում մարդկանց և կենդանիների, այդ թվում՝ թռչունների և միջատների, օդի և ջրի միջոցով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ դեր են խաղում բակտերիաները, մանրէները և պրիոնները[53] հիվանդությունների առաջացման գործում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են առողջության պահպանման գործում բակտերիաների դերի մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հակաբիոտիկների զարգացման պատմությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե որքանով է հակաբիոտիկների օգտագործումը նպաստում դրանց նկատմամբ դիմադրության խթանմանը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հիվանդանոցներում «հակաբիոտիկների դեմ գերկայուն բակտերիաների» գերակշռությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են քաղցկեղի և դրա դեմ բուժման մեթոդների զարգացման պատմությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես և ինչու է կյանքի տևողությունը տարբերվում՝ ըստ անհատի և առանձին խմբերի:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է դեղագործական արդյունաբերությունը խթանում առողջության և հիվանդության հասկացությունները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են որոշ մարդկանց կյանքը բարելավելու գործում դեղերի օգտագործման կարևորության մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են կյանքի երկարաձգման նպատակով հիվանդությունների բուժման դերի մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են կոսմետիկ վիրահատության տարբեր պատճառները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հիվանդությունների բուժման տարբեր մեթոդների արժեքները:

Հոգեկան առողջություն

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրավիճակի/հանգամանքների ազդեցությունը մարդկանց ինքնազգացողության վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ որոշ մարդիկ կարող են մշտապես գտնվել այնպիսի իրավիճակում, որը թույլ չի տալիս նրանց անել այն, ինչ ցանկանում են:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ որոշ մարդիկ կարող են մշտապես գտնվել հոգեկան այնպիսի վիճակում, որի պատճառով նրանք թույլ չտան այլ անձանց անել այն, ինչ նրանք ցանկանում են:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե որքանով են մարդիկ դիտարկվում որպես հոգեկան հիվանդություն ունեցող:

53 Ախտածինների հատուկ դաս, որոնք կազմված են անոմալ երրորդային կառուցվածքով սպիտակուցներից և չեն պարունակում նուկլեինաթթուներ:

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են այն տարբեր եղանակները, որոնք կարող են օգնել մարդկանց հաղթահարելու հոգեկան հիվանդությունը և բարելավելու հոգեկան առողջությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ կարող են որոշ թմրանյութեր նշանակվել անհանգստություն, ընկճախտ (դեպրեսիա) կամ այլ մտավոր խնդիրներ ունեցող մարդկանց օգտագործման համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հոգեկան խնդիրները նվազեցնելու նպատակով օգտագործվող դեղորայքի ազդեցությունը մարմնի ու մտավոր ունակությունների վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են հաճելի գործունեության և հոգեկան առողջության միջև փոխկապվածությունը:

Հարաբերություններ

- Արդյո՞ք երեխաները քննարկում են ընկերական հարաբերությունների բնույթը, և թե ինչպես կարելի է դրանք զարգացնել, պահպանել ու կորցնել:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են ծանոթների, ընկերների և ընտանիքի անդամների հետ հարաբերությունների կառուցումը:
- Արդյո՞ք կրթակարգն անդրադառնում է հարաբերությունների ստեղծման բարդության վերաբերյալ երեխաների գիտելիքներին:
- Արդյո՞ք դասերի ընթացքում մասնագետներն անդրադառնում են հեռուստատեսությամբ և այլ լրատվամիջոցներով ներկայացվող մարդկանց կյանքի տարբեր իրավիճակներին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են սիրո տարբեր դրսևորումների և իմաստների մասին:
- Արդյո՞ք երեխաները մտորում են, թե ինչ զգացողություններ կամ զգացմունքներ են նրանց դրդում որևէ դրական կամ բացասական գործողություն կատարել այլ անձանց և սեփական անձի նկատմամբ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են փոխհարաբերություններում վստահություն դրսևորելու մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ընտանիքում տարբեր տեսակի վարքագիծ դրսևորելու մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է ընկերական թիմը, դասարանը դիտարկել որպես ընտանիք, որի անդամները հոգ են տանում միմյանց մասին:

Երեխաների խնամքը

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են երեխա ունենալու կամ չունենալու տարբերակները՝ որպես ապագա դիրքորոշում:
- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են երեխաների խնամքի ձևերը իրենց և այլ համայնքներում, ինչպես նաև ազգային ու միջազգային մակարդակով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են երեխաների խնամքի պարտականությունների և հնարավոր դժվարությունների մասին, որոնք կարող են աճել տարիքի հետ, ինչպես նաև այն հաճելի պահերի մասին, որ կարելի է ապրել ողջ կյանքի ընթացքում:

Սեռական հարաբերությունները եւ սեռական դաստիարակությունը

- Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է սեռական դաստիարակության խնդիրներին անդրադառնալուց: Արդյո՞ք սեռական դաստիարակության շրջանակներում մասնագետներն անդրադառնում են հղիությանը և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին:
- Արդյո՞ք երեխաներին տրամադրվում է լիարժեք տեղեկատվություն սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների դեպքերի, դրանք ձեռք բերելու վտանգների և բուժման վերաբերյալ:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են խանդի զգացումը, և ինչպես է դա ազդում մարդկանց հարաբերությունների, ինչպես նաև ընկերների ու ընտանիքի անդամների հետ շփումների վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ հղիությունը կանանց ու տղամարդկանց հարաբերությունների վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են այն ընդհանուր պատասխանատվությունը, որ կրում են տղաները/տղամարդիկ և աղջիկները/կանայք: Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը միամուսնությունը/մոնոգամիան ներկայացնում է որպես ընտանեկան, անձնական կյանքը կազմակերպելու նախընտրելի տարբերակ:
- Արդյո՞ք ապահովվում է սովորողների ակտիվ մասնակցությունը սեռական դաստիարակության թեմայով կազմակերպվող դասընթացներին:

Առողջապահություն եւ թմրամիջոցներ

- Արդյո՞ք երեխաները սովորում են միտքը խթանող դեղորայքի օրինական և ապօրինի օգտագործման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են թմրամիջոցների ապօրինի և օրինական օգտագործման սոցիալական և առողջապահական հետևանքների մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են օրինական և ապօրինի, դեղատոմսով դուրս գրվող դեղորայքի օգտագործման և դրանից կախվածության ազդեցությունը օգտագործողների մտքի, մարմնի և կյանքի վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են տարբեր մարդկանց կողմից ալկոհոլի սպառման քանակության տարբերությունները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են թմրամիջոցների օրինական և ապօրինի օգտագործմանը նպաստող ճնշումները՝ գովազդի տեսքով, խանութներում և գինետներում, երեխաների և մեծահասակների շրջապատում:

Առողջապահություն եւ սնունդ

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչ է ապահովում սննդի առողջ կամ վնասակար լինելը:
- Արդյո՞ք առողջ սննդին առնչվող քննարկումները կապված են ընտանեկան բյուջեի հետ:

Առողջապահություն եւ էթիկա

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ապօրինի թմրամիջոցների արտադրության և տարածման օրինականացման կողմ և դեմ փաստարկները:

- Արդյո՞ք երեխաները քննարկում են առողջության վրա բուսակերության, վեգանության,[54] ձուկ և միս ուտելու ազդեցության վերաբերյալ տարբեր կարծիքները:
- Արդյո՞ք մարդիկ դիտարկում են, թե որքանով է առողջության բարելավման նպատակ անմիջականորեն չհետապնդող կոսմետիկ վիրահատությունը վիրաբույժներին և բուժքույրերին ներգրավում էթիկային հակասող վարքագծային գործունեության մեջ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են սնունդ արտադրողների շահերը առողջ և անառողջ սնունդը խթանելու տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է տարբերվում կենսափրկիչ և կյանքի տևողությունը երկարացնող դեղորայքի և բժշկական միջամտության հասանելիությունը հարուստ ու աղքատ մարդկանց ազգային և համաշխարհային մակարդակներում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են ազգային առողջապահական սահմանափակ բյուջեներով սահմանվում, թե ում բուժման առաջնահերթություն տալ և ինչ միջոցներով դա իրականացնել:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչ փոփոխություններ են կրել հիվանդությունների ձևերը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է փոխվել կյանքի միջին տևողությունը, և թե ինչպես կարող է այն փոխվել ապագայում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է կյանքի միջին տևողության փոփոխությունն ազդում հարաբերությունների տևողության վրա:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է փոխվել ծննդաբերության խնամքի և հիգիենայի ոլորտը, և թե ինչպես է դա ազդել կանանց կյանքի միջին տևողության վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ փոփոխություններ կարող են կրել հիվանդությունների ձևերը հակաբիոտիկների նկատմամբ դիմադրողականության ամրապնդման և կլիմայի փոփոխության պայմաններում:

54 Կենսակերպ և աշխարհայացք, որն ուղղված է հագուստի, սննդի և այլ նպատակով կենդանիների նկատմամբ դաժանության և շահագործման տարբեր հնարավորությունների բացառմանը:

Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը եւ տիեզերքը:

Ա2.3 Դպրոցը խրախուսում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը: Բ1.12 Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը: Բ1.13 Դպրոցը նպաստում է թափոնների ծավալների կրճատմանը: Գ1.2 Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը: Գ1.5 Երեխաները քննարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում և աշխարհի շուրջը: Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա: Գ1.9 Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:

Փոխադարձ կապերը տեղական եւ գլոբալ մակարդակներում

- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես կարող են նկարագրել իրենց բնակության վայրը որևէ անձի, ով բնակվում է Աֆրիկայում կամ Ասիայում, այլ մոլորակի վրա, Արեգակնային համակարգում կամ գալակտիկայում, և թե ինչպես կարող են դա ներկայացնել իրենց հասցեն գրելիս:
- Արդյո՞ք երեխաները լուսանկարում են իրենց շրջակայքը, բնապատկերները, երկինքը, ամպերը, եղանակային երևույթները/տեղումները և փոխանակում են դրանք իրենց երկրի այլ բնակավայրերում կամ աշխարհի այլ հատվածներում բնակվող մարդկանց հետ:
- Արդյո՞ք երեխաները ներկայացնում են, թե ինչ են հավանում և ինչը չեն սիրում իրենց տեղական միջավայրում՝ իրենց լուսանկարներով, գունանկարներով կամ գծանկարներով մեկնաբանելով իրենց ընտրությունը:
- Արդյո՞ք մեծահասակները և երեխաները համաձայն են, որ աշխարհի մի հատվածում շրջակա միջավայրի իրավիճակը կարող է ազդել աշխարհի մեկ այլ հատվածում բնակվող մարդկանց վրա՝ հանածո վառելիքի օգտագործման, անտառահատումների, երկրաշարժերի, միջուկային վթարների, հրաբխային ժայթքումների հետևանքով:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ փոփոխություններ է կրել իրենց տեղական լանդշաֆտը ժամանակի ընթացքում:
- Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խնդրում է տեղի սիրողական կամ պրոֆեսիոնալ աստղագետներին, ֆիզիկոսներին, քիմիկոսներին, հանքագործներին, մետաղի հայտնաբերման դետեկտորներից օգտվողներին, ժամագործներին, աշխարհագրագետներին, քարտեզագիրներին, օդերևութաբաններին, հողի հետազոտությամբ զբաղվող գիտնականներին, բնապատկերներ նկարող լուսանկարիչներին, դիզայներներին և արվեստագետներին, գրողներին և այլ մարդկանց՝ ներկայացնել իրենց պատկերացումները մոլորակի, լանդշաֆտների ու երկնքի պատկերների վերաբերյալ:
- Արդյո՞ք երեխաները արձանագրում են տեղական եղանակի կանխատեսումների ճշգրտությունը:

Արեգակնային համակարգը, գալակտիկան եւ տիեզերքը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց գալակտիկայի աստղը՝ Արեգակը՝ որպես բազմաթիվ աստղերից մեկը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են արևը՝ որպես կյանքի աղբյուր Երկիր մոլորակի վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են արևը՝ որպես էներգիայի աղբյուր Երկիր մոլորակի վրա:
- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են աստղերի կենսական շրջափուլերը:

- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են Երկիր մոլորակը՝ որպես Արեգակի շուրջը պտտվող մոլորակներից մեկը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են Երկիր մոլորակի ուղեծիրը, և թե ինչպես է առաջացել դրա մասին գիտելիքը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են իրենց համաստեղության, հարդագողի ճանապարհի և այլ համաստեղությունների մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչ տեսք ունեն աստղերը տարբեր ժամանակներում և տարբեր վայրերից դիտելիս:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են տիեզերքը՝ որպես բոլոր համաստեղությունների ու բոլոր մատերիաների ամբողջություն:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է տիեզերքը հիմնականում կազմված ջրածնից և հելիումից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են առաջացել բոլոր աստղերը, մոլորակները և կյանքը երկրի վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է լույսն առաջանում Արեգակի ու աստղերի վրա և հասնում մինչև Երկիր:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է միջաստղային տարածություններում հաշվարկվում լուսնային տարին:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են, թե ինչու են իրենք ուսումնասիրում տիեզերքի անցյալը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են աստղագիտության զարգացման պատմությունը, և թե ինչպես են մարդիկ օգտագործել աստղադիտակները տիեզերքն ուսումնասիրելու համար:

Ձգողականության ուժը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են մարդիկ և Երկիր մոլորակը պահպանում իրենց դիրքը մթնոլորտում՝ Երկրի ձգողականության ուժի շնորհիվ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է ձգողականության ուժը ձևավորել տիեզերքը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են Արեգակը, մոլորակները, լուսինը պահպանում իրենց դիրքն իրենց ուղեծրում՝ ձգողականության ուժի շնորհիվ:

Երկիր մոլորակի մագնիսականությունը

- Արդյո՞ք երեխաները սովորում են Երկիր մոլորակի մագնիսական դաշտի և մագնիսական բևեռների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է Երկիր մոլորակի մագնիսական դաշտը փոխվել, և մագնիսական բևեռները՝ շրջվել:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են Երկիր մոլորակի մագնիսական դաշտի դերը՝ արեգակնային քամու բերած լիցքավորված մասնիկները շեղելու միջոցով մթնոլորտը պաշտպանելու գործում:

Ժամանակ, ժամացույցներ եւ օրացույցներ

- Արդյո՞ք երեխաները սովորում են ժամանակի և դրա չափման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ տարին Երկիր մոլորակի մեկ պտույտն է Արեգակի շուրջ:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են, թե ինչպես է Երկրի մոլորակի՝ իր առանցքի շուրջ մեկ պտույտը առաջացնում ցերեկ ու գիշեր:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է Երկրի մոլորակի թեքությունը ապահովում տարվա չորս եղանակները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են Երկրի մոլորակի շուրջը Լուսնի մեկ պտույտը՝ որպես ամիսների հաշվարկման միջոց:
- Արդյո՞ք երեխաները սովորում են աշխարհագրական երկայնության և լայնության գաղափարների մասին, և թե ինչպես է ժամանակը հաշվարկվում Գրինվիչի միջօրեականով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են Երկրի մոլորակի պատմության երկրաբանական ժամանակաշրջանները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են օրացույցներ կազմելու տարբեր մեթոդները, և թե ինչպես են դրանք փոխվել ժամանակի ընթացքում:

Երկիր մոլորակը եւ իր արբանյակ Լուսինը

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են Լուսնի ծագումը՝ որպես մեկ այլ մոլորակի ազդեցությամբ Երկրից մի կտոր անջատվելու արդյունք:
- Արդյո՞ք երեխաները սովորում են Լուսնի կազմը և այնտեղ ջրի առկայություն հայտնաբերելու հետևանքները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են Լուսնի չափը և Երկրից ունեցած հեռավորությունը, և թե ինչպես է դա հանգեցնում արևի խավարման:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես են առաջանում մակընթացություններ Լուսնի ազդեցությամբ:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչ ազդեցություն կարող էին կրել մակընթացությունները, եթե Լուսինն ավելի մոտ լիներ Երկրին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ ազդեցություն կարող էին կրել Երկրի պտույտն իր առանցքի շուրջը և կայունությունը, եթե Լուսինը գտնվեր Երկրից ավելի մեծ հեռավորության վրա:

Օվկիանոսները

- Արդյո՞ք երեխաները սովորում են օվկիանոսների ծավալների մասին, և թե ինչպես են օվկիանոսներն ու եղանակը փոխազդում միմյանց:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ալիքների էներգետիկ փոխանցման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են ալիքներն ու մակընթացությունները ձևափոխում ափամերձ լանդշաֆտները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են ձևավորվում ավազն ու լողափերը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են մակընթացության ալիքների և ցունամիների առաջացման պատճառների ու հետևանքների մասին:

Ցամաքային ծածկույթը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է Երկրի մակերևույթը շարժվում տեկտոնական սալերի տեղաշարժման գծերի երկայնքով:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են մայրցամաքները և դրանց շարունակական շարժումը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են լեռների, հովիտների, գետերի, լճերի և այլ լանդշաֆտների ձևավորման գործընթացը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են մոլորակի մակերևույթի ժայռապարների կառուցվածքի մասին, և թե ինչպես և երբ են դրանք գոյացել:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հողի կազմավորման գործընթացի մասին:

Երկրագնդի ներքին կառուցվածքը

- Արդյո՞ք երեխաները սովորում են երկրագնդի ներքին կառուցվածքի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է երկրագնդի ներքին կառուցվածքն անդրադառնում երկրաշարժերի ու հրաբուխների, գեյզերների ու տաք աղբյուրների առաջացման վրա:

Երկրագնդի բաղադրիչ նյութերը

- Արդյո՞ք երեխաները սովորում են երկրագնդի կազմի, նրա բնական տարրերի ու մոլեկուլների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տարրերի ու մոլեկուլների գոյության բնական ձևերի՝ որպես գազերի, հեղուկների, սակայն հիմնականում որպես պինդ նյութերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են ատոմներն ու մոլեկուլները վերադասավորվում՝ փոխակերպվելով գազերի, հեղուկների և պինդ նյութերի:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են երկրագնդի տարրերը ձևավորվել աստղերի կենսական շրջափուլի ժամանակ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ատոմների ներքին կառուցվածքը:

Երկրագնդի ռեսուրսները

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են երկրագնդի որոշ ռեսուրսներ, ինչպես օրինակ, ադամանդները և ոսկին հատուկ ֆինանսական արժեք ստացել մարդկանց կողմից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են երկրագնդի որոշ ռեսուրսներ շահագործվում անձնական շահերի և մարդկանց օգուտի համար, հորատման, արդյունահանման և քարհանքերի շահագործման միջոցով:

Մթնոլորտը եւ նրա կառուցվածքը

- Արդյո՞ք երեխաները սովորում են մթնոլորտի կառուցվածքի մասին, և թե ինչպես է այն ձևավորվել, դրա կենսական նշանակության մասին, և թե ինչպես և ինչու է այն փոփոխվում:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է մթնոլորտը պահպանում իր դիրքը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են մթնոլորտային շերտի բարակությունը՝ երկրագնդի տրամագծի համեմատությամբ:

- Արդյո՞ք երեխաները սովորում են մթնոլորտի մեկուսիչ հատկությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են մթնոլորտի խտության մասին երկրագնդի մակերևույթին ավելի մոտ հատվածներում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչու է մթնոլորտի ջերմաստիճանն ավելի բարձր երկրագնդի մակերևույթի մոտ:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են օզոնային շերտի կարևորությունը՝ ճառագայթումը կլանելու տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են օդի ջերմաստիճանի վրա ցամաքի ու ծովի տարբեր ազդեցությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է մթնոլորտի ջերմաստիճանը փոխում մթնոլորտային ճնշումը:

Կլիման եւ եղանակը (տե՛ս Գ1.2 Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարեւորությունը. ջուր եւ կլիմա, էջ 192)

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են կլիմայի տատանումներն ամբողջ աշխարհում, և թե ինչպես է դա ազդում երկրագնդի ու արեգակի փոխկապվածության վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է կլիման փոփոխվում ծովամերձ և լեռնային տարածքներում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես են քամիներն առաջանում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են քամիները շարժվում բարձր մթնոլորտային ճնշումից դեպի ցածր մթնոլորտային ճնշում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են փոթորիկների, ամպրոպի, մրրիկների, թայֆունների, պտտահողմերի, ավազահողմերի կազմավորման մասին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ ազդեցություն ունեն մարդկանց կենսակերպի և տեղաշարժման վրա կանոնավոր քամիները, ինչպիսիք են մուսսոնները և պասսատները (արևադարձերից դեպի հասարակած փչող քամիները):
- Արդյո՞ք երեխաները սովորում են օվկիանոսային հոսանքների և եղանակային համակարգերի մասին, ինչպիսիք են «Գոլֆստրիմը», «էլ Նինյոն» և «էլ Նինյան»:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ռեակտիվ հոսքերի մասին, և թե ինչպես են դրանք ազդում օդանավերի թռիչքների տևողության վրա:

Կլիմայի փոփոխության մասին

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են ջերմոցային գազերի բնույթը, դրանց աղբյուրները, և թե որքան ժամանակ են դրանք պահպանվում մթնոլորտում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են ջրի գոլորշին՝ որպես ջերմոցային գազ, որն ունի բազմապատկիչ ազդեցություն ջերմաստիճանի բարձրացման ժամանակ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հանածո վառելիքի օգտագործման ինդուստրացման և ջերմոցային գազերի արտադրման հետևանքները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է գործում ջերմոցային էֆեկտը, և թե ինչպես են աճում գլոբալ տաքացման տեմպերը:

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են մարդկային գործունեության ազդեցությունը ջերմոցային գազերի առաջացման գործընթացի և կլիմայի փոփոխության վրա, հանածո վառելիքի օգտագործման, անտառների ոչնչացման և արդյունաբերական ապրանքների սպառման աճի հետևանքով:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է մոլորակի տաքացումը հանգեցնում կենդանիների ու բույսերի վարքի փոփոխության, անտառների ոչնչացման, հիվանդությունների ձևերի փոփոխության, ծայրահեղ եղանակային պայմանների, մուսսոնային անձրևների հաճախականության ավելացման, ծովի մակարդակի բարձրացման, ջրհեղեղների, սողանքների, Արկտիկայի և Անտարկտիկայի սառույցի հալման, սառցադաշտերի նահանջման, ձյան ջերմային ճառագայթման հատկությունների կրճատման, ջրամատակարարման և սննդի անվտանգության սպառնալիքների:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է մթնոլորտում ածխածնի երկօքսիդի մակարդակի աճը խթանում ծովի ջրերի օքսիդացումը՝ վտանգելով կորալների և ծովային այլ կենսահամակերգերի գոյությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են մշտասառույցների՝ մշտապես սառած գրունտային ջրերի ոչնչացման մասին, որն ազդում է հյուսիսային կիսագնդի ցամաքի մեկ քառորդի վրա, և թե ինչպես է դա հանգեցնում ծառերի վնասման ու շինությունների փլուզման և մահացած օրգանական նյութերից մեթանի ու ածխածնի երկօքսիդի արտադրման:

Կլիմայի փոփոխության դեմ պայքար

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես կարելի է նվազեցնել մոլորակի տաքացման ծավալները և տեմպերը՝ էներգաարդյունավետության մեխանիզմների խթանման, սպառման ծավալների կրճատման, հանածո վառելիքից կախվածության կրճատման և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումն ավելացնելով:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են միջուկային էներգիայի արտադրման կողմ և դեմ փաստարկները՝ որպես հանածո վառելիքից կախվածության նվազեցման միջոց:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են կենսավառելիքի արտադրության նպատակով հողերի օգտագործման կողմ և դեմ փաստարկները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են կլիմայի փոփոխության դեմ պայքարի միջազգային պայմանագրերի մասին, և թե ինչ կարծիք ունեն վերջիններիս վերաբերյալ դրանց կողմնակիցներն ու քննադատները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են մարդիկ հարմարվել փոփոխվող կլիմաներին:
- Արդյո՞ք երեխաները ծանոթանում են սպառման ծավալների կրճատման պայմաններում ապրելու, օրգանական սննդամթերքի տեղական արտադրության փորձերին և հանածո վառելիքի օգտագործման ծավալների կրճատման այնպիսի ծրագրերին, ինչպես օրինակ, «Տրանզիշնսը»:

Երկրագունդը եւ էթիկան (տե՛ս Ա2.3 Դպրոցը խրախուսում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը:)

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչ կենսական նշանակություն ունի երկրագնդի ռեսուրսների պահպանումը մարդու և կենդանիների բարեկեցության համար:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես կարող է Արկտիկայի և Անտարկտիկայի սառույցի պաշարների կրճատումը խրախուսել հետազոտողներին շարունակել Երկրի ռեսուրսների շահագործումը:

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես կարող են մարդիկ կանխել շրջակա միջավայրի աստիճանական վատթարացումը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են շրջակա միջավայրի աստիճանական վատթարացումը և մոլորակի տաքացումն ավելի շատ ազդում որոշ մարդկանց վրա՝ աղքատության մակարդակով, սեռային պատկանելությամբ ու իշխանությամբ պայմանավորված:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես կարող են և՛ աղքատությունը, և՛ հարստությունը խոչընդոտել սպառվող ռեսուրսների պահպանումը:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ փոփոխություններ է կրել կլիման անցյալում, և ինչպես կարող է փոխվել ապագայում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է ժամանակը կարգավորվում ամբողջ աշխարհում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ բացասական ազդեցություններ է կրել շրջակա միջավայրը, և ինչպես է բարելավվել ժամանակի ընթացքում տեղական ու գլոբալ մակարդակով:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են շրջակա միջավայրի վրա ապագա հնարավոր ճնշումները՝ բնակչության աճի և սպառման ծավալների ավելացման հետևանքով:

Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:

Ա2.3 Դպրոցը կարևորում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը: Բ1.12 Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը: Բ1.13 Դպրոցը նպաստում է թափոնների ծավալների կրճատմանը: Գ1.2 Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը: Գ1.5 Երեխաները քննարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում և աշխարհի շուրջը: Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը: Գ1.9 Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:

Փոխադարձ կապերը տեղական եւ գլոբալ մակարդակներում

- Արդյո՞ք երեխաներին գրառման, նկարչության, տեսանյութերի, աուդիո ձայնագրությունների և լուսանկարչության միջոցով խրախուսում են արձանագրել կենդանիների և բույսերի բազմազանությունը շենքերում, խաղահրապարակներում և դպրոցի շրջակայքում:
- Արդյո՞ք երեխաները մասնակցում են հոսքերի, գետերի, անհետացման եզրին գտնվող բույսերի և վայրի բնության վերականգնման նախագծերին:
- Արդյո՞ք դպրոցը համագործակցում է ազգային և միջազգային կազմակերպությունների հետ, որոնք կարող են ապահովել բույսերի ու կենդանիների բազմազանությունն ուսումնասիրելու հնարավորություններ:
- Արդյո՞ք դպրոցը դիմում է տեղական այգեգործական միությունների, մեղվաբույծների, բույսերի և կենդանիների խնամքով զբաղվող կազմակերությունների, բնապահպանների և բնապահպանական քարոզարշավներով զբաղվող ակտիվ անձանց ու կազմակերպությունների աջակցությանը:
- Արդյո՞ք դասերի ընթացքում մասնագետներն անդրադառնում են եղանակի փոփոխություններին, ծառերի և այլ բույսերի ծաղկմանը, թռչունների և կենդանիների միգրացիային՝ ըստ համապատասխան ժամանակաշրջանի:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են թռչունների և փոքր կաթնասունների նկատմամբ իրենց կատուների վերաբերմունքն ու պահվածքը:
- Արդյո՞ք դպրոցն ունի լճակ, որտեղ երեխաները կարող են ուսումնասիրել ջրային կենդանիների ու ջրային բույսերի կազմությունն ու հատկանիշները:
- Արդյո՞ք դպրոցի բակում աճում են այնպիսի բույսեր, որոնք կարող են գրավիչ լինել թիթեռների և այլ միջատների համար:
- Արդյո՞ք դպրոցը նպաստում է տեղական թռչունների պոպուլյացիայի զարգացմանը՝ թռչուններին կերակրելով, բներ պատրաստելով և նրանց բնական միջավայրերի պահպանման քարոզարշավներով:
- Արդյո՞ք դպրոցը խրախուսում է բնական միջավայրի ստեղծումը՝ բնապահպանական անկման հետևանքով խոցելի դարձած կենսատեսակների՝ ինչպես, օրինակ, մեղուների ու գորտերի համար:
- Արդյո՞ք դպրոցի բակում աճում են տեղական կլիմայական պայմաններին հարմարեցված բույսեր:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են կենդանիներն ու բույսերը հարմարեցվում աշխարհի տարբեր մասերի պայմաններին:
- Արդյո՞ք երեխաները դասարանի կամ դպրոցի կենսաբանական տեսակների անկյունում պարբերաբար ավելացնում են որևէ կենսատեսակ՝ նշելով, թե որտեղ է այն հանդիպում և ինչ քանակությամբ:

Բնապահպանական սկզբունքները

- Արդյո՞ք բնապահպանական սկզբունքները դիտվում են որպես դպրոցի գործունեությունը կենսապահովման սկզբունքների հետ փոխկապակցելու միջոց:[55]
- Արդյո՞ք փոխկախվածությունը, ինչպես նաև մրցակցությունը և գերիշխանությունը դիտվում են որպես կենսահամակարգերի պահպանման կարևորագույն սկզբունք և ուղղորդող փոխհարբերություն դպրոցի համար:
- Արդյո՞ք կենդանի էակների գոյությունը դիտվում է որպես գոյատևում փոխկապակցված համակարգերում կամ ցանցերում:[56]
- Արդյո՞ք կենսապահովումն իրականացվում է նախևառաջ՝ ենթահամակարգերում, որոնցից յուրաքանչյուրը կախված է ավելի ընդգրկուն համակարգի հետ իր հարաբերություններից, և ի վերջո՝ երկրագնդից ու տիեզերքից:
- Արդյո՞ք էկոհամակարգերի ներքին փոխազդեցությունները դիտվում են ջրի և այլ սննդարար նյութերի շրջափուլերի վերահսկողության տեսանկյունից:
- Արդյո՞ք կյանքը դիտվում է արևից սկիզբ առնող էներգիայի հոսքերից կախվածության մեջ:
- Արդյո՞ք բոլոր միջավայրերը դիտվում են որպես անընդհատ զարգացման մեջ գտնվող երևույթ:
- Արդյո՞ք առողջ էկոհամակարգերը համարվում են ինքնակարգավորվող և դինամիկ հավասարակշռության մեջ գտնվող համակարգեր:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են, որ էկոհամակարգերի հավասարակշռությունը կարող է խախտվել՝ դրանց ինքնակարգավորման խզման հետևանքով:

Վերաբերմունքն այլ կենդանի էակների նկատմամբ

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց զգացմունքները բույսերի, կենդանիների և մանրէների բնական աշխարհի նկատմամբ:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են իրենց և այլ մարդկանց վերաբերմունքը կենդանիների և բույսերի պահպանման նկատմամբ:
- Արդյո՞ք մեծահասակներն ու երեխաները հասկանում են, թե ինչպես են իրենք օգտվում էկոհամակարգերից այլ կենդանի օրգանիզմների հետ:
- Արդյո՞ք երեխաները տեղյակ են, որ իրենք կազմավորված են միևնույն տարրերից, ինչպես և մյուս կենդանի օրգանիզմները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե իրենք ավելի շատ ունեն այլ կենսատեսակների կարիքը, քան այլ կենսատեսակները՝ իրենց:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են այն կենդանիների և բույսերի գեղեցկությունն ու արժեքը, որոնք իրենց դուր չեն գալիս, ինչպես օրինակ, սարդերը, մակաբույծները, իշամեղուները, օձերը, եղինջը և տատասկը:

---

55 15-ամյա աշակերտի օրինակը ներկայացված է հետևյալ աշխատության մեջ՝ Stone, M. (2009) Smart by Nature: Schooling for sustainability, pp174-183, Healdsburg, Watershed Media.

56 Ներկայացված վեց երկրների օրինակը բերված է հետևյալ աշխատության մեջ՝ Fritjof Capra (2005), Speaking nature's language in Stone M. and Barlow Z. eds. Ecological Literacy: Educating our children for a sustainable world. San Francisco, Sierra Club Books.

Կենսաբազմազանության հասկացությունը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են կենդանի էակների բազմազանությունը, այդ թվում՝ կենդանիների, բույսերի, սնկերի, բակտերիաների և միաբջիջ այլ օրգանիզմների տեսակները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են այն գաղափարը, որ միաբջիջ օրգանիզմների ճնշող մեծամասնությունը միկրոօրգանիզմ է:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ կենդանիների ճնշող մեծամասնությունը միջատ է:
- Արդյո՞ք կենսաբազմազանությունը դիտվում է որպես էկոհամակարգերի, կենսատեսակների և դրանց գենետիկ բազմազանության ամբողջություն:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ցամաքում, ջրում և նրանց սահմաններում բնակվող էկոհամակարգերի բազմազանության մասին:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են քիմիական տարրերի, ապարների, հողի, կացարանի, սննդի, թթվածնի և ջրի կարևորությունը էկոհամակարգերի սահմաններում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են բույսերը, կենդանիները, միկրոօրգանիզմները և դրանց միջավայրը փոխազդում՝ ինքնակառավարվող էկոհամակարգեր ձևավորելու համար:
- Արդյո՞ք երեխաները տեղյակ են, որ իրենց բարեկեցությունը կախված է այլ կենսատեսակների առողջությունից. օրինակ, մեղուները կարևոր են փոշոտման, բակտերիաները՝ մարսողության, ազոտի ամրացման ու պարարտացման համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է տարբերվում կենսատեսակների բազմազանությունը՝ ըստ կլիմայի, տեղանքի բարձրության, գիշատիչների առկայության և որոշակի կենսատեսակների կողմից էկոհամակարգի գաղութացման արդյունավետության:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե նոր կենսատեսակների ո՛ր մասն է հայտնաբերվում և ոչնչանում նույնիսկ նախքան հայտնաբերվելը:

Էվոլյուցիայի մասին

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են հանածոների որոշ տեսակներ ցույց տալիս կենսաբազմազանությունը երկրաբանական տարբեր ժամանակաշրջաններում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես են հանածոները նպաստում էվոլյուցիայի մասին պատկերացումների ձևավորմանը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են կենսատեսակների բնույթը, և թե ինչպես են դրանք ծագել ու զարգացել:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են կենսատեսակների գոյատևման, տարածման ու ոչնչացման պատճառները:

Կենդանի էակների եւ էկոհամակարգերի դասակարգումը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են կենդանի էակների խմբավորման տարբեր եղանակները, ինչպես, օրինակ, ըստ արտաքին տեսքի, ըստ բեղմնավոր սերունդ ապահովելու նպատակով զուգավորման ունակության, ըստ սննդի կամ բժշկության մեջ օգտակարության և ըստ չափսերի:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են կենդանի էակները բաժանվում ըստ ստորակարգության՝ ոլորտից մինչև կենսատեսակ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է խմբավորել տարբեր էկոհամակարգերը՝ ըստ կլիմայի, տեղանքի աշխարհագրական լայնության, բարձրության և քաղցրահամ ջրերի ու օվկիանոսների:

Կենսաապահովման համակարգերը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են սննդային շղթաները և սննդային ցանցերը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես են սննդային ցանցերը ներառում արևը, բուսամթերքի արտադրությամբ զբաղվող անձանց և կազմակերպություններին, կենդանական ծագման սննդի սպառողներին, սանիտար կենդանիներին և սնկային ու բակտերիալ կազմալուծիչներին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ազոտի շրջափուլերը, և թե ինչպես կարող է խափանվել նրա՝ էկոլոգիական հավասարակշռության ապահովման գործառույթը՝ պարարտանյութերի չարաշահման հետևանքով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ածխածնի շրջափուլերը, և թե ինչպես կարող է խափանվել նրա՝ էկոլոգիական հավասարակշռության ապահովման գործառույթը՝ անտառների ոչնչացման և ածխածնի հիմքով վառելիքի օգտագործման հետևանքով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ջրի շրջափուլերը, և թե ինչպես կարող է խափանվել ջրի առկայությունը կենդանի էակների համար՝ աղտոտման ու գետերի ջրամբարման և հոսանքի ուղղության շեղման հետևանքով:

Կենդանի էակների կառուցվածքը

- Արդյո՞ք երեխաները սովորում են բույսերի և կենդանիների ներքին կառուցվածքը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են բույսերի և կենդանիների տարբեր բջիջների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են կենդանիների բոլոր բջիջները ձևավորվում մեկ ընդհանուր բջջից սաղմի մեջ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են գեների ու քրոմոսոմների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են յուրաքանչյուր տեսակի յուրահատուկ գեների մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են տարբեր բույսերի ու կենդանիների՝ գեներով հայտնաբերված ընդհանուր նախնիներին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է գեները ենթարկել բնական ու արհեստական փոխակերպման:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ կենդանի օրգանիզմները կազմված են մոլեկուլներից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ կենդանի էակները բաղկացած են քիմիական տարրերի ընդհանուր թվի միայն մի քանի մոլեկուլներից (59% ջրածին, 24% թթվածին, 11% ածխածին, 4% ազոտ, 2% քիմիական այլ տարրեր):
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է կենդանի էակների մոլեկուլների փոխազդեցությունն ուսումնասիրվում կենսաքիմիայի ոլորտում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են կմախքների, խեցիների և կորալների կառուցվածքը:

Կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները

- Արդյո՞ք երեխաները սովորում են աշխարհում կենդանիների և բույսերի կենսատեսակների ոչնչացման աճող տեմպերի մասին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են նախկինում կենսատեսակների զանգվածային ոչնչացման պատճառները և մարդկանց ստեղծած ներկայիս «հոլոցենային ոչնչացման» սպառնալիքները:

Բնակչության աճը եւ սպառման ծավալները

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են բնակչության աճի (1950 թվականի 2,5 միլիարդից՝ 7 միլիարդ, 2012 թվականին) հետևանքները և ազդեցությունը բույսերի ու կենդանիների բնական միջավայրի վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե որքան դանդաղ են մարդիկ արձագանքում ծնելիության ծավալների կրճատմանը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է բնակչության աճը նվազում աղքատության ծավալների կրճատման արդյունքում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է բնակչության աճը կախված ռեսուրսների սպառման քանակից:

Կենդանիների որսը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են կենդանիների օրինական ու ապօրինի որսի և ձկնորսության սպառնալիքը կենսատեսակների համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են անհետացող կենսատեսակների միջազգային առևտուրը:

Բնական միջավայրի ոչնչացումը

- Արդյո՞ք երեխաները գրանցում են իրենց և այլ երկրներում անտառների կրճատման ծավալները, և թե ինչպես է դա անդրադառնում կենդանիների ու բույսերի կենսատեսակների պահպանման խնդրին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ այն, որ բազմազանության բոլոր կենսատեսակների կեսն ապրում է արևադարձային անտառներում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են քաղաքաշինության ծավալների և ճանապարհային ցանցերի ընդլայնման հետևանքով բնական միջավայրի ոչնչացման խնդիրը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են ճանապարհաշինության և գյուղատնտեսության ծավալների աճի հետևանքով բնական միջավայրի մասնատման խնդիրը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են ջրատարածքներից ջրահեռացման հետևանքով բնական միջավայրի ոչնչացման խնդիրը:

Աղտոտումը եւ հիվանդությունները

- Արդյո՞ք երեխաները սովորում են բնական միջավայրերի վրա քաղցրահամ ջրերի աղտոտման հետևանքների մասին:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե կենսաբազմազանության վրա հերբիցիդների և ինսեկտիցիդների/միջատասպանների ինտենսիվ օգտագործումն ի՛նչ հետևանքներ կունենա:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են արդյունաբերական թափոնների և չմշակված կոյուղաջրերի հոսքի աճը դեպի գետեր ու ծովեր:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե կենսաբազմազանությանը ի՛նչ սպառնալիք են բույսերի և կենդանիների հիվանդությունները:

Կենսատեսակների ոչնչացում եւ նոր կենսատեսակների բազմացում

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են այլ էկոհամակարգերի այն բույսերի ներդրման հնարավոր բացասական ազդեցությունը տեղական բույսերի վրա, որոնք ավելի մրցունակ են սննդարար նյութեր, ջուր և լույս կլանելու տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են այլ էկոհամակարգերի այն կենդանիների ներդրման հնարավոր բացասական ազդեցությունը տեղի կենդանիների վրա, որոնք ավելի մրցունակ են սնունդ և հայթայթելու տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ բացասական հետևանքներ կարող է ունենալ որևէ բուսատեսակի կամ կենդանական տեսակի ոչնչացումը տվյալ էկոհամակարգի այլ բույսերի և կենդանիների գոյատևման վրա:

Գյուղատնտեսական եւ ձկնաբուծական մեթոդները

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ սպառնալիք է հողի ու ծովերի գերշահագործումը այլ կենսատեսակների համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են մշակաբույսերի տարատեսակների խոշոր ծավալներով կրճատումը՝ իրենց և այլ երկրներում հողագործական արդյունաբերական մեթոդների կիրառման հետևանքով, ի համեմատություն ավելի քիչ մեքենայացված մեթոդներ կիրառող երկրների մշակաբույսերի լայն բազմազանության:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են ձկնորսական մեթոդների կիրառումը և ձկնորսության ինտենսիվությունն ազդում ծովային կենսատեսակների վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարող է գենետիկական բազմազանության կրճատումը (ընտրական բուծման միջոցով) բարձրացնել բույսերի խոցելիությունը հիվանդությունների նկատմամբ:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերի ներդրման սպառնալիքները գենետիկական բազմազանության համար:

Կլիմայի փոփոխությունը (տես Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը եւ տիեզերքը:)

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են մարդկանց գործունեության հետևանքով կլիմայի փոփոխության ազդեցությունը կենսաբազմազանության վրա:

Կենսաբազմազանության բարելավում

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց երկրում և ամբողջ աշխարհում կենդանիների ու բույսերի պահպանման նպատակով իրականացվող աշխատանքները:
- Արդյո՞ք դպրոցը մշակում է իր շրջակայքում կենսաբազմազանության զարգացման ծրագիր:
- Արդյո՞ք մեծահասակները և երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է խթանել վայրի բնության զարգացումը՝ սննդամթերքի մշակման նպատակով օգտագործվող հողատարածքների կողքին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես կարելի է վերականգնել ձկնապաշարները և խթանել կենդանիների թվաքանակի աճը՝ ձկնորսության և որսորդության ծավալների սահմանափակումներով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե որքանով կարող են կենդանաբանական այգիները նպաստել կենսատեսակների պահպանմանը:

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե որքանով է կենդանիների ու բույսերի բնական միջավայրի ոչնչացումն անդառնալի:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես կարող է գյուղատնտեսական մեթոդների փոփոխությունը կանխել կենսաբազմազանության կրճատումը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տեղական բնատեսակները նախկինում զբաղեցրած բնական միջավայր վերադարձի մասին:
- Արդյո՞ք մեծահասակները և երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է վերականգնել աստիճանական վատթարացման ենթարկված հողատարածքները:

Կենսաբազմազանություն եւ էթիկա

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է աղքատությունը հանգեցնում շրջակա միջավայրի անտեսման:
- Արդյո՞ք երեխաներին խրախուսում են գնահատել կենդանի էակների բազմազանության գեղեցկությունը բնական միջավայրում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են բույսերի և կենդանիների բազմազանության պահպանման կողմ և դեմ փաստարկները:
- Արդյո՞ք երեխաները տեղյակ են բույսերի բուժիչ հատկություններին, և թե որքան բույսերի նման հատկություններն են հետազոտվել:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե բուսատեսակների փոփոխությունը միջատների կամ հիվանդությունների նկատմամբ մշակաբույսերի խոցելիության ինչպիսի բարձր մակարդակի կհասնի:
- Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են կենսաբազմազանության պահպանման գործում Կենսաբազմազանության մասին միջազգային կոնվենցիայի և դրանից բխող՝ Կենսաբազմազանության ազգային ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի ազդեցությունը:
- Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են, թե որքանով են խախտվել մինչև 2010 թվականը կենսատեսակների ոչնչացման ծավալների կրճատման միջազգային թիրախները:
- Արդյո՞ք մեծահասակները և երեխաները դիտարկում են, թե ինչպես են միջազգային կորպորացիաները ինքնակարգավորվում, ինչպես կարող են կարգավորվել՝ աղտոտվածությանը, շահագործման գերծավալներին և բնական միջավայրի ոչնչացման ծավալների կրճատմանը հակադարձելու նպատակով:
- Արդյո՞ք դպրոցը դիտարկում է ՄԱԿ-ի կենսաբազմազանության տասնամյակ 2011-2020թթ.-ին միանալու կարևորությունը:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ փոփոխություններ են կրել իրենց շրջակայքի լանդշաֆտները. օրինակ, ինչ ազդեցության են ենթարկվել շրջակայքի կենդանիները և բույսերը՝ թփերի ու ծառերի առկայության, մշակաբույսերի աճեցման, ճանապարհաշինության և կառուցապատման արդյունքում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են տարբեր կենդանի արարածներ պատմականորեն ընտելացվել իրենց երկրում և ամբողջ աշխարհում տարբեր ժողովուրդների կողմից:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչ փոփոխություններ են կրել կենդանիները և բույսերը իրենց և այլ երկրներում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպիսի ապագա է սպասվում կենսատեսակների ոչնչացման առկա տեմպերի պահպանման դեպքում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպիսի ապագա է սպասվում կենսատեսակների ոչնչացման առկա տեմպերի նվազեցման ու դադարեցման դեպքում, և թե ինչպես կարելի է դա ապահովել:

Գ1.9 Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:

Բ1.12 Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը:

Գ1.7 Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը:

Գ1.8 Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:

Փոխադարձ կապերը տեղական եւ աշխարհի մակարդակներում

(Տե՛ս Բ1.12, Դպրոցի եւ շրջակա տարածքում վառելիքի օգտագործման գործողություններ)

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց բնակավայրում էլեկտրաէներգիայի արտադրության տարբեր եղանակները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են էլեկտրաէներգիայի արտադրության և դեպի իրենց դպրոցներ ու տներ մատակարարման շղթան:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են գազի, նավթի, բենզինի և դիզելային վառելիքի արտադրման, օգտագործման և դեպի իրենց տուն ու դպրոց մատակարարման շղթան:
- Արդյո՞ք վառելիքի տեղական մատակարարներն ու արևային վահանակներից, քամու տուրբիններից և ջերմային պոմպերից օգտվող անհատներն ու կազմակերպությունները որևէ կերպ մասնակցում են կրթակարգի մշակման գործընթացին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է վառելիքն օգտագործվում աշխարհի տարբեր հատվածներում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է վառելիքն օգտագործվում տարբեր տարիքային խմբերի մարդկանց կողմից իրենց և այլ երկրներում:

«Էներգիա» հասկացությունը

- Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը քննարկում է «էներգիա» հասկացությունն այնպես, որ երեխաների համար հասկանալի լինի փոփոխվող աշխարհում դրա կիրառությունը՝ միևնույն ժամանակ չհակասելով ֆիզիկայից ստացած նրանց գիտելիքներին: Արդյո՞ք էներգիան դիտարկվում է որպես ուժ, որը մղում է շարժման, աշխատանքի:
- Արդյո՞ք մարդիկ և կենդանիներն ընկալվում են որպես էներգիայի աղբյուրներ, որոնք կարող են գործարկել մեքենաներ ու տեղափոխել բեռներ:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է առաջանում իրենց մարմնի էներգիան:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքանով են անհրաժեշտ էներգիայի աղբյուրները սնունդ պատրաստելիս, ջեռուցման, հովացման, լուսավորման, կենցաղային և արդյունաբերական սարքավորումների ու տրանսպորտի համար:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, որ Արեգակը երկրագնդի էներգիայի աղբյուրն է:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է արևից փոխանցվող էներգիան նպաստում ածխածնի հիմքով վառելիքի և էներգիայի այլ աղբյուրների ստեղծմանը, ինչպիսիք են քամիներն ու ալիքները:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են, թե բույսերը արևից ստացած էներգիան ինչպես են փոխակերպում սննդի ու վառելիքի:

- Արդյո՞ք երեխաները մտածում են երկրագնդի միջուկից, մակընթացություններից և միջուկի տրոհումից ստացվող էներգիայի ծագման մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է արևի էներգիան ծագել Տիեզերքի ձևավորման արդյունքում՝ մատերիայի գրավիտացիոն փլուզմամբ և միջուկային տրոհմամբ:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, որ տիեզերքում, որտեղ էներգիան պահպանվում է, էներգիայի և մատերիայի ընդհանուր գումարը հավասար է զրոյի, եթե տիեզերքը սկիզբ է առել զրո մատերիայից և էներգիայից:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է երկրագնդի ներքին էներգիան հանգեցնում մայրցամաքների տեղաշարժման, լեռնաշղթաների ձևավորման, հրաբուխների ժայթքման ու երկրաշարժերի:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են, որ էներգիան ունի տարբեր ձևեր (մագնիսական, կինետիկ, ջերմային, լուսային/ճառագայթային, ձայնային, քիմիական, էլեկտրական, գրավիտացիոն, առաձգական, միջուկային):

Վերականգնվող եւ սպառվող էներգիայի աղբյուրները

- Արդյո՞ք երեխաները սովորում են արևի, քամու, գետերի, բույսերի կամ կենսազանգվածի, ալիքների, ջերմային պոմպերի և երկրաջերմային աղբյուրների վերականգնվող էներգիայի մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես կարելի է ջրածինն օգտագործել որպես վերականգնվող վառելիք, որը կարելի է ստանալ էներգիայի այլ աղբյուրներից, ինչպես վերականգնվող, այնպես էլ սպառվող:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է փայտն օգտագործվում և՛ որպես վերականգնվող, և՛ սպառվող վառելիքի աղբյուր աշխարհի տարբեր հատվածներում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է քամին օգտագործվում որպես ուղղակի էներգիայի աղբյուր հողմաղացներում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ ածուխը, նավթը, գազը և ուրանը էներգիայի սպառվող աղբյուրներ են:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են էներգիայի սպառվող աղբյուրներն արդյունահանվում երկրի և ծովերի ընդերքից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է նավթը զտվում՝ բենզինով աշխատող, դիզելային և ռեակտիվ շարժիչներում օգտագործման նպատակով:

Էլեկտրաէներգիայի արտադրությունը

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է արտադրվում էլեկտրաէներգիան՝ էներգիայի վերականգնվող և սպառվող աղբյուրների փոխակերպմամբ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է ստանալ էլեկտրաէներգիա՝ օգտագործելով էներգիայի այնպիսի վերականգնվող աղբյուրներ, ինչպիսիք են՝ գետերի, ալիքների և մակընթացությունների հիդրոէլեկտրաէներգիան, քամու տուրբինները, երկրաջերմային աղբյուրները, ջերմային պոմպերը՝ օգտագործելով ջերմաստիճանի տարբերությունները և արևային էներգիայի վերականգնվող աղբյուրները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է ստանալ էլեկտրաէներգիա՝ էներգիայի սպառվող աղբյուրների միջոցով ածխային, գազային և միջուկային էլեկտրակայաններում:

- Արդյո՞ք երեխաները սովորում են էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով գոլորշու օգտագործման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տուրբոփոխարկիչների և նրանց կառուցվածքում մագնիսականության դերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են փոխվում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները տանը և դպրոցում, էլեկտրաէներգիայի սպառման ծավալների կրճատմանը զուգահեռ:

Էներգամատակարարումը եւ էներգիայի պահեստավորումը

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է վառելիքը տեղափոխվում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է վառելիքը պահեստավորվում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է գազերը պահեստավորել հեղուկ վիճակում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է էլեկտրաէներգիան առաքվում շենքեր ու տներ ազգային մատակարարների կողմից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են էլեկտրաէներգիայի տեղական արտադրողները նպաստել ազգային ցանցի զարգացմանը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է էլեկտրաէներգիան կուտակել մարտկոցներում:

Վառելիքի բիզնեսը

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ովքեր են գումար վաստակում՝ վառելիքի արդյունահանման և բաշխման, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման արդյունքում:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են վերականգնվող և սպառվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրման համապատասխան ծախսերը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են ֆինանսական պայմանները փոխվում՝ ըստ էներգիայի արտադրության մեջ վերականգնվող կամ սպառվող աղբյուրների օգտագործման նախապատվության:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, որ էներգիայի խնայողության փոխարեն էներգիայի սպառումը խրախուսելը բխում է էլեկտրաէներգիա արտադրողների շահերից:

Ածխածնի հիմքով վառելիքի սպառման ծավալների կրճատում

- Արդյո՞ք երեխաները մտածում են, որ հանածո վառելիքի սպառվող աղբյուրների օգտագործումը կազմում է արտադրվող էլեկտրաէներգիայի 90%-ը, ինչը հանգեցնում է ջերմոցային գազերի խոշոր ծավալով արտանետումների, և արդյո՞ք մտածում են, թե ինչպես կարելի է դա կանխել:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես կարելի է նվազեցնել էլեկտրաէներգիայի պահանջարկը՝ այն ավելի արդյունավետ օգտագործելով:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես կարելի է նվազեցնել ածխածնի հիմքով վառելիքի օգտագործումը՝ դրանից կախված ապրանքների սպառման ծավալների կրճատմամբ:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես կարելի է պայքարել սպառման այն ճնշումների դեմ, որոնք ստեղծվում են կառավարության, գովազդային ոլորտի, խանութների և կորպորացիաների կողմից:

- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե սպառման ցանկությունը ինչպես է դառնում մեր ինքնության այնպիսի մաս, կարծես սպառումը մեզ հաճույք է պատճառում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե որքանով մենք պետք է փոխենք ինքներս մեզ, եթե ցանկանում ենք ավելի քիչ սպառել:

Վառելիքի արտադրության եւ սպառման էթիկան

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ վտանգներ է ներկայացնում մարդկությանը և շրջակա միջավայրին երկրագնդի ու ծովի ընդերքից նավթի, գազի, ածխի և ուրանի արդյունահանումը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե որքանով են վառելիք արտադրող երկրների քաղաքացիները շահում՝ իրենց երկրի ընդերքից նավթի կամ այլ վառելիքների արդյունահանման արդյունքում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են կրճատվում փայտանյութի պաշարները, երբ այն օգտագործվում է որպես վառելիք, և թե ինչ բնապահպանական հետևանքներ կարող է դա ունենալ:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են պետության կողմից՝ վառելիքի արդյունահանման և էլեկտրաէներգիայի արտադրության սեփականատիրության դեմ և կողմ փաստարկները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքան վտանգավոր է շրջակա միջավայրի համար նավթի արդյունահանումը ավելի անմատչելի աղբյուրներից, ինչպիսիք են ծովի ընդերքը կամ սառցե խոյակների հատակը:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես են երկրները պատերազմում՝ նավթի ու գազի իրենց պաշարներն ապահովելու համար:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ կենսազանգվածի լայնածավալ արտադրությունը (բույսերից ստացվող վառելանյութ)՝ կենդանիների և բույսերի բնական միջավայրի ոչնչացման ու սննդամթերքի մշակման համար անհրաժեշտ հողատարածքների կրճատման տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են կենսազանգվածի հիմքով վառելիքի արտադրության ազդեցությունը սննդի արժեքի փոփոխության վրա:
- Արդյո՞ք երեխաները մտածում են մարդկության համար էներգիայի արտադրության տարբեր եղանակների հետևանքների և վտանգների մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչ կերպ կարող է փոխվել հասարակության ներկայիս կառուցվածքը, եթե մարդիկ ստիպված լինեն հարյուրավոր տարիներ շարունակ ապահովել միջուկային թափոնների անվտանգությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են միջուկային վառելիքի և զենքի արտադրության փոխկապվածության մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ տարբեր էներգամատակարարներ տարբեր կերպ են վերաբերվում վերականգնվող աղբյուրների օգտագործման հնարավորություններին, և որ դա կարող է ազդել տանը ու դպրոցում էներգամատակարարների ընտրության վրա:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ նավթի պաշարները սպառման եզրին են, և դիտարկում են, թե մարդիկ ինչպես կարող են հարմարվել նավթի պաշարների սպառմանը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է նավթն ազդել բենզինով աշխատող, դիզելային և ռեակտիվ շարժիչների զարգացման վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մարդիկ լուսավորել ու ջեռուցել իրենց տները և սնունդ պատրաստել անցյալի տարբեր ժամանակաշրջաններում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե որպես վառելիք ինչպես են փոխվել փայտի, տորֆի, ածխի, նավթի և գազի օգտագործման մեթոդները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես և ինչու է փոխվում վառելիքի սպառման եղանակները և ծավալները աշխարհի տարբեր հատվածներում:
- Արդյո՞ք երեխաները խորհում են, թե ինչպես են ապագայում մարդիկ ջեռուցելու իրենց տները, ճամփորդելու և իրեր պատրաստելու:

Գ1.10 Երեխաները սովորում են կապի եւ հաղորդակցման տեխնոլոգիաների մասին:

Ա1.8 Դպրոցը արժևորում է համայն մարդկության միջև փոխհարաբերությունների ըմբռնումը:
Գ1.11 Երեխաներն զբաղվում են գրականությամբ, արվեստով ու երաժշտությամբ և ստեղծագործում են:

Փոխադարձ կապերը տեղական եւ գլոբալ մակարդակներում

- Արդյո՞ք տեղական թերթերի լրագրողները և սեփականատերերը, էլեկտրոնային կայքերի դիզայներները, սարքավորումներ և ծրագրային ապահովում արտադրող ընկերությունները, վավերագրողները և հեռախոսային բիզնեսով զբաղվող ընկերությունները որևէ կերպ մասնակցում են կրթակարգի մշակման գործընթացին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ովքեր են աշխարհում խոսում այն լեզուներով, որոնցով խոսում են իրենք՝ իրենց դպրոցում:
- Արդյո՞ք երեխաները շփվում են այլ անձանց հետ տեղում և հեռավորության վրա՝ թղթային նամակագրությամբ, առցանց հաղորդակցությամբ, այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ու հեռախոսով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքան տարբեր և միանման եղանակներով են մարդիկ հաղորդակցվում ամբողջ աշխարհում, օրինակ՝ խոսելով ու գրելով, տարբեր տեխնոլոգիաների օգտագործմամբ:
- Արդյո՞ք դպրոցը կապ հաստատում է տեղական ու ազգային և այլ երկրների դպրոցների հետ:

Հաղորդակցման միջոցները

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հաղորդակցությունը՝ խոսքի, գրելու, թերթերի և գրքերի, ռադիոյի, հեռուստատեսության, համացանցի, օժանդակ տեխնոլոգիաների, բջջային ու քաղաքային հեռախոսների, էլեկտրանային փոստի և սոցիալական ցանցերի միջոցով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են լրատվամիջոցների դերը՝ մոտեցումների, հավատքի ու գիտելիքների վրա ներգործելու տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաներ մտածում են, թե ինչ ազդեցություն է գործում գովազդը իրենց և այլ անձանց վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են համացանցի զարգացման պատմություն, և թե ինչպես է այն օգտագործվում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքանով են համակարգիչներ օգտագործվում՝ գործնականում գիտելիքներ ձեռք բերելու, սոցիալական ցանցերից օգտվելու և խաղեր խաղալու նպատակով:

Լեզուներ եւ բարբառներ

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ լեզուներով ու նշաններով են մարդիկ հաղորդակցվում աշխարհում, դրանց աշխարհագրական տարածվածությունն ու փոխկապվածությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են լրացուցիչ լեզուներ սովորելու պատճառները, ինչպես օրինակ, աշխատանքի նպատակով, օտարերկրացիների հետ հաղորդակցվելու, ինչպես նաև դիտարկում դա՝ որպես զբոսաշրջության և հետազոտությունների խթանման միջոց:

- Արդյո՞ք դպրոցը խրախուսում է բոլոր աշակերտներին և աշխատակիցներին սովորել լրացուցիչ բանավոր կամ գրավոր/նշանային լեզուներ:
- Արդյո՞ք երեխաներին օգնում են վարժ խոսելու, կարդալու և գրելու իրենց մայրենի լեզվով կամ վարժ օգտվելու իրենց մայրենի լեզվի նշանային համակարգերից:
- Արդյո՞ք երեխաները տեղյակ են, թե ինչպես է նվազում լեզվական բազմազանությունն աշխարհի մակարդակով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես և ինչու է անգլերենը դարձել գերիշխող օտար լեզու ամբողջ աշխարհում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչ ազդեցություն է գործում անգլերենը՝ որպես աշխարհում համար առաջին օտար լեզու, այլ երկրների երեխաների կրթության վրա:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են համացանցի ազդեցությունը մարդկանց հաղորդակցման վրա ամբողջ աշխարհում:

Հաղորդակցման խոչընդոտների հաղթահարման եղանակները

- Արդյո՞ք երեխաները հասկանում են, թե հաղորդակցությունը ինչպես կարող է խեղաթյուրվել ծածկագրերի և ժարգոնային լեզվի կամ բառապաշարի օգտագործմամբ, որը հասկանալի է միայն որոշակի խմբերի շրջանակներում:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե որքանով է երկխոսությունը կախված խոսողի և ունկնդրի միջև հավասար պայմաններից:
- Արդյո՞ք երեխաներին սովորեցնում են, թե ուշադիր լսելը, կարդալը, գրելը և մտորելը որքանով են օգնում արդյունավետ հաղորդակցմանը:
- Արդյո՞ք երեխաներին սովորեցնում են զարգացնել բանավոր և գրավոր հաղորդակցության ճշգրտությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչը կարող է խոչընդոտել ու նպաստել տարբեր համայնքների ու մշակույթների միջև, ինչպես նաև երկրների ներքին և արտաքին հաղորդակցմանը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչը կարող է խոչընդոտել ու նպաստել տարբեր սերունդների միջև հաղորդակցմանը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ դեր են կատարում ժեստերը և դեմքի արտահայտությունը՝ հաղորդակցման մեջ:

Կապի եւ հաղորդակցման տեխնոլոգիաների բիզնեսը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հեռախոսային, հեռուստատեսության, թերթերի, ռադիոյի, գովազդային, համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման, էլեկտրոնային կայքերի և համակարգչային խաղերի բիզնեսն ու արդյունաբերությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե համակարգչային ծրագրերը ինչպես են փոխել գործնական հարաբերությունները, ինչպես, օրինակ, բանկերի և դրանց հաճախորդների միջև:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են բիզնես ուղղվածությամբ ծրագրային ապահովումները փոխել համալսարանների ու դպրոցների մոտեցումները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են մարդիկ գումար վաստակում՝ համացանցում առևտուր անելով:

- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես են որոնման համակարգեր և սոցիալական ցանցեր ստեղծող անձինք կամ կազմակերպությունները գումար վաստակում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ուսուցիչների, թարգմանիչների և մեկնաբանների աշխատանքը:

Կապի եւ հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործման էթիկան

- Արդյո՞ք երեխաները մտածում են հաղորդակցման տեխնոլոգիաներից օգտվող և չօգտվող ընտանիքների տարբերությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարող է բջջային հեռախոսների համար օգտակար հանածոների արդյունահանումը հրահրել հակամարտություններ տնտեսապես աղքատ երկրներում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են համացանցի օգուտները և վտանգները:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես են բարբառները, լեզվական շեշտադրումները և բառապաշարի ընտրությունը գնահատվում կամ արժեզրկվում՝ ընկալվելով որպես որևէ սոցիալական խմբի պատկանելության նշան:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաները սովորում են անցյալի մասին բանավոր և գրավոր պատմություններից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է ուսումնասիրել բնության անցյալը երկրաբանական պեղումներով և հանածոներով, շենքերի և այլ արտեֆակտերի, խորհրդանիշների և փաստաթղթերի հիման վրա:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են փոխվել և շարունակում փոխվել հաղորդակցման տարբեր ձևերը, օրինակ՝ որոշ լեզուների անհետացումը, անգլերենի տարածումը՝ որպես գերիշխող օտար լեզու, հեռախոսի և համակարգչի օգտագործումը:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես կարող են այլ օտար լեզուներ գերիշխող դիրք գրավել անգլերենի կողքին՝ տվյալ լեզուներով խոսող երկրների տնտեսական իշխանության փոփոխության հետևանքով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հաղորդակցման միջոցների զարգացման պատմությունը՝ ձիավոր սուրհանդակներից, կրակի ու ծխի միջոցով հաղորդագրություններ ուղարկելուց մինչև հեռագրեր, քաղաքային հեռախոս, բջջային և մուլտիմեդիա հեռախոսներ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են ռադիոյի և հեռուստատեսության՝ որպես հեռահաղորդակցման միջոցների զարգացման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մարդիկ ծախսել իրենց ժամանակը հաղորդակցման միջոցների փոփոխությունների հետևանքով:

Գ1.11 Երեխաներն զբաղվում են գրականությամբ, արվեստով ու երաժշտությամբ եւ ստեղծագործում են:

Փոխադարձ կապերը տեղական եւ գլոբալ մակարդակներում

- Արդյո՞ք դպրոցը խրախուսում է տեղի արվեստագետներին, լուսանկարիչներին, կոմպոզիտորներին, երաժիշտներին և այլ կատարողների, բանաստեղծներին և գրողներին ցուցադրել ու բեմադրել իրենց աշխատանքները դպրոցում և հաղորդակցվել իրենց հմտություններով:
- Արդյո՞ք դպրոցը կազմակերպում է որևէ փառատոն, որտեղ դպրոցի և հարակից համայնքների երեխաներն ու մեծահասակները կարող են ներկայացնել իրենց աշխատանքները:
- Արդյո՞ք դպրոցը խրախուսում է երեխաներին և նրանց ընտանիքների անդամներին այցելել արվեստի ու արհեստի տեղական ստուդիաներ:
- Արդյո՞ք երեխաները հետաքրքրվում են միմյանց տարբերություններից՝ այն տեսանկյունից, թե ինչ են մյուսները սիրում դիտել, կարդալ ու լսել:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են ստեղծվում իրենց սիրելի գրքերը, հեռուստատեսային ծրագրերը, ֆիլմերը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են աշխարհի տարբեր հատվածներում ստեղծված արվեստի գործերի, երաժշտության, պիեսների և պոեզիայի տարբերությունները:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես են մի երկրի արվեստը, երաժշտությունը, թատրոնն ընկալվում մեկ այլ երկրում:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են, որ բոլոր երկրներում գործում են ժամանակակից գրողներ, արվեստագետներ, պարողներ, երաժիշտներ, և որ միայն երկրների ավանդական ձևերի դիտարկումը կարող է հանգեցնել կարծրատիպերի:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ արվեստի բոլոր ձևերն ազդեցությունների համադրություն են:

Հետաքրքրությունների զարգացումը

- Արդյո՞ք բոլորն են դիտվում որպես ստեղծագործական միտք ունեցող գրող, հեքիաթասաց, բանաստեղծ, ռեժիսոր, լուսանկարիչ, երգիչ, պարող, երաժիշտ, դերասան, նկարիչ, քանդակագործ, կավագործ/խեցեգործ, խճանկար պատրաստող:
- Արդյո՞ք դպրոցը խրախուսում է երեխաներին արտադասարանային աշխատանքի միջոցով զարգացնել իրենց ստեղծագործական հետաքրքրությունները:
- Արդյո՞ք դպրոցում կա հնարավորություն՝ լսելու երգեր, երաժշտություն, պատմություններ, պոեզիա և դիտելու ֆիլմեր, թատերական ներկայացումներ, պարեր և արվեստի այլ գործեր:
- Արդյո՞ք դպրոցը խրախուսում է երեխաներին իրենց համար բացահայտել արվեստը, պարը, թատերական արվեստը, երաժշտությունը, և զբաղվել արվեստի այն ճյուղով, որը նրանք ամենից շատ են գնահատում:

Երաժշտություն

- Արդյո՞ք դպրոցը խրախուսում է երեխաներին զբաղվել տարաբնույթ երաժշտությամբ:
- Արդյո՞ք բոլոր երեխաները հնարավորություն ունեն սովորելու և նվագելու գնված և/կամ տնային պայմաններում պատրաստած լարային, փողային, փայտե փողային և հարվածային գործիքներ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են երաժշտական ստեղծագործությունների մասին, և թե ինչպես փոխանցել զգացմունքներն ու գաղափարները:
- Արդյո՞ք կան մի շարք երգչախմբերի միանալու հնարավորություններ:
- Արդյո՞ք դպրոցը կազմում է իր երգացանկը, որ բոլորը գիտեն:
- Արդյո՞ք երգացանկը ներառում է երգեր, որոնք դուր են գալիս երեխաներին:
- Արդյո՞ք կան տարբեր ոճերի երգեր երգելու հնարավորություններ:
- Արդյո՞ք երգացանկը ներառում է նաև այն երգերը, որոնք երեխաները բերում են իրենց հետ նախկին դպրոցներից:
- Արդյո՞ք դպրոցն ուսումնասիրում է այլ երկրների երաժշտական ոճերը, որոնք օգտագործում են, օրինակ, հարմոնիայում:
- Արդյո՞ք դպրոցը փորձում է օգնել երեխաներին ձերբազատվելու այն մտքից, որ երգելն այնքան էլ «ուժեղ» երևույթ չէ, կամ հաղթահարելու հանդիսատեսի ներկայությամբ երգելու վախը:
- Արդյո՞ք դասերի ընթացքում քննարկվում է այն, թե ինչպես են երգելը և երգերի բառերի իմացությունը նպաստում գրագիտության զարգացմանը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են գրել երգերի բառերը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես գրել և կատարել իրենց և այլոց երգերը, օրինակ, անձնային և ազգային թեմաներով, համայնքի ու դպրոցի միջոցառումների ժամանակ:

Պար

- Արդյո՞ք երեխաները սովորում են պարային տարբեր ոճեր:
- Արդյո՞ք երեխաներին խրախուսում են բացահայտել իրենց նախընտրած պարային ոճը:
- Արդյո՞ք պարողներին և պարային դպրոցներին խրախուսում են հաղորդակցվել իրենց հմտություններով:

Պատմությունների ներկայացում

- Արդյո՞ք երեխաներին խրախուսում են զարգացնել պատմություններ ներկայացնելու՝ պատմելու իրենց հմտությունները:
- Արդյո՞ք երեխաներն օգտագործում են պատմություններ ներկայացնելու, պատմելու իրենց հմտությունները տանը և համայնքներում:
- Արդյո՞ք երեխաների պատմություններ ներկայացնելու՝ պատմելու հմտությունների զարգացումը նպաստում է գրելու հմտությունների զարգացմանը:

Գրականություն

- Արդյո՞ք մեծահասակները դպրոցում հաղորդակցվում են պոեզիայի, գեղարվեստական գրականության և պիեսների մասին տարատեսակ կարծիքներով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են գնահատել ստեղծագործական տարբեր ոճերը և զարգացնել իրենց ոճը:

Պոեզիա

- Արդյո՞ք երեխաներին խրախուսում են արտահայտել իրենց մտքերն ու զգացմունքները պոեզիայի՝ իրենց առավելագույնս նախընտրելի ոճով:
- Արդյո՞ք երեխաներին ներկայացվում են պոեզիայի ստեղծագործման մի շարք ոճեր:
- Արդյո՞ք երեխաներին խրախուսում են ստեղծագործել, ներկայացնել և բեմադրել իրենց ստեղծագործությունները՝ որպես զգացմունքների և իրադարձությունների արձագանքման միջոց:

Թատերգություն/դրամատուրգիա

- Արդյո՞ք ուսումնական ծրագրում ներառված են մի շարք թատերական ժանրեր, տիկնիկային ներկայացումներ ու դերախաղեր:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հնարել, գրել և ներկայացնել իրենց պիեսները:
- Արդյո՞ք թատերգության մեջ օգտագործվում են երեխաների ձայնն ու առոգանությունն ավելի վստահ և կայուն դարձնելու որոշակի շեշտադրումներ:
- Արդյո՞ք բոլորը գիտեն, որ թատրոնի կախարդանքը՝ հավատալ անհավատալիին, կարելի է ապահովել ամենապարզ միջավայրում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են թատերական ներկայացումներում լուսավորության, երաժշտության և այլ միջոցների ավելացման դրամատիկ ներուժի մասին:

Կինո եւ հեռուստատեսություն

- Արդյո՞ք երեխաների համար ցուցադրվում են մի շարք ֆիլմեր՝ մայրենի, անգլերեն և այլ օտար լեզուներով:
- Արդյո՞ք երեխաները համեմատում են գրքերը և դրանց հիման վրա ստեղծված ֆիլմերը:
- Արդյո՞ք երեխաներն օգտվում են ֆիլմերից և հեռուստահաղորդումներից՝ որպես ցատկահարթակ իրենց հեղինակային պատմվածքների համար:
- Արդյո՞ք երեխաները սովորում են պատրաստել իրենց ֆիլմերը՝ գրել սցենարներ, խմբագրել, իրականացնել նկարահանումներ, մոնտաժել և ձայնագրել երաժշտությունը:

Լուսանկարչություն

- Արդյո՞ք երեխաները սովորում են լուսանկարներ անել:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են, թե ինչ է իրենց դուր գալիս, կամ ինչը չեն հավանում լուսանկարներում:
- Արդյո՞ք երեխաները օգտագործում են լուսանկարներ՝ պատմություններ ներկայացնելու, օրինակ՝ իրենց բնակավայրերի մասին, և գեղարվեստական ֆոտոպատմություններ պատրաստելու համար:

Արվեստը՝ որպես գործարարություն

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ովքեր են ապրուստ վաստակում արվեստի գործերով և կատարողական արվեստով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ովքեր են գումար վաստակում բեմադրության և արվեստի գործերի առք ու վաճառքով:

Արվեստ եւ էթիկա

- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես կարող են արվեստի որոշ գործեր և ձևեր անհասանելի լինել բազմաթիվ մարդկանց համար իրենց արժեքի պատճառով:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են բռնության և նվաստացուցիչ հարաբերությունների տեսարաններ պատկերելու սահմանները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, որ շահագործող հարաբերություններ պատկերելը, հնարավոր է, ինքնին շահագործող հարաբերություններ է:

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են արվեստի ու արհեստի գործերի արժեքային տարբերությունները:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե որքանով են հեղինակի և նկարչի կերպարն ու գործողությունները ազդում իրենց ստեղծած արվեստի գործերի արժեքի վրա:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են արվեստի գործերի արժեքի և գնի հարաբերությունները:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է զարգացել գրքերի օգտագործումը և գրագիտության մակարդակը
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է զարգացել տպագրությունը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են հանրահայտ երաժշտության փոփոխական բնույթը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է փոխվել դասական երաժշտությունը:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են, թե ինչպես է համացանցի և էլեկտրոնային սարքավորումների զարգացումն ազդում մարդկանց կողմից գրականությամբ և երաժշտությամբ զբաղվելու նախընտրելի եղանակների վրա, և թե ինչպես դա կարող է փոխվել ապագայում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են արվեստի տարբեր ձևերի զարգացման պատմությունը:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես են արվեստի ձևերը զարգացել տարբեր կերպ, տարբեր վայրերում:

Գ1.12 Երեխաները սովորում են տարբեր աշխատանքներ եւ այն կապակցում են իրենց հետաքրքրությունների զարգացմանը:

Բ1.9 Երեխաները լավ պատրաստված են այլ հաստատություն տեղափոխվելու համար:

Փոխադարձ կապերը տեղական եւ աշխարհի մակարդակներում

- Արդյո՞ք երեխաները սովորում են այն աշխատանքների մասին, որոնցով մարդիկ զբաղվում են իրենց բնակավայրում, իրենց երկրում և ամբողջ աշխարհում՝ սննդի, հագուստի, շինարարության, տրանսպորտի, էներգետիկայի, ֆինանսների, օրինական դեղորայքի և ապօրինի թմրամիջոցների, առողջապահության, կրթության և երեխայի խնամքի, ֆիզիկական և բնական միջավայրի, ճամփորդության, ժամանցի, արվեստի, կառավարման ոլորտներում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես է աշխարհի մի հատվածում կատարվող աշխատանքը պայմանավորված աշխարհի մեկ այլ մասում կատարվող աշխատանքով:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես կարելի է աշխատատեղերը տեղափոխել մեկ երկրից մյուսը:
- Արդյո՞ք տեղացիները՝ անկախ սեռից և մասնագիտությունից, նպաստում են դպրոցի կրթական գործունեությանը:
- Արդյո՞ք երեխաները գրառում են այն միջոցառումները, որոնց նրանք մասնակցում են շաբաթվա կամ ամսվա ընթացքում:

Աշխատանքի եւ գործունեության բնույթը

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ հմտություններ են պահանջվում տարբեր մասնագիտությունների համար, և թե ինչպես կարելի է դրանք ձեռք բերել:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ շատ մարդիկ իրենց կյանքի ընթացքում մի շարք տարբեր աշխատանքներ են կատարում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է տեղափոխվել այն աշխատանքից կամ փոխել մասնագիտությունը, որն իրենց դուր չի գալիս:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հանրային և մասնավոր հատվածի աշխատանքի միջև տարբերությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ այնպիսի կարևոր գործ, ինչպես տնային տնտեսության վարումն է և այլ անձանց խնամքով զբաղվելը, հաճախ մնում է առանց վարձատրության:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տարբեր տեսակի կամավորական աշխատանքների մասին, որոնցով մարդիկ զբաղվում են:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է աշխատանքը դառնում ինքնության հաստատման աղբյուր շատերի համար:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են թոշակի անցնելու նշանակությունը նրանց համար, ովքեր տքնաջան աշխատանք են տարել այլ անձանց խնամքով զբաղվելով, սակայն համարժեք չեն վարձատրվում դրա դիմաց:
- Արդյո՞ք երեխաները մտածում են այն հարցի շուրջ, որ շատ մարդիկ, թոշակի անցնելով, կարող են լրիվ դրույքով աշխատանքը թողնելու դեպքում իրենց ժամանակը հատկացնել մի շարք միջոցառումների:

«Գործազրկություն» հասկացությունը

- Արդյո՞ք երեխաները սովորում են տարբերել գործազրկության, անգործության և վճարովի աշխատանքում ներգրավված չլինելու հասկացությունները:
- Արդյո՞ք երեխաները հասկանում են, թե ինչու են որոշ մարդիկ գործազուրկ, և թե ինչպես կարող է դա փոխվել ազգային տնտեսության զարգացմամբ ու ամրապնդմամբ:

Հետաքրքրությունների եւ գործունեության զարգացում

- Արդյո՞ք երեխաները սովորում են, որ շատ մարդկանց աշխատանքը կապված է իրենց որոշակի հետաքրքրությունների հետ, մինչդեռ մյուսները հնարավորություն ունեն զբաղվելու իրենց հետաքրքրություններով միայն վճարովի աշխատանքից դուրս:
- Արդյո՞ք երեխաներին օգնում են զարգացնել իրենց հետաքրքրություններից բխող մի շարք զբաղմունքներ, որոնցով նրանք զբաղվում են դպրոցից դուրս, և կարող են շարունակել դրանցով զբաղվել ֆորմալ կրթությունն ավարտելուց հետո:

Աշխատանք, աշխատավարձ եւ ֆինանսներ

- Արդյո՞ք երեխաները սովորում են բյուջետային եկամուտների և ծախսերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես և ինչու է գումար գանձվում աշխատողների աշխատավարձից՝ որպես հարկեր և կենսաթոշակային վճարներ:
- Արդյո՞ք երեխաները մտածում են դեբետային կամ վարկային քարտերի առավելությունների ու թերությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մարդիկ ստանում շահույթ և կրում վնասներ ապրանքների առք ու վաճառքից:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են աշխատանքի ծավալների և դրա արդյունքում պատրաստված ապրանքի գնի հարաբերությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են արտադրողականության գաղափարները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են բանկերի աշխատանքի մասին, և թե ինչպես են նրանք շահույթ ստանում քիչ թե շատ ռիսկային ներդրումներով:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հանրային ընկերությունների, պարտատոմսերի, բաժնետոմսերի, բաժնեմասերի, բաժնետերերի և շահաբաժինների մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են խաղային ոլորտները, այդ թվում, ազգային վիճակախաղերը, և թե ովքեր են գումար շահում ու կորցնում:

Աշխատանք, էթիկա եւ քաղաքականություն

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են աշխատանքի, աշխատավարձի ու շահույթի տարբեր հեռանկարները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է աշխատանքի կամ ծառայությունների փոխանակումը, ինչպես նաև վճարովի աշխատանքը, կազմակերպվում պաշտոնական տնտեսությունից դուրս:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տարբեր աշխատանքների վարձատրության չափերի մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է աշխատանքի արժեքը կապվում դրա դիմաց վճարվող աշխատավարձի հետ:

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են սոցիալական ապահովության նպաստների նշանակությունը, թե ինչ է նշանակում ապրել աղքատության կամ հարստության մեջ և ունենալ «լավ» կենսամակարդակ:
- Արդյո՞ք երեխաները մտածում են նվազագույն աշխատավարձի նպատակի ու ցանկալի մակարդակի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են աշխատանքի հավասարության ու անհավասարության, ինչպես նաև՝ աշխատանքի վայրում ծաղրանքի եթարկվելու և խտրականության դրսևորման մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են տղամարդկանց ու կանանց, ինչպես նաև էթնիկ խմբերի վարձատրության տարբերությունների մասին, և թե ինչպես կարելի է դա կանխել:
- Արդյո՞ք երեխաները սովորում են իրենց աշխատանքային իրավունքների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են շահագործման մասին, և թե ինչպես կարելի է այն կանխել:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է պայքարել աշխատավայրում տիրող անհավասարությունների դեմ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչու են որոշ մարդիկ իրենց աշխատանքի դիմաց վճարված գումարը համարում վարձատրություն, իսկ մյուսները՝ աշխատավարձ:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է աշխատանքային զբաղմունքը փոխվել վերջին հիսուն տարիների ընթացքում և ավելի երկար ժամանակահատվածներում՝ իրենց և այլ երկրներում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է փոխվել եկամուտների անհավասարությունը:
- Արդյո՞ք երեխաները ուսումնասիրում են վերջին շրջանում աշխատանքային պայմանները բարելավելու նպատակով կազմակերպված քարոզարշավները, այդ թվում՝ արձակուրդի, ժամանակավոր անաշխատունակության վարձատրության, մայրության ու հայրության նպաստների և կանանց հավասար վարձատրության համար, և թե ինչ արդյունքներ են տվյալ քարոզարշավները գրանցել:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց ընտանիքի անդամների աշխատանքային զբաղմունքները և զրուցում են ընտանիքի՝ տարիքով ավելի մեծ անդամների հետ նրանց նախկին աշխատանքի մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է փոխվել աշխատանքային կյանքը՝ կյանքի տևողության, աշխատանքի իրավունքի և կենսաթոշակային տարիքի փոփոխության հետ կապված:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչ փոփոխություններ կարող են կրել աշխատանքի ձևերն ապագայում:

Գ1.13 Երեխաները սովորում են էթիկայի կանոնների, իշխանության եւ կառավարման մասին:

Ա1.7 Դպրոցը ժողովրդավարական քաղաքացիության մոդել է: Ա2.1 Դպրոցը ձևավորում ու զարգացնում է համընդհանուր ներառական արժեքներ: Ա2.2 Դպրոցը խթանում է հարգանքը մարդու բոլոր իրավունքների նկատմամբ: Գ1.12 Երեխաները սովորում են տարբեր աշխատանքներ և այն կապակցում են իրենց հետաքրքրությունների զարգացման հետ:

Փոխադարձ կապերը տեղական եւ գլոբալ մակարդակներում

- Արդյո՞ք տեղի փիլիսոփաները, քաղաքական գործիչները, բանկերի կառավարիչները, պետական պաշտոնյաները, հումանիստները, կրոնական առաջնորդները որևէ կերպ մասնակցում են կրթակարգի մշակման գործընթացին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց և այլ երկրների կառավարության ձևերի նմանություններն ու տարբերությունները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց և այլ երկրների իրավական համակարգերի նմանություններն ու տարբերությունները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են «կոռուպցիա» հասկացությունը, և թե որքանով է այն տարածված իրենց ու այլ երկրների կառավարության և այլ հաստատությունների շրջանում:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե կառավարման որ ձևն է լավագույնս բնութագրում իրենց դպրոցը, ընտանիքներին և իրենց հայտնի այլ հաստատությունների:

Ո՞վ է տնօրինում իշխանությունը

- Արդյո՞ք երեխաները դիտարկում են՝ ո՛վ ունի իշխանություն որոշելու իրադարձությունների ընթացքը, որոնք ազդում են իրենց ընտանեկան կյանքի, դպրոցների ու թաղամասերի վրա տեղական, ազգային և աշխարհի մակարդակներում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են իշխանությունն ու ազդեցությունը բաժանվում ազգային և տեղական կառավարման մարմինների, իրավական և ռազմական համակարգերի, կորպորացիաների, շահառուների, բիզնեսների, ֆինանսական հաստատությունների, ՁԼՄ-ների, միությունների, դասակարգերի, համայնքների, ընտանիքների և քաղաքացիների միջև:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքանով կարող են կորպորացիաներն ավելի մեծ ազդեցություն ունենալ քաղաքացիների կյանքում, քան որոշ կառավարություններ:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են տարբեր երկրների հարաբերական ուժն ու իշխանությունը:

Ազգային պետություններ եւ սահմաններ

- Արդյո՞ք երեխաները մտածում են ազգերի ձևավորման ու սահմանների որոշման մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են սահմանների շուրջ հակամարտությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են երկրները գաղութացվել և ազատագրվել:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե մարդիկ ինչպես են դիտվել (և շարունակում են դիտվել) որպես ապրանքներ և գնվում ու վաճառվում են որպես ստրուկներ:

- Արդյո՞ք երեխաները մտածում են այլ պետությունների կազմից դուրս գալու նպատակով անկախության ուղղությամբ կազմակերպվող շարժումների մասին:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են տարբեր երկրների կառավարությունների միջև դաշինքների բնույթի մասին, և թե ինչպես և ինչու են այլ երկրներ դիտվում որպես դաշնակիցներ կամ թշնամիներ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ինքնիշխանության կամ պետական անկախության նշանակությունը, և թե ինչ ազդեցություն է դրա վրա գործում միջազգային ու եվրոպական իրավունքը, Եվրոպական խորհրդարանը, փողերի շարժը, պարտքերը, թերթերի սեփականատիրությունը, սնունդը, վառելիքը և էներգետիկ անվտանգությունը, հողի ու կոմունալ ծառայությունների սեփականատիրությունը:

Ժողովրդավարություն եւ կառավարման այլ ձեւեր

- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես են մարդկանց ղեկավարում միապետություններում, կրոնապետություններում, բռնապետություններում և ժողովրդավարական երկրներում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են գործում տեղական ու ազգային կառավարման մարմինները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ժողովրդավարական հասկացությունները:
- Արդյո՞ք ժողովրդավարությունը դիտարկվում է մշտական զարգացման տեսանկյունից:
- Արդյո՞ք երեխաները սովորում են քվեարկության տարբեր համակարգերի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են տեղական ավագանու անդամների, խորհրդարանի անդամների և Եվրոպական խորհրդարանի անդամների գործառույթների մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչու են որոշ մարդիկ քվեարկում, իսկ ոմանք՝ ոչ, տեղական և ազգային կառավարման մարմինների ընտրությունների և Եվրոպական խորհրդարանի ընտրությունների ժամանակ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է իրականացնել և անտեսել ժողովրդավարական իրավունքները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են եկեղեցու, այլ կրոնների և պետության միջև փոխհարաբերությունների մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես կարող է որևէ կրոն կարևորելը նշանակել, որ մյուս կրոնները և ոչ կրոնական համոզմունքները ավելի քիչ են արժևորվում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են քաղաքական կուսակցությունների մասին, և թե ովքեր կարող են դառնալ դրանց անդամներ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են լրատվամիջոցների սեփականատիրության մասին, և թե ինչ շահեր են հետապնդում դրանց սեփականատերերը՝ որոշակի քաղաքական ուղղության հետևելով:
- Արդյո՞ք երեխաները դիտարկում են մի շարք ծառայությունների մասնավոր և հանրային սեփականության նշանակությունը, ինչպիսիք են հագուստի արտադրությունը, տրանսպորտը, փոխադրումները, բանկային ծառայությունները, կրթությունը, ջրամատակարարման և հեռախոսային ծառայությունները, գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են հանրային տարածության զարգացման ու ոչնչացման կարևորության մասին՝ ազգային ընդհանրության և կոլեկտիվ գործողությունների տեսանկյունից:

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են հարստության, աղքատության և հասարակական կյանքին մասնակցության փոխազդեցություններն ու հարաբերությունները:

Իրավական համակարգեր

- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ ազդեցություն ունի իրենց կյանքում ազգային օրենսդրությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են դատարանների աշխատանքի մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքանով է օրենքի խախտումը պատժելի:
- Արդյո՞ք երեխաները սովորում են դատարանների կողմից կիրառվող պատժի տարբեր տեսակների, դրանց նպատակների ու հետևանքների մասին:
- Արդյո՞ք երեխաները քննարկում են, թե որքանով է օրենքը արդարացիորեն կիրառվում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ ազդեցություն ունի իրենց կյանքում միջազգային օրենսդրությունը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են միջազգային դատարանների իշխանության մասին, և թե դրանք ում նկատմամբ կարող են արդարություն իրականացնել:

Հանրային եւ մասնավոր ֆինանսներ

- Արդյո՞ք երեխաները սովորում են կառավարության եկամտի աղբյուրների մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է կառավարությունը որոշում որքան դրամ թողարկել:
- Արդյո՞ք երեխաները սովորում են եկամուտների և հարստության բաշխման մասին:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես է կառավարությունը ծախսում իր բյուջեն, և թե ինչպես են կայացվում ծախսերի վերաբերյալ որոշումները:
- Արդյո՞ք երեխաները սովորում են Արժույթի միջազգային հիմնադրամի մասին, և թե ինչպես է այն ֆինանսավորվում:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչ ազդեցություն է գործում միջազգային ֆինանսական իրավիճակը երկրի կառավարության ֆինանսավորման վրա:
- Արդյո՞ք երեխաները մտածում են այլ երկրների հետ գործարքների (վճարային հաշվեկշռի) և արտահանման համեմատ ներկրման ավելի մեծ ծավալների կամ այլ երկրներում գումար վաստակելու հետևանքների մասին:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես են որոշվում բանկային տոկոսադրույքները:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են մարդիկ ու երկրները ձեռք բերում իրենց վարկային վարկանիշը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են գնաճի պատճառների ու հետևանքների, դրա ցանկալի մակարդակի մասին, և թե ինչպես է այն չափվում և վերահսկվում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են գնաճի և գնանկման չափման տարբեր մեթոդները, և թե ինչպես է որոշվում գնաճի լավագույն մակարդակը:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են արժույթները գնահատվում այլ արժույթների նկատմամբ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց կառավարության կողմից այլ երկրներին տրամադրվող վարկերն ու դրամաշնորհները:

Անհատական եւ քաղաքական էթիկա

- Արդյո՞ք երեխաները մտածում են, որ անձնական ու աշխատանքային կյանքում, այդ թվում՝ քաղաքականության մեջ, անհրաժեշտ է առաջնորդվել միևնույն կամ տարբեր արժեքներով:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ինչպես է երկրի գործողությունների վրա անդրադառնում բարոյական արտաքին քաղաքականությունն ու դրա բացակայությունը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են այն արժեքները, որոնցով ցանկանում են առաջնորդվել սեփական գործողություններում, ինչպես նաև դրանք տեսնել այլ անձանց գործողություններում:
- Արդյո՞ք երեխաները զարգացնում են արժեքները և գործողությունները փոխկապակցելու իրենց կարողությունները:
- Արդյո՞ք երեխաները զարգացնում են իրենց կարողությունները՝ դատելու համար, թե երբ են արժեքները ապահովում գործողության հակասական ազդակներ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են դատողություններ անել բարոյականության շուրջ:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են տարբեր մարդկանց արժեհամակարգը և դրանցով պայմանավորված՝ նրանց գործողությունները:
- Արդյո՞ք երեխաները մտածում են պատժի էության մասին, և թե պատժի որ տեսակն է, իրենց կարծիքով, նպատակահարմար կիրառել դպրոցներում, ընտանիքներում և կալանավայրերում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես են ձևավորվում իրենց ցանկությունները, ընտրությունն ու բարոյականությունը կառավարության, կրոնի, ընտանիքի, ընկերների, ՁԼՄ-ների ու գովազդների ազդեցությամբ:

Ներկայի, անցյալի եւ ապագայի փոխադարձ կապերը

- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ժողովրդավարության զարգացման պատմությունը աշխարհում:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ պայքար են մարդիկ մղել՝ իրենց ժողովրդավարական իրավունքները հաստատելու համար:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ ձեռքբերումներ են գրանցվել միասնական/ կոլեկտիվ գործողությունների շնորհիվ:
- Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչ դեր են կատարել քաղաքական կուսակցությունները, միությունները և միասնական/կոլեկտիվ գործողությունները ժողովրդավարության զարգացման գործում:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են ավելի հասուն ժողովրդավարություն տանող ճանապարհի փուլերը:
- Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչը կարող է ամրապնդել ժողովրդավարությունն իրենց երկրում, համայնքներում, դպրոցներում և ընտանիքներում:
- Արդյո՞ք երեխաները մտածում են, թե ապագայում ինչպես կարող է փոխվել իշխանության բաժանումն իրենց երկրում:

Գ2. Ուսուցման գործընթացի կազմակերպում

Գ2.1 Ուսուցման գործընթացը պլանավորվում է՝ հաշվի առնելով բոլոր երեխաների ունակությունները:

Գ2.2 Ուսուցման գործընթացն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը:

ա) Արդյո՞ք կրթական գործընթացը նախատեսում է աջակցել ուսումնառությանը, այլ ոչ թե ապահովել կրթակարգի կատարողականը:

բ) Արդյո՞ք կրթակարգի նյութերը արտացոլում են բոլոր աշակերտների փորձն ու հետաքրքրությունները:

գ) Արդյո՞ք ուսուցման գործընթացը արտացոլում է երեխաների բազմազան հետաքրքրությունները:

դ) Արդյո՞ք նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք ներառում են բանավոր ներկայացում և քննարկում, ունկնդրում, ընթերցանություն, գրել, նկարել, խնդիրների լուծում, թատերական ներկայացումներ, գրադարանի օգտագործում, աուդիո և տեսանյութեր, գործնական առաջադրանքներ, ՏՀՏ:

ե) Արդյո՞ք ուսուցման գործընթացը նախատեսում է զույգերով, խմբային և անհատական աշխատանքներ, ինչպես նաև աշխատանք ամբողջ դասարանի համար:

զ) Արդյո՞ք ուսուցման գործընթացն անդրադառնում է դպրոցից և դասարանից դուրս, բակերում և դպրոցի շրջակայքում և այլ վայրերում երեխաների ձեռք բերած փորձառություններին:

է) Արդյո՞ք ուսուցման գործընթացն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը:

ը) Արդյո՞ք ուսուցման գործընթացն օգնում է զարգացնելու երեխաների մտածողությունը, բանավոր ու գրավոր խոսքը և ուսման հմտությունները:

թ) Արդյո՞ք ուսուցման գործընթացը ներկայացվում է որպես շարունակական երևույթ, այլ ոչ թե որոշակի առաջադրանքներ կատարելու և ավարտելու պարտականություն:

ժ) Արդյո՞ք ուսուցման գործընթացն ապահովում է ճկունություն, որպեսզի, օրինակ, երեխաները հնարավորություն ունենան մասնակցելու օտար լեզվի կամ գրագիտության արագացված դասընթացների:

ժա) Արդյո՞ք դպրոցը տրամադրում է թարգմանիչներ՝ լսողության խանգարումներ ունեցող երեխաների համար:

ժբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը ուսուցման գործընթացը պլանավորելիս փորձում է բացահայտել և նվազագույնի հասցնել որոշ երեխաների ուսուցման ու մասնակցության խոչընդոտները:

ժգ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն անդրադառնում է զանգվածային ուշադրության կենտրոնում գտնվող թեմաներին, որոնք կարող են շահադրդել որոշակի խմբերի երեխաների, ինչպես օրինակ, ֆուտբոլի և ռեգբիի տղամարդկանց կամ կանանց առաջնությունը, և ապահովել հավասար այլընտրանքներ տվյալ թեմայի նկատմամբ հետաքրքրություն չդրսևորող երեխաների համար:

ժե) Արդյո՞ք երեխաները կարող են մասնակցել բնական գիտությունների և ֆիզիկական կրթության դասերին իրենց նախընտրած հագուստով:

ժզ) Արդյո՞ք կրթակարգը հարմարեցվում է այն երեխաներին, որոնք չեն մասնակցում, օրինակ, արվեստի կամ երաժշտության դասերին՝ իրենց կրոնական համոզմունքների պատճառով:

ժէ) Արդյո՞ք դասերը անհրաժեշտության դեպքում հարմարեցվում են ֆիզիկական կամ զգայական խնդիրներ ունեցող երեխաների կարիքներին՝ ֆիզիկական կրթության դասերին կամ գործնական աշխատանքներին մասնակցելու, լույսի և ձայնի ըմբռնման իրենց գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու նպատակով:

ժը) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ընդունում է, որ հաշմանդամություն ունեցող որոշ երեխաների անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ՝ գործնական աշխատանքի դասերին սարքավորումներից օգտվելու համար:

ժթ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն իրականացնում է հատուկ աշխատանք՝ ուսուցման գործընթացում ներգրավելու այն երեխաներին, որոնք կազմակերպված չեն, չեն հաղորդակցվում կամ դրսևորում են անբարյացակամ վերաբերմունք:

ի) _____

իա) _____

իբ) _____

Գ2.2 Ուսուցման գործընթացն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը

Գ2.1 Ուսուցման գործընթացը պլանավորվում է՝ հաշվի առնելով բոլոր երեխաների ունակությունները:

ա) Արդյո՞ք ուսուցման գործընթացը անդրադառնում է ընդհանուր փորձին, որը երեխաները կարող են զարգացնել մի շարք ձևերով:

բ) Արդյո՞ք ուսուցիչները խուսափում են ուսուցման ակնկալիքները սահմանել որպես դասընթացի նպատակ:

գ) Արդյո՞ք դասերը պարբերաբար կազմակերպվում են բաց հարցերի շուրջ հարցադրումներով:

դ) Արդյո՞ք ուսուցիչները սահմանափակում են այն հարցերի թիվը, որոնց համար ակնկալվում են միայն մեկ ճիշտ պատասխան:

ե) Արդյո՞ք դասերը կառուցվում են դպրոցից դուրս երեխաների ձեռք բերած փորձի, գիտելիքների և հմտությունների շուրջ:

զ) Արդյո՞ք դասերը ներգրավում են երեխաներին՝ հուզական տեսանկյունից:

է) Արդյո՞ք դասերը փոխանցում են հուզումնալից ու հաճելի զգացողություններ:

ը) Արդյո՞ք ուսուցիչներն անձամբ ցույց տալիս են, թե որքան են սիրում սովորել:

թ) Արդյո՞ք դասերի ընթացքում օգտագործվող բանավոր և գրավոր լեզուն հասու է բոլոր երեխաներին:

ժ) Արդյո՞ք տեխնիկական բառապաշարն օգտագործվում է միայն ըստ անհրաժեշտության, և մասնագետները բացատրում և համապատասխանաբար կիրառում են դասերի ժամանակ:

ժա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խրախուսում է, որ երեխաները բարձրաձայնեն որևէ բան չհասկանալու դեպքում:

ժբ) Արդյո՞ք երեխաները կարող են ներկայացնել իրենց աշխատանքը տարբեր ձևերով՝ օգտագործելով նկարներ, լուսանկարներ, տեսաձայնագրություններ և ձայնագրություններ, ինչպես նաև գրավոր եղանակով:

ժգ) Արդյո՞ք ուսուցման գործընթացը խրախուսում է երկխոսությունը ուսուցիչների ու երեխաների/սովորողների միջև:

ժդ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես ճիշտ հարցադրումներ անել՝ միմյանց ուսուցման արդյունավետությանն աջակցելու նպատակով:

ժե) Արդյո՞ք ուսուցման գործընթացը խրախուսում է երեխաներին խոսել գաղափարների և ուսուցման գործընթացների մասին:

ժզ) Արդյո՞ք երեխաները նախաձեռնում են հետագա ինքնուրույն աշխատանք ուսուցչի հանձնարարությունն ավարտելուց հետո:

ժէ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները բարելավում են համացանցից օգտվելու իրենց հմտությունները, դպրոցում և տանը ուսուցման գործընթացի արդյունավետությանը նպաստելու համար:

ժը) Արդյո՞ք նախատեսվում է հանձնարարությունների որևէ հստակ ցուցակ, որոնք կարող են նպաստել երեխաների ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

ժթ) Արդյո՞ք օտար լեզու սովորող երեխաները հնարավորություն ունեն դասերի ժամանակ խոսելու կամ գրելու իրենց մայրենի լեզվով՝ օգտագործելով իրենց թարգմանչական հմտությունները:

ի) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը կատարում է անհրաժեշտ հարմարեցումներ՝ ուսուցման գործընթացին հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցությունն ապահովելու համար:

իա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը հասկանում է, որ հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություն ունեցող երեխաներից հանձնարարությունները կատարելու համար կարող են պահանջվել լրացուցիչ ֆիզիկական ջանքեր, ինչը կարող է հանգեցնել հոգնածության:

իբ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը հասկանում է, թե ինչ մտավոր ջանքեր են պահանջվում՝ շուրթերով ընթերցելու և տեսողական օժանդակ սարքեր օգտագործելու համար:

իգ) Արդյո՞ք դպրոցն օգտվում է տեխնոլոգիական առաջընթացից, ինչպես օրինակ, խոսքի ճանաչման ծրագրերից, այն երեխաների համար, որոնք ունեն գրելու մեծ դժվարություններ:

իդ) _____

իե) _____

իզ) _____

Գ2.3 Երեխաները խրախուսվում են իրենց քննադատական մտածողության համար:

Գ2.4 Երեխաներն ակտիվորեն մասնակցում են իրենց ուսուցման գործընթացին:

ա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը աջակցում է միմյանց լինել ինքնավստահ և զարգացնել քննադատական մտածողությունը:

բ) Արդյո՞ք բոլորը գիտակցում են, որ երկխոսության արդյունավետության համար անհրաժեշտ է մի կողմ դնել իշխանության և ընկալվող կարգավիճակի տարբերությունները:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը ցույց է տալիս, որ իրենք հարգում և արժևորում են այլընտրանքային տեսակետները:

դ) Արդյո՞ք երեխաներին ու մեծահասակներին խրախուսում են ինքնավստահ և առանց ագրեսիայի արտահայտել իրենց տեսակետը:

ե) Արդյո՞ք բանավեճերը խրախուսելը նպատակ ունի սովորեցնել մարդկանց լսել միմյանց և հաշվի առնել ինչպես սեփական, այնպես էլ այլ անձանց կարծիքը:

զ) Արդյո՞ք երեխաներին խրախուսում են ձևավորել և արտահայտել իրենց տեսակետն ու զգացմունքները տեղական, ազգային և միջազգային կարևոր միջոցառումների վերաբերյալ, ինչպես օրինակ, այն ժամանակ, երբ իրենց երկիրը գտնվում է պատերազմի մեջ, կամ իրենց կամ այլ երկրում աղետ է տեղի ունեցել:

է) Արդյո՞ք երեխաներին խրախուսում են մարտահրավեր նետող հարցադրումներ անել:

ը) Արդյո՞ք փաստարկների տարբեր կողմերում գտնվող անձինք գիտակցում են, թե որքան կարևոր է հարցն այլ տեսանկյունից դիտարկելը՝ կարծիքները հստակեցնելու և խնդրի համատեղ լուծում գտնելու համար:

թ) Արդյո՞ք երեխաները սովորում են հայտնաբերել իրենց կարծիքի և ուրիշների փաստարկների հակասությունները:

ժ) Արդյո՞ք երեխաները և մեծահասակները սովորում են կշռադատել այլ անձանց, ինչպես նաև իրենց փաստարկների հիմնավորումները:

ժա) Արդյո՞ք երեխաները սովորում են՝ ե՛րբ է պնդման կամ փաստարկի ճշմարտությունը պահանջում ապացույցներ:

ժբ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է զգուշորեն ընտրված օրինակների միջոցով ցույց տալ ընդհանրացումների սահմանները:

ժգ) Արդյո՞ք երեխաները սովորում են ինչպես օգտվել օրինակներից՝ իրենց փաստարկները հիմնավորելու նպատակով:

ժդ) Արդյո՞ք երեխաները սովորում են հարցնել, թե «որքանով...» և «ինչ հանգամանքներում...» է որևէ պնդում ճշմարիտ (օրինակ, մարդկանց միջև տարբերությունների վերաբերյալ մոտեցումներում):

ժե) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես գնահատել թիրախային լսարանին:

ժզ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես են մարդիկ օգտվում այն հանգամանքից, որ որոշ փաստարկներ ճիշտ են նույնիսկ այն ժամանակ, երբ դա այդպես չէ, միայն այն պատճառով, որ իրենց ներկայացնում են հեղինակության կարծիքը կամ տեսակետը:

ժէ) Արդյո՞ք երեխաներն ու մեծահասակները բացահայտում են այն համոզմունքներն ու արժեքները, որոնք ընկած են տարբեր տեսակետների հիմքում:

ժը) Արդյո՞ք երեխաներին և մեծահասակներին օգնում են բարելավելու փաստարկների ներկայացման իրենց հմտությունները:

ժթ) Արդյո՞ք երեխաները դիտարկում են այն ճնշումները, որոնք ստիպում են իրենց մտածել և գործել որոշակի ձևով:

ի) Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են իրենց արտահայտած կարծիքների պատճառները կամ հիմքերը:

իա) Արդյո՞ք երկխոսության մասնակից բոլոր կողմերը հնարավորություն ունեն պահպանելու իրենց ինքնագնահատականը:

իբ) Արդյո՞ք մարդիկ խուսափում են հաղթական դիրք գրավելուց, երբ զգում են, որ հաղթել են որևէ բանավեճում:

իգ) Արդյո՞ք երեխաները և մեծահասակ մենթորները օգնում են այլ անձանց՝ արտահայտելու իրենց կարծիքները:

իդ) Արդյո՞ք առանձնահատուկ ուշադրություն դարձվում է այն երեխաներին, որոնք ամաչում են իրենց կարծիքն արտահայտելուց կամ քննարկումներին մասնակցելուց:

իե) _____

իզ) _____

իէ) _____

Գ2.4 Երեխաներն ակտիվորեն մասնակցում են իրենց ուսուցման գործընթացին:

Ա1.11 Աշխատակազմը կապեր է ստեղծում դպրոցում տեղի ունեցած իրադարձությունների և երեխաների ընտանեկան կյանքի միջև:

Գ2.3 Երեխաները խրախուսվում են իրենց քննադատական մտածողության համար:

ա) Արդյո՞ք ակնհայտ է, որ դպրոցում ներգրավված մեծահասակները ակտիվ սովորողներ են և ունեն մի շարք հետաքրքրություններ:

բ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է, որ երեխաները հավատան, որ իրենք կարող են ընդլայնել ինքնուրույն սովորելու կարողությունները:

գ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը լրացուցիչ ազատ ժամանակ ստանում է այլ երեխաների օժանդակություն ցուցաբերելու համար, երբ որոշ երեխաներ ընդլայնում են ինքնուրույն սովորելու և համագործակցելու իրենց հնարավորությունները:

դ) Արդյո՞ք երեխաներին խրախուսում են բացահայտել, թե ինչ են նրանք ցանկանում սովորել և պատասխանատվություն ստանձնել դա սովորելու համար:

ե) Արդյո՞ք երեխաներին խրախուսում են զարգացնել իրենց հետաքրքրությունները դպրոցից դուրս:

զ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը երեխաներին տալիս է հնարավորություն՝ ընտրելու, թե ինչ են ցանկանում սովորել:

է) Արդյո՞ք երեխաներին օգնում են մտածելու իրենց աշխատանքի վերնագրերի և ենթավերնագրերի շուրջ:

ը) Արդյո՞ք երեխաներին խրախուսում են հղել այնպիսի դժվար հարցեր, որոնց համար ոչ ոք չունի անհապաղ պատասխան:

թ) Արդյո՞ք կրթակարգը տրամադրվում է երեխաներին, ինչը թույլ կտա նրանց ավելի արագ տեմպով ընտրել կամ ավելի խորը ուսումնասիրել նախընտրելի առարկան կամ թեման:

ժ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն աջակցում է երեխաներին առաջ շարժվել իրենց ուսումնառության մեջ՝ միևնույն ժամանակ անդրադառնալով արդեն ձեռք բերված գիտելիքներին ու հմտություններին:

ժա) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես պետք է կատարել հետազոտություններ և շարադրել ասելիքը որևէ թեմայի շուրջ:

ժբ) Արդյո՞ք երեխաները կարողանում են ինքնուրույն օգտվել գրադարանից և տեղեկատվական տեխնոլոգիաների ռեսուրսներից:

ժգ) Արդյո՞ք երեխաներին սովորեցնում են, թե ինչպես գրառումներ կատարել դասախոսությունների ժամանակ, գրքերից և համացանցից:

ժդ) Արդյո՞ք երեխաներին օգնում են ուսումնասիրելու որևէ թեմա՝ նրանց տրամադրելով պատասխաններ ենթադրող հստակ հարցաշար:

ժե) Արդյո՞ք երեխաները սովորում են օգնել միմյանց հետազոտություններ կատարելիս՝ լսելով, թե ինչ է դիմացինը փորձում անել, ապա հարցերի միջոցով պարզաբանել, թե ինչ է նա մտածում այդ ուղղությամբ:

ժզ) Արդյո՞ք երեխաները սովորում են կազմել աշխատանքի հակիրճ ամփոփում՝ դրա կառուցվածքը հասկանալու համար:

ժէ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը փորձում է կանխել երեխաների մեխանիկական կրկնօրինակումը:

ժը) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես ներկայացնել իրենց աշխատանքը բանավոր, գրավոր և այլ ձևերով, անհատապես և խմբերում:

ժթ) Արդյո՞ք երեխաներին օգնում են պլանավորելու և պարապելու ստուգարքների ու քննությունների համար:

ի) Արդյո՞ք երեխաներին տրամադրվում է խորհրդատվություն ուսման գործընթացում անհրաժեշտ օժանդակության շուրջ:

իա) Արդյո՞ք երեխաները ներկայացնում են կառուցողական մեկնաբանություններ այն մասին, թե ինչպես բարելավել ուսուցման գործընթացը:

իբ) Արդյո՞ք երեխաների կողմից ուսուցման գործընթացի վերաբերյալ տրամադրած հետադարձ կապը հանգեցնում է որևէ փոփոխության:

իգ) Արդյո՞ք երեխաները մասնակցում են ուսուցման խոչընդոտների հաղթահարման ուղիներ փնտրելու գործին, ինչպես իրենց, այնպես էլ այլ անձանց համար:

իդ) _____

իե) _____

իզ) _____

Գ2.5 Երեխաները սովորում են միմյանցից:

Ա1.3 Երեխաները օգնում են միմյանց:

ա) Արդյո՞ք երեխաներն օգնում են միմյանց որպես առօրյա սովորական գործընթաց:

բ) Արդյո՞ք բոլորը փորձում են ուշադիր, առանց ընդհատումների լսել մյուսներին:

գ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես պարզաբանումներ ստանալ միմյանցից՝ խնդիրն ավելի լավ հասկանալու համար, և օգնել բանախոսին զարգացնելու իր մտքերը:

դ) Արդյո՞ք երեխաները խուսափում են ծիծաղելուց այլ անձանց արտահայտած մտքերի վրա, եթե վերջիններիս պատմածը կատակ չէ:

ե) Արդյո՞ք երեխաներն արտահայտում են իրենց անհամաձայնությունն այլ անձանց կարծիքին առանց վերջիններիս նվաստացնելու:

զ) Արդյո՞ք երեխաները հասկանում են, թե երբ է փոխվում քննարկման առարկան նախորդ թեմայի շուրջ կարծիք ներկայացնելու փոխարեն:

է) Արդյո՞ք դասերի ընթացքում պարբերաբար ստեղծվում է խմբային աշխատանքի հնարավորություն:

ը) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես վարել քննարկումները՝ բոլորի մասնակցությունն ապահովելու նպատակով:

թ) Արդյո՞ք երեխաներն օգտագործում են միևնույն պայմանական ազդանշանը՝ ինչպես թիմային աշխատանքին, այնպես էլ դասարանում տեղի ունեցող քննարկումներին մասնակցությունն ապահովելու համար:

ժ) Արդյո՞ք խմբային աշխատանքներ կազմակերպելիս մասնագետները հաշվի առնում են երեխաների գիտելիքների և փորձի տարբերությունները, ինչպես օրինակ, երկրների, տեղի աշխարհագրության և ընտանեկան պատմությունների վերաբերյալ:

ժա) Արդյո՞ք խմբային աշխատանքները թույլ տալիս են հանձնարարությունները բաժանել երեխաներին, ապա համախմբել բոլորի գիտելիքները:

ժբ) Արդյո՞ք երեխաները կազմում են համատեղ զեկուցումներ՝ խմբի տարբեր անդամների գիտելիքների հիման վրա:

ժգ) Արդյո՞ք խմբային աշխատանքները ծրագրված են այնպես, որ տարբեր տարիքի և ընդունակությունների երեխաները կարողանան աջակցել միմյանց ուսուցմանը:

ժդ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե ինչպես կարելի է փոխանցել ու սովորեցնել այլ անձանց իրենց գիտելիքներն ու փորձը:

ժե) Արդյո՞ք դասավանդումը դիտարկվում է որպես բարձր մակարդակի հմտություններ ներառող գործընթաց, որը նպաստում է երեխաների և նույնիսկ ուսուցիչների ուսուցմանը:

ժզ) Արդյո՞ք ենթադրվում է, որ յուրաքանչյուր ոք կարող է նպաստել դասավանդման և ուսուցման գործընթացին՝ անկախ իր ընդունակություններից ու հաշմանդամություն ունենալուց:

ժէ) Արդյո՞ք երեխաները գրի են առնում խնդիրների լուծումները՝ առանց դատելու միմյանց գաղափարները:

ժը) Արդյո՞ք երեխաներին դուր է գալիս խմբային աշխատանքի միջոցով իրականացվող ուսուցման գործընթացը:

ժթ) Արդյո՞ք երեխաները ուսուցիչների հետ ստանձնում են ուսուցման դժվարություններ ունեցող երեխաներին օգնելու պարտավորությունը:

ի) Արդյո՞ք երեխաները նշում են այլ աշակերտների մասնակցությունն իրենց աշխատանքի հաշվետվություններում:

իա) Արդյո՞ք միմյանց ուսուցման գործընթացը գնահատելիս երեխաներն այն ենթարկում են քննադատական վերլուծության՝ ցուցաբերելով կառուցողական մոտեցում:

իբ) Արդյո՞ք երեխաները հաղորդակցվում են իրենց հմտություններով դասամիջոցներին և ընդմիջման ժամերին, ինչպես նաև դպրոցից դուրս՝ համապատասխան ակումբներում:

իգ) Արդյո՞ք երեխաների կողմից կիրառվող տարբեր լեզուները նպաստում են բոլոր երեխաների լեզվական գիտելիքների և հմտությունների զարգացմանը:

իդ) Արդյո՞ք երեխաները հաղորդակցվում են ուսուցման և հարաբերությունների ոլորտում խնդիրների հաղթահարման իրենց փորձով:

իգ) Արդյո՞ք երեխաների նախագծման և խնդիրների լուծման ծրագրերը պարունակում են երևակայական լուծումներ այն խոչընդոտների, որոնց բախվում են նրանք և այլ անձինք, ինչպես, օրինակ, շենք մուտք գործելու կամ ուսումնական ծրագրի հասանելիության խնդիրները:

իդ) _____

իե) _____

իզ) _____

Գ2.6 Դասերը զարգացնում են մարդկանց նմանությունների ու տարբերությունների ըմբռնումը:

Ա1.8 Դպրոցը արժևորում է համայն մարդկության միջև փոխհարաբերությունների ըմբռնումը:

ա) Արդյո՞ք ուսուցման գործընթացն անդրադառնում է մարդկանց ծագման, մշակույթի, էթնիկ պատկանելության, հաշմանդամության, հավատքի, կրոնի, քաղաքական հայացքների և այլ տարբերությունների:

բ) Արդյո՞ք դպրոցը երեխաների համար ընձեռում է հնարավորություններ աշխատելու այլ անձանց հետ, որոնք տարբերվում են իրենց ծագումով, էթնիկ պատկանելությամբ, հաշմանդամությամբ և այլն:

գ) Արդյո՞ք դասերի ժամանակ օգտագործվող նյութերն անդրադառնում են մարդկանց բազմազանությանը:

դ) Արդյո՞ք երեխաներն անդրադառնում են ուսումնական նյութերում առկա և քննարկումների ժամանակ դրսևորվող կարծրատիպերին:

ե) Արդյո՞ք երեխաները գտնում են նմանություններ իրենց և այն մարդկանց միջև, որոնց համարում են իրենցից շատ տարբերվող:

զ) Արդյո՞ք երեխաները գտնում են տարբերություններ իրենց և այն մարդկանց միջև, որոնց համարում են իրենց շատ նման:

է) Արդյո՞ք երեխաները գտնում են տարբերություններ այն մարդկանց միջև, որոնց համարում են միմյանց շատ նման:

ը) Արդյո՞ք երեխաներին խրախուսում են դիտարկել իրենց երկրի ներկա ու նախկին զուգահեռները այլ երկրներում դրսևորվող չափազանց անտարբեր, խտրական կամ հակաժողովրդավարական գործողությունների հետ:

թ) Արդյո՞ք ուսուցման գործընթացում պարբերաբար անդրադարձ է կատարվում այլ երկրներում տեղի ունեցող իրադարձություններին և մարդկանց կյանքին:

ժ) Արդյո՞ք երեխաները սովորում են կրոնների և քաղաքական համակարգերի աշխարհագրական տարածման տարբերությունների ծագման մասին:

ժա) Արդյո՞ք դպրոցն անդրադառնում է իրենց երկրի տարբեր շրջաններում և աշխարհի տարբեր հատվածներում տիրող աղքատության, առողջության, կյանքի տևողության, բարեկեցության և անվտանգության տարբերություններին:

ժբ) Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են մարդկանց նկատմամբ պատմականորեն դրսևորվող բացասական վերաբերմունքի և հետևողական խտրականության իրավականությունը, օրինակ, ստրկության կամ բնիկ ժողովուրդների գաղութացման միջոցով:

ժգ) Արդյո՞ք երեխաները սովորում են, թե որքան հեշտությամբ են մարդիկ ուրանում և մերժում իրենց կյանքի որոշ ասպեկտներ, ինչպես օրինակ, տարեց մարդկանց դեպքում, երբ վերջիններս մոռանում են, թե ինչպիսի երիտասարդություն են ունեցել:

ժդ) Արդյո՞ք երեխաները փորձում են իրենց նույնականացնել տարեց մարդկանց հասկանալով, որ իրենք էլ են ծերանալու:

ժե) Արդյո՞ք հաշմանդամություն չունեցող երեխաները փորձում են իրենց նույնականացնել հաշմանդամություն ունեցող անձանց՝ գիտակցելով հաշմանդամություն ձեռք բերելու իրենց հավանականությունը:

ժզ) Արդյո՞ք երեխաներն ուսումնասիրում են, թե ինչպես կարող են անցյալում տեղի ունեցած անարդարությունները նպաստել ներկայումս տիրող անհավասարություններին:

ժէ) Արդյո՞ք բնակավայրի հետ նույնականացման խորը զգացումները վերաբերում են հատկապես նրանց, ում ընտանիքները սերունդներ շարունակ ապրել են միևնույն տարածքում:

ժը) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները գիտակցում են, թե ինչպես է միասնական ազգային մշակույթի գաղափարը հանգեցնում այլ ժողովուրդների նկատմամբ խտրականության դրսևորման և սահմանափակում տարբեր ազգությունների ներկայացուցիչների միջև փոխըմբռնման հնարավորությունները:

ժթ) Արդյո՞ք դասերի ընթացքում վիճարկվում են երեխաների մեջ տարածված ընդհանրացումները, ինչպես, օրինակ, որ տղաներն ավելի ուժեղ են կամ ավելի արագ են վազում, քան աղջիկները:

ի) Արդյո՞ք երեխաները հնարավորություն ունեն շփվելու աշխարհի ինչպես տնտեսապես հարուստ, այնպես էլ աղքատ երկրների երեխաների հետ:

իա) _____

իբ) _____

իգ) _____

Գ2.7 Գնահատականները խրախուսում են երեխաների ձեռքբերումները:

Գ2.4 Երեխաներն ակտիվորեն մասնակցում են իրենց ուսուցման գործընթացին:

Գ2.12 Տնային աշխատանքների կառուցվածքը նպաստում է յուրաքանչյուր երեխայի ուսումնառության գործընթացին:

ա) Արդյո՞ք երեխաների ուսումնառության գնահատումը ենթադրում է նաև դասավանդման որակի գնահատում:

բ) Արդյո՞ք մեծահասակներն անդրադառնում են իրենց գնահատելու սեփական փորձին՝ երեխաների գնահատման գործընթացը բարելավելու նպատակով:

գ) Արդյո՞ք երեխաներին օգնում են անդրադառնալու դասերի ընթացքում կատարած իրենց գրավոր, բանավոր և այլ հանձնարարությունների՝ հասկանալու համար, թե ինչպես կարելի է ուղղել սխալները և զարգացնել գիտելիքները:

դ) Արդյո՞ք երեխաները մասնակցում են մյուս երեխաների ուսուցման գործընթացի գնահատմանը:

ե) Արդյո՞ք երեխաների գնահատման գործընթացը ներառում է այն խնդիրների բացահայտումը, որոնք խոչընդոտում են ուսումնառությունը:

զ) Արդյո՞ք գնահատման գործընթացը թույլ է տալիս պարզել, թե ինչպես են մեծահասակների ու երեխաների հետ հարաբերությունները խոչընդոտում կամ նպաստում ուսուցմանը:

գ) Արդյո՞ք աշխատակիցները գնահատում են, թե ինչպես են երեխայի՝ մեծահասակների և մյուս երեխաների հետ հարաբերությունները խոչընդոտում կամ նպաստում ուսուցմանը:

ը) Արդյո՞ք երեխայի աշխատանքի վերաբերյալ մեկնաբանությունները քաջալերող և հարգալից են:

թ) Արդյո՞ք երեխաների գնահատման գործընթացը նպատակ ունի ուսուցման գործընթացը դիտարկելու նաև երեխաների տեսանկյունից:

ժ) Արդյո՞ք ուսուցիչները և նրանց օգնականները ուշադիր դիտարկմամբ և նկարագրություններով փորձում են հասկանալ երեխաների ուսումնառության գործընթացը:

ժա) Արդյո՞ք մեծահասակներն օգնում են միմյանց՝ հասկանալու իրենց դիտարկումների ազդեցությունը երեխաների ուսուցման գործընթացի վրա:

ժբ) Արդյո՞ք երեխաների գնահատումը հանգեցնում է ուսուցման գործընթացի փոփոխություններին:

ժգ) Արդյո՞ք գնահատումը նպատակ հետապնդում է օգնել երեխաներին անդրադառնալու իրենց ուսուցման գործընթացին:

ժդ) Արդյո՞ք գնահատումը թույլ է տալիս զարգացնել երեխաների՝ սեփական ուսումնառությունը գնահատելու կարողությունները:

ժե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը խուսափում է երեխաներին գնահատելիս ներկայացնել վերջիններիս ընդունակություններին կամ ներուժին առնչվող դատողություններ, որոնք կարող են նվազեցնել երեխաների ակնկալիքները կամ սահմանափակել հնարավորությունները:

ժզ) Արդյո՞ք պետական քննությունների ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվում են անհրաժեշտ հարմարեցումներ՝ ժամանակի առումով, ինչպես նաև տրամադրելով հաղորդակցման օժանդակ սարքեր, համապատասխան թարգմանիչներ՝ ապահովելով պայմանների անաչառությունը:

ժէ) Արդյո՞ք ծնողները/խնամատարները մասնակցում են երեխաների գնահատման գործընթացին:

ժը) Արդյո՞ք գնահատման գործընթացն իրականացվում է այնպիսի մեթոդներով, որոնք հաշվի են առնում երեխաների բնավորության, հետաքրքրությունների ու հմտությունների տարբերությունները:

ժթ) Արդյո՞ք աշխատակիցները և երեխաները պարբերաբար գնահատում են այլ անձանց հետ համագործակցության արդյունքում կատարած աշխատանքը:

ի) Արդյո՞ք երեխաները հասկանում են ուսուցչի նախաձեռնած և գնահատման պետական գործընթացների պատճառները:

իա) Արդյո՞ք երեխաներին ազնվորեն տեղեկացնում են, որ գնահատման պետական գործընթացի նպատակը դպրոցի կատարողականը գնահատելն է:

իբ) Արդյո՞ք երեխաները տեղյակ են որոշակի մակարդակի գիտելիքներով քննության մասնակցելու հետևանքներին, և թե ինչպես է դա ընկալվում մարդկանց, այդ թվում՝ գործատուների կողմից:

իգ) Արդյո՞ք տարբեր խմբերի երեխաների (տղաների/աղջիկների/էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչների/հաշմանդամություն ունեցող երեխաների) ձեռքբերումների գնահատումը նախատեսում է ուսուցման խոչընդոտների բացահայտում, ուսումնասիրություն և լուծում:

իդ) Արդյո՞ք ձեռքբերումների վերաբերյալ արձանագրությունները կազմվում են երեխաների հետ համագործակցությամբ, որպեսզի նրանք կարողանան արտացոլել իրենց բոլոր հմտությունները, գիտելիքներն ու փորձը:

իե)_____

իզ) _____

Գ2.8 Կարգապահությունը հիմնված է փոխադարձ հարգանքի վրա:

Ա1.4 Աշխատակազմն ու երեխաները հարգում են միմյանց:

Բ2.7 Դպրոցից հեռացումը՝ որպես պատիժ, կարգապահական նկատառումներով հազվադեպ է կիրառվում:

ա) Արդյո՞ք դասերի ժամանակ երեխաների և մեծահասակների՝ միմյանց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը հարգանքի դրական մշակույթի արտացոլանք է:

բ) Արդյո՞ք դպրոցում ընդունված կարգապահության մոտեցումը խրախուսում է անձնական կարգապահության ապահովում:

գ) Արդյո՞ք երեխաներն օգնում են ուսուցիչներին ստեղծելու ուսուցման գործընթացին նպաստող մթնոլորտ:

դ) Արդյո՞ք աշխատակազմի անդամները օգնում են միմյանց հաստատակամ լինելու առանց զայրույթի:

ե) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները օգնում են միմյանց և առանձին գործընկերներին հաղթահարելու կարգապահական խնդիրները:

զ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամները համախմբում են իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ դժգոհություններն ու հարաբերությունների խզման խնդիրները հաղթահարելու նպատակով:

է) Արդյո՞ք կարգապահությունը պայմանավորված է երեխաների հետ ունեցած լավ հարաբերություններով:

ը) Արդյո՞ք ուսուցման գործընթացի համար բարենպաստ մթնոլորտը կախված է այն կարծրատիպը կոտրելուց, ըստ որի՝ երեխաներն ու մեծահասակները գտնվում են հակամարտության հակառակ կողմերում:

թ) Արդյո՞ք աշխատակազմը փորձում է կանխել այն կարծրատիպի տարածումը, որ երեխաները պետք է կուրորեն հետևեն ղեկավարության հրահանգներին:

ժ) Արդյո՞ք դասերի ընթացքում երեխաներից ակնկալվող վարքագիծը համահունչ է դպրոցի աշխատակազմի, երեխաների ծնողների/խնամատարների և երեխաների ու երիտասարդների աջակցությամբ մշակված արժեքների համակարգին:

ժա) Արդյո՞ք երեխաները կարծում են, թե ինչպես դասարանում, այնպես էլ դրանից դուրս անհրաժեշտ է դրսևորել նմանատիպ վարքագիծ:

ժբ) Արդյո՞ք աշխատակիցները և երեխաները նորմալ են վերաբերվում իրենց գիտելիքների պակասը կամ սխալներն ընդունելուն:

ժգ) Արդյո՞ք երեխաներն արտահայտում են իրենց կարծիքներն այն մասին, թե ինչպես կարելի է բարելավել ուսուցման գործընթացը՝ երեխաների անուշադրության խնդիրը լուծելու համար:

ժդ) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները տարբերում են հանգիստ զրույցը հանդիմանությունից:

ժե) Արդյո՞ք երեխաներն իջեցնում են իրենց ձայնի տոնայնությունը՝ փորձելով չխանգարել ուսուցման գործընթացը:

ժզ) Արդյո՞ք երեխաներն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա պետք է ունենա ուշադրության իր բաժինը:

ժէ) Արդյո՞ք երեխաներն օգնում են հանդարտեցնելու դասը խանգարող երեխաներին՝ նրանց հետ դասը խանգարելու փոխարեն:

ժը) Արդյո՞ք երեխաների հետ մեկից ավելի մեծահասակ աշխատելու դեպքում նրանք կիսում են ուսուցման գործընթացի սահունությունն ապահովելու պատասխանատվությունը:

ժթ) Արդյո՞ք դպրոցում գործում են երեխաների և ուսուցիչների համար հասկանալի, հստակ ընթացակարգեր՝ դժվարին վարքագծի ծայրահեղություններին արձագանքելու համար:

ի) Արդյո՞ք երեխաներն զգում են, որ իրենց ցուցաբերվում է անաչառ վերաբերմունք՝ անկախ սեռից, սոցիալական դրությունից կամ էթնիկ պատկանելությունից:

իա) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն ու երեխաներն ընդունում են, որ անարդար է, երբ դասի ժամանակ, դասարանային կամ խմբային քննարկումներում ուսուցիչն իր ուշադրությունը սևեռում է միայն մեկ սեռի երեխաներին:

իբ) _____

իգ) _____

իդ) _____

Գ2.9 Աշխատակազմն իրականացնում է պլանավորման, ուսուցման ու վերանայման համատեղ աշխատանքներ:

Ա1.2 Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:

Գ2.10 Աշխատակազմը մշակում է ուսուցման գործընթացի օժանդակ համընդհանուր ռեսուրսներ:

ա) Արդյո՞ք ուսուցիչները և դասավանդման օգնականները համատեղ ուժերով են պլանավորում դասերը և տնային աշխատանքի հանձնարարությունները:

բ) Արդյո՞ք դասավանդման գործընթացի պլանավորումը նախատեսում է դասարանում ներկա բոլոր մեծահասակների ներուժի լիարժեք օգտագործումը:

գ) Արդյո՞ք դասավանդման օգնականները նպաստում են պլանավորման գործընթացին՝ տարբեր ուսուցիչների դասերի վերաբերյալ երեխաների արձագանքների մասին իրենց տեղեկությամբ:

դ) Արդյո՞ք ուսուցիչները նախատեսում են գործողություններ, որոնք թույլ են տալիս օգտվել միմյանց գիտելիքներից ու հմտություններից:

ե) Արդյո՞ք ուսուցիչներն օգտագործում են համագործակցային ուսուցումը՝ որպես միմյանցից սովորելու հնարավորություն:

զ) Արդյո՞ք աշխատակիցներն օգնում են միմյանց բարելավելու առաջատար տեխնոլոգիաների օգտագործման իրենց գիտելիքները, ինչպես օրինակ, կիրառելու համակարգիչները և ինտերակտիվ սպիտակ գրատախտակները:

է) Արդյո՞ք աշխատակիցներն անդրադառնում են այլ դպրոցների դասավանդման փորձին՝ իրենց փորձը վերանայելու և հարմարեցնելու նպատակով:

ը) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմն անդրադառնում է մանկավարժական կրթության և բարձրագույն կրթության այլ ոլորտների իր գործընկերների գաղափարներին:

թ) Արդյո՞ք ուսուցիչները և դասավանդման օգնականները վերանայում են իրենց գործունեությունը՝ ըստ արժեքների համընդհանուր համակարգի:

ժ) Արդյո՞ք փոխադարձ դիտորդական աշխատանքին հաջորդում է կարծիքների փոխանակումը՝ դասավանդման և ուսումնառության գործընթացը բարելավելու նպատակով:

ժա) Արդյո՞ք ուսուցիչները նկարահանում են հատվածներ միմյանց դասերից և միասին վերանայում դասերը:

ժբ) Արդյո՞ք ուսուցիչներն ընդունում են գործընկերների մեկնաբանությունները, օրինակ, դասավանդման լեզվի մատչելիության և ուսումնական գործընթացին երեխաների մասնակցության որակի վերաբերյալ:

ժգ) Արդյո՞ք ուսուցիչները վերանայում են ուսուցման իրենց մեթոդները՝ ի պատասխան գործընկերներից ստացած հետադարձ կապի:

ժդ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամներն օգնում են միմյանց՝ ուսումնառության և աջակցության գործընթացը դիտարկելու երեխաների տեսանկյունից:

ժե) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը հնարավորություն ունի մասնակցելու որևէ երեխայի կամ մի խումբ երեխաների դասավանդման գործընթացին օրվա ընթացքում, մի քանի ուսուցիչների հետ՝ կրթության ոլորտի նրանց փորձն ավելի լավ ըմբռնելու համար:

ժզ) Արդյո՞ք միևնույն դասարանում աշխատող աշխատակազմի բոլոր անդամները պատասխանատու են բոլոր երեխաների մասնակցությունն ապահովելու համար:

ժէ) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը զբաղվում է խնդրի լուծման համատեղ աշխատանքով իր գործընկերների հետ դպրոցի ներսում և նրա սահմաններից դուրս, երբ երեխայի կամ խմբի առաջընթացը դառնում է մտահոգության առարկա:

ժը) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմի անդամներն իրենց թույլ տալիս են վստահորեն վիճարկել խնդիրների ծագման աղբյուրների վերաբերյալ միմյանց կարծիքները:

ժթ) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմի անդամները խրախուսում են միմյանց՝ փորձելու ուսուցման նոր մոտեցումներ ու գործողություններ:

ի) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը դիտարկում է երեխայի ուսման նկատմամբ իր վերաբերմունքը, և թե դա ինչպես կարող է խանգարել կամ օգնել երեխային հաղթահարելու ուսուցման խոչընդոտները:

իա) _____

իբ) _____

իգ) _____

Գ2.10 Աշխատակազմը մշակում է ուսուցման գործընթացի օժանդակ համընդհանուր ռեսուրսներ:

Գ2.14 Դպրոցը տեղյակ է իր շրջակայքի ռեսուրսների մասին և օգտվում է դրանցից:

ա) Արդյո՞ք ուսուցչանոցում կա հատկացված տարածք, որտեղ աշխատակազմը կարող է ներկայացնել տեղեկություն իր նախընտրած գրքերի ու կայքերի վերաբերյալ՝ որպես ռեսուրս:

բ) Արդյո՞ք դպրոցը վարում է էլեկտրոնային կայք, որն անդրադառնում է դպրոցի աշխատակազմի, երեխաների և ծնողների հետաքրքրություններին:

գ) Արդյո՞ք դպրոցի էլեկտրոնային կայքն անդրադառնում է տեղական/ազգային և միջազգային այլ դպրոցների:

դ) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը և աշակերտները մասնակցում են դպրոցական թերթի ստեղծման աշխատանքներին՝ իրենց համար կարևոր իրադարձությունների և հարցերի շուրջ, որն ինտեգրվում է ուսուցման գործընթացում:

ե) Արդյո՞ք դասարաններն ապահովում են ուսումը խթանող միջավայր, որն արտացոլում է սովորողների գիտելիքներն ու հետաքրքրությունները և կարող է օգտագործվել որպես խթան այլ դասարանների համար:

զ) Արդյո՞ք աշխատակազմը կիսվում է դասարանի բույսերով, ձվադրած միջատներով, միջատների համար նախատեսված տարաներով և այլն:

է) Արդյո՞ք փոքր տարիքի երեխաների համար նախատեսված, երևակայությունը խթանող խաղային սարքավորումները կամ նյութերը հասանելի են նաև ավելի մեծ տարիքի երեխաների և երիտասարդների համար:

ը) Արդյո՞ք աշխատակիցները համագործակցում են դպրոցի պարտեզի, պտղատու այգու և հողակտորի խնամքի աշխատանքներում:

թ) Արդյո՞ք մեծահասակներն ու երեխաներն ունեն պատմությունների համընդհանուր տարածք, սենյակ կամ անկյուն:

ժ) Արդյո՞ք մեծահասակներն ու երեխաները փորձում են համատեղ ուժերով ստեղծել դպրոցի թանգարանի հավաքածու՝ համապատասխան արտեֆակտերով ու պատմություններով:

ժա) Արդյո՞ք դպրոցն ունի գրադարան, որն աջակցում է բոլորի ուսուցման գործընթացին:

ժբ) Արդյո՞ք գրադարանի կառուցվածքը նպաստում է երեխաների անկախ և առանձին ուսումնառությանը:

ժգ) Արդյո՞ք դպրոցն ունի երեխաներին հասանելի DVD/CD սկավառակների հավաքածու:

ժդ) Արդյո՞ք գրադարանի աշխատակազմը ներգրավված է ուսուցման և դասավանդման գործընթացի պլանավորման աշխատանքներում:

ժե) Արդյո՞ք դպրոցում գործում է ձայնագրման և տեսագրման սենյակ, որտեղ կա նաև հեռուստահաղորդումների վերաբերյալ կարծիքներ տարածելու համակարգ:

ժզ) Արդյո՞ք երեխաները հնարավորություն ունեն օգտվելու էլեկտրոնային գրքերից և դրանք ընթերցող սարքերից:

ժէ) Արդյո՞ք գրադարանում կան գեղարվեստական գրքեր և հանրամատչելի գիտական գրականություն, որոնք կարող են հետաքրքրել տարբեր խմբերի աշակերտների:

ժը) Արդյո՞ք գրադարանում կան գրքեր տարբեր լեզուներով խոսող և տարբեր լեզուներ սովորող երեխաների համար:

ժթ) Արդյո՞ք հաշմանդամություն ունեցող երեխաների համար կան ուսումնական ծրագրի՝ պատշաճորեն հարմարեցված նյութեր, օրինակ, խոշոր տպագրությամբ, աուդիո ձայնագրություններով կամ բրայլյան այբուբենով ներկայացված նյութեր:

ի) Արդյո՞ք տարրական դասարանների երեխաներն ունեն տիկնիկային ներկայացումների համար նախատեսված խոշոր և փոքր տիկնիկներ:

իա) _____

իբ) _____

իգ) _____

Գ2.11 Ուսուցման գործընթացի օգնականները աջակցում են բոլոր երեխաների ուսումնառությանը եւ մասնակցության ապահովմանը:

Ա1.2 Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:

Բ1.4 Աշխատակազմը փորձառու է և օգտագործում է իր գիտելիքները:

ա) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները կցված են դասարանին կամ ուսումնական ծրագրի որևէ առարկայի, այլ ոչ թե առանձին երեխաների:

բ) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները նպաստում են բոլոր երեխաների մասնակցության խթանմանը:

գ) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները ցույց են տալիս, որ իրենք էլ են սովորում և ունեն մի շարք հետաքրքրություններ:

դ) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները նպատակ ունեն նպաստելու երեխաների անկախ ուսումնառությանը՝ առանց անմիջական աջակցության:

ե) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները խրախուսում են երեխաների կողմից ուսուցման դժվարություններ ունեցող իրենց հասակակիցներին ցուցաբերվող աջակցությունը:

զ) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները կիսվում են դպրոցի երեխաների և երիտասարդների ուսուցման ու մասնակցության խոչընդոտների վերաբերյալ իրենց որոշակի պատկերացումներով:

է) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները տարածում են տեղական բնակավայրի և համայնքների վերաբերյալ իրենց կոնկրետ գիտելիքները:

ը) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները մասնակցում են ուսուցման գործընթացի պլանավորման և վերանայման աշխատանքներին:

թ) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները խուսափում են միջամտելուց երեխաների՝ իրենց հասակակիցների և այլ աշխատակիցների հետ հարաբերություններին:

ժ) Արդյո՞ք դասասենյակների կառուցվածքը թույլ է տալիս ուսուցիչներին և ուսուցման գործընթացի օգնականներին աշխատել խմբերով, ինչպես նաև առանձին՝ մի շարք երեխաների հետ:

ժա) Արդյո՞ք դպրոցը փորձում է հավաքագրել ինչպես արական, այնպես էլ իգական սեռի օգնականներ ուսուցման գործընթացի համար:

ժբ) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականներին խրախուսում են արտահայտել կարծիք իրենց հանձնարարված առաջադրանքների բնույթի վերաբերյալ:

ժգ) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները քննարկում են իրենց աշխատանքի նկարագրությունը, որն արտացոլում է իրենց աշխատանքային պարտականությունների շրջանակը:

ժդ) Արդյո՞ք բոլոր ուսուցիչները ծանոթ են ուսուցման գործընթացի օգնականների աշխատանքային պարտականություններին:

ժե) Արդյո՞ք ուսուցման գործընթացի օգնականները վարձատրվում են դպրոցում անցկացրած իրենց ամբողջ ժամանակի դիմաց, այդ թվում՝ հանդիպումներին ներկա գտնվելու, դասավանդման նյութեր պատրաստելու և աշխատակազմի զարգացման նպատակով ծախսած ժամանակի:

ժզ) Արդյո՞ք հայտնի է, որ հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ, ուսուցման գործընթացի օգնականի փոխարեն, կարող են անհատական օգնականի կարիք ունենալ:

ժէ) Արդյո՞ք հաշմանդամություն ունեցող անձինք ողջունելի են դպրոցում՝ որպես ուսուցման գործընթացի օգնականներ:

ժը) Արդյո՞ք անհատական օգնականներն ունեն նույն մտահոգությունները, ինչ ուսուցիչները և ուսուցման գործընթացի օգնականները. այն է՝ աջակցել հաշմանդամություն ունեցող երեխայի մասնակցությանը այլ երեխաների հետ դպրոցի ներսում և դպրոցից դուրս իրականացվող միջոցառումներին:

ժթ) Արդյո՞ք հաշմանդամություն ունեցող երեխաներին ներկայացվում է իրենց անհատական օգնականի աշխատանքի նկարագիրը, և թե իրենք ինչպիսի աջակցության կարիք կարող են ունենալ:

ի) Արդյո՞ք անհատական օգնականները և ուսուցման գործընթացի օգնականները տեղյակ են, որ կարող է անհրաժեշտություն առաջանալ հանդես գալու որպես որոշ երեխաների ու երիտասարդների շահերի պաշտպան:

իա) _____

իբ) _____

իգ) _____

Գ2.12 Տնային աշխատանքների կառուցվածքը նպաստում է յուրաքանչյուր երեխայի ուսումնառության գործընթացին:

Գ2.7 Գնահատականները խրախուսում են երեխաների ձեռքբերումները:

Գ2.1 Ուսուցման գործընթացը պլանավորվում է՝ հաշվի առնելով բոլոր երեխաների ունակությունները:

ա) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը դիտարկում է, թե ինչ հանգամանքներում է տնային աշխատանքը նպաստում կամ վնասում ուսուցման գործընթացին:

բ) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը դիտարկում է այն տարիքային շեմը, որից ներքև տնային աշխատանքը սովորաբար նպատակահարմար չէ:

գ) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը տեղյակ է, թե ինչ են երեխաները սովորում տանը՝ տնային աշխատանքի փոխարեն:

դ) Արդյո՞ք տնային աշխատանքը նախատեսված է ուսուցման գործընթացին նպաստելու համար՝ ուսուցման առօրյա գործընթաց լինելու փոխարեն:

ե) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմն աշխատում է երեխաների ու նրանց ծնողների հետ՝ տնային աշխատանքների նկատմամբ դպրոցի մոտեցումները վերանայելու:

զ) Արդյո՞ք ուսուցիչները ճշգրիտ պատկերացում ունեն, թե որքան է տևում տնային աշխատանք կատարելը:

է) Արդյո՞ք տնային աշխատանքն օգնում է բոլոր երեխաներին՝ զարգացնելու որոշակի հմտություններ և գիտելիքներ:

ը) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը դիտարկում է, թե ինչպես խրախուսել երեխաներին զբաղվել իրենց հետաքրքրություններով՝ հանձնարարված տնային աշխատանքի սահմաններից դուրս:

թ) Արդյո՞ք ուսուցիչներն աջակցում են միմյանց օգտակար տնային հանձնարարություններ մշակելու հարցում:

ժ) Արդյո՞ք տնային հանձնարարություններն ինտեգրվում են առարկայական ծրագրերի կիսամյակային և տարեկան պլանավորման մեջ:

ժա) Արդյո՞ք ուսուցիչները ստուգում են տնային հանձնարարությունները՝ համոզվելու համար, որ բոլոր երեխաները հասկացել են առաջադրանքը:

ժբ) Արդյո՞ք երեխաներն ունեն տնային հանձնարարությունների ընտրության հնարավորություն՝ իրենց գիտելիքների ու հետաքրքրությունների ուղղությամբ զարգանալու նպատակով:

ժգ) Արդյո՞ք տնային առաջադրանքները փոփոխվում են, եթե քննարկումները ցույց են տալիս, որ դրանք իմաստալից չեն կամ չեն համապատասխանում որոշ երեխաների կրթական կարիքներին:

ժդ) Արդյո՞ք երեխաները կարող են ընդլայնել իրենց ուսուցման շրջանակը՝ տնային առաջադրանքի համար անձամբ հարցեր պատրաստելով:

ժե) Արդյո՞ք տնային աշխատանքի կատարումը խրախուսվում է, որ երեխաները պատասխանատվություն կրեն իրենց ուսուցման գործընթացի համար:

ժզ) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը տեղյակ է, թե ովքեր են կատարում իրենց տնային աշխատանքը եղբայրների ու քույրերի, ծնողների կամ խնամատարների օգնությամբ, իսկ ովքեր՝ ինքնուրույն:

ժէ) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը տեղյակ է, թե երեխաներից ովքեր տանը ունեն գրքեր ու համակարգիչներ, որոնք անհրաժեշտ են տնային աշխատանքը կատարելու համար:

ժը) Արդյո՞ք մանկավարժական աշխատակազմը տրամադրում է այլընտրանքային օգնություն այն երեխաներին, որոնք չունեն օժանդակություն տանը:

ժթ) Արդյո՞ք դպրոցը երեխաներին տրամադրում է տնային աշխատանքները կատարելու օժանդակություն դպրոցի տարածքում դասերից հետո:

ի) Արդյո՞ք տնային աշխատանքը թույլ տալիս է երեխաներին որոշ ժամանակ զբաղվել իրենց հետաքրքրող զբաղմունքով:

իա) Արդյո՞ք տնային աշխատանքի կատարմամբ խրախուսվում է երեխաների համագործակցությունը:

իբ) Արդյո՞ք կան տնային աշխատանքը տարբեր ձևերով ներկայացնելու հնարավորություններ:

իգ) _____

իդ) _____

իե) _____

Գ2.13 Արտադասարանային պարապմունքները հասանելի են բոլոր երեխաների համար:

Գ2.14 Դպրոցը տեղյակ է իր շրջակայքի ռեսուրսների մասին և օգտվում է դրանցից:

ա) Արդյո՞ք երեխաների համար կազմակերպվում են մի շարք միջոցառումներ մինչև դասերը սկսելը, ընդմիջման ժամին և դասերի ավարտից հետո:

բ) Արդյո՞ք դասամիջոցներին և խաղային ժամերին կազմակերպվող խաղերն արտացոլում են բոլոր երեխաների հետաքրքրությունները:

գ) Արդյո՞ք երեխաները սովորում են խաղահրապարակում կազմակերպվող խաղերը՝ ապահովելով բոլոր երեխաների մասնակցությունը/կանխելով բացառումը:

դ) Արդյո՞ք երեխաներին ներկայացվում է այն զբաղմունքների ցանկը, որոնք հնարավոր է կազմակերպել դասամիջոցներին, դասերից առաջ և հետո:

ե) Արդյո՞ք մեծահասակները և երեխաները կարող են օգտվել միասին սովորելու հնարավորություններից, օրինակ, լրացուցիչ լեզուներ, համակարգչային հմտություններ, գրագիտություն:

զ) Արդյո՞ք դպրոցից հեռու բնակվող երեխաներին տրամադրվում է տրանսպորտ՝ դասերից առաջ և հետո կազմակերպվող միջոցառումներին նրանց մասնակցությունն ապահովելու համար:

է) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է բոլոր երեխաներին՝ մասնակցել արտադասարանային դասընթացներին՝ երաժշտության, թատերական, ֆիզիկական պատրաստվածության և այլն:

ը) Արդյո՞ք դպրոցը փորձում է բոլոր երեխաների համար գրավիչ դարձնել այն միջոցառումները, որոնցում առկա է որևէ սեռի գերակշռությունը:

թ) Արդյո՞ք տղաներն ու աղջիկները կարող են մասնակցել միասեռ խմբերի միջոցառումներին, երբ դրանցում գերակշռում է սեռերից մեկը, ինչպես օրինակ, համակարգչային և շախմատի խմբակներում կամ երգչախմբում:

ժ) Արդյո՞ք դպրոցը խրախուսում է երեխաների ու երիտասարդների որոշակի խմբերին բացառել խաղահրապարակների տարածքների մենաշնորհումը, օրինակ՝ ֆուտբոլի համար:

ժա) Արդյո՞ք նախապես հայտարարված սպորտային օրերին կազմակերպվում են այնպիսի միջոցառումներ, որոնց կարող են մասնակցել բոլորը՝ անկախ վարպետության մակարդակից կամ հաշմանդամություն ունենալուց:

ժբ) Արդյո՞ք դասարանը կամ դպրոցը սպորտային, թատերական կամ այլ միջոցառումներում ապահովում է ներգրավված երեխաների բազմազանությունը:

ժգ) Արդյո՞ք արտասահմանյան այցերը հետաքրքրում են դպրոցի բոլոր երեխաներին:

ժդ) Արդյո՞ք դպրոցական ուղևորությունները, այդ թվում՝ արտասահմանյան այցերը, հասանելի են դպրոցի բոլոր երեխաների համար, անկախ նրանց գիտելիքներից, հաշմանդամություն ունենալուց կամ ծնողների եկամտից:

ժե) Արդյո՞ք բոլոր երեխաները հնարավորություն ունեն մասնակցելու դպրոցից դուրս կազմակերպվող միջոցառումներին:

ժզ) Արդյո՞ք բոլոր երեխաներին հնարավորություն ընձեռվում է մասնակցելու տեղական համայնքների զարգացմանը նպաստող գործունեությանը:

ժէ) _____

ժը) _____

ժթ) _____

Գ2.14 Դպրոցը տեղյակ է իր շրջակայքի ռեսուրսներին եւ օգտվում է դրանցից:

Գ1.1 - Գ1.13 և Գ2.1 - Գ2.13

ա) Արդյո՞ք տեղական համայնքների անդամները նպաստում են դպրոցի դասավանդման գործընթացին:

բ) Արդյո՞ք երեխաների ծնողները/խնամատարները և համայնքի այլ անդամներն աջակցում են դպրոցի ուսուցման գործընթացին:

գ) Արդյո՞ք համայնքային կազմակերպությունները ցուցաբերում են աջակցություն դպրոցում և դպրոցից դուրս կազմակերպվող ուսուցման գործընթացներին:

դ) Արդյո՞ք հարևանությամբ աշխատող մարդիկ տրամադրում են մենթորական աջակցություն դժվարություններ ունեցող երեխաներին:

ե) Արդյո՞ք ենթադրվում է, որ որոշ մեծահասակներ, ինչպես օրինակ, հաշմանդամություն ունեցող անձինք, ճանապարհորդ ընտանիքները կամ փոքրամասնության լեզվով հաղորդակցվող անձինք, կարող են հատուկ դեր խաղալ այն երեխաներին աջակցություն ցուցաբերելու հարցում, որոնք իրենց խոցելի են զգում:

զ) Արդյո՞ք որոշ ընտանիքներ ժամանակ առ ժամանակ տրամադրում են իրենց ռեսուրսները, ինչպես օրինակ, հատուկ գիտելիքները և հմտությունները, համակարգիչները և համապատասխան գրականությունը, հատկացումները, երեխաների ավելի լայն խմբերի:

է) Արդյո՞ք դպրոցի աշխատակազմը վարում է կանոնավոր նորացվող գրանցամատյան դասավանդման և ուսումնառության խթանմանն ուղղված իր շրջակայքում առկա ռեսուրսների հաշվառման վերաբերյալ:

Ռեսուրսները կարող են ներառել հետեւյալը՝

Բուժհաստատություն/ Շտապօգնության ծառայություն

Պատկերասրահներ

Կինոթատրոններ

Արվեստի կենտրոններ/ Մշակույթի ակումբներ

Բարեգործական կազմակերպություններ

Բնապահպանական խմբեր

Էթնիկ փոքրամասնությունների կազմակերպություններ

Առողջապահական կենտրոնների մասնագետների այցելություններ

Սոցիալական աշխատողներ

Պետական և ոչ պետական տոներ, իրադարձություններ

Միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններ

Մշակութային ժառանգության արժեքներ

Ցերեկային խնամքի կենտրոններ երեխաների և ծերերի համար

Գրադարաններ

Տեղական ինքնակառավարման մարմիններ/Երեխաների իրավունքների պաշտպանության բաժանմունքներ

Ազգային տրեստ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպություններ

Ծնողներ/ խնատարներ և համայնքի անդամներ

Այգիներ/զբոսայգիներ

Ոստիկանական և հրշեջ ծառայություններ

Քաղաքական գործիչներ և քաղաքական կուսակցություններ

Վերամշակման ծառայություններ և կենտրոններ

Խանութներ և ձեռնարկություններ

Երգի խմբակներ

Սպորտային ակումբներ և սպորտային կենտրոններ

Ուսումնական կենտրոններ

Լողավազաններ

Հեռախոսային/բջջային կապի ընկերություններ

Թատրոն/թատերախմբեր

Երկաթուղային կայաններ, ավտոկայաններ, օդանավակայաններ

Ջրային, գետային ծառայություններ

Յոգայի և մեդիտացիայի կենտրոններ

Երիտասարդական խմբեր

Արհմիություններ և այլն:

5.
Պլանավորման սխեմա եւ հարցաթերթիկներ

Պլանավորման սխեմա եւ հարցաթերթիկներ

Ինդեքսի 5-րդ բաժինը ներառում է պլանավորման սխեմա և չորս հարցաթերթիկներ: Սույն ձեռնարկում ընդգրկված պլանավորման սխեման կարելի է հեշտությամբ կրկնօրինակել և օգտագործել այնպիսի պլան մշակելիս, որի յուրաքանչյուր հարթության և հատվածում կատարվող փոփոխություններն ամրապնդում են միմյանց (տե՛ս 13-րդ էջում նկարագրված գործողությունը): Հարցաթերթիկները թույլ են տալիս մեծահասակներին և երեխաներին մտածել, թե ինչ է անհրաժեշտ որպես հաջորդ քայլ մշակել իրենց դպրոցի համար: Հարցաթերթիկները թույլ են տալիս մարդկանց լայն խմբեր ներգրավել առկա իրավիճակի ուսումնասիրության և բարելավման առաջարկների մշակման գործում: Այնուամենայնիվ, դրանք լավագույնս օգտագործվում են որպես շարունակական երկխոսությունների մի մաս, խթանում դասավանդող և ոչ պրոֆեսիոնալ աշխատակազմի, ղեկավար մարմինների, ծնողների/խնամատարների, երեխաների ու երիտասարդների և դպրոցում ներգրավված այլ անձանց մասնակցությունը:

1-ին հարցաթերթիկը կարող է առավել հաճախ օգտագործվել ոչ պրոֆեսիոնալ աշխատակազմի և ղեկավար մարմինների կողմից: *Ինդեքսի* կառուցվածքով և ցուցիչների ու հարցերի փոխկապվածությամբ հետաքրքրվող ծնողները և երեխաները նույնպես կարող են օգտվել այս հարցաթերթիկից՝ որպես *Ինդեքսի* նյութերին ծանոթանալու գործընթացի մի մաս:

2-րդ հարցաթերթիկը նախատեսված է ծնողների/խնամատարների, իսկ 3-րդը և 4-րդը՝ երեխաների և երիտասարդների համար: 3-րդ հարցաթերթիկի բառապաշարը կարող է պարզունակ թվալ ավելի մեծ տարիքի երեխաների համար: Դա բացատրվում է նրանով, որ այն մշակվել է տարիքային տարբեր խմբերի ներգրավելու նպատակով, այլապես ձևակերպումները կարող են փոխել այնպես, որ դրանք ավելի անմիջականորեն հասցեագրված լինեն համապատասխան լսարանին: 4-րդ հարցաթերթիկը մշակվել է ամենակրտսեր տարիքի երեխաների համար:

Պլանավորման սխեմա	273
Հարցաթերթիկ 1: Ցուցիչներ	274
Հարցաթերթիկ 2: Իմ երեխայի դպրոցը	277
Հարցաթերթիկ 3: Իմ դպրոցը (երեխաների և երիտասարդների համար)	280
Հարցաթերթիկ 4: Իմ դպրոցը (ամենակրտսեր տարիքի երեխաների համար)	283

Պլանավորման սխեմա

Մուտքագրե՛ք զարգացման Ձեր առաջնահերթությունները հարցաթերթիկի մեջ՝ դրանք ձևակերպելով ըստ Ձեր նախապատվության: Դուք պետք է հաշվի առնեք, թե ինչպես կարելի է մեկ բաժնում նախատեսված փոփոխությունն ապահովել այլ բաժիններում նախատեսված փոփոխություններով՝ կայունության ապահովման նպատակով: Դուք կարող եք Ձեր առաջարկները ձևակերպել՝ հիմնվելով որևէ ցուցիչի, հարցի կամ հարցերի խմբի կամ ուսուցման և մասնակցության խոչընդոտները հաղթահարելու և դրա համար անհրաժեշտ ռեսուրսների համախմբման այլ գաղափարների վրա: Եթե այս հարցաթերթիկը նախատեսվում է օգտագործել որպես սեմինարի նյութ, Դուք պետք է հետևյալ կետերից մեկում նշեք Ձեր համապատասխան կապը դպրոցի հետ:

☐ ուսուցիչ ☐ ուսուցչի օգնական ☐ աշխատակազմի այլ անդամ (խնդրում ենք նշեք)_____

☐ ղեկավար մարմին ☐ ծնող/խնամատար ☐ երեխա կամ երիտասարդ ☐ այլ (խնդրում ենք նշեք)_____

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱ	
Ներառական մշակույթների ձեւավորում	
Հասարակության/համայնքի կառուցում	Ներառական արժեքների սահմանում
Ներառական քաղաքականության ձեւավորում	
Դպրոցի զարգացում բոլորի համար	Բազմազանության ընդունման ապահովում
Ներառական գործելակերպի զարգացում	
Կրթակարգ բոլորի համար	Ուսուցման գործընթացի կազմակերպում

Հարցաթերթիկ 1: Ցուցիչներ

Նշե՛ք այն կետը, որ ցույց է տալիս դպրոցի հետ Ձեր կապը:

☐ ուսուցիչ ☐ ուսուցչի օգնական ☐ աշխատակազմի այլ անդամ ☐ ծնող/խնամատար

☐ երեխա կամ երիտասարդ ☐ ղեկավար մարմին ☐ այլ (խնդրում ենք նշեք)_____

		Նշե՛ք այն կետը, որ լավագույնս ներկայացնում է Ձեր կարծիքը:	Այո՛	Ե՛վ այո, և՛ ոչ	Ո՛չ	Անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություն
Հարթություն «Ա». Ներառական մշակույթների ձեւավորում						
Ա1. Հասարակության ձեւավորում	1	Յուրաքանչյուրի ներկայությունը/մասնակցությունը ողջունելի է:				
	2	Դպրոցի աշխատակազմի անդամները համագործակցում են միմյանց հետ:				
	3	Երեխաներն օգնում են միմյանց:				
	4	Աշխատակազմը և երեխաները հարգում են միմյանց:				
	5	Աշխատակազմը և ծնողները/խնամատարները համագործակցում են միմյանց հետ:				
	6	Աշխատակազմը և ղեկավարները ապահովում են արդյունավետ համատեղ աշխատանք:				
	7	Դպրոցը ժողովրդավարական քաղաքացիության մոդել է:				
	8	Դպրոցը արժևորում է համայն մարդկության միջև փոխհարաբերությունների ըմբռնումը:				
	9	Չափահասները և երեխաները պատշաճորեն են արձագանքում մարդկանց սեռական պատկանելությանը և սեռերի հավասարությանը:				
	10	Դպրոցը և տեղական համայնքը նպաստում են փոխադարձ զարգացմանը:				
	11	Աշխատակազմը կապեր է ստեղծում դպրոցում տեղի ունեցած իրադարձությունների և երեխաների ընտանեկան կյանքի միջև:				
Ա2. Ներառական արժեքների սահմանում	1	Դպրոցը ձևավորում է համընդհանուր ներառական արժեքներ:				
	2	Դպրոցը խթանում է հարգանքը մարդու բոլոր իրավունքների նկատմամբ:				
	3	Դպրոցը խրախուսում է Երկիր մոլորակի ամբողջականության պահպանումը:				
	4	Ներառումը դիտվում է որպես բոլորի մասնակցության մակարդակի աճ:				
	5	Բոլոր երեխաներն ունեն մեծ ակնկալիքներ:				
	6	Բոլոր երեխաներն արժևորվում են հավասարաչափ:				
	7	Դպրոցը պայքարում է խտրականության բոլոր ձևերի դեմ:				
	8	Դպրոցը խրախուսում է հարաբերությունների պարզաբանման և վեճերի լուծման ոչ բռնի ձևերը:				
	9	Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների ինքնագնահատականի բարձրացմանը:				
	10	Դպրոցը նպաստում է երեխաների և մեծահասակների առողջության պահպանմանը:				

		Նշե՛ք այն կետը, որ լավագույնս ներկայացնում է Ձեր կարծիքը:	Այո՛	Եվ այո, և՛ ոչ	Ո՛չ	Անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություն
Ոլորտ Բ. Ներառական քաղաքականությունների մշակում						
Բ1. Դպրոցի զարգացում բոլորի համար	1	Դպրոցը վարում է մասնակցային զարգացման գործընթաց:				
	2	Դպրոցն առաջնորդվում է ղեկավարման ներառական մոտեցմամբ:				
	3	Նշանակումները և պաշտոնի առաջխաղացումներն արդար են:				
	4	Աշխատակազմը փորձառու է և օգտագործում է իր գիտելիքները:				
	5	Բոլոր նոր մասնագետներին ցուցաբերվում է աջակցություն ադապտացման շրջանում:				
	6	Դպրոցը փորձում է ապահովել իր տարածքի բոլոր երեխաների ընդունելությունը:				
	7	Բոլոր նոր ընդունված երեխաներն ստանում են աջակցություն ադապտացման շրջանում:				
	8	Ուսուցման և ուսումնառության խմբերը կազմվում են բոլոր երեխաների ուսումնառության կարողություններին համապատասխան:				
	9	Երեխաները լավ պատրաստված են այլ հաստատություն տեղափոխվելու համար:				
	10	Դպրոցը ֆիզիկապես մատչելի է բոլորի համար:				
	11	Շենքերն ու խաղահրապարակները ֆիզիկապես մատչելի են բոլորի համար:				
	12	Դպրոցը կրճատում է ածխածնի արտադրման իր ծավալները և սահմանափակում ջրի սպառումը:				
	13	Դպրոցը նպաստում է թափոնների ծավալների կրճատմանը:				
Բ2. Բազմազանության ընդունման ապահովում	1	Աջակցության բոլոր ձևերը համակարգվում են:				
	2	Մասնագիտական զարգացման միջոցառումներն օգնում են աշխատակազմին պատշաճ արձագանքելու բազմազանությանը:				
	3	Օտար լեզուների ուսուցումը դիտվում է որպես ներառման խթան ամբողջ դպրոցի համար				
	4	Դպրոցն աջակցում է հանրային այլ հաստատություններում երեխաների կրթության շարունակականությանը:				
	5	Դպրոցն ապահովում է, որ «հատուկ կրթական կարիքներ»-ին առնչվող քաղաքականություններն աջակցեն ներառմանը:				
	6	Վարքագծային քաղաքականությունը կապված է ուսումնառության և կրթակարգի զարգացման հետ:				
	7	Կարգապահական նկատառումներով, դպրոցից հեռացումը՝ որպես պատիժ, հազվադեպ է կիրառվում:				
	8	Հաճախելիության խոչընդոտները հասցված են նվազագույնի:				
	9	Վախերը և ծաղրը հասցված են նվազագույնի:				
Ոլորտ Գ. Ներառական գործելակերպերի զարգացում						
Գ1. Կրթակարգ	1	Երեխաներն ուսումնասիրում են սննդի արտադրության և սպառման շրջափուլերը:				
	2	Երեխաներն ուսումնասիրում են ջրի կարևորությունը:				
	3	Երեխաներն ուսումնասիրում են հագուստը և զարդարանքը:				
	4	Երեխաները բացահայտում են կացարանային և շենքային միջավայրը:				
	5	Երեխաները քննարկում են, թե ինչպես և ինչու են մարդիկ տեղաշարժվում իրենց շրջակայքում և աշխարհի շուրջ:				
	6	Երեխաները գիտելիքներ են ստանում առողջության և փոխհարաբերությունների մասին:				

		Նշե՛ք այն կետը, որ լավագույնս ներկայացնում է Ձեր կարծիքը:	Այո՛	Ե՛վ այո, և՛ ոչ	Ո՛չ	Անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություն
Գ1. Կրթակարգ	7	Երեխաները բացահայտում են Երկիր մոլորակը, Արեգակնային համակարգը և տիեզերքը:				
	8	Երեխաներն ուսումնասիրում են կյանքը Երկիր մոլորակի վրա:				
	9	Երեխաներն ուսումնասիրում են էներգիայի աղբյուրները:				
	10	Երեխաները սովորում են կապի և հաղորդակցման տեխնոլոգիաների մասին:				
	11	Երեխաներն զբաղվում են գրականությամբ, արվեստով ու երաժշտությամբ և ստեղծագործում են:				
	12	Երեխաները սովորում են տարբեր աշխատանքներ և այն կապակցում են իրենց հետաքրքրությունների զարգացմանը:				
	13	Երեխաները սովորում են էթիկայի կանոնների, իշխանության և կառավարման մասին:				
Գ2. Ուսուցման գործընթացի կազմակերպում	1	Ուսուցման գործընթացը պլանավորվում է՝ հաշվի առնելով բոլոր երեխաների ունակությունները:				
	2	Ուսուցման գործընթացն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը:				
	3	Երեխաները խրախուսվում են իրենց քննադատական մտածողության համար:				
	4	Երեխաներն ակտիվորեն մասնակցում են իրենց ուսուցման գործընթացին:				
	5	Երեխաները սովորում են միմյանցից:				
	6	Դասերը զարգացնում են մարդկանց նմանությունների և տարբերությունների ըմբռնումը:				
	7	Գնահատականները խրախուսում են երեխաների ձեռքբերումները:				
	8	Կարգապահությունը հիմնված է փոխադարձ հարգանքի վրա:				
	9	Աշխատակազմն իրականացնում է պլանավորման, ուսուցման և վերանայման համատեղ աշխատանքներ:				
	10	Աշխատակազմը մշակում է ուսուցման գործընթացի օժանդակ համընդհանուր ռեսուրսներ:				
	11	Ուսուցման գործընթացի օգնականներն աջակցում են բոլոր երեխաների ուսումնառությանը և մասնակցության ապահովմանը:				
	12	Տնային աշխատանքների կառուցվածքը նպաստում է յուրաքանչյուր երեխայի ուսումնառության գործընթացին:				
	13	Արտադասարանային պարապմունքները հասանելի են բոլոր երեխաների համար:				
	14	Դպրոցը տեղյակ է իր շրջակայքի ռեսուրսներին և օգտվում է դրանցից:				

Երեք բան, որ առավել շատ եք հավանում տվյալ դպրոցում:

1 _____

2 _____

3 _____

Երեք բան, որ կարելի է փոխել տվյալ դպրոցում:

1 _____

2 _____

3 _____

Հարցաթերթիկ 2: Իմ երեխայի դպրոցը

	Նշե՛ք այն կետը, որ լավագույնս ներկայացնում է Ձեր կարծիքը:	Այո՛	Ե՛վ այո, և՛ ոչ	Ո՛չ
1	Իմ երեխան սովորաբար անհամբեր սպասում է, թե երբ է հաճախելու դպրոց:			
2	Իմ երեխան լավ ընկերներ ունի դպրոցում:			
3	Ես ինձ զգում եմ դպրոցի համայնքի մի մասնիկ:			
4	Դպրոցը ինձ մշտապես տեղեկացնում է իր գործունեության մասին:			
5	Ինձ խնդրել են աջակցել դասերի կազմակերպման գործընթացին:			
6	Իմ կարծիքով, սա տարածքի լավագույն դպրոցն է:			
7	Դպրոցի շենքը և խաղահրապարակը գրավիչ են:			
8	Զուգարանները մաքուր են և ապահով:			
9	Երեխաները լավ հարաբերությունների մեջ են:			
10	Ուսուցիչները լավ հարաբերությունների մեջ են:			
11	Մեծահասակները և երեխաները լավ հարաբերությունների մեջ են:			
12	Ուսուցիչները և ծնողները լավ հարաբերությունների մեջ են:			
13	Բոլոր ընտանիքները հավասարապես կարևոր են դպրոցի ուսուցիչների համար:			
14	Ես ընկերական հարաբերությունների մեջ եմ այլ ծնողների հետ:			
15	Ես հավանում եմ ուսուցիչներին:			
16	Ուսուցիչներին հետաքրքիր է այն ամենը, ինչ պատմում եմ իմ երեխայի մասին:			
17	Դպրոցում տարբեր ծագում ունեցող երեխաների ներկայությունը նախընտրելի է:			
18	Դպրոց հաճախելով՝ իմ երեխան սովորում է շփվել այլ մարդկանց հետ:			
19	Դպրոց հաճախելով՝ իմ երեխան սովորում է, թե ինչ է ժողովրդավարությունը:			
20	Իմ երեխան սովորում է հոգ տանել շրջակա միջավայրի մասին:			
21	Իմ երեխան դպրոցում ընդունում է առողջ սնունդ:			
22	Ես իմ մասնակցությունն ունեմ դպրոցի բարելավման միջոցառումներին:			
23	Դպրոցի տարածքի բոլոր երեխաները կարող են հաճախել տվյալ հաստատություն:			
24	Երբ իմ երեխան հաճախեց տվյալ դպրոց, ինձ ի սկզբանե դժվար էր ներգրավվել հաստատության գործունեությանը:			

	Նշե՛ք այն կետը, որ լավագույնս ներկայացնում է Ձեր կարծիքը:	Այո՛	Ե՛վ այո, և՛ ոչ	Ո՛չ
25	Բոլոր երեխաներին ցուցաբերվում է հարգալից վերաբերմունք:			
26	Դպրոցն ապահովում է հաշմանդամ երեխաների ընդունելություն, և հարգալից վերաբերմունք է ցուցաբերվում նրանց նկատմամբ:			
27	Աղջիկները և տղաները լավ հարաբերությունների մեջ են:			
28	Սեռերի հավասարությունն ընկալվում է որպես կյանքի սովորական երևույթ:			
29	Բոլորն արժանանում են հարգալից վերաբերմունքի՝ մաշկի գույնից անկախ:			
30	Բոլորը համարվում են դպրոցի հավասարազոր անդամներ՝ ընդունակություններից անկախ:			
31	Մարդիկ ուշադրություն չեն դարձնում երեխաների հագուկապին:			
32	Երեխաները գնահատվում են իրենց ջանքերի, այլ ոչ թե առաջադրանքների համար ստացած գնահատականների համար:			
33	Երեխաները միմյանց վիրավորական անուններով չեն դիմում:			
34	Ծաղրը բացառվում է:			
35	Համոզված եմ, որ կարող եմ ստանալ դպրոցի աջակցությունը, եթե փորձեն վախեցնել կամ ծաղրել իմ երեխային:			
36	Երեխաների անգամ մեկօրյա բացակայության դեպքում ուսուցիչները ցանկանում են պարզել պատճառները:			
37	Ուսուցիչները երեխաների շրջանում սիրելիների տարբերակում չեն ցուցաբերում:			
38	Իմ կարծիքով, ուսուցիչները արդար են երեխաների գովասանքի հարցում:			
39	Իմ կարծիքով, ուսուցիչները արդար են երեխաների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելիս:			
40	Երբ որոշ երեխաներ խանգարում են դասը, մյուսներն օգնում են՝ նրանց կարգի հրավիրելու:			
41	Իմ երեխան սովորում է անհամաձայնությունները հարթել լսելով, խոսքով ու փոխզիջմամբ:			
42	Դպրոցը երեխաներին տուն է ուղարկում՝ իրենց վատ վարքի համար:			
43	Դասերի ընթացքում հաշվի են առնվում երեխաների՝ դպրոցի սահմաններից դուրս սովորած դասերը:			
44	Դպրոցը վարում է խնդիրների լուծման օժանդակություն ցուցաբերելու արդյունավետ համակարգ:			
45	Իմ երեխան շատ բան է սովորում դպրոցում:			
46	Երեխաներին հաճախ տրամադրվում է սեփական ուժերով սովորելու հնարավորություն:			

	Նշե՛ք այն կետը, որ լավագույնս ներկայացնում է Ձեր կարծիքը:	Այո՛	Ե՛վ այո, և՛ ոչ	Ո՛չ
47	Դպրոցն ունի էներգիայի խնայողության արդյունավետ համակարգ:			
48	Իմ երեխան սովորում է հոգ տանել դպրոցի և շրջակայքի մասին:			
49	Երեխաներն օգնում են միմյանց հաղթահարելու առաջադրանքների դժվարությունները:			
50	Իմ երեխան գիտի ինչպես օգնություն ստանալ ուսումնառության դժվարությունների դեպքում:			
51	Դպրոցն այն վայրն է, որտեղ մարդիկ իսկապես ուշադրություն են դարձնում միմյանց կարծիքին:			
52	Իմ երեխան միշտ հասկանում է դասերի առաջադրանքների հերթականությունը:			
53	Իմ երեխան սովորաբար հասկանում է հանձնարարված տնային առաջադրանքը:			
54	Տնային առաջադրանքն օգնում է իմ երեխային սովորելու:			
55	Ընդմիջման ժամերին իմ երեխան սովորաբար հաճախում է որևէ խմբակ կամ մասնակցում սպորտային պարապմունքների:			
56	Դասերից հետո իմ երեխան սովորաբար հաճախում է որևէ խմբակ կամ մասնակցում սպորտային պարապմունքների:			

Երեք բան, որ առավել շատ եք հավանում տվյալ դպրոցում:

1 _____

2 _____

3 _____

Երեք բան, որ կարելի է փոխել տվյալ դպրոցում:

1 _____

2 _____

3 _____

Հարցաթերթիկ 3: Իմ դպրոցը

Սույն հարցաթերթիկում «երեխա» կամ «երեխաներ» բառը վերաբերում է նաեւ ավելի բարձր տարիքի երեխաներին եւ երիտասարդներին:

	Նշե՛ք այն կետը, որ լավագույնս ներկայացնում է Ձեր կարծիքը:	Այո՛	Ե՛վ այո, և՛ ոչ	Ո՛չ
1	Ես սովորաբար անհամբեր սպասում եմ, թե երբ եմ հաճախելու դպրոց:			
2	Ես ինձ զգում եմ մեծ համայնքի մի մասնիկ:			
3	Դպրոցի շենքը և խաղահրապարակը գրավիչ են:			
4	Ջուգարանները մաքուր են և ապահով:			
5	Երեխաները լավ հարաբերությունների մեջ են:			
6	Մեծահասակները լավ հարաբերությունների մեջ են:			
7	Մեծահասակները և երեխաները լավ հարաբերությունների մեջ են:			
8	Ես ունեմ լավ ընկերներ:			
9	Ես սիրում եմ իմ ուսուցիչներին:			
10	Դպրոցն ապահովում է իմ լավ ինքնազգացողությունը:			
11	Դպրոցի շնորհիվ ես լավատեսորեն եմ վերաբերվում իմ ապագային:			
12	Մեզ հորդորում են պայքարել ճշմարտության համար:			
13	Լավ է, երբ դպրոցում սովորում են տարբեր ազգային պատկանելության երեխաներ:			
14	Դպրոց հաճախելով՝ ես սովորում եմ շփվել այլ մարդկանց հետ:			
15	Դպրոց հաճախելով՝ ես սովորել եմ, թե ինչ է ժողովրդավարությունը:			
16	Ես սովորել եմ, թե ինչպես կարող են իմ գործողություններն ազդեցություն թողնել այլ անձանց վրա:			
17	Ես սովորել եմ, թե ինչպես կարող են իմ գործողություններն ազդեցություն թողնել աշխարհի տարբեր հատվածներում բնակվող այլ անձանց վրա:			
18	Ես սովորել եմ, թե ինչպես են իմ արժեքներն ազդում իմ գործողությունների վրա:			
19	Ես դպրոցում ընդունում եմ առողջ սնունդ:			
20	Իմ ընտանիքը տեղյակ է, թե ինչ է տեղի ունենում դպրոցում:			
21	Երբ ուսուցիչներն ասում են, որ նախատեսում են որևէ գործողություն, ապա իրականացնում են այն:			
22	Մարդիկ ընդունում են իրենց սխալները:			
23	Դպրոցի տարածքում կա մի հարմարավետ անկյուն, որտեղ ես կարող եմ հանգստանալ ընդմիջման ժամերին:			

	Նշե՛ք այն կետը, որ լավագույնս ներկայացնում է Ձեր կարծիքը:	Այո՛	Ե՛վ այո, և՛ ոչ	Ո՛չ
24	Ես մասնակցում եմ դպրոցի բարելավման միջոցառումներին:			
25	Դպրոցն ապահովում է իր շրջակայքում բնակվող բոլոր երեխաների ընդունելությունը:			
26	Երբ ես նոր էի ընդունվել տվյալ դպրոց, ինձ ցուցաբերվում էր աղապտացման աջակցություն:			
27	Բոլորն արժանանում են հարգալից վերաբերմունքի՝ մաշկի գույնից անկախ:			
28	Բոլորն իրենց զգում են դպրոցի հավասարազոր անդամներ՝ անկախ որևէ հանգամանքից:			
29	Երեխաները չեն գնահատում միմյանց ըստ հագուկապի:			
30	Աղջիկները և տղաները լավ հարաբերությունների մեջ են:			
31	Սեռերի հավասարությունն ընկալվում է որպես կյանքի սովորական երևույթ:			
32	Դպրոցն ապահովում է հաշմանդամ երեխաների ընդունելություն, և հարգալից վերաբերմունք է ցուցաբերվում նրանց նկատմամբ:			
33	Երեխաները միմյանց վիրավորական անուններով չեն դիմում:			
34	Եթե որևէ մեկն ինձ ծաղրի կամ սպառնա, ես այդ մասին կտեղեկացնեմ ուսուցչիս:			
35	Ուսուցիչները երեխաների շրջանում սիրելիների տարբերակում չեն ցուցաբերում:			
36	Երեխաների նույնիսկ մեկօրյա բացակայության դեպքում ուսուցիչները ցանկանում են պարզել պատճառները:			
37	Իմ կարծիքով, ուսուցիչները արդար են երեխաների գովասանքի հարցում:			
38	Իմ կարծիքով, ուսուցիչները արդար են երեխաների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելիս:			
39	Ուսուցիչները գիտեն, թե ինչպես կարգի հրավիրեն երեխաներին, երբ նրանք խանգարում են դասը:			
40	Երբ որոշ երեխաներ խանգարում են դասը, մյուսներն օգնում են՝ նրանց կարգի հրավիրելու:			
41	Մենք սովորում ենք անհամաձայնությունները հարթել լսելով, խոսքով և փոխզիջմամբ:			
42	Դասերի ընթացքում երեխաները զույգերով կամ խմբերով հաճախ են օգնում միմյանց:			
43	Դասերի ընթացքում երեխաները փոխադարձաբար հաղորդակցվում են իրենց գիտելիքներով:			
44	Ուսուցիչը կամ ուսուցչի օգնականն ինձ օգնում է դասերի խնդիրներում:			

	Նշե՛ք այն կետը, որ լավագույնս ներկայացնում է Ձեր կարծիքը:	Այո՛	Ե՛վ այո, և՛ ոչ	Ո՛չ
45	Ես հաճույքով եմ հաճախում գրեթե բոլոր դասերին:			
46	Ես սովորում եմ այն ամենը, ինչ տեղի է ունենում աշխարհում:			
47	Ես սովորել եմ մարդու իրավունքների կարևորությունը:			
48	Ես սովորում եմ, թե ինչպես կարելի է նվազեցնել մարդկանց տառապանքները:			
49	Ես շատ բան եմ սովորում այս դպրոցում:			
50	Երբեմն երեխաներին թույլ են տալիս ինքնուրույն գործունեություն:			
51	Դպրոցում մենք սովորում ենք, թե ինչպես խնայել էլեկտրաէներգիան:			
52	Մենք սովորում ենք, թե ինչպես հոգ տանել դպրոցի և նրա շրջակայքի մասին:			
53	Մենք սովորում ենք, թե ինչպես հարգել Երկիր մոլորակը:			
54	Երբ ուսուցչի օգնականները ներկա են դասարանում, նրանք օգնում են բոլոր նրանց, ովքեր ունեն դրա կարիքը:			
55	Ուսուցիչներին հետաքրքրում է իմ կարծիքը:			
56	Երեխաներին հետաքրքրում են միմյանց կարծիքները:			
57	Ես միշտ լավ եմ պատկերացնում դասերի հերթականությունը:			
58	Ես ինքս գիտակցում եմ, թե երբ եմ լավ աշխատանք կատարել:			
59	Ուսուցիչները դեմ չեն, եթե ես որոշ սխալներով կատարեմ առաջադրանքը ու ի վերջո ուղղեմ դրանք:			
60	Իմ աշխատանքները ցուցադրված են դպրոցի պատերին:			
61	Ես սովորաբար հասկանում եմ տնային հանձնարարությունները:			
62	Իմ կարծիքով, տնային հանձնարարություններն ինձ օգնում են գիտելիքներ ձեռք բերելու:			
63	Ընդմիջման ժամերին կամ դասերից հետո ես սովորաբար հաճախում եմ որևէ խմբակ կամ մասնակցում եմ սպորտային պարապմունքների:			

Հարցաթերթիկ 4. Իմ դպրոցը

Համաձա՞յն եք, թե՞ ոչ: Ընդգծե՛ք այն դեմքը, որն ավելի շատ է համապատասխանում Ձեր տրամադրությանը:

1	Ես ինձ երջանիկ եմ զգում դպրոցում:	☺	😐	☹
2	Ինձ դուր է գալիս դպրոցի արտաքին տեսքը:	☺	😐	☹
3	Ես ունեմ լավ ընկերներ դպրոցում:	☺	😐	☹
4	Դպրոցի երեխաները սիրում են միմյանց:	☺	😐	☹
5	Դպրոցի մեծահասակները բարեկամական վերաբերմունք են ցուցաբերում երեխաներին:	☺	😐	☹
6	Ես սիրում եմ իմ ուսուցիչներին:	☺	😐	☹
7	Ես դպրոցում ընդունում եմ առողջարար սնունդ:	☺	😐	☹
8	Ես սիրում եմ պատմել իմ ընտանիքին դպրոցում անցկացրած իմ օրվա մասին:	☺	😐	☹
9	Երբ ես առաջին անգամ հաճախեցի դպրոց, ինձ օգնեցին երջանիկ զգալու:	☺	😐	☹
10	Աղջիկները և տղաները լավ հարաբերությունների մեջ են:	☺	😐	☹
11	Երեխաներին չեն հարվածում ու չեն դիմում վիրավորական արտահայտություններով:	☺	😐	☹
12	Ես ինձ ապահով եմ զգում խաղահրապարակում և զուգարանում:	☺	😐	☹
13	Ուսուցիչները կանխում են երեխաների անկարգությունները դպրոցում:	☺	😐	☹
14	Երեխաները հաճախ օգնում եմ միմյանց դպրոցում:	☺	😐	☹
15	Դժվարությունների կամ խնդիրների դեպքում ես կարող եմ դիմել օգնության:	☺	😐	☹
16	Դպրոցում ես սովորում եմ հետաքրքիր տարբեր բաներ:	☺	😐	☹
17	Ես սովորում եմ աշխարհի տարբեր անկյուններում ապրող մարդկանց մասին:	☺	😐	☹
18	Դպրոցում մենք սովորում ենք էներգիայի խնայողություն:	☺	😐	☹
19	Մենք սովորում ենք հոգ տանել շրջակա միջավայրի մասին:	☺	😐	☹

20	Ուսուցիչներին հետաքրքիր է լսել իմ գաղափարները:	☺	😐	☹
21	Ես միշտ գիտեմ՝ ի՛նչ է պահանջվում դասերի ժամանակ:	☺	😐	☹
22	Ուսուցիչները դեմ չեն իմ սխալներին, եթե ես ջանում եմ դրանք ուղղել:	☺	😐	☹
23	Իմ աշխատանքները երբեմն ներկայացվում են դպրոցի պատին:	☺	😐	☹
24	Ես երբեմն (դասերից առաջ կամ հետո) հաճախում եմ որևէ խմբակ:	☺	😐	☹

Երեք բան, որ առավել շատ եք հավանում տվյալ դպրոցում:

1 _____

2 _____

3 _____

Երեք բան, որ կարելի է փոխել տվյալ դպրոցում:

1 _____

2 _____

3 _____

6.
Օգտագործված գրականության ցանկ

Օգտագործված գրականության ցանկ

Abdi, A. and Shultz, L. (2008) Educating for human rights and global citizenship, Albany: State University of New York Press.

Actionaid (2008) Power down: save energy, be the solution, Chard: Action Aid.

Alexander, R. (2010) (ed.) Children, their world, their education: final report and recommendations of the Cambridge Primary Review, London: Routledge.

Andreotti, V. and de Souza, L. M. (2008) Learning to read the world through other eyes, Derby: Global Education.

Au, W. and Tempel, M. (2012) Rethinking high-stakes testing and accountability in public schools, Milwaukee, Rethinking Schools.

Baginsky, W. (2004) Peer mediation in the UK, a guide for schools, London: NSPCC.

Balshaw, M. (1999) Help in the classroom (2nd edition), London: Fulton.

Barnes, J. (2011) Cross-curricular learning 3-14 (2nd edition), London: Sage.

Bigelow, B. and Swinehart, T. eds. (2014) A people's curriculum for the earth, Milwaukee, Rethinking Schools.

Bigelow, B. and Swinehart, T. eds. (2014) A people's curriculum for the earth, Milwaukee, Rethinking Schools.

Black, M. and King, J. (2009) The atlas of water: mapping the world's most critical resource,

Brighton: Earthscan.

Blair, M. and Bourne, J. with Coffin, C., Creese, A. and Kenner, C. (1999) Making the difference: teaching and learning strategies in successful multi-ethnic schools, London: HMSO.

Boaler, J. (2010) The Elephant in the Classroom: helping children learn and love maths, London: Souvenir Press.

Bohm, D. (1996) On Dialogue, London: Routledge.

Brighton and Hove City Council (2005) Biodiversity Action Plan, Brighton: BHCC.

Buckingham, S. and Turner, M. (eds.) (2008) Understanding environmental issues, London: Sage.

Centre for Equity in Education (2007) Equity in Education: new directions, second annual report on the state of equity in the English education system, Manchester: The University of Manchester. Centre for Studies on Inclusive Education (2010) Developing a single equality policy for your school: a CSIE guide, Bristol: CSIE.

Clark, A. and Moss, P. (2001) Listening to young children, London: National Children's Bureau.

Clutterbuck, P. (2008) Values: a programme of study for primary schools, Carmarthen: Crown House Publishing Ltd.

Collaborative Learning Project: www.collaborativelearning.org

Craig, D. (2009) The weather book: why it happens and where it comes from, London: Michael O'Mara Books.

Dahlberg, G., Moss, P. and Pence, A. (2007) Beyond quality in early childhood education and care, London: Routledge.

Denman-Sparks, L. and the A.B.C. Task Force (1989) Anti- Bias Curriculum, tools for empowering young children, Washington: National Association for the Education of Young Children. Department

for Children, Families, Lifelong Learning and Skills, (2008) Careers and the world of work: a framework for 11-19 year olds in Wales, Cardiff: Welsh Assembly.

Department for Children, Schools and Families (2008) Top tips for developing the global dimension in schools, London: DCSF.

Department for Children, Schools and Families (2008) Top tips for sustainable purchasing in schools, London: DCSF.

Department for Children, Schools and Families (2008) Planning a sustainable school: driving school improvement through sustainable development, London: DCSF.

Department for Children, Schools and Families (2009) S3: Sustainable school self-evaluation, London: DCSF.

Department for Education and Employment (1999) 'Inclusion: providing effective learning opportunities for all pupils', in The national curriculum handbook for primary teachers in England, London: DfEE.

Department for Education and Employment (2000) Working with teaching assistants: a good practice guide, London: DfEE.

Department for Education and Employment (2000) Guidance on the education of children and young people in care, London: DfEE.

Department for Education and Skills (2002) Accessible schools: planning to increase access to schools for disabled pupils [Guidance] London: DfES.

Department for Education and Skills (2006) Implementing the Disability Discrimination Act in schools and early years settings, London: DfES.

Department for Education and Skills (2006) Learning outside the classroom manifesto, London: DfES.

Department for Education and Skills (2007) Top tips to reduce energy and water use in school, London: DfES.

Dow, K. and Downing, T. (2006) The atlas of climate change, mapping the world's greatest challenge, Brighton: Earthscan.

Dressner, S. (2008) The principles of sustainability, London: Earthscan.

Drummond, M. J. (2003) Assessing children's learning, London: David Fulton.

Durbin, G., Morris, S. and Wilkinson, S. (1990) A teacher's guide to learning from objects, London: English Heritage.

Egan, K. (1988) Teaching as Storytelling, an alternative approach to teaching and the curriculum, London: Routledge.

Farrer, F. (2000) A quiet revolution, encouraging positive values in our children, London: Ebury Press.

Fielding, M. and Moss, P. (2011) Radical education for the common school, London: Routledge.

Fisher, R. (2003) Teaching thinking, London: Continuum.

Flowers, N. (2000) Human rights education handbook: effective practices for learning, action and change, Minneapolis: Human Rights Resource Centre, University of Minnesota.

Forest Schools: www.forestschools.com

George, S. (2010) Whose crisis, whose future? Towards a greener, fairer, richer world, Cambridge: Polity. Beyond special needs: enhancing children's learning through innovative thinking

London: Hart,S. (1996)PaulChapman Publishing. Thinking through teaching: a framework for enhancing participation and learning

London:Hart,S. (2000)David Fulton.

Hart, S., Dixon, A., Drummond, M.J. and McIntyre, D. (2006) Learning without limits, Buckingham: Open University Press. http://learningwithoutlimits.educ.cam.ac.uk

Hatcher, R. (2006) 'Social class and schooling: differentiation or democracy?' in Cole, M. (ed.) Education, equality and human rights: issues of gender, race, sexual orientation, disability and social class (2nd edition), London: Routledge.

Hawkes, N. (2003) How to inspire and develop positive values in your classroom, Cambridge: LDA.

Higgins, P. (2010) Eradicating ecocide, London: Shepheard-Walwyn.

Holmes, T., Blackmore E., Hawkins, R. and Wakeford, T. (2011) The common cause handbook: values and frames, Machynlleth, Public Interest Research Centre.

Klein, N. (2014) This changes everything, capitalism versus the climate, New York, Simon Schuster.

Knight, S. (2011) Forest School for All, London, Sage.

Kohn, A. (2006) The homework myth: why our kids get too much of a bad thing, Cambridge, MA: Da Capo Press.

Language and Curriculum Access Service (LCAS) (1999) Enabling progress in multilingual classrooms, London: London Borough of Enfield.

Leggett, J. (2005) Half gone: oil, gas, hot air and the global energy crisis, London: Portobello Books.

Lesbian, Gay, Bisexual and Transgender History Month (2009) Toolkit for schools, London: LGBT. www.lgbthistorymonth.org.uk

Mackay, M. (2008) Sustainable energy without the hot air: www.withouthotair.com

McNamara, S. and Moreton, G. (1997) Understanding Differentiation: A Teacher's Guide, London: David Fulton.

Marlowe, B. A. and Page, M. L. (1998) Creating and sustaining the constructivist classroom, London: Corwin Press/Sage.

Martin, F. and Owens, P. (2008) Caring for our world: a practical guide to education for sustainable development, Sheffield: Geographical association.

Millstone, E. and Lang, T. (2008) The atlas of food: who eats what, where and why? Brighton: Earthscan.

Noddings, N. (2005) The challenge to care in schools, an alternative approach to education, New York: Teachers College Press.

Noddings, N. (2005) Critical lessons: what our schools should teach, New York: Cambridge University Press.

Norfolk County Council (2009) February is Lesbian, Gay, Bisexual and Transgender History Month, Ideas for primary schools, Norwich: NCC.

Norfolk County Council (2009) February is Lesbian, Gay, Bisexual and Transgender History Month, Ideas for secondary schools, Norwich: NCC.

Northern Ireland Curriculum (2009) Clothes conscious, learning for life and work, Belfast: CCEA.

Noyes, A. (2007) Rethinking school mathematics, London: Paul Chapman Publishing.

Office for Standards in Education (2008) Learning outside the classroom, London: Ofsted.

Office for Standards in Education (2009) Education for sustainable development, London: Ofsted.

Ollerton, M. and Watson, A. (2004) Inclusive mathematics 11-18, London: Continuum. O'Neill, O. (2002) A question of trust, BBC Reith Lectures, Cambridge, Cambridge University Press.

Open spaces for dialogue and enquiry, critical literacy in global citizenship education, Nottingham: Centre for the study of social and global justice.

Orr, D. (2004) Earth in mind: on education, environment and the human prospect, Washington: Island Press.

Owen, J. (1991) The ecology of a garden, the first fifteen years, Cambridge: Cambridge University Press.

Pearl, A. (1997) 'Democratic education as an alternative to deficit thinking', in Valencia, R. (ed.) The evolution of deficit thinking: educational thought and practice, London: Falmer Press. Potts, P. (ed.) (2002) Inclusion in the city, London: Routledge.

Qualifications and Curriculum Authority (2007) The global dimension in action: a curriculum planning guide for schools, London: QCA.

Rich, D., Casanova, D., Dixon, A., Drummond, M.J., Durrant, A. and Myer, C. (2004) First hand experience, what matters to children, Clopton: Rich Learning Opportunities.

Rich, D., Drummond, M.J. and Myer, C. (2008) Learning: what matters to children, Clopton: Rich Learning Opportunities.

Rustemier, S. and Booth, T. (2005) Learning about the Index in use, a study of the use of the Index in schools and LEAs in England, Bristol: CSIE.

Save the Children (2000) The school council: a children's guide, London: Save the Children.

School councils UK: www.schoolcouncils.org

Schools out classroom: www.schools-out.org.uk/classroom

Scoffham, S. (2010) (ed.) Primary Geography Handbook, Sheffield: Geographical Association.

Scoffham, S., Bridge, C. and Jewson, T. (2006) Keystart World Atlas, London: Harper Collins.

Scottish Health Promoting Schools Unit (2004) Being well, doing well, Dundee: Learning and Teaching Scotland.

Steel, C. (2008) Hungry city: how food shapes our lives, London: Vintage Books.

Stibbe, A. (2009) The handbook of sustainability literacy: skills for a changing world, Dartington: Green Books.

Stone, M. (2009) Smart by Nature: schooling for sustainability, Healdsburg: Watershed Media.

Stone, M. and Barlow, Z. (2005) Ecological Literacy: educating our children for a sustainable world, San Francisco: Sierra Club Books.

Sustain: the alliance for better food and farming (2010) Every school a food growing school, London: Sustain.

Sustainability and environmental education: www.se-ed.co.uk

Sustainable Development Commission (2009) Prosperity without Growth? The transition to a sustainable economy, London: Sustainable Development Commission.

Swann, M. and Peacock, A. (2012) Creating learning without limits, Buckingham: Open University Press.

Swann, M., Peacock, A., Hart, H. and Drummond, M. (2012) Creating learning without limits, Maidenhead, Open University Press.

UNICEF UK (2008) Rights respecting schools in England, London: Unicef. UNICEF/UNESCO (2007) A human rights based approach to education for all, New York, Paris: UNICEF/UNESCO.

Wallace, B. (2001) Teaching thinking skills in the early years/across primary years, London: David Fulton.

Warwick, I. and Douglas, N. (2001) Safe for all: a best practice guide to prevent homophobic bullying in secondary schools, London: Citizenship 21.

Watson, A. (2006) Raising achievement in secondary mathematics, Maidenhead: Open University Press.

Winter, R. (1989) Learning from experience: principles and practice in action research, London: Falmer.

World of Inclusion: www.worldofinclusion.com

Wrigley, T. (2006) Another school is possible, London: Bookmarks Publications.

Young, M. (2002) Global Citizenship, the handbook for primary teaching, Cambridge: Oxfam.

Մարդու իրավունքների միջազգային վավերացված փաստաթղթեր

Անգլիայի, Շոտլանդիայի, Հյուսիսային Իռլանդիայի և Ուելսի իրավական համակարգերի որոշակի աստիճանի տարանջատման պատճառով օրենսդրության շրջանակներում այս գործիքների ընդունումը տարբերվում է ըստ Մեծ Բրիտանիայի յուրաքանչյուր երկրի:

Փաստաթղթերը ներառում են՝

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ. (վավերացվել է Մեծ Բրիտանիայի կողմից ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, 1948թ.),
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, 1965 թ. (վավերացրել է Մեծ Բրիտանիայի կողմից, 1969թ.),
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ. (վավերացրել է Մեծ Բրիտանիայի կողմից, 1976թ.),
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ. (վավերացրել է Մեծ Բրիտանիայի կողմից, 1976թ.),
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 1979թ. (վավերացրել է Մեծ Բրիտանիայի կողմից, 1986թ.),
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989 թ. (վավերացրել է Մեծ Բրիտանիայի կողմից 1991թ.-ին վերապահումներով, և 2006թ.-ին՝ ամբողջությամբ),
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, 2006 թ. (Մեծ Բրիտանիան վավերացրել է 2009թ.-ին՝ ներառական հանրակրթական կրթության վերաբերյալ կետի վերապահումով),
- Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիա, 1950թ. (ներառվել է անգլիական օրենսդրության մեջ 1998թ.-ին):

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ.

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը մարդու իրավունքների վերաբերյալ մյուս բոլոր փաստաթղթերի հիմքն: Այն մշակվել է 1939-1945 թվականներին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և հանգեցրել Միջազգային քրեական դատարանի ստեղծմանը: Այն մշակվել է ԱՄՆ-ի նախագահի կնոջ՝ Էլեորոր Ռուզվելտի գլխավորած կոմիտեի կողմից: Հռչակագիրն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականին: Որպես իրավունքների ժողովածու ներկայացնելիս հարկ է նշել, որ թեև այն համարվում է համընդհանուր, սակայն ոչ բոլորն են համաձայն, որ Հռչակագրի բոլոր հոդվածները ներկայացնում են իրավունքներ: Թեպետ կյանքի իրավունքը կարող է ներառել շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտությունը, Հռչակագրում շրջակա միջավայրի վերաբերյալ շատ քիչ հղումներ կան:

Քաղվածքներ

Հոդված 1.

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով:

Հոդված 2.

Յուրաքանչյուր ոք պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատություններն առանց որևէ տարբերության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից: Բացի այդ, չպետք է դրվի որևէ տարբերություն այն հիմունքով, թե ինչպիսին է այն երկրի կամ տարածքի, որին պատկանում է մարդը, քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակը, անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար, թեև ինքնավարության մեջ որևէ այլ ձևով սահմանափակ:

Հոդված 3.

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության, անձի անձեռնմխելիության իրավունք:

Հոդված 17.

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ունեցվածք ունենալու ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ:

2. Ոչ ոք կամայականորեն չպետք է զրկվի իր ունեցվածքից:

Հոդված 26.

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Առնվազն տարրական և ընդհանուր կրթությունը պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է լինի հանրամատչելի, իսկ բարձրագույն կրթությունը՝ հավասարապես մատչելի բոլորի համար՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների:

Կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիակատար զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Կրթությունը պետք է նպաստի փոխըմբռնմանը, հանդուրժողականությանը և բոլոր ժողովուրդների, ռասայական և կրոնական խմբերի միջև բարեկամությանը և պիտի նպաստի Միավորված ազգերի՝ խաղաղության պահպանմանն ուղղված գործունեությանը:

Ծնողներն իրենց մանկահասակ երեխաների համար կրթատեսակ ընտրելու գործում ունեն առաջնության իրավունք:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա

Միացյալ Թագավորությունը վավերացրել է Կոնվենցիան 1991 թվականի դեկտեմբերին, սակայն հայտարարելով, որ այն չի համապատասխանում ապաստան հայցող երեխաների և քրեական պատասխանատվության տարիքին վերաբերող պահանջներին: Բացի այդ, Մեծ Բրիտանիան քննադատության է ենթարկել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից 1995թ.-ին՝ մանկական աղքատության և անհավասարության աճի և երեխաների ու երիտասարդների համար իրենց տեսակետները արտահայտելու հնարավորությունների բացակայության համար: Կոմիտեի 2002թ.-ի զեկույցում մտահոգություն կա կալանքի տակ գտնվող երեխաների բարեկեցության և երեխաների իրավունքների վրա աղքատության բացասական ազդեցության վերաբերյալ: Զեկույցում նշվում է, որ Հյուսիսային Իռլանդիայում մասնավոր դպրոցներում մարմնական պատիժը շարունակվում է, որտեղ այն վերջնականապես արգելվել է 2003թ.-ին: 2002թ. զեկույցում նկարագրվում է Մեծ Բրիտանիայի տեսակետն առ այն, որ ծնողների կողմից երեխաների նկատմամբ «խելամիտ պատիժը» դիտարկվում է որպես «երեխայի արժանապատվության լուրջ վնաս»: Դա չընդունվեց Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից: Թեև կառավարությու-

նը 2008թ.-ին վերացրեց այդ «վերապահումները», սակայն 2011թ.-ին ծնողների կողմից կարգապահական նկատառումներով երեխաներին հարվածելը պահպանվեց որպես օրինականորեն թույլատրելի գործողություն, իսկ քրեական պատասխանատվության տարիքը՝ որպես ամենացածրը՝ Եվրոպայի տարածքում (10 տարեկան՝ Անգլիայում, Ուելսում և Հյուսիսային Իռլանդիայում, 12 տարեկան՝ Շոտլանդիայում. այստեղ մինչև 2011թ.-ը 8 էր):

Քաղվածք

1. Մասնակից պետությունները համակարծիք են, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի.

ա) երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով,

բ) մարդու իրավունքների և հիմնական ազատությունների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ հռչակված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը,

գ) երեխայի ծնողների, իր մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, իր բնակության երկրի ազգային արժեքների, իր ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը,

դ) ազատ հասարակության մեջ փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով գիտակցական կյանք վարելու համար երեխայի նախապատրաստմանը,

ե) շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը:

Քաղվածքներ Երկիր մոլորակի իրավունքների մասին համընդհանուր հռչակագրից[57]

Սույն հռչակագիրն ընդունվել է 2010թ.-ի ապրիլի 22-ին Բոլիվիայում տեղի ունեցած Կլիմայի փոփոխության և Երկիր մոլորակի իրավունքների վերաբերյալ Համաշխարհային ժողովրդական կոնֆերանսի կողմից և ներկայացվել ՄԱԿ-ի դիտարկմանը:

Հոդված 2. Երկիր մոլորակի անկապտելի իրավունքները

(1) Երկիր մոլորակը և նրա մասնիկ կազմող բոլոր կենդանի էակներն ունեն հետևյալ անկապտելի իրավունքները՝

(ա) կյանքի և գոյության իրավունք;

(բ) հարգված լինելու իրավունք;

(գ) իր կենսունակությունը վերարտադրելու և կենսական ցիկլերն ու գործընթացները շարունակելու իրավունք՝ առանց մարդ էակի միջամտության;

(դ) իր ինքնությունը և ամբողջականությունը պահպանելու իրավունք՝ որպես ուրույն, ինքնակարգավորվող և փոխկապակցված էակ;

(ե) ջրի իրավունք՝ որպես կենսապահովման աղբյուր;

(զ) մաքուր օդի իրավունք;

(է) ամբողջական առողջության իրավունք;

(ը) վարակներից, աղտոտումից և թունավոր կամ ռադիոակտիվ թափոններից զերծ լինելու իրավունք;

(թ) իր գենետիկական կառուցվածքը փոփոխության չենթարկելու կամ չխախտելու իրավունք, այնպիսի ճանապարհներով, որոնք կարող են սպառնալ իր ամբողջականությանը կամ կենսական և առողջ գործունեությանը;

[57] http://therightsofnature.org/universal-declaration/

(ժ) մարդու գործունեության հետևանքով սույն Հռչակագրով ճանաչված իրավունքների խախտման հետևանքներից լիարժեք և արագ վերականգնվելու իրավունք:

(2) Յուրաքանչյուր էակ ունի տեղի և Երկիր մոլորակի ներդաշնակ գործունեությանը մասնակցելու իրավունք:

(3) Յուրաքանչյուր էակ ունի բարօրություն և մարդկանց կողմից խոշտանգումներից կամ դաժան վերաբերմունքից զերծ ապրելու իրավունք:

Հոդված 3. Մարդկանց պարտավորությունները Երկիր մոլորակի նկատմամբ

(1) Յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել Երկիր մոլորակը և ապրել նրա հետ ներդաշնակության մեջ:

2) Մարդ էակները, բոլոր մասնակից պետությունները և բոլոր պետական և մասնավոր հաստատությունները պարտավոր են՝

(ա) հանդես գալ սույն Հռչակագրում ճանաչված իրավունքների և պարտավորությունների համաձայն;

(բ) ճանաչել և խթանել սույն Հռչակագրում ճանաչված իրավունքների և պարտավորությունների լիարժեք իրականացումը և կիրարկումը;

(գ) խթանել և մասնակցել սույն Հռչակագրի համաձայն Երկիր մոլորակի հետ ներդաշնակ ապրելու վերաբերյալ կրթական ծրագրերին, վերլուծությանը, մեկնաբանություններին և հաղորդակցությանը;

(դ) ապահովել, որ մարդկային բարեկեցության նպատակով իրականացվող գործողությունները նպաստեն Երկրի մոլորակի բարօրությանը ներկայում և ապագայում;

(ե) հաստատել և կիրառել Երկիր մոլորակի իրավունքի պաշտպանության և պահպանման արդյունավետ կանոններ և օրենքներ;

(զ) հարգել, պաշտպանել, պահպանել և անհրաժեշտության դեպքում վերականգնել Երկիր մոլորակի կենսական էկոլոգիական ցիկլերի, գործընթացների և հավասարակշռության ամբողջականությունը;

(է) ապահովել, որ մարդկանց կողմից սույն Հռչակագրով ճանաչված անկապտելի իրավունքների խախտումների հետևանքով առաջացած վնասներն ուղղվեն, և դրանց համար պատասխանատու անձինք կամ կազմակերպությունները պատասխանատվություն կրեն Երկիր մոլորակի ամբողջականության և առողջության վերականգնման համար;

(ը) մարդկանց և կազմակերպություններին զինել Երկիր մոլորակի և նրա բոլոր էակների իրավունքները պաշտպանելու գիտելիքներով ու կարողություններով:

(թ) սահմանել կանխարգելիչ և սահմանափակող միջոցառումներ՝ մարդկանց կողմից տեսակների և էկոհամակարգերի ոչնչացմանը կամ էկոլոգիական ցիկլերի խախտմանն ուղղված գործունեությունը կանխարգելելու համար;

(ժ) ապահովել խաղաղություն և վերացնել միջուկային, քիմիական և կենսաբանական զենքերը;

(ի) նպաստել և աջակցել Երկիր մոլորակի և նրա բոլոր էակների նկատմամբ հարգանքի գործելակերպի խթանմանը՝ տարբեր մշակույթների, ավանդույթների և սովորույթների համաձայն;

(լ) խթանել այն տնտեսական համակարգերը, որոնք ներդաշնակ են Երկիր մոլորակի հետ և համահունչ են սույն Հռչակագրով ճանաչված իրավունքներն:

Նշումների համար

ՆԵՐԱՌՄԱՆ ԻՆԴԵՔՍ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թոնի Բութ և Մել Ամինսքոու

Խմբագիր՝
ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Սրբագրիչ՝
ՌՈԶԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թուղթը՝ կավճապատ: Չափսը՝ 64/90, 1/16: Ծավալը՝ 18,5 մամուլ:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

PRINTMAN

Տպագրվել է Ա/Ձ «Ռուբիկ Ղարիբյան» տպարանում
Հասցեն՝ ՀՀ, ք.Գյումրի, Գործարանային փ.:
Հեռ. (098) 24-25-70:
E-mail: printman2018@gmail.com

ՆԵՐԱՌՄԱՆ ԻՆԴԵՔՍ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թոնի Բութ եւ Մել Ամնսքոու

«Ներառման ինդեքսը» ներառական արժեքների հիման վրա դպրոցների զարգացման ուղեցույց է: Այն մի շարք նյութերի ժողովածու է, որը նպաստում է հաստատության բոլոր բնագավառների վերանայմանը և զարգացմանը, որի սկզբունքները կարող են կիրառվել աշխատասենյակներում, դասասենյակներում, համայնքներում, շրջակա միջավայրում:

Ինդեքսը խրախուսում է դպրոցի աշխատակազմի, երեխաների, ծնողների և ղեկավար մարմինների ակտիվ մասնակցությունը առկա իրավիճակի վերանայման և բարելավման աշխատանքներին:

Անկախ այն հանգամանքից, որ *Ինդեքսի* կիրառումը կարելի է սկսել ցանկացած կետից, այն առավել արդյունավետ է, երբ օգտագործվում է նախ՝ որպես առօրյա պլանավորման և զարգացման գործընթացների մշակման գործիք, ապա՝ ամբողջությամբ ինտեգրվում տվյալ գործընթացներում:

Ինդեքսը մեզ համար հասկանալի դարձավ թիմային աշխատանքի վրա հիմնված մի քանի հանդիպումներից հետո: Գրքին ծանոթանալուց հետո հասկացանք, որ այն ենթադրում է երկարատև և աշխատատար գործընթաց: Ինդեքսը մարդասիրական մոտեցումներ ունի և ձգտում է կրթել լավ սերունդ: Ուղեցույցում կան նաև այնպիսի հարցեր, որոնց մասին երբևէ չենք մտածել: Ողջունելի է, որ գիրքն անդրադառնում է համամարդկային խնդիրներին:

Գյումրու թիվ 15 հիմնական դպրոց, Ինդեքսի թիմ

Ինդեքսը շատ հետաքրքիր ուղեցույց է, կան շատ հարցեր, որոնք քննարկման ընթացքում օգնում են բացահայտելու դպրոցի կարիքները, հասկանալու մեր իրական արժեքները: Ինդեքսը խրախուսում է երկխոսությունների ծավալումը: Այս կերպ մենք ուսումնասիրում և քննարկում ենք միմյանց կարծիքներն ու պատկերացումները դպրոցի ներառական զարգացման հարցում: Ինդեքսի կիրառումը դրական ազդեցություն ունեցավ մեր դպրոցում, հատկապես խթանեց համագործակցությունը:

Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց, Ինդեքսի թիմ

index for inclusion network
www.indexforinclusion.org

ISBN 978-9939-1-0891-9
9 789939 108919